



ՀԵՂԻԿ ԱՆԱՅԱՆ



ԱՐԵՎԻ ՀՈՏԸ





ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍՅԱՆ

A 106421

# ԱՐԵՎԻ ՀՈՏԸ

Պատմվածքներ, նորավեպեր, վիպակներ,  
հոդվածներ

(ԸՆՏՐԱՆԻ)



ԵՐԵՎԱՆ

«Գիտություն» հրատարակչություն

2020

ՀՏԴ 821.19-8 Անասյան

ԳՄԴ 84(5Հ)

Ա 577

Գիրքը նվիրում եմ ծնողներիս՝  
Հակոբ և Վերժինե Անասյանների  
պայծառ հիշատակին

Արևելահայերենի փոխադրեց և հրատարակության  
պատրաստեց՝ Ա. Խաչատրյան  
Խմբագիր՝ Հ. Կարապետյան

Անասյան Հենրիկ

Ա 577 Արևի հոտը. Պատմվածքներ, նորավեպեր, վիպակ-ներ, հոդվածներ (Ընտրանի).—Եր.: «Գիտություն»  
հրատ., 2020.- 366 էջ:

Գրքում ամփոփված են Լոս Անչելեսում բնակվող հասարակական-մշակութային գործիչ, հրապարակախոս, երգահան, խմբավար և գրող Հենրիկ Հակոբի Անասյանի խրատական, բարոյախոսական և ընտանեկան պատմվածքներն ու վիպակները, ինչպես նաև հրապարակախոսական հոդվածները։ Դրանք հիմնականում հեղինակի մանկության ու պատանեկության շրջանի, ինչպես նաև Խորհրդային Հայաստանում և օտար ափերում անցկացրած տարիների վերապրումների և հուշերի արձագանքներն են։

ISBN 978-5-8080-1427-5

© Անասյան Հենրիկ, 2020

## ԻՄ ԽՈՍՔԸ

...Միացյալ Նահանգներում հաստատվելուս (1978 թ.) առաջին խակ օրվանից, որպես գրող-լրագրող, սկսեցի գրել բացառապես դասական ուղղագրությամբ: Դիտի խոստովանեմ, որ դա իմ երազանքն էր դեռ վաղ մանկական տարիներից, որովհետև հայ գրի և գրականության հետ իմ առաջին շփումը եղել է հայրիկիս գրադարանի՝ Վենետիկում հրատարակված մեծաթիվ գրքերի և գեղատիպ պարբերականների հետ, վեց-յոթ տարեկան հասակից: Կարդալը եղել և մնում է իմ ամենագերազույն հաճույքը ողջ կյանքում:

Տարիների ընթացքում, բազմաթիվ ոլորապտույտ իրադարձությունների բովում, ինքնուրույն, մոլի ընթերցանության շնորհիվ ես կարելույն հմտացա ոչ միայն արևելահայ, այլև դասական ուղղագրության մեջ: Տասներկու տարեկանից սկսեցի տպագրվել: Ընթերցողը այս գրքի էջերում բազմիցս կհանդիպի արևմտահայերենով գրված նյութերի, ինչպես նաև այդ երկու ճյուղերի միացումով հորինված պատմվածքների:

Իմ բոլոր գրքերը, այդ թվում՝ «Այս եմ ես...» 7 հասորանի շարքը տպագրվել է Լու Անցելեսում, միայն մեկ գիրք՝ «Լուցավեր» խորագրով, Երևանում, խորհրդային օրերին, արևելահայերենով՝ 1990 թվականին:

Ընթերցողների լայն շրջանակ ներգրավելու մտահոգությունից դրդված «Արևի հոտը» անվանումով այս նոր գիրքը նախապես որոշել էլ տպագրել Երևանում:

Սակայն վերջին պահին մտածեցի, որ Հայրենիքում դասական ուղղագրությամբ գրքի տպագրումը այնքան էլ նպատակահարմար չէ, ուստի, անհրաժեշտաբար ստիպված եղահաշտվել ամբողջ գիրքը գրական հայերենի վերածելու մտքի հետ: Այդ ոչ դյուրին բեռն իրենց ուսերին վերցրին և խմբագրեցին իմ մտերիմից էլ մտերիմ բարեկամներ Արմենակ

Խաչատրյանը և Հասմիկ Կարապետյանը:

... Արձակ գրականության մեջ ամենատարածվածը պատմվածքի ժանրն է: Մեր օրերում, նույնիսկ «Պատմահրի» պայմաններում, ոչ ոք մեծածավալ գիրք չի կարդա: Ես խուսափում եմ նույնիսկ վիպակ զրելուց, թեև այս զրում երկու վիպակ կա, բայց կասկած չունեմ, որ ընթերցողի համար դրանք երկար չեն թվա ու մեկ շնչով կկարդացվեն:

Վերջերս, ներհուն մտավորական, թերթի խմբագիր, անվանի լրագրող Օշին Քեշիշյանը հեռաձայնեց.

- Հենրիկ, շատ սիրեցի պատմվածքդ, համա քիչ մը երկար եր...

- Է՛ ... կե՞ս ձգեիր կարդալդ...

- Ինչպե՞ս կես ձգեի, հետաքրքիր եր...

- Ըսել է երկար չեր, - ծիծաղով պատասխանեցի ես:

Մաքուր, պարզ, հասկանալի, շատ անզամ էլ տեղին օգտագործած բարբառային լեզվի շնորհիվ երկար չի թվում որևէ պատմվածքի ընթերցումը և այն շատ դյուրին է «մարսվում» ընթերցողի կողմից:

Ինչո՞ւ ենք մենք Հովի. Թումանյանին «ամենայն հայոց բանաստեղծ» անվանում, որովհետև նա գրում էր ամենքի, ցանկացած տարիքի, զիտուն կամ անզետ ընթերցողի համար, շատ անզամ էլ օգտագործելով Լոռվա բարբառը: Գրում էր հակիրճ, իմաստալից, որպես հորդոր, որպես պատզամ՝ առանց սար ու ձոր ընկնելու: Մեծ զաղափար արտահայտող կարձ զրվածք, նովել կամ պատմվածք շատ անզամ հեղինակին կարող է էլ ավելի անուն և փառք բերել, քան նույն հեղինակի մեծածավալ այս կամ այն գործը:

Օրինակ եք ուզում, խնդրեմ, հենց Թումանյանի օրինակով. ով կարող է ինձ հետ համաձայն չլինել, որ մեծ զրոյի «Գիրոր» պատմվածքը հեղինակի ողջ արձակի ամենակարևոր գործերից է:

Նույնն է նաև երաժշտության մեջ. հեղինակները մեկ երգով ավելի են ճանաչվում, քան իրենց մեծածավալ գործերով:

Արձակ գրականության մեջ ամենատարածուն և ամենա-

փնտրված ժանրը պատմվածքն է: Այս ժանրին հետևող գրողներն ել նյութի և թեմայի ընտրության հարցում ունեն իրենց նախասիրությունները: Մեկը սիրում է արկածային ժանրը, մյուսին հետաքրքրում է ընտանեկան հարաբերությունների վրա հիմնված բարոյական թեման, իսկ ինձ, ինչպես ասում են ուսուն ինքը՝ Օշին Քեշիշյանը.

- Հենրիկ Անասյանը որպես գրող նորություն բերավ հայ գրականությանը՝ իր «Երաժշտական պատմվածք» ժանրով: Այդ ժանրը իմ հոգեզավակն է: Այդ ժանրի առաջին գործն է «Կոռ ննկ, խաբրիկ մը չունի՞ս...» պատմվածքը: Այն առաջին անգամ տպագրվեց Լու Անշելեսում 1982 թվականին, իմ հիմնադրած և խմբագրած «Հայարվեստ» երկշաբաթյա թերթում և, ինչպես ասում են, զնաց... այդ պատմվածքը տպագրեցին բազմաթիվ թերթեր, ժողովածուներ և այն վերածվեց ուսուցիչ-մադրության: Նման հաջողությունն ինձ թեավորեց և ես որոշեցի «Երաժշտական պատմվածք» ժանրով նոր խոսք ասել: Ինքնին հասկանալի է, որ այդ ժանրում հորինելու հնարավորությունները շատ սահմանափակ են: Պատմվածքը հիմնականում ստեղծվում է իրական հերոսների, իրական դեմքերի, դեպքերի և իրողությունների հենքի վրա, մնացածն արդեն հեղինակի տաղանդից է կախված: Պատմվածքի, մանավանդ երաժշտական պատմվածքի նյութը, մեծամասամբ լինում է հնարովի, սակայն այնքան իրական պատումով հագեցած, որ ընթերցողն իրեն զգում է մասնակից շարադրվող նյութի հերոսների շարքում:

Բերեմ մեկ օրինակ. «Հայաստան, երկիր դրախտավայր» պատմվածքը ամբողջովին երևակայության արդյունք է: Լավ ծանոթ լինելով Կոմիտասի կյանքին և գործունեությանը, ես «խաղում» եմ նյութի հետ: Գիտեմ, որ նա Բեռլին էր զնում հայ երաժշտության մասին դասախոսություններ կարդալու և իր կենդանի կատարմամբ՝ երգով ու սրինգով, հմայելու եվրոպացիներին: Ինչպես ու է հյուսվում պատումը.

Կոմիտասին բերում «նստեցնում» եմ Բեռլին-Ստամբուլ գնացքի ընտրովի խցիկի մեջ: Այն է զնացքը շարժվելու վրա է,

Կոմիտասի խցիկն է մտնում մի ամուսնական զոյգ, ըստ որում, ամուսինը գերմանացի է, իսկ կինը՝ Եղիտը, ֆրանսուհի: Եվ ծավալվում է մի հետաքրքիր պատմություն: Օտարերկրացի ամուսինները ապշած են Կոմիտասի իմացական պաշարի և գերմաներենին ու ֆրանսերենին անսայթակ տիրապետելու համար: Այս ամենը հորինված է, բայց, ինչպես ժողովուրդն է ասում՝ «սուտն էլ պիտի իրական հիմք ունենա»: Հենց դա: Ի վերջո, հորինված պատմվածք զրոյը նախ ինքը պիտի հավատա զրածին, որ, այս, գուցե եղել է և հնարավոր է, որ նման դեպք եղած լինի: Իմ այս զիրքը կարդալուց հետո, վստահ եմ, ընթերցողը չի էլ մտածի դեպքերն իրակա՞ն են, թե՝ ոչ, որովհետև հեղինակն ապրել և ապրում է յուրաքանչյուր հերոսի և իրավիճակի հետ. լինի իրական, երբեմն էլ իրականից էլ ավելի գնահատելի հնարովի հերոսի հետ ու արցունքի կաթիլներ է հոսեցրել այդ ամենը զրի առնելիս:

### ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍՅԱՆ

Տարին էր «Պատկաճակի», հուլիսի 14, 2020 թ.,  
Լու Անջելես

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ  
ՈՒՍԱՆԵԼԻ ՀԵՔԻԱԹՆԵՐ

## ԳԱՅԼՆ ՈՒ ՌԵԽԱՐՆԵՐԸ

*Մի ամլիկ գառ իրեն համար  
Զուր էր խմում առվակից...*

...Երկա՞ր, շատ երկա՞ր մտածեց զայլը. իր բնակած անտառում գնալով պակասում էր ոչխարների թիվը: Դժվարացել էր ապրուստ հայթայթելը:

Դե, ինքն ի՞նչ աշխատող, նա վարժված չէր ազնիվ աշխատանքով ապրուստ հայթայթելու: Այն ոչխարները, որոնց վրա աչք էր տնկել լափելու համար, կամաց-կամաց հեռանում էին անտառից: Մի անգամ լսեց, որ հեռավոր, անհայտ երկիր են ուղևորվում ոչխարները, որտեղ, ինչպես ասում էին, ավելի հեշտ էր ապրուստ հայթայթելը: Եվ, իսկապես, այդ նոր երկրում մեծաթիվ ոչխարներ տարբեր հնարքներով կարողացել էին քիչ թե շատ ընդունելի պայմաններ ստեղծել իրենց ընտանիքների համար:

Այս ամենը ճշտելուց հետո զայլը մտածեց, մտածեց ու մի օր էլ որոշեց իր ընկերների, բազմաթիվ այլ զայլերի հետ ճանապարհ ընկնել դեպի այդ նոր երկիրը՝ ոյուրին ապրուստի հեռանկարով ողևորված:

Շուտով զայլը զգաց, որ այդ նոր երկրում բավական դժվար է լինելու իր գործը: Ինչպես միշտ, այս անգամ ել օգնության եկավ աղվեսը, որն իր խորամանկությամբ բարձր դիրքի էր հասել ու իր համար «խակ խաղող» չկար այլնս, և դունչն ամեն տեղ հասնում էր:

- Լսիր, զայլ եղբայր,- դիմեց աղվեսը իր մոտ խորհրդի եկած զայլին,- ճիշտ է, որ դու ինձնից ավելի ուժեղ ես և զիշատիչ, բայց զիտես նաև, որ ես քեզնից ավելի խելացի եմ և միշտ իմ խորամանկությամբ հաղթել եմ քեզ: Հիմա դու եկել ես այս երկիրը, որտեղ մենք պետք է բարեկամներ լինենք, որպեսզի

միացյալ ուժերով կարողանանք ոչխարների հսկա բանակի հախից զանք ոչ թե նրանց ուտելով, այլ՝ աշխատեցնելով: Թող մեզ համար ձրիաբար աշխատեն, մի կտոր հաց է, կտանք էլի: Որպեսզի կարողանանք մեր նպատակին հասնել, անհրաժեշտ է, որ երկուսս էլ ոչխարի մորթի հազնենք և որպես տեղացի ոչխարներ, իբր գործից-բանից հասկացողներ, նրանց գեենք մեր ճանկը:

- Իսկ նրանք չեն հասկանա...

- Ի՞նչ պիտի հասկանան, ոչ լեզու գիտեն, ոչ էլ բերաններում խոտ կա, արոտավայրի տեղին էլ ծանոթ չեն, չգիտեն, թե ինչ զազաններով են շրջապատված: Մեր քաղցր լեզվից արբեցած, ուզեն, չուզեն մեր ճանկը կընկնեն:

- Հա, լավ ես ասում, աղվես եղբայր, որու ինձնից ավելի խելացի ես ու խորամանկ, - ասաց զայլը, - ավելի լավ է դրանց աշխատեցնել, քան թե խժուել, թե չէ ո՞ր կհասնի՝ կե թ, հա կե թ... վերջում ոչինչ չի մնա ուտելու: Այսպիսով, գոնե կիմանանք, որ հավիտյանս ոչխարներ ունենք, որոնք մեզ կկերակրեն:

\*\*\*

... Եվ այսպես՝ ոչխարի մորթի հազած, զայլն ու աղվեսը թևերը քշտած գործի անցան: Գործարարների տեսք առած, նրանք մի քանի օր հետո, շրեղ ընդունարաններում, բազմոցներին թիկնած, գրավիչ ու բարեհամբույր ժախտը դեմքերին, հազրկապը տեղին, սկսեցին հաճախորդներ ընդունել: Իսկ ոչխարները զայիս էին ու զայիս, զայիս էին ու ընկնում զայի և աղվեսի սուր ճանկերը:

- Հա, լավ ես արել, որ եկել ես մեր երկիրը, - ասաց զայլու ոչխարը աշխատանքի հույսով իր մոտ եկած մայր ոչխարին:

- Լավը լավ, բայց դժվար է խոտի քանը, եղբայր հարազատ և հետո, նախապես եկած ոչխարներն էլ իրենց համար տարածություններ են առանձնացրել, ցանկապատել ու չեն թողնում մեզ՝ իրենց ազգակիցներին, արածել: Նույնիսկ տարիներ առաջ, միևնույն արոտավայրից օգտված ազգակիցներն ան-

զամ երես են թեքում մեզնից: Ես իմացա, որ Դուք լավ արդտավայր ունեք և աշխատանքի դիմաց թողնում եք, որ աշխատավորներն արածեն:

- Ճիշտ ես իմացել,- ասաց ծպտված գայլը՝ ավելի հաստատուն տեղավորվելով բազկաթոռի մեջ,- պայմանը այսպիսին է, քույր ոչխար. նախ մի քանի ամիս պիտի ձրիաբար աշխատես, համոզես մեզ, որ դու կարող ես քեզ վատահված գործն առաջ տանել:

- Ինչպե՞ս քեզ ձրի,- հուսահատ բացականչեց մայր ոչխարը, - հապա ո՞նց եմ կերակրելու գառնուկներիս:

- Այո, այո, ձրի, իսկ գառնուկներիդ համար մի անհանգստանա, այս հսկա տարածությունը տերեր ունի, առյուծները, վագրերն ու այլ կենդանիներ: Նրանք հատուկ արոտավայրեր են առանձնացրել մեզ նմանների համար: Մինչև չապացուցեք, որ այս երկրի հալալ-զուլալ, հարազատ բնակիչներն եք, ստիպված եք օգտվել կառավարական արոտավայրերից:

- Որ այդպես է, կարելի է փորձել,- կմկմալով պատասխանեց մայր-ոչխարը և հաջորդ օրն իսկ անցավ աշխատանքի հենց գայլ-ոչխարի ընդունարանում:

\* \* \*

... Գիշեր-ցերեկն իրար խառնած, աշխատում եք մայր ոչխարը: Նվիրումը սահման չուներ: Տերը նայում էր, ծպտում, քաջալերում: Այսպես անցավ մի քանի ամիս: Մայր ոչխարը հոգնած, հազիվ իրեն զցում եք գոմը և ախորժակ էլ չէր ունենում իր նմանների համար առանձնացված խղճուկ արոտավայրից օգտվելու:

Տեսնելով, որ տերը չի մտածում իրեն վարձատրելու մասին, մի օր՝ համբերությունից դուրս ելած, դիմեց նրան.

- Տեր իմ, ժամանակը չէ արդյո՞ք ինձ վճարելու:

- Օհն, շատ ես շտապում բարեկամ, շա տ, հազիվ չորս ամիս եղավ աշխատելով, համբերիր, դու դեռ քեզ չես դրսեորել ինչպես որ պետք է, երկու ամիս ևս և ես քեզ կվճարեմ...

Անցավ ևս երկու ամիս:

- Այսօր վեց ամիսը լրացավ, հարգելի տերս,- դիմեց մայր ոչխարը իր նմանների քրտինքով ուռճացած տիրոջը, որն արդեն զիրությունից հազիվ էր տեղափոխվում բազկաթոռի մեջ:

- Ճիշտ է, բարեկամս, լրացավ, ես քեզ վճարելու եմ, բայց, քանի որ նոր արոտավայրեր ստեղծելու համար զգալի դժվարությունների առջև ենք կանգնած, ստիպված եմ քեզ և քո ընտանիքին խոստացածս տարածությունից շատ ավելի փոքր տարածություն տալ: Ստիպված ես ևս մեկ տարի դիմանալ:

- Ի՞նչ,- ապշած ու զարմանքից քարացած մայր ոչխարը ուրիշ ոչինչ չգտավ ասելու և միայն իր անզոր, թուլացած ոտքերն առաջ պարզած փորձեց հարձակվել տիրոջ վրա: Բայց ի՞նչ իմանար խեղճ մայր ոչխարը, որ դիմացինը, այդքան բարեհամբույր ժպիտով տերը ոչ թե ոչխար էր, այլ՝ գալ, ոչխարի մորթի հազած գայլ:

- Ապերախստ անասուն,- բղավում է տերը,- ես քեզ վեց ամիս աշխատանք եմ տվել, պայմաններ ստեղծել քեզ համար, խորհուրդներ տվել, բացատրել, թե ինչպես օգտվել «կառավարական արոտավայրից», իսկ դու, որպես մի ապերախստ անասուն, դեռ դժգոհ մմ ես...

Գայլը չեր նկատել, որ բազկաթոռից վեր ցատկելիս ու անզգուշ շարժումներ անելիս, բացվել էին իր հազի ոչխարի մորթու կոճակները.

- Լավ, լավ, տեր իմ,- փորձում էր արդարանալ մայր ոչխարը՝ աչքը չկտրելով տիրոջից,- ես, ես էի կսպասեմ, բայց, բայց չեմ հասկանում, տեր իմ, իմ օրինական խնդրանքը այդքան ազդեց ձեր վրա, որ, ներեցեք, սկսում եմ ձեզ շճանաշել: Ներեցեք, տեր իմ, բայց քիչ է մնում, որ ձեզ մեր դարավոր թշնամուն՝ գայլին, նմանեցնեմ...

- Այո, այո, ես կարող եմ գայլի նմանվել, երբ իմ ստորադասը փորձում է բան խնդրել ինձնից: Իսկ քեզ ներում չկա, դուրս այստեղից, դուրս, մեկ էլ չերեսաս...

Շվարած մայր ոչխարը զլխիկոր դուրս եկավ տիրոջ առանձնասենյակից, այդպես էլ շհասկանալով, թե իր օրինական

ինդրանքը ինչո՞ւ պիտի այդպես ազդեր տիրոջ վրա, որ նա՝ զայրույթից պայխած, գայլի նմանվեր:

Այդպես չհասկացան նաև իրենից հետո եկող բավական թվով միամիտ ոչխարները ևս: Եվ նրանք, ինչպես և ինքը, դառը փորձությունից հետո, եկան այն համոզման, որ հարկավոր է հույսը դնել միայն ու միայն սեփական ուժերի վրա:

Եվ այսպես, հուսախար ոչխարները ժամանակի ընթացքում իրենց ուժերով, իրենց զանուկների օգնությամբ սկսեցին մացառուտներից մաքրել չոր ու անապատ վայրերը, ջուր հասցնել հեռավոր վայրերից, խոտ ու բույս աճեցնել: Որոշ ժամանակ անց բարիքը հոսեց նրանց «բնակարաններից» ներս և նրանց կյանքը մտավ բնական հունի մեջ:

...Ասում են, որ մինչև օրս էլ, ոչխարի մորթի հազած գայլն ու աղվեսը շարունակում են իրենց ճանկը զցել միամիտ ոչխարներին ու առանց վարձատրության կամ էլ չնշին գումարով աշխատեցնել իրենց օգտին:

Սակայն, զազանների և ընտանի կենդանիների մեջ արդեն սկսել են պտտվել շշուկներ ծպտյալ գայլերի ու աղվեսների մասին:

Ասում են, որ պատահում է նաև հակառակը, մեկ-մեկ էլ իրական ոչխարներն են զայլի մորթի հազնում:

...Իսկ ոչխարները զալիս են ու զալիս...Եթե պատահեց, որ իրենց բախտից բարի մի ազգակից հանդիպեց, ուրեմն չեն ընկնի զայլերի ու աղվեսների գիրկը ու որոշ նեղություններից հետո, կարողանան իրենց համար արոտավայրեր ունենալ: Իսկ թե ընկան ծպտված գայլերի գրասենյակները՝ նրանց քաղցր-մեղցր լեզվից արթեցած, կհայտնվեն նրանց ճանկերում ու ապագայի վառ հույսերով տարված, երկա թ-երկա թ ժամանակ ձրի կաշխատեն նրանց համար:

Այստեղ վերջանում է մեր հեքիաթը: Երկնքից ընկնում է երեք խնձոր. մեկը, որ որդնած է, զայլերի համար է, մյուսը՝ միամիտ ու ազնիվ ոչխարների, իսկ երրորդը՝ հեքիաթի հեղինակին, ով հավատում է նման հեքիաթներին, որոնք, դժբախտաբար, իրականություն են:

Հերիաթի հեղինակը համոզված է, որ օտարներն ու ազգակիցները պետք չեն, որ խանգարեն «առվակից իրեն համար ջուր խմող ամլիկ զառանը», թող խմի, թե պետք է՝ թող արածի նաև...

*Հոկտեմբերի 26, 1980 թ.  
Լու Անջելես*

## ԾԻԾԵՇՆԱԿՆ ՈՒ ՕԶԸ

«Լինում է, չի լինում...». սովորաբար այսպես են սկսվում հերթաքանությունները, բայց մեր հերթաքանությունները ամբողջովին տարբերվում է ընդունված ձևից ու սկսվում է հետևյալ կերպ:

- Լինում է, են ել ո՞նց է լինում...

...Կողք-կողքի, հարևանությամբ, մի հյուղակում ապրում են բազմատեսակ թոշուններ, որոնց մեջ առանձնանում են կաշաղակն ու միջտ գեղգեղանքով շրջապատը հրապուրող ծիծեռնակը: Հարևան հյուղակում ապրում են օձերը, մողեսներն ու բոլոր սողունները: Դրանց մեջ աչքի է ընկնում Սարքո անունվ հայտնի օձը և իր խորհրդատու-օգնական Փիքո օձը: Այս երկուսը՝ իրենց նախանձկոտ ու բացասական հատկություններով, մշտապես խանգարում են ոչ միայն իրենց հյուղակի ազգակիցների անդորրը, այլև հարևան թոշունների հանգիստն ու առօրյան:

Ամենքին հայտնի ծիծեռնակն ամեն օր անուշ գեղգեղանքով հիացնում էր բոլորին:

Դուռ-դրկից այլ թոշուններ օրնիբուն զվարճանում են ծիծեռնակի գեղեցիկ երգեցողության տակ, պարում, թոշկոտում՝ իրենց ախտրժալուր ձայնով բերկրանք ու հրձվանք սփոելով ողջ անտառում:

Այս ամենի մեջ միակ դժգոհողները թոշունների հարևանությամբ ապրող օձերն ու կարիքներն են: Ծիծեռնակի դայլայլը կրծոտում է նրանց հոգին. ինչո՞ւ իրենք չեն կարողանում երգել: Եվ նրանցից ամենահանդուզն օձը՝ Սարքոն, քաջալերված իր ընկեր Փիքոյի ոգևորիչ խոսքերից, որոշում է գնալ հարևան հյուղակը և տեսնել, թէ ինչպես է երգում ծիծեռնակը:

Թոշունների հյուղակի շեմին Սարքո օձին կանգնեցնում է պահակը՝ Շեկո անունով շունը.

- Ինչո՞ւ ես եկել, Սարքո, այստեղ քո տեղը չի...

- Լսիր, բարեկամ Շեկո, թույլ տուր ինձ մտնել ներս ու

տեսնել, թե ինչպէ՞ս են այդպէս գեղեցիկ դայլայլում ծիծեռնակն ու տիխակը:

- Դու ինձ ի՞նչ բարեկամ, Սարքո, օձը ե՞րբ է բարեկամ եղել, նույնիսկ օձը օձին բարեկամ չէ, ել ո՞ւ մնաց ինձ կամ թոշուններին: Եվ հետո, ի՞նչ պիտի տեսնես, տեսնես ծիծեռնակի երգե՞լը:

- Այո, Շեկո ջան, այո, ես ել եմ ուզում երգել:

- Այսր երգելը քո բանը չի, դու միայն կարող ես սովել, իսկ երգել՝ ոչ: Երգել, կանչել, աղաղակել, հաշել, ոռնալ և այլն, դրանք հատուկ են միայն քայլող կենդանիներին:

- Բայց ես ել եմ քայլում:

- Դու չես քայլում, Սարքո, դու սողում ես, քո ամբողջ մարմինը հորիզոնական դիրքով է և դու հազիվ ես երբեմն-երբեմն զլուխդ բարձրացնում, իսկ արտաքրածդ ձայնն ել ֆշոց կամ սովոր է, դու ինչպէ՞ս կարող ես երգել:

- Գիտեմ, որ ես չեմ քայլում, բայց ուզում եմ երգել, ի՞նչ կլինի, թող նայեմ, թե ինչպէս է երգում ծիծեռնակը: Այստեղ, դարպասի մոտից կհետևեմ իրեն, գուցե թե կարողանամ փոքր ինչ նմանվել նրան:

- Դե լավ, որ այդքան խնդրում ես, միևնույն է, բան չի ստացվի, դու ուր, ծիծեռնակն ուր, ներս արի:

Եվ այսպէս Սարքոն դարպասի պրնկից, օրնիբուն, հմայված հետևում էր ծիծեռնակի թոփշքին, գեղեցիկ շարժումներին, լսում նրա մեկը մյուսից ավելի թովիչ, գեղգեղուն մեղեղիները: Ինքն ել էր փորձում թոշել, սուրալ, գեղեցիկ ձայներ արտաքրել, բայց եղածը մի քանի պտույտ էր ինքն իր շուրջը, իսկ երգել բնավ չէր ստացվում. բերանից դուրս սահած երկարավուն ու ոլորուն լեզվից հազիվ թույլ սովոր էր լսվում:

- Չե, ոչինչ չի ստացվում, ի՞նչ անեմ,- զանգատվում էր Սարքոն ընկերոջը՝ Փիքոյին, զայրույթից ել ավելի չոած աչքերը տարութերելով աշ ու ձախ:

- Ի՞նչ պիտի անես, եթե չես կարողանում նմանվել ծիծեռնակին, ուրեմն պիտի խայթես նրան, չէ՞ որ դա է մեր հատկու-

թյունը, մեր բնագդը, մեր պապերից մնացած, ժառանգած սովորությունը:

- Այո, սիրելիդ իմ Փիքո, դու ճիշտ ես, բայց ո՞նց մոտենաս ծիծեռնակին: Նա անընդհատ օդում է, ոչ հաճախ է մտնում բույնը՝ ձագուկներին կերակրելու, ինչպէս և մոտենաս նրան, այն էլ՝ սողալով...

- Մի մտածիր, եղբայր իմ, դու Շեկոյի հետ լեզու գտել ես, նա քեզ դարպասից ներս թողնում է, հո՞ մշտապես չի հսկելու քեզ: Կեսօրվա ժամերին ինքը հանգիստ մրափում է ստվերում: Դու ատիթը կգտնես ծիծեռնակին խայթելու. սողալով կհասնես նրա բնին և... սիրտդ կհովացնես:

Սեփական անկարողության գիտակցությունից էլ ավելի թունոտ, նախանձու Սարքոն բազմաթիվ որոգայթներ լարեց արգելք դառնալու համար ծիծեռնակի թոհիքին ու քնքու երգեցողությանը. մեկ փակում էր նրա բնի անցքը, մեկ իր բույնը թափում անցք-դռան պոնկին, մեկ էլ՝ կոտրում բնի ապակին: Այս ամենը հասկանում էր ծիծեռնակն ու խղճում ողորմելի Սարքոյին, որին կուրացրել էր նախանձը և տեսնում էր, որ նա ամեն ինչ անում էր խանգարելու համար իր բնությունից տրված թոշելու և երգելու կարողությանը:

Պատահեց այնպես, որ օրերից մի օր, բույն մտնելուց հետո, ծիծեռնակը մոռացավ փակել դրու-անցքը: Ծիծեռնակին մշտապես հսկողության տակ պահող Սարքոն նկատեց իր համար երանելի պահը: Շեկոն էլ հանգիստ քնած էր: Եվ այն է Սարքոն պատրաստվում էր մտնել ծիծեռնակի բույնը, վրա հասավ Շեկոն ու ծանր թաթը դրեց նրա գլխին:

- Հը, դու կարծում էիր ես քնած եմ, հա՞ ևս մշտապես հետեւել եմ քո արածներին ու սպասում էի այս վայրկյանին, որպեսզի համոզվեմ, որ դու չես կարող քո եղությունից դուրս հանել խայթելուդ բնագդը: Դու բնությունից դատապարտված ես սողալու և բույն թափելու:

Այս ասելով, Շեկոն բռնեց Սարքոյի վզից ու թափով նետեց դարպասից դուրս:

- Այնտեղ, դրսում է քո տեղը, որտեղ կարող ես քեզ համար

սուլել, ֆշացնել, թույնդ թափել, իսկ երգելը քո բանը չի:  
Աստվածն է ընտրում նրանց, ովքեր պիտի երգեն,- ասաց  
Շեկոն ու ամուր փակեց դարպասը:

Այստեղ վերջանում է մեր հեքիաթը և, ինչպես բոլոր հե-  
քիաթներում, երեք խնձոր է ընկնում երկնքից: Առաջինը հե-  
քիաթի հեղինակի համար է, ով միամտորեն հավատում է, թե  
ինչ որ մի օր ամեն մեկն իր տեղը կգտնի կյանքում՝ իր կա-  
րողության սահմաններում:

Քչերն են համոզված ասում, որ մարդկանց կարողություն-  
ները հավասար չեն և չեն ել կարող լինել: Ես այդ քչերի մեջ եմ՝  
երկար տարիների փորձառության վրա հիմնվելով: Ամեն  
մարդ պետք է հասկանա, որ մեզանից ամեն մեկը տարբեր  
ձիրք ունի, տարբեր շնորհ և պիսի հասկանա նաև, թե ինքը  
ինչ կարող է անել և ինչը՝ ոչ: Թե չէ, ինչի՞ նման է, երբ հայերեն  
հազիվ խոսող մեկը դառնում է հաղորդավար, երաժշտական  
ձայնանիշ ու միկրոֆոն չուսած մեկ ուրիշը համբավավոր  
երգիչ, երաժշտանոցը մի կերպ ավարտած մեկը՝ երգչախմբի  
ղեկավար, մեկ կամ մի քանի հոդված մրոտողն ել գրող:

Երկրորդ խնձորն է ծիծեդնակի համար է, որպեսզի նա  
մշտապես թևածի երկնակամարում և իր հրաշալի ձայնով ու  
երգեցողությամբ ջերմացնի մարդկանց հոգիները:

Երրորդ խնձորը, որը փուտած է, մեր խեղճուկրակ Սարք օձի  
համար է: Բնական է, նա չի ուտելու այն, և թերևս կարողանա  
հասկանալ, որ բնությունը ինչ որ տվել է իրեն, դրանով պիտի  
գոհանա, բավարարվի:

Կյանքի օրենքը է. եթե Աստված քեզ տվել է սողալու հատ-  
կություն, ուրեմն՝ սողա, թոշել, երգել կարողացողն է՝ պիտի  
թոշի ու երգի:

Մայիսի 4, 1981 թ.,  
Հու Անջելես

# ԽԱՐԴԱԽՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՆ

## ՈՒ ՄԵՆՔ

(Երգիծական պատում)

Պատմության գիրկն անցավ ևս մի ապրիլի մեկ. այսինքն՝ հումորի և ծիծաղի համաշխարհային տոնի հերթական օրը: Մենք՝ հայերս, հաճախ ծիծաղի և կատակի տոնը շփռում ենք այնպիսի անընդունելի երևոյթի հետ, ինչպիսին սուս խոսելն ու սուս գրելն է, մի խոսքով՝ խաբելք: Ումանք էլ այն համոզումն ունեն, որ ապրիլի 1-ին որքան սուս խոսեն, գրես կամ խաբես, այնքան հաջողակ կլինես:

Սակայն, եկեք չմոռանանք, որ սուտը աղերս ունի բացասական և դրական երևոյթների հետ: Եթե Սերժ Սարգսյանն ասում է, որ ապրիլյան պատերազմի ժամանակ մենք մի քանի մետր տարածք ենք զիշել թշնամուն, կնշանակի բացահայտ սուս է խոսում, իսկ, եթե մոտենալով վիրավոր, անհոյս վիճակում գտնվող զինվորին ասում է, թե վերջինս շուտով կապարինվի, դարձյալ սուս է խոսում, բայց այստեղ, ի տարբերություն նախորդի, ստի հիմքում դրական միտում կա և այդ սուտը ներելի է:

...Եվ այսպես, Գարրիել Սունդուկյանի հերոսները, ստեղու և խաբելու արվեստի մեջ մեծ անուն հանած մեծագույն վարպետներ Զամբախովն ու Զիմզիմովը լսելով Լոս Անջելեսում անուն հանած «Խարդախների և ստի միության» մասին, իրենց մասնագիտությունը կատարելագործելու նպատակով, որոշեցին Թիֆլիսից օդանակ վերցնել ու վայրէջք կատարել Գլենդելի նորաբաց «Մարիոթ» հյուրանոցում:

Հյուրանոց հասնելու ճանապարհին, Զամբախովը դիմում է Զիմզիմովին.

- Բա վուր ասում իմ, թե ախշիկ մարթու տալն իլ մի փեշակ

է, ասում իս՝ չէ: Ի՞նչ ա, ախաղեր... դու չգիտե՞ս, որ ամեն բան խարիլով ա... որ խարում ինք հա, խարում ինք, նստում ինք, թէ վեր ենք կենում՝ խարում ինք հա, խափում ինք, համ՝ խարած ինք, համ՝ խարված ինք...

- Դե, որ եղքան բան իս խմանում, ընչի՞ ինձ քաշ տվիր էս անտեր տեղը, թէ կարող ա խարելու նոր մեթոդներ սովորինք եռ կլուրումը,- ասաց Զիմզիմովը:

- Հյա մի փիքք արա, ախաղեր, երկու հարիր տարի ա անցիլ, իիմա տեխնիկա կա, բան կա, բարաթ-մարաթ փոխիլը, սուտի ընտրութուն անիլը հանց մի բաժակ սապերավի խմես: Ընչի՞ չէ: Որ, միշտ՝ ել կարանք, նոր բան սովորինք մեր արհեստի մէջ: Սուտը աշխարհքը բռնիլ ա, ուշքի արի: Խարիլը ո՞րն ա, տո, ի՞նչ իս ասում.... Ասած է, որ երկիր գնաս եղ երկրի գդակը ծածկի կոսէ, արա քիզ իմ ասում, էս քաղքումը մեկ-մեկ ինչէ թ ին խարում, մարդ կարա՞ մի օր ապրի առանց խարելու: Բա շիմանա՞նք սրանք ոնց են իրար խարում: Հայաստանում ել, գիտես չէ՝ խարիլուն ասում ին «ֆրար զցել»:

- Շատ իս խոսում, Զամբախով, հեն ա, օթելն էրևում ա, շուտով հասնիլ տինկ: Զամա գիտո՞ւմ իս, որ էզուց ապրիլի յոթն ա: Եղ օրը մերերին (*մայրեց*) են գովարանում, արժի որ մենք երանք եղ կլուրը:

- Ի՞նչ իս ասում, տո, ո՞նց կարանք չեթանք, բա դու մեր չես ունեցե ...

- Ձենդ, անամոթ, Աստուց գիտենա, թէ ինչքան իմ սիրում մորս... ներիր, Տեր Աստված, ես մեղա, ես մեղա,- ասաց Զիմզիմովը և ձեռքերն ու գլուխը վեր պարզած, խաչակնքեց ու իշավ մեքենայից:

Հաջորդ օրը երեկոյան ծանոթ վարորդը եկավ և մեր հերոսներին տարավ «Խարեբանների միության» կազմակերպած մայրերի օրվան նվիրված ձեռնարկին:

- Բարով եք եկել, սիրելի հյուրեր,- ընդառաջ զալով մեր թիֆլիսեցիններին ասաց կարճահասակ, գիրուկ, պարարտ փորով, նույնքան պարարտ հետույքով, հարուստ բոխախով (*շաղլիկ ենթակզակ*), խափշիկ հիշեցնող մի կին:

- Երևի Դուք մեր միության ապրիլմեկյան հայտարարության հիման վրա եք եկել, այո՞,- շարունակեց կինը:

- Չե՞, չե՞, քուր ջան, խոնք հեռու տեղեն կու զան,- խոսքի մեջ մտավ մեր հերոսների վարորդ, քոքով, պորտով լենինականցի Լենդրուշը,- եկել են, որ քիչը բան-ման սովորին ձեզնից: Ծանոթացիր, քուր ջան, ես մեկը Զամբախովն ա, են մեկելն ե՞՝ Զիմզիմովը:

- Սխալ օր եք եկել, հարգելի պարոններ, այսօր հանդիսավոր օր է, նշում ենք մայրերի տոնը, խորհրդակցության և փորձի փոխանակման համար եկեք վաղը, այժմ գնանք ներս: Ես ձեզ կտեղավորեմ,- ասաց կինը:

- Ո՞ւր զանք, քուր ջան,- դարձյալ Լենդրուշն եք միջամտողը,- ես քոստ տե՞ղը, հյա մե անունդ ըսա, քուրս...

- Անունս Դիանա է, մեկ-մեկ էլ Դինա են կոչում, բայց դուք ինչո՞ւ եք վիրավորում մեզ «քոստ տեղ» անվանելով այս միջանցը:

- Դիանա ջան, քուրս, լավ է, որ դուն ել ըսիր միջանցք, ինչընդ ել սիրուն անուն ունիս, ըսա տեսնիմ, բա մեր մայրերը սրան են արժանի՞, ի՞նչ է, դու մեր չունի՞ս...

- Խի՞ չունիմ, մեր ել ունիմ, հեր ել ունիմ,- լենինականցու բարբառով փորձեց պատասխանել Դիանան:

- Բա դու, դու մեր չե՞ս,- հարցրեց մինչ այդ պահը դեպքերին հետևող Զիմզիմովը:

Այստեղ մի պահ Դիանան փորձեց խուսափել պատասխան տալուց, բայց որսալով Լենդրուշի իրեն ուղղված սկզբուն հայցը, ստիպված եղավ պատասխանել թիֆլիսեցի մեծահարուստի հարցին.

- Մայր եմ, այո, ամուսին, երեխաններ և քոռներ ել ունեմ Հայաստանի գյուղերից մեկում: Տասնիննազ տարի է այստեղ եմ ապրում, առաջմ անօրեն կարգավիճակով, բավարարվա՞ծ եք, պարոնայք,- խայթող հայցը ուղղելով նրանց, ասաց սևազգեստ տիկիննը:

Հանդիսավոր լոռություն...

Զամբախովը Զիմզիմովի ականջի մեջ.

- Ես ել ասում իմ, թե ես աքարի հոտը ուրդո՞ց ա գալի, ըսենց մեր կուլի, ախալեր, ինքը՝ ըստեղ, ընտանիքը՝ Հայաստան, հե՞յ, աշխարհ, աշխարհ...

Մի կերպ ինքն իրեն հավաքելով, Դիանան ասաց.

- Օրը կիրակի է, մեզ ոչ ոք չի խանգարում, գնացող-եկող չկա, ամբողջ շենքում միայն մենք ենք: Ճիշտ է, փոքր է տեղը, հազիվ 10-15 արդու է տեղափորփում, դե, Դուք ել պիտի հասկանաք, մենք նոր ենք ստեղծել «Խարդախների միությունը», դեռ նյութական միջոցներ չունենք կարգին սրահ վարձելու համար: Եկեք, եկեք, գնանք ներս, Դուք կծանոթանաք միության մյուս անդամների հետ ևս: Ես միության փոխնախագահն եմ:

- Չե, չե, ախալեր, ես մեր տեղը չի, Զիմզիմով ջան,- ասաց Զամբախովը և, որպեսզի ոչ ոք չսիր, նրա ականջին փափսաց. Հողեր մեր գլխին, թե որ ես ջղիկն է (փողոցային կին) միության փոխնախագահը, ի՞նչ պտի սովորինք խոնցմե,- հետո բարձրաձայն,- ել, ել, երթանք...

- Չե, չե, տղերք ջան, եսպէս չի եղնի, ամոք բան կենեք,- ասաց երկար ժամանակ լրություն պահած վարորդ Լենդրուշը,- քիչը նստինք, հետո կելնինք: Ձեզ պտի տանիմ ողորմածիկ Լովիկի ուստորանք: Ընտեղ լավ ասետրինա կուտան:

Համաձայնությունը կնքվեց: Մեր հերոսները մի կերպ տեղափորվեցին շենքի մուտքի նեղիկ միջանցքում և սկսեցին ուշիուշով հետևել անցուդարձին:

- Են ո՞վ ի, որ դիմունանց մեջ տարբեր ի, փոշոտ, դոշերը բաց, փնթի, մաշած ջինսով կարճիկ մարդը,- հարցը գոյաց Զիմզիմովը Լենդրուշին:

- Շատ ճիշտ ել ըսիր, վարպետ, իդոր անունը Փնրի Գրոշ է, միության նախագահն է: Փնրին՝ փնթի է, Գրոշն էլ կպցրել են, որովհետև կոպեկի, գրոշի մեռած մարդ է: Շատ քիալ է Դիանի հետ:

- Իժում, վայ թե՞..., - երկու ձեռքերի ցուցամատներն իրար շփելով, ինչ-որ բան ուզեց հասկացնել միլիոնատերը:

- Ներող կեղնիս, ուստա,- հասկանալով, թե ինչ նկատի ունի դիմացինն ու շարունակեց,- եղ մեզը չիդեմ, համա մենագ

կնիկ է, առանձին կապրի, ի՞նչ խմանաս, մինչև հաստատ չի-մանաս, կըսէ ժողովուրդը: Համա որ Գրոշի խորհրդատուն է, եղիկ փաստ է: Դրսեն մարդիկ կը բերեն, սուտ-մուտ ընտրություններ կենեն, ձեներ կհավաքին ու աթոռ կգրավին:

- Են մեկելն ո՞վ է, քովի սև կոստումովը,- ուզում էր շարունակել Զիմզիմովը, նույն վայրկյանին հնչեց հենց այդ նույն «կոստումովի» բարձրագոչ հոխորտանքը.

- Ե՞յ, Դուք ո՞վ եք, ի՞նչ եք, զգիտեմ, հերիք է խոսեք, եթե ձեզ հետաքրքիր չէ մեր երեկոն, դուրս եկեք սրահից:

- Ըսչի՝ կպոռաս, Ստի Մուկուչ,- ասաց Լենդրուշը,- ամոր չէ՝, խոնք հյուրեր են, վայ թե լսած էլ կեղնիս Զիմզիմովի և Զամբախովի անունները, փոխարեն մոտենաս, բարերմ ըսես, բարի զալուստ ըսես, ելել հոխորտաս զը, ամոր է, ամոր, էսիկ քու օֆիսդ չէ, որ ուզածդ ընես:

Տեսնելով, որ հյուրերը տեղից չեն շարժվում, Ստի Մուկուչն ինքը մոտեցավ նրանց.

- Ինչ է, չլսեցի՞ք, որ ես ասացի դուրս զալ սրահից, Դուք դեռ սա՞ղ եք, ձեզ վաղուց ենք նետել պատմության աղբամանը: Ուզում եք, որ ոստիկան կանչէ՞մ: Ես իրավաբան եմ, կարող եմ նաև Զեզ դատի տալ մեր երեկոյի ընթացքը խանգարելու համար:

Բանը, իհարկե, ձեռնամարտի շիասավ: Մերոնք զիսահակ, լրելայն դուրս եկան միջանցքից: Երկար ժամանակ լրտ մտորում էին մեր հերոսները:

- Ես ի՞նչ փորձորիկ եք, Զիմզիմով, հլա մի փիքը արա, ես ո՞ւր ենք ընկե,- դիմեց ընկերող Զամբախովը,- եղ Ստի Մուկուչը՝ աչկիրը չորս արած, հենա-հենա արլանդըվա (վրացերեն՝ կուրացնել,- ՀԵՆ.Ա.) եր անելու աչկիրը:

- Համա, Լենդրուշ ախաղեր, դուն դիմունանց զիտիս, են ցիլինդրով մարդն ո՞վ իր,- հարցրեց Զիմզիմովը:

- Օ՛, եղիկ ամենեն մենա խարերան ա, զող, ավազակ, դրա համար են անունը դրել Դոն Պիխո: Վայ թե զիտիք, որ Դոն Պիխոն Խոտալիայի ամենահայտնի մաֆիոզներից մեկն ա: Ես միության մեջ ամենը իրան են մտիկ տալի: Փող ուտելու մեծ

վարպետ ա: Զեռումը բոնես չես կարա հաստատի: Ինքը լավ զիտի խաբելու ու սոլի արվեստը: Իրա ձեռով իրեք միություն ա փուլ եկե:

- Ամա, դուզը որ ասիմ, խիլքս բան չի կտրում Զամբախով,- ասաց Զիմզիմովը,- սրանք ի՞նչ խաբեքա, սուտի վարպետ, չէ մի, սրանք քուչի խուժաններ են, ախաղեր: Խսկական խաբեքան էլ նամուս, թասիք կունենա ու հենց ընենց, փուշ տեղը չի խաբի ու սուտ խոսա:

- Իմ խելքն էլ բան չի կտրում ախաղեր, ի՞նչ պտի սովորինք խոնցմե-, Լենդրուշ ախաղեր, տար, տար մեզ ըստեղին, տար եղ քու ըսած: Լյովիկի ռեստորանը, քիչը թարմանանք,- ասաց Զամբախովը:

Լենդրուշն արդեն նախօրոք տեղեկացրել էր ռեստորանի պատասխանատուններին սպասվելիք հյուրերի մասին: Զեռի հեռախոսով կապվեց նրանց հետ ու սեղան պատվիրեց երեք հոգու համար:

Դժվար չէր հասկանալ, որ սեղանը պատրաստված էր հատկապես վրացահայ մեծահարուստների համար: Սեղանի վրա եին սացիվին, ջոնջոլին, խաչապուրին, խինկալին, նշանավոր սուլուգունի պանիրը և սև խավիարն էլ հետը, այդ ամենին ավելացրած ասետրինայի խորովածը: Խմիչքն էլ Ստալինի ամբողջ կյանքում օգտագործած «Խվանչկարա» գինին էր:

Այս ամենը տեսնելով, խաբեռթյան և սուի հայ արքաները՝ անակնկալի եկած, միաձայն գոչեցին.

- Վա՛հ, տո՛, էս ի՞նչ սեղան իք սարքիլ, բա էս Խվանչկարան որդո՞ւց, ասետրինան կ հետը,- ավելացրեց Զիմզիմովը:

- Անուշ արեք, պարոններ, ձեզ նման հյուրերի համար մեզ մոտ ամեն ինչ կճարվի,- ասաց երիտասարդ մատուցողը:

Մինչև հաջորդ օրվա առավոտ տեսեց գինարբուքը, որին միացել էին նաև ռեստորանի աշխատողներն ու հրավիրված զուտնաշիները: Բոլոր ներկաները առատորեն վարձատրվեցին մեր հյուրերի կողմից: Ռեստորանից ոլոր-մոլոր դուրս գալիս, երկու հարյուրանոց խճկելով Լենդրուշի գրապանը բառերն իրար խառնելով, Զիմզիմովն ասաց.

- Լենդրուշ ախաղեր, շնորհակալ ինք ամեն ինչի համար, համա ընչի՝ դրանք մեզ շան տեղ չդրին:

- Հեշ մի նեղենա, մենձ ախաղեր, իդոնք ուսում առած խարեցաներ են, իբր մտավորականներ: Դարը փոխված ա: Հիմա խարելու և ստելու թագա միջոցներ կան: Դուք միամիտ երեխեր եք դրանց մոտ: Վաղը ձեզ Հայաստան եմ ճամբու դնելու: Ընդեղ էլ տեսնիք զը, թե ինչքան են խաբում ու սուտ խոսում:

- Ըսդուր ա ասած, որ խաբում ինք հա, խաբում ինք, նստում ինք, թե վեր ենք կենում խաբում ինք հա, խափում ինք, համ խաբած ինք, համ՝ խաբված :

*Հունվարի 7, 2019 թ.,*

*Լու Անջելես*

# ԸՆՏԱՆԵԿԱՆ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

## ՄԱՅՐՍԻ ՀԱ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԾԱԼՔԵՐՈՒՄ

Իրականում մայրս այնպիսի «ճռի» կենսագրություն չի ունեցել, ինչպես հայրս, բայց մայրն ինքնին կենսագրություն է, ամենաքանակն ու գնահատելին, որ ոչ մի հանձարեղ գիտնական, մեծություն ու հանձար չունի, չի կարող ունենալ: Մայրն արդեն Աստծո հանձարի պարզեն է մարդկությանը:

Մայրս՝ Վերժինեն, եթե չլիներ, հազիվ թե հայրս դառնար այն խոշոր գիտնականը, որին, որպես այդպիսին, ձանաշում է ոչ միայն հայ գիտական աշխարհը, այլև՝ օտար շրջանակները:

Աշխարհացունց Հայոց Ցեղասպանության վերապրողներից էր մայրս: Նրա ծննդյան իրական տարեթիվը հայտնի չէ, ենթադրաբար դրել են 1910 թվականը: Հատ իր մանկական հիշողության նաև ծնվել է Աստապազարում (*Սաքարիս՝ ներկայում Սուզյորեն*): Հիշում էր նաև մորն ու եղբորը և այն չարաբաստիկ գիշերը, երբ իրենք մի խումբ փախստականների հետ թուրքերի հետապնդումից սարսափահար, թաքնված են եղել խոտի դեզի մեջ:

Շուտով թուրքերը հայտնաբերել են մորս ընտանիքի «թաքստոցը» և մայրիկիս ասելով, իր ավագ եղբորն ու պապիկին տարել են «սարի ետևը»: Հաջորդ օրը լուր է եկել, որ բոլոր «սարի ետև» տարածներին մորթել են:

Փոքրիկ Վերժինեն այլս չի տեսնում ոչ պապիկին և ոչ էլ եղբորը: Տեր Զորի ավագուտներում էլ կորցնում է մորը և իր նման հարյուրավոր որբերի հետ բերվում է Պոլիս, որից հետո, որպես թուրքի, տեղափորում են թուրքական որբանցում:

Պատերազմի ավարտին (1918 թվական) «Հայ որբախնամ մարմինը» հսկայական ջանքեր է գործադրում Պոլիսի և նրա շրջակայքի որբանոցներից հայ որբերին հավաքելու համար: Պատմությունը հետևյալն է:

Խնամակալ մարմնի անդամների հրահանգով, մի քանի

հարյուր որբերի, ըստ տարիքի, շարք են կանգնեցնում կենտրոնատեղի հսկայական բակում:

- Ով որ հայ է թող դուրս զա շարքից,- բարձրախոսից հայտարարում է Որբախնամ մարմնի ներկայացուցիչը:

Մայրիկս դուրս չի գալիս շարքից: Իրենից մի երկու տարի մեծ մի աղջնակ, ով ճանաչում էր մորս, վազում է պատասխանատուի մոտ և մատնացուց անելով մայրիկիս, ասում է.

- Այն աղջիկն էլ է հայ:

Բարձրահասակ ամերիկահայ տիկինը մոտենում է մայրիկիս և ասում.

- Ինչո՞ւ դո՞ւրս չես գալիս շարքից, աղջիկս, չէ՞ որ դու հայ ես:

- Ո՞չ, ես հայ չեմ, ես թուրք եմ, - ասում է մայրս:

- Ո՞չ, նա հայ է, Դուք նրան մի լսեք, - փորձում է փրկել մորս իրենից մի քանի տարով մեծ աղջնակը:

Աղմուկի վրա մոտենում է թուրք պաշտոնյան և իմանալով աղմուկի պատճառը, ավելի քան կոպիտ՝ մի կողմ իրելով ամերիկահայ տիկինոջը, լկտիաբար շպրտում է նրա երեսին.

- Չե՞ք լսում ինչ է, աղջիկն ասում է, որ թուրք է, ի՞նչ եք կաել նրանից:

- Ո՞չ, նա հայ է, ես լավ եմ ճանաչում նրան, նայե՞ք, նայե՞ք, նրա ձախ ձեռքի վրա խաչ է դաշված, - ասում է աղջնակը:

Ամերիկահայ տիկինը գիտեր, որ ազգային ինքնությունը պահելու և քրիստոնյա լինելն ապացուցելու համար հայերն Արևելքում, մասնավորապես Թուրքիայում, իրենց երեխաների ձախ ձեռքի դաստակի ներսի կողմում խաչ էին դաշում:

Այլևս կասկած չեր մնում տիկինոց համար, որ մայրս, փոքրիկ Վերժինեն հայ է:

Ի վերօն, այդ բարի ամերիկահայ երիտասարդ կինը, առանց ուշադրություն դարձնելու մայրիկիս աղիողորմ լացին, գրեթե ստիպողաբար, թուրք պաշտոնյայի ահարկու հայացքի տակ, մորս քաշելով տանում և կանգնեցնում է նրա հասակակից-ների շարքում:

Իր ամբողջ կյանքում մայրս օրինում էր իրեն ծանոթ այն աղջնակին, որի շնորհիվ նա վերագտել էր իր ազգությունը:

Միջանկյալ ասեմ, որ այդ աղջնակը հետագայում Եզիպտոսից ընտանիքով ներգաղթեց Հայաստան և գտավ մորս՝ Հունաստանի Սըրա կղզու որբանոցի իր կրտսեր ընկերություն:

1923 թվականին, երբ քեմալականները մոտենում են Պոլսին, Ամերիկյան Նպաստամատույց ընկերության միջոցով մայրիկիս տեղափոխում են Հունաստան, իսկ այնտեղից՝ 1927 թվականին, Փարիզ՝ տեղի Դպրոցասեր տիկնանց վարժարանում ուսանելու:

Հենց այս վարժարանի հանդեսներից մեկի ժամանակ էլ հայրիկս ծանոթանում է գեղեցկուիի Վերժիննեի հետ ու անմիջապես սիրահարվում: 1930 թվականին ամուսնանում են: Մեկ տարի անց ծնվում է եղբայր՝ Արսենը:

Մինչև Հայաստան ներգաղթելը հայրս աշխատում է կարի արհեստանոցում որպես ձեւարար: Կատարելագործվելով տղամարդու տարատ կարելու արհեստում, հայրս ու մայրս իրենց «ձեռնարկությունն» են բաց անում բնակարանում: Հայրս տարատ է կարում, իսկ մայրս դրանք տանում է Փարիզի առևտրական շուկաները և իրացնում: Երեկոյան ժամերին հայրս գրադարձում է գրական գործունեությամբ և գիտական հոդվածներ հրատարակում տեղի հայկական մամուլում:

Փարիզի Բանիո թաղամասի երկիարկանի մեր տունը այսօր էլ կա, որտեղ ծնողներս ավելի քան հինգ տարի երջանիկ օրեր են անցկացրել սրանից 90 տարի առաջ՝ աշքները հառած արշալույսին, որտեղից պիտի բացվեր մի նոր կյանքի սկիզբը, այս անգամ արդեն Մայր Հայրենիքում:

Եկավ օրը և 1936 թվականին խորհրդային նավը ներգաղթող հայերի մի մեծ խմբով հայտնվեց Վրաստանի Բաթումի նավահանգստում:

Ի դեպ այդ նավով Հայաստան էր բերվում մեկ տարի առաջ մահացած Կոմիտասի աճյունը: Այդ նավի վրա են եղել նաև մի խումբ հայ մտավորականներ, որոնցից կարելի է հիշել քանդակագործ Երվանդ Քոչարին, դերասան Արման Կոթիկյանին, դիրիժոր Եաղուպյանին, հայագետ-պատմաբան Հակոբ

Անասյանին և շատ ուրիշների:

Ներգաղթած ֆրանսահայերին բնակարան են հատկացնում Արաքիր թաղամասում, հատկապես նրանց համար կառուցված երկիարկանի փայտե յոթ բարաքներում:

1937 թվականին ես եմ լույս աշխարհ գալիս և գիտեք որ տե՞ղ... կառքի մեջ:

Պատմությունը հետևյալն է.

Մայրիկիս երկունքի ցավերը բռնում են տանը, երբ տանը ոչ ոք չի լինում: Այդ օրերին ոչ մի փոխադրամիջոց չկար Արաքիրում, բացի շրջուվետին պատկանող ձիակառքից:

Օգնության է հասնում շրջուվետի նախազահ Վարսիկը, ով նախապես մեծաքիվ նվերներ էր ստացել մերոնցից, և՝ ի շնորհակալություն, կարգադրում է սայլապանին մայրիկիս շտապ հիվանդանոց տանել: Սակայն, ես «շտապել» եմ և դուրս եմ պրծել մորս արգանդից հենց կառքում: Մի բուր դառած խեղճ մայրս, ամոթահար սպասել է մինչ այն պահը, երբ հիվանդապահուհիները կարողացել են հիվանդասենյակ տանել նրան ու ավարտել Աստծո կողմից օրհնված գործը:

Ես չորս տարեկան եի, երբ հայրիկիս տարան բանակ: Մայրս, որ մինչ այդ բնավ չեր աշխատել Հայաստանում, ստիպված եղավ՝ տիկին Վարսիկի միջնորդությամբ, մի քանի ամսում ձեռք բերել խոհարարի մասնագիտություն ու աշխատանքի անցնել:

Պատերազմի առաջին իսկ տարում Արաքիրում բացվեց կառավարական մի ճաշարան Լենինգրադից տարհանված մի քանի հարյուր մարդկանց համար:

Մայրիկիս կողմից ֆրանսական շքեղ նվերներով շլացած տիկին Վարսիկի կարգադրությամբ մայրս աշխատանքի է անցնում այդ ճաշարանում՝ որպես խոհարարի օգնական: Շատ չանցած, նա դառնում է զիլավոր խոհարար, որի շնորհիվ սովոր փրկվում ենք ոչ միայն ես ու եղբայրս, այլև մեր ծանոթներն ու հարևանները, ովքեր, մայրիկիս գծած «ժամատախտակի» համաձայն, ճաշարանի ետևի մուտքից գաղտնորեն, իրենց կաթսաներով լի կերակուրը հասցնում էին

իրենց բնակարանները:

Երկու-երեք տարի տևեց մեր այդ «արքայավայել» կյանքը: Սովոր տիրեց մեր և դրացիների ընտանիքներին, երբ ավարտվեց պատերազմը: Գերությունից վերադարձած հայրս՝ դեռևս գործի շանցած, մայրիկիս ազատել տվեց աշխատանքից:

- Մնա տանը և երեխաներին հոգ տար, ես կաշխատեմ և ամեն ինչ տեղը կընկնի,- ասաց հայրս:

Ի՞նչ իմանար խեղճ մարդը, որ իրեն թույլ չէին տալու վերադառնալ նախկին աշխատանքին՝ պատերազմի ընթացքում գերի ընկնելու պատճառով:

Ճար չկար, պետք էր ինչ որ բան անել ընտանիքը կերակրելու համար: Փոքրամարմին հայրիկս որևէ այլ աշխատանք անելու ունակ չէր, նրա «գործը» միայն գիտական աշխատանքով գրաղվելն էր:

Մայրիկս փորձեց վերադառնալ իր նախկին աշխատանքին, սակայն այդ օրերի համար բավականին «յուղոտ» մասնագիտությանը տիրանալու համար անհրաժեշտ էր ԽԾԲ (ինսալի, ծանոթ, բարեկամ) ունենալ: Վարսիկն արդեն հրաժեշտ էր տվել իր պաշտոնին և ինքն էլ օգնության կարիք ուներ:

Մեր տան փոքրաթիվ արժեքավոր իրերն արդեն վաղուց էին դարձել օտար մարդկանց սեփականությունը: Քիչ թե շատ ունեոր «ախպարների» համար դժվար չէր դիմագրավել սովոր անհեռանկար վիճակը: Ըստ երևույթին, նրանք նախապես իմացել էին, թե ինչ երկիր են զնում և իրենց ողջ կանխիկ դրամը վեր էին ածել ապրանքների:

Միամիտ, աշխարհի անցուղարձից անտեղյակ ծնողներս մի խոշոր ճամպրուկով լի ֆրանսիական ֆրանկ էին բերել Հայաստան՝ ապահով ապրելու համար:

- Էղ ձեր կապիտալիստական փողերը տվեք Ձեր երեխաներին, թող դրանցով խաղան: Մեր սովետական երկում միայն ոռութի, մեր երկրում դրամի փոխանակություն չկա, պարզ է,- զգալի արգահատանքով արտահայտվել էր բանկի աշխատող կինն ու պատուհանը շրմփացրել հորս երեսին:

Բակապես էլ, մենք՝ փողոցի երեխաներս, դրանցով նորա-

հայտ խաղ էինք ստեղծել մեզ համար:

Ուրեմն, մնում էր, որ մայրս ու 14-ամյա եղբայրս կարողանային ծանր աշխատանքով կերակրել մեր ընտանիքը:

1952 թվականին Արարկիրի շրջանային սովետը վարձակալությամբ գրադեցրեց մեր տան դեպի փողոց նայող սենյակներից մեկը և դարձրեց մասսայական գրադարան ու մայրիկիս նշանակեց գրադարանավարութիւն: Երեք տարվա ընթացքում ես ընթերցեցի գրեթե բոլոր գեղարվեստական գրքերը:

Ստալինի մահից հետո, մեր ընտանիքի նյութական վիճակը փոքր ինչ բարելավվեց: Մայրիկս ամեն կարելին արեց, որպեսզի հայրիկս ամբողջովին նվիրվի գիտական գործունեությանը՝ ազատելով նրան ընտանեկան բոլոր հոգսերից:

Մշտապես շարժուն, ժամանակակից հետո, ասող-խոսող, բանիմաց ու աներևակայելի ընթերցասեր մայրս կյանքի վերջին տարիներին գրեթե կորցրել էր տեսողությունը և ես կամ հայրս նրա համար ընթերցում էինք օրվա բոլոր թերթերը: Նա տեղյակ էր հայ աշխարհի բոլոր անց ու դարձից, թեև 1978 թվականին տեղափոխվել էինք ԱՄՆ: Մայրս շատ էր երազում՝ գոնե որպես զբոսաշրջիկ, գնալ արդեն անկախացած Հայրենիք՝ վերիիշելու իր 42 տարվա դժվարին, բայց այդ օրերի համար քաղցր հիշվող տարիները:

Սակայն, ավաղ, 1993 թվականի նոյեմբերի 23-ին նա ամբողջությամբ կորցրեց հիշողությունը և ընդամենը չորս օրվա մեջ հոգին ավանդեց, առանց դույզն նեղություն պատճառելու մեզ՝ ընտանիքի անդամներին:

*Սորս մահից մեկ շաբաթ անց, նոյեմբերի 30, 1993 թ.,  
Հու Անգելես*

# ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ «ՀԱՅՐ» ՍՏԱԼԻՆԻ ՀՈԲԵԼՅԱՆԸ

(Հայրիկիս՝ Հակոբ Անասյանի հիշատակին)

1947 թվականից հետո Խորհրդային երկրի «Հայր» Ստալինը հաջորդաբար, մի քանի տարի շարունակ, լայն սպառման ապրանքների, սննդամթերքի գների իջեցում էր իրականացնում, որը թեև հիմնականում ոչինչ չէր փոխում ժողովրդի կենսամակարդակի մեջ, այնուհանդերձ մեծ խանդավառություն էր առաջ բերում երկրի ողջ բնակչության շրջանում:

1949 թվականը մեծ իրադարձությունների տարի էր: Հայրիկս գնում-զալիս էր, չգիտեինք թե ուր, բայց գնալով մոայլ տեսք էր ստանում նրա դեմքի արտահայտությունը: Մի օր էլ, երբ երկուսով էինք տանը, ասաց.

- Հենրիկ, տղաս, ես այսօր երեկոյան կարևոր տեղ եմ գնալու, եթե պատահի, որ մեկ-երկու օրից չվերադառնամ, այ այն նկարի ետևում մի ծրար կա,- ցույց տվեց Ֆրանսիայից բերած, պատից կախված նկարը (այն ներկայիս ամրացված է իմ աշխատաւենյալի հարավային պատին, - ՀԵՆ. Ա.) և ասաց.

- Երբ մի քիչ էլ մեծանաս, առանց բացելու ծրարը, ինչ որ ձևով կուլարկես արտասահման: Խնդրում եմ, հարց չտաս: Խոստացիր, որ մորդ և եղբորդ ոչինչ չես ասի այս մասին:

Անշուշտ խոստացա, սակայն տարակուսանք ապրեցի այն մտածումով, թե ինչո՞ւ հայրս իմ տասնութ տարեկան ավագ եղբորը չի վստահում նման կարևոր հանձնարարություն, այդ վստահում է ինձ՝ տասներկուսամյա մանջուկիս:

Հետազայում, իհարկե, հասկացա: Եղբայրս միամիտ, ծայրահեղ ազնիվ մի տղա էր՝ Ֆրանսիայում ծնված, նույնքան ծայրահեղ անփորձ, հազիվ թե նա կարողանար պահել այդ գաղտնիքը: Մշտապես ես էի նրան օգնության հասնում փողոցային «մարտերի» ժամանակ: Հայրս շատ լավ գիտեր ու:

Երրորդ օրը հայրս տուն եկավ փոքր ինչ պայծառացած: Հստակ էր, ինչ որ բան էր փոխվել նրա կյանքում:

Հետաքրքրությունից դրդված, պատեհ մի ժամի փորձեցի հայրիկիս մատնանշած նկարի ետևի ծրարը նայել, բայց այնտեղ ոչինչ չկար: Այդպես էլ, առ այսօր ես զգիտեմ, թե ինչ էր պարփակված այդ ծրարի մեջ, և թե ինչու էր հայրս մեզնից գաղտնի պահում ծրարի բովանդակությունը: Հասուն տարիքում անզամ ես ինձ թույլ շեմ տվել հիշեցնել նրան այդ մասին:

Պարզվեց, որ Ակադեմիայի պատմության ինստիտուտի ակադեմիկոսներ Մորուս Հասրաթյանն ու Աբգար Հովհաննիսյանը հետաքրքրված են եղել հորս ճակատագրով:

Բազում միջնորդություններով և իրենց ստորագրություններով ամրագրված երաշխավորագրերով, նրանք կարողացել էին բացատրել պետական իշխանական մարմիններին (ԿԻՖ՝ պատերազմի ժամանակ հորս գերի լինելու հանգամանքները, նրա զիտական մեծ պաշար ունենալու փաստը, և ըստ այնմ էլ, նրանց հաջողվել էր աշխատանքի տեղ ապահովել հայրկիս համար Ակադեմիայի պատմության ինստիտուտում:

Սոտենում էր «Մեծ առաջնորդ» Ստալինի ծննդյան 75-ամյակը: Ողջ խորհրդային երկիրը ողողված էր միլիոնավոր պաստառներով, թոռուցիկներով, Ստալինի մեծադիր նկարներով, քանդակներով, արձաններով:

Խորհրդային Հայաստանն էլ «որոշել» էր «Պողպատե մարդուն» (Գուսան Հավասու բնութագրումն է. ՀԵՆ. Ա.) իր երախտագիտությունը հայտնել Երևանի բարձունքում, «Հայթանակի» գրոսայգում կանգնեցնելով նրա վիթխարի արձանը:

1950 թվականի հոկտեմբերի 29-ին հազարավոր մարդկանց ստիպողաբար տարել էին «Հայթանակի» գրոսայգի՝ Ստալինի արձանի բացմանը ներկա լինելու համար: Հայրիկս էլ, պարտավորված, որպես զիտական մտքի ներկայացուցիչ, պարտավոր էր ներկա լինել այդ միջոցառմանը: Ընդառաջելով իմ խնդրանքին, հայրիկս ինձ էլ տարավ իր հետ:

Երանի տարած չլիներ: Ահավոր սառնամանիքի պայմաններում, մժեղի պես իրար զլիսի հավաքված ամբոխը, ժամեր

շարունակ լսում էր «Մեծ Առաջնորդին» աստվածացնելու մեջ մրցումի ելած ճառախոսների հազար ու մի համեմատություններով լի ելույթները:

- Հայրիկ, ոտքերս սառել են, փայտացել, ել չեմ դիմանում, արի գնանք,- ասում էի նրան ու հետև կ լաց լինում:
- Ոչինչ, տղաս, դիմացիր, քիչ մնաց,- անզորությունից չիմանալով ինչ անել,- ասում էր հայրիկս:

Ես այդ ժամանակ չեմ հասկանում, թե ինչու հայրիկս չեր կարող հեռանալ, երբ այս ծովածավալ ամբոխի մեջ «շունը տիրոջը չեր ճանաչում»: Այդ հետո էր, որ ես հասկացա, թե հայրս ինչու չեր կարող միտինգը կիսատ թողնել ու տուն տանել սառնամանիքից կուչ եկած իր տասներկուամյա որդուն:

Դրանք այն տարիներն էին, երբ մարդիկ վախենում էին նույնիսկ սեփական տանը իրենց մտքերն ազատորեն արտահայտել:

Այսօր ծայրահեղություն կարելի է համարել այն իրական դեպքերը, երբ որդին մատնում էր հորը և հակառակը: Մարդկանց շուրջը վիստում էին լրտեսները:

Տարիներ անց, հայրիկս պատմում էր իրական մի դեպք, որը տեղի էր ունեցել Ակադեմիայի պատմության ինստիտուտում՝ Ստալինի հոբելյանի օրերին:

Ինչպես բոլոր հիմնարկներում ու հաստատություններում, իիշալ ինստիտուտում էլ են պատրաստվում ըստ արժանվույն դիմավորել Մեծ Առաջնորդի հոբելյանը: Հիմնարկի կուսկազմակերպության քարտուղարը կարգադրություններ է անում տարբեր պաստառներով, կոչերով զարդարելու միջանցքի պատերը:

Քաղաքի հայտնի նկարիչներից մեկը նկարել է Ստալինի դիմանկարը, բավականին խոշոր յուղաներկ մի նկար, որը պիտի փակցվեր միջանցքի ամենատեսանելի տեղում, որպեսզի ամեն ոք միջանցք մտնելիս և դրւրս գալիս, տեսնի Առաջնորդին:

Հավաքվում են մի քանի կուսակցականներ և որոշում, թե որտեղ պիտի կախվի Առաջնորդի մեծադիր և շքեղ շրջա-

նակով յուղաներկ նկարը: Բերում են մի հին, կոտրած-թափած աստիճան: Կերած-խմած ներկաներից ոչ ոք չի համարձակվում նրա վրա բարձրանալ:

- Կանչեք Չամշյանին, նա թեթև է, իր համար հեշտ կլինի բարձրանալ,- ասում է կուսակցության քարտուղարը:

Կանչում են կրտսեր գիտաշխատող եզիպտահայ մտավորականին: Վերջինս վախով-դողով բարձրանում է օրորվող աստիճանի վրա և փորձում երկարե կեռի վրա կախել առաջնորդի նկարը: Մի քանի անհաջող փորձերից հետո, նա հանկարծ ձեռքից բաց է թողնում նկարը, որն ընկնում է ծնկի վրա՝ անտանելի ցավ պատճառելով իրեն:

- Վա ին, հերն եմ անիծել, աս ի՞նչ սոսկալի ցավ է,- անզիտակցարար ձեռքը տանելով ծնկին,- ասում է խեղճ մտավորականը և ձեռքից բաց թողնում նկարը, որի արդյունքում շարդուփշուր է լինում գեղեցիկ, թանկարժեք շրջանակը:

- Լսեցի ք, լսեցի ք, թե ինչ ասաց,- վրա է տալիս կուսկազմակերպության քարտուղարը,- նա մեր մեծ Առաջնորդին ասաց «հերդ եմ անիծել»: Բոլորդ լսեցիք, բոլորդ ականատես եք, այդպես չէ:

Ո՞վ կհամարձակվեր հակառակն ապացուցել, որ բոլորս էլ կարող էինք նման արտահայտություն թույլ տալ առանց որևէ մեկին նկատի ունենալու, եթե հանկարծակի, անիմաստ ցավի տեր ենք դառնում, կամ ինչ-որ մի բան մեր ուզածի պես չի ստացվում:

- Պարոն Սաղաթելյան,- ուզում է ինչ որ բան ասել մի բուր դառած մտավորականը, բայց նրան ընդհատում է կազմակերպության քարտուղարը.

- Ի՞նչ պարոն, ընկեր Չամշյան, Դուք դեռ Ներոսի ափի՞ն եք, աշխատում եք մի գիտական հիմնարկում և դեռ չեք սովորել «ընկեր» ասել: Լավ, թողնենք այս ամենը և անցնենք գործի: Ընկեր Մովսիսյան,- դիմելով իր օգնականին՝ շարունակում է իր խոսքը կուսքարտուղարը,- շտապ կուսակցական ժողով հրավիրեք՝ քննելու համար ընկեր Չամշյանի հարցը:

- Ընկեր Սաղաթելյան, ի՞նչ հարց կուզեք քննել, ես ի՞նչ հան-

ցանք գործած եմ: Սովորական, ժողովրդական արտահայտություն է, ամեն մարդ կգործածե «Հերն եմ անիծել», «Խերն եմ անիծել», երբ հանկարծակի, անսպասելի ցավ մը կզգա, կամ որևէ դեպքեն հուսախար կըլլա: Խոսք էր՝ ըսինք, անցավ զնաց: Ինչո՞ւ պատմություն կշինեք:

- Հյա մի սրան լսեք, ընկերներ: Պատմություն ենք շինում, հա՞: Դու դեռ առանց ամաշելու հարցնո՞ւմ ես, թե ի՞նչ ես ասել: Դու հայինյեցիր մեր մեծ Առաջնորդին, ընկեր Ստալինին: Բոլորն այստեղ են և նրանք լսեցին, այդպես չե՞ն, ընկերներ, շրջվելով կողքիններին, վճռականորեն եզրափակում է իր խոսքը կուսակցության քարտուղարը:

Խեղճ Զամշյանը զգալով, որ ինքը վիճելով արդարության չի հասնելու, գլուխը կախ գնում է իր աշխատասենյակը, որտեղից տասը րոպե անց դուրս են հրավիրում, իսկ երկու օր անց, նա ամբողջ ընտանիքով, Սիբիր ուղևորվող ապրանքատար գնացքի մեջ էր, հարյուրավոր այլ հայ ընտանիքների հետ:

*Հորս մահվան 30-ամյակին, հունվարի 30, 2018 թ.,  
Հոս Անջելես*

## ՄԱՆՈՒԿ ՀԵՆՐԻԿԸ ՈՐՊԵՍ ԿՈՇԻԿ ՆՈՐՈԳՈՂ

Հինգ տարեկան հասակում, Երևանի Սարի թաղի հիվանդանոցից դուրս գալուց հետո փոքր ինչ կաղում էի: Անկանած դա պատճառ էր, որ մեր թաղի տղաները, թեև ոչ բարձրածայն, բայց ակնառու ձևով ցույց տային իրենց արզահատանքն իմ նկատմամբ, մանավանդ որ, իրենց համար օտար էի՝ պոլսեցու զավակ: Ականջիս հասնում էին նաև «Պոլսեցու ձուտ» անվանարկման շշուկները: Այդ հետո էր, որ 1920 թվականից մինչև 1946 թվականը Պոլսից, Հունաստանից և Ֆրանսիայից ներգաղթած, «Պոլսեցի» ածականով հորջորջվող հայերը՝ խառնվելով 1946 թվականից հետո աշխարհի բոլոր հորիզոնականներից ներգաղթած հայերին, դարձան «ախպարներ»:

1939 թվականին մենք թողել էինք մեր ընտանիքի համար հարազատ դարձած ֆրանսահայերի թաղամասն ու պետական վարկով տուն էինք կառուցել մի թաղամասում, որտեղ ոչ մի «ախպար» չկար և տեղի բնակչությունը հիմնականում ցածր խավից էր:

Տեղի բնակչության համար մենք երկար տարիներ խոսակցության նյութ էինք մեր վարք ու բարքով, հագուկապով և կենցաղավարությամբ: Ծեծ ու կոյիվ սարքելը փողոցում սովորական երևույթ էր: Ուստի, անհրաժեշտ էր, նույնիսկ փոքր տարիքում պայքար մղել փողոցի երեխաների հետ՝ սեփական եսը հաստատելու համար: Ես շատ շուտ համակերպվեցի միջավայրին և մտա «լավ տղերքի» շարքը, հետո կ դարձա «հեղինակություն»:

Տեղինակություն վայելող ընկերներիցս մեկը՝ ծնունդով ապարանցի Բորիսը, հետազայում դարձավ հայկական պարարվեստի ճանաչված գործիչներից մեկը: 60-70 տարիների

բաժանումից հետո ես և Մարիետան 2010 թվականին նրան հանդիպում ենք Սևանի ճաշարաններից մեկում։ Կորած հարազատին գտնելու պես փաթաթվում ենք իրար ու հաճույքով վերիիշում մեր դառն, սակայն այս օրերի համար քաղցր մանկությունը։

1944 թվականի դպրոցական տարեշրջանի նախօրյակին՝ ամբողջովին բուժված ու առողջացած (Չնորհիվ մայրիկիս բացառիկ խնամքի և հոգածության), ուրք էի դնում դպրոցից ներս։ Շնորհիվ հայրիկիս մեծաթիվ գրքերով լի գրադարանի հրատարակությունների, որոնք նա քերել էր Ֆրանսիայից և հարստացրել իր գրադարանը տեղական հրատարակություններով, ես՝ մշտապես թերթատելով իմ երևակայությանը հասու գրքեր և նկարներով լի պարբերականներ, ինքնուրույն սովորեցի հայերեն կարդալ, ըստ որում՝ արևմտահայերեն և այն էլ դասական, մեսրոպյան ուղղագրությամբ։

Դպրոցի իմ փոքրիկ աշակերտական սեղանը դասասենյակի ամենավերջին անկյունում էր, ինչպես ասում են՝ աշքից հեռու, որը հնարավորություն էր տալիս աննկատ կարդալ որևէ գիրք։ Այդօր էլ գրադարակիս վրա էր Թէոդիկի «Տարեցուցի» գույզ հատորները, որոնք գաղտնաբար, ձանձրույթս փարատելու համար, ընթերցում էի դասի ընթացքում, մինչ մյուս աշակերտները «այբ-բեն-զիմն» էին սովորում։

Եվ մի օր, ուսուցուիի ընկեր Մարգոն (իսկապես այդպես էր նրա անունը, ուրիշ տեղ չտանեք...) նկատեց, որ ես ինչ որ այլ բանով եմ գրադված ու մոտեցավ ինձ։

- Այդ ինչո՞վ ես գրադված, Անասյան։

- Հեսց այնպես, ընկեր Մարգո, զիրք եմ թերթատում։

Տեսնելով ծնկներիս վրա կիսաբաց Թէոդիկը, ուսուցուիին վերցրեց այն ու ասաց։

- Իսկ հիմա վեր կաց և արի առջևի շարք, որպեսզի ուշադրությամբ հետևես դասերին, իսկ դու՝ Լյուդվիգ, արի Հենրիկի տեղը։

Մինչ ես փոխում եմ տեղս, ընկեր Մարգոն՝ առերևույթ լուրջ տեսք ստացած, Թէոդիկի էջերն է շուռումուտ տալիս։ Ես

վախից քարացել եմ նստած տեղում, իսկ դասասենյակում կարծես մահաբեր լոռություն է, ոչ մի ձայն, ոչ մի ծպտուն, նույնիսկ սովորական քշիչոցն անզամ չկա: Մեկ էլ՝ տղամարդու բարիտոն ձայնով, հնչում է ընկեր Մարգոյի բարձրագոչ խոսքը.

- Եվ դու, Անասյան, կարողանո՞ւմ ես կարդալ այս գիրքը:
- Այո, ընկեր Մարգո,- վախվորած, հազիվ լսելի ձայնով պատասխանում եմ ես:

- Հապա կարդա տեսնեմ, բարձրաձայն, թող բոլորը լսեն, թե ինչպես ես կարդում այս բուրժուական հրատարակությունը...,- լոռություն դասարանում:

Այս անզամ արդեն համարձակ, պատահական մի էջ բացելով, բարձրաձայն սկսեցի կարդալ.

- Փափազյանն իսկապես նշանավոր դերասան մըն է, ունի բնական մեծ ձիրք և գեղարվեստական փայլուն դրամախոսություն...

- Բավական է, Հենրիկ, բավական է, ապրես, տղա ջան, ո՞վ է քեզ սովորեցրել հայերեն կարդալ, այն էլ արևմտահայերեն:

- Ես ինքս եմ սովորել, ընկեր Մարգո, ինքնուրույն:
- Ապրես, ապրես, տղա ջան, շարունակիր կարդալ:

Դասղեկի այս արտահայտության վրա մի ահավոր իրարանցում սկսվեց դասարանում, ոմանք ծիծաղում են, ոմանք էլ ծափ են տալիս, համընդիմանուր խանդավառություն է 30 աշակերտների միջև: Իհարկե, նրանք ոչինչ չեն հասկացել իմ կարդացածից, բայց ուրախ են, որ իրենց «պոլսեցի-ախպար» ընկերը հաղթանակով դուրս եկավ վտանգավոր «մենամարտից»:

- Լոռություն,- ձեռքը հուժկու հարվածով խփելով սեղանին, վայրկյանի մեջ լոեցրեց աշակերտներին խստաբար մանկավարժը:

- Իսկ իհմա ինձ լսիր, Անասյան: Դու, այսուհետև, վաղվանից սկսած մինչև ուսումնական տարին ավարտվի, դպրոց կզաս երկրորդ ժամին: Իսկապես, քեզ համար դժվար և անհետաքրքիր կլինի առաջին ժամը՝ մինչ սրանք տառածանաչ

դառնան ու քիչ-միշ կկարողանան հայերեն կարդալ-գրել ստվորել, ցույց տալով դասարանը, ասաց ընկեր Մարգոն:

Այդ օրվանից, ամբողջ ուսումնական տարում ես մեկ ժամ ուշացումով էի դպրոց գնում: Այդ ընթացքում ես հասցնում էի երկու անգամ գնալ փողոցի ծայրին գտնվող միակ ջրի ծորակը և դույլով ջուր բերել տան համար:

Պատերազմի ավարտի հոտն արդեն բոնել էր մեր թաղը: Փոքրաթիվ մարդկանց դեմքերին ակնառու էր ժպիտը, իսկ մեծ թվով կանայք կ սև զիսաշոր կապած, փորձում էին մեղմ ժպիտով կիսել ժողովրդի ուրախությունը:

Պատերազմի վերջին շրջանի ամերիկյան օգնությունը, որն իրականացվում էր ժողովրդին ձրիաբար ձվի փոշի և չոր կաթ բաժանելով, բավական ոյուրացրել էր ազգաբնակչության տնտեսական վիճակը:

Երկար ժամանակ էր, որ մայրս որեւէ լուր չուներ հայրիկից: Նա ճիշտ է սև զիսաշոր չէր կապում, բայց որքան մոտենում էր պատերազմի ավարտը, այնքան ավելի տխուր ու թախծոտ էին դառնում նրա աշքերը: Մեր միակ միսիթարանքը կիրակի օրերին եկեղեցի գնալն էր և մեկ կ՝ յուրաքանչյուր օր, քնելուց առաջ Հիսուսի պատկերի առջև աղոթք անելը, «Աստված պապա, վերադարձրու մեր հայրիկին», - մրմնջում էինք երեք միասին, այնուհետև խաչակնքում էինք ու պառկում քնելու: Պատահում էր, որ մայրս այդ ամբողջ «արարողությունն» ավարտում էր «Հայր մեր» աղոթքով և Կոմիտասի «Կոռոնկ» երգի մեղմ, հուզիչ կատարմամբ:

Եկավ 1945 թվականի մայիսը: Մեր թաղի ոստիկանության գործակալ, լիազոր Ատոմը՝ մեր փողոցը վեր ու վար անելով, բղավում էր.

- Դրոշները, դրոշները, դրոշները կախել պատուհաններից: Ե՞լ, դու, Վարդուշ քույրիկ, ի՞նչ ես կախվել պատուհանից, չես լսո՞ւմ, թե ի՞նչ եմ ասում, շուտ արա՛, կարմիր դրոշը կախիր պատուհանիդ վրայի են վերևի երկարե կախիչից...

- Հա, հա, տեսնում եմ, ընկեր Առում, հիմա, հիմա կկախեմ,- Ել ավելի գորեղ բղավոցով պատասխանեց Վարդուշը և մեկուսի ավելացրեց,- Թաղեմ բոյդ, անտեր շուն, հիմա ո՞ւ ես ծախելու:

Վերջապես փողոցի կենտրական պանը ամրացված այումինե բարձրախոսից հնչեց Հիտլերի ամենաոխերիմ թշնամու՝ Լեհասահ ձայնը.

- Խոսում է Մոսկվա՝ Աշխատում են Սովետական Միության բոլոր ռադիոկայանները...

Չզիտեմ, թե որքանով է ճիշտ, իբր Հիտլերն ասել է թե, եթե Մոսկվա մտնի, առաջին գործը պիտի լինի Լեհասահ լեզուն կտրելը:

... Ժողովրդի ցնծությանը չափ ու սահման չկար: Իհարկե, կային այնպիսի ընտանիքներ, որոնց հարկից ներս տխուր տրամադրությունն էր գերիշխողը: Դրանք այն ընտանիքներն էին, որոնց զինվորներից լուր չկար: Հնարավոր չեր իմանալ, նրանք անհայտ կորած են, թե՛ ինչպես փսխում էին միմյանց ականջներին, գերության մեջ են կամ մնացել են Եվրոպայում:

Արարկիրում ապաստանած լենինգրադցիներն ել աստիճանաբար վերադառնում էին իրենց հայրենի քաղաքը, որի պատճառով ել մայրիկիս աշխատանքային ժամերը զնալով նվազում էին: Քիչ ժամեր աշխատելի չխանգարեց, որպեսզի ճաշարանում որպես ավագ խոհարար աշխատող մայրիկս կարողանար ապահովել ինձ ու եղորս ճաշարանի կերակուրներով, որոնց մեջ անպակաս էր ոռւսական բորշը:

Պատերազմն ավարտվեց, անցան հաղթանակի տոնախմբությունները: Առերևույթ խաղաղվեց մթնոլորտը. ով պիտի վերադառնար պատերազմից վերադարձավ ողջ-առողջ կամ հաշմանդամ, անոտ, կամ անձեռ, իսկ չեկածների ճակատագիրն անհայտ էր: Հենց այդ անհայտության մեջ էր խարխափում մայրիկիս սիրտը և ծվասում հոգին:

Առջևում ամառ էր, դպրոցական արձակուրդների օրեր: Որպեսզի ես փողոցում թրև չգամ և հարցեր չունենամ թաղի «լավ տղերքի» հետ, ովքեր մշտապես խնդիրներ էին ստեղծում

ամբողջ Արարքիրում, մայրիկս որոշեց ինձ աշակերտության տալ կոչիկ նորոգող հրաշալի վարպետ, վանեցի Ավոյի մոտ: Ինչպես ասում են, զործը եռում էր նրա արհեստանոցում:

Ամեն օր, երկարյա ճշտապահությամբ, կեսօրվա ժամը 12-ին վարպետ Ավոն ինձ մեկ ոուրի քսան կոպեկ էր տալիս և պատվիրում գնալ խանութ ու գնել մեկ շիշ «Հրազդան» զինի: Խանութի աշխատողները շատ լավ զիտեին, որ ես զինին գնում էի գծուծ վանեցի Ավոյի համար և վերադարձնում էին երեք կոպեկի մանրը, թեև մինչև հինգ, երբեմն ավելի մանր դրամ չվերադարձնելը մի տեսակ օրենքի ուժ էր ստացել հայաստանյան խանութներում: Գնորդներն էլ արդեն վարժվել էին այդ քալանին:

Ես՝ զինու հետ մեկտեղ, վարպետին վերադարձնում էի երեք կոպեկի մանրը և երբեք չպատահեց, որ վարպետ Ավոն ասեր «տղաս, քեզ պահիր այդ կոպեկները»: Ավելին, տնից քերած շքեղ աղանդերները միայն ինքն էր վայելում: Ինչպես ասում են՝ «քերնիս ջրերը հոսում էին» քառակուսի փոքր սեղանի սփոռոցի վրա զգուշորեն դասավորված բազմատեսակ ուտեստները տեսնելով: Նա անկասկած նկատում էր ուտելիքին ուղղված իմ հայացքը, սակայն չտեսնելու էր տալիս և ասում. «Գնա դուրս, երեխեքի հետ մի քիչ խաղ արա, մինչև վերջացնեմ ուտելս»:

Մի քանի տարի շարունակ, ամոան արձակուրդներին, նույնիսկ տարվա ընթացքում, դասերից հետո գնում էի վարպետ Ավոյի արհեստանոցը աշխատելու: Արդեն կարգին մասնագետ էի դարձել: Պատահում էր նաև, որ ես էի ընդունում և ճանապարհում հաճախորդներին՝ գործ ունենալով նաև դրամի հետ: Վարպետս անվերապահորեն սիրում էր ինձ, բայց դրամի հարցում առասպելական կծծի էր ու դրամապաշտ: Նա այդպես էլ երբեք ինձ բաժին չհանեց իր արքայավայել աղանդերներից և ոչ էլ վարձատրեց:

Հետազայում, կնոջ մահից հետո (*երեխսա չուներ վարպետս*) նա միայնակ էր ապրում երկհարկանի հսկա տան մեջ: Որոշ ժամանակ անց հայտնի դարձավ, որ գողերը քալանել են նրա

բնակարանը և տարել նաև պատերից մեկի մեջ թաքցրած  
մեծաքանակ ոսկեղենն ու գոհարեղենը:

Ամեն պարագայում ես երախտապարտ եմ իմ վարպետ  
Ավոյին, որի ձեռքի տակ արհեստ սովորեցի և ամենակա-  
րսորդ 7-8 տարեկանում իսկ ըմբոնեցի աշխատանքի, կյանքի  
իմաստը և հասկացա, թե որքան դժվար է արդար գրտինքով  
դրամ վաստակելը:

*Սեպտեմբերի 12, 2012 թ.,  
Երևան*

## ԻՄ ՆՈՐ ՏԱՐԻՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԲԱՆԱԿՈՒՄ

Հունվարի 1, 1957 թվական: Արևմտյան Ռուբախնայի Վինստոն Քաղաքացիության գործադրության համար պահանջման կենտրոն: Ես և իմ միակ հայ ընկեր Սողոմոնը պահկած ենք բուժկենտրոնում:

Ինչպես ո՞ս: Ի՞նչ պայմաններում էինք հայտնվել այնտեղ: Հիշում էինք միայն այն, որ նախորդ գիշեր՝ մերոնց ուղարկած կոնյակը վայելելուց հետո, զնացել էինք զյուղ «պահանջման կենտրոն», ու մի լավ հարբելուց հետո, բռնել էինք դեպի գորակայան վերադառնալու ճանապարհը: Այդքանը միայն, ուրիշ ոչինչ:

Պարզվում է, որ գիշերը ջոկատի տղաները նկատել էին, որ մենք գորակայանում չենք և անհանգստացել էին: Նրանք զիտեին, որ մենք զյուղ ենք զնացել և որոշել են մի քանի հոգով զնալ մեզ փնտրելու: Եվ ի՞նչ տեսել են, որ ես և Սողոմոնը՝ համարյա սառած, զրեթե անշնչացած, ընկած ենք ձյան վրա: Չգիտեմ ինչպես, ի՞նչ ճանապարհով՝ ազատելով մեզ վերջնական սառելուց ու անխուսափելի մահից, բերել, հասցրել էին գորամասի բուժկենտրոն:

Հիվանդասենյակում երկուսս ենք՝ ես և Սողոմոնը: Երրորդ օրն առավոտյան սենյակ մտավ մի կապիտան ու դիմեց բուժքորոշը.

- Ինչպես ես սրանց վիճակը, արագացրեք բուժումը, ասել եմ չե՞ս, որ գորակայանը տեղափոխվում է ուրիշ քաղաք:

- Ընկեր կապիտան, ախր նրանք ջերմություն ունեն, ինչպես կարող ենք նրանց դուրս գրել: Այս մեկի վիճակը բավարար է,- ցույց տալով ընկերոջս, շարունակեց բուժքույրը, - կարծում եմ վաղը կարող է դուրս գրվել:

- Իսկ մյուսը, մյուսի վիճակն ինչպէ՞ս է,- նկատի ունենալով ինձ, հարցրեց կապիտանը:

- Վատ է, շատ վատ, թարախային անգինա է սկսվել նրա մոտ, ջերմությունն էլ չի իջնում:

- Չգիտեմ, ինչ ուզում ես արա, վաղը կգամ այս մեկին տանելու:

Հաջորդ օրը Սողոմոնը գնաց: Ես նրան այլևս չտեսա: Բուժկենտրոնում միայն երկուսս ենք՝ ես և բուժքույր Վայսն: Վերջինս՝ հավատարիմ իր կոչմանը, պարտավոր է լինել հիվանդի կողքին: Սուրն արդեն իջել է հորիզոնի վրա: Վիճակս լավ չէ: Կայսան անընդհատ շարժման մեջ է. մեկ դեղահաք է տալիս, մեկ փոխում է ճակատիս թրջոցը, մեկ ջերմաշափն է դնում թեփս տակ, մեկ էլ.

- Կարո՞՞ն ես մեկ ժամ առանց ինձ մնալ, պիտի քաղաք գնամ ու գամ,- հարցրեց նա:

- Իհարկե կարող ես, գնա, եթե անհրաժեշտ է:

- Այո, այո, Հենրիկ, շատ կարևոր է:

Չգիտեմ, թե որքան ժամանակ էի քնել, մեկ էլ՝ ձեռքի նուրբ հպումով, ինձ արթնացրեց Վայսն:

- Դե, վեր կաց, Հենրիկ, նստիր անկողնում, տես, թե ինչեր եմ քերել քեզ համար,- ուրախ, պայծառացած, մեծ գործ արած մարդու հրձվանքով ասաց նա,- հիմա դու կտեսնես, թե ինչպես եմ քեզ բուժելու:

Այս ամենն ասելիս Վայսն մահճակալի կողքի աթոռին էր շարում մեկ շիշ օղի, մոտ քսանիին սանտիմետր երկարության երշիկ, խաշած կարտոֆիլ, գլուխ ստխ, թթու վարունգ և ամենակարևորը՝ սև հաց:

- Այս ամենը որտեղից, Վայս...

- Կարևոր չէ, Հենրիկ, կարևորը, որ դու ոտքի ելնես: Վաղը, ինչ վիճակում էլ որ լինես, զալու են քեզ տանելու: Քեզ սնունդ է անհրաժեշտ: Հիմա կեր այս երշիկը և խմիր օղին,- այս ասելիս, նա այսումինե մեծ բաժակի մեջ լցրեց կես լիտրանց շշի պարունակության կեսը, գուցե և ավելին, և հրամայեց.

- Խմիր թ, խմիր թ, քեզ ասում եմ:

Տեսնելով, որ ես տատանվում եմ և չեմ ուզում խմել այդ գար-շելի սամոզոնը (Ճակնդեղի օղի), Վայան գրեթե ստիպողաբար շրթունքներիս հակեց օղով լի բաժակը.

- Խմի՞ ր, քեզ ասում եմ, խմի՞ ր, եթե ուզում ես լավանալ:

-Ինչ ուզում է թող լինի,- մտածեցի ես ու մեկ շնչով դադար-կեցի այդ զզվելի խմիչքը: Մի քանի րոպե անց գայլի ախորժակ արթնացավ մոտս: Ակսեցի ուտել, ինչ ուտել, լափում էի ինչ ընկնում էր ձեռքս: Անկողնուս ծայրին նստած Վայան ցնծու-թյան մեջ էր:

- Այ, հիմա գոյն եկավ երեսիդ, թշերդ էլ կարմրել են:

- Իսկապես, հիմա ինձ լավ եմ զզում: Այդ անտեր օղին փրկեց ինձ, ավելի ճիշտ, դու փրկեցիր: Ճիմա ցավալին այն է, որ հնարավորություն չեմ ունենալու գոհունակությունս ու շնոր-հակալությունս հայտնելու քեզ: Առավոտյան կապիտանը ինձ տանելու է:

- Ի՞նչ շնորհակալության մասին է խոսքը, սիրելիս: Այս մի քանի օրերի ընթացքին ես նկատեցի, թե դու որքան խելացի ես, որքան բան զիտես, ես ապշած եմ քո ոռուսերենի իմացու-թյան վրա:

- Մի գարմանա, Վայա, ես նույնիսկ ոռուսերեն հոդվածներ ունեմ տպագրված «Սովետսկայա մուզիկա» ամսագրում:

- Ինչպես ս ես հայտնվել բանակում, այն էլ այստեղ: Դու չես ծառայում, զենք անգամ չես տեսնելու: Ձեր վաշտը շինարա-րական է:

- Իմ պատմությունն ուրիշ է, Վայա: Ակսոս, էլ առիթ չի լինի իրար հանդիպելու:

- Ո՞վ զիտի, մեծ աշխարհ է, ի՞նչ խմանաս...

Իմ աշքից չվրիացեց նրա խորամանկ ժայխուր, բայց ես դա չհասկանալու տվեցի, սպասելով հետագա դեպքերին:

Վայան հավաքեց «սեղանը» և տեսնելով, որ խմիչքի ազդեցության տակ կոռակ սկսում են փակվել, ասաց.

- Տեսնում եմ քունդ տանում է, արի մեկ անգամ էլ չափեմ շերմությունդ, այնուհետև կարող ես քնել, իսկ ես գնամ թղթերս դասավորելու: Ես էլ եմ վաղը չվելու, երկու օրից

դասերս սկսվելու են:

- Ի՞նչ դասեր, դու ինձ ոչինչ չես ասել այդ մասին:
- Այո, դասեր, ես բժշկական ինստիտուտում եմ սովորում: Արձակուրդներիս զալիս եմ զորամաս և որպես բուժքույր աշխատում: Այնպես որ այս օրը մեր վերջին օրն է, բարեկամս, իսկ հիմա անուշ քուն ու բարի երազներ...

... Առավոտյան՝ լույսը դեռ լրիվ չբացված, Վայյան կարգի բերեց թե իրեն, թե սենյակն ու անցավ իմ դեղորայքին: Այլևս շերմություն չունեի և ինձ առույգ էի զգում: Վերջին ասեղը սրսկելու պահին ներս մտավ ծանոթ կապիտանը:

- Հը, ինչպես ու է հիվանդը, Վալեչկա, եկել եմ տանելու: Շուտ թղթերը տուր:

- Չեք կարող տանել, ընկեր կապիտան, նա հիվանդ է:
- Որքա՞ն է շերմությունը, նայելով նրա դեմքին չես ասի, որ հիվանդ է:
- Գրեթե քառասուն, նրա մոտ թոքերի բորբոքում է:
- Միևնույնն է, ես նրան տանելու եմ: Այնպես որ ստորագրիր թղթերը և տուր ինձ:

- Ո՞չ, կապիտան, ո՞չ, չեմ կարող որևէ թղթի տակ ստորագրել, ես պատասխանատու եմ նրա առողջության համար:

Տեսնելով, որ չի կարող կոտրել Վայյայի համառությունը, կապիտանը գտավ ելքը:

- Լավ, ես ձեզ երկուսիդ կտանեմ քաղաք՝ Վիննիցա, հիվանդանոց: Վայյա, դու հիվանդին կհանձնես շտապ օգնության բաժնին: Մնացած կարգադրությունները ես կանեմ, լավ:

Ես կարկամել մնացել եմ: Որտեղից հորինեց այս սուտը մեր աղջիկը: Ճիշտ է, մենք զիշերվա ընթացքում պայմանավորվեցինք շատ հարցերում, բայց այս ինչ համարձակություն... Վայյան իրոք խոստացել էր ամեն գնով ազատել ինձ բանակում ծառայելուց: Ահ ու վախ չուներ աղջիկը: Ամեն ինչ հստակ էր. նա որոշել էր ամեն գնով իրենով անել ինձ:

Ես դեռ Երևանում էի որոշել ամեն գնով հիվանդանոց ընկնել և ահա, ինդրեմ, նախախնամությունն էր առաջնորդում ինձ դեպի իմ զերագույն նպատակի իրականացմանը:

Փոքրիկ տնակ հիշեցնող մեքենայի թափքում ես և Վայան ենք և կարող ենք ազատորեն խոսել. կապիտանը նստել էր վարորդի կողքին: Անտանելի սառնամանիքի պատճառով ես ստեպ-ստեպ վեր էի կենում նստած տեղից և տեղքայլ անում: Առանց որևէ դիտավորության, հաջորդ վայրկյանին նստեցի Վայայի կողքին՝ մինչ այդ նստած լինելով նրա դիմացի նստարանին:

Եվ հանկարծ, ահավոր մի հարվածով, նախապես իմ նստած տեղի մասում միմրձվեց ապրանքատար մի խոշոր մեքենա ու մեր մեքենային հրեց մինչև ճամփեզր: Ես ու Վայան լալկվել, մնացել ենք: Միայն երջանիկ պատահականությամբ էի ես վեր կացել իմ նստած տեղից, հակառակ պարագայում Աստված զիտե թե ինձնից ինչ կմնար:

Բոլորս իջանք մեքենայից ու, ի՞նչ տեսանք. սաոցակալած ասֆալտի վրա իրար էին բախվել մի քանի մեքենաներ: Հետագա ճանապարհն անանցանելի էր: Ստիպված էինք այդ սառնամանիքին քայլել մինչև հաջորդ խաչմերուկ, որտեղ կապիտանը մի մեքենա կանգնեցրեց և դիմեց Վայային.

- Դու այս զինվորին հասցրու հիվանդանոց, թող մի քանի օր մնա այնտեղ, իսկ ես գնամ տեսնեմ ինչ եղավ մեր մեքենան:

- Լուս եմ, ընկեր կապիտան,- ուրախ-ուրախ ասաց Վայան: Մեքենայի թափքի մեջ դիմում եմ Վայային.

- Հիմա իմ ճակատագիրը քո ձեռքին է, Վայա, դու պիտի այնպես անես, որ ես երկար մնամ հիվանդանոցում: Մնացյալը թող ինձ վրա: Հիշիր, թե ինչեր ասացի երեկ զիշեր:

- Ես ամեն ինչ շատ լավ հիշում եմ: Մեր հանդիպման առաջին իսկ վայրկյանից հասկացա, որ դու շատ բան պիտի փոխես իմ կյանքում, թեև քեզ բերեցին համարյա անզիտակից վիճակում: Եթե մի կես ժամ է պառկած-քնած մնայիր ձյան վրա, բանդ բուրդ էր: Այսուհետև, ի՞նչ է լինելու իմ վիճակը, դրա մասին դու չես խոսում...

- Ի՞նչ պիտի լինի, դու ինձ ազատել ես տալիս բանակից, ես էլ քեզ տանում եմ Երևան...

- Լավ, ես քեզ հավատում եմ: Ես այստեղի բուժքույրերի հետ

լեզու կգտնեմ: Նրանց ձեռքում շատ բան կա: Նրանք են բժիշկներին զեկուցում հիվանդի վիճակի մասին և անալիզներ անում: Դու պիտի մշտապես պառկած վիճակում լինես, քո ամեն մի քայլը հսկողության տակ կլինի: Դու պիտի խաղաս, դերասանություն անես: Քեզ հանգիստ աշխատանք կառաջարկեն, չգայթակղվես: Իսկ ես ամեն ինչ կանեմ քեզ և մեզ համար: Մայրիկս էլ կօգնի մեզ: Ինքը լավ պաշտոնի է և լավ կապեր ունի:

...Մի օր բուժքույրն ասաց, որ ինձ կանչում են զլիավոր բժշկի մոտ: Որքան որ հիշում եմ, Ալաբեկով էր ազգանունը, ազգությամբ՝ ազերի:

- Հսիր, Անասյան, դու էլ ես կովկասի, ես էլ: Եղ քո բոլոր խաղերը ինձ ծանոթ են: Ես չեմ հավատում, որ դու մշտապես զլիի ցավ ունես, միգրեն:

- Ինչպես ս չեք հավատում, չէ՞ որ կա բժշկական եզրակացություն:

- Խելքիդ շատ զոր մի տա, եթե ես ցանկանամ, հանձնաժողով կիավաքեմ և կապացուցեմ, որ դու հիվանդ չես: Պարզապես, մենք մի հողի ու օրի մարդիկ ենք, չեմ ուզում քեզ վատություն անել: Իսկ որպես սիմուլյանտի (*կեղծավոր*) կարող եմ նաև քեզ զինվորական դատարանի առջև կանգնեցնել:

- Ո՞նց, ինչի՞ համար, ո՞ր մեղքիս համար,- բարձրածայնում եմ ես:

- Ձեն՝ դ, լակոտի մեկը: Հիմա ինձ լսիր: Ես գիտեմ, որ դու չես ուզում ծառայել: Արի համաձայնվիր աշխատել ինձ հետ: Ինձ անհրաժեշտ է քեզ նման մեկը, ով մշտապես զնա կենտրոն, դեղորայք ու անհրաժեշտ առարկաներ քերի հիվանդանոցի համար: Արանքում էլ փող կաշխատես, ես կասեմ, թե ինչպես:

- Շատ զրավիչ առաջարկություն եք անում, բժիշկ: Ես մեծ հաճույքով կաշխատեմ Ձեզ հետ, միայն թե ինձ բուժելուց հետո,- ասացի ես:

- Տղա ջան, ինչպես տեսնում եմ, անօգուտ է քեզ համոզելը: Ինչպես երևում է դու լավ տեղեկացված ես քո շինծու հիվանդության մասին: Քեզ մեկ շաբաթ ժամանակ, զնա և մտածիր:

...Դարձյալ նախախնամությունն ինձ հասավ օգնության:

Այդ օրերին խորհրդային բանակը մտել էր Հունգարիա՝ հունգար ժողովրդի ազատատես ողին արյան մեջ խեղդելու համար: Եվ, քանի որ Վիննիցա քաղաքը մոտ էր Հունգարիայի սահմանին, այնտեղից խորհրդային վիրավոր զինվորներին բերում էին մեր հիվանդանոց տասնյակներով անոտ, անձեռ երիտասարդ զինվորներ: Աներևակայելի խառնաշփոր իրավիճակ: Ո՞վ էր նայում տեղի հիվանդներին, նրանք ամբողջովին անուշադրության էին մատնված: Ամենուր այս ու այն կողմ վազող բուժքույրեր, որոնց մեջ մեր հերոսուհին՝ Վայան, ում մի կերպ կարողացա տեղյալ պահել բժիշկ Ալաբեկովի հետ ունեցած հանդիպման մասին.

- Դու մի անհանգստանա, ամեն ինչ լավ է ընթանում, բժիշկը ցայտոնսի մեջ է, տեսն ու ես, թե ինչ է կատարվում, նա օրերով տուն չի գնում,- հազիվ հասցրեց ասել Վայան:

Գրեթե երեք ամիս հիվանդանոցում մնալուց հետո, 1957 թվականի մարտի առաջին օրերին եկավ բաղձակի լուրը. «անբուժելի» հիվանդության պատճառով ես ազատվում եի խորհրդային բանակում ծառայելուց: Դժվարին օրերն ավարտված էին, ուստի հնարավորություն էր ստեղծվել ազատորեն հաղորդակցվել Վայայի հետ:

- Այսօր քեզ մեր տուն եմ տանելու,- ասաց Վայան,- միայն մայրս է, զիտես: Նա ամեն ինչ զիտի քո մասին: Առանց նրա հնարավոր չեր լինի քեզ բանակից ազատել: Թող քեզ չթվա, թե դու միայնակ կարող էիր քո հարցերը լուծել: Ամեն ինչ մեր նպատակին ծառայեց: Իհարկե, մեծ դեր խաղաց նաև հիվանդանոցի այս քառային վիճակը և բժշկի գերծանրաբեռնվածությունը... մեկ էլ, մեկ էլ..., լա վ, պետք չէ, որ դու դա իմանաս, այժմ եկ գնանք մեր տուն:

Ընթրիքն ավարտվելու վրա էր, երբ հնչեց դոան զանգը:

- Դու նստիր, ես կրացեմ դուտը,- անթաքույց անհանգստությամբ ասաց Վայայի մայրը.

- Օ, այդ Դո լք եք, Անտոն Մարկիչ, այս ի՞նչ անակնկալ...

- Ես չզիտեի, որ Դուք հյուր ունեք, այն էլ զինծառայող,-

հյուրասենյակի մուտքին նկատել տվեց հյուրը, - դե ի՞նչ, ես շեմ ուզում անկոչ հյուրի դերում լինել, մանավանդ որ շտապելու լուրջ պատճառ ունեմ:

- Ի՞նչ եք ասում, ինչո՞ւ այդպես արագ, հա՛, մոռացա ձեզ ծանոթացնել..., Հենրիկ, ասեմ, որ Անտոն Մարկիչը Վայայի մարզիչն է:

- Դե, լավ էլի, սիրելի մարզիչ, մի գնացեք, քիչ հետո թեյ կխմենք միասին, մայրիկս էլ ձեր նախընտրած խմորեղենն է պատրաստել,- ասաց Վայայն:

- Ոչ, ոչ, ես պիտի գնամ, կներեք, որ անկոչ հյուրի նման խցկեցի ձեր ընտանեկան հարկից ներս,- առանց Վայայի և իմ կողմը նայելու ասաց մարզիչն ու արագ հեռացավ:

Մի քանի վայրկյան երես էլ լուր էինք: Անձայն, իրար աշքերի մեջ էինք նայում: Հանկարծ, կարծես իրար ձեն-ձենի տված, երես միասին սկսեցինք ծիծաղել: Համատեղ խնդրութիւն աշխարհ էր բռնել: Ոչ մի կերպ չէինք հանգստանում: Առաջինը Վայայի մայրն էր, որ ըմբռնելով իրադրության լրջությունը, ասաց.

- Աղջիկս, մարզիչը երեք տարի է ընկել և քո ետևից: Չեմ քաշվում ասելու, եթե Հենրիկը չիներ, գուցե և քո կյանքն այլ կերպ դասավորվեր:

- Պետք չունես այդ ամենը Հենրիկի ներկայությամբ պարզաբանել, մայրիկ: Հենրիկին տեսնելու առաջին իսկ վայրկյանից հասկացա, թե ինչ ասել է սիրել...

Մոր ու աղջկա երկխոսության ընթացքում ես մտածում էի, թե ինչ էր լինելու խեղճ Վայայի վիճակը, երբ պարզեր, որ խարված է իմ կողմից: Ճիշտ է, ես հավանում էի նրան, բայց դա սեր չէր, սերը հետո էր գալու... Ես մեծ պատասխանատվության տակ էի դրել ինձ, փաստորեն խաղում էի նրա բախտի հետ: Հաջորդ տարի Վայայն ավարտում էր ինստիտուտը և վստահ էր, որ կկարողանար հնարավորություն ստեղծել, որպեսզի ես էլ բարձրագույն կրթություն ստանամ:

Հաջորդ առավոտյան, նախաճաշին երես էլ լուր էինք: Ես զիտեի, որ վերջին անգամն եմ տեսնում Վայային: Մի կողմից

ուրախ էի, որ կար այն մարզիչը, ով խելահեղորեն սիրահարված էր նրան: Հավանաբար ինձ կորցնելուց հետո Վայան կվերադառնա նրա մոտ: Վայայի մոր ակնարկներից հասկացել էի, որ ես էի հիմնական պատճառը, որ նա որոշել էր խզել իր կապը մարզի հետ:

Երեք տարվա փոխարեն, ես միայն երկու ամիս «ծառայեցի» խորհրդային բանակում, իսկ մյուս երկու ամիսը՝ 1957 թվականի հունվարից, եղա հիվանդանոցում, Վայայի «տիրապետության» տակ:

Ամեն, ամեն ինչ արեց Վայան ինձ գայթակղելու համար: Ամեն վտանգ աչքի առաջ ունենալով՝ մորն էլ ներգրավելով արկածախնդրության մեջ, վստահ եմ, որ նույնիսկ նյութական զոհողություններով, հասավ իմ և իր նպատակին: Ահա թե ինչի է ընդունակ իսկական սերը: Նա հավատում էր, որ ես իրեն Հայաստան կտանեմ որպես հարսնացու...

Սակայն, իմ սիրտն ու հոգին այնտեղ էր, իմ Հայրենիքում, որտեղ իմ ծնողներն եին, եղբայրս, ընկերներս, Լիլիթը վերջապես, ով ամեն օր նամակ էր ուղարկում ու տեղյակ պահում Հայաստանում տեղի ունեցող ամեն մի իրադարձության և մշակութային կյանքի մասին:

Ես ինձ մեղավոր էի զգում: Հասկանում էի, որ խաղում եմ մի անմեղ աղջկա բախտի հետ, սակայն ես ունեի նպատակ, երազանք և փորձում էի ինձ համոզել, որ, եթե ոչ ես, ապա մեկ ուրիշը կարող էր նման ձևով վարվել նրա հետ:

Ես ինձ միսիքարում էի այն գիտակցությամբ, որ ինքն էր առաջինը ինձ սեր խոստովանողը: Բայց բախտն ու նախախնամությունը բերեցին այլ հանգուցալուծման:

... 1957 թվականի մարտի 20-ին Վայան Ռուկրախնայի Վինիցա քաղաքի երկաթուղային կայարանից ինձ ճանապարհեց Մոսկվա:

Չափազանց տխուր բաժանում էր: Ես գիտեի, որ այլևս չեմ տեսնելու Վայային, իսկ նա՝ շարժվող գնացքի ետևից ձեռքը

թափահարելով, բղավում էր.

- Ամունք կհանդիպենք Երևանում...

Նա, իհարկե, եկավ Երևան, բայց... բայց մենք չհանդիպեցինք...

Վարժունիինգ տարի է անցել այդ օրերից, բայց այսօրվա նման թարմ է պատանեկան այդ խենթ ու խելառ օրերի հիշողություններս, մանավանդ Վայսյի կերպարը:

*Մայիսի 14, 2012 թ.,  
Երևան*

## ԱՐՄԵՆԸ ԵՎ ԱՎԱՏՐԱԼԻԱՆ (Եղբորս հիշատակին)

Եղբայրս՝ Արսենը, դեռ աշակերտական նստարանից տարված էր «Աշխարհագրություն» առարկայով: Բոլոր աշխարհամասերի և երկրների մեջ նրա համար ամենահետաքրքիրը Ավստրալիա աշխարհամասն էր: Դեռ պատանի տարիքից հավաքում էր այդ «կորած-մոլորած» երկրի մասին ցանկացած տեղեկություն, բրոշյուր, ճամփորդական ուղեցույց, մի խոսքով այն ամենը, ինչը որ կապված էր այդ հիշասքանց աշխարհամասի հետ:

Հազիվ բարձրագույն կրթություն ստացած, Եղբայրս սկսեց ուղիներ փնտրել իր պատկերացմամբ այդ «օրինված» երկիրը գնալու համար: Դիտի գար 1960-ականների կեսերը, որպեսզի փոքր-ինչ բացվեր «երկարյա վարագույրը» և մարդիկ կարողանային հաղորդակցվել արտաքին աշխարհի հետ: Որպես զբոսաշրջիկ Ավստրալիա մեկնելու նրա անգուսպ ցանկությունը մերժվեց պատկան մարմինների կողմից՝ այնտեղից գալիք հրավերի բացակայության պատճառով: Արսենը գտավ դրա ճարը: Նրա կողմանը՝ Լյուդմիլայի մայրը, տիկին Հոհիփսիմեն, աշխատում էր Արմենիա հյուրանոցի վեցերորդ հարկում:

- Եթե Ավստրալիայից տուրիստ հայտնվի, ինդրում եմ ինձ լուր տաս,- ասել էր նրան Եղբայրս: Եվ մի օր տիկին Հոհիփսիմեն զանգահարում է Եղբորս և հայտնում, որ ազգությամբ մի ոռու զբոսաշրջիկ է հայտնվել իր աշխատանքի վայրում:

- Ոչինչ, թող ոռու լինի, միայն թե հաջողացրու, որպեսզի հանդիպեմ:

Իր որոշումների մեջ բավական հաստատակամ Եղբայրս կարողանում է արագորեն մտերմանալ ոռուի հետ և հրավիրել իր տուն: Մենք՝ ծնողներս և իմ ընտանիքը, բնավ տեղեկություն չունեինք այդ ամենից և միայն Եղբորս զոքանչի «բաց-

բերանության» շնորհիվ իմացանք եղելությունը:

Այսպիսով «կծիկը» քանիվեց: Ամենքս տեղյակ դարձանք եղբորս որոշմանը: Նա վճռել էր գտնել մեկին, ով կկարողանար օգնել իրեն մշտական բնակության համար հրավեր ուղարկելու Ավստրալիայից, բնականաբար, որպես «ազգականի»:

Վիկտոր անունով ոուսը խոստանում է օգնել Արսենին, եթե նա ինչ որ ժամանակ կարողանա Ավստրալիա հասնել: Արսենին է տալիս Ադելախիդի տան հասցեն և հեռախոսի համարը:

Որոշ ժամանակ անց Արմենիա հյուրանոցում է հայտնվում Ավստրալիայից Մարի Քյուրտյան անունով մի մեծահարուստ կին: Եղբայրս այսքան արագ է մտերմանում այդ կնոջ հետ, որ վերջինս համաձայնվում է իրը մորաքույր, հրավեր ուղարկել:

- Դուք հոս լավ պայմաններ ունիք, Արսեն, ինչո՞ւ կուզես ընտանիքը առնել և Ավստրալիա տեղափոխվիլ,- հարցրեց տիկինը մեր տան մեջ:

- Դուք այս Ճոխ սեղաններուն մի նայեք, տիկին Մարի: Հայաստանի մեջ ամեն ընտանիք, անկախ կարողութենեն, այսպես կընդունի որևէ հյուրի: Մենք հոս քազմաքիվ խնդիրներ ունինք: Երազս միշտ եղած է Ավստրալիա գալ, պտտիլ ճանչված վայրերու մեջ: Ես քանի մը անզամ դիմեցի որպես թուրիստ գալ, և ամեն անզամին ալ մերժեցին:

- Մենք բնավ համաձայն չենք, որ Արսենը ընտանիքով տեղափոխվի Ավստրալիա,- ասաց հայրիկս,- բայց ի՞նչ կըրնանք ընել: Ինքն առանձին ընտանիք ունի և որոշումն իրենն է:

- Հոգ մըներ, տիկին Վերժին, - դիմելով մորս ասաց հյուրը, - անոնք երիտասարդ են, Ավստրալիո մեջ կըրնան տեղ մը հասնիլ: Քանի որ Արսենին որոշումը վերջնական է, ես հրավեր կը դրկեմ,- ասաց միլիոնատեր տիկին Քյուրտյանը և ավարտեց անհաճո խոսակցությունը:

Հրավերը ժամանակին եկավ: Սկսվեց քաշքառվկը պատկան մարմինների հետ: Եվ դա տևեց վեց տարի: Ավստրալիա մեկնելը եղբորս համար դարձել էր կյանքի ու մահվան խնդիր:

Արսենի համառության ու աննկուն կամքի շնորհիվ հարցը լուծվեց նրա օգտին: Ավելորդ եմ համարում նկարագրել այն

հոգեկան ու բարոյական ապրումները, որոնք ծավալվեցին մեր ընտանիքում:

Ի վերջո եկավ մեկնելու պահը: Կայարանի կառամատուցում, հրաժեշտի ժամանակ, հայրիկս բարեկամաբար, հարազատի պես դիմեց կոմունիստ խնամի տիկին Հոհիփսիկին.

- Խնամի ջան, ինչո՞ւ ես կանգնել արևի տակ, մի քիչ այս կողմ արի, շուրջի տակ...

- Ոչի՞նչ, խորհրդային արև է,- ցինիկաբար պատասխանեց մեր խնամին:

«Խորհրդային արևը» շատ թանկ էր նստել եղբորս վրա, մի տեսակ զրկել նրան իրերին սրափ նայելու կարողությունից:

Ինչեւ, 1972 թվականի ապրիլի 12-ին մեկնեցինք Մոսկվա: Տեղավորվեցինք Հայաստանից արտազադրածներին լավագույնս հայտնի «Զարյա» հյուրանոցում: Հաջորդ օրն իսկ գնացինք Ավստրալիայի դեսպանատուն:

Բնականաբար, ինձ չթողեցին դարպասից ներս մտնել: Ստիպված էի դրսում սպասել ու զրոյցի բռնվել դեսպանատունը հսկող միլիցիոների հետ:

Բավական երկար ժամանակ անցավ մինչև մերոնք երևացին երկար ծառուղու ծայրին: Ինչ որ չէին շտապում: Դա ինձ մոտ տագնապ առաջացրեց: Եղբորս երեսին նայելով դժվար չէր նկատել, որ ինչ որ սարսափելի բան էր տեղի ունեցել, մանավանդ, որ տաս տարեկան աղջիկը՝ Հասմիկը, լալիս էր:

Հազիվ էին մերոնք մոտեցել դարպասին, և ոստիկանն ուզում էր բացել այն, մեկ էլ ծառուղու ծայրից վազելով ու միաժամանակ բղավելով՝ «սպասե՛ք, սպասե՛ք», մեզ էր մոտենում մի բարեւես օրիորդ.

- Եկե՛ք, եկե՛ք, պարոն, դեսպանը ձեզ է կանչում:

Արսենը շհասցրեց մեկ խոսք անգամ փոխանակել ինձ հետ: Ինչ որ մի բան այնպես չէր և դա պարզ երևում էր: Սպասման տաժանելի պահեր, ել ինչ ասես, որ մտքովս չէր անցնում:

- Այո, ինչ որ մի բան այնպես չէ,- կասկածներս հաստատեց ոստիկանը, ում հետ արդեն «բարեկամացել» էի: Ի վերջո մերոնք երևացին արդեն ծանոթ ծառուղու ծայրում: Այս

անգամ վազելով էին մոտենում ծանոթ դարպասին:

- Հը՝, ասե՛ք, շուտ ասե՛ք, այդ ինչո՞ւ էր կանչել դեսպանը, շքաքցնելով անհանգիստ վիճակս նախահարձակ եղա ես:

- Չգիտես, ա՛խ, չգիտես, Հենրիկ, թե ինչից ենք պրծել, արի շարժվենք, մի տաքսի գտիր, հասնենք հյուրանոց, ամեն ինչ կպատմեմ, - հուզմունքից շիկացած դեմքով ասաց եղբայր:

Պատմությունը հետևյալն էր.

Ավստրալիայի դեսպանի և Արսենի միջև տեղի է ունենում հետևյալ խոսակցությունը.

- Ես չեմ կարող Ձեզ մուտքի վիզա տալ Ավստրալիա մեկնելու համար:

- Ինչպե՞ս թե չեք կարող, չէ՞ որ Դուք եք մեզ հրավիրել վիզա ստանալու համար:

- Ճիշտ է, մենք ենք հրավիրել, բայց պարագաները փախվել են, ձեզ հրավիրող անձը հրաժարվում է ձեզ ընդունել: Մենք երեկ ենք ստացել հեռագիրը: Ահա, խնդրեմ, կարդացեք:

Սի երկու վայրկյան հեռագիրը կարդալուց հետո, մի բուռ դառած եղբայրս ահավոր ընկճված վիճակում, հազիվ կարողանում է ասել.

- Բա մենք ի՞նչ ենք անելու, պարոն դեսպան, մենք չենք կարող այլևս ետ գնալ, մենք ոչինչ չունենք Հայաստանում, սուն, տեղ, աշխատանք, ոչի՞նչ... Հայաստանին կապող ոչ մի օդակ չի մնացել, ո՞ւր գնանք, ի՞նչ անենք...

- Հասկանում եմ, մտնում եմ ձեր վիճակի մեջ, բայց ոչինչ անել չեմ կարող: Գնացեք Երևան, ձեր հարազատների մոտ, խնդրեք ձեր հովանավորողին փոխել իր որոշումը: Իսկ հիմա ազատ եք, կարող եք գնալ:

Արսենը զլխահակ շարժվում է ելքի ուղղությամբ, իսկ Լյուդ-միլան փորձում է հանգստացնել աղյողորմ լացող աղջկան: Դեսպանը լուր, ձեռքերը կրծքին խաչած, դիտում է այս սրտաճմլիկ տեսարանը:

Երբեք նման երևույթի ականատես չեղած դեսպանի քարտուղարութին աչքերից չի կարողանում հեռացնել թաշկինակը

և անձարակ կերպով փորձում է օգնել Լյուդային ու Հասմիկին դուրս գալ սենյակից:

Ահավոր տխուր տեսարանից ցնցված երիտասարդ դեսպանը արթնանում է կարծես թմբիրից ու ինքնիրեն մեղադրում եղածի համար. «Այս ի՞նչ արեցի, Աստված իմ, ներիր, ներիր ինձ, ես կործանեցի մի երիտասարդ ընտանիքի», և մեկ վայրկյան մոռանալով, որ ինքը խոշոր երկրի դեսպան է, արդեն որպես մարդ, որպես ազնիվ մարդ խախտելով իր երկրի խատագույն օրենքը, կանչում է քարտուղարութուն.

- Զենի՛, շուտ արա, արագ վազիր նրանց ետևից և ետ կանչիր, քանի դեռ դուրս չեն եկել դարպասից:

Բարեբախտաբար, ինչպես վերևում ասացի, Զենին դարպասի մոտից մերոնց տանում է դեսպանի մոտ:

- Նստեք, տեղավորվեք ինչպես հարմար եք գտնում: Ուշադիր լսեք, թե ինչ եմ ասելու: Այն, ինչ որ Ձեզ հիմա կասեմ, երբեք այս պատերից պետք է դուրս չգա: Երբեք, հասկանո՞ւմ եք: Ձեր ողջ կյանքում ոչ ոք պիտի չիմանա մեր այս խոսակցության մասին, նույնիսկ Ձեր հարազատները: Ուրեմն այսպես. հասկանալով Ձեր անելանելի վիճակի բարդությունը, մարդկայնորեն ցավ զգալով Ձեր հետագա ճակատագրի համար, ես, թեև մի խոշոր երկրի ներկայացնող պաշտոնյա, հօգուտ Ձեր ապագա երջանկության, կոպիտ խախտում եմ թույլ տալու:

Մինչ մերոնք ակնապիշտ նայում են երիտասարդ դեսպանին առանց նրան ընդհատելու, վերջինս մի փոքր դադարից հետո շարունակում է.

- Այսօր ապրիլի 16-ն է: Ես Ձեր անձնագրերում վիզայի ժամանակը կդնեմ մի քանի օր առաջվա ամսաթվով: Ձեր բարեկամն անշուշտ ստուգելու է, թե Ձեզ ե՞ք բիզու տրվել: Ստուգելուց հետո նա կհամոզվի, որ իր հեռագիրը տեղ է հասել Ձեր վիզաները ստանալուց հետո:

- Աղջիկս, դու ամեն ինչ հասկացա՞ր,- շոյելով Հասմիկի արցունքու թշերը,- հարցնում է դեսպանը:

...Ծանր, շատ ծանր եղավ մեր բաժանումը: Եղբորս ընտա-

Նիքին ճանապարհելուց հետո, հենց նույն օրն իսկ վերապարձա Երևան:

\*\*\*

Հետաքրքիր է այս պատմության շարունակությունը:

Եղբայրս իր ընտանիքով շատ հանգիստ հասնում է Սիդնեյ: Վերջակետը Մելբուրնն է: Այնտեղ է բնակվում մեծահարուստ տիկին Մարի Քյուրտյանը: Ըստ վաղօրոք պայմանավորվածության, Արսենը զանգահարում է նրան:

-Ի՞նչ, Արսեն, դո՞ւն ես, ինչպէ՞ս եկար Սիդնի... ինչպէ՞ս կըլլա, չէ՞ որ ես թելեզրամ դրկած եմ Մոսկվա և հայտնած, որ չեմ կրնար Զեզ ընդունիլ: Դուն ե՞րբ վիզաները առիր:

- Տասը օր առաջ, - բացահայտ ձևով ստում է եղբայրս:

- Հա, , ըսել է ուշացեր եմ: Հիմա ուշադիր մտիկ ըրե: Ինչպես ըսի, ես Զեզի չեմ կրնար ընդունիլ: Սակայն, քանի որ եկած եք, ստիպված եմ մեկ շաբթվան համար տեղ տալ Զեզի, անկե վերջ, ինչ կուզեք ըրեք: Ինչևէ, թունը առեք և եկեք:

Հասնելով Մելբուրն, մերոնք անակնկալի են զալիս: Ոչ ոք չկա իրենց դիմավորող: Ի՞նչ անել: Նորից եմ հեռաձայնում տիկին Մարիին:

- Մեկը չունիմ, որ Զեզ դիմավորե, թաքսի առեք և եկեք, - լինում է պատասխանը:

Տարսու վարորդն էլ հասկանալով, որ իր հաճախորդները օտար են և լեզուն էլ չգիտեն, 40 րոպէ քաղաքով մեկ պտտացնելուց հետո մեքենան կանգնեցնում է մի շքեղ ապարանքի առջև ու ցույց տալիս հաշվիչի գումարը՝ 70 դոլար: Դժվար չէ պատկերացնել, թե ինչ ասել է այդքան գումար, այն էլ այդ տարիներին սովետից ժամանած մարդու համար:

- Միայն մեկ շաբաթ կրնամ Զեզի հոս պահել, վերջեն Զեր զիսուն ճարը Դուք պիտի տեսնաք: Կաղը սրբազնը պիտի զա, թերևս ան կրնա խորհուրդ մը տալ, - ասում է տիկին Մարիին:

Հաջորդ օրը, ընթրիքի ընթացքին սրբազնը խոսք է ասում.

- Ես իսկապես զարմացած եմ, ինչպէ՞ս ս արտոնած են

նշանավոր պատմաբանի մը զավակին դուրս ելլել երկրեն: Ի՞նչ պիտի ընես հոս, մանավանդ, որ լեզուն ալ չես զիտեր: Խորհուրդ կու տամ ետ երթալ:

Առավոտյան տիկին Մարին նույն հանկերգով հարամ է անում նախաձաշը՝ անընդհատ մեղադրելով իրեն, որ տարիներ առաջ ոգևորել է Արսենին դուրս զալ երկրից ու նոր, կապիտալիստական երկրում դոլարներ շինել:

Շաբաթն ավարտվելուն պես տիկին Մարին հրամայում է.

- Վաղը առտու դուրս պիտի ելլաք այս տունեն և կամ պիտի համաձայնիք ետ վերադառնալ:

Անելանելի իրադրության մեջ հանկարծ Արսենը մտաքերում է Երևանի Արմենիա հյուրանոցում տարիներ առաջ մտերմացած ազգությամբ ոռու գործարար Վիկտորին, որն ապրում է Ավստրալիայի հարավում զտնվող Աղելախող ծովափնյա քաղաքում: Վերջինս եղբորս տվել էր իր տան հասցեն և հեռախոսի համարն ու ասել. «Երբ իմ կարիքն ունենաս, զանգահարիր, ես քեզ կօգնեմ»:

- Կրնա՞մ հեռաձայն մը ընել- դիմում է Արսենը տանտիկնոցը:

- Որո՞ւ պիտի հեռաձայնես, դուն մեկը չունիս հոս:

- Ծանոթ բարեկամի մը, Աղելախող:

- Այո, կը ընաս,- ասում է տիկին Մարին՝ հուսալով, որ մերոնցից ազատվելու ուղի է հայտնվել:

- Գնացք նստեք և եկեք Աղելախող, ես Ձեզ կօգնեմ,- ասում է ոռու ծանոթը:

Պարզվում է, որ նա մի խոշոր հեռաձայնային ընկերության տնօրեն է: Մերոնց դիմավորել է հենց կառամատույցում և տարել իր բնակարանը:

- Երկու շաբաթ Ձեզ արձակուրդ: Վատահ եմ, շատ հոգնած կլինեք: Հանգստացեք, մաս եկեք քաղաքում, կերեք, խմեք, ես մեր սիրուն աղջկան էլ լավ մաս տվեք, հետո կտեսնենք, թե ինչ ենք անելու:

Եվ այսպես, Արսենի ընտանիքը վերջնականապես հաս-  
տատվեց Աղելախում: Աղջիկն այսօր երեք զավակների տեր է,  
որոնց հայրը դժբախտաբար օտար է: Ընդհանրապես Աղե-  
լախում ընդամենը մի քանի հայ ընտանիք կա, որոնք գրեթե  
կապ էլ չունեն միմյանց հետ: 2010 թվականին եղբայրս կորց-  
րեց իր հիսուն տարվա կյանքի ընկերոջը և այդ օրվանից իր  
առողջությունն էլ գնալով վատացավ ու 2019 թվականի հու-  
լիսի 1-ին հոգին ավանդեց:

*Սեպտեմբերի 17, 2019թ.,  
Լու Աննչելես*



# ԲԱՐՈՅԱԽՈՍԱԿԱՆ

## Ի՞ՆՉ ԱՐԺԵ ՆԵՐՈՂՈՒԹՅՈՒՆ ԽՆԴՐԵԼԸ...

- Եվ իսկապես, ի՞նչ արժե «ներողություն» բառը: Մեր առօրյա քառապաշարից գրեթե վաղուց է դուրս եկել այն, թեև յուրաքանչյուր օր մենք այդ բառը բազմիցս ասելու կարիք ունենք մեր գործած սխալների, մեր ստերի համար: Որքան էլ որ մենք չարժենք այդ բառի իմաստը, միևնույնն է, պարզվում է, որ որոշ մարդկանց համար շատ մեծ արժեք ունի այդ մեկ հատիկ, չորս վանկանի բառը:

Ահա մի դեպք իմ կյանքից, որ պատահեց այս օրերին.

Սովորաբար, յուրաքանչյուր շաբաթ, առավոտ կանուխ, մի քանի անգամ գնում եմ մարզարան: Մշտապես մեքենան կայանելու դժվարություն է լինում: Այդ օրը նկատեցի, որ մի մեքենա է դուրս գալիս շարքից: Արագորեն մոտեցա այդ մեքենային և կանգնեցի ետևում, որպեսզի նրա դուրս գալուց հետո այդ տեղը զբաղեցնեմ:

Մեքենան վարողը կին էր: Վերջինս միացրեց մեքենայի շարժիչը, այնուհետև բացեց դրուր և ուղղակի փողոցի մեջ, գրեթե մեքենայիս առջև շարտեց թղթերի մի կույտ: Անակնկալի եկած նման տգեղ երևույթից, մեքենայի մի քանի ձայնային ազդանշան տվեցի՝ հասկացնելով, թե «այդ ի՞նչ ես անում տիկին, ինչպես կարելի է օրը ցերեկով աղբը փողոց շարտել, այն ել այսպիսի կենտրոնական վայրում»:

Մեկ-երկու վայրկյան մեքենայի շարժիչն աշխատելուց հետո, մարեց մեքենայի ետևի ձախ թարթիչը, դա նշան էր այն բանի, որ կինն անջատել էր շարժիչի աշխատանքը:

Սպասում եմ, որ կինն ի վերջո մեքենան տեղից կշարժի: Անցնում են բոպեներ, ազդանշան եմ տալիս մի քանի անգամ, բայց անօգուտ: Դժվար չեր հասկանալ, որ վարորդը նպատակ

Հուներ մեքենան տեղից շարժելու:

Ի վերջո, դուրս եկա մեքենայից ու մոտեցա կնոջ մեքենային: Վերջինս իջեցրեց մեքենայի ապակին ու ակնապիշտ հայացընվ աչքերը մեխեց աչքերիս մեջ ու մեկ վայրկյան չանցած բարձրացըն ապակին: Իսկ ես այդ ընթացքում հասցրի մի ծանր վիրավորական խոսք ուղղել նրա հասցեին:

Կինը դուրս ելավ մեքենայից, հավաքեց թղթի թափոնը և առանց մի խոսք ասելու նստեց մեքենան, իսկ ես վերադարձա ու սպասեցի, մտածելով, որ նա կզնա: Սպասում եմ, սպասում, իսկ կինը չի աշխատեցնում մեքենայի շարժիչը: Ազդանշան եմ տալիս մեկ, երկու, մի քանի անգամ, բայց՝ անօգուտ:

Կրկին դուրս եկա մեքենայից ու մոտեցա նրան: Տեսա զիրք է կարդում: Նշան արեցի, որ ապակին բաց անի: Բացեց:

- Ինչո՞ւ չեք շարժվում, տիկին,- զայրացած հարցրի ես:
- Մինչև ինձնից ներողություն չխնդրեք՝ չեմ գնա,- քաղաքավարի ձևով ասաց կինը:
- Բայց ինչի համար պիտի ներողություն խնդրեմ, տիկին...
- Ձեր վիրավորական արտահայտության համար,- շատ հանգիստ տոնով ասաց նա:
- Դուք սխալ եք գործել, աղտոտել եք այս մաքուր փողոցը և ե՞ս պիտի ներողություն խնդրեմ:
- Այս, հարգելի պարոն, ես, ճիշտ է, սխալ եմ գործել, զգիտեմ ել, թե ինչպես ստացվեց: Բայց ես ուղղեցի իմ սխալը: Խնդրեմ, Դուք էլ ուղղեք ձերը:

Զգիտեի ինչ անել: Կինն աչքերն ուղղել է ինձ ու կիսաժայիտ, քաջալերական հայացընվ սպասում է պատասխանի: Ես էլ թթված դեմքս փոքր-ինչ մեղմացրի ու ոչ առաջվա նման զայրացկոտ տոնով ասացի.

- Ես ձեզնից ներողություն խնդրողը չեմ, իսկ հիմա դուրս հանեք ձեր մեքենան, որպեսզի ես զբաղեցնեմ այդ տեղը,- այս անգամ արդեն զայրալից տոնով ասացի ու մի արհամարական հայացը ուղղելով նրան, թափ տվի ձեռքս ու վերադարձա: Սպասում եմ նրա գնալուն: Հինգ, տաս րոպե... կինը չի շարժում մեքենան: Մի քանի պտույտ եմ անում կողքի փողոց-

ներով, միևնույնն է, կայանելու տեղ չկա: Հեռվից հետևում եմ, թե երբ է կինը հեռանալու: Չե, հույս չկա: «Այ քեզ համառ կին, - մտածում եմ ես, - թեև ինքն է մեղավորը, բայց պահանջում է, որ ես ել ներողություն խնդրեմ իմ տեղին արված դիտողության համար»:

Դարձյալ պտտվում եմ հարևան փողոցներով... չե, միևնույնն է, ազատ տեղ չկա, մեքենան հնարավոր չէ կայանել:

Վերջապես մի ազատ տեղ եմ գտնում բավական հեռվում: Կանգնեցնում եմ մեքենաս ու երկար քայլելուց հետո հասնում մարզարանի մուտքին: Այստեղից երևում է շարաբաստիկ կնոջ մեքենան:

Հետաքրքրությունից դրդված, արդեն ես եմ ուզում տեսնել, թե, ի վերջո, ե՞րբ է գոմեշի համառության տեր (գոմեշը ընտանի կենդանիների մեջ ամենահամառն է) այդ կինը տեղից շարժվելու: Վայրկյաններն անցնում են, բայց, միևնույնն է, որևէ առաջընթաց չկա:

- Դե լավ, Հենրիկ, վազն արի, - ասում եմ ինքս ինձ, - այդ կնոջ հերն ել անիծած, թող կանգնի, որքան կուզի, մտիր մարզարան ու գործիդ անցիր:

Սակայն, գրողի տարած այդ կինն ու իր բռնած դիրքը ինձ հանգիստ չեն տալիս, չեմ կարողանում մտքից հանել այդ միջադեպը: Ի վերջո՝ կիսակատար մարզվելուց հետո, դուրս եմ զալիս մարզարահից ու աչքերս ուղղում շարաբաստիկ մեքենայի կողմը: Այս ի նշ բան է, Տե՛ր իմ... մեքենան կանգնած է նույն տեղում: Անհանգստանում եմ. չինի՞ մի բան է պատահել այդ կնոջը, - մտածում եմ ես, - մի թե նրա համար այդքան կարևոր էր իմ կողմից ներողություն խնդրելը, ներողություն՝ իմ արտաքրած անհաճ բարի համար:

- Լավ, տղաս, բանիդ զնա, - ասում եմ ինքս ինձ ու քայլերս ուղղում դեպի իմ մեքենան:

Հազիկ մեքենայիս ռեկի առջևն անցած, աչքիս է հառնում ալեխառն մազերով այդ կնոջ պատկերը: Մտքերս դարձյալ նրա շուրջն են պտտվում. չե, այսպես չի լինի, Հենրիկ, - արդեն բարձրածայն ասում եմ ինքս ինձ, պետք է պարզել այդ կնոջ

կողմից իրականացվող այս տարօրինակ երևույթի պատճառը:

Մեկ ժամ և ավելի է անցել մեր հանդիպման պահից, իսկ նա տեղից չի շարժվել: Սա իսկապես անքնական երևույթ է:

Առանց երկար-բարակ մտածելու, աշխատեցնում եմ մեքենաս ու արագորեն մոտենում կնոջ մեքենային: Շոգ եղանակ է, բայց կնոջ մեքենայի ապակիները փակ են: Ձեռքով նշան եմ անում, որպեսզի ապակին իջեցնի: Իջեցնում է և առանց ինձ նայելու, շարունակում է կարդալ դեկին դրված գիրքը: Սպասում եմ, որ ինքը լինի առաջին խոսողը: Բայց ձայն-ձույն չկա: Դժվար չեր հասկանալ, որ նա սպասում էր, որպեսզի ես լինեմ առաջին խոսողը: Ի՞նչ արած, թող այդպես լինի.

- Տիկին, կներեք, ես Ձեր անունը չգիտեմ, բայց ուզում եմ մեկ հարց տալ, կարելի՞ է...

Կինը բարձրացնում է գլուխը գրքի վրայից, առանց հարցիս պատասխանելու, ակնապիշ, փոքր-ինչ նկատելի ջերմությամբ նայում է երեսիս, հասկացնելով, որ շարունակեմ ասելիքս:

- Մեկ ժամ, ժամուկես առաջ մենք երկխոսություն ունեցանք այստեղ, և Դուք պատրաստվում էիք մեկնել: Ի՞նչ է պատահել, որ մինչև հիմա չեք գնացել:

Պետք էր տեսնել, թե այս հարցմանս պահին ինչպիսի փայլով շողացին նրա աշքերը, և ինչ երանելի ժայիտ առաջացավ նրա դեմքին:

- Հարգելի պարոն, ես ել չգիտեմ Ձեր անունը, և թե ո՞վ եք Դուք, բայց ես գիտեի, գիտեի, որ Դուք կզաք ինձնից ներողություն խնդրելու:

- Ինչի՞ց գիտեիք, տիկին: Եվ ինչո՞ւ եք կարծում, որ ես եկել եմ ներողություն խնդրելու: Ես իսկապես անհանգստացա, տեսնելով, որ Դուք չեք գնացել: Հազար ու մի վատ բան անցավ մտքովս:

- Իրականում Ձեր գալն ինձ մոտ և անհանգստությունն արդեն խոսում են այն մասին, որ ես ճիշտ էի հասկացել, որ Դուք առարինի անձնավորություն եք, և որ, եթե տեսնեք, որ ես սպասում եմ Ձեզ, անպայման կմոտենաք ինձ: Ես բավարարված եմ, հարգելի պարոն, կարող եք ներողություն չխնդրել:

Միքանի վայրկյան լուռ, երկուսս էլ նայում ենք իրար աչքերի մեջ: Ու միանգամից, ձայն ձայնի տված, փորքում ենք անզուսպ մի ծիծաղով: Առաջին խոսողը ես եմ.

- Իսկ եթե ես չգայի կամ էլ ավելի ուշ, ասենք երկու-երեք ժամ հետո զայի, Դուք դարձյա՞լ սպասելու էիք ինձ:

- Իհարկե սպասելու էի: Ինչպես տեսաք, ես զբաղված էի զիրք կարդալով և կարող էի ժամերով կարդալ մեքենայիս մեջ:

- Իսկ ի՞նչ զիրք եք կարդում, կարելի՞ է իմանալ,- խոսակցությունն այլ հունով տանելու մտադրությամբ հարցրի ես:

- Դուք ծանո՞թ եք ոռուս զրականությանը:

- Այո, անշուշտ, ինքս էլ գրող եմ:

- Օհո՛, ի՞նչ բարեբախտություն... Ահա, խնդրեմ, բանից դուրս է գալիս, որ ինձ վիրավորողը գրող է...

- Չե, արդեն չեղավ... պարզվում է Դուք հիշաշար եք: Քիչ առաջ ասացիք, որ Դուք ինձ ներել եք, իսկ հիմա՝ խնդրեմ:

- Ոչ, ոչ, ես մեղադատություն: Տեսէ՞ք, ես ներողություն խնդրեցի իմ անտեղի արտահայտության համար:

- Դե լավ... որպեսզի մեկընդմիշտ մոռացվի այսօրվա այդ տիհած միջադեպը, ես կ եմ ներողություն խնդրում անվայել խոսքիս համար: Ինչպես ասում են. «դրանից ուսադիրներս չեն ընկնի»: Ներողություն խնդրելը հերոս մարդու արարք է, այդպես չէ, տիկին...

- Շատ լավ ասացիք: Մենք արդեն բարեկամներ ենք և չարժե վերադառնալ հին պատմությանը: Դուք քիչ առաջ ասացիք, որ սիրում եք ոռուս դասական գրողներին, ես՝ նույնպես: Հիմա կարդում եմ Դոստուսկու «Ոճիր և պատիժ» վեպը, Դուք այն կարդացե՞լ եք:

- Այո, իհարկե, ինչպես նաև «Կարամազով եղբայրներ» և «Ապուշ» վեպերը:

- Հիմանալի, ո թոեղ էիք Դուք մինչև հիմա, մենք լավ գրուցակից ընկերներ կլինեինք:

- Դուք, ինչ է, այդքան ժամանակ ունե՞ք զիրք կարդալու, տուն-տեղ, զավակներ, թոռներ չունե՞ք,- կարելույն շանացի

նուրբ երանգ մտցնել խոսքիս մեջ:

Կինը անակնկալի եկավ իմ հարցումից ու լուր, զլուխը կախեց մի քանի վարկյան և հետո, համարյա շշնջալով ասաց.

- Ես մենակ եմ հիմա, կողքիս ոչ ոք չկա: Ունեմ երկու աղջիկ և մեկ տղա: Երեքն էլ ամուսնացած են: Մեծ աղջիկս ապրում է Մայամիում, մյուսը՝ Եվրոպայում: Միայն տղաս է Լու Անջելեսում ապրում իր բազմանդամ ընտանիքով: Ամուսնուս մահից հետո, տղաս բողեց իր հորական տունը: Մեկնելուց առաջ ասաց, «Մայրիկ, ամբողջ կյանքի դու մեզ համար ես ապրել, ժամանակն է, որ ապրես քեզ համար...»:

Կինը երկար լրում էր: Անհրաժեշտ էր ինչ-որ ձևով աշխուժություն մտցնել գրույցի մեջ, ուստի հարմար գտա հարցնել.

- Հավանաբար Ձեր որդին իր զավակներով հաճախ է աշխուժություն մտցնում հորական օճախից ներս, այդպես չէ ...

- Ոչ, ի՞նչ եք ասում: Տարին մեկ կամ երկու անգամ է գալիս, այն էլ տոն օրերին: Պատահում են տարիներ, որ միայն հեռածայնով ենք հաղորդակցվում: Ինքս էլ երբեւ չեմ աշխատել, մասնագիտություն չունեմ: Ամրոջ կյանքս նվիրել եմ զավակներիս դաստիարակությանը: Ամուսինս բարձր աշխատավարձ էր ստանում: Երեք երեխա մեծացնել, ընտանեկան դաստիարակություն տալ, կարծում եմ, սրանից ավելի պատվաքեր աշխատանք չկա: Հիմա, ինչպես տեսնում եք, բոլորովին մենակ եմ: Թոշակս հազիկ է բավարարում: Հիմնականում սվում եմ էժանագին ճաշարաններում: Սիրածս տեղը «Դենիզ» ճաշարանն է, եկեք միասին գնանք, այստեղից երկու քայլ է, ես Ձեզ կիյուրասիրեմ,- հանկարծակի ասաց կինը:

- Ոչ, ի՞նչ եք ասում, եթե ժամանակս ներեր ինքս Ձեզ կառաջարկեի գնալ որեւէ հայկական ճաշարան, Դուք երբեւ փորձե լ եք հայկական կերակուրներ:

- Բնավ երբեք, ո՞վ պիտի ինձ տաներ հայկական ճաշարան, բարեկամս, ես բոլորովին մենակ եմ:

- Ես խոստանում եմ մեր հաջորդ հանդիպմանը Ձեզ հյուրասիրել հայկական խորովածով:

- Ինչպես ասում են՝ «կապրենք, կտեսնենք»: Բուկ Դուք ոչինչ

չասացիք Ձեր ընտանիքի մասին:

- Եկեք պայմանավորվենք կրկին հանդիպել, տիկին, այդ ժամանակ ես ամեն ինչ կասեմ իմ, իմ ընտանիքի, զավակների, թռուների մասին, լա վ: Ինչ ամոթ, այսքան երկար գրուցեցինք և շգիտենք միմյանց անունները, ի՞նչ է Ձեր անունը:

- Ոերեկա է իմ անունը, Ոերեկա Ուիլսն, իսկ Ձե՞րը, պարոն:  
- Հենրիկ է անունս, սովորաբար ինձ Մաեստրո են ասում, որովհետև հիմնական մասնագիտությունս երաժշտությունն է, Դուք էլ այդպես դիմեք ինձ:

...Բաժանվելիս վերցրի տիկին Ոերեկայի հեռաձայնի թիվը՝ խոստանալով առաջին իսկ պատեհ առիթով զանգահարել:  
... Հիմա նստած համակարգչին առջև մտածում եմ, թե որքան կարենոր բառ է «Ներողությունը» և ինչո՞ւ են մարդիկ խուսափում այդ սքանչելի բառն օգտագործել, երբ սխալ են վարվում, սխալ են գործում, սխալ են խոսում, սուտ են խոսում: «Ներողություն» բառն օգտագործողը կրկնապես ազնվանում է, մարրվում:

Եկեք մշտապես ներողություն խնդրենք մեր բոլոր սխալ-ների համար: «Ներողություն» խնդրելը իսկապես մեծ արժեք է, որը հերոսացնում է այդ բառն արտաքերողին:

*Ապրիլի 14, 2014 թ.,  
Լու Անջելես*

## ՊՈՐՏԱԲՈՒՅՉԾԱՅԸ

Հայկական տարբեր վայրերում (իսանութ, հավաքատեղի և այլն) հաճախ եմ հանդիպում անծանոթ մարդկանց, որոնք հետազայում դառնում են մտերիմ ընկերներ և ժամանակի ընթացքում այնքան են մտերմանում, որ մեջտեղ է գալիս միմյանց այցելելու պահանջ: Եվ հաճախակի կապ է ատեղծվում միմյանց հետ՝ բջջային հեռախոսով:

Սակայն լինում են ծանոթություններ, որոնք ծանր հետք են թողնում ՚իմ մտապատկերում: Նման «ծանոթներին» աշխատում եմ ջնջել իմ հիշողությունից, բայց մի ծանոթության դեպք հազիվ թե կարողանամ մոռանալ:

Ահա այդ դեպքի հետ կապված համարուտ պատմությունը, որի մեջ եղած առանձին պարբերություններից կարելի է լուրջ հետևություններ անել:

Հոլիվուդի մարզարակից դուրս գալիս, դիմացս ելավ մի տղամարդ, ով ակնհայտորեն շտապում էր մարզարակ մտնել ու ակամայից դոների արանքում, առանց զգալու, կոպտորեն հրեց ինձ: Չեի հասցրել դիտողություն անել, երբ վերջինս շրջվելով դեպի ինձ, ասաց.

- Ներողություն, պարոն, օ՛, պարոն Անայա՞ն, Մաեստրո, այդ Դո՞ւ եք, ներեցեք, ես սրբիս մոռացել եմ ներսում, նորից կներեք, ես երկու րոպեից կվերադառնամ, մի քիչ կզրուցենք, լա՞վ, իհարկե, եթե ժամանակ ունեք:

Իսկապես ել, մի քանի րոպե անց երևաց մեր հայրենակիցը:

- Ես ամեն օր եմ գալիս այստեղ, բայց Չեզ երբեք չեմ տեսել,- ասաց նա:

- Իսկ ես ոչ միշտ եմ գալիս: Ընդհանրապես շաբաթը երկու-երեք անգամ, պարզապես, երբ ժամանակ եմ ունենում:

- Ես մշտապես կարդում եմ ձեր գրությունները, հեռուստացույցով ել եք հաճախ երևում: Չափազանց ուրախ եմ Չեզ մոտիկից ծանոթանալու համար:

Մի քիչ դեսից-դենից խոսելուց հետո, ներքին մի ձայն ինձ հուշեց, որ այս հայրենակիցը մեքենա չունի և երևի օգնության կարիք ունի, ուստի անմիջապես հարցրի.

- Դուք մեքենա ունե՞ք:

- Իհարկե, ունեմ, այն էլ երկուսը, մեկը՝ «Մերսեդես», իսկ մյուսը՝ «Հմապալա», բայց միշտ նախընտրում եմ ավտոբուսով զնալ-զալ: Թեև հեռու է մեր տունը, այսպես, ավտոբուսով շատ էժան է նստում...

- Սպասիր, բարեկամս, Ճողիվուդում չե՞ս ապրում, հեռուս ո՞րն է: Ավտոբուսն էլ էժան չէ,- փորձում եմ հակադրվել խոսակցիս:

- Չէ, ի՞նչ եք ասում, շատ հարմար է մեզ համար, մեզ շատ էժան զնով ավտոբուսի տուն է հասնում, դեռ հետն էլ որոշ գումար՝ տաքսուց օգտվելու համար: Ես և կինս թոշակառու ենք, արտոնյալ պայմաններ ունենք: Բժշկի մոտ էլ զնում ենք իրենց ուղարկած մեքենայով: Մեր մեքենան օգտագործում ենք միայն հեռու տեղեր զնալիս կամ Ամերիկայի տարրեր շրջան-ներ ու քաղաքներ ճամփորդելիս: Այստեղի գործերի համար էլ պատահում է նաև տաքսի ենք պատվիրում, դրա համար էլ է կառավարությունը վճարում, հոգին սիրեմ Ամերիկայի, այսպես են ասում չէ՝ «ախսպարները»:

- Դե, դե, այսպես չեղավ, բարեկամ, եթե նման ձևով ենք շարունակելու մեր խոսակցությունը, ուրեմն արի այս վայրկյանին իսկ հրաժեշտ տանք միմյանց,- հազիվ զսպելով արգահատանքի արտահայտությունս,- ասացի ես:

- Ես, ես ներդություն եմ խնդրում, պարոն Անասյան, ես պարզապես կատակի համար ասացի:

- Խնդրում եմ նման կատակ այլև չանել ինձ մոտ, առավել ևս մեկ ուրիշի: Մենք շատ ենք տուժել այդ բարի համար և մինչև օրս էլ այդ արտահայտությունը նստած է բազմաթիվ հայաստանցիների հոգեբանության մեջ:

Ամոթահար, չիմանալով ինչպես արդարանալ արտասանած բառների բարի համար, պարոնը սպասում էր իմ հետազա խոսքին: Նա բավական հետաքրքրեց ինձ՝ իր ընդգծված հաշ-

Վենկատությամբ, ուստի որոշեցի առաջ գնալ ու փորձել էլ ավելի բացահայտել նրա որպես մարդու կերպարը:

- Հիմա ինչ, ավտոբուսով եք գնալու տուն,- իբր մոռացած տհաճ խոսակցությունը,- հարցրի:

- Այո, ինչպես միշտ,- հազիվ լսելի, նեղացկոտ ասաց նա:

- Դե, լավ, լավ, անհոգ եղեք: Մոռացեք ամեն ինչ: Ես մեքենայով եմ, ինչպես ս կարող եմ ինձ թույլ տալ, որ Դուք ավտոբուսով գնաք, եկեք, եկեք միասին գնանք, ես իմ մեքենայով Ձեզ տուն կհասցնեմ: Առիթ էլ կունենանք երկար զրուցելու:

Մի քիչ չեմ ու չում անելուց հետո պարոնը համաձայնվեց:

- Ամրագոտին կապեք,- մեքենան շարժելուց հետո ասացի պարոնին, տեսնելով, որ նա միտք չունի այն ամրացնել: Հետո, մեքենայի մեջ բացեց իր «ուսանելի» և «հետաքրքիր» պատմության կծիկը:

Պարոնը (անունը հարմար չեմ գտնում հրապարակել, նրա նմանները քիչ չեն մեզանում) իր պատմությունը սկսեց Երևանից.

- Այնտեղ ես լավ գործի տեր էի, որպես խանութի վարիչ քան տարվա ընթացքում հսկայական գումար էի կուտակել: Ինչ ս էր պետք այդ գումարը, երբ այն չէի կարող գործողության մեջ դնել: Մի խոսքով՝ մեռած կապիտալ: Որոշեցի իմ ամբողջ կարողությունը վերածել ուկու և շատ թանկագին խալիների (գորգեր): Եթե հիշում եք, 1960-ականներին բացվեց Բեյրութի ճամփան: Սա մի լավ առիթ էր դրամս գործողության մեջ դնելու համար: Երևանի մաքսատան հետ համագործակցելով, մի լիբանանցի մեծահարուստի միջոցով կարողացա իմ ողջ հարստությունը եղածի պես տեղափոխել Բեյրութ, որտեղ ապրեցինք գրեթե երկու տարի:

- Իսկ հետո ի՞նչ եղավ, կարողացա՞ք հարստությունը տեղափոխել Ամերիկա,- ընդհատելով նրա խոսքը,- հարցրի ես:

- Այո, բարեբախտաբար, մի մեծ գումար կաշառք տալով, բարեկամներիս օգնությամբ, 1976 թվականին մի գեներալ այդ ամենը հասցրեց Լու Անջելես:

- Եվ, իհարկե, ամբողջ ունեցվածքը դրեցիք գործի մեջ, համոզված ասացի ես:

- Ոչ, այդպէս չէ: Անմիջապէս երկու տուն գնեցի նույն հողամասի վրա, թիշ հետո կտեսնեք, մեկը՝ տղաներիս համար, իսկ մյուսը՝ իմ և կնոջս: Այն տարիներին շատ էժան էին տները:

- Հետո, հետո, ինչպէս ս դասավորվեց Զեր կյանքը:

- Ես, ճիշտ է, շատ փող ու ոսկեղեն ունեի, բայց որոշեցի իմ կարողությունը ծառայեցնել իմ զավակների բարձրագույն ուսմանն ու իմ և կնոջս, հանգստին: Ես բիզնեսի գլուխ չունեմ:

- Այդ ինչպէս ս, չէ՞ որ Զեր ասած կարողությամբ կարելի էր հաջող բիզնեսի դեպքում կրկնապատկել, գուցե և տասնապատկել եղածը, ինչո և շմտածեցիք այդ մասին:

- Չէ, ախապեր ջան, բիզնեսն իմ բանը չի: Ես գոհ եմ իմ որոշման համար: Իմ մտածած ձեռվ ես հասել եմ իմ նպատակին: Տղաներս բարձրագույն կրթություն են ստացել, դոկտորական են պաշտպանել, ունեն իրենց սեփական գործը: Երկուսն էլ ամուսնացած են: Ունեմ թոռներ, ել ի՞նչ է պետք մարդուն:

- Այդ ամենը լավ է, իհարկե: Կա դրամ, տուն-տեղ, թոռներ: Հավանաբար Զեր զբաղմունքն էլ ձեր թոռներն են, այո ...

- Չէ, ի՞նչ եք ասում, հազարից մեկ ենք տեսնում մեր թոռներին, են էլ՝ տոնից տոն:

- Ինչպէս ս թե տոնից տոն, ինչ է, նրանք Լոս Անջելեսում չե՞ն ապրում, - զարմացած հարցրի ես:

- Տղաներս իրենց տներն ունեն բրբանկի և Գլենդելի սարերում: Մեծ տղաս հեռանալիս ասաց. «Հայրիկ, հերիք է տանջվեք մեզ համար: Այժմ հերթը Զերն է, հանգստացեք և ապրեք Զեզ համար»: Իմ տանը կից մյուս տունն էլ վարձով եմ տվել:

Խոսակցիս վերջին պարբերությունից հետո որոշ ժամանակ երկուսս էլ լուր էինք: Յուրաքանչյուրն իր մտքերի հետ էր:

Լոռությունը խախտեց բարեկամս.

- Հեն ա, հեն ա, հասնում ենք պարոն Անասյան, ահազին նեղություն տվեցի Զեզ:

- Ոչ, ի՞նչ եք ասում, ինձ համար հաճելի էր Զեզ հետ զրուցելը, այնուհանդերձ, կարելի՞ է մի հարց տալ. ինչպէս ս եք անց-

կացնում Զեր ժամանակը, կարդում եք, հասկացանք, իսկ հայկական երեկոների, համերգների, թատրոն, բան, զնում եք:

- Ճիշտը որ ասեմ, պարոն Անապան, ոչ մի հայկական ձեռնարկի չենք եղել, սակայն այնպես էլ չի, որ տանն ենք նստում: Գրեթե քառասուն տարի ես ու կինս մշտապես շրջազայռության մեջ ենք: Շրջել ենք գրեթե ողջ աշխարհը: Համարյա երկիր չի մնացել, որ եղած չլինենք: Էլ ծովով, օդանավով, երկաթուղով: Միայն Մեքսիկոյում 12 անգամ ենք հանգստացել:

- Իսկ Հայաստան երբեւ գնացե՞լ եք, չէ՞ որ քառասուն տարի է անցել Զեր հրաժեշտի օրվանից, Դուք Զեր Հայրենիքի անունը շտվիք:

Այստեղ մի պահ լրջացավ մեր պարոնը, ով մինչ այդ հոեսուրական բարձունքից իմ առջև փոռում էր աշխարհի քարտեզը:

- Ոչ, չեմ գնացել,- մեղավոր ժպիտով ասաց նա ու ավելացրեց,- մենք ոչ չունենք այնտեղ, գնամ, ի՞նչ անեմ:

Սա արդեն չափից դուրս էր: Հազիվ զապելով ինձ, որպեսզի շրջավեմ՝ ասացի.

- Բա Հայրենիքը, Երևանը, քո ծննդավայրը, քո հողը, քաղանք ոչինչ չարժե՞ն, չէ՞ որ դրանց շնորհիվ, այնտեղ ապրող մարդկանց, այդ թվում նաև «ախաղարներից» շորթած դրամներով ես միլիոններ դիմել ու նրանց բարեկամների օգնությամբ էլ դրանք հասել են Ամերիկա:

Ոչ մի խոսք, ոչ մի պատահան: Արդեն տեղ ենք հասել: Պարոնը ձեռքը զցել է բռնակին ու առանց հրաժեշտ տալու, փորձում է իջնել մեքենայից, իսկ ես՝ հեռացնելով նրա ձեռքը բռնակից, ինքս եմ բացում դուռը և համարյա բղավելով, աշքերս մեխելով նրա աշքերի մեջ, հարցնում եմ.

- Իսկ Լիբանանի և Սուրբայի սովորակիցներին, քո իսկ բառապաշտով՝ «ախաղարներին», դրամ ուղարկո՞ւմ եմ ես:

Մարդուկը լուր, առանց մի բառ ասելու, իջնում է մեքենայից ու քայլերն ուղղում դեպի իր ապարանքը:

«Ասպարեզ», սեպտեմբերի 30, 2014 թ.,  
Հու Անջելես

## ԼԱՎՈՒԹՅՈՒՆ ԱՐԱ՝ ԳՅԻ ԶՈՒՄԸ...

(Իրական պատմություն՝ հումորով)

Տոնական օրեր են, դե արի ու մեր տիկնոջը հասկացրու, թե այդ օրերին, այն էլ ազատուղիների համար խճողված ժամի, պետք չէ մեքենայով Հոլիվուդից Վեն Նայս հասնել, ինչ է, թե կանանց, ավելի ճիշտ ընկերուիների հավաք է, որին տղամարդկանց ներկայությունը ոչ միայն ցանկալի չէ, այլև արգելված է. բա, տղերը, հետո էլ ասում են կանանցից մի վախեցեք.

- Մարիետային եմ ուզում,- առանց բարե-բարի լուսի, հեռաձայնի մյուս ծայրից հրամայական տոնով ասում է նրա ընկերուին Աննան, ով ընդհանրապես հայտնի է խստաբարո կեցվածքով:

- Հոգ, հոգ, սպասիր, քուր ջան, ինչո՞ւ այդպես կոպիտ, մի բարե, բարի օր ասա, թե չէ ի՞նչ՝ «Մարիետային եմ ուզում», - Մարիետան տանը չէ, սիրելիս, բայց քիչ հետո կզա, ի՞նչ հաղորդեմ:

- Ասա, որ վերցնի Լիլիթին ու զա մեր տուն:

- Ինչո՞ւ այդպես կարձ ու կտրուկ: Բա ե՞ս, ես չզա՞մ...

- Լսի, ես քո հավեսը չունեմ, հա: Ոնց որ ասացի: Ոչ, ոչ, դու չզաս, սա միայն կանանց հավաք է:

- Բա ամուսի՞նդ, ինչ է, նրան տնից դուրս ես անելո՞ւ...

- Հա, հա, հենց այդպես՝ դուրս եմ անելու, դու էլ նրան վերցրու ու մի տեղ գնացեք: Երեք-չորս ժամ չերևաք: Կամ էլ գնացեք Ձեր տուն, կասեք, կխոսեք, նարդի կխաղաք:

- Չե, չէ, ես այսօր չեմ կարող ամուսնուդ հետ լինել, ժողով ունեմ:

- Ժողով-մողով չգիտեմ, ինչ ուզում եք արեք, մեզ ազատ թռղեք, այսօր միայն կանայք ենք հավաքվում,- այս ասելն ու ընկալուչը կախելը մեկ եղավ:

Քիչ անց Մարիետան վերադարձավ «Զեյթուն» նպարավաճառի խանութից:

- Արագ, արա՞գ, անմիջապես հեռաձայնիր Աննային, քո զանգին է սպասում,- ասացի դոների արանքից հազիվ սենյակ մտած Մարիետային:

- Ի՞նչ կա, ի՞նչ է եղել...  
- Ի՞նչ իմանամ, ինչ որ կանանց հավաք է, մենք՝ տղամարդիկս, չկանք այդ գործում:

- Ի՞նչ կանանց հավաք, ինչ բան, չասացի՞ր, որ մենք զբաղված ենք: Մոռացե՞լ ես, որ Սարոյենց ենք գնալու, չէ՞ որ երկու օրից Հայաստան է զնում:

- Խսկանես մոռացել էի, Մար ջան: Հա, իմիջայլոց ասաց, որ Լիլիթին էլ հետդ տանես:

Արագորեն զնած մթերքները սառնարանում տեղափորելուց հետո, նա մոտեցավ հեռախոսին:

Մի երկու վայրկյան հեռաձայնի մյուս ծայրից եկած հրահանգները լսելուց հետո, Մարիետան ասաց.

- Հա, լավ, հասկացա, Լիլիթին կվերցնեմ ու կզամ:  
- Հը՞ , ի՞նչ եղավ, զնու՞մ ես, - մտահոգված հարցնում եմ ես:  
- Այո, այո, զնում եմ, Հեն ջան, չի լինի, ամոք է, ինչ որ ծնունդ-մնունդ է, Երևանից կ հյուր ունի: Բայց, թե ինչու է միայն կանանց հավաքում՝ զգիտեմ: Կզամ, կպատմեմ:

- Դե, ես փախսա, զլխիդ ճարր տես: Կաշխատեմ շուտ զալ, բայց այս տրաֆիկու ժամին, ե՞րբ տեղ կհասնեմ, զգիտեմ:  
Դեռ Լիլիթին էլ պիտի վերցնեմ:

Եվ այսպես, զնաց մեր տիկինը, և ես կրկին սկսեցի աշխատել համակարգչով: Դիմատետրի միջի տեղեկությունները Հայաստանի վերաբերյալ ինչպես միշտ, մանավանդ այս օրերին, մտահոգիչ են: Սակայն այս է իրականությունը, ի՞նչ կարող ես անել, Ֆրունզիկն (Մհեր Մկրտչյան) էր, չէ՞ , ասում. «Էն ինչ, որ պտի եղնի, չի կարա չեղնի, իսկ են որ պտի չեղնի՝ չի կարա եղնի»: Բա, այսպես է բանը, «ախապըրտիք»:

- Դե լավ, Հենրիկ, հերիք քեզ տանջես հայրենակարուտ մտածումներով, զնա, զնա մտիր անկողինդ ու մի երկու ժամ քնիր,- ասում եմ ինքս ինձ, - միևնույնն է, այսպես կամ այնպես զիշերը չես քնելու, զոնե հիմա քունդ առ:

Զգիտեմ,թե որքան էի ննջել, գուցե թե մեկ-երկու ժամ, մեկ էլ լսում եմ Մարիետայի ձայնը.

- Լավ է, ելի, դու այստեղ հանգիստ շնթռկես, իսկ ես ֆրի-վեյներում (ազատուղի, մայրուղի) ու փողոցներում քարշ զամ, հա՞: Վեր կաց, վեր, վեր,- վերմակը վրայիցս վար առնելով, բաճրագոչ ձայնով ասում է կինս:

- Հանգիստ, հանգիստ, ընկեր տանկիստ,- փորձելով կատա-կի տալ, ասում եմ ես ու տեսնելով ձեռքի նվեր-փաթեթը, որը տանելու եր ընկերուին տուն, զարմացած հարցրի.

- Իսկ ձեռքիդ նվերը ինչո՞ւ տիրոջը չես հանձնել այ կնիկ, ինչո՞ւ ես ես բերել, բա ամոթ չի՞...

- Դու, դու ամոթից մի խոսի, կինդ այս քանի ժամ է փողոց-ներում է, իսկ դու բանից անտեղյակ զիշերվա քունդ ես առ-նում, ո՞ւր է հեռախոսդ, ինչո՞ւ մոտդ չես պահում այդ անտեր բջջայինը, զիտե՞ս թե քանի անգամ եմ զանգահարել: Հարյուր անգամ եմ ասել՝ մոտդ պահիր բջջայինը, կամ ել՝ (այս անգամ արդեն ժպտալով) հեռախոսը վզիցդ կախիր:

- Այդ ի՞նչ ես ասում, այ կնիկ, ո՞վ է տեսել, որ բջջայինը վզից կախեն:

- Դու, դու պիտի կախես, դու պիտի լինես առաջինը, հաս-կացա՞ր:

- Լավ, լավ, Մար ջան, կկախեմ, հիմա ասա, ի՞նչ է եղել, ինչո՞ւ ես նվերը ետ բերել:

- Չե, չե, ոչինչ չեմ ասի մինչև բջջայինդ շբերես ու տեսնես, թե քանի անգամ եմ զանգ տվել:

Հակառակի պես կ ման եմ զալիս, ման եմ զալիս, բջջայինս չեմ գտնում: Սուսիկ-փուսիկ պտտվում եմ տան մեջ, մինչ Մա-րիետան կ լուտ, ժպիտը դեմքին հետևում է իմ շարժումներին:

- Չկա, չկա, Մար ջան, ի՞նչ անենք: Չեմ հիշում, թե ուր ես որել:

- Խելք, խելք աշխատեցրու, պարո՞ն,- փոքր ինչ հեգնելով ու լիաթոք ծիծաղով ասում է Մարիետան ու ավելացնում,- տան հեռախոսով զանգ տուր բջջայինդ ու կլսես, թե որտեղից է զալիս ձայնը:

- Ապրի, ապրի, իմ խելքը կինը: Դե, ձիշտ են ասում եի, թե տան հեռախոսը նրա համար է, որպեսզի նրա միջոցով գտնես տան մեջ կորած բջջային:

Եվ իրոք է, փորձված ճանապարհով գտնում եմ բջջայինս, որը մնացել էր կոստյումիս ներքին գրապանում դեռ նախորդ օրվա երեկոյից:

- Ճիմա տեսա՞ր, թե քանի անգամ եմ հեռաձայնել...

- Լավ, լավ, Մար ջան, հիմա ասա, ի՞նչ է պատահել, ինչո՞ւ ես նվերը ետ բերել:

- Հյա հարցրու, թե տեղ հասե՞լ եմ, որ նվերը տայի:

- Ինչպե՞ս թե, իո վյար-մթար չի՞ եղել:

- Ճիշտ էլ կոահեցիր, բայց քո ասած վյարից չի: Դե հիմա լսիր. Լիլիթին վերցնելուց հետո, ասել-խոսելով մտանք ֆրի-վեյ: Մեր ելքին շհասած, զգացի որ մեքենային առջևի աջ անի-վից տարօրինակ ձայն է զալիս:

- Հետո՞ , հետո՞ , շուտ ասա, մի երկարացրու:

- Էլ ի՞նչ հետո, ստիպված կանգնեցրի մեքենան և դուրս եկա. ի՞նչ տեսնեմ, անիվը բգիկ-բգիկ վիճակում է: Անելանելի դրություն, վտանգավոր տեղ: Ինքս չգիտեմ, թե պահեստային անիվն ո՞ւր է և ո՞նց են տեղադրում:

- Այսինքն, եթե իմանայիր էլ, միննույնն է, դու չէիր կարող փոխել:

- Հենց այդ: Զանգահարում եմ քեզ, այն էլ տեսար չէ, թե քանի անգամ, Արամին՝ անօգուտ: Զանգ տվի Աննային ու տեղյակ պահեցի իրավիճակի մասին: Ես ու Լիլիթը անօգնական, անելանելի վիճակում կանգնած, չգիտենք մեր անելիքը:

- Օհն, խնդիրը լրջանում է:

- Լսիր, լսիր շարունակությունը: Մեկ էլ, որտեղից-որտեղ, ոլոր-մոլոր ընթացքով, մի տեսակ ազատելով ֆրիվեյի եզրագիծը, մեզ մոտեցավ ազատուղու ոստիկանական մեքենան ու կանգնեց մեր մեքենայի ետևում, որից իջակ հաճելի արտաքինով, բարետես երիտասարդ կին ոստիկանը և տեսնելով իրավիճակը, հորդորեց բնակ չանհանգստանալ:

- Խսկ վարորդական իրավունք կամ ապահովագրական

փաստաթուղթ չհարցրե՞ց:

- Ոչ, ոչ, պատկերացնո՞ւմ ես, հավանաբար տեսավ հազած-կապված ջահելներիս, անհարմար զգաց փաստաթուղթ հարցնել, բա, որ ասում եմ մարդ պիտի ըստն կնիկ ունենա,- արդեն հնչուն ծիծաղով ասաց Մարիետան:

- Լավ, ել զլուխ մի գովի, հետո, հետո ի՞նչ եղավ:

- Ի՞նչ պիտի լիներ,- մտահոգվելու պատճառ չունեք, հարգելի տիկնայք,- ասաց ոստիկանը ու ժպտալով հարցրեց.

- Այսպես զուգված-զարդարված ո՞ւր եք շտապում...

- Դե, զիտեք հարգելի «օֆիսը», մենք ճիշտն ասած, շտապում ենք, զնում ենք հյուր Վեն Նայս,- ասացի ես:

- Օ՛, Վեն Նայս, այստեղից հեռու չէ, Դուք արդեն գրեք հասել եք:

- Այո, «օֆիսը», բայց այս վիճակո՞վ, տեսնում եք չէ՝, պայթել է անիվը, գուցե քարշակ կանչեք մեզ համար,- ասում եմ ես:

- Չե, չէ, ի՞նչ եք ասում, տիկին, այն ել այս տոնական օրը և հետո, ահազին դրամ պիտի վճարեք դրա համար, ափսոս չէ՝: Ես հիմա կկանչեմ մեր ենթակայության քարշակ մերենան և ամեն ինչ կարգի կրերվի: Թող դա ել իմ նվերը լինի Զեզ այս տոնի առթիվ,- այս ասելն ու անմիջապես հեռաձայնով կապվելը ենթակայի հետ մեկ եղավ:

- Չե, չէ, «օֆիսը», ի՞նչ եք ասում, մենք կվճարենք, որքան որ պետք է,- ասաց մինչ այդ լուր մնացած Լիլիթը:

- Եվ դու կարո՞ղ ես երևակայել, Հեն ջան,- շարունակում է Մարիետան,- նման հաճելի, անսպասելի, անբացատրելի վերաբերմո՞ւնք, այն ել կին ոստիկանի կողմի՞ց: Անհավատալի է թվում, այնպես չէ:

- Իսկապես անհավատալի է, թեև, զիտես, պատահել է, որ ինձ ել են ներել: Դեռ մի անգամ ել մի ոստիկանի հրավիրել եմ իմ համերգին, հիշո՞ւմ ես:

- Իհարկե, հիշում եմ: Մենք երևի լավ չենք ճանաչում այստեղի ոստիկաններին: Տես է, բոլորովին օտար մեկին բարիք,

լավություն է անում Ամերիկայի ոստիկանը, հավանաբար, նույնիսկ օրենքը խախտելով: Ես ու Լիլիթը 22մել, մնացել էինք նման վերաբենունքից: Քիչ անց մեզ մոտեցավ մեկ ուրիշ նմանատիպ ոստիկանական մեքենա, որի ոստիկանը դարձյալ կին էր: Երկրորդ մեքենան կանգնեց իմ մեքենայի առջևում: Այսպիսով իմ մեքենան ապահովվեց երկու կողմից:

- Շարունակիր, շարունակիր, Մար ջան, հետաքրքիր է, թե ինչով վերջացավ այս ամենը:

- Մի խոսքով, Հեն ջան, բավական երկար սպասեցինք մինչև եկավ մասնագետը և փոխեց մեքենայի անիվը: Բոլորովին անվճար: Այդ ընթացքում գրեթե բարեկամացանք ոստիկանների հետ: Պատկերացրու, չորս կանայք, մոտ մեկ ժամ հաճելի գրուցով տարված: Էլ ինչ թեմաներ ասես, որ չշոշափեցինք: Անշուշտ իմացան, որ հայեր ենք: Քիչ-միշ վերապահությամբ արտահայտվեցին մեր ազգի մասին, հիմնականում մասնակի դժգոհություն հայտնելով մեր երիտասարդների՝ մեքենան անօրեն վարելու համար: Բաժանվելիս միայն գրկախառնությունն էր պակաս ջահել, սիրունատես ոստիկան կանանց հետ: Հիմա եմ ափսոսում, որ չեմ վերցրել նրանց անձնական տվյալները: Վերջում, նրանք իրենց ոստիկանական մեքենաներով, ոլոր-մոլոր, դանդաղ ընթացքով գրեթե մաքրեցին խճողված ազատություն և հնարավորություն տվին, որպեսզի ես կարողանամ անվտանգ մտնել ազատությի:

...Մի խոսքով, բարեկամներ, հավատացեք, իսկապես, ոքան էլ որ խիստ են մեր ճանապարհային ոստիկանները, նույնքան էլ բարի են ու օգնող, հասնող դժվարության մեջ գտնվող ցանկացած վարորդի: Մեր՝ հայերիս, մտապատկերում արմատավորված վերապահ վերաբերմունքը նրանց նկատմամբ գալիս է նախկինում մեր ապրած բարքերից:

Շատ է դժվար ու վտանգավոր ոստիկանի աշխատանքը, մանավանդ Միացյալ Նահանգների արևելյան նահանգներում: Գրեթե օր չկա, որ ոստիկան չսպանվի դրանցից որևէ մեկում:

Ուստի, եկեք մեր օրինապահ երթևեկությամբ թեթևացնենք նրանց ծանրից կլ ծանր աշխատանքը, մանավանդ այս կամ այն տոնական օրերին, երբ կրկնակի, եռակի դժվար է լինում երթևեկելը, թե՛ ազատութիներով և, թե՛ բազմամիլիոնն քաղաքի փողոցներով:

*Հուլիսի 4, 2015 թ.,  
Լու Անջելես*

# ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ ՆՈՐԱՎԵՊԵՐ

## ՇՈՒՆՍ ԷԼ ՍԻՐԵԼ ԳԻՏԵ...

2001 թվականի փետրվարի երկրորդ շաբաթը Պոլս «Սայաթ Նովա» երգչախմբի հրավերով Ստամբուլում էի: Հրավիրվել էի 3-4 ամսով՝ երգչախումբը մարզելու նպատակով:

Քաղաքի մեծաթիվ բարեկամներից ամենաշատը «նազ կանցներ» Արտաշես Հյուսումյանի մոտ: Նրա հետ իմ մտերմական կապը սկիզբ էր առել 1969 թվականից: Եվ երեք ամսից ել մի քիչ ավելի ժամանակ, երգչախմբի փորձերին գնալիս, շաբաթը մեկ-երկու անգամ անգամ այցելում էի Պանզալտը թաղում գտնվող նրա հիանալի բնակարանը: Դեպքը կատարվել է առաջին այցելության ժամանակ:

...Մեր սիրելի բարեկամ Արտաշեսը, ինձ ներս առնելու համար դեռ դուռը չեր բացել, երբ լսվեց շան հաշոց, որն ինձ սթափեցրեց մի քանի օր ի վեր տանջող մտածումներից:

- Մի՛ վախնար, Հենրիկ,- հարեց միջանցքում կանգնած Արտաշեսի կինը՝ Հայկուհին, մինչ ամուսինը փորձում էր շանը տանել կողքի սենյակ:

- Լաքի՛, անդին գնա, սենյակդ անցի՛ր,- հսկա կենդանու հետույքին խիելով գոռաց Արտաշեսը և դառնալով ինձ, շարունակեց.

- Բան չեմ հասկնար, Հենրիկ, ի՞նչ եղավ այս շանը: Ուրիշ ատեն, երբ հյուր մը գալու ըլլա շենքին բոլոր ապրողները կը զիտնան, որովհետև հյուրին առաջին խսկ հարկ մտնալուն պես ան կսկսի հաշել:

- Բնավ հաշոցի ձայն շլեցի, Արտաշ, նույնիսկ հիմա լուր է և շղթան ձգելուդ կսպասե, որպեսզի ինձմե հոտ առնե...

- Ի՞նչ կըսես, Հենրիկ, Լաքիին որևէ մեկը չի կրնար մոտենալ, ոչ ալ ինքը կմոտենա անծանօթ մեկու մը, ասոր համար ալ, երբ հյուր մը գա, իրեն քովի սենյակը կտանինք:

- Լաքի, ինչ լավ, գեղեցիկ անուն է, երջանիկ շուն, երջանիկ

ընտանիքի հոգածության ներքո: Հանգիստ ձգե կենդանուն, ան զիս չի խածներ, ան զիտե, որ ես իր բարեկամն եմ: Ես իրմե չեմ վախնար, մարդոցմե կը վախնամ, որոնք քեզի խածնելով, ճիշտ է, միս չեն փրցներ մարմնեղ, սակայն հավիտյանս կոտտացող վերք մը կը ձգեն հոգու մեջ:

- Ի՞նչ կը խոսիս, Հենրիկ, ինչպե՞ս չի խածներ, մենք ատոր փորձառությունը ունինք, կեցիր քովի սենյակը տանիմ:

- Ոչ, մի տանիր, հանգիստ ձգե իրեն, ես որ չեմ վախնար, դուն ինչո՞ւ կը վախնաս: Ուշադիր մտիկ ըրե, թե ինչ կըսեմ. եթե տանելու ըլլաս՝ պիտի ընդդիմանա, նույնը պիտի պատահի, եթե ես փոյժեմ դուրս ելլալ, ան զիտե, որ ես իր բարեկամն եմ, անոնք միշտ զիտեն, թե որու պիտի խածնեն:

Այս ասելուց հետո, կոնակադարձ վիճակով դոնից դուրս զալու ձև արեցի, որի ընթացքում Լաքին սկսեց կատաղորեն հաշել: Վերադարձա նախկին դիրքիս, Լաքին ձայնը կտրեց և սկսեց խոշոր պոչը թափահարել.

- Տեսա՞ր, պարոնս,- հաղթականորեն դիմեցի Արտաշին,- իմա շղթան թուլցուր, որ Լաքին քովս զա, շղթան սըխը (ամուր) բռնե, չձգես, ինչպես ժողովուրդը կըսէ՝ «Շունին հավատ ընծայե, բայց պարանը ձեռքեղ մի հաներ»:

Արտաշը պարանը թուլացրեց այնքան, որ 30 կիլոգրամանց (եթե ոչ ավելի) շունը հազիվ կարողանա մոտենալ տարատիս: Ես քարացած վիճակով, մի քիչ էլ ահը սրտումս, սպասումի մեջ եմ:

Երկուսս էլ լարված ուշադրությամբ հետևում ենք Լաքի շարժումներին, մինչ վերջինս մի քանի անգամ դանդաղորեն շուրջս պտտվելով և հոտոտելով, վերջապես կանգնեց առաջս: Նսկա գլուխը վեր ցցած, վագրագույն աչքերը դեմքիս ուղղած, պոչը համեստորեն շարժելով, հստակ էր, որ իմ շարժումներին էր սպասում:

- Արտաշ, ամրողովին թուլցուր չվանը, այո, այո, այդպես, ապրես:

Լաքին կամաց-կամաց սկսեց փաթաթվել ոտքերիս: Ես էլ

Վերջ տվի քարացած վիճակիս և սկսեցի մեղմորեն շոյել շան գլուխը:

- Վերջ, Արտաշ, մենք հաղթեցինք, հանիր շղթան շան վզից:
- Ծո, ինենթեցա թ, ինչ է...
- Հանե, ըսի, Արտաշ, մի վախնար...
- Հանե, կրսե նե, հանե, իրավ ալ Լաքին արդեն բարեկամի աշքով կնայի Մաեստրոյին,- այս ել Հայկուիին է, որ մինչ այդ լուտ հետևում էր այս՝ մի քանի վայրկյան տևած, պայքարին:
- Հայտե, պապամ, հանեցինք,- բամբ ձայնով գոչեց Արտաշեսը և մեկ կողմ նետեց շան վզից հանած շղթան:

Լաքին ուրախությունից չփառեր ինչ աներ: Ինձ մոռացած, սկսեց վագել սենյակից-սենյակ, խոհանոց, ննջարան, վերջին կանգառը ես էի: Այդքան երկար վազրից հետո, շունը եկավ կանգնեց առջևս և մի ոստյունով առջևի թաթերով հարվածեց կրծքիս՝ լեզուն դուրս նետած, ջանաց քիթ-քերանը մոտեցնել երեսիս: Բարեկամությունը կնքված էր:

Ճաշասենյակի լայն գորգին Լաքիի հետ փաթաթվելուց և գրկվելուց հետո, հրաժեշտ տվեցի մեր բարեկամներին ու շանը: Վերջինս ուրախ-զվարթ թռչկոտելով, չորս բոլորս պատվելով, սրտաճմիկ հաշոցով՝ Արտաշեսի խստագույն ցուցմունքից հետո, իր խուզը քաշվեց:

- Այս տասը տարվան ընթացքում ասանկ բան չէ եղած, չենրիկ, ոչ մեկը կրցած է Լաքին մոտենալ: Հյուրի մը գալու պարագայում պայման է, որ Լաքին իր բույնը տանինք: Զարմանալի է, առաջին իսկ վայրկյանեն Լաքին սիրեց և կապվեցավ քեզի:

- Շուները մարդեն ավելի զգայուն են, Արտաշ: Լաքին առաջին իսկ վայրկյանին հասկցավ, որ ես շուն շատ կը սիրեմ և չեմ վախնար իրենմե: Ձեր տուն եկող-զացողներեն ոչ մեկը շուն սիրած է և կամ ալ պճիկ, գիրկ առնվելիք շուն պահող եղած է: Լաքին պես հաղթանդամ, 20-25 կիլանոց շուն սիրելը տղամարդու գործ է, բարեկամս:

- Հայտե, հայտե, զլուխ մի գովեր, շունիր տեր եղիր հաճիս, խաղալ կուզե հետդ:

Հաջորդ այցելությանս, հազիվ ոտքս բնակարանից ներս  
դրած, Լաքին դեմս ցցվեց:

- Հայտե, շունիդ տեր եղիր հաճիս, խաղալ կուզե հետդ:

Իսկապես է, Լաքին չորս կողմս պտտվելով ու այս ու այն  
կողմ ցատկուելով, ինձ առաջնորդում էր հյուրասենյակ, որի  
մեծ գորգի վրա կես ժամի չափ զզվրտվեցինք ես ու ինքը:

Հաջորդող ամիսների ընթացքում Լաքին այցելեիս ամեն  
անգամ խորոված հավ (գորի) էի տանում իմ սիրելի շանը, որը  
մի քանի վայրկյանում այն լափելուց հետո, պարտադրաբար  
մի քանի վայրկյան ինձ հետ պիտի թավալվեր մեծ գորգի վրա:

...Առաջին շունը, որ հայտնվեց մեր ընտանիքում Համաշ-  
խարհային երկրորդ պատերազմից հետո էր: Հայրիկս նոր եր  
վերադարձել Ռումինիայից ու անմիջապես մայրիկիս հանել  
էր տվել աշխատանքից. «Դու տանը մնա և երեխաներին հոգ  
տար», - ասել էր նա ու ավելացրել. - ես կվերադառնամ իմ  
նախկին աշխատանքին»:

Խեղճ, միամիտ հայրիկս զգիտեր, որ իր ռազմագերի լինելու  
պատճառով ոչ ոք իրեն աշխատանք չի տա: Դա արդեն  
առանձին պատմություն է:

Նրա վերադարձի առաջին իսկ ձմռանը, փողոցում, մի  
պատի տակ կծկված փոքրիկ շնիկ տեսա: Ես, որ հազիվ յոթ  
տարեկան էի, ինչ կարող էի անել, եթե ոչ շնիկին գրկել ու  
տանել մեր տուն:

- Տղաս, ի՞նչ պիտի անենք այս շնիկը, մենք ինքներս անորի,  
ինչպէ՞ս պիտի կերակրենք այս շանը: Ախր, այս շունը հովիպի  
շան ցեղից է, հաշել ել չի կարող:

- Վեսա շունի, Հակոբ,- ասաց մայրիկս, - նա էլ մեզ հետ յոլա  
կզնա, ի՞նչ անենք, խեղճ հայվանին փողո՞ց նետենք...

Վճիռն արձակված էր. շնիկը մեզ հետ էր ապրելու, մեզ հետ  
պիտի բաժաներ մեր խեղճուկրակ ուտելիքը: Ժոլին (առաջին  
իսկ վայրկյանին մայրիկս կնքեց նրա անունը, որ ֆրանսերեն  
նշանակում է գեղեցիկ) ինձ հետ մեծացավ, ինձ հետ բաժանեց  
մանկությունս ու պատանեկության առաջին տարիները:

1956 թվականին ինձ տարան խորհրդային քանակ՝ երեք

տարվա ծառայության, քայց ես ճիշտ և ճիշտ չորս ամիս հետո Երևանում էի: Անակնկալ անելու մտադրությամբ մերոնց տեղյակ չէի պահել իմ վերադարձի մասին: Երևանի երկարուդային կայարանից հանրակառք վերցրի մեր տուն հասնելու համար:

Կանգառից մինչև մեր տուն հազիվ 500 մետր է: Մինչ ես քայլում եմ, մայրս նկատում է, որ Ժոլին անհանգիստ է և աշխատում է շղթազերծ լինել: Շունն այնքան է կատաղում, որ կարողանում է ազատվել շղթայից ու իրեն փողոց նետել՝ ինձ դիմավորելու համար:

Ահազին հեռավորությունից մեր Ժոլին հոտառությամբ զգացել էր, որ տանն է մոտենում իր տերը: Կորած հարազատին գտնելու պես առաջինը նա էր, որ փաթաթվեց ինձ ու առատ թքով լվաց երես:

Դրանից հետո երկար չապրեց մեր Ժոլին և, որպեսզի իր վախճանը չտեսնեմ, մարդ կանչել տվինք հատուկ ընկերությունից, իսկ մինչ նրա գալը ես արդեն երկու օր բացակայել էի տնից, որպեսզի չտեսնեմ անխուսափելի բաժանման պահը:

\*\*\*

Հաջորդ շունը, որ ունեցանք, 1990-ին էր՝ Ամերիկայում:

Մի օր որդիս՝ Արամը, ընկերոջ հետ ֆրանսիական «Պուլը» ցեղի շունը զրկին մեր տան բակից ներս մտավ.

- Հայրիկ, - ասաց նա, - այս շունիկը (*Սենդի էր նրա անունը*) 2-3 ամիս մեզ մոտ պիտի մնա: Ընկերս Նյու-Յորք պիտի գնա և մտերիմ մեկը շունի, որպեսզի նրա մոտ կարողանա թողնել:

Կինս՝ Մարիետան, առարկեց, որովհետև շատ էր վախենում շներից: Ի վերջո համոզեցինք և այդ գործում մեծ դեր խաղաց մայրիկս՝ տիկին Վերժինեն, ատապազարցի այդ գիտուն և շենշող կինը:

Կարճ ժամանակ անց առանց Սենդիի հնարավոր չեր պատկերացնել մեր գոյությունը: Բոլորս խենթի պես կապվել էինք շան հետ, մանավանդ կինս: Մեր հայտագիրներից լիովին ջնջվեցին ընտանյոք քաղաքից բացակայելը, որևէ տեղ գնալը: Եվ եթե պատահեր, որ ամբողջ ցերեկը միայնակ թողնեինք

Սենդիին, խեղճը իր բնական պետքերը պահում էր մինչև մերոնցից որևէ մեկի գալը, որպեսզի խցանի պես դուրս նետվի իր պետքերը հոգալու համար:

Երեք ամիս անց, ըստ պայմանավորվածության, մեր տուն եկավ Արամիս ընկերը: Մենք արդեն գիտեինք, որ նրա գալու ժամանակն էր և ամենքս յուրովի ծանր էինք տանելու Սենդիից բաժանվելու պահը: Բայց, հակառակ մեր սպասածի, Երիտասարդը եկել էր խնդրելու, որ մեկ-երկու ամիս ևս հոգ տանենք Սենդիին, որովհետև իր վարձած հարկաբաժնում արգելված էր շուն պահելը:

Երիտասարդը խնդրեց ևս երկու ամիս հոգ տանել Սենդիին՝ մինչև որ ինքը կարողանա հարմար բնակարան գտնել: Երկու ամիսն էլ անցավ, բայց շնատերը մեջտեղ չկար: Մի օր, երբ ամենքս սեղանի շուրջն էինք, դիմեցի Արամին.

- Արամ, տղաս, նայիր, հավանաբար այս օրերին բարեկամդ կզա Սենդիին տանելու, բայց մենք Սենդիին չենք տալու, ականջիդ օդ արա, հասկացա՞ր...

Կարծես բոլորի սրտից էի խոսել: Նույնը կրկնեցին թե մայրս, և թե Մարիետան:

- Արդեն ընտանիքի անդամ է դարձել Սենդիին, մենք չենք կարող բաժանվել նրանից, - հարեց Մարիետան:

Խսկապես էլ, Սենդիին դարձել էր հույժ անհրաժեշտություն մեր տան մեջ: Առանց նրա անկարելի էր երևակայել մեր կյանքը, մանավանդ մայրիկիս կյանքը: Իր ընկերն էր, խոսակիցը: Ամբողջ ցերեկը նրա հետ էր, միայն երեկոներն էր վերապահված մեզ, իսկ զիշերները միայն իմն էր. անկողնուս վրա, ոտքերիս տակ էր քնում:

Մի օր Արամն ասաց, որ ընկերը գալու է շանը տանելու: Ամենքս մեր որոշումը տվել էինք արդեն ի՞նչ, Սենդիին տանելո՞ւ են, անկարելի է...

Մի քանի օր հետո տղան երևաց մեր բակում: Իր նախկին տիրոջը տեսնելուն պես, Սենդիին վազեց դեպի նա: Տղան զիրկն առավ շնիկին և համբույրներով ողողեց կենդանուն: Վերջինս՝

տիրոջ գրկից իշնելուց հետո, չեր իմանում անելիքը, մեկ ինձ էր մոտենում, մեկ մայրիկիս, մեկ Արամին:

- Տղաս, դու Սենդիին չես կարող տանել,- նախահարձակ ոճով ասացի ես:

- Ինչպե՞ս...

- Ճիշտ այդպես, դու գրեթե վեց ամիս Սենդիին թողեցիր մեզ մոտ և մենք վարժվեցինք նրան և առանց նրա չենք կարող պատկերացնել մեր կյանքը ու մեր իրավունքն է այսուհետ նրան պահել մեր տան մեջ, որպես լիիրավ անդամի:

- Ո՞չ, ո՞չ, չենք կարող տալ,- ավելացրեց Մարիետան:

- Ինչպե՞ս կարելի է, ես առանց Սենդիի չեմ կարող ապրել, դուք գիտեք, թե ի՞նչ խելացի շուն է նա,- ասաց խեղճացած Երիտասարդն ու սկսեց հեկեկալ:

- Մի օր, տանիցս մի 10-12 մղոն հեռավորության վրա, բենզինի կայանում էի թողել նրան, չի նկատել, որ Սենդին բաց դռնից իջել էր, հավանաբար բնական կարիքի համար: Առանց իմանալու, մերենան վարեցի և եկա տուն: Շան բացակայությունը նկատելով անմիջապես վերադարձա լցակայան: Սենդին չկար: Մեկ շաբաթ անց, ամբողջովին անվնաս, զգալիորեն նիհարած Սենդին հայտնվեց մեր դռան շեմին: Բոլորս ապշել էինք, ցանկացած կենդանի կղմվարանա այդքան հեռավորությունից իր տունը գտնել ու հասնել, մինչ այս փոքրիկը գտել էր իր տունը, ով գիտել ի՞նչ չարչարանքներ կրելուց հետո:

Երիտասարդի հեկեկոցն ու սրտաճմլիկ պատմությունը խախտեց նաև մեր հավասարակշոռությունը և՝ կարծես ձենձնի տված, մենք էլ սկսեցինք լաց լինել: Մթնոլորտը խաղաղ վիճակի բերելու մտահոգությամբ, սկսեցի իմ «Ճառը».

- Ինձ լսիր, տղաս, ճիշտ է, այս շունը, որին նույնիսկ դժվարանում եմ շուն անվանել, ինձ համար համը մարդ է, խելքը տեղին և ավելի հավատարիմ, քան շատ հաճախ մարդը մարդուն: Քոնն է Սենդին, բարեկամս, այո, բայց մի քիչ էլ մերն է և մենք վարժվեցինք նրան ու նա էլ մեզ: Կես տարի նա մեզ հետ է, որպես մեր ընտանիքի հարազատ անդամ: Որքան գիտեմ, մենակ տղա ես, դու պիտի աշխատես կամ ուսանես, ո՞վ է հոգ

տանելու Սենդիին, մտածե՞լ ես այս մասին: Այս վեց ամսում 2 անգամ 2-3 օր հիվանդանոցում է եղել, դու կարող ես այդքա՞ն ժամանակ ու նյութական տրամադրել նրա համար: Այնպես որ, տղաս, դու Սենդիին թող մեզ մոտ և, եթք ցանկանաս, կարող ես զալ ու սիրել շունիկիդ:

Տղան, իհարկե դժվարությամբ, համաձայնվեց և արցունքով ոլորուն համբույրներ դրոշմեց շանն ու հեռացավ:

Դրանից հետո միայն երեք տարի կարողացանք վայելել Սենդիին: Մայրիկիս մահվան օրը, 1993 թվականի նոյեմբերի 23-ին Սենդին անհայտացավ: Ամենուր փնտրեցինք, ամբողջ Հոլիվուդը տակնուվրա արեցինք, բայց՝ անօգուտ:

Փորձառու մարդիկ ասում են, որ եթք տանը մեկը մահանում է, շները չեն դիմանում այդ ցավին և զնում, մի ծածուկ տեղ, աչքից հեռու ավանդում են հոգին: Թերևս այդպես եղավ մեր Սենդիի պարագայում: Ո՞ւ զիտի, գուցե ճիշտ է, թե շներն ել մարդկանց նման սիրել զիտեն:

- Սովորելու բան ունենք նրանցից, ի՞ր թերևս...

Հուլիսի 7, 2012 թ.,  
Երևան

## ՀԱՍՐԻՉԸ...

Կա արդյո՞ք մեկը, որ տեսած չլինի այս անմեղ «խաղալիքը», որն իրականում խաղալիք էլ չէ, այլ զբաղմունքի միջոց հիմնականում տարեց տղամարդկանց համար: Նրանք այս խաղալիքը օգտագործում են ձանձրույթի պահերին, երբեմն էլ ժամանակ սպառելու համար:

Որքան զիտեմ համրիչի հետ կապված որևէ գրական նյութ, գրվածք չկա: Կարող է և սխալվում եմ: Կան «ուլունքաշարի», «համրիչների հատիկների» վերաբերյալ նյութեր, բայց բուն համրիչի մասին նորավեալ կամ պատմվածք գոյություն չունի:

Եվ այդ նյութին անդրադառնալու մարմաջով չէ, որ պատմության եմ վերածում ապրուներս՝ կապված այդ անմեղ, գրեթե ոչինչ չասող «ձեռքի ուլունքաշարի» հետ, այլ բոլորովին պատահական երևույթի հետ, որը կատարվեց Ստամբուլում:

Վստահ եմ, որ Պոլսում ապրող ամեն հայ, ով երբէ Թաքսիմի հրապարակից Հարբիյէ է բարձրացել, նկատած պետք է լինի թավ ու սրածայր խոշոր պէսով, զիսին միշտ «սիլինտր» տեսակի զիսարկ կրող մի մարդու, ով մայթերով զբոսնում է և մշտապես ձեռքին խաղացնում սալորի մեծություն ունեցող հատիկներից պատրաստված ու բավականին ծանր համրիչը:

2001 թվականի փետրվարի կիսերին էր, երբ առաջին անգամ տեսա այդ տարօրինակ մարդուն Թաքսիմ հրապարակի մի անկյունում: Ես չզիտեի, որ հաճախ պիտի տեսնեմ այդ անձնավորությանը, քանզի դեռ երեք ամիս էլ պետք է Պոլսում մնայի՝ «Սայաթ Նովա» երգչախմբի հետ աշխատելու, ինչպես նաև շաբաթը գեթ մեկ անգամ «Մարմարա» օրաթերթի խմբագրատուն այցելելու և ներհուն մտավորական, զրող, խմբագրապետ ու 1970 թվականից ինձ հետ բարեկամացած Հատուեցյան Ռոպերին հանդիպելու համար:

Թզբեկով անձը՝ պատի տակ կանգնած, երբեմն զլուխը կախ, երբեմն էլ հայացը հեռուներն ուղղած, ինքն իրեն հետ

խոսելով, համրիչի հատիկները խաղացնելով, ով զիտե ի՞նչ երազներ էր փայփայում:

Հաջորդ տարի դարձյալ համերգներ տալու նպատակով, Պոլսում էի: Նույն մարդը նույն մայթերին էր դեգերում: Սկատել էի, որ անցորդներն առանց ուշադրություն դարձնելու, անտարբերությամբ անցնում էին նրա մոտով: Այդ փողոցով անցնելիս մի անգամ փորձեցի փոքր քիչ մոտենալ, հետևել իրեն, բայց զզացի, որ դա այնքան էլ իր «սրտով» չէ, ուստի հրաժարվեցի այդ մտքից՝ շարունակելով քայլել դեպի «Մարմարա» օրաթերթի խմբագրատուն: Միտքս անդադար այդ մարդու հետ էր. ո՞վ զիտե, միգուցե իր ձեռքին եղած ուլունքաշարին էր ապավինել իր բախտը: Ակամա հիշեցի թշվառ մանկությունն Երկրորդ Աշխարհամարտի ահավոր տարիներին, երբ մենք, հազիվ 4-5 տարեկան, քայլելով ցեխոտ, քարքարոտ փողոցներով, մեր հանգիստն էինք գտնում պատերի տակ նստոտած ծերունիների մոտ, ովքեր իրենց պարապ ժամերը «ցնում» էին «թզբեկ քաշելով»:

Աշխարհի շարագույժ դեպքերից անտեղյակ բոլոր ծերունիները «թզբեկները» ձեռքներին, աջ ձեռքի բութ մատով և ցուցամատով, մեկիկ-մեկիկ վերուվար էին սահեցնում համրիչի կլոր կամ ձված հատիկները՝ հասնելու համար ցանկալի մեջտեղի՝ իրենց ուզած, երազած կամ փայփայած հատիկներ, որը խորհրդանշում էր ցանկության իրականացում կամ չիրականացում. «պետք է լինի, պետք է չլինի», «պետք է զա, պետք է չզա»:

Եվ, որպեսզի արդար լիներ այդ բախտախաղն ու դրա արդյունքը, համրիչի տերը իրավունք չուներ համրիչին նայելու: Հայացքը դեպի հեռուները ուղղելով, ծերունիներն ամեն անգամ խաղը սկսում էին տարբեր հատիկներից, ձգտելով հասնելու ցանկալի՝ «այո», «պետք է լինի», «պետք է զա» արդյունքներից մեկին, կամ այլ դրական արդյունքների, մինչ այդ բազմիցս ճաշակած լինելով դառն իրականությունը. «ոչ», «պետք է չլինի», «պետք է չզա»... Եվ այսպես շարունակ...

Երբ մի քիչ մեծացանք, մենք էլ մեր «համրիչը» գտանք.

պարզ, ճերմակ ու պղտիկ թերթիկներով «երիցուկ» ծաղիկը, որի թերթիկները մեկ առ մեկ պոկելով հաշվում էինք. Հայերենի շարադրությունից իհ՝ նգ պետք է ստանանք, թե՝ չորս: Եվ այսպես, սկսելով ծաղիկի որևէ թերթիկից, հասնում էինք վերջինին, որի արդյունքը պետք է լիներ չորս կամ հինգ: Բազմիցս կրկնում էինք նույն գործողությունը, և, եթե պատահեր, որ երկու անգամ միևնույն արդյունքը լիներ, մտածում էինք, որ այդ թվանշանն է լինելու մեր գնահատականը:

Սակայն կյանքն իր օրենքներն ունի և երիցուկի տված «արդյունքը» շատ անգամ չէր համապատասխանում իրականությանը:

Երբ արդեն պատանի էինք, այդ ժամանակ էլ երիցուկը մեծ դեր էր խաղում մեր առօրյա կյանքում: Մեր սիրած, նախընտրած օրիորդի հետ առանձնանալով, երիցուկի միջոցով փորձում էինք գուշակել, թե Նվարդը ի՞նձ է սիրում, թե Սարգսի ՞ն:

Մեկս-մյուսին հերթ չտալով, արագորեն պոկում էինք երիցուկի թերթիկները՝ հասնելու համար վերջինին, որը սովորաբար լինում էր հակառակորդի անունը: Այդ ժամանակ գոռում էինք, փրփրում, անլուր, անտեղի մեղադրանքներ հնչեցնում մեր սիրած աղջկա հասցեին, ով լալազին ասում էր, որ «Ո՛չ ո՛չ, այդպես չէ, սիսալ է երիցուկը: Ես Սարգսին չեմ սիրում, քեզ եմ սիրում, նորից փորձի, նորից փորձի և կտեսնես, որ քո անունը պետք է ելնի...»:

Մեծ խորհուրդ և մեծ խմաստ կար այս մանկամիտ ու պարզ խաղին մեջ, և երբ ստվար խմբով գնում էինք Դիլիջանի կողմերը, մեր առաջին գործը լինում էր դաշտերում և անտառներում երիցուկներ գտնելը: Այդ ժամանակ բոլորս ականատես էինք լինում առանձնացած, երիցուկներով զբաղված զուգերի «խաղին»:

... Այսպես անցան տարիները՝ մեզ էլ մոտեցնելով վերջալույսին: Ինձ թվում էր, թե մոռացվել են ինչպես երիցուկը, այնպես էլ համրիչը:

Սակայն, 2000 թվականին, մենք վեց բարեկամներով, Զավախքով մուտք գործեցինք Թուրքիա՝ մեր պապենական-հո-

բական հողերը, Կարսի, Արդահանի, Վանի, Մուշի, Էրզրումի շրջաններն ու գյուղերը պտտելու և կարոտներս առնելու համար:

Կարսում մենք բնավ օտար չզգացինք մեզ, կարծես թե նախկին Լենինականում էինք. նույն սև գույնի քարե շարվածքով երկիարկանի գեղեցիկ շենքեր, ոռուսական տներ հիշեցնող կամարաձև պատուհաններով:

Ամերիկայի երկու քարեկամներս խնդրել են առարկայական հուշեր բերել Թուրքիայից. մեկի ուղածը համրիչ էր, իսկ երկրորդինը մի շիշ ջուր Վանա լճից:

Կարսում առաջին օրն իսկ տեսա, թե որքան տարատեսակ, տարբեր գույնի, տարբեր նյութերից շինված, դյութիչ ու գրավիչ, մեծ-փոքր հատիկների տարբեր քանակով, կարճ, երկար համրիչներ են վաճառում: «Վերջում կառնեմ», - մտածեցի ես, քանզի հինգ օրից Կարսով Հայաստան եկն վերադառնալու:

Մեր խմբում մի կին կար՝ տիկին Հոհիսիմեն, ում ծնողները Էրզրումի շրջանի Զիթոց գյուղից էն: Նա միացել էր մեր խմբին՝ հատկապես իր ծնողների ծննդավայրն այցելելու փափագով: Անշուշտ հայկական ճամբորդական ընկերության հայտագրում նախատեսված չեր ճանապարհից շեղվել սակայն մենք՝ կնամեծար տղամարդկանցով, որոշեցինք Էրզրումում զբաղվել տիկնոց ծնողների գյուղի փնտրությով:

Էրզրումում շատերին հարցրեցինք այդ գյուղի մասին, սակայն ոչ մեկը չեր լսել անունը: Ի վերջո, անզլիախոս, համալսարանավարտ քարեհամբույր մի երիտասարդ խորհուրդ տվեց գնալ ճամփորդական որևէ գրասենյակ և հին քարտեզներում փնտրել այդ գյուղը, որի անունը կարող է և արդեն փոխված լինի.

- Իհարկե նոր չէ այս օրենքը, - ասաց երիտասարդը, - սակայն տարե-տարի փոխվում են երկրի քաղաքների և գյուղերի օտար արմատ ունեցող տեղանունները:

Հետևելով «գիտունիկ» երիտասարդի խորհրդին, մեկ ժամի չափ հարց ու փորձ անելուց հետո, գտանք Էրզրումի ամենահին և ճանաչված ճամփորդական գրասենյակներից մեկը: Այնտեղ, գրասենյակի մուտքի մոտ, մի ծերուկ համրիչների

Ճնի հավաքածու էր վաճառում: Այլս այս ու այն կողմ չնայեցի և մի զույգ համրիչ գնեցի, մեկը վերապահելով ինձ, իսկ մյուսը՝ Աշոտ անունով բարեկամիս:

Խսկապես, ճամփորդական գրասենյակի հին քարտեզներում գտանք մեր փնտրած զյուղը, որն այժմ Պահշեմի էր կոչվում: Պարզվեց, որ այն Էրզրումից 10-11 կմ հեռավորության վրա է:

Տիկիրն Հոհիսիմեի բերած պատկերներով գտանք նաև զյուղի մեջ եղած կամուրջն ու ջրհորը, որոնք վաղուց անգործության էին դատապարտված: Չկար եկեղեցին, տեղը տափարակ տարածություն էր:

Մեկ ժամ մնացինք զյուղում, բայց չկարողացանք գտնել Հոհիսիմեի նախնիների տունը, որովհետև բոլոր տները նորոգված էին, շատերն էլ նոր շինված, որոնց պատերի մեջ դժվար չէր հայտնաբերել եկեղեցու սրբատաշ քարերը:

Հոհիսիմեի հավաստմամբ, իր պապենական տան փողոցում ժամանակին ապուխտի (*բաստուրմա*) պատիկ գործարան է եղել: Եվ իսկապես, վերադարձին, փողոցի ծայրում, մեքենայի բաց պատուհաններից ներս խուժեց չամանի (*քիսիոն*) հաճելի հոտը: Սակայն 100-ամյա վաղեմություն ունեցող այդ միակ կենդանի վկայությունը՝ բաստուրմայի գործարանն, ու մեր շուրջը հավաքված տասնյակի չափ երեխաները, ովքեր ամերիկյան մեկ դոլար ձեռք ձգելու համար պատրաստ էին ամեն ինչի, օգտակար չեղան մեր որոնածը գտնելու հարցում:

... Ճամփորդության ավարտին Վանա լճից փոքր շերով ջուր, իսկ Այգեստանից մի քանի պտղունց հող վերցրեցինք, որոնք այսօր էլ պահպանվում են մեր վեց ընկերների տներում: Ես մի բան ավելին ունեմ՝ համրիչը, որը հազիվ թէ ձեռքս վերցնեմ, որովհետև մշտապես զբաղված եմ:

Իրականության մեջ մենք՝ հայերս, կարիք ունենք նորածն մի համրիչի, որը միայն մեկ հատիկ պետք է ունենա, «հավատի» հատիկ, որպեսզի դրա պատասխանը միշտ լինի. այո, կամ՝ կլինի...

Օգոստոսի 11, 2004 թ.,  
Երևան

## ՔՅԱԼՀԱ ՆԻԿՈՂՈՍԸ

1964 թվականի վերջում մեր հարևան Օնոբիոսի (այն օրերի համար մեր ականջին հնչող բավական տարօրինակ անուն) երկիարկանի առանձնատան առաջին հարկի մեկ սենյակում վարձակալական հիմունքներով մի ամուսնական զույգ տեղավորվեց: Ինչպես մեր, այնպես էլ հարևանների հետաքրքրությունը մեծ էր այդ զույգի նկատմամբ:

Կինն, պարտաքինից էլ երևում էր, որ օտարազգի էր, սլացիկ մարմին ուներ, շիկահեր մազերն էլ առատորեն փոված էին ուսերին, իսկ ամուսինը հայ էր, սակայն իսկական խափշիկի էր նման, կարճահասակ, մեծ, պարարտ ստամքսով և կարձլիկ, կնոշից էլ բավական ցածր հասակով: Ինչպես հայտնել էր հորս ֆրանսահայ Օնոբիոսը, վարձակալ Նիկողոսի կինը գերմանուիկ էր, անունն էլ Սառա:

Սառան մշտապես տանն էր, իսկ ամուսինը առավոտից գնում էր աշխատանքի ու միշտ ուշ էր վերադառնում: Ինչպես հետո իմացանք, Նիկողոսը, որին մենք կրծատ ձևով Նիկո էինք ասում, լուսանկարիչ էր ու աշխատում էր Լենինի հրապարակում և անցորդներին ու մայրաքաղաքում նոր-նոր երևացող զբոսաշրջիկներին էր լուսանկարում:

Ինարկե, միայն Նիկոն չէր, որ սպասարկում էր հրապարակի անցորդներին: Իրենից բացի կային ևս երեք լուսանկարիչներ, ովքեր մրցման մեջ էին իրար հետ և հաճախորդ էին փախցնում միմյանցից:

Մի օր, Նիկոն ու իր կինը, ով մի քանի քառ զիտեր հայերեն, առաջին անգամ թակեցին մեր տան դուռը:

- Հենրիկ,- առանց բարև-բարի լուսի, անմիջապես վրա տվեց Նիկոն,- խնդրեմ, օգնե ինձի, օգնե...

- Սպասիր մի վայրկյան, Նիկո, ի՞նչ է եղել, ներս մտեք, շատ հուզված ես երևում, նստեք խնդրեմ բազմոցին և պատմեք, թե

ի՞նչ է եղել,- անակնկալի եկած ասացի ես,- աշքիդ տակին կապույտը ինչի՞ց է...

- Սպասե, որ պատմեմ: Գիտես, որ լուսանկարիչ եմ: Շրջութեան կը կը կը, ինչ կը կը, ծանոթ մեկն ալ չունիմ հոն, որ կարենա ինձի օգտակար ըլլալ նկարչատուն մը բանալու համար: Շիտակը դրամ ալ չունիմ:

- Այդ ամենը վերջում կասես, մի երկարացրու, Նիկո, ասելիքդ ասա:

- Ի՞նչ ըսեմ, եղբայրս: Նկարչական գործիքս առի և զացի Լենինի հրապարակ՝ անցորդներուն լուսանկարելու: Հոն ինձի պես երեք լուսանկարիչ կա և անոնցմէ ամեն մեկը անցորդներուն ետևեն վազելով, կշանա հաճախորդներ գրավել: Ես ալ հեռուն կեցած, գործիքը վիզես կախած, կսպասեի բախտիս: Եկուր տես, որ չեմ գիտեր ինչեն է, առանց մասնավոր ջանք մը բափելու, ավելի հաճախորդ գրավեցի, քան մյուս երեքը միասին:

- Նիկո, կարճ կապիր, գործ ունեմ, բարեկամս, ասելիքդ ասա և վերջացրու, խոհանոց պիտի գնամ խաշ մաքրելու, շաբաթ օրը հյուրեր ունենք:

- Ի՞նչ ըսիր, խաշ շահիր, իշտե մեր գիտցած փաշան չ' է մի, փաշան ինչ է, ճանըմ, քյալլա ըսե, քյալլա, բայց կեցիր, Հենրիկ, կեցիր, քիչ վերջ կխոսինք քյալլայի մասին, քյալլա գիտես չ' ինչ ըսել է՝ քուլուս, ոչխարի քուլուս:

- Ծո, կարգին խոսե, գլուխ ասա, ոչ թե քուլուս: Ամոթ է, ամոթ, մի քիչ հայերեն խոսել սովորիր: Աշքիդ տակի կապույտին անցիր, հայդէ, պատմի տեսնենք ի՞նչ փորձանքի ես եկել:

- Կապույտի՞ն ըսիր, հա, մայրամուտի ատեն, երբ գործերնիս լմնցուցած տուն պիտի դարնայինք, այդ երեք տղաքը ինձի տարին դիմացի ջուրերու խանութին ետևը և հարձակեցան վրաս, քանի մը հարվածներ հասցուցին քիյիս, բերնիս և հայիոյանքներու տարափին տակ սպառնացին, ըսելով, որ ուորերս կը կոտրեն, եթե անզամ մըն ալ երևամ հրապարակին շուրջը: Աս ալ չէր բավեր, գործիքս ալ առին ձեռքես:

- Լավ է, որ չեն կոտրել գործիքդ, բարեկամս: Իրապես, ինչո՞ւ

ուրիշ տեղ չես կանգնում և մարդկանց հաճախորդներին ես տիրանում: Ինչ է, հրապարակում ուրիշ տեղ չկա՞ , Լենին պապիկի արձանի մոտ կանգնիր, մանավանդ Արմենիա հյուրանոցն էլ մոտ է: Շատ եկող-զացող կա: Հազուստիցդ էլ երևում է, որ դու տեղացի չես, «ախապար» ես, և քեզ ավելի յուրությամբ կմոտենան արտասահմանից եկած հայերը, քան մյուսներին: Հիմա ի՞նչ է ուզածդ, Նիկո:

- Դուն ասոնց լեզուն լավ կհասկնաս տղաս, հաճիս գործիքս առ ատոնց ձեռքեն, Հենրիկ:

- Լավ, լավ, ամոք է, քեզ որ մնա հիմա լաց կլինես: Խոստանում եմ տղաներին հանդիպել: Պետք է ջանամ կարելին անել նկարչական գործիքը քեզ վերադարձելու համար: Միայն թե խոսք տուր, որ ուրիշի «հացին վայ պիտի շինես»: Այդ իւղ-ձերն իրենց վաստակածից դեռ բաժին էլ են հանում ոստիկաններին և հսկիչներին, այդպես աշխատել չի լինի, Նիկո:

- Շատ շնորհակալ կը լլամ, Հենրիկ, եթե կարենաս գործիքս ազատել ատոնց ձեռքեն, ես ալ ուզածդ նվերը կընեմ:

- Նվեր-մվեր չեմ ուզում, Նիկո, միայն թե մի անգամ քյալլա ես ասում, թե ինչ, եփե, տեսնենք, իմանանք, թե ինչ է այն: Քիչ առաջ խոսք արիր այդ մասին: Մեր տանը միայն խաշ, ձեր գիտցած փաշան է, որ կեփիլի:

- Սիրով, Հենրիկ, ուզածդ թող ադ ըլլա, թես երկար աշխատանքի կը կարուտի քյալլա եփելը, գիտե ս որքան համով կը լլա ոչխարի քուլուխին մեջի ուղեղը, աչքերը, լեզուն: Ամեն մեկն իր համը ունի:

- Նիկո, նախ, ինչպես քիչ առաջ քեզ ասացի, որ հայերեն խոսես և ասես զլուխ և ոչ թե քուլուխ: Եվ հետո, ես այդպիսի բաներ ուտելու վարժված չեմ, լեզու, ուղեղ, քիթ, կոկորդ, և չգիտեմ ինչ, իրականում, ես խաշ էլ չեմ ուտում, միայն սիրում եմ խաշի մթնոլորտը, երբ իրար զլուխ են հավաքվում տղամարդիկ և ամբողջ օրը ուտել-խմելով են անցկացնում, կենացներ են խմում, նարդի խաղում: Խաշին էլ հաջորդում է կեսօրյա խորովածը, իսկ երեկոյան՝ էջմիածնի քյուֆթան...

- Աստված իմ, այդշափ ուտել կը լլա ...

- Կլինի, կլինի, եղբայր: Շաբաթ օրը եկ, կտեսնես: Տիկնոջ էլ քեր, թող մերոնց հետ կողքի սենյակում լավ ժամանակ անցկացնի: Բայց դու խոստում պիտի կատարես: Ես քյալլա կուտեմ, թե՝ ոչ, միևնույնն է, ընկերներս կվայելեն:

- Շատ աղեկ, մինչև Նոր տարի դեռ երկու շաբաթ կա, զալ շաբթվա մեջ կուտենք քյալլան, միայն թե հոս, տունիդ մեջ: Գիտես, ես և տիկինս մեկ պատիկ սենյակի մեջ կապրինք:

- Եղավ Նիկո, վաղը նկարչական գործիքդ ձեռքիդ կլինի:

Մեր ողջ զրույցի ընթացքում Նիկոյի կինը՝ Սառան, բերանը շբացեց: Միայն երբեմն-երբեմն, ամուսնուց աննկատ, կիսաժպիտ, զրգոհից ու հանդուզն հայացը էր ուղղում ինձ:

Մեկ շաբաթ անցավ, բայց խոստացված քյալլան չերևաց մեր սեղանին, ոչ էլ խոսք եղավ այդ մասին: Անշուշտ, ես կարողացա տղաների ձեռքից վերցնել Նիկոյի լուսանկարչական ապարատը և հանձնել իրեն՝ առանց որևէ ակնարկ անելու քյալլայի մասին:

Նոր տարուց հետո Նիկոն թողեց լուսանկարչությունը: Չղիմացավ մրցակցությանը և որոշեց աշխատել ավտոդոդերի գործարանում: Նա վաղ առավոտյան գնում էր աշխատանքի և բավական ուշ վերադառնում: Գրեթե ամեն օր, երեկոյան ժամերին Նիկոն այցելում էր մեզ, զրեթե միշտ ընթրիքի ժամերին: Խեղճ Նիկոն մշտապես անորի էր լինում և մեծագույն հաճույքով վայելում էր մայրիկիս պատրաստած համեղ կերակուրները: Նա իրեն ավելի ազատ էր զգում մեր տանը, քան իր տանը:

- Կնիկս կերակուր եփել չի գիտեր,- ասում էր նա ու բնավ չեր հետևում քաղաքավարական կանոններին և ինչ ընկնում էր ձեռքը վայրկյանի մեջ կուլ էր տալիս: Ավելին. կուշտ լափելուց հետո, «ձեռի հետ», սեղանի վրայից վերցնում էր այն ամենը, ինչ սովորաբար դժվար էր գտնել խանութներում, մասնավորապես մեկ-երկու շիշ եգիպտական զարեցուր:

- Այս զարեցուրի արժեքը դուք չեք գիտեր, իմ ծննդավայրես կուգա՝ Աղեքսանտրիայեն: Գիտեք չէ, ուր կգտնվի այդ ծով-եղրյա քաղաքը Եգիպտոսի մեջ,- հպարտ-հպարտ ասում էր

նա ու առանց քաշվելու, վերցնում էր մեկ-երկու շիշ ու դուրս գալիս տնից՝ հաջորդ օրերին նովսը կրկնելով:

Նիկոյի կնոջը՝ Սառային, հազվադեպ կարելի էր տեսնել փողոցում կամ այլուր, մի երևույթ, որ նկսել էր կասկածելի դառնալ հարևանների շրջանում:

Մեկ էլ լուր տարածվեց, թե մեր տնից երեք տուն դեպի հյուսիս բնակվող, ուսանող Գեղամը հաճախ է թակում Նիկոյի տան փողոցին նայող դուռը:

Արդեն հստակ էր, որ Գեղամը չնայած երիտասարդ տարիքին, կապված էր իրենից բավական տարիքով գերմանացի կնոջ հետ: Եվ հավանաբար այնքան զրել էր այդ կապը, որ նա այլևս գողունի չէր մտնում Սառայի բնակարանը. ավելին՝ առանց քաշվելու, հաճախ է ցուցադրաբար՝ գրգռելու համար թաղի երիտասարդների հետաքրքրությունը: Մի օր, երեկոյան, բավական ուշ ժամին, մեր տան դուռն է թակում Նիկոն.

- Հենրիկ, եղբայրս, օգնե, իրատ մը տուր, ի՞նչ ընեմ, արցունքախառն հայացքով ինձ է դիմում Նիկոն:

- Ի՞նչ կա, Նիկո, ի՞նչ է եղել. թեև կոահում էի, թե ինչի մասին է լինելու խոսքը:

- Բոնեցի, հա, բոնեցի: Այսօր վարպետիս խնդրեցի, որ կեսօրեն ետք ինձի ձգէ, որ տուն գամ: Դուռը կամացուկ բացի և...ի՞նչ տեսնամ..., ես՝ տղամարդ ըլլալով, կամչընամ ըսել, թե ինչ պատկերի առջև կեցա: Ես գիտեի, ականջիս հասած էր լուրը: Այսօր արդեն առանց ամշընալու կրնամ ըսել, որ միշտ դիտափրյալ մինակ եկած եմ ձեր տունը, որովհետև առաջին օրվնե քեզնով կը հետաքրքրվի կնիկս:

- Ես սպասում էի այս օրվան: Եվ ասած շատ շուտ հասկացել էի, բայց կարևորություն չէի տալիս: Դեռք է ձար գտնես բարեկամս, բաժանվիր, Նիկո:

- Ոչ, չեմ կրնար, բախտս, ճակատագիրս անոր ձեռքն է:

- Ի՞նչ ես խոսում, ինչ բախտ, ինչ ճակատագիր, ամոք է, Նիկո, տղամարդ եղիր: Դուրս արա, թող զնա:

- Չեմ կրնար, Հենրիկ: Անոր վրա է հույսս: Ես, շիտակը ըսեմ, կուգեմ այս երկրեն ելլալ: Սառան Գերմանիո հպատակ է և

դիմում ըրած է, որ Գերմանիա տեղափոխվինք: Միայն իրեն հետ կրնամ ելել Հայաստաննեն, անկե վերջ կրնամ հաջողցնել Ամերիկա երթալ:

- Հասկացա, ափի մեջ ես, բարեկամս:

- Ան ալ ինչպես... այդ երիտասարդը տակավին հոն է, կրնա՞ս երևակայել: Ամոթեն տղան դուրս կուզեր ելլալ, կինս չձգեց, ավելին. «ան հոս պիտի մնա, դուն կրնաս դուրս ելել, և այսուհետև, ան երբ ուզե, կրնա զալ, հասկըցա՞ր, պարոն», - պոռապոլ նետեց երեսիս:

- Դժվար դեպք է, Նիկո, որևէ խորհուրդ չեմ կարող տալ: Դիմացիր, տոլկա, մինչև Հայաստանից դուրս զալդ: Հիմա մեկ խորհուրդ կարող եմ տալ, փոխիր բնակարանդ, որպեսզի ծաղրի առարկա չլինես: Ամբողջ փողոցը գիտի նրանց կապի մասին:

... 1982 թվական, Լոս Անջելես, հայկական «Շոնս» հանրախանութեա: Մսի բաժնի Հարությունը ինձ է սպասարկում: Հանկարծ, ինչ որ մեկը մեջքիս կողմից երկու ուսերս պինդ սեղմած, չի թողնում շրջվեմ:

- Ո՞վ եմ, Հենրիկ, ո՞վ...

- Ախր, թույլ տուր, որ շրջվեմ...

- Չէ, դառնալ չկա, ձայնես ճանցիր, ձայնես, չէ՞ որ դուն երաժիշտ ես:

- Նիկո, Նիկո, դո՞ւ ես:

- Այո, այո, Հենրիկ, Նիկոն եմ:

- Ե քը, ինչպէ՞ս, ո՞նց, որտեղի՞ց:

... Հետագա գրուցից պարզվեց, որ Նիկոն Գերմանիայում ամուսնալուծվել է իր անքարոյական կնոջից և ժամանակի ընթացքում կարողացել է գաղթականի կարգավիճակով հաստատվել Միացյալ Նահանգներում:

- Գրեթե տաս տարի է, որ հոս կապրիմ: Հոս հաստատվելես ի վեր հետևած եմ գործունեությանդ, սակայն, խոստովանիմ, չեմ համարձակած հանդիպիլ քեզի:

- Ինչո՞ւ, Նիկո, ինչո՞ւ չես հանդիպել մեզ:

Հ ինչ ըսեմ, Հենրիկ, անցյալի սիալներուս պատճառով

ամշցած եմ հանդիպիլ քեզի: Հոս երգի-պարի խումբիդ համերգին ալ ներկա եղած եմ: Եվ, քանի որ հիմա հանդիպեցանք, կխոստանամ հետայսու հանդիպիլ:

Եվ իսկապես է, Նիկոն մի քանի օր հետո երևաց մեր տան շեմին: Ինչպես երբեք, այս անգամ մի շքեղ ծաղկեփունջ կար ձեռքին:

- Այս ինչ լավ, հանգստավետ տուն է, մեղք որ Հոլիվուդի մեջ է, չե՞ք մտածեր տեղափոխվիլ ավելի ապահով շրջան մը,- շատ մտերիմ մարդու հոգածությամբ ասաց նա:

- Ոչ, Նիկո, մենք շատ ենք սիրում մեր թաղը, դու այն ասա, շուտով կաղանո՞ւ է, չես փափագում արդյո՞ք քսան տարվա խոստումդ կատարել՝ դեռ կաղանդը չեկած,- կատակով ասացի ես:

- Ի՞նչ խոստում,- իրեն չհասկանալու տալով պատասխաննեց Նիկոն:

- Չե՞ս հիշում, քյալլան, գովածդ ոչխարի քուլուխը, որ կաղանդից մեկ շաբաթ առաջ պիտի վայելեինք մեր տանը:

- Հա, այո, հիշեցի, քյայց հո՞ս, Ամերիկայի մե՞ջ...., վայրենիի տեղ կդնեն մեզի: Հոս լավ, մասմաքուր փաշա կծախեն: Թույլ տվեք, որ խոստումս կատարեմ փաշայով, պայմանով, որ այս հիանալի տանը: Ես հոս մինակ կապրիմ: Հոս նոր կնիկ մը առի, մեկ տարին չլրացած փախավ: Նախկինը գիտես, Հենրիկ, բ..ին մեկն էր:

- Կատակ արի Նիկո, հոգ մի անի, մենք խաշ կդնենք և դու մեր հյուրը կլինես, լա՞վ:

Գրեթե մեկ տարի Նիկոն եկավ-գնաց մեր տուն: Ինչպես միշտ՝ ընթրիքի ժամերին, և ամեն անգամ, հրաժեշտ տալիս մի ուտելիք, մի խմիչք անպայման կվերցներ իր հետ: Պատահել է նույնիսկ, որ մեկնելիս մեկ գլուխ սոխ և կարտոֆիլ վերցնի իր հետ՝ «կներեք, պետք ունիմ» մրմնջալով:

Սոտ երկու տարի հետո Նիկոն չքացավ ասպարեզից: Ոչ տունը գիտեինք և ոչ էլ աշխատանքի վայրը:

Սրանից-սրանից խմացանք, որ Նիկոն գնացել է Մոսկվա, ինչ որ մի ոուս կնոջ հետ ամուսնանալու: Հավանաբար այնտեղ էլ մնացել է:

Նիկոն մեր հիշողության մեջ մնաց իր քյալլայով, որի ոչ տեսքը տեսանք, ոչ էլ համը վայելեցինք:

*Դեկտեմբերի 14, 2014 թ.,  
Լու Անջելես*

## ԹՐՔՈՒՀԻ ՍԵԴԱՆ ԵՎ ԵՍ

2001 թվականն էր: Հենց առաջին իսկ ամսում պիտի լինելի Պոլսում (*Ստամբուլ*): Տեղի «Սայաթ Նովա» երգչախումբը հրավիրել էր ինձ հեղինակային համերգի: Մինչ գնալս, ամիսներ շարունակ նոր գործեր էի ստեղծել ու նոր մշակումներ իրականացրել և զգրւացրել երգչախմբի վարչությանը, որ իմ գործերը հիմնականում հայրենասիրական բնույթի են և թե ո քան է հարմար դրանք կատարել Թուրքիայում ու հետո.

- Սովորաբար իմ համերգները ծախսալից են,- ասում եմ երգչախմբի վարչության ատենապետ Բագրայությանին, որը ներկայիս Հրանտ Դինկի հիմնադրած «Ակոս» թերթի հայկական բաժնի խմբագիրն է:

- Իմ համերգները,- շարունակում եմ,- իրականացնում եմ երգչախմբի և սիմֆոնիկ նվազախմբի համադրությամբ, դուք նվազախումբ վարձելու հնարավորություն ունե՞ք:

- Շիտակը դժվար փորձության առջև կդնեք մեզի, Մաթստրո, սակայն բան մը կընենք, կշանանք հովանավորներ գտնալ: Ժամանակին կրցած ենք պատիկ նվազախումբով ելույթներ ունենալ, սակայն սիմֆոնիկ չէ պատահած: Կարելին պիտի ընենք Ձեզ գոհացնելու համար, իսկ հայտագրին մասին հոգ մի ընեք, մենք հոս ամեն տեսակի հայրենասիրական երգեր կերգենք, միայն թէ Դուք եկեք:

- Է՞ հ, ի՞նչ էր մնում անել, եթե ոչ գնալ Պոլիս...

Կես ճամպրուկ նոտաներով բեռնավորված իշա Պոլսի միջազգային օդանավակայան: Տեսնեմ, երգչախմբի 10-12 անդամներ եկել են ինձ դիմավորելու: Տղաների մեջ է իմ քառասուն տարվա ընկեր-քարեկամ Արտաշես Հյուսումյանը, ում տանը ես ու կինս՝ Մարիետան, դեռ խորհրդային օրերին, 1974 թվականին, երկու ամիս եղել ենք հյուր:

Օդանավակայանից գալու ճանապարհին, ըստ երևույթին

նախօրոք պայմանավորվածության համաձայն, մեքենաները կանգնեցին «Հանգստյան գոտում»: Արտաշեսը իջնում է մեքենայից ու մեզ էլ կարգադրում նույն անել: Մեզ են մոտենում մյուս մեքենաների ուղղորները: Արտաշեսը մեքենայից հանում է երկու շիշ հայաստանյան արտադրության կոնյակ, հախճապակե բաժակներ ու սկսում է իր «Ճառը».

- Սիրելի բարեկամներ, «Սայաթ Նովա» երգչախումբի վարչականներ: Քանից եղած եմ Հայաստան, ամենքդ ալ զիտեք: Եվ ամեն անգամ Հայրենիք երթալուս, Մաեստրոն՝ Հենրիկը, դիմավորած է զիս: Եվ ամեն անգամին ալ ճիշտ այսօրվա պես, օդակայանեն քաղաք իջնալու ատեն կը կենար, օրոն կը կեցրներ ճամբուն եզերը և «բարի գալուստի» մաղթանքներ ընելե ետք, «Նախրի» կոնյակը կբանար, և միասին զավաք մը խմելե ետք կշարունակեինք մեր ճամփան: Ես այսօր ուզեցի ճիշտ իրեն պես վարվիլ: Ուրեմն, լեցուցեք բաժակները և բարի գալուստ ըսենք իրեն, որ կարենա այս քանի մը ամիսներու ընթացքում «Սայաթ Նովա» երգչախումբին հասցնել իր և մեր փափագած մակարդակին:

Սպասվածից ավելի երկար տևեց «Բարի գալուստի» արարողությունը:

- Տղաք, հայտե, շարժեցեք, մերինները ճաշարանին մեջ մեզի կապասեն, - Բագրատը փորձում է ներկաներին ուղղել դեպի մեքենաները:

Քիչ անց չորս մեքենաները կանգնում են ծովափնյա մի հսկա ճաշարանի առջև: Հազիվ սրահից ներս մտած, թնդում են ծափահարությունները: Հնչում են ճառեր, բարի գալուստի մաղթանքներ: Երգչախմբի անդամներից բացի ելրոյթ են ունենում նաև նրանց բարեկամներն ու մտերիմները: Ներկա են գրողներ, մտավորականներ, թերթերի թղթակիցներ: Այդտեղ է իմ իին բարեկամ, «Մարմարա» օրաթերթի խմբագիր, նշանավոր լրագրող Ռոպեր Հատտեճյանը: Նա նույնպես բարի գալուստի խոսքեր է ասում:

Խնջույքը տևեց գրեթե մինչև լուսաբաց, որից հետո ինձ տարան իմ բնակարանը: Այն գտնվում էր Շիշի թաղին

հարակից Պանզալտը կոչված շրջանում, որտեղ ապրում են մեծաթիվ հայ ընտանիքներ:

Կանոնավոր աշխատող վերելակով շենքի երրորդ հարկում էր բնակարան: Իմ հարնանությամբ էր ապրում մի հայ կին, որին այդպես էլ չտեսա երեք և ավելի ամիսների ընթացքում:

Իմ բնակարանից մինչև փորձատեղի՝ Կեղրոնական Սանուց միություն, քայլելով էի գնում-զալիս:

Եվ ամենօրյա իմ քայլքի ընթացքում ես ճանաչելի դարձա ողջ Պանզալտը թաղամասում: Փոքր-մեծ կրպակ-խանութների տերերը անդադար «Էստի համեցեք» (բույուրում, բույուրում) էին ասում՝ առաջարկելով ինձ հետ վայելել սուրճ կամ թեյ:

Այս շարժուն թաղամասում շատ էի հանդիպում հայերի, այդ թվում նաև հայաստանցիների, որոնք մարդաշատ մայթերին, ուղղակի գետնին փոած կտավի վրա շարված հայկական կոնյակների և հուշանվերների առևտրով էին զբաղվում:

Այդպես, երեք ամսվա ընթացքում ոչ մի անհաճո դեպք չպատահեց ինձ հետ: Մոտենում էր առաջին համերգի օրը, սակայն նվազախմբի հարցը ոչ մի կերպ չէր լուծվում: Պոլիսը Լու Անջելես չէ, որ ամեն մի շրջան, քաղաք սիմֆոնիկ նվազախումբ ունենա: «Սայաթ Նովա» երգչախմբի վարչության անդամները փորձեցին «լեզու գտնել» օպերայի նվազախմբի դեկավարության հետ, սակայն նրանք այնքան մեծ գումար էին ուզել, որ մերոնք ի վիճակի չէին այդքան դրամ հայթայթել:

- Ի՞նչ կրնանք ընել, պարոն Անասյան,- ասում էին խեղճացած վարչականները, - թերևս կարենանք դաշնամուրի ընկերակցությամբ հաջողցնել համերգներու իրականացումը, ի՞նչ է Զեր կարծիքը, Մաեստրո:

- Ես սովորաբար մեկ անգամեն կգրեմ նվազախումբի նոտաները՝ առանց դաշնամուրին մոտենալու: Եթե անհրաժեշտություն ըլլա՝ այն ատեն միայն կգրեմ դաշնամուրի ընկերակցությամբ, - պատասխանեցի ես, - մեր հայտագրի քանի մը կտորներու դաշնամուրի ընկերակցությունը կա քովս, բայց նոր, մասնավոր «Սայաթ Նովա» երգչախումբին համար հորինածս գործերը միայն օքքեսթրի հետ կատարելու համար են:

Մեկ շաբաթ, միայն վեց օր է մնացել մինչև առաջին համերգի օրը: Եթե ես գիշեր-ցերեկ աշխատելով անզամ դաշնամուրային նվազակցություն գրեմ, այն ել՝ ձեռագրով, միննույն է՝ դաշնակահարը չի կարող յուրացնել մեկ-երկու օրվա ընթացքում:

Երկուշաբթի է, ես փորձում եմ վերջին շտկումներն անել երգչախմբի հետ, սակայն ոչինչ չի ստացվում: Հուսահատությունը տիրապետող է յուրաքանչյուրի հոգում, իսկ այնտեղ, հարեւան սենյակում վարչական ժողով է: Մեկ էլ վարչական-ներից մեկը մտավ փորձասենյակ և ի լուր ամենի ասաց.

- Պարոն Անասյան, հաճեցեք քանի մը վայրկյան անցնիլ մեր սենյակը: Շատ կարևոր է:

- Մաեստրո, խնդրեմ, ծանոթացեք պարոնին հետ, ան կրնամեզ օգտակար ըլլալ,- ներկայացնելով ինձ անծանոթ տղամարդուն, ասաց երգչախմբի վարչության ատենապետ Բագրատ Էսթությանը,- ինքը անզերեն գիտե, հաճիս ըստ իրեն, թէ ինչ կազմի նվազախումբի պետք ունինք:

Պարզվեց, որ պարոնը երաժիշտ էր և նման գործերի մեծ վարպետ: Նրան ասացի, թէ ինչ կազմի սիմֆոնիկ նվագախումբ է անհրաժեշտ: Նա հարցրեց.

- Քանի փորձ եք ուզում, արդեն գիտեմ, որ երեք համերգի համար է:

- Երեք փորձ:

- Երեք փորձ, Դուք գիտեք, թէ որքան դրամ պիտի վճարեք երեք փորձի համար,- ասաց միջնորդը՝ նշելով գումարը:

Մերոնք անակնկալի եկան ու դիմեցին ինձ.

- Պարոն Անասյան, մեծ գումար է, չենք կրնար տակեն ելլալ:

- Լավ, երկու փորձ,- վստահ լինելով, որ մերոնք կհամաձայնվեն:

Պարզվեց, որ դրա «տակից էլ» չեն կարող դուրս գալ: Ի վերջո, համաձայնվեցինք մեկ հիմնավոր երեք ժամանց փորձով, հավելյալ երկրորդ՝ մեկուկես ժամանց փորձ, առաջին համերգից առաջ:

Ես անշուշտ չիմացա և ինձ պետք էլ չէր իմանալ, թե որքան էին մերոնք վճարելու նվազախմբի անդամներին: Կարևորը, եղել էր այն, որի համար երկար օրեր էինք տառապել: Երգ-չախումբը ցնծությամբ ընդունեց լուրը: Նրանք երեք ամիս և ավելի, սպասել էին այն օրվան, որպեսզի առաջին անգամ ելույթ ունենան սիմֆոնիկ նվազախմբի հետ:

- Առավոտյան ժամը տասին խնդրում եմ լինեք օպերայի շենքի մոտ: Ես ձեզ կծանոթացնեմ նվազախմբի կոնցերտմեյստերի հետ, մնացյալը Դուք ինքներդ կկարգավորեք,- ասաց միջնորդը:

Հաջորդ օրը, ըստ պայմանավորվածության, գնացի նշված տեղը: Տեսնեմ ծանոթ միջնորդը մի մանկամարդ օրիորդի հետ կանգնած զրուցում է: Ինձ տեսնելուն պես, նկատելիորեն աշխուժացավ:

- Մաեստրո, խնդրում եմ ծանոթանալ, օպերայի նվազախմբի կոնցերտմեյստերն է, անունը Սեղա է, քիչ-միշ էլ անզլերեն գիտի, գոնե այնքան, որ իրար հասկանար:

Ես աչքերիս չեմ հավատում. այս սիրունիկ օրիորդը (*գուցէ և երիտասարդ կին, ո՞վ զիտէ*), զուրակը ձեռքին, նվազախմբի ամենակարևոր օղակի պատասխանատո՞ւ, այն էլ օպերային թատրոնի նվազախմբի:

Փորձեցի թաքցնել տարակուսանքս ու զարմանքս, որը չվրի-պեց միջնորդ հրեայի հայացքից.

- Այո, այո, Մաեստրո, Սեղան նվազախմբի կոնցերտմեյստերն է, և Դուք շատ շուտով կհամոզվեք, թե ինչ տաղանդավոր երաժիշտ է նա: Իսկ հիմա ես Ձեզ մենակ եմ թողնում, եղանակն էլ հիանալի է: Հենց այստեղ, նստարանին էլ նստեք ու որոշեք ձեր անելիքները:

Բնակ չեիր ասի, որ Սեղան թրբուիի է: Հագուկապը ճիշտ եւլրոպացու պես, ինքն էլ երիտասարդ, գեղանի հայուհու էր նման:

- Ո՞ւր են Ձեր նոտաները, Մաեստրո,- անակնկալ ձևով հարցրեց Սեղան:

- Ինչպես թե ուր են, տանը:

- Ինչո՞ւ չեք վերցրել Զեզ հետ, հիմա իսկ կզնայինք վերև և կնայեինք,- զլուխը թերելով օպերայի կողմը, ասաց Սեղան:

- Իսկ ինչ է, ես պիտի շիմանայի՞ , թե ում հետ եմ աշխատելու, եթե իմանայի, որ Զեզ նման սիրունատես պարմանուիու հետ է լինելու իմ գործը, իհարկե նոտաներով կզայի,- փորձեցի հաճոյախոսել,- հիմա մի նեղվեք դրա համար, եկեք մի քիչ զլուցենք, հետո կանցնենք նոտաներին: Տեսեք, մեր առջևում, մի տաս մետր մեզնից հեռու, ծերուկը տաք-տաք շագանակ է վաճառում, ինչպես Դուք եք ասում, քեսթանե: Դուք շագանակ չե՞ք սիրում...

- Դուք շատ հետաքրքիր մարդ եք երևում, սիրելի Մաեստրո, ի՞նչ ժամանակ եք գտել շագանակ ուտելու: Եթե դուք ցանկանում եք, խնդրեմ, ազատ եք, կարող եք գնալ ծերուկի մոտ ու գնել:

Ել այս ու այն կողմ չնայեցի, գնացի և թղթի մեջ փաթաթված շագանակով վերադարձա Սեղայի մոտ: Իմ բոլոր ջանքերը գեթ մեկ շագանակով հյուրավիրել նրան, չհաջողվեց:

- Ե՞րբ, ինչպէ՞ս կարող եմ ունենալ լարային կազմի նոտաները, Մաեստրո,- ակնհայտ կերպով շտապելու մտադրություն ցույց տալով ասաց Սեղան:

- Եթե այդքան շտապում եք, խնդրեմ, գնանք մեր տուն և ես Զեզ կտամ նոտաները:

- Այո, շտապում եմ, եկեք գնանք, ո՞րտեղ եք ապրում:

- Քուրթուլուշ, ավելի ճիշտ՝ Պանզալտը, զիտե՞ք այդ կողմերը:

- Իհարկե զիտեմ, այստեղից հեռու չէ, երկու-երեք կանզառ, գնացինք:

Տաքսիով գնալու փորձերը Սեղան համառոքեն մերժեց.

- Ի՞նչ կարիք կա տաքսու, ավտորուսով կզնանք, հետո կ մի քիչ կքայլենք, այդպես ավելի հարմար է,- ասաց նա:

Ավտորուսի կանզառից մինչև իմ բնակարանը բավական տաքածություն է: 15-20 րոպէ պետք է քայլեինք: Աղջկը զիտեր դա և բնավ չնեղվեց դրա համար:

Ամբողջ ճանապարհին զրոյցում էինք.

- Ես լավ գիտեմ այս թաղերը, ես Շիշլիում եմ ապրում, այստեղից հեռու չեմ, - ասաց նա:

- Գիտե՞ք, Սեղա, հենց Ձեր շրջանում է հայերի ամենահայտնի գերեզմանատներից մեկը, - շիմանալով թե ինչ տպավորություն կարող է թողնել իմ հարցը խոսակցիս վրա, հարցրի ես:

- Գիտեմ, գիտեմ, ինչպես չեմ, ես ամեն օր եմ անցնում դրա կողքով: Դուք՝ հայերդ, շատ ավանդապահ ժողովուրդ եք և շատ հարցերում ել սպասվածից ավելի մոլեռանդ: Ես սիրում եմ ձեր երաշտությունը և դա է պատճառը, որ ես հանձն առա հավաքել նվազախումբը՝ ընտրելով մեր օպերային թատրոնի երաժիշտներից: Ինձ համար դրամը կարևոր չեմ, ես կարող եմ նույնիսկ առանց վճարման նվագել: Բայց միայն ինձնով չի վերջանում, կարծեմ հասկանում եք, թե ինչ նկատի ունեմ...

- Անշուշտ հասկանում եմ, Սեղա, հիմա թողնենք այդ թեման, մենք գրեթե հասանք իմ բնակարանին:

- Ինչո՞վ կ կարող եմ Ձեզ հյուրասիրել, Սեղա, սո՞ւրճ, թե՞ թեյ, գուցե շագանակ, - տուն մտնելուց անմիջապես հետո դիմում եմ նրան ու ժպտալով շարունակում, - թերևս շագանակ, ի՞ր:

«Շագանակ» բառը լսելուն պես միանգամից կերպարանափոխվեց Սեղան ու մի անզուսպ խնդուքով փուլ եկավ բազմոցին.

- Դուք հավանաբար քեսրանե շատ եք սիրում, Մաեստրո, անուշ արեք, իսկ ես անտարբեր եմ դրա նկատմամբ, - ծիծառը դեռ շավարտած ասաց զուրակահարուիին:

- Այո, ճիշտ նկատեցիք, Սեղա, ես մանկության տարիներից շատ հիշողություններ ունեմ կապված շագանակի հետ: Ձեր գնալուց հետո ես կվայելեմ այն, իսկ հիմա, խնդրում եմ նայեք նոտաները:

Սեղան ուշադիր թերթեց նոտաների տրցակի միջի նյութերը, որից հետո ասաց.

- Դուք, Մաեստրո, հիմնականում դրել եք աղեղները, ինձ մնում է մեկ անգամ նվագել և բոլոր լարայինների մոտ աղեղի

շարժման ուղղությունը նույնացնել: Այդքան:

- Եվ որքա՞ն ժամանակ է պետք Ձեզ դրա համար, չէ՞ որ վաղը չէ մյուս օրը մեր փորձն է, իսկ դրա հաջորդ օրն է առաջին համերգը:

- Մի անհանգստացեք, Մաեստրո: Վաղը հինգշաբթի է: Խնդրում եմ առավոտյան ժամը տասին լինել օպերային թատրոնում: Դուք կներկայանաք արտիստական մուտքին և Ձեզ կուղեկցեն այն սենյակը, որտեղ ես պարապում եմ: Ուրբաթ օրը աշխատելու ենք Ձեր ճիպոտի ներքո: Ես լավագույն երաժիշտներից եմ կազմելու նվազախումբը:

- Կարծում եք, Սեդա, որ մեկուկես փորձով գլուխ կհանե՞նք հայտագրից:

- Ոչ թե կարծում եմ, այլ համոզված եմ: Ես այնպես, հարևանցի նայեցի հայտագիրը, սակայն դա էլ բավարար էր հասկանալու համար, որ չափազանց մատչելի երաժշտություն եք զրում և, ասեմ որ, ուրիշ բան չմտածեք, մեր սրտից խոսող երաժշտություն է:

- Իսկապե՞ս,- զարմացած հարցրի ես:

- Այո, այո, ես այստեղ «Թամզարա» տեսա, ախր մենք էլ ունենք այդ պարի եղանակը, բայց սիմֆոնիկ նվազախմբով ու երգչախմբով, հետաքրքիր է, անհամբեր եմ կատարել այդ գործը: Ինչևէ, վաղը ամբողջ ծրագիրը ես Ձեզ ցույց կտամ, լավ վ, եղավ, իսկ հիմա թույլ տվեք հեռանալ, մանավանդ, որ Դուք անհամբեր եք ճաշակելու Ձեր սիրած քեսթանեն,- բավական հմայիչ ժապիտ պարզելով ինձ Սեդան զնաց դեպի ելքի դուռը:

Առավոտյան ճիշտ ժամը տասին մոտեցա օպերային թատրոնի արտիստական մուտքին: Մի քանի հոգի շքամուտքին տաք-տաք զրուցում էին: Ինձ տեսնելուն պես՝ կես մեջք թերվելով, բոլորը բարեւեցին, կարծես վաղուցվա ծանոթներ լինեինք: Ներս մտնելուս պես, մի հաճոյալի երիտասարդ մոտեցավ ու ասաց.

- Կարծեմ Դուք Սեդայի մոտ եք ուզում զնալ- առանց պատասխանի սպասելու շարունակեց,- խնդրում եմ ինձ

հետևել, միայն թե ներողություն պիտի խնդրեմ վերելակը չաշխատելու համար, մենք երրորդ հարկ ենք բարձրանալու:

- Օպերային թատրոն և վերելակը չի աշխատո՞ւմ, - զարմացած հարցրի ես:

- Իրականում վերելակն աշխատում է, պարոն, բայց հոսանք չկա: Վերջերս հաճախ է պատահում: Ասում են, որ այլ վայրերում շատ ավելի հաճախ է պատահում:

Ինչևէ. մի կերպ բարձրացանք երրորդ հարկ, դա էլ բավարար չէր, Սեղայի սենյակը գտնվում էր բավական երկարուկ միջանցքի ծայրին:

- Ահա այս սենյակում է Սեղան, շատ հեռավոր լսվում է ջութակի ձայնը, - ասաց երիտասարդը և քիչ առաջվա տղամարդկանց նման, խոնարհումով հեռացավ:

Սեղան ակնհայտ ուրախությամբ դիմավորեց ինձ:

- Ես ամբողջ զիշեր աշխատել եմ, գրեթե մինչև լուսաբաց, աշխատել ինքնամոռաց: Դուք հիմնականում ճիշտ էիք դրել աղեղի վեր ու վար նշանները, սակայն որոշ տեղեր ես փոխել եմ թե՛ կատարողի հարմարության և թե՛ երաժշտական տվյալ հատվածի ցայտուն հնչողության համար: Ես հիմա բոլոր համարները կնվազեմ, որտեղ կուզեք փոխել աղեղի ուղղությունը, ասացեք խնդրեմ, - լարված մեքենայի նման իրար ետևից շարելով բառերը, ասաց շնորհալի ջութակահարուիի Սեղան:

- Շատ լավ, սիրելիս, սկսիր:

Առաջին գործը կատարեց փայլուն, երկրորդը՝ նույնպես, երրորդին կանգնեցրի.

- Զե՞ք կարծում Սեղա, որ այդ հատվածում ուժգին հնչողության համար լավ է որ աղեղը վերից վար իջնի, հը, ի՞նչ եք կարծում:

- Ի՞նչ ասեմ, Մաեստրո, թերևս, սակայն մյուս հատվածին անցնելիս մի տեսակ թարս է ստացվում աղեղի ուղղությունը, այդ պարագայում մի քանի հատված պէտք է տուժի հնչողության խմաստով:

- Լավ, լավ, Սեղա, թող այդպես մնա: Ես արդեն տեսա, որ

ամեն ինչ լավ է ստացվում, ես չեմ պատրաստվում երկու ժամվա հայտագիրը լսել: Դուք հիանալի զիտեք Ձեր գործը: Դուք տաղանդավոր երաժիշտ եք, ես վստահում եմ Ձեզ և ուրախ եմ, որ փորձված երաժշտի հետ է գործս: Դուք, եթե կամենում եք աշխատել, խնդրեմ, իսկ ես ցած կիշնեմ: Երեկվա ծերուկը դարձյալ այնտեղ է, տաք-տաք շագանակների զլիխն, կատակով ասացի ես:

- Դարձյա՞լ քեսթանե, Աստված իմ:

Ես մի պահ քարացա. ինչ ասա՞ց, Աստված իմ, գուցե ինձ քվա՞ց...

Սեղան նույնպես «մեխսվել էր տեղում»: Այդ դիրքում մեկ-երկու վայրկյան մնալուց հետո, լուր ու մունջ ջութակը դրեց սեղանին և երկու ձեռքերը սեղմած կրծքին, աչքերը լայնից էլ լայն բացած, ամբողջովին գունաթափ, ինձ էր նայում ակնհայտորեն սպասելով իմ արձագանքին:

Այսպես լուր, երկուսս ել շփոթահար, մի քանի վայրկյան կտրվել էինք իրականությունից: Հստակ էր, որ ես պիտի շտկեի իրավիճակը:

- Սեղա, աղջիկս, խնդրում եմ զգաստանաք, հավաքեք Ձեզ, ես ամեն ինչ հասկացա: Հիմա վերցրեք նոտաները և միասին իշնենք ներքն, Դուք ամեն ինչ հիանալի արել եք: Ես շատ շնորհակալ եմ Ձեզանից, Դուք շատ տաղանդավոր երաժիշտ եք:

Ոչ մի խոսք, ոչ մի արձագանք: Սեղան սուսուփուս կատարեց իմ խնդրանքը և՝ մինչև փողոց իջնելը, ոչ մի խոսք չարտասանեց:

Ակամա երկուսս ել մոտեցանք շագանակ վաճառող ծանոթ ծերուկին, որը կրակարանի վրա շուտումուտ էր տալիս խոշոր-մոշոր շագանակները: Մի քան ասած լինելու համար, այս անգամ արդեն առանց հումորի, ասացի Սեղային.

- Սեղա, ասա ծերուկին, որ ամենախոշորներից տա:

Թրքերեն լեզվով այդ մի քանի բառը ես ել կարող էի ասել բայց ես միջոց էի փնտրում Սեղային լարված վիճակից դուրս բերելու համար: Ես նույնիսկ թույլ տվեցի, որ ինքը վճարի:

Անխոս, նա ամեն ինչ հասկանում էր: Նոտաների տրցակը ուսին, ձախ ձեռքին ջուրակ, աջին էլ թղթե փոքրիկ տոպարակով շագանակ, ամենի փոքրութիւն հենց նոր ազատված հրեշտակի էր նման Սեղան:

Դալուկ դեմքով, խեղճացած, բնավ նման չէր նախորդ օրվա խնդրումերես հայսուն օրիորդին:

Կանգնել ենք դեմ դիմաց, հենց այնպես, անխմասու, ու չենք խոսում և այնքան ժամանակ, մինչև որ շագանակավաճառ ծերութիւն մեզ դիտողություն արեց, ասելով թե, խանգարում ենք իրեն մոտեցող հաճախորդներին:

Ծանր թմբիրից առաջին արթնացողը Սեղան էր.

- Մաեստրո, եկեք մի քիչ ներքև իջնենք, այ, այն հեռվում, ծաղի տակ ազատ նստարան կա:

Այժմ արդեն Սեղան էր փորձում ինձ շագանակ հյուրասիրել.

- Վերցրեք, Մաեստրո, վերցրեք, մի ամաշեք,- փորձելով ժպտալ՝ ասաց նա ու առաջինը ինքը վերցրեց:

Երկուսս էլ զգում էինք, որ անհրաժեշտ էր խոսակ-ցուրյուն բանալ եղածի մասին: Նախորդ օրվա պաշտոնական տոնը չկար այլևս Սեղանի պահպածքի մեջ և ոչ էլ խուսափողական հայացքը:

Ես զգում էի, որ ինչ որ անհասկանալի դրսւորումներ կային այդ գեղեցիկ օրիորդի պահպածքում: Սակայն, մնալով քաղաքավարական կանոնների ընդունված սահմաններում, կարծես թե խուսափում էր ինձից ակնհայտորեն ճիզ թափելով գործունյա մարդու տպավորություն թողնել դիմացինի վրա: Նույնիսկ կարելի էր կարծել, թե անհաղորդի մեկն է:

Առաջին խոսողը Սեղան է.

- Կներեք, Մաեստրո, կներեք:

- Ի՞նչ, ներե՞լ, ինչի՞ համար, աղջիկս, ո՞ր հանցանքիդ համար, ես յոթերորդ երկնքում եմ, երջանիկ, ախր ես զգում էի, զգում էի, որ քո վարվելակերպի մեջ ինչ որ մի բան այնպես չէ, որ դու, ինչպես ասում են, դու՝ դու չես:

- Ես արդեն երեսուներկու տարեկան եմ, Մաեստրո, և այս տարիների ընթացքում նման վրիպում թույլ չեմ տվել գուցե

նրանից է, որ առաջին անգամ է, որ գործ եմ ունենում քրիստոնյա մարդու հետ:

- Պատմիր, պատմիր, աղջիկս, ինձ հորդ տեղը դիր:

- Պատմելու բան չկա, Մաեստրո, ես ծնվել եմ այստեղ, մեծացել որպես թուրք: Ծնողներս կ են թուրք, թուրք քրիստոնյա: Նրանք երկար տարիներ ապրել են Խսապանիայում: Ես դեռ չծնված, եկել են Ստամբուլ: Այստեղ, իմ աշխատանքի վայրում ոչ ոք չգիտի, որ ես քրիստոնյա եմ, ընդհանրապես իմ շրջապատում ոչ ոք չգիտի:

- Հանգիստ եղիր, աղջիկս, մտածիր, որ ես ել չգիտեմ:

- Եթե իմանան, ինձ չեն թողնի, որ ես կոնցերտմեյստեր լինեմ: Այս պարագայում տաղանդը դեր չի խաղում: Այդ խտրությունը կա ու միշտ է եղել:

- Իսկ դու քո ծնողների հետ ես ապրո՞ւ:

- Այո, Մաեստրո, այո, զիտեմ, իմա պիտի հարցնեք, թե ինչո՞ւ չեմ ամուսնացել, այդպես չէ՞:

- Կոսիեցիր, աղջիկս, իսկապես, ինչո՞ւ, ինչպե՞ս կարող է քեզ նման գեղեցիկ օրիորդը, կներես «տանը մնալ»:

- Իրավացի եք, Մաեստրո: Տասնչորս տարեկանից են հետապնդել ինձ տասնյակ-տասնյակ երիտասարդներ, դեռ մինչև օրս կ ետևից եկողներ կան: Բայց ես բոլորովին ուրիշ դաստիարակություն եմ ստացել իմ ընտանիքում: Ես չեմ կարող մահմեղականի հետ ամուսնանալ ու ընդունել Ալլահի օրենքները, իսկ քրիստոնյա թուրք երիտասարդ չի հանդիպել:

- Բա ինչպե՞ս եք Ձեր հոգին թեթևացնում, եկեղեցի չեք գնում, չե՞ս որ շատ քրիստոնեական եկեղեցիներ կան Ստամբուլում, ել հունական, ասորական, ի վերջո՞ երեսունից ավելի հայկական եկեղեցիներ:

- Ինչպե՞ս գնանք, մեկ-երկու, մարդիկ կիմանան: Տանն ենք աղոյք անում, իսկ եկեղեցական մեծ տոնների ժամանակ գնում ենք Խսապանիա: Մեր նյութական վիճակը բավական լավ է: Այդ հարցում խնդիր չունենք:

- Հիմա ամեն ինչ հասկացա, Սեղա ջան: Կարծում եմ այս երկու շաբաթվա ընթացքում կ խոժող հայացքով չես նայի

ինձ,- կատակով ասացի ես:

- Ոչ, ի՞նչ եք ասում: Ես լավ գիտեմ հայերին, ծանոթներ էի ունեմ: Դուք շատ տաղանդավոր մարդիկ ունեք: Ես լավ գիտեմ ձեր ժողովրդի զլիսին եկած փորձանքների մասին, ձեր տառապանքի, ձեր պահանջատիրության մասին: Հայրիկս իսպաներենի դասախոս է համալսարանում և ձեր պատմությունը լավ գիտի, իսկ մայրս ավագ բուժքույր է հիվանդանոցում:

- Այո, մենք պահանջ ունենք Թուրքիայից, Սեղա: Զգիտեմ, տեղյա՞կ ես մեր պատմությանը, բայց...

- Մի շարունակեք, Մաեստրո, հավատացեք, ես ավելին գիտեմ, քան Դուք կարծում եք: Մեր տանը միշտ է խոսակցություն լինում այդ թեմայով:

Սեղայի կրքոտ, վճռական նախադասությունից հետո համոզվեցի, որ աղջիկը իսկապէս գիտեր, տեղյակ էր մեր ազգի պատմությունից:

- Խնդրում եմ, Մաեստրո, աղաջում եմ, որևէ մեկի առջև խոսք չբանաք իմ գաղտնիքը: Հավանաբար Աստծօն հրամանով էր, որ ես իր անունը տվեցի հայ քրիստոնյայի առջև:

- Երբեք ոչ ոք, ոչինչ չի իմանա, աղջիկս, երդվում եմ, իսկ իմաս, արի մեր «Հայր մեր» աղոթքն ասենք, ես ուզում եմ տեսնել, թե դու ինչպես ես խաջ հանում: Այստեղ մարդ չկա, մեզ ոչ ոք չի տեսնի...

Աղոթեցինք և երկուս էլ հոգեպես մաքրված ու ազնվացած, անցանք գործնական հարցերի քննարկմանը:

- Երկար նստեցինք, աղջիկս, արի ամեն մեկս գնանք մեր գործին: Չես կարող երևակայել, Սեղա, թե ինչպես են ոգևորված երգչախմբի անդամները:

- Պատկերացնում եմ, Մաեստրո, որքան որ իմացա, նրանք առաջին անգամ է, որ ելույթ են ունենալու սիմֆոնիկ նվազախմբի հետ, այդպես է, չէ:

- Այդպես է, այդպես, Սեղա ջան:

...Շոնդալից հաջողությամբ անցան իմ հեղինակային համերգները Պոլսի «Սայաթ Նովա» երգչախմբի և «Սեղայի նվազախմբի» հետ: Օպերայի սիմֆոնիկ նվազախումբը արժանի

մակարդակ ցուցադրեց բոլոր համերգներին:

Յուրաքանչյուր համերգից հետո՝ ընդունված ավանդության համաձայն, ի շնորհակալություն, ոչ միայն սեղմում էի նվազախմբի կոնցետմեյստեր Սեղայի ձեռքը, այլև համբույր էի դրոշմում նրա ձյունաթույր թաթիկներին, որոնցից «հայի հոս» էր գալիս.

- Ի՞նչ իմանաս, մեծ աշխարհ է...

Հունիսի 20, 2006 թ.,  
Երևան

## ՖՐԱՆՍԱՀԱՅ ԶՈՒՅՎՔԻ ՈԴԻՍԱԿԱՆԸ

Մեր թաղի բնակիչներն առաջին անգամ «ցիլինդր» (տղամարդու լայնեզր զլանաձև զլիսարկ) երևույթի հետ ծանոթացան 1947-ին: Այդ ժամանակ էր, որ մեր տանը հայտնվեց Ղազիկյան ազգանունով ֆրանսահայ մի փաստաբան, ով կեղտի մեջ կորած ցիլինդր էր կրում: Երեխաները մշտապես ետևից բղավում էին՝ ցիլինդր, ցիլինդր... Նույնիսկ քարեր էին շպրտում նրա ետևից, իսկ նա, ոչինչ չեղածի պես, արագարագ շարունակում էր քայլել մինչև մեր տուն հասմելը:

- Պիտի հազնիմ այնքան ատեն, մինչև որ փողոցի այս խուժանները սորվին, թե ինչ ըսել է ցիլինդր: Ժամանակը պիտի զա և իրենք ալ պիտի կրեն այն:

Ճիշտ էր փաստաբանը: Հետազյում շատերս ենք կրել ցիլինդր:

Եվ այսպես, մի քանի մարի գնալ-զալուց հետո, միանգամից չըկեց մեր կյանքից խեղճուկրակ Ղազիկյանը: Ոչ ոք չիմացավ նրա գնալու վայրն ու ճակատագիրը: Ղազիկյանի անհայտանալուց հետո մեր տան, փողոցի վրա նայող սենյակը վարձակալեց Արաքիրի շրջանային խորհուրդը՝ գրադարան բացելու համար: Երկրորդ գրադարանավարուհի նշանակվեց մայրիկս՝ որպես կրթության և փորձառության ապացույց, ներկայացնելով Փարիզի Ռենսի արվարձանի Դպրոցասեր տիկնանց վարժարանի (այժմ էլ կա այդ վարժարանը, սակայն երկսեռ ուսուցմամբ, - ՀԵՆ. Ա.) տնօրենուհի Աղավնի Փիրֆիրյանի ստորագրությամբ վկայականն այն մասին, որ Վերժին Հովհաննիսյան-Անասյանը սովորել և ավարտել է վարժարանը՝ գերազանց վկայականով ու որպես հայոց լեզվի և գրականության ուսուցուի հինգ տարի դասավանդել է նույն վարժարանում:

... Այսուն ու Կարպիսը մեր փողոցում հայտնվեցին 1954

թվականի ամռանը, երբ ես նոր էի ավարտել միջնակարգ դպրոցը: Ոչ ոք չգիտեր նրանց մասին որևէ բան: Նրանց ճաշակով հազն ու կապը հստակ պատկերացում էր տալիս, որ նրանք նոր եկած «ախաղարներ» են: Հատկանշական մի մանրութով էլ էին նրանք տարբերվում մյուս ֆրանսահայ ախաղարներից: Տղամարդը մշտապես ցիկնդր էր կրում, նույնիսկ երևանյան տապ եղանակին ու այրող արևին:

Դպրոցից վերադառնալուց հետո, ես մնացյալ ժամերն անց էի կացնում գրադարանում և գրեթե ամեն օր մի ծավալուն գիրք էի կարդում ու ավարտում:

Օրերից մի օր, մութընկա ժամին, երբ ես մենակ էի գրադարանում և այն է, ուզում էի փակել դուռը, նախամուտքին հայտնվեց ծանոթ ֆրանսահայ գույզը.

- Դուրսեն տեսանք, որ լրսյ կա գրադարանին մեջ, ըսինք անզամ մը մտնանք, տեսնալու համար, թէ օտար լեզվով գիրքեր կա՞ն արդյոք,- շունտասելուկի պես բառերը շարեց մեր թաղի «ախաղարը»:

- Ռուսերենեն զատ ուրիշ օտար գրականություն չունինք: Գրադարանը նոր է, հազիվ երկու հարյուր գիրք կա, սակայն օրեցօր կավելնան նոր գիրքեր: Համբերեցեք քիչ մը, թերևս ժամանակի ընթացքին օտար լեզվով գիրքեր ալ կու զան, - ասացի ես:

Մինչ կինը համեստորեն նստել էր սենյակի անկյունում, պարոնս օրվա թերթերն էր աչքի անցկացնում, որի ընթացքում ես ակրնետ հայացքով հետևում էի ամուսնու շարժումներին: Նա «Սովետական Հայաստան» օրաթերթի սավանի մեծության էցերը շուրուսմուռ տալուց հետո, հանկարծակի պոռքկաց.

- Աս ի՞նչ ուղղագրություն է պե՛..., կարգ մը բառեր չհասկըցանք, իոդ չէ, խորիրդային հայերեն է, համա աս ուղղագրությունը, ասոր ի՞նչ ըսել,- այս ասելն ու կնոջը դիմելը մեկ եղավ.- հայտե կնիկ, ելի թ, ելի թ երթանք, հոս մեր տեղը չէ...

Այսպես եղավ իմ առաջին հանդիպումը հազիվ 2-3 շաբաթ առաջ մեր փողոցում հայտնված ֆրանսահայ գույզի հետ:

Որոշ ժամանակ անց, հայտնի դարձավ, որ Կարպիսը ուկերիչ էր և ուկերչի ու ժամացույցի կրպակ էր աշխատեցնում Երևանի կենտրոնում: Այդ փաստն արդեն լուրջ խոսակցությունների և հետաքրքրության նյութ էր հարևանների շրջանում: Պատահեց այնպես, որ օրերից մի օր Կարպիսի հետ դեմքիմաց ելանք մեր տան առջև: Վերջինս ժպտալով հարցրեց.

- Կարծեմ անունդ Հենրիկ է, այդպես չէ՞ ...

- Այո, Հենրիկ է ...

- Կներես, տղաս, անցյալ անգամվան համար, վերջեն անդրադառ, որ բավական անփափկանկատ ձևով հեռացա... նորեն կներես, բարեկամս:

- Վնաս չունի, ես մոռցած եմ, ես հասկցած Ձեր հոգեվիճակը: Բայց ինչո՞ւ Դուք հարաբերություն չունիք դրացիներուն հետ: Կրնամ վկայել, որ բոլոր դրացիներն ալ համակրանքով ու գորովանքով լեցված են Ձեր հանդեպ: Դուք Ֆրանսիայից եք, այնպես չէ՞ ...

Այս հարցմանս ի պատասխան՝ երկար լուրջունից հետո, Կարպիսը կիսաձայն ասաց.

- Այո, Հենրիկ, ճիշտ գուշակեցիր, Ֆրանսայեն ենք, Լիոն քաղաքեն: Մեր պատմությունը երկար է: Օր մը եկուր մեր տուն և դուն տեղյակ կըլլաս, թե ինչերե անցած ենք: Այսպես, ոտքի վրա խոսիլ ըլլար, բարեկամս: Առաջին օրերեն իմացա, որ դուք ալ ֆրանսահայ եք, հայրիկդ ալ ճանչցված զիտնական է: Մեզի համար մեծ պատիկ կըլլա, եթե հայրիկիդ հետ գաս մեզի, թեև մեր բնակարանը այնքան ալ հարմար չէ հյուր ընդունելու համար:

Այս երկու վայրկյաննոց «զրույցից» հետո անմիջապես մաս տուն ու մերոնց պատմեցի եղելությունը: Ամենից շատ ուրախացավ մայրիկս, ում համար հաճելի զրույցի նյութ էր բացվելու հարևանների հետ խոսելու և նրանց հետաքրքրասիրությանը հագուրդ տալու համար:

- Տղաս, կարծում եմ սիալ է Կարպիսնոց տուն գնալը,- ասաց հայրիկս, - մանավանդ, որ ինչպես ասացիր, բնակարանային

ոչ բավարար պայմանների մեջ են ապրում ամուսինները։ Ավելի լավ է, որ իրենք զան մեզ մոտ, մանավանդ որ, հյուրասիրելու համար առատ միրգ ունենք, ահա, խնդրեմ, ծիրանի ծառի ճյուղերը կոտրվում են առատությունից։

- Ճիշտ է ասում հայրիկդ, տղաս, խոսիր Կարպիսի հետ և նրանց հրավիրիր մեր տուն,- ասաց մայրիկս։

- Բարի երեկո, ընկեր Կարպիս...,- առաջին իսկ հանդիպմանը դիմեցի նրան։

Մեկ վայրկյան շփորձելուց հետո Կարպիսը թթված դեմքով, նկատելի դժկամությամբ ասաց։

- Ի՞նչ ըսել է «ընկեր Կարպիս», մանչս... մենք ընկերնե՞ր ենք, ինչ է ... «պարոն» ըսէ, տղաս, պարոն... ամոթ է, ի՞նչ ըսել է «ընկեր»...։

- Հոս ընդունված չէ «պարոն» ըսելը, ընկեր Կարպիս...։

- Նորե՞ն «ընկեր»... «պարոն» ըսէ, ձագս, պարոն,- վանկ առ վանկ շեշտեց բարեկամս։

- Շատ լավ, պարոն Կարպիս, հետ այսու «պարոնով» պիտի դիմեմ Ձեզ, սակայն ուրիշներու մոտ «ընկեր» պիտի ըսեմ, հակառակ պարագային ծաղրի առարկա կրնամ դառնալ։

- Լավ, բարեկամս, ինչպես որ հարմար կգտնաս, սակայն ինձի բացատրե, խնդրեմ, ո տրկե սորված ես մեզի պես խոսիլ, ինչպես կըսեք՝ «ախպարերեն»։ Տունին մեջ արևմտահայերե՞ն կգործածեք։

- Ոչ, տան մեջ միայն ու միայն տեղական, արևելահայերեն լեզվով կխոսինք, իսկ «ախպարի» պես՝ դրացիներու հետ։ Արևմտահայերենը կարդալով սորված եմ և հիմնականում մեր դրացի տատիկ-պապիկներեն, որոնցմե քիչ-միշ թուրքերեն ալ սորված եմ։

- Որքան որ գիտեմ, հայերը ոռւսներեն առած են «ընկերը», անոնք «սովարիշչ» կըսեն, ես քանի մը տարի գիշեր-ցերեկ այդ բառը հոլոված եմ ին՝,- ձախ ձեռքը անհայտ ուղղությամբ թափահարելով ասաց Կարպիսը, մինչ աջ ձեռքը զբաղված էր իրերով լի քարանե տոպրակ կրելով։

- «Հոն» ըսելով, ի՞նչ նկատի ունիք, պարոն Կարպիս, - հարցի, թե գուշակեցի, թե ինչ նկատի ուներ ոսկերիչ-ժամագործը «հոն» ասելով:

Մի պահ կարկամեց բարեկամս, չգիտեր ինչ ասել, ինչպես բացատրել «հոնը» (այնտեղ): Տեսնելով, որ նա դժվարանում է լուսաբանել կամ՝ չի վստահում «հոնի» գաղտնիքը բացահայտել, ինքո միջամտեցի.

- Լա վ, լա վ, պարոն Կարպիս, ես գիտեմ թե ինչ ըսել է «հոն» բառը:

- Ապրի ս, բարեկամս... զործս դյուրացուցիր, օր մը, որ իրարու քով գանք՝ երկարորեն կպատմեմ մեր կյանքին պատմությունը: Հիմա ըսե նայիմ, եթե պիտի գաք մեզի:

- Ես մերիններուն հետ խոսեցա: Հայրիկս նպատակահարմար գտավ, որ Դուք գաք մեզի առաջիկա կիրակի կեսօրին: Դուրսը, ծառերու շուրջին կնստինք, կիսուինք, շալախ ծիրանն ալ հասած է, ուզածնիս պես կվայելենք: Այս տարի բերքն ել այնքան առատ է, որ պիտի ջանանք արագորեն հավաքել, քանի ճյուղերը չեն կոտրած առատութենեն... ի՞նչ կըսեք, լավ գաղափար չէ ...

- Իսկապես լավ գաղափար է Հենրիկ: Այսպես ուրեմն, կիրակի Զեր հյուրն ենք:

1954 թվականի ամառն էր, երբ բավական մատչելի գներով կարելի էր խանութներից գնել ուզածդ մսամթերքը, ձկնեղենը, նպարեղենը, ամեն ամեն ինչ: Մալենկովի վարած համաժողովրդական տնտեսական հեղափոխության շնորհիվ, ժողովուրդն սկսեց ազատորեն շունչ քաշել: Շատ կարճ ժամանակում ժողովուրդն այնքան սիրեց Մալենկովին, որ սկսեցին հորինվել նրան նվիրված երգեր: Առ այսօր հիշում եմ այդ երգերից մեկի բառերը. «Տասը ոչխար, երկու կով՝ կեցցե՛, ընկեր Մալենկով...»: Սակայն այդ բարիքները մեկ տարի հետո չքացան վաճառասեղաններից: Մալենկովի ազատ գյուղացիական-տնտեսական քաղաքականությունը անհարիր էր կոմունիստական վարչակարգի սկզբունքներին:

Մայրիկիս համար դժվար չեղավ մի ճոխ սեղան պատրաստել մեր ֆրանսահայ հյուրերի համար: Ճաշից հետո՝ ֆրանսերեն և արևմտահայերեն լեզուներն իրար խառնած, աշխույժ գրույցի բռնվեցին մեր հյուրերն ու ծնողներս: Եկավ մի պահ, երբ պարոն Կարպիսը ավելի քան լրջացած դիմեց ամենքիս.

- Գիտեմ, անհամբեր եք զիտնալու, թե ո՞վ ենք մենք և ինչպէ՞ս հայտնվեցանք Հայաստանի մեջ:

Համակ ուշադրություն դարձած լսում ենք Կարպիսին:

- Ես Ֆրանսային եմ: Ծնունդես քանի մը օր վերջ մայրս հոգին տփած է Աստուծոն: Ատկէ ետք հայրս բնավ չէ ամուսնացած: Ինձի մեծցուցած է մեծ մայրս, հայրիկիս մայրը: Հայրիկս նշանավոր ոսկերիչ եղած է, երկար տարիներ խանութ կը բանեցներ Լիոնի կետրոնական հրապարակին վրա: Պատերազմի տարիները Սուիս (*Շվեյցարիա*) անցուցինք:

- Ըստել թե, հոնկե Հայաստան եկաք,- միջամտեց մայրս:

- Ոչ, տիկին, պատերազմը չլմնցած, 1944 թ. Լիոն վերադարձանք, որտեղ հորս հետ միասին նոր խանութ մը բացինք: Պատիկ տարիքես արդեն սորված էի ոսկերչություն ընել: Սկիզբ շատ դժվար օրեր ունեցանք: Լավ էր, որ Սուիսեն բավական դրամ բերած էինք հետներիս: Պատերազմեն ետք, 2-3 տարվան ընթացքին շատ դրամ շահեցանք: Օր մըն ալ մեր ոսկերչանոցը մտավ մեր այսօրվան տիկինը՝ Ալիսը՝ ոսկյա վզնոցին փականը նորոգելու խնդրանքով: Ա ս է,- ըսի, գտա... չերկարեմ, առաջին վայրկյանեն իսկ փոխադարձ սիրով կապվեցանք իրարու: 1947 թվականի վաղորդայնին ամուսնացանք: Նույն թվականին սկսավ ներգաղթը: Հայրս կտրականապես դեմ էր Հայրենիք ներգաղթելուն, սակայն տեղի տալով մեր անզուսպ խնդրանքին՝ ի վերջո համաձայնվեց:

- Ի՞նչ որոշում կայացուց Ալիսին ընտանիքը, Ձեզի չմիացա՞ն,- հարցրեց հայրիկս:

- Հիմա ատոր պիտի զամ, պարոն Հակոբ: Ալիսն ալ մայր և իրմէ մեծ եղբայր մը ունի: Որոշեցինք, որ անոնք հաջորդ քարավանով զան Հայաստան՝ մեզմէ Հայրենիքի մասին նպաս-

տավոր լուրեր առնելե ետք:

- Այդ ի՞նչ միամիտ որոշում առած էք, պարոն Կարպիս, չէի՞ք զիտեր, որ գրաքննություն կա,- դարձյալ հայրիկս էր միջամտողը:

- Մեկ վայրկյան կեցեք, պարոն Հակոբ, հիմա կրացատրնմ: Հայաստանի մասին մենք աստեղեն-անտեղեն որոշ լուրեր առած էինք արդեն: Մերիններուն հետ պայմանավորվեցանք, եթե երկրին և պայմաններու մասին գովեստի նամակներ դրկենք՝ ըսել է, թե հակառակը հասկցեք:

- Իսկապես, խելացի որոշում առած էք, պարոն Կարպիս: Արդեն հասկնալի է՝ անոնք չեկան: Կներեք, ընդհատումիս համար,- ես էի ընդմիջողը:

- Այո, չեկան: Հայրիկս շատ խելացի և հեռատես մարդ էր: Ինչ ունեինք-չունեինք ամենը ոսկիի վերածեց, – ոսկին ամեն տեղ կքալե, տղաս,- ըսավ: Ես անանկ տեղ մը կը պահեմ՝ որևէ մեկը չի կրնար գունալ: Այդպես ալ ըրինք: Երևանի մեջ տուն մը վարձեցինք և երկու տարի գաղտնօրեն, տունին մեջ ոսկեր-չություն ըրինք: Ինչպես շատերու, 1949 թ. մեզի ալ աքսորեցին Սիբիր, Յակուտյա, որտեղ, ինչպես զիտեք ոսկիի և ադամանդի հանքեր կան: Մեր աքսորավայրին ամենեն մոտ քաղաքը 150 կմ հեռու էր քաղաքեն, անհայտ անտառոտ վայր մը:

Այստեղ փոքր ինչ ընդհատեց իր պատմությունը մեր հերոսը և մի բաժակ զուր ըմպելուց հետո, շարունակեց.

- Դժբախտաբար, Սիբիրի սոսկալի սառնամանիքը և անտանելի ցուրտ եղանակը պատճառ եղան, որ մենք զավակ ունենալու զաղափարը ձգենք զալիք լավ օրերու: Հայրիկիս համար սոսկալի դժվար եկան տեղվույն պայմանները: Այդ խնդրումերես, կատակասեր մարդեն բան չմնաց: Դարձավ լուակյաց, օրեր, շաբաթներ տունեն դուրս չելավ և անբացատրելի հիվանդությունը զգետնեց իրեն և հինգ ամիս վերջ հոգին ավանդեց:

Արդեն առաջին խև շաբաթը ձևով մը զատեցին արհեստավորներուն. սափրիչ, կոշկակար, ատաղձագործ և այլն: Ոսկե-

թիշ ըլլալս ամենքը զիտեին: Միակ ոսկերիչ-ժամագործը ես եի և ժողովուրդին օգտակար կըլլայի մանր-մունք ծառայություններ ընելով: Անցուշտ, իշխանությունը զիտեր: Օր մը, 4-5 զինվորականներ ներխուժեցին մեր պալիկ բնակարանը՝ ոսկեղեն գտնալու առաջադրանքով: Բնական է՝ ոչինչ չգտան... ա ին, հայրս, հայրս, ո՞քան փորձառու, կյանք տեսած մարդ էր: Անանկ տեղ մը պահած էր մեր ոսկիները, որ անկարելի էր գտնալ: Ժամանակի ընթացքին գաղթակայանի տարածքին մեջ սկսան գործել ամեն տեսակի արհեստանոցներ, որոնց վարպետներեն շատեր հայեր էին: Գործս երթալով շատցավ և բավականին դրամ կուտակած, 1955 թ., Ստալինի մահեն երկու տարի հետո վերադարձանք Հայաստան: Դրամի գորությամբ կրցա Երևանին կետրոնը աշխատատեղ մը բանալ, որտեղ կը գործեմ մինչ օրս:

Իրավ որ դժգոհություն չունիմ: Ֆինքածին կըսեն, ինչ կըսեն, չեմ զիտեր, նեղություն չեն տար, ամեն ամիս կու զան, իրենց կաշառը կառնեն, կերթան:

- Եթե այդքան լավ են գործերդ, ինչո՞ւ տուն մը չես առներ, - հարցրեց հայրիկս:

- Շիտակը, որ ըսեմ, պարոն Հակոբ, խելքս-միտքս Ֆրանսայի վրա է: Կիուսամ, օր մը ճամփաները կրացվին և մենք կվերադառնանք մեր ծննդավայրը:

...Որոշ ժամանակ անց մեր հերոսները կորան տեսադաշտից: 1964 թ. աշնանը հայտնի դարձավ, որ նրանք մեկ զիշերվա մեջ անհայտացել են, նույնիսկ առանց տեղյակ պահելու տանտիրոջը: Տարիներ հետո, 1969 թվականին մի նամակ եկավ Ֆրանսիայից: Կարպիսն էր գրողը.

«Հենրիկ, կներես, բարեկամս, որ առանց տեղյակ պահելու, տարիներ չարչարվելե ետք, հեռացանք Հայրենիքեն և Զեզմե: Ես իհմա մինակ կապրիմ: Ալիսը ձգեց զիս, ես ստիպված զացի բարեկամներուս քով՝ Փարիզ, Իսի լե Մուլինոն արվարձանչ: Մենք այդպես ալ զավակի տեր չդարձանք: Եթե զիտնայի, որ կինս զիս պիտի ձգեր, Հայաստանեն չի ելլար: Հոս գրեթե մի-

նակ եմ, ընկերություն, բան չկա, ամենքը կվագեն: Երանի  
երևանյան օրերուն, երբ Ձեր հյուրընկալ օճախին մեջ մինչև  
առոտու բլու կխաղայինք: Հոս ատանք բան մը երազի կնմանի:  
Ներե, եղբայրս: Եթե Ֆրանսիա գալու ըլլաս՝ սիրով կընդունիմ  
քեզի: Հասցեն արդեն կա ծրաբի վրա»:

1970 թվականին երկու ամիս մնացի Փարիզում և միայն եր-  
կու անգամ տեսա Կարպիսին, այն էլ՝ դրսում, սրճարանում,  
որից հետո կապը կտրվեց:

*Մայիսի 3, 2015թ.,  
Լու Անջելես*

## ԼԻԼԻԹՆ ՈՒ ԻՐ ԿՈՏՄՎԱԾ ՍԵՐԸ

- Չե, ինչ որ չի ստացվում, չի լինում, գրողը տանի,- մի հայացք զցելով պատվանդանին դրված իր յուղանկարի վրա, ինքն իրեն ասաց Վարդանը,- սափորն իմ ուզածի պէս չէ:

Այնուհետև վերցրեց բոլորովին մի նոր վրձին ու փորձեց կարգի բերել պատկերը:

Ավարտելու վրա եր յուղանկարը, երբ հնչեց հեռախոսի զանգը.

- Վարդան, չուշանաս ինչպէս միշտ: Թատրոն ենք գնալու չէ՝, չմոռանաս, ինչո՞ւ ես լրում, ձայն հանիր:

- Չե, չէ, չեմ մոռացել, Վիզեն:

- Դե շտապիր, ես արդեն ճանապարհին եմ:

- Հիմա դուրս կզամ, սպասիր ինձ թատրոնի առջև:

Տրամվայի կանգառում երկար սպասեց:

- Ո՞վ է այս օրիորդը, որ այդպէս ուշադիր նայում է ինձ ու իմ նման տրամվայի է սպասում:

Տրամվայը եկավ, սակայն իր ուզած համարը չեր, բայց օրիորդինն եր հավանաբար, որովհետև նա շտապեց մտնել տրամվայ: Վեր բարձրանալիս օրիորդը մի հայացք զցեց իր վրա, և դա բավական եղավ, որպեսզի ինքը վազի և հասնի արդեն շարժվող տրամվային:

Երկուսի հայացքներն էլ հանդիպեցին: Երկար նայում էին միմյանց: Հետո օրիորդը ամորթսած ժպիտով բարձրացրեց գլուխը և շիտակ նայեց Վարդանի աշքերի մեջ:

- Կարծեմ, մենք ինչ որ տեղ հանդիպել ենք, այդպէս չէ՝, օրիորդ..., -ասաց Վարդանը:

- Բավական տարածված ձև եք ընտրել ծանոթանալու համար,- եղավ պատասխանը,- իսկ Դուք աշխատեք Ձեր ուղերը չկոտրել մի օր...

- Այդ ինչպէս...

- Հենց այդպէս... որովհետև Դուք միշտ ընթացքի ժամանակ

Եք տրամվայ բարձրանում կամ իջնում:

- Դուք այդ որտեղից գիտեք...
- Գիտե՞մ, գիտե՞մ...

Հետազա զրույցից պարզվեց, որ օրիորդը գիտի իրեն, և ամեն օր, իրենց տան պատուհանից տեսնում է, թե ինչպես է ինքը օգտվում տրամվայից:

- Դե, եք դուք այդքան բան գիտեք իմ մասին, ուրեմն եկեք ծանոթանանք, իմ անունը Վարդան է, իսկ՝ Զերը ...

- Լիլիթ է իմ անունը, Լիլիթ...

- Ինչ գեղեցիկ անուն ունեք, Լիլիթ...

... Այդ օրը թամբոն չգնաց: Լիլիթին ճանապարհեց մինչև համալսարան:

Ճիմա ի՞նչ է անելու Վիգենը, արդյոք առանց ինձ թատրոն կմտնի՝, մտածում եր նա, ոչի՞նչ, կրացատրեմ... Եթե ինքը այսպիսի շքնաղ օրիորդի հանդիպեր՝ ամեն ինչ կմոռանար:

Վարդանը սպասեց համալսարանի մուտքի մոտ մինչև Լիլիթը դուրս եկավ դասից: Հետո միասին նստեցին տրամվայ ու տուն վերադարձան: Ամբողջ ճանապարհին զրույցով էին տարված: Պարզվեց, որ զրեթե հարևաններ են:

- Ես քո դպրոց գնալ-զալու ժամերն անզամ գիտեի, նույնիսկ գիտեի, թե որ տրամվայից ես դուրս թռչելու՝ կանգառ չհասած:

- Դպրոցն անցավ, Լիլիթ շան, ես հիմա ուսանող եմ, սովորում եմ գեղարվեստական ուսումնարանում, նկարիչ եմ դառնալու:

- Դե, դա շատ լավ է, ինչպէ՞ս ասեմ, ես վադուց եմ քեզ հետևում, երբ դու դեռ դպրոցում էիր սովորում, - ծիծաղելով ու կարմրատակ թշիկները փորձելով ցույց շտալ, - ասաց Լիլիթը՝ զարմանք պատճառելով Վարդանին:

- Իսկ դու համալսարանի ո՞ր բաժնում ես սովորում, - հարց-քեց Վարդանը:

- Բանասիրականում, առաջին տարիս է, իսկ քո ո՞ր տարին է, Վարդան, - նկատելիորեն քնքշալից տոնով հարցրեց Լիլիթը:

- Երկրորդ, կարծես թե հաջորդ կանգառը մերն է:

Հազիվ էին տրամվայից իջել մեր հերոսները, երբ տեղատարափ անձրև սկսվեց:

- Վազենք, Վարդան, արագ, շուտ, ես շատ մոտ եմ ապրում, դու ամեն օր անցնում ես մեր տան մոտով,- ասաց Լիլիթն ու արագորեն «տեղավորվեց» Վարդանի թևի տակ:

- Ե՞րբ, ե՞րբ ենք հանդիպելու, Լիլիթ, գուցե վաղը, վաղը հա՞,- շնչակտուր հարցրեց Վարդանը:

- Այո, այո, վաղը երեկոյան, նոյն ժամին համալսարանի մոտ... իսկ հիմա, վազիր, վազիր, ես արդեն հասա մեր տուն:

Վարդանը մինչև տուն հասավ, ոտքից-գլուխ քրջվել էր: Վերնաշապիկն ու տարատը եթե քամեիր՝ կքամվեր, բայց դա ոչինչ, երջանիկ էր նա այն գիտակցությամբ, որ իրեն շերմագինս սիրող օրիորդ է հայտնվել, այն կը՝ ինչպիսի ն...

- Դու ինչ որ անտարբեր չես, հը, Վարդա՞ն...,- խոսում էր ինքնիրեն,- գուցե ե՞ս կը եմ սիրահարվել, հը, ախապեր...

Ամբողջ գիշեր չքնեց: Տենդ ուներ, առավոտյան հազը և հարբուխը խեղում էին կոկորդը: Նրա մտահոգությունը հնարավորինս արագ ապարինվելն ու Լիլիթին տեսնելն էր: Այս մտածումների մեջ էր, երբ հնչեց հեռախոսազանգը.

- Վարդան, կը ուրիշ օյին ունե՞մ գլխիս խաղալու, ես ի՞նչ արիր, այ տղա,- հեռախոսալարի մյուս կողմից բղավում էր Վիզենը:

- Ես, ես քեզ հետո կբացատրեմ, Վիզեն, հիվանդ եմ, մրսել եմ, մրսել...

- Ձե՞նդ ինչ է եղել, հազում կը ես, հա՞,- հիմա գալիս եմ:

Կես ժամ չանցած Վիզենը Վարդանի մահճակալի մոտ էր: Վերջինս մանրամասնորեն պատմեց ամեն ինչ:

- Դե, եթե քո ասածի նման գեղեցկուհու ես հանդիպել ու ինչպես երևում է, դու կը պակաս սիրահարված չես, ուրեմն ինձ մնում է միայն շնորհավորել ու ներել քեզ երեկով համար: Օհո՛, ընկերս, նոր կյանք է սկսում: Անհամբեր եմ տեսնելու ընկերուհուդ:

Մինչև երեկո մայրը խնամեց որդուն, ինչպես ասում են «պառավական», փորձված դեղամիջոցներով Վարդանը կա-

բողացավ ոտքի ելնել, սակայն հարբուխը դեռ վրան էր:

- Տղա ջան, այդ ո՞ւ ես գնում, այսօր մնա տանը, որ լավանաս, - ասում էր մայրը մտահոգված:

- Չե, մայրիկ, պիտի գնամ, ես ինձ լավ եմ զգում:

- Կա չկա աղջկա խնդիր է, հա ...

- Հա, մայրիկ, հա, հարս ես ունենալու...

Նախորդ օրվա նման, ճիշտ ժամանակին դուրս եկավ Լիլիթը համալսարանից:

- Զայնդ դուրս չի գալիս Վարդան, երևի երեկ մրսեցիր, այո ...

- Այո, Լիլիթ, մրսել եմ, ամբողջ օրը պառկած եմ եղել, մայրս է խնամել, բայց հիմա լավ եմ: Խնդրում եմ, արի մի սրճարան գնանք, այնտեղ մի երկար զրոյց կանենք, լավ...

- Իհարկե, Վարդան ջան, ինչպես կասես:

Համալսարանի հարևանությամբ «Կոռունկ» ռեստորան-սրահի մի անկյունում տեղավորվեցին մեր երիտասարդները: Առաջին խոսողը Վարդանն էր.

- Երեկ ես ընկերոջս հետ թատրոն էի գնալու, բայց հանդիպեցի քեզ ու ամեն ինչ մոռացա: Խեղճ ընկերս՝ Վիզենը, սպասել է, սպասել և վիրավորված իմ վերաբերմունքից, գնացել տուն:

- Վայ, ինչ ամոթ բան է եղել:

- Ոչինչ, ոչինչ, ես այսօր նրան ամեն ինչ պատմեցի և նա հասկացավ: Ասեմ, որ նա ճանաչված նկարիչ է, վաղուց է ավարտել ուսումը: Կատարելազործվել է Լենինգրադում: Նրա յուղաներկ նկարները բարձր գներով են վաճառվում:

- Իսկ ինչ բնույթի նկարներ են, բնանկարներ, դիմանկարներ...

- Լիլիթ ջան, նրան հետաքրքրողը մարդիկ են, զյուղացի, ակադեմիկոս, ամեն ասպարեզի մարդիկ: Շատ է նկարում կանանց, մշտապես բողոքում է, կներես, բնորդների (բնական, մարդու կենդանի տիպար, - ՀԵՆ. Ա.) քչությունից: Ասում է Երևանում ընդամենք մի քանի բնորդուիիներ կան, այն ել ձեռքից-ձեռք են խլում նկարիչները:

- Ինչպէ՞ս է անունը, ասացիր...
- Վիզեն, Վիզեն Սարաֆյան:
- Չե, չեմ լսել, դե, ես մոտ չեմ գեղանկարչությանը, բայց, եթե դու այդքան արժևորում ես նրա արվեստը, ուրեմն արժե տեսնել նրա կտավները:

- Ինչո՞ւ չէ, հենց վաղը, շաբաթ օր է, քեզ կտանեմ նրա հիանալի, մեծ արվեստանոցը: Ես արվեստանոց չունեմ, իմս մի փոքրիկ բնակարան է, ես եմ ու մայրս:

Հաջորդ օրը կեսօրին մեր հերոսները բակեցին Վիզենի արվեստանոցի դուռը.

- Պահ, պահ, պահ, այս ովքեր են եկել,- դուռը բացելուն պես հրճված դիմավորեց նկարիչը երիտասարդներին:

- Խնդրեմ, ծանոթացիր Վիզեն, Լիլիթն է, դու արդեն գիտես նրան, ես քեզ պատմել եմ նրա մասին:

- Այո, այո, իհարկե գիտեմ,- ասաց նկարիչը և՝ իբր թե աննկատ, մի լարով փորձեց փակել վահանակի վրա եղած կիսավարտ յուղանկարը:

- Այդ ինչո՞ւ ես փակում նկարը, Վիզեն, թող տեսնենք,- ասաց Վարդանը:

- Մտածեցի, ամոր է եկի, օրիորդն առաջին անգամ եկել է իմ արվեստանոցը և իր առջև է հայտնվում կիսամերկ կնոջ դիմանկար: Ախր, այդ անտեր բնորդուհին էլ քանի օր է խաղացնում է, չի զայիս, հավանաբար ավելի շահավետ գործ է գտել:

- Մի նեղվիր, բարեկամս, դա ել կանցնի, թասդ բեր,- կատակի տալով ասաց Վարդանը:

Նաիրի կոնյակի շուրջը բոլորված, բավական ժամանակ ուտելիս մերկով էին զբաղված տղամարդիկ: Վարդանը լավ չէր զգում իրեն, ջերմությունը վրա էր տվել: Փորձեց վեր կենալ աթոռից, չկարողացավ:

- Եկեք համոզենք թող մի քիչ քնի,- ասաց Վիզենը:

Իրականում համոզելու կարիք էլ չեղավ: Մինչ նրանք խոսում էին, Վարդանն արդեն խոմփացնում էր:

- Ախր, արդեն շատ ուշ է, մերոնք կանհանգստանան, թես գիտեն թե ում հետ եմ,- ասաց Լիլիթը:

Այսպես կամ այնպես Լիլիթը պարտավորված էր մնալ մինչև  
իր սիրած երիտասարդը կարժնանար:

Այդ ժամերի ընթացքում Վիզենը ակընդետ հետևում էր Լի-  
լիթի ամեն մի շարժմանը: Հիացական բազմաթիվ արտահայ-  
տություններով աստվածացնում էր գեղեցիկ կանանց, շմոռա-  
նալով նմանություններ գտնել Լիլիթի կազմվածքի հետ: Եղավ  
մի պահ, որ Վիզենը նրան տարավ ծանոթ կիսավարտ նկարի  
առջև ու սկսեց դասախոսություն կարդալ, թե ինչպես պետք է  
կտավին պատկերել կնոջ մարմսի այս կամ այն մասը:

Ամորի զգացումից ու անկարողությունից քարացել, մնացել  
էր խեղճ աղջիկը:

Կեսզիշերն անց էր, երբ մեր երիտասարդները տուն գնալիս՝  
ճանապարհին մի քանի կցկոտոր նախադասություններ փո-  
խանակելուց հետո, հասան իրենց տները:

Մեկ-երկու օր անց մոռացվեց ամեն ինչ և Վարդանի ու Լի-  
լիթի փոխարարերությունները գնալով լուրջ բնույթ ստացան:  
Երիտասարդները հաճախ իրենց օրերն անց էին կացնում  
Վիզենի արվեստանոցում: Էլ կին-մին, բնորդ-մնորդ հասկա-  
ցությունները այնքան էլ խորթ չէին հնչում Լիլիթի ականչին:  
Պատահեց նույնիսկ, որ նա ներկա եղավ մի բնորդուհու «ներկայացմանը» և թե ինչպես էր նրան հրահանգներ տալիս  
Վիզենը. «Չէ, չէ, չեղավ, ձախ ոտքը ավելի հեռացրու, զլուխդ  
ամբողջովին մի կախիր, թե չէ կստացվի, թե դու ամաչում ես  
քո գեղեցկությունից»:

Երեք ընկերների մտերմությունն այնքան ջերմ ու անմիջա-  
կան էր, որ օրերից մի օր, համարամ ուտելիքներով լի սեղա-  
նի շուրջը, բոլորի կատարներն էլ փոքր ինչ տաքացած,  
Վիզենը դիմեց Վարդանին.

- Եղբայր, սիրելիս, խնդրում եմ չընդհատեք: Դու տեսնում ես,  
չէ՞ թե ես ոքքան եմ տանջվում բնորդուհիների ձեռքին, մենք  
եղբայրներ ենք, չէ՞ Լիլիթը քո ընկերուհին է և իմ քույրը,  
վաղը մյուս օրն էլ քո կինն է դառնալու: Քանի դեռ կին չի դա-  
ռել, քող օգտվենք նրա աստվածատուր գեղեցկությունից, Վե-

ներային նմանվող նրա մարմնի շրեղությունից, հանուն արվեստի, հանուն մեզ, հանուն, ինչո՞ւ չէ, հանուն փողի, ի՞նչ ես ասում, Վարդան, դու ել կարող ես ներկա լինել: Դու ել կսովորես, վաղը մյուս օր քեզ ել է պետք գալու:

- Վերջացրի՞ր, պարոն, վեր կաց Լիլիթ, գնում ենք: Այլևս չեմ կարող լսել այս զառանցանքը:

- Մի բոպե, Վարդան, հանգստացիր, ետ եմ վերցնում խոսքերս, ներողություն: Ամեն պարազայում մտածիր, մինչև գոտկատեղը, ավելի չե...

- Դե, վերջացրու, Վիզեն, մի ստիպիր ավելորդ բաներ ասել, գիտես չե՞նոքան եմ հարգում քեզ:

Սակայն, ինչպես ասում են՝ լինելիքը եղավ: Լիլիթը դարձավ երկու տղամարդկանց բնորդուիին: Լինում էին օրեր, երբ Վարդանը մենակ էր թողնում Լիլիթին ընկերոց արվեստանոցում: Տղամարդկանց հարաբերություններն արդեն շերմ չեին:

Վիզենը նախկինի նման շատ ել հետաքրքրված չէր ընկերոց՝ Վարդանի հաջողություններով, իսկ վերջինիս հանդիպումները Լիլիթի հետ գնալով պակասեցին, և դադարեցին:

Վարդանն անշուշտ գլխի էր ընկել, որ իր մտերիմ ընկերը և մանավանդ, Լիլիթը, ստորաբար դավաճանել էին իրեն:

Ամիսներ անց Վարդանը գնաց ծանոթ արվեստանոց, բայց ներս չմտավ հիմնական մուտքից, այլ աննկատ մտավ բակի կողմից և ի՞նչ տեսավ. իր սիրելի աղջիկը՝ Լիլիթը, բոլորովին մերկ, բարակից ել բարակ շղարշն ուսին, նկատելի ուրած փորիկով, պահանջված դիրքով նստած, կատարում էր Վիզենի տված ցուցմունքները: Անակնկալի եկած Լիլիթը բան չէր գտնում ծածկելու իր ամոթը: Երկուսն էլ քարացել, մնացել էին:

- Եկել եմ ցտեսություն ասելու,- արտաքուստ գուսայ, Վիզենի աշքերի մեջ սպանիչ հայացրով նայելով ասաց Վարդանն և շարունակեց,- մեր կուրսին տանում են Մոսկվա, Լենինգրադ՝ թանգարաններում արտանկարներ անելու: Ցտեսություն, Լիլիթ, օ՛հ, կներեք, սխալվեցի, Վեներա:

- Վեներա, վերադարձիս անպայման կօգտվեմ քո ծառայությունից. լավ էլ կվճարեմ, թերևս ոչ այնքան, որքան այդ պարոնը, բայց որպես հին ծանոթներ, դու ինձ համար զեղչ կանես, այնպես չէ... Միայն թե առանց պարոնի և զալիք երեխայի ներկայության...

Հուլիսի 4, 2014 թ.,  
Լու Անջելես

## ԵՍ ՍԻՐՈՒՄ ԵՄ ՀՈԼԻՎՈՒԴԸ

... Առավոտյան ժամը 6-ն է: Երկու ժամ է ոտքի վրա եմ: Փորձում եմ կրկին անկողին մտնել՝ լրացնելու համար պարտադիր քնի այն վեց ժամը, որ բժիշկը մշտապես հիշեցնում է ինձ:

- Քուն և քայլել, սա է այսօր առողջության բանալին,- ասում է նա,- իսկ առողջ քուն բերողը քայլելն է:

Ասողը UCLA հիվանդանոցի պրոֆեսոր Դյուրագոն է, որ մշտապես, 12 տարի անընդմեջ, իր հսկողության տակ է պահում իմ առողջական վիճակը:

- Դե լավ, Հենրիկ,- ասում եմ ինքս ինձ,- գնա, քայլիր, միևնույնն է, քունդ չի տանում: Լույսը դեռ չի բացվել: Այսօր արև չի լինելու, ասել են լուրերով:

Լուսաբացն արդեն իր թեսերն է փոռում հորիզոնի վրա: Երկինքն ամպու է, թվում է, թե ուր որ է այն կապատովի ու անձրև կտեղա:

Մեր տնից մինչև Սանտա Մոնիկա պողոտա՝ ոտքով քայլելու պարագայում, կարելի է տասը րոպեում հասնել: Սանտա Մոնիկա շհասած մի Մակդոնալդ կա: Հեռվից տեսնում եմ երկու կանանց, «Հայեր են,- մտածում եմ ես,- բայց ի՞նչ են անում այստեղ, այս ժամին»: Որքան մոտենում եմ նրանց՝ ավելի են համոզվում, որ հայեր են: Ինձ տեսնելիս, նրանք շփոթվում են, սակայն ես փորձում եմ նրանց հանել այդ նեղ վիճակից.

- Աղջիկներ, բարի լույս, այս ո՞ւր այս ժամին, ո՞ւր եք գնում:

- Այս ժամին ո՞ւր կգնան, պարոն, աշխատանքի...

- Բայց ինչո՞ւ այդպես կոպիտ, աղջիկս...

- Դե, զահլա չունեմ, հա,- ասաց ու ուղիղ նայեց աշքերիս մեջ և, հավանաբար, տեղը բերելով թե ով է իր առջև կանգնած, մեկ վայրկյան քարացավ ու բառերն իրար խառնելով, կմկմաց:

- Վայ, քոռանամ ես, այդ Դուք եք, Սաեստրո, պարոն Անասյան... հազար ներողություն, այս ինչ անհարմար բան ստացվեց: Մենք շատ ենք սիրում Ձեզ. լսում, կարդում ենք Ձեր

գործերը, դիտում ենք Ձեր ելույթները հեռուստացուցով: Խնդրում եմ չնեղանաք, որովհետև, հաճախ են օտարներն այս ժամին միայնակ կանանց տեսնելով, անհանգստացնում:

- Դուք ի՞նչ եք անում այս ժամին, այն էլ փողոցում:
- Ես քայլում եմ, բժշկի խորհրդով և սիրում եմ քայլել ոչ բանուկ ժամերին: Դու ասացիր, որ աշխատանքի եք զնում, այս ժամի՞ն:

- Այս, մենք աշխատում ենք Դառնթառունում, ոսկերչական ընկերությունում և սպասում ենք, որ մեր բոսք զա ու մեզ տանի: Շտապ պատվեր ունի, դրա համար էլ վաղ ենք զնում, օրը 14 ժամ աշխատում ենք, չենք դժոհում, երանի միշտ շատ գործ ունենան:

Քիչ անց, կոսմիկական արագությամբ փողոցն ի վար սուրում է մի կոտրած-թափած մեքենա ու կանգնում այդ կանանց կողքին: Քաղաքավարությունից դրդված, օդում ձեռքով հրաժեշտ տալով, հեռանում եմ: Մի քանի քայլից հետո, շրջվում եմ տեսնելու համար, թե ինչ է կատարվում: Զգացվում է, որ երկխոսություն է տեղի ունենում նրանց միջև: Ինչպես երևաց, երկխոսությունը արդյունք չտվեց: Մեքենան հեռացավ...

Արդեն Սանտա Մոնիկա պողոտայի վրա եմ: Մոտենում եմ հնարնակ հոլիվուդյիներին լավագույն ծանոթ Հարություն Երիցյանի՝ նախկինում «Ապրիլ» գրատանը, որն այժմ վարսահարդարի սրահ է: Միտքս թոշում է դեպի հետ, ավելի քան երեսուն տարի, երբ այդ գրատուն-տպարանում շարվում էր հայրիկիս, մեծանուն պատմաբան, մատենագետ Հակոբ Անասյանի «Մանր երկեր» անվանումով ստվարածավալ գիտական աշխատությունների ժողովածուն:

- Հենրիկ ջան, Մաեստրո, հաճի ս, հայրիկիդ ըսե, որ արագացնե սրբագրությունները... ծո, խենթենամ պիտի, քանի անգամ սրբագրել կը լլա: Այս չորրորդ սրբագրությունն է, որ հայրիկդ կընե, - նեղարտած ասում էր Հարությունը:

- Ճիշտ կըսե, Հենրիկ, մեր գործերը կը կաղան հորդ գիրքին պատճառով,- ավելացնում է իր կյանքի վերջալույսին սպասող Հարությունի եղբայր Նուրարը:

Այս ամենը լսելուց հետո ասում եմ.

- Գիտեմ տղաք, հայրիկս քանի մը անգամ կը սրբազրէ, շատ բծախնդիր է և ոչ մեկու չի վստահիր: Սր-բա-գրել- հայրիկիս պարագային կնշանակե տառեր և կետադրական նշաններ շտկել, այդպէ ո է:

- Այո,- ասացին եղբայրները միաբերան:

- Ուրեմն,- շարունակեցի ես,- իսկ բառ, միտք կամ նախադասություն երբեմ փոխած է հայրիկս:

- Ոչ, բնավ...

- Եհ, ուրեմն, տառասխալները և կետադրական նշաններն եռ կը շտկե, իսկ այդ սխալները, պարոն Նուբար, նյութը շարողին մեղքն է...

Մինչև վերջերս, հիշյալ գրատան հարեանությամբ մի փոքրիկ թատրոն կար: Հիմա շարժում չկա այդ մայթին, բայց... բայց այս ի՞նչ է... երեք, գրեթե ամբողջովին մերկ, ջահել աղջիկներ ինձ նշան են անում, որ իրենց մոտենամ: Ուղղությունս փոխելն ու գրեթե վագելը մեկ եղավ: Ի՞նչ իմանաս, այդ ամայի տեղում, շենքի ետնամասում ինչե թ չեն կարող լինել դե, մենակ ես՝ և երեք աղջիկ, պատկերացնու մ եք... 42 տարի ապրում եմ Հոլիվուդում, բայց նման երևույթի չեմ հանդիպել:

Ինչեմ, շարունակում եմ քայլել Սանտա Մոնիկա պողոտայով դեպի արևելք: Այս շրջանը, ավելի ճիշտ Վեստերնից դեպի արևելք Հոլիվուդի երկրորդ կարգի թաղամասն է, որտեղ հիմնականում ապրում են հայերն ու մեքսիկացիները, առավելապես Հարավային Ամերիկայի իսպանախոս երկրներից արտագաղթածները, ովքեր ոչնչով չեն տարբերվում մեքսիկացիներից, որի պատճառով էլ հայի համար բոլորն էլ դիտվում են որպես մեքսիկացիներ:

Վերջին տարիներին մեր կողմերում օրեցօր աճում են դեղին ցեղի մեծահարուստ ներկայացուցիչները, հիմնականում չինացիներ, կորեացիներ, վիետնամցիներ, ովքեր Լոս Անջելեսի հարավից կանխիկ դրամով «գրավում» են ամեն ինչ. շենքեր, տներ, բիզնեսներ, առևտրային խոշոր ընկերություններ: Այժմ արդեն հասել են Սանտա Մոնիկա պողոտա:

Ինձ համար հետաքրքիր էր տեսնել, թե առավոտյան այդ կանուխ ովքե՞ր են քայլում մայթերով և ով ո՞ւր է շտապում:

Ահա հասել եմ Նորմանդի փողոցի անկյունը, մարդաշատ, հայաշատ, հայկական խանութերով, բժշկական և այլ կարգի հաստատություններով հարուստ մի վայր:

Հանրակառքի (*Bus*) կանգառն է: Մեծարիվ սպասողներ, բուրն էլ անխտիր իսպանախոս ազգերից, հանդարտ, խաղաղ, շատերն էլ զրոյցի բոնված: Ճարպիկ մի կին, հանրախանութի սայլակը վեր է ածել շարժական «սրճարանի» և այդ ցուրտ եղանակին տաք սուրճ և խմորեղեն է վաճառում:

Եվ որովհետու այդ ժամին փողոցի վրա եղած սրճարանները փակ են, շարժուն «սրճարանի» առևտուրը եղում է:

Հանրակառքն արդեն եկել է, բայց ոչ ոք չի շտապում վեր բարձրանալ: Սևամորթ վարորդն էլ պահանջվածից ավելի երկար է սպասում, որպեսզի մարդիկ կարողանան սուրճ գնել ու նոր բարձրանալ հանրակառք, թեև, ինչպես բոլորը, նա էլ զիտի, որ սուրճ և ուտելիք չի կարելի վայելել հանրակառում:

Երկար եմ կանգնած մսում՝ դիտելու համար չափազանց գրավիչ, մարդկային բնականոն հարաբերությունների բովում բարի, դիմացինի հանդեպ բարյացակամ, օգնող ու հասնող մարդուն: Ապշում ու զարմանում եմ, թե այստեղ որքան բարյացակամ են մարդիկ, մեկը մյուսին հարգող, մեկը մյուսին զիջող: Դժվար չէր կոսիել, որ ամեն օր էլ նույն պատկերն է այստեղ, և որ շատերը զիտեն միմյանց ու նույն ժամին են գնում աշխատանքի:

Այս ամենը դեռ ոչինչ... քիչ անց հանրակառքի հետևում է կանգնում ոստիկանի մեքենան:

- Աստված իմ,- վախվորած մտածում եմ ես,- հանկարծ ոստիկանը չքանդի՝ մարդկային անկեղծ ու շերմ, միաձույլ շաղախով կառուցված այս հրաշալի կառույցը:

Բայց ոչ... այդ միայն թվում էր, որ ոստիկանը կգա ու կարգելի «սրճարանի» տիրուհուն առևտուր անել մայթին:

Ոստիկանը դուրս էլ չի գալիս մեքենայից ու մի քանի րոպե անց, տեսնելով, որ ամեն ինչ խաղաղ է՝ հեռանում է:

Հստակ է՝ օրենքի պահապանը շրջանցեց օրենքը և ոչ միայն նա, այլև գործողության բոլոր հերոսներն են խախտել օրենքը։ Ամենամեծ «մեղավորը» ոստիկանն է, որին դու հերոսացնում ես, հերոսացնում՝ նրա մարդկային մաքուր նկարազրի համար։ Նախ՝ մարդը, հետո՝ օրենքը։ Ոստիկանը հասկանում է հասարակ մարդկանց, գործավորի վիճակը, ովքեր հանապագօրյա հացի սիրույն, պարտավորված են առավոտ կանուխ մեկնել իրենց գործատեղիները։

Երբ օրն ամբողջովին կրացվի, սրճատերն իր սայլակն ու փասա-փուսեն հավաքած կիեռանա՝ հաջորդ օրը դարձյալ նույն տեղում սպասարկելու համար հանրակառքի սպասող աշխատավոր ուղևորներին։

Շարունակում եմ քայլել, անցել եմ արդեն մի քանի հայկական խանութների կողքով։ Բոլորն ել փակ են, միայն «French bakery»-ն է բաց։ Այն վերջերս է բացվել։ Անունն է ֆրանսիական, բայց ոչ մի ֆրանսիական խմորեղին չկա, միայն «Բագետն» է (ֆրանսիական հայտնի հացատեսակ), այն էլ՝ Աստված «Բագետ» համարի։

Նույն մայթի վրա, Էջմոնտ պողոտա չհասած, մի Կաթողիկե եկեղեցի կա։

- Հենրիկ,- ասում եմ ինքս ինձ,- մտիր եկեղեցի, եթե այն բաց է, աղոթքդ արա, առողջություն մաղթիր ինքդ քեզ, հարազատներիդ, Աստվածը քո ձայնը կլսի, մի մոմ էլ վառիր Հայաստանի բարօրության և անվտանգության սիրույն։ Եկեղեցին՝ եկեղեցի է, բայց է, որ քրիստոնեական լինի։

Ժամը յոթն է, մեկ ժամ է անցել տնից դուրս գալուց հետո։ Մտնում եմ եկեղեցի, խաչակնքում ու միանում այդ ժամին այնտեղ գտնվող 40-50 հավատացյալներին։ Սկսվում է առավոտյան աղոթքն ու ժամերգությունը։ Ներկա հավատացյալներին նայելով, ես էլ եմ մի քանի անգամ խաչակնքում։

Անշուշտ, քարոզչի խոսքերից ոչինչ չեմ հասկանում, բայց միջավայրն ու հավատացյալների լրջությունը խորը ակնածանք են առաջացնում իմ հոգում։ Մի տաս րոպէ նստելուց հետո, դուրս եմ զալիս եկեղեցուց ու մուտքի մոտ, իմ էլեկտրա-

կան մումն եմ վառում մի կոճակի սեղմումով և խաղաղ հոգով շարունակում ձանապարհ՝ այս անգամ հետընթաց ուղղությամբ, դիմացի մայթով:

Փողոցն արդեն աշխուժացել է: Կամաց-կամաց մարդիկ շատանում են մայթերին: Հեծանվորդները՝ նույնպես: Բենզինիքանկացման պատճառով բազմաթիվ մարդիկ, աշխատավորներ, ուսանողներ հեծանիկ են օգտագործում, մի երևոյթ, որ վաղուց է արմատացած ելքոպական երկրներում:

Հանկարծ տեսնում եմ մի տղամարդու, որը միանգամայն անթույլատրելի տեղից, դիմացի մայթից վագելով գալիս է դեպի ինձ: Ծանոթ դեմք ե, բայց տեղը չեմ բերում:

- Հենրի կ, եռբայր... ես եմ Վահագը, չես հիշո՞ւմ,- ասում է նա:

- Իսկապես չեմ հիշում, դա դեռ ոչի՞նչ... ինչո՞ւ ես կարգ խանգարում՝ դիմացի մայթից այս մայթը գալու համար, չէ որ վտանգավոր է:

- Այս քառասուն տարի՝ քեզ չեմ տեսել և երբեք առիթ չի եղել շնորհակալություն հայտնել՝ քո մարդկային վերաբերմունքի համար:

- Կարիք կա՞ր դրա համար վտանգի ենթարկել քեզ, ինչի՞ համար է քո շնորհակալությունը, ես ոչինչ չեմ հիշում:

- Խոսրս քառասուն տարվա պատմության մասին է: Մենք նոր էինք եկել Պարսկաստանից ու փաստաթղթեր էինք լրացնելու «Գրին» քարտ ստանալու համար: Իմ ընկերոջ՝ Անդրանիկի միջնորդությամբ դու լրացրիր մեր բազմանդամ ընտանիքի թղթերը և վարձատրություն չուզեցիր քո աշխատանքի համար:

- Հա՞..., այո՛, Անդրանիկի անունը, որ տվեցիր՝ հիշեցի: Այն տարիներին ծանոթներին օգնում էի նման հարցերում, թեև շատ քիչ անգլերեն գիտեի... այս ո՞ր ես շտապում այս ժամին:

- Ավտոբուսին եմ ուզում հասնել: Ես եմ բացում խանութը: Հենրիկ ջան, ի՞նչ կլինի, հեռախոսի համարը տուր: Օրերը ցրտում են, մի օր խաշի եմ հրավիրելու Ձեզ:

- Կտամ համարը, մինչ ասա խնդրեմ, դու պարսկահայ,

ինչպես ես մաքուր հայերենով խոսում.

- Ասեմ, պարոն Անասյան, նախ կինս Հայաստանի ծնունդ է ու մասնագիտությամբ էլ լրագրող, և հետո, իմ բոլոր գործափորները հայաստանցի են: Նրանցից էլ սովորեցի իրենց պես խոսել: Քառասուն տարի է անցել, քիչ չեղ չեղ - փիլիսոփայում է բարեկամս:

Թելադրում եմ հեռախոսիս համարն ու արդեն երեք տարի «սպասում» Վահագի հեռաձայնին...

Վահագն ինձ հիշեցնել տվեց 40 տարվա վաղեմություն ունեցող կառավարական հինարկների հետ կապված մի քանի ուսանելի ն հետաքրքիր մանրամասներ: Ահա դրանցից մեկը:

Ամերիկա ոտք դնելու առաջին շաբաթում իսկ մեր ընտանիքը հրաժարվեց կառավարական նպաստ ստանալ երկու փոքրահասակ երեխաների համար: Ես և Մարիետան քավական ցածր վարձատրությամբ աշխատանքի տեղափոխվեցինք:

Հինգ-վեց ամիս անց, Լոս Անջելեսի Ներգաղյի գրասենյակից (*Immigration Office*) մի ստվար ծրար ստացանք, որից պարզվեց, որ օրինապահ ապրելակերպի և կառավարական նպաստից հրաժարվելու համար, մեր ընտանիքի անդամներին թույլատրված է համապատասխան թղթերը լրացնել ու դիմել «Կանաչ» քարտ ստանալու համար:

Դժվարանում եմ նկարագրել այն ուրախությունն ու խանդակառությունը, որ տիրեց մեր մեկ սենյականց բնակարանում: Այնտեղ կար տափակ, ճերմակ գույնի դաշնամուր, որը գնել էինք իմ կազմակերպած առաջին համերգի եկամուտով (*Իռկոտ. 5, 1978, Breakfast Club, Riversid Dr., L.A.*): Այդ համերգը կայացավ՝ որքան էլ տարօրինակ հնչի, մեր Լոս Անջելեսում հաստատվելուց երկուտարկես ամիս անց: Համերգի մենակատարներն էին քանոնահար Արա Սևանյանը, Հարությամբուկյանը և Մարիետա Անասյանը:

Նայում եմ յուրաքանչյուր անձի համար մի քանի թերթից բաղկացած հարցաշարը. ինչպես բոլորը՝ ես ել պիտի դիմեմ փաստաբանական գրասենյակ՝ հարցաթղթերը լրացնելու համար: Ես դեռ այդ ուժը չունեմ, բավական դրամ է պետք:

- Հենրիկ, ախաղերս, փորձիր դու լրացնել,- մտորում եմ ես,- կանցնի՝ կանցնի, չէ՝ այդ դեպքում կդիմենք փաստաբանի:

Ինչևէ, մեծ դժվարությամբ լրացրեցի «Գրին» քարտի հարցարդերը: Հաջորդ առավոտյան իջա Դառնթառն: Ներգաղի զրասենյակում երկար սպասելուց հետո բարձրախոսը հայտնեց իմ թիվն ու մոտենալիք պատուհանի համարը:

«Բարի լուս» եմ ասում ապակու ետևում նստած բարետես կնոջը, վերջինս բարի ժամանակ պատասխանում է իմ ողջունին և հարցնում:

- Ինչո՞վ կարող եմ Ձեզ օգնել, պարոն:
- Ես, ես բերել եմ իմ ընտանիքի անդամների հարցարդերը՝ «Գրին» քարտ ստանալու համար:
- Դուք մենա՞կ եք, ո՞ւր է Ձեր փաստաբանը:
- Ես փաստաբան չունեմ, ինքս եմ լրացրել հարցարդերը, հնարավոր է, որ սխալներ լինեն, կներեք դրանց համար:
- Ե րբ եք ժամանել Միացյալ Նահանգներ:
- Վեց ամիս առաջ:
- Դուք նամակ ստացե՞լ եք...
- Այո, տիկին:
- Խնդրեմ, ցույց տվեք այդ նամակը:

Տիկինը ուշադրությամբ ընթերցեց նամակը:

- Ես մի քանի րոպեից կվերադառնամ,- ասաց նա,- սպասեք սրահում, ես Ձեզ կկանչեմ:

- 15-20 րոպե անց՝ պարոն Անասյան, խնդրում եմ մոտենալ 18-րդ պատուհանին:

- Դուք հիմնականում ամեն ինչ ճիշտ եք լրացրել, միայն մեկերկու տեղ այսպես պիտի գրեք,- ասաց ծանոթ կինն ու ցույց տվեց ճիշտ ձևը:

- Հաջորդ անգամ այդպես կանեմ, կներեք, թեև դրա կարիքը չի լինի:

- Ոչ, ինչո՞ւ... Դուք կօգնեք մտերիմներին, բարեկամներին, ինչո՞ւ պիտի ահազին դրամ վճարեք փաստաբաններին, եթե ինքներդ կարող եք Ձեր հարցերը լուծել: Իսկ հիմա կարող եք գնալ: Մեկ-երկու ամսում կստանաք Ձեր քարտերը:

Բոլոր ամիս հետո եկան մեր «Կանաչ» քարտերը: Նույն կերպ վարվեցի նաև քաղաքացիություն ստանալու ժամանակ:

... Նախկինում շատ հայ ընտանիքներ էին ապրում Հոլիվուդում: Տարիների ընթացքում, ում ձեռքը «գրանին հասավ» բողեց Հոլիվուդը և հաստատվեց Գլենդելում, Բրբանկում և այլ հանգստավետ վայրերում:

- Չէ, ոչ, ես չգնացի, թեև կարող էի գնալ: Ես սիրում եմ Հոլիվուդը: Սիրում եմ աղմկոտ, շարժուն քաղաք: Մենք՝ հոլիվուդցիներս, շատ չենք սիրում Գլենդել գնալ և, եթե գնում ենք՝ միայն մշակութային ձեռնարկներին ներկա լինելու և մեկ էլ բարեկամներին, ընկերներին այցելելու համար:

... Արդեն հոգնել եմ քայլելուց: Բայց հոգիս խաղաղ է: Բազմաթիվ մանր-մունք երևութների բովում կրկին համոզվեցի, թե որքան քիչ բան է պետք, որպեսզի մարդն ուրախ և երջանիկ զգա իրեն:

Նոյեմբերի 23, 2017թ.,  
Հոս Անջելես

## ՏՈՒՆԴԱՐՁ

(Խոհեր օդանավի մեջ, կամ երկխոսություն՝  
ինքս ինձ հետ)

...Չգիտեմ, թե ոմանք ինչպես են իրենց զգում օդանավում, այն էլ 12-13 ժամ, բայց ինձ համար այդ երևույթը կատարյալ տառապանք է:

Տառապանք՝ ոչ թե վախի զգացման, այլ պարտադրված պարապության պատճառով: Շատ ուղևորներ հիանալի են զգում իրենց, շատերը՝ ընթերցում են, հեռուստացույցի բազմաթիվ ալիքներով ընտանեկան, արկածային ֆիլմեր են դիտում: Ումանց էլ հաջողվում է չորս նստատեղ զբաղեցնել ու թոփչքի ամբողջ ընթացքում փառավորապես քնել: Որոշներ...

- Հե՞յ, կանգնիր,- ասում է ուղեղս, - ինչ ասացի՞ ո... «որոշներ»-ս ո՞րն է, ամոք է... «որոշ» բառը ածական է, պետք է ասել «ումանք», որը գոյական է և եզակի «ումն» բառի հոգնակին: Ցանկանում ես անպայման օգտագործե՞լ «որոշ» բառը, խնդրեմ, ասա՝ որոշ մարդիկ, ոչ թե որոշներ՝ անձոռնի ձևով ածականը գոյական-հոգնակիք վերացած: Այս կոպիտ սխալը եկավ իրանահայերենից և հասել է արդեն Հայաստանի Ազգային ժողով ու մտել նաև լրագրության մեջ:

- Հիմա հասկացա՞ր,- հարցնում է իմ հոգնած ուղեղը, - կարծեմ աթոռիդ հենակն ավերված է:

Իսկապես էլ. աթոռիս հենակը ետ չի գնում, երևի միակը ողջ օդանավի մեջ: Եվ որքան է սեղմում եմ կոճակը, միևնույնն է հենակը իր դիրքը չի փոխում:

- Ուղղահայաց դիրքով երկար նստել հնարավոր չէ, կանչի՞ ու եկցողուհուն, - թելայրում է ուղեղս:

Կարո՞ղ եմ չինազանդվել: Պարզվում է, որ երիտասարդ ուղեկցորդուհին գիտի այդ աթոռի փշացած լինելն ու՝ առանց ձայն հանելու, ինձ տեղափոխում է մեկ ուրիշ նստատեղ:

Իմ առջևում երիտասարդ ամուսիններ են՝ իրենց զույգ փոքրիկներով: «Ճաշդ կերար», - ծաղրում է ուղեղս: Եվ խկապես, ժամեր շարունակ կրծքի երեխան լացը չի կտրում, սրահը լարված վիճակում է: Շատեր փորձում են ինչ որ ձևով լրեցնել փոքրիկին: Այստեղից-այնտեղից փնթփնթոցներ են լսվում. «Լոեցրեք ք երեխային», «դեղ տվեք ք՝ թող քնի...»: Բավական ժամանակ անց, ինչ որ ուժի ազդեցության տակ փոքրիկը քնում է մինչև թոփչի ավարտը:

Ես մտքերի մեջ եմ: Ոչ խաչքառ լուծելն է օգնում, ոչ է արկածային ֆիլմ դիտելը: Միտքս այնտեղ է, երևանում: Փորձում եմ կանգնեցնել ուղեղիս աշխատանքը: Հնարավո՞ր բան է. ուղեղը դադարում է աշխատելուց, երբ մարդը մահանում է: Ուղեղ կոչվածքը միաժամանակ քանի՞ ուղղություններով է աշխատում: Այդ օրը, օդանավի մեջ իմ ուղեղը ուր ասես թռչում էր... հիմա էլ փոխեց իր աշխատանքի ուղղությունը, այս վայրկյանին հարցնում է՝ ո՞վ է հորինել «ինքնարթիո» անվանումը: Ինչ որ մի իր կամ զանգված, առանց որևէ ուժի հրման, ինչպէս ս կարող է ինքն իրեն թռչել:

- Ո՞րտեղ էինք, ո՞ւր գնացիր, այս ուղեղ, ինչո՞ւ փոխեցիր ուղղությունդ, կենտրոնացիր մի հարցի վրա, բա ես մեղք չե՞մ, ո՞ւր ես դես ու դեն թռչում, անջատվի՞ր, դուրս արի իմ զլխից, թո՞ղքնեմ, տես թե ինչպէս են բոլորը մրափում: Օդանավի լուսերն էլ հանգցրել են, որ մարդիկ քնեն, իսկ դու անընդհատ, անդադրում աշխատում ես:

- Հիշո՞ւմ ես, թե ինչ էին ասում այն ջահելները Հռիփսիկի «Կողիրյոկ» անունով հայտնի բացօթյա սրճարանում՝ «Չգնա՞նք մի քիչ տղթժանք...»:

- Մի բան հասկացա՞ր, տանջված, չարչարված իմ ուղեղ, իհարկե, ոչ: Ի՞նչ նկատի ունեին այդ ջահելները, «տղթժալս» ո՞րն է, ի՞նչ է նշանակում՝ գուցե հարբե՞լ, աղջիկների հետ զվարձանա լ... Աստված իրենց հետ, թող գնան ու «տղթժան» որքան որ կուզեն:

- «Տղթժալ» և «Չփվել» բառերն այսօր «զարդարում» են

երևանյան բառապաշտիք, - հաստատեց ուղեղս:

- Ուղեղ իմ ազնիվ ու բարի, հիմա ո՞ւր ես տանելու ինձ... կանգնի՞ր, կանգնի՞ր... մոտեցանք մեր տանը, այո, այո, սա է Մաշտոցի պողոտան, Չարենցի թանգարանի ետևի բակում մեր տունն է: Ինչո՞ւ բերեցիր ինձ այստեղ:

- Բերեցի, որ պատրաստվես թատրոն գնալու համար: Մոռացե՞լ ես, որ Միեր Սկրտչյանի ծննդյան 85-ամյակն են նշում այսօր, իր անունը կրող թատրոնում: Դուք կ' իրավիրված եք:

- Վա՛յ... ապրես դու, բոլորովին մոռացել էի: Բա Մարիետա-յի հարցը ո՞նց ենք լուծելու: Ընկերուիիների հետ է, ով զիտի, որ ուստորանում են:

- Դա՞ կ' ես պիտի ասեմ:

- Իհա՛րկե դու, բա քո զործի անունն ի՞նչ է՝ հիշեցնել, քո մեջ պահել ամեն-ամեն ինչ, ինչ որ կապված է իմ բոլոր զգայա-րանների հետ:

- Դե լավ, ասեմ. ձեռքիդ հեռախոսով հեռաձայնիր և ասա, որ իրեն 7-ից 10 պակաս բերեն թատրոն: Քանի որ Ֆրունզի մասին գնաց խոսքը, նրա հետ կապված մի դեպք հիշեցնեմ:

- Լավ, լավ, զլուխսդ մի գովիր: Հիմա ես ասեմ՝ դու հիշիր: Երբ Բարեգործականի կենտրոնից մեր տուն եկանք, մերենայից իջավ, մեկ վայրկյան կանգնեց և տանը նայելուց հետո հար-ցրեց.

- Էսիկ քու տո՞ւնդ է...

- Այո, Ֆրունզ Զան, - ասացի

- Յա՛... ի՞նչ կըսե՞ս... ինչըդ տորթ եղնի...

- Հիմա տեսա թ, թե ինչ արագ կողմնոշվեց Միերի ուղեղը, - ասաց իմ ուղեղը: Նա մեկ-երկու վայրկյանում գտավ իր տիրոջ շուրջը բոլորված, մեր տիւն եկող հյուրերին սպասվելիք կերուխումից առաջ մի փոքր զվարճացնելու հնարք:

- Հենրիկ, արի քայլելով գնանք թատրոն, - տնից դուրս գալու պես թելաղրեց ուղեղս, - համ կ' քիչը խորաթա կենենք ճամ-փին... էստեղից մինչև թատրոն հազիվ կես ժամ կենե...

- Հլա մի ըսա եղ լենինականցու լեզուն ո՞ւրդուց միտոցնկավ, այ տղա...

- Գիտեմ որ էնոնց բարբառը շատ կսիրես, ուստա ջան, համ ել էսօր էնոնց կլ տոնն է, Ֆրունզը իրենցը չէ՞...

- Ինչո՞ւ է միայն իրենցը, Մհերը բոլոր հայերինն է, ավելին՝ աշխարհինն է, ափսոս, շատ օտարներ չգիտեն, չեն ճանաչում այդ հանձարեղ մարդ-դերասանին:

- Չհոգնեցի՞ր, Հենրիկ, կուզե՞ս քուն բերեմ աչքերիդ, տե՞ս, ինչ անուշ-անուշ է քնել ժողովուրդը: Եթե չես քնելու, ուրեմն, արի քեզ տանեմ Երևանի նոր գետնուղիներով, նոր բացված ճանապարհներով: Գլխավոր պողոտաների խաչմերուկներում տեղադրված նոր թվային լուսանշանների մոտ, որտեղ Սվյուրքից ժամանած զբոսաշրջիկները՝ զարմանքից ապշած աչքերով, սպասում են կանաչ լուսին, որպեսզի փողոցն անցնեն՝ օպերային թատրոն գնալու համար:

- Կանգնի՞ր, կանգնի՞ր բարեկամս, զթա տիրոջ, սիրելի ուղեղ, թույլ տուր գեթ մեկ ժամ քնեմ: Չգիտե՞ս ինչ է, վերջին մի քանի օրերի ընթացքում որքան եկող-գնացող եղավ, ես գրեթե չկարողացա աչք փակել: Դեռ ավելին. վերջին գիշերն էլ, մի կողմից հյուրերին էինք ճանապարհում, ճամարուկները կարգի բերում, մյուս կողմից էլ դուդուկի կոնցերտիս տեսազրությունն էինք դիտում տաղանդավոր դուդուկահար Գևորգ Դարայյանի հետ: Կանգնի՞ր, էլի, խնդրում եմ, ուղեղ ջան, կանգնի՞ր, թող քնեմ...

- Այ քեզ միամիտ մարդ, բա ես կարո՞ղ եմ կանգնել, ես միշտ եմ աշխատում: Երբ ես կանգ առնեմ դու կվերջանաս: Ես քո քնած ժամանակ էլ եմ աշխատում, բա այն սիրուն-միրուն երազները ո՞վ է պատրաստում քեզ համար և քեզ մշտապես ապրեցնում հայաստանյան հիշողություններով, ո՞վ է քեզ հիշեցնում քո թշվառ, սակայն այսօր քաղցր հիշվող մանկությունը, և ինչպե՞ս ես դու ուզում, որ ես կանգնեցնեմ իմ ի վերուստ տրված աշխատանքը:

- Լավ, լավ, մի նեղանա, ներիր, կարգադրի՞ր, ես պարտավոր

եմ մշտապես հետևել քո հրամաններին, ասա՛, հիմա ի՞նչ ես  
ուզում, որ ես մտաբերեմ:

- Ohn՝, այնքան բան կա հիշելու, վերապրելու: Իմ մի քանի  
տասնյակ հարյուրավոր ծալքերի շնորհիվ, յուրաքանչյուր  
վայրկյանում ես կարող եմ բազմաթիվ ուղղություններով քեզ  
մտածել տալ, քեզ նետել մի աշխարհամասից ~~մյուսը~~, հիշել  
տալ մարդկանց, դեպքերն ու քեզ միսրձել անհամար երևույթ-  
ների մեջ, այդ ես եմ հիշում ամեն ինչ ու քեզ թելադրում ինչ  
անել, ինչ չանել և ինչի վրա կենտրոնանալ:

- Հիմա, ասա տեսնեմ, ի՞նչ կուզեիր հիշել: Ո՞ւր տանեմ քեզ,  
Երևա՞ն, թե՞ Լուս Անջելես,- հաղթական տոնով հարցրեց  
ուղեղը:

- Ուր էլ տանելու լինես, իմ ուղեղ, իմ բոլոր նվիրագրծում-  
ների կառավարիչ, միևնույնն է, ինձ չես կարող կտրել Հայ-  
րենիքից: Ուր էլ որ լինեմ, ինչ էլ մտածեմ, ինչ էլ ասեմ ու անեմ,  
միևնույնն է, իմ եռաթյունն իմաստավորված է Հայրենիք հաս-  
կացողությամբ, այսօր ջանա ինձ պահել Երևանի գրկում:

- Լավ, թող այդպես լինի, թես ինձ համար դժվար է կենտրո-  
նանալ միևնույն թեմայի վրա: Բնությունն ինձ օժտել է անընդ-  
հատ շարժվելու, այս ու այնտեղ թռչելու բացառիկ ունակու-  
թյամբ: Ասա իննդեմ, ինչո՞ւ էիր այնքան զայրացել այն պետա-  
կան պաշտոնյա կնոջ վրա, Երևան ժամանելու առաջին իսկ  
օրը: Բակի ամբողջ տարածքում քո ձայնն էր լսվում:

- Լսիր, բարեկամս, պատմեմ, ի՞նչ է, դու ներկա չեի՞ր մեր  
խոսակցությանը:

- Ինչպե՞ս չե, ներկա էի, բայց ուշադիր չեի, ախր ես էլ  
երբեմն-երբեմն հոգնել զիտեմ, չե...

- Դե, ուրեմն լսիր: Այդ կինը, թաղային խորհուրդ են ասում,  
ինչ են ասում, չզիտեմ, այդտեղից էր եկել, եկել էր դրամ  
զանձելու: Իբրև թե ես, վերջին վեց տարիների ընթացքում, իմ  
բնակարանի հետ կապված պետական տուրքերը չեմ վճարել:  
Ասում, բացատրում եմ, որ վճարել եմ և երբեմ պարտք չեմ  
մնացել պետությանը:

- Մեր համակարգչի մեջ չի նշված, որ Դուք վճարել եք, բայց..., բայց մի բան կանենք,- ասում եր նա, հասկացնելով, որ ընդհանուր լեզու կգտնենք...

- Մաեստրո, անդորրազրերը Ձեր գրասեղանի դարակում են,- ասում է հարևանուիհս, ով ահա քանի տարի է հոգ է տանում իմ բնակարանի հետ կապված բոլոր վճարումները ճշգրիտ, ժամանակին մուծելու համար:

Եվ իսկապես, Նունեն գրասեղանի դարակից բերում է նախորդ տարիների կենցաղային սպասարկման և պետական տարբեր հիմնարկներին վերաբերող բոլոր վճարումների ողջ փաթեթը, որի շնորհիվ պարզ է դառնում, որ ես պետությանը պարտը չունեմ:

Պաշտոնյա կինը ապշած է:

- Սա ի քանիերորդ դեպքն է: Պարոն Անասյան, իրոք Դուք և շատ ուրիշներ պարտաճանաչ կերպով կատարել եք Ձեր քաղաքացիական պարտքը, բայց ահա նախորդ պաշտոնյա կինը մեր հիմնարկի համակարգչի մեջ չի անցկացրել վճարումներն ու ըստ այնմ էլ, պետական գանձարան չեն մտել դրանք: Բարեբախտաբար Դուք պահել եք անդորրազրերն, ու Ձեզ մնում է վճարումներ անել միայն այս տարվա համար:

- Հիմա ո՞ւր է այդ կինը, բանտո՞ւմ,- հարցնում եմ:

- Ոչ, ի՞նչ եք ասում, նա արտասահման է փախել և ոչ ոք չգիտի թե ուր; Նա տարիներ շարունակ դրամ է կուտակել արտասահման տեղափոխվելու համար:

- Է՛, ինչո՞ւ պատկան մարմինները յուրաքանչյուր տարեվերջ չեն ստուգում նման վճարումների հավաստիությունը:

- Գիտեք ինչ, պարոն Անասյան, մենք մտնում ենք մարդկանց դրության մեջ: Շատ շատեր դժվարանում են ժամանակին վճարումները կատարել, դե, մենք էլ մարդ ենք, հասկանում ենք այդ ամենը և թույլ ենք տալիս նման կարգի խախտումներ: Շատ ընտանիքներ են անվճարունակ: Եվ տարիներ շարունակ ավելանում է նրանց պետությանը տալիք պարտքի գումարը:

- Մի կարծիք թե ես քնած էի, ես ամեն ինչ լսեցի, իիմա ի՞նչ

հիշեցնեմ քեզ,- փոքր ինչ հուսահատ հարցնում է ուղեղս,-  
այնքան փորձությունների միջով անցար Երևանում, որ հիմա  
էլ հիշելիս ծալքերիս գործունեությունն արագանում է: Մեկ  
ամիս օգտվեցիր Երևանյան տարսիներից, ի՞նչ է տպավորու-  
թյունդ:

- Ասեմ: Նախ, ինչպես ասում են, այսօր Երևանում ավելի  
տաքսի կա, քան մարդ: Ամեն քայլափոխի կարելի է տեսնել  
ժամեր շարունակ հաճախորդի սպասող մի քանի տասնյակ  
մարդկանց կամ ընկերությունների պատկանող գունավոր,  
տարբեր ազդագրերով առկեցուն մեծ ու փոքր տաքսի մեքե-  
նաներ: Եվ հետաքրքիրն այն է, որ վարորդների մեջ մեծ թիվ  
են կազմում խորհրդային օրերին տարբեր պաշտոններ վա-  
րած, որոշակի գիտելիքներով օժտված մարդիկ: Եվ չեղավ մեկ  
վարորդ, որ գոհ լիներ իր աշխատանքից. «Օրը 16 ժամ եմ  
աշխատում,- ասում էր մեկը,- չորս երեխա ունեմ, մեկը ուսա-  
նող է, կինս չի աշխատում, հազվագյուտ է պատահում, որ օրը  
15-20 դոլար աշխատեմ»: Մեկ ուրիշն էլ ասում է. «Մինչև  
կեսօր, եթե 5 դոլար աշխատեմ՝ լավ է, ընդմիջման քյարաբի և  
մի պաշլա սիգարետի փողը դուրս է գալիս: Թե դրանից հետո  
էլ մի հինգ դոլար աշխատեմ կամ չաշխատեմ»:

- Չէ, չէ, անգին իմ ուղեղ, կանգնի ր, կանգնիր, քավ է ինձ  
տանջես Երևանյան տիսուր հիշողություններով, ինչ է, ուրիշ  
քան չկա հիշելու: Ասենք, օրինակ, Երևանի գեղադեմ օրիորդ-  
ներին, մեկը-մյուսից շքեղ, փառահեղ պրտաքին տեսքով, շլա-  
ցուցիչ լուսավորումով աչք շոյող ռեստորանները և սրճարան-  
ները: Բա մեկը-մյուսից նոր ու փայլուն Սերսեղեսները, Զի-  
պերը, Ինֆինիտիներն ու Լեբուսները:

- Հերիք է, քավ է, ուղեղ իմ շարժուն: Քիչ հետո վայրէջք ենք  
կատարում, մեկ-երկու ժամից էլ տուն կհասնենք:

- Ի՞նչ, տո՞ւն,- զայրանում է ուղեղս,- բնակարան ասա, բնակ-  
վելու տեղ: Հայաստանից դուրս, որտեղ էլ որ ապրելու լինես,  
երբեք չմոռանաս, որ դա ժամանակավոր բը-նա-կա-տե-ղի է,-  
փորձելով թաքցնել իր զայրութը՝ վանկ առ վանկ շեշտում է

ինելացի և բարի ուղեղս:

- Տունն այնտեղ է, Հայաստանում,- շարունակում է նա,-  
բոլոր սփյուռքահայերի տունն է այնտեղ, Արարատի փեշերին  
և, ինչպես Պարույր Սևակն է ասում.

- Դա տուն չէ, Հայրենիք է, այն էլ ի նշ Հայրենիք.

Մեր... Հայրենիքը մեզնից դատարկվեց:

Բայց... ոչ մի վայրկյան, ոչ մի ակնթարթ

Մենք չենք դատարկվել մեր Հայրենիքից:

Հոկտեմբերի 16, 2012 թ.,  
Երևան

## ՀԻՊՈԿՐԱՏԻ ԶՈՀԸ...

... Հազին պատառուսված շապիկ, ծակոտկեն տարատ, գրպանում հազիվ մի քանի դոլար, տասնինը տարեկան Վարդանը մի կերպ հասավ արտասահման: Մենակ էր, բոլորովին մենակ, լեզուն էլ չգիտեր: Հորից ժառանգած մանածագործական արհեստի վրա էր դրել հույսը, մեկ էլ՝ սեփական խելքի ու ճարպկության:

Վարդանը գիտեր, որ իր հասակակիցների մեջ ինքն ավելի էր փորձառու, հաստատակամ ու վճռական: Իսկ ապագայի նկատմամբ ունեցած պայծառ հավատն ու լավատեսությունը ամուր նստած էին նրա հոգում:

Հայ համայնքի միակ եկեղեցում տեղի ունեցող Ազգային ժողովների ընթացքում, հաճախ էր ելույթներ ունենում ազգային հարցերի շուրջ ու իր խելացի մտքերի շնորհիվ, արդեն շահել էր շատերի համակրանքը:

Հազիվ էր Վարդանը օրվա ապրուստ հայթայթելու չափ մի աշխատանք գտել, երբ սիրահարվեց: Սակայն ո՞վ աղջիկ կտար մերկ ու անոթի երիտասարդին, որը չգիտես ինչ ճանապարհներով ընտանիքը Հայաստանում թողած, մեն-մենակ եկել հասել էր այստեղ:

Այնուհանդերձ, համակրելի երիտասարդով շատ էին հետաքրքրվում դեռահաս աղջիկները, որոնցից մեկին՝ Մանուշիկին, շատ էր հավանում Վարդանը: Թիսադեմ օրիորդն էլ անտարբեր չէր Վարդանի նկատմամբ ու՝ ծնողներից զաղտնի, հաճախ էր հանդիպում հայաստանցի երիտասարդին: Երկար ժամանակ չպահանջվեց, որպեսզի օրիորդը մինչև ականջների ծայրը սիրահարվի խելացի ու ճարպիկ երիտասարդին:

Աղջկա ծնողներից զաղտնի սիրահար զույգը հաճելի ժամեր էր անկացնում աշխից հեռու վայրերում: Գաղտնիքը բացվեց և Մանուշի մեծահարուստ վաճառական հայրը մարդ վարձեց ու նրան խստագույնս պատվիրեց հետևել աղջկա ամեն մի քայ-

ին: Բանք հասավ նրան, որ հայրը տնային կալանքի ենթարկեց աղջկան:

Վարդանը խելքը կորցրել էր, չգիտեր ինչ անել: Որոշեց Մասուշենց տան դուռապանին կաշառելու միջոցով հնարավորություն ստանալ սիրած աղջկան փախցնելու համար: Պայմանավորված օրը, կեսգիշերին, երիտասարդները զրկախառնվեցին կառքի մեջ:

Սիրահար զույգն արդեն որոշել էր ամուսնանալ՝ ընդունված ավանդական կարգով, եկեղեցում:

Միայն երկուսով, մթին, բոլորից ծածուկ, նրանք բախեցին ծանրիք քահանայի տան դուռը:

- Տեր հայր, ուզում ենք ամուսնանալ, եթե կարելի է՝ առանց վկաների, - հենց դուն արանքից ասաց շփոթահար Վարդանը:

- Ի՞նչ, ամուսնանալ առանց ծնողների գիտության, առանց վկաների, - հարցրեց ակնապիշ քահանան, լայն բացած աշքերով ոտից-զլուխ տնտղելով երիտասարդ զույգին:

- Այո, տեր հայր, առանց վկաների և առանց ծնողների գիտության ու ներկայության:

- Բայց դու դեռ քո զլուխը չես կարողանում պահել, ինչպէ՞ս ես ընտանիք կազմելու, - այս անզամ արդեն փոքր-ինչ մեղմացած ձայնով շարունակեց իր հարցուփորձը քահանան:

- Աստվածը մեծ է տեր Գրիգոր, մի բան կանենք, կարեռն այն է, որ մենք շատ ենք սիրում միմյանց և պատրաստ ենք հաղթահարել ամեն դժվարություն, - ասաց Վարդանը՝ Մանուշիկի խրախուսիչ հայացքից ոգևորված:

- Լավ, ես ձեզ կպսակեմ, ծախսը երկու հարյուր դոլար է, դուք այդքան դրամ ունե՞ք...

- Ոչ, տեր հայր, միայն քան դոլար, - առաջ գալով ասաց Վարդանը:

- Օհ՛... քան դոլար... ա՞յդ է եղածը... ո՞չ, ո՞չ, ես ձեզ չեմ կարող ամուսնացնել զնա՛, աշխատի ր, տուն-տեղ եղիր՝ հետո կտեսնենք:

Վարդանի խոսելու համոզված տոնը, հաստատակամությունը, նույնիսկ Մանուշի աշքերից հոսող արցունքները

շազդեցին տեր Գրիգորի որոշման վրա:

Գլխիկոր, ձեռք-ձեռքի բռնած սիրահար զույգը հուսախար դուրս եկավ քահանայի տնից: Իրենց եւսից դրան փակման խլացուցիչ ձայնը կարծեք թե էլ ավելի վճռականություն ներարկեց Վարդանի երակների մեջ:

Արդեն կեսպիշեր էր, փողոցներն ամայի, ի՞նչ անել, ո՞ր զնալ: Վարդանը գիտեր, որ այդպես, պարտված չէր կարողանալու նայել ընկերների աշքերին: Իսկ Մանուշենց տանն էլ մի ուրիշ «հարսանիք» էր սկսվելու: Հիմա, ուր որ է կակտեն փնտրել \*աղջկան, դես ու դեն կընկնեն, հարայ-հրոց կրարձացնեն, ոտքի կիանեն ողջ գյուղաքաղաքը: «Մի բան պիտի անել», - մտածում էր սալահատակին նստած Վարդանը: Թերի տակ կուշ եկած Մանուշիկը լալիս՝ էր, լալիս էր՝ ոչ թե վախից, այլ անհաջողությունից ու անորոշությունից: Նա ամեն ինչում, ամեն մի հարցում անվեհապահորեն վստահում էր Վարդանին:

- Ոչի՞նչ, Մանուշ ջան, մի բան կանենք, արի՛, արի՛ գնանք, վեր կաց, ես գիտեմ թե ինչ ենք անելու, - ընդուստ վեր ցատկելով տեղից, - ասաց Վարդանն ու Մանուշի ձեռքից բռնած, արագ-արագ քայլեց իր որոշած ուղղությամբ:

- Ու՞ր, Վարդան, ախր ու՞ր ես քարշ տալիս, արի՛, արի գնանք մեր տուն, ընկիր հորս, մորս ոտքերը, ես էլ քեզ հետ, խնդրենք, աղաշենք և ներողություն խնդրենք, որ առանց իրենց համաձայնության նման քայլի ենք դիմել: Միևնույնն է, տեր հայրը նրանց կպատմի ամեն ինչ: Եկ, եկ գնանք, մարդ են էին, երեսի այս անգամ կհասկանան:

- Ո՞՛չ, երբեք ք, այսօր, հիմա ամեն ինչ պիտի վերջանա: Գնում ենք օտար եկեղեցի, քահանան՝ քահանա է, կարևորը Քրիստոնյա լինելն է, թերևս օտար քահանան տեսնելով մեր վիճակը անփող կկատարի իր պարտականությունը, այս կտեսնես...

...Եվ, իսկապես, օտար եկեղեցում ամեն ինչ կարգավորվեց: Առանց սպասելու, որ տեր հայրը հարցուվորձ անի, Վարդանը մանրամասնությամբ նրան պատմեց ամբողջ եղելությունը՝ խելամտորեն զանց առնելով տեր Գրիգորի հետ կապվածը:

Ըստ կարգի, ասորի քահանան կատարեց պսակադրության արարողությունը և տեսնելով ջահելների անմիտար վիճակը՝ բարեմաղթանքներն անելուց հետո, ասաց.

- Ո՞րուեղ եք ապրում, հասցեն տվեք, որ ծաղկեփունց ուղարկենք:

- Մենք անհասցե ենք, տեր հայր, մեր տան Տերը այնտեղ է... վերևում... նա կօգնի մեզ, մենք հավատում ենք նրա զորությանը,- ասաց Վարդանը:

- Մեռնեմ նրա զորությանը... զնացե՛ք երեխեք, առանց երկմտելու, առանց վախի, Աստվածը կլուսավորի ձեր ձամքան, ես հավատում եմ ձեր անբիծ, մաքուր սիրուն, իսկ նման սերը միշտ է հաղթող:

...Զահելների հույսը, թե Մանուշի հայրը ստիպված կլինի հաշտվել իրականության հետ՝ չարդարացավ: Ավելին, կանգնած լինելով իր համար դառն իրականության առջև, անգութ հայրը մոլտաց.

- Տար, ուր ուզում ես տար աղջկաս, ինչ ուզում ես արա, ես այլս աղջիկ չունեմ... բայց երբևէ ետ չնայես, մենք ձեզ օգնողը չենք, դուք եք եփել այս ճաշը, դուք ել կերեք...

\*\*\*

...Մի փոքրիկ, խղճուկ սենյակի մեջ ծվարած, հողե գետնին էլ, չգիտես որտեղից ճարված մի հին, մաշված ներքնակ դրին, կոտրած-թափած աման-չամանով էլ կերակուր եփեցին ու սկսեցին դժվարին, ողորմելի, բայց երջանիկ կյանքով ապրել մեր հերոսները:

Ինչպես հեքիաթներում է պատմվում, ինը ամիս, ինը օր, ինը ժամ հետո աշխարհ էր զալու երիտասարդ զույգի առաջնեկը: Մինչ այդ, երիտասարդները բժշկի տեղն անզամ չգիտեին: Միամիտ, բանից անտեղյակ Մանուշը երկունքի ցավերի մեջ էր: Վարդանն իրեն կորցրել էր, չգիտեր ի՞նչ անել, ու՞մ կանչել: Ստիպված բախեց հարևան Հասանի դուռը.

- Այս մեր փողոցի անկյունում—ձեր հայրենակից բժիշկ

Մուրայյանն է ապրում, զնա նրա մոտ,- խորհուրդ տվեց պարսիկ հարևանը:

Վարդանը երկար սպասեց բժշկի դուռնը: Գիշերվա այդ ուշ ժամին ո վ կարող էր խանգարել իր քունը, եթե մի արտակարգ դեպք չիներ: «Ուրեմն դեպքը լուրջ է», - մտածեց բժիշկն ու հենց տան հազուստներով իրեն դուրս նետեց փողոց:

Իսկ Վարդանենց տանն արդեն իրարանցում էր: Հասանն ու իր կինը, մեկ կ մյուս հարևանուին, ելումուտ էին անում, քշիչում, ինչ-որ անորոշ, անհասկանալի բաներ էին շշնջում միմյանց: Բժշկի հայտնվելու պես բոլորը սսկվեցին ու նրա խոժող հայացքից շվարած մեկ մարդու պես դուրս փախան խղճուկ սենյակից:

- Այստե՞ղ, գետնի վրա... ծնկաշը՝,- գլուխը Վարդանի կողմը շրջելով հարցրեց բժիշկը:

- Այս է մեր ունեցածը բժիշկ, Դուք Ձեր գործն արեք:

- Ի՞նչ, ի՞նչ... իսկ դու դրամ ունե՞ս ինձ վճարելու, ինչ որ հավաստ չի գալիս,- ակնոցի տակից վախազդու հայացքը սեե-ռելով Վարդանի վրա, հարձակողական տոնով վրա բերեց բժիշկը՝ միևնույն ժամանակ մեկ վայրկյանում աշքերով լավե-լով ողորմելի սենյակի պարունակությունը:

- Այս, ունեմ...

- Երեք հարյուր դոլար է իմ գինը, այդքան, հասկացա՞ք, երիտասարդ,- ուշադրություն չդարձնելով Մանուշիկի վրա, ով ահավոր ցավերի մեջ գալարվում էր հատակին:

- Գիտե՞մ, գիտե՞մ, բժիշկ, Դուք Ձեր գործն արեք,- շեշտակի հայացքը մեխելով բժշկի աշքերի մեջ, բղավեց Վարդանը:

Վստահ չինելով պահանջված դրամը կստանա թե ոչ, Վարդանի հայացքից սարսափահար բժիշկն անցավ գործի:

- Դուրս եկեք երիտասարդ, այստեղ մի կին կար, նրան ասեք թող մի երկու աման բերի, տաք ջուր, և... և... դե, ինքը, վստահ եմ, գիտի թե ինչ պիտի բերի,- վրա տվեց բժիշկը՝ գործունյա մարդու վստահությամբ, բառերը իրար ետևից շարելով:

Անցան սպասումի տանջալից վայրկյանները, և պատի տակ կանգնած Վարդանը մեկ կ լսեց իր մանկան առաջին ձիչը: Դա

իր զավակի ձայնն էր, նրա՝ աշխարհ զալու, առաջին ճիշը, նա արդեն հայր էր, արդյո ք աղջիկ էր, թե տղա: Քրտինքը պատել էր երիտասարդ հոր ամբողջ մարմինը, անհամբերությունից ետ ու առաջ քայլելով անդադար կրկնում էր. «տղա, տղա, տղա»:

- Տղա, տղա, աչք լույս, Վարդան,- շնչակտուր իրեն փողոց նետելով ու Վարդանին փարվելով կանչում էր Հասանի կինը:

Քիչ անց Վարդանին ներս կանչեցին: Վերջինս մոտեցավ քրջերի մեջ պառկած կնոջը, չոքեց գետնին, համբուրեց երջանկությունից փայլատակող երեսով իր սիրելի Մանուշին ու տեսավ նրա կողքին դրված մարդուկին. իրենն էր... իր առաջնեկը, իր տղան, ում համար որպես առաջին խանձարուր էր ծառայել իր պատառուտած վերնաշապիկը... միայն ու միայն մեկ վերնաշապիկ:

Ահավոր ձևով տանջալից մի բան սեղմվեց Վարդանի կոկորդում. շգիտեր ինչ անել, տանը մի կես մետր կտոր է չեր գտնվել նորածնին փաթաթելու համար: Այս մեկ տարվա տառապալից, սակայն երջանիկ սիրո ու փայելքների երանավետ օրերի հիշողությունը մի պահ մշուշվեց նրա երևակայության մեջ ու կոկորդի սեղմոցը բացվեց հանկարծ. մոնշալով, կրկին անգամ ընկալ գետնին, ավելի ճիշտ փլվեց հատակին և փղձկաց...

Սենյակում կանգնածներից ոչ ոք չհամարձակվեց «իանգարել» նրան: Կուշտ ու կուր լաց լինելուց հետո, ոտքի կանգնեց Վարդանը ու առջևում տեսավ բժիշկ Մուրադյանին, ում ձախ ձեռքին ծանոթ սև պայուսակն էր, իսկ աջ ձեռքն ինչ-որ շարժումներ էր անում: Վարդանն ավելի մոտեցավ բժշկին, քիթը բժին հպվելու աստիճան, ուղիղ նայեց նրա աչքերի մեջ խորը, թափանցիկ սուր հայացքով: Մուրադյանը շղիմացավ այդ հայացքին, գլուխը փոքր-ինչ թերեց, ու դանդաղորեն բարձրացրեց աջ ձեռքը...

- Չունեմ, ոչինչ չունեմ,- մոլտաց Վարդանը:

- Ի՞նչ..., - այս եղավ միայն բժշկի պատասխանը:

- Այն, այն, ոչինչ, բայց ես կունենամ, բժիշկ, վստահ եղեք, ես

կվճարեմ իմ պարտքը, նույնիսկ ավելիով, հավատացեք, բժիշկ...

- Դուք ինձ խաբեցիք... սրան մի տեսեք, մարդ է դարձել, գրանը ծակ երեխա է ունենում, ու մ վրա ես հույսդ դրել, ողորմելի...

- Բժիշկ, խնդրում եմ, մի վիրավորեք մեզ, մենք, ճիշտ է, դրամ չունենք, բայց մարդ ենք... Զեզ նման...

- Օհն, սրան մի նայեք, իրեն կ է մարդ երևակայում:

- Այս, մարդ ենք և զիտենք, որ մարդկանց մեջ, ամենից մարդկայինը բժիշկը պիտի լինի, չէ որ Դուք բժշկի վկայական ստանալուց առաջ երդում եք տվել, Զեր զիսին են դրել հույն մեծ փիլիսոփա Հիպոկրատի զիսարկը, և Դուք խոստացել եք նվիրումով, նույնիսկ անվճար օգնել, ծառայել մարդկանց:

- Այս իսկապես զարմանալի է,- շփոթված ասաց բժիշկը,- դու որտեղից զիտես Հիպոկրատի մասին, քեզ ո՞վ է սովորեցրել այդ ամենը...

- Ե, բժիշկ... քիշ-միշ կարդում ենք ելի...

Այլևս ոչինչ չասելով, բժիշկն արագորեն շրջվեց ու դուռը շրմփացնելով Վարդանի երեսին, զնաց:

... Օրեցօր մեծանում էր Վարդանի արու զավակը: Նրա աշխարհ գալով շատ բան փոխվեց Վարդանի կյանքում: Հիանալի աշխատանք ուներ: Հորից ժառանգած մանածագործական արհեստն իր աշխատած գործարանում նա վեր էր ածել արվեստի: Զառամյալ գործարանատերը գնալով ավելի ու ավելի քիչ էր երևում գործարանում: Երկու տարի անց շատ չնշին գումարով գործարանը հանձնեց Վարդանին:

Այդ ամենը լավ էր, իհարկե, սակայն հայրն ու մայրը զիսին, Վարդանի տղան դեռ անօրեն էր, ապօրինի զավակ: Բժիշկ Մուրադյանը ոչ մի կերպ չէր ուզում ծննդյան վկայական տալ փոքրիկին: Այդ ընթացքում արդեն հաշտություն էր կայացել մեր ջահելների և Մանուշի ծնողների միջև: Խստաբար հայտնի վաճառական աղա Անդրանիկի խելքը գնում էր թոռան համար:

Պարապ ժամանակ, ձեռքերը քամակին, պտտվում էր գյու-

դաքաղաքի մեծ շուկայով մեկ՝ իր ետևից լսելու համար շրջանառվող լուրերը. «Գիտե՞ք ով է այս աղայի փեսան, այն ֆաբրիկայի տերը՝ Վարդանը», մեկ ուրիշը. «Այս աղեն ֆաբրիկի տեր Վարդանի աներ-հերն է...»: Եվ այս ամենը դուր էր գալիս նրան:

Աղա Անդրանիկն էլ էր անհանգիստ թոռան հետ կապված պատմության համար: Եվ չէր թաքցնում, որ միշտ երազել է իր անունով արու թռո ունենալ:

- Խնդրում եմ ոչ մի կերպ չխառնվել այս խնդրին, հայրիկ,- ասում էր Վարդանը աներ հորը,- այստեղ փողի հարց չէ, ինքնասիրության և արժանապատվության խնդիր է:

Վարդանը բժշկի մոտ չէր գնում, ուղարկում էր բարեկամ-ներին, որոնք իր գիտությամբ մի քանի անգամ ավելի դրամ էին առաջարկում պարտքի դիմաց, սակայն բժիշկը մնում էր անդրդվելի, պահանջելով, որ երեխայի հայրը գնա իր մոտ:

Երեխան երեք տարեկան էր դառնալու շուտով և Վարդանը որոշեց կտրուկ քայլերի դիմել:

Ինքն արդեն ճանաչված ու հարգված գործատեր էր քաղաքում: Բոլորը հարգում, սիրում էին մանածագործական գործարանի երիտասարդ, գործունյա հայ սեփականատիրոջը, ով ազգային խտրություն չէր դնում և օգնում էր ոչ միայն հայկական, այլև օտար միություններին և կազմակերպություններին:

Օրերից մի օր Վարդանը հանձնարարեց իր օգնականին գնալ բժիշկ Մուրադյանի մոտ և նրան հրավիրել իր աշխատասենյակը՝ իբր հիվանդի այցելության:

Իմանալով, որ կանչողը ճանաչված ու սիրված գործարանատեր Վարդան Քաջբերունին է, բժիշկն առանց հապաղելու նստեց իր ետևից եկած ավտոմեքենան և շտապեց գործարանատիրոջ մոտ:

Բժշկին բավական ծանոթ թվաց փողկապավոր, հազը կապը տեղին Վարդանի դեմքը, բայց չկարողացավ տեղը բերել:

- Բժիշկ, ես հիվանդ չեմ, թյուրիմացության մեջ չընկնեք, սակայն, սա չի նշանակում, թե Դուք չեք վարձատրվելու Ձեր այս այցելության համար: Ես պարզապես մի հարց եմ ուզում ձշտել

մի գործառնության համար,- դիմեց Վարդանը դոների մոտ շվարուն վիճակում կանգնած բժիշկ Մուրադյանին:

- Խնդրեմ, սիրով կպատասխանեմ,- ասաց բժիշկը և առանց հրավերի սպասելու նստեց բազկաթողին:

- Դուք որքա՞ն դրամ եք վերցնում մեկ այցելության համար, ասենք՝ զնում եք ծննդաբերության:

Պաղ քրտինքը պատեց բժշկի ճակատը: Ուզեց ինչ-որ քան հիշել, բայց՝ ապարդյուն: Ի վերջո ասաց.

- Պարզ այցելությանը հիսուն դոլար, իսկ ծննդաբերության պարագայում երեք հարյուր դոլար, - հազիվ կարողացավ ասել իրեն բոլորովին կորցրած բժիշկը:

- Ահա Զեզ երեսուն հազար դոլարի չեք, ես ներկա պահին եմ վճարում հարյուր ծննդաբերության կանչի համար: Հարյուր այցելություն կտաք ձրի, անվճար, հիմնականում նրանց համար, ովքեր ի վիճակի չեն լինի վճարել: Նրանց վճարումը ես եմ կատարում, հենց հիմա, ավանտվ, այսօրվա այցելությունն է մտցրեք այդ ցանկի մեջ: Վարծում եմ ամեն ինչ պարզ է, այսպիսով՝ Զեզ մնաց ինսունինը այցելություն:

- Բայց... բայց,- չիմանալով ինչ ասել՝ ոտքի կանգնեց բժիշկը:

- Դուք ազատ եք, բժիշկ... Հարություն, ուղեկցիր ինսդրեմ պարոնին մինչև իր բնակարանը,- շրջվելով իր օգնականի կողմն ասաց Վարդանը:

... Մինչև բժշկի բնակարան հասնելը բժիշկն ու վարորդը ոչ մի քառ չփոխանակեցին: Երկուսի համար էլ ամեն ինչ պարզ էր:

Սի քանի օր անց, նամակատուվի միջից Վարդանը գտավ իրեն հասցեազրված մի ծրար՝ բժիշկ Մուրադյանի հետադարձ հասցեով: Ծրարի միջից դուրս սահեց Վարդանի տղայի ծննդյան վկայականը և... Վարդանի երեսուն հազար դոլարի չեքք: Ուրիշ ոչինչ:

... Այդ դեպքից մի քանի ամիս անց՝ ինչ-որ անբացատրելի

հիվանդությամբ, անկողին ընկավ քառասունամյա բժիշկ Հրայր Մուրադյանը: Հայ համայնքը կորցնում էր իսկապես բանիմաց ու փորձված բժիշկներից մեկին, ում զիսին, ինչպես ասում են՝ ծանր էր եղել Հիպոկրատի գլխարկը...

... Որոշ ժամանակ անց, մահվան հրեշտակը հանդերձալ կյանք առաջնորդեց իր զոհերից մեկին՝ երիտասարդ բժիշկ Հրայր Մուրադյանին:

*Ապրիլի 22, 1986 թ.,  
Լու Անջելես*

## ԶՅՈՒՍԱԹՈՒՅՐ ԶՅՈՒՏԻԿԸ

... Երևան, օգոստոս ամիս: Սովորական տոք եղանակը ստիպում է քեզ տնից դուրս չգալ: Երեք գերմանական զովացուցիչ սարքերն օրը 15-20 ժամ աշխատելով իսկ հազիվ են կարողանում բարձր առաստաղով երևանյան հին տներից մեկի սենյակների ջերմաստիճանը կայուն պահել:

- Խելք սիրեմ, Հենրիկ,- ասում է իմ առաջին ներքին ձայնը, - համերգդ սեպտեմբերին է, ի՞նչ կարիք կար այսքան շուտ գալ Երևան: Լավ ես արել, որ եկել ես, չէ՞ որ ծիրանի կատաղած ժամանակն է,- սա ել իմ մյուս կեսն է, որ տարիների վորձով գիտի, թե որքան եմ սիրում հայաստանյան ծիրանը, - այնքան կեր՝ մինչև աչքդ կշտանա...

Այսօր շաբաթ օր է, որևէ զործ, ժամադրություն չունեմ: Շաբաթվա ընթացքում այնքան հոգնեցի, որ որոշեցի այսօր տանը մնալ: Մնում է երեկոն սպանել Հռիփսիկի «Կազիրյոկում»: Նախկինում այստեղ էր հավաքվում մայրաքաղաքի արվեստագետների սերուցքը՝ մեկ բաժակ սուրճի շուրջ բոհեմական երեկո անցկացնելու համար: Հիմա այդ խմբից գրեթե ոչ ոք չի մնացել, եղածներն էլ չեն կայողանում հարմարվել գրանում եղածի պարունակության հետ, որպեսզի մի գավաթ սուրճ վայելեն... Այս է իրականությունը, ի՞նչ կարող ես անել:

- Չէ, Հենրիկ, արի գնա «Արմենիա» հյուրանոց, - ասում եմ ինք ինձ, - մուտքի մոտ բացօթյա սրճարան կա, այնտեղ երեկոները զով է լինում: Մեր տանից մինչև «Արմենիա-Մարիոր» հյուրանոց քայլելով հազիվ 10-15 րոպե ժամանակ է խլում: Եվ այսպես, քայլերս ուղղում եմ դեպի «Արմենիա»:

Մայթի եզրից գրեթե մեկ մետր բարձրությամբ մետաղյա բազրիքը, որ ձգվում է ողջ սրճարանի երկայնքով, հնարավորություն չի տալիս անմիջական շփում ունենալ մայթով քայլող անցորդների հետ: Ուշադիր հետևում եմ անցորդներին, և,

որովհետև բազրիքին կից սեղանի առջևում եմ տեղավորված, կարողանում եմ դիտել նրանց դեմքերը. Չե, ոչ մի ծանոթ դեմք:

- Պարոն, կարելի՞ է Ձեզ սեղանակից լինել- քիչ անց լսում եմ մեջքիս ետևից երիտասարդ կնոջ մի ձայն ու անմիջապես թերվում եմ դեպի ետ:

- Իհարկե, խնդրեմ, համեցեք:

Մեկ վայրկյան հայացքս պտտեցնում եմ ողջ սրճարանով մեկ ճշտելու համար, թե ուրիշ ազատ սեղան չկա ր, որ այս երիտասարդ զույգը ցանկանում է տեղավորվել իմ սեղանի շուրջը: Տեսա, որ իսկապես միակ երեք ազատ աթոռները իմ սեղանի շուրջն են:

Երիտասարդ զույգը սուրճ պատվիրեց: Երկար ժամանակ լուր էին: Դժվար չէր հասկանալ, որ ինչ որ բանի համար մտահոգ էին: Բայց այդպես լուր ու մունջ նստել չէր լինի, ուստի ես փորձեցի զրոյց բացել.

- Դե, ինչո՞ւ եք լուր, խոսեք տեսնենք, շատ տխուր տեսք ունեք, բնավ չես ասի, թե երիտասարդ եք,- դիմեցի նրանց, ինձ ուղղած հարցից կոահելով, որ նրանք նոր «ախապարներից» են:

- Խոսելիք շատ նյուր ունինք, պարոն, բայց որևէ մեկը չունինք, ընկեր, բարեկամ, որ սիրտերնիս բանանք անոնց առջև: Ինչպես կերևա Դուք ալ դուրսեն եք, մեզի պես:

- Այս, տղաս, դուրսեն եմ, Ամերիկայեն, բայց ես Հայաստան ծնած եմ... հայաստանցի եմ... ինչպե՞ս է անունդ, տղաս...

- Վարդգես է անունս, պարոն, քովինս ալ կինս է, Հիլտոն է անունք: Չորս ամիս առաջ ամուսնացանք Սուրիա և մեծ դժվարությամբ հասանք Հայաստան՝ մեր ապագան Հայրենիքում կերտելու համար:

- Լավ ըրեք եք, Վարդգես, Հայենիքում կրնաք ապահով ըլլալ, ամենուս վերջը հոս է:

Հազիվ նախադասությունն ավարտած, ինչ որ ձեռք դիպակ ուսիս բազրիքի մյուս կողմից.

- Հենրիկ, Մաեստրո, Դուն հո՞ս ես, ե՞րբ եկար...

Ներողություն խնդրելով երիտասարդ ամուսիններից, վեր կացա աթոռից ու շրջվեցի դեպի ետ.

- Սիլվի, սիրելիս, եկուր, եկուր, այս բազրիքին ծայրեն ներս անցիր, մեկ հատ ազատ աթոռ կա մեր սեղանին քով, միասին լավ ժամանակ կանցունենք: Քովս նստած երիտասարդները Սուրբիայեն են, աշխույժ գրուցի բռնված ենք, վստահ եմ, քեզի համար ալ հետաքրքիր կըլլայ... Կարոն ու ր է, ինչո՞ւ առանձին ես:

- Հենրիկ, չեմ կրնար նստիլ, ժամանակ չունիմ, մեկ ամիս է հնու եմ և վաղը կմեկնիմ, ներող եղիր, ժամադրություն ունիմ: Կարոն շատ զբաղած է, ան Լու Անջելես մնաց, սեպտեմբերին պիտի գա:

- Լավ, կեցիր վայրկյան մը, դուրս ելլամ այստեղեն և քիչ մը խոսինք, հուսամ ժամադրությունդ հյուրանոցին առջև է:

- Այո, այո, այստեղեն կերեա, դեռ չէ եկած:

- Տղաք, քանի մը վայրկյանի համար դուրս ելլամ և քիչ վերջ կվերադառնամ: Աթոռս մեկու մը չի տաք,- կատակով դիմեցի երիտասարդներին ու անցա բազրիքի մյուս կողմը:

- Դուն ե՞րբ եկար, Հենրիկ, ի՞նչ գործով,- հարցրեց Սիլվին:

- Հազիվ մեկ շաբաթ է, որ հնու եմ, համերգ ունիմ սեպտեմբերին վերջը, Մարիետան խումբիս անդամներուն հետ համերգեն մեկ շաբաթ առաջ պիտի գա, ամսույն 20-ին:

- Է, Դուն ինչու այսրան կանուխ եկեր ես, ան ալ այս տաք օրերուն...

- Թերևս պիտի զարմանաս, բայց ըսեմ՝ Հայաստանի ծիրանը վայելելու համար...

- Ի՞նչ, ծիրան ուտելու համա՞ր...

Այս ասելիս այնպիսի մի վարակիչ խնդուք բռնեց խեղճ Սիլվիի կոկորդը, որ անցող-դարձողները մեզ էին նայում:

- Չէ, չէ, Սիլվի, ուտել չէ, սիսալ ես, վայելել, վայելել... ուրիշ է ուտելը և բոլորովին այլ վայելելը, հանգստացիր, բարեկամս, հանգստացիր, մի խնդար...

- Իրավունք կու տամ քեզի,- խնդուքն ավարտելուց հետո ասաց Սիլվին,- իրավ է, Հենրիկ. Հայաստանի ծիրանին պես աշխարհիս մեջ ոչ մեկ տեղ չկա... օ, օ, Հենրիկ, բարեկամս եկած է, նայե, ինձ կփնտրե, պիտի երթամ, կներես, բա յ...

Ամերիկա կը տեսնվինք, բայ...»

Հազիվ էի երկու քայլ արել դեպի իմ սեղանը, դեմս ելավ կորաքամակ, ժամանակից շուտ ծերացած, այդ տապին գլխաշորով փաթաթված մի կին.

- Կներեք, ընկեր ջան, ոնց տեսնում եմ, Դուք տուրիստ եք...
- Այո, ի՞նչ կա, ի՞նչ է եղել, ի՞նչ ես ուզում:
- Մոտ արի, ականջից բան եմ ասելու...

Հետաքրքրությունից դրդված, ականջս մոտեցրի խոսակցիս բերանին:

- Այն մատադ աղջկան տեսնո՞ւմ ես,- աջ ձեռքն ուղղելով մի հինգ մետր մեզնից հեռու կանգնած մանկամարդ սիրունիկ աղջնակին,- ասաց խոպոտ ձայնով տիկինը:

- Հա, տեսնում եմ, իսկ ի՞նչ կա որ:
- Այն կա որ, պարոն ջան, այդ աղջկաս կարող ես տանել և ինչ որ ուզես կարող ես անել հետը...

Մեկ վայրկյանում արյունը սառեց երակներումս: Չիմացա ինչ պատասխանել: Հետո, միանգամից սրափված, բռնեցի տիկնոց ականջից ու գրեթե բղավելով ասացի.

- Շուտ հեռացիր այստեղից, թե չէ ոտքերիս տակ կառնեմ քեզ հիմա...

Մինչ շուրջս եղած անձինք հարցական հայացքներն ինձ ուղղած, ով զիտե՞՞ ինչ եզրակացություններ էին անում այդ արտասովոր միջադեպից, ես արագորեն շարժվեցի դեպի իմ սեղանը, սիրիացի երիտասարդ զույգի մոտ.

- Կներեք, տղաք, Զեզի մինակ ձգելուս համար...
- Վնաս չունի, պարոն, բայց Դուք տեսակ մը այլայլված եք, ի՞նչ եղավ Զեզի: Հոստեղեն շատ ուրախ, զվարթ զացիք Զեր բարեկամին քով,- ասաց Վարդգեսը:

- Լուրջ բան մը չէ, տղաս... Դուք, վստահ եմ, տեսաք, որ կին մը մոտեցավ ինձ հոս զալուս ատեն, անհաճո հարց մը ուղղեց, այլչափ, ուրիշ բան մը չկա, լուրջի մի առնեք:

Այս պատասխանս, վստահ եմ, չզոհացրեց զույգին: Նրանց իրար նայելն ու խորհրդավոր ժպտալլ դրա խոսուն վկայությունն է:

- Ինչպես կըսեն՝ անցած ըլլա պարոն,- հանգստացնող տոնվ ասաց Վարդգեսը,- բայց Դուք շըսիք ձեր անունը, միայն լսեցինք քիչ առաջ, որ ձեր ընկերութին Զեզի Սահստրո որակեց, ըսել է արվեստագետ եք... ո վ կըլլաք...

- Իրավունք ունիս Վարդգես, այո, արվեստագետ եմ, տղաս: Ազգանունս Անասյան է, պարզապէս Մաեստրո ըսեք ինձ, անունս ալ Հենրիկ է: Սոռնանք ինձ, ես սկիզբեն ըսի, որ մտահոգ տեսք ունիք, խոսեցեք նայիմ, ինչ կա, ինչ չկա: Շատ լավ գիտենք թէ ինչ կանցնի կդառնա Միջին Արևելքի, ի մասնավորի Սուրբո մեջ:

- Քիչ առաջ, Մաեստրո, Դուք կարծիք հայտնեցիք թէ Սուրբ հայերը ապահով և մնայուն կյանք ապահովեցին իրենց համար Հայրենիքի մեջ: Թերևս, ոմանց համար այո, այդպէս է, բայց շատերուն և մեզի համար բնավ ալ այդպէս չէ պարագան,- ասաց Վարդգեսը և շարունակեց,- Ես ոսկերիշ եմ և հայտնի մասնագետ: Հոս, ոսկերչական շուկայի մեջ մեկու մը քով գործի անցա: Մարդը ըսավ. մեկ-երկու ամիս ձրի պիտի աշխատիս, փորձաշրջան է: Երեք ամիս է մարդը չէ վճարած ինձ, հազար ու մեկ մահանաներով, այսօր-վաղը ըսելով ինձ խարեց, դրամներս կերպվ: Մեր ունեցած դրամներն ալ լմննալու վրա են: Զենք գիտեր, թէ ինչպէս պիտի վճարենք գալիք ամսվան վարձքը: Դժբախտաբար, մենք ապագա չունինք հոս, Հայաստանի մեջ:

- Չե, պարոն, ներեցեք Մաեստրո, մենք իրավեն հուսախաք ենք,- ամուսնու խոսքը շարունակեց կինը,- այս օրերուս մենք կսպասենք, որ դրամ զա Ամերիկային, մորաքույրես, որպէսզի եւլուսպական երկիր մը տեղափոխվինք: Գիտեք արդեն, որ Ամերիկան հիմա սուրիական փասփորթով մեկու մը չընդունիք:

Որևէ առարկություն չվերցնող տոնվ ևս մի տաս րոպէ շարունակեցին երիտասարդները իրենց դժգոհությունը հայտնել ինձ լավագույնս ծանոթ հայաստանյան կյանքից, որից հետո միմյանց հաջողություն մաղթելով, սիրով բաժանվեցինք:

... Այսօր արդեն կիրակի է: Ես հրավիրված եմ մի բարեկամի

տղայի հարսանիքին: Եկեղեցու արարողությունը Կոնդի Սբ. Հովհաննես եկեղեցում է, այն կ՝ օրվա ամենաշոգ ժամին, ժամը 2:30-ին: Խնջույքն էլ ժամը 7-ին:

Մինչ եկեղեցի մտնելը որոշեցի մեկ սիզարետ փշացնել: Անկյունում կանգնած ծխում եմ, մեկ էլ տեսնեմ հուշիկ, դանդաղ քայլերով ինձ է մոտենում գեղեցկադեմ, սպիտակից էլ սպիտակ մաշկի գույնով, սպիտակ շրջազգեստով մի աղջնակ.

- Ես Ձեզ անմիջապես ճանաչեցի, քեռի ջան, Դուք երեկվա այն մարդն եք, որ մայրիկիս կոպտեցիք,- ասաց աղջիկն առանց ներկայանալու:

- Որտե՞ղ, ե՞րբ, մենք ծանոթ չենք:

- Երեկ երեկոյան, «Արմենիայի» առօսի կաֆեում, հիշեցի՞ք...

- Այս, հա... ուրեմն քո մայրն էր ինձ առաջարկություն անողը, այդպե՞ս է,- հազիվ զապելով կատաղությունս, ասացի ես:

- Այո, հենց այդպես: Նա ծանր հիվանդ է, ընդամենը մի 5-6 ամսվա կյանք ունի: Ես պետք է նրա դեղերի համար փող ճարեմ, իսկ դեղերն էլ շատ թանկ են: Ես թողել եմ դպրոցը և, և...

- Էլ և մեն չկա, աղջիկս, ինչպե՞ս է անունդ-, արդեն մեղմացած թռափելով զայրույթի զգացումը, հարցրեցի ես:

- Զյունիկ է անունս, Զյունիկ...

- Ի՞նչ գեղեցիկ անուն է, դու այստեղ ինձ սպասիր, ես մտնեմ եկեղեցի, արարողության ավարտից հետո ես կմիանամ քեզ, եղա վ, աղջիկս...

...Ի՞նչ հարսանիք, ի՞նչ պսակ, խելքս-միտքս ձյունաթույր Ջունիկն է: Բավական սիրողական արարողությունը շավարտած, դուրս ելա եկեղեցուց:

- Հը, երկար սպասեցի՞՝, կներես, աղջիկս,- Զյունիկին մոտենալուն պես հարցրի նրան,- դե, հիմա լսում եմ քեզ: Վստահ եմ, զիտես թե մայրիկդ ինչ էր ասել ինձ...

- Գիտեմ, իհարկե, զիտեմ... նա ճիշտ է ասել...

- Ինչպե՞ս...,- սարսափահար եղած բացականչեցի.- այսինքն դու մարմնավաճառ ես, այն ...

- Այո, այո, շուտով տասնինգ կլինեմ: Բայց ես ձեր իմացած

մարմնավաճառներից չեմ: Ես միայն տուրիստների հետ եմ հանդիպում, այն էլ տարիքով մարդկանց հետ, ովքեր սովորաբար խղճում են ինձ և դրամ տալուց հետո ինձ ձեռք չեն տալիս ու բաց են թողնում:

- Ուզում ես ասել, թե դու անմե՞ղ ես, այո՞... այսինքն՝ օրիորդ...

- Ո՞չ, իհարկե, ո՞չ... բայց ինձ համար դա կարևոր չէ, ես արդեն անտարբեր եմ այդ ամենի նկատմամբ: Ինձ համար կարևոր մայրիկիս համար դեղեր ապահովելու է, ինչ ձանապարհով ուզում է լինի:

- Ի՞նչ է, ձեր տանը մայրիկից բացի ուրիշ մարդ չկա՞...

- Ոչ, չկա, հայրիկս գնացել է Ռուսաստան, երբ ես վեց տարեկան էի: Առաջին տարիները դրամ էր ուղարկում: Հետո դադարեցեց: Որոշ ժամանակ անց իմացանք, որ նոր ընտանիք է կազմել:

- Մի քանի վայրկյան կարկամել մնացել էի, չգիտեի անելիքս: Փերու նման այս գեղեցկուիկին շատ այրերի համար երանելի սիրուիկ կարող էր լինել, եթե իհարկե չէր, իսկ հիմա՝ աշքերն ուղղած ինձ, սպասում էր իմ որոշմանը:

- Վստահ եմ, Զյունիկ շան, հիմա դու անորի կլինես, արի թեզ տանեմ մի լավ ճաշարան, միասին ճաշենք, հետո թեզ կճանապարհեմ, հա, դու որտե՞ղ ես ապրում:

- Էրեբունի թաղամասում: Էրեբունի թանգարանը գիտե՞ք, հենց դրա կողքի փողոցում: Բայց, կներեք, ես շատ ժամանակ չունեմ, պետք է ուտելիք հասցնեմ տուն, իսկ երեկոյան՝ «Արմենիա»... գուցե թե Ձեզ նման մի բարի տուրիստ հանդիպի: Այսպիսին է իմ աշխատանքը: Արդեն երրորդ տարին է: Սովորական օրերին հյուրանոցներ, կիրակի օրերին՝ եկեղեցի:

- Լավ, աղջիկս, լավ, ահա, վերցրու այս դրամը և մայրիկիդ համար անհրաժեշտ դեղերը գնիր, իսկ ինձ ոչինչ պետք չէ...

- Մայրիկս երեկ, ամբողջ զիշեր լալիս էր իրեն այդպես վիրավորելու համար: Բայց տեսեք, բախտը մեզ իրար մոտ բերեց... բայց ինչո՞ւ եք այսքան դրամ տալիս և ոչինչ չեք պահանջում դրա դիմաց... Տարօրինակ է...

- Հանգիստ զնա: Գնա, աղջիկս: Աշխատիր մի լավ աշխատանք գտնել, որպեսզի մաքրվես: Գալ տարի ես քեզ կգտնեմ:
- Շնորհակալ եմ, շնորհակալ եմ, հայրիկ... իսկապէ՞՞ և Դուք ոչինչ չեք ուզում ինձանից,- ձեռքը թափ տալով օդում՝ արագորեն հեռացավ Զյունիկը:
- Ոչինչ, աղջիկս, ոչինչ, Զյունաթույր Զյունիկ...
- ... Իսկապէս էլ հաջորդ տարի ես փնտրեցի Զյունիկին: «Էրեբունի» թանգարանի առջևի հրապարակի անկյունի քարին նստած ծերունին պատմեց, որ Զյունիկին բոլոր թաղեցիք զիտեն.
- Ժամանակին շատ լավ երեխա էր,- ասաց նա,- հետո փողոցներն ընկավ: Մայրը մի քանի ամիս առաջ մահացավ, իսկ իրեն էլ հայրը տարավ Ռուսաստան:

*Սեպտեմբերի 8, 2012 թ.,  
Երևան*

ՀԱՅԵՐԻ ԸՆԿՈՒՅԶՋԱՐՇԱՎԸ  
ԼՈՍ ԱՆՁԵԼԵՍՈՒՄ  
(Մի քիչ խնդուք՝ Ամանորից առաջ)

Հայերեն ընկույզ, պոպոկ, կակալ, ձղբպուր (այս վերջինը տարածված է դարաբաղդիների մոտ) և այլ բազմաթիվ հոմանիշներով հայտնի պտղի անունների մեջ ամենատարածվածը «պոպոկ» անվանումն է: Թեև ընկույզ ասելու դեպքում է ամեն մի հայ կհասկանա, որ խոսքը պոպոկի մասին է:

Մենք՝ հայերս, գերազանցապես տիրապետում ենք ընկույզ օգտագործելու արվեստին: Դարեր շարունակ հայերն ընկույզն օգտագործել են բազմատեսակ խմորեղեն-կարկանդակների, շոկոլադների (թուրմ), հալվայի մեջ: Հապա ի՞նչ կասեք պոպոկի մուրաբայի և աննման շարոցի (սուճուկի) մասին.

- Էլ ինչ Նոր տարի առանց պոպոկի և շարոցի...

Այդ համեղ ու սննդարար չոր պտղի գնման գործը՝ «ընկույզ-արշավը» Լոս Անջելեսի հայության շրջանում սկսվում է խանութներում դրա հայտնվելու առաջին իսկ օրից և տևում 2-3 ամիս, անգամ մինչ զալիք Նոր տարի: Եվ հայերն այն առառողջեն գնում են ոչ այնքան իրենց ընտանիքների, որքան Հայատանում թողած իրենց հարազատների համար:

Հիմա զանք «ընկույզացավով» մտահոգ մեր հերոսներին:

...Հոլիվուդի «Ջոնս» (Jones) խանութի մերձակա փողոցներից մեկի նորավարտ շենքի առաջին հարկի մեկ ննջասենյականց բնակարանում իսկական տոնախմբություն է: Սիրիահայ Մանուկ Սիմսիրյանն ու իր կինը՝ տիկին Մաքրուիին, կառավարության դրամական օգնությամբ (Section 8) նոր բնակարան են ստացել: Նրանք՝ երեք արու զավակների և ութ թոռների տեր, գրեթե 50 տարվա ամուսնական ճանապարհ անցած զույգեր են: Ժամ-պատարագի նայող չկա, շնորհավորական և բարի

մաղթանքներով առկեցուն հեռախոսային զանգերը զալիս են աշխարհի տարբեր միջօրեականներից՝ անդադրում ուրախության, խնդրությունների հաճելի մթնոլորտ ստեղծելով լավագույնս կահավորված սենյակում:

Մանուկը Հայաստան էր ներգաղթել Սիրիայից՝ 1960-ական թվականների վերջերին: Քսան տարի Հայաստանում ապրելուց հետո, կնոջ հետ միասին եկել, հաստատվել էր Լու Անջելեսում, այն մտադրությամբ, որ հետագայում էլ մեկիկ-մեկիկ իր շուրջը կհավաքի երեք տղաների ընտանիքներին:

Հանգամանքներն այնպես դասավորվեցին, որ նա կարողացավ միայն փոքր տղայի ընտանիքին բերել «Լու Արմենոս»: Միջնեկը գնաց Ֆրանսիա (աղջիկն այնտեղ էր սովորում), իսկ ավագ որդին ահա 20 տարի է չի կարողանում ծնողներին միանալ:

Խնջույքից հետո, առավոտ կանուխ, երբ արևը նոր էր բացվում, վարպետ Մանուկը լոգարանից ձայն տվեց կնոջը.

- Մաքրուիի, Մաքրուիի, - պատասխան չկա, հաջորդ անգամ, - Մաքրուիի-Մքրուիի ...

- Խենքեցա՞ր, մարդ Աստուծո, ինչո՞ւ կպոռաս, հիմա ի՞նչ պիտի մտածեն դրացիները...

- Ինչ կուգեն թող մտածեն... արքայություն է, պե՛, ասանկ լոգանք առնելը, հայդե, հայդե, դուն ալ ջուր մը ցանե վրադ...

- Ես ատոր ժամանակն ունի՞մ: Այսօր շատ հյուր կունենանք: Ո՞րկե շինեցիր սա Մաքրուիի-Մքրուիին, չե՞ս ամշընար: Բնավ չես օգտագործած այդ անունը:

- Ինչո՞ւ ամշընամ, անուշիկս, նենեիդ անունը Մքրուիի չէ՞ր...

- Երկար ըրիր, պարոնս, հայդե, դուրս ելիր, առ սվոնք, շխնած, ամոք է, ամոք, տարիքեղ ամշըցիր,- այս ասելով Մաքրուիին բաղնիքի մեջտեղում մորեն մերկ կանգնած հաղթանդամ ամուսնու վրա նետեց նրա սպորտային ներքնաշորերը:

- Ինչո՞ւ պիտի ամշընամ, կնիկ, հոս մեզմե զատ մեկը չիկա,

հետո, ի՞նչ է, առաջին անգամ է, որ ինձի ասանկ կը տեսնաս...

- Մի երկարեր, անսամոք մարդ, ինչո՞ւ երեկ զիշեր տղայիդ շախեցիր ամենուն առջև, ինչ է, թե քանի մը գավաթ ավելի խմեր էր:

- Քանի մը գավաթ չեր, Մաքրուիի, շատ էր: Կը հիշե՞ս, Հովհաննես Բաղայանը երգ մը կերգեր, հիմա երգեմ՝ դուն ալ մտիկ ըրե,- ոգեորված իր հայտնագործությունից, առանց սպասելու կնոջ հրամանին, Մանուկն իր հուժկու բամբ ձայնով սկսեց երգել՝ մի հատը լավ է, երկրորդը բավ է, բայց լավ իմացիր՝ երրորդը ցավ է...»

Մի քանի վայրկյան՝ երգել-պարելուց հետո, մեր Մանուկ աղան փլվեց բազմոցին:

- Զգե քե՛, ձգե, կնիկս, քիչ մը զվարձանանք: Այսօր տոն է մեզի համար: Քանի տարի սպասեցինք այս օրվան:

- Քեզի ո՞վ արգիլեց, որ զվարձանաս, քանի անգամ ըսած եմ քեզի, որ չերգես, դուն ականջ չունիս, դուն միայն խոսե, մի երգեր: Պատիկ դիտողություն մը ըրի տղուդ վերաբերյալ՝ երգով-պարով պատասխանեցիր: Ի՞նչ եղեր է որ, ինքը խմեց, կնիկը քշեց օթոն: Հոս բոլոր կիներն ալ օթո կը վարեն: Բան մը չըսես, խոսք չեմ ուզեր, հազվե և խոհանոց եկուր, սուրճը գազօճախին վրան է, խմենք և «Ձոնս» մարքետ երթանք, գնումներ ունիմ ընելիք, այսօր շատ եկող-գացող կըլլա:

Հազիվ էր վարպետ Մանուկը սուրճի առաջին կումն արել, երբ նկատեց սեղանի անկյունում դրված թուրքական արտադրության հալվայի դեռևս չբացված տուփիը.

- Աս հելվեն ուրտեղե՞ն մեջտեղ ելավ, կնիկ... ես քանի անգամ ըսած եմ, որ թրքական ապրանք այս տունը պիտի չմտնա, վերցուր սեղանից, ո՞վ բերավ, ըսե նայիմ...

- Պոլսահայ Մաննիկը բերավ,-վախսորած հայացքով, աչքերը հեռացնելով ամուսնուց, ասաց Մաքրուիին և շարունակեց, քանի մը շաբաթ առաջ Պոլիս գացած էր, անկե բերած է:

- Ինչ որ է, մեկու մը նվեր տուր, թեն ես ալ խենք կըլլամ հելվեյին համար, համա շաբարս համը կհանե: Քիչ առաջ «Ձոնս»

պիտի երթանք ըսկիր: Դուն այդ խանութին այս շաբթան թերթը նայեցա՞ր, ի՞նչ աժանցած ապրանքներ կան: Թերթը տուր նայիմ, անզամ մը աչքի անցունեմ:

Շաբթաթերթը բացելուն պես, հենց առաջին եջի վերին աջ անկյունում աչքին ընկավ «Walnuts» (ընկույզ) \$ 0.99 ազդը.

- Կնի՞կ, շուտ ըրե, սա ակնոց գտիր, չեմ հավատար, ընկույզ՝ և փառնդը իննիսունինը սե՞նթ,-անհավատալի քան մըն է, թերևս 99-ին առջեկի մեկ թիվը մոռցած են դնել, շուտ, շուտ գտիր ակնոց:

- Առ սա գրողին տարած ակնոցը: Ապրանքիդ տեր եղիր:  
- Չե, իրավ է, կնիկ, հստակ գրված է՝ «Walnuts» (ընկույզ)՝ \$ 0.99,- մի քանի անզամ ազդը նայելուց հետո բարձրաձայնեց Մանուկը:

Սիմսիրյան ամուսինները մի քանի վայրկյան անց, իրենց 12 տարվա «Կամքի» մեքենայով հասան «Զոնս» խանութ.

- Աս ի՞նչ քան է, կնի՞կ, առտու կանուխ, այս ժամուն և օթոն կեցնելիք տեղ չկա:

- Կեցիր, ես իշնամ, դուն քովի փողոցը փարք ըրե և եկուր:  
Երբ մի 10-15 րոպե անց Մանուկը մտավ խանութ, դժվարությամբ գտավ կնոջը՝ խմբված բազմության մեջ.

- Ու՞ր ես, կնի՞կ, մեռա քեզի փնտրելով...  
- Ու՞ր պիտի ըլլամ, հոս եմ, ամենն ալ ընկույզի կսպասեն: Երեկվանը՝ նոյն օրն իսկ, քանի մը ժամվան մեջ լմնցեր է: Հիմա նորեն պիտի բերեն եղեր:

- Հոս կեցիր, տեղեղ չշարժիս, խանութին մեջ մեքսիկացի գործավոր մը կա, զիս լավ կը ճանչնա, երթամ փնտրեմ, ան կը զիտնա, թե երբ պիտի բերեն ընկույզի նոր փարթին:

Մի քանի պտույտ անելով խանութի մեջ, Մանուկը գտավ գործավորներից մեկին և հարցրեց.

- Ամիզո, ուե՞ր իգ Անտոնիո... (բարեկամ, ո՞ր է Անտոնիոն):

Այդավան անզերենը վաղուց էր սովորել մեր հերոսը և մեքսիկացուց ճշտելով, որ Անտոնիոն պահեստում է, զնաց և պահեստի առաջ կանգնեց. «Ուր որ է դուրս պիտի ելլա», - մտածեց:

Իսկապես էլ, մի քանի վայրկյանից՝ բանջարեղեն-մրգեղենի արկդերով լի սայլակը դռնից դուրս հրելով, պահեստից ելավ Անտոնիոն.

- Հա՞յ, Անտոնիո, ուե՞ն իզ քամինգ,- ընկույզ բարի անզլերենը շիշելով մի քանի անգամ կմկմալուց հետո ասաց հայեն «պոպոկ» եզրույթը:

- Օ՛, յա...,- ձեռքը վեր բարձրացնելով ասաց Անտոնիոն.- Ես հասկանում,- ցույց տալու համար, որ հայերեն էլ գիտի,- Ժամ 11-ին:

- Մաքրուիի, ի՞նչ կըսես, սպասե՞նք,- շրջվելով կնոջ կողմը՝ հարցրեց Մանուկը,- տասնմեկ կըսեն, բայց ո՞վ գիտե, թե երբ պիտի զա, դեռ մեկուկես ժամ կա մինչև այդ ժամը: Հոս կեցիր, հիմա բան մը կմտածեմ: Կրկին երթավ տղային քով:

- Հայտե՛, կնիկ, երթանք, ես ամեն բան կարգադրեցի, պետք չունինք 2-3 Ժամ հոս-հոն շրջել: Հոգ մի ըներ, Անտոնիոյին հեռաձայնին թիվը առի, 12-ի ատենները հեռաձայն կընենք:

- Աֆերիմ, ինչ աղվոր տղա է եղեր սա մեքսիկացին: Հեռաձայնին թի վն ալ տվավ...

- Այո, տվավ, մեքսիկացի է, ինչ է՝ չեմ գիտեր, Ամերիկայի հարավեն եկողները ամենն ալ իրարու կնմանին:

Ժամը 12-ի մոտ, Մանուկը հեռաձայնեց Անտոնիոյին և Ճշտեց, որ դրանից մեկ Ժամ առաջ ընկույզը բերել են.

- Շուտ ելլանք, կնիկ, ընկույզը բերած են: Հիմա նայինք, թե ինչպես պիտի կարենանք ձեռք ձգել այդքան ժողովուրդի մեջեն: Դուն վար իշիր օթոյեն, զնա կարգի կեցիր, ես քովի փողոցներուն մեջ տեղ գտնամ օթոն փարք ընելու համար:

Այս անգամ բավականին երկար տևեց մեքենայի համար կայանելու տեղ գտնելը: Մի տան առջևով անցնելիս Մանուկը տեսավ, որ տանտիրուիխն ավելով մայթի եզերքն էր մաքրում: Մի պայծառ միտք առկայծեց պարոնիս ուղեղում: Մեքենան անմիջապես կանգնեցրեց և դրան ապակին իջեցնելուց հետո, աղաշական տոնով ասաց.

- Աղջիկս, ի՞նչ կըլլա, թույլ տուր, որ օթոս կես Ժամով մը բակիդ մեջ փարք ընեմ, «Զոնս» պիտի մտնամ, ամբողջ թաղին

մեջ կենալիք տեղ չիկա:

- Խոդրեմ, հայրիկ ջան, երեկ էլ էր եղաւես... պոպոկ ես առնելու, չէ՞..., - Ժպտալով ասաց երիտասարդ կինը:

- Հա, հա, աղջիկս, պոպոկ պիտի առնենք, կինս հոն՝ խանութըն է:

- Վա՛յ, քոռանամ ես, շուտ արա գնա, հայրիկ ջան, մեղք ա կնիկը, կես ժամ չէ, կուզես երկու ժամ հետո արի, մեկ ա, մինչև իրիկուն եկող չկա:

Հոգին բերանը հասած, երկար քայլելուց հետո, քափ քրտնքի մեջ կորած Մանուկ աղան հազիկ իրեն զցեց «Զոնս» մարքեր:

- Ի՞նչ եղար, այ մարդ, մեռա քեզի սպասելով, միտքես ամեն գեշ բան անցավ:

- Մի հարցներ, Մաքրուիի, հոգիս ելավ տեղ փնտրելեն, վերջեն անուշիկ տիկինի մը տունին բակը կեցուցի օթոս: Տեսա, որ տունին առջևը ավելով մայթին եզերքը կմաքրե, օթոս կեցուցի և խնդրեցի, որ կես ժամվան համար արտոնություն տա օթոս կեցնել իրենց բակին մեջ:

- Աղվոր ալ միջոցը գտեր է պարոնս... մեկուսի՝ անամոթ... Սոսկալի խառնակ վիճակ է, պոչ բռնել, կարգի կենալ, անանկ բան չիկա,- ասաց Մաքրուիին:

- Աս ի՞նչ ըսել է, ի՞նչ է, օրենք բան չիկա՞:

- Ես համբերություն չունիմ, երիկս: Եկուր երթանք, վազ անցանք սա ընկույզեն, վաղը մյուս օր ընկույզին գինը առաջվանը կըլլա, այն ատեն կառնենք:

Առանց կնոշը բան ասելու Մանուկն անմիջապես քայլերն ուղղեց պահեստի կողմը՝ Անտոնիոյին փնտրելու: Քիչ անց, արագ-արագ քայլքով մոտեցավ կնոշը.

- Հայտե՛, կնիկ, գացինք քեշիրին քովը, Անտոնիոն քիչ վերջ 50 փառնդնոց խոշոր տոպարակը, ջվալ կըսեն, ինչ կըսեն, պիտի բերե: Անցյալ տարի ալ նույնը ըրինք, կը հիշե՞ս, սակայն այն ատեն փառնդը երկու դոլարով առինք:

Հինգ վայրկյան չանցած երանելի ընկույզի խոշոր տոպարակը «Զոնս»-ի մուտքին էր: Մանուկը գնաց մեքենան բերելու:

- Հոգնած ես երևում, հայրիկ ջան, եսքան տեղ քայլելով ես

եկել, բա դու մեղք չե՞ս, մի սուրճ դնեմ խմի, հանգստացի, հետո կգնաս,- ասաց ծանոթ երիտասարդ կինը:

- Շնորհակալ եմ, աղջիկս, ուրիշ անգամ, կինս հոն՝ խանութին առջելը, ինձի զը սպասե,- ասաց Մանուկն ու նստեց մեքենան: Երկու-երեք վայրկյանից խանութի դռանն էր:

- Մարդ, կեցիր, մեկու մը կանչեմ, թող օգնե, մինակդ ինչպե՞ս պիտի շալկես այս ծանր բեռը,- բացականչեց Մաքրութին՝ տեսնելով, որ ամուսինը պատրաստվում է ծանրաբեռ ընկոյզի պարկը դնել ուսերին:

Մանուկը չսելու տալով կնոջ հորդորը, մեկ շնչով վերցրեց ծանր բեռը և նստեց մեքենայի մեջ.

- Ասանկ կըլլա, անուշիկս, ին յ զիդի երիտասարդություն,- հաղթական հայացքը ուղղելով կանգնածներին, նստեց մեքենան:

- Շուտ ըրե, տիկինս, սուրճ մը հասցուր, մեռա,- ոտքը հազիվ տան մուտքին դրած՝ բացականչեց Մանուկը,- եթե դուն հետո չըլլայիր, քիչ առաջվան կնոջը հետ պիտի խմեի սուրճը... ինչ ալ անուշիկ, պուպրիկի պես կնիկ մըն էր...

- Որչափ շուտ մտերմացե՞ր ես, ժամադրություն մը շառի՞ր արյուք, չխբնած, անամոթ մարդ և չես ամշընար, հպարտությամբ ալ կպատմես, տարիքիդ նայե...

- Ինձի նայե, կարծեմ թե նորեն սխալ ճամփուն վրան ես, փոխարենը երթալ կնոջը քով շնորհակալություն հայտնելու, ելեր պատմություն կը շինես, ամոր է, կնիկ, ամոթ:

- Լավ, լավ, վազ անցիր, հայտե, գործի անցնինք,- զգալով որ մի քիչ շափն անցավ՝ կարձ կապեց տիկինը:

Երեք օր շարունակ վարպետ Մանուկը զբաղված էր ընկոյզ կոտրելով: Չորրորդ օրը սուրճի սեղանի շուրջ.

- Ապրիս, ամուսինս,- Մանուկի գլուխը շոյելով ասաց Մաքրութին,- իինգ կիլո զատե՝ Երևան, տղայիդ դրկելու համար, նույնքան ալ այստեղի տղութ՝ Վարդանին ընտանիքին համար, մեկ կողմ դիր, մնացյալն ալ՝ թող մեզի մնա:

Մանուկը դեռ չեր հասցեկ որևէ խոսք ասել՝ հնչեց հեռախոսի զանգը: Վարպետը արագորեն վերցրեց լսափողը:

- Նշան, դո՞ւն ես, ինչ կա, առտու կանուխ ի՞նչ է եղեր նորեն... այո, լավ, հասկցա, տունն եմ, տեղ չունիմ երթալիք:

-Ի՞նչ կա, ինչո՞ւ պիտի գա Նշանը, այդ խաղամոլը,- հարցրեց Մաքրուիին:

- Տղաքը կարոտցեր են զիս, երեք օր է կեղրոն չեմ զացած: Ըսամ որ, շատեր բացակայած են այս քանի մը օրը, հավանաբար անոնք ալ մեզի պես ընկույզ գնելով և միջուկը զատելու գործով կրնան զբաղած ըլլալ:

Որոշ ժամանակ անց, հայկական խոհանոցից գնված քերաբ-խորովածով և աղանդերներով ծանրաբեռ, ուստա Մանուկի երեք ընկերները ներխուժեցին նրա բնակարան:

- Աչքերնիդ լուս, թող մեր ոտքը խերով ըլլա այս նոր բնակարանեն ներս, բարով վայելեք,- ասաց նիհարակազմ, երկարահասակ, Մաքրուիու ասած խաղամոլ Նշանը:

- Ես և Վահագն կը ենք միանում պարոն Նշանի մաղթանք-ներին, միայն թե առողջ լինեք և երկար տարիներ կարողանաք վայելել հիանալի հարմարություններով հարուստ այս բնակարանը,- սա կը Երևանի համալսարանի նախկին դասախոս Վազգեն Ենոքյանն էր:

Երկու-երեք ժամ ուտել-խմելուց հետո բացվեց բլուտի սեղանը, որի մի անկյունում տիկին Մաքրուիին ընկույզով լի հախճապակե աման էր դրել:

- Ես քանի վախտը ուր որ երթաս՝ պոպոկ դեմ կենեն, ես ի՞նչ պոպոքացավ է քոնե մեր հայերին, ուր որ երթաս՝ պոպոկի մասին կը խոսան. պոպոկ առա թ, զիտե՞ս, «Զոնսում» 99 սենթ ա, հա, պոպոկ, հա պոպոկ, հետո կը պոպոկ կը դնեն սեղանին,- ասաց Վահագը:

- Նախ՝ պոպոկ չէ, բարեկամս, ընկույզ է, և հետո՝ ինչո՞ւ կայպանես հայերուն, որ այդքան ընկույզ կառնեն, դուն, ի՞նչ է, Հայաստան ընտանիք, բարեկամ, չունի ս, որ անոնց ընկույզ դրկես Նոր տարվան այս օրերուն, որտեղ ընկույզին գինը մեր դրամով, կիլոն 40 դոլարի կը հասնի,- ասաց տանտերը:

- Չէ, չունեմ, ես մենակ մարդ եմ ես աշխարհում, ոչ կը պոպոկ եմ սիրում,- ասաց Վահագը:

- Ատոր համար այլ խելք չունիս,- հոհոալով խոսքի մեջ ընկավ Նշանը,- զիտէ ս, որ ընկույզը մարդուս խելքը կավելցունէ, առ սա ընկույզը և նայէ, ճիշտ ուղեղի ծալքերուն կը նմանի:

- Ճիշտ է ասում Նշանը,- սա կ համալսարանի նախկին պրոֆեսորն է,- ընկույզը կամ որ միննույնն է՝ պոպոկը, հարուստ է վիտամիններով, մետաղներով, օգնում է շաքարով հիվանդներին, դանդաղեցնում է ծերացումը, և, սա արդեն քեզ է վերաբերվում, պարոն Նշան,- ընկույզը օգնում է տղամարդու սեռական կարողությունը բարձրացնելուն, այնպէս որ, եթե օրական 7 ընկույզ ուտես՝ ասածիդ պէս, «ամեն ինչ բուբայի պէս կըլլա...»:

Պրոֆեսորի վերջին արտահայտության վրա սրտաբուխ ծիծառի մի այնպիսի հզոր ալիք բարձրացավ սենյակում, որ տանտիկինը անհանգստացած, խոհանոցից շտապեց տղամարդկանց մոտ.

- Ի՞նչ եղավ, Մանուկ, այս ի՞նչ աղմուկ է, դրացիները հիմա ի՞նչ կմտածեն:

- Մտահոգիչ ոչինչ չիկա, տիկին Մաքրուիի, տղաներն իրենց երիտասարդությունը հիշեցին,- Մանուկի փոխարեն պատախանեց պրոֆեսորը և շարունակեց,- մեր և մնացած հայ ընտանիքներում այս օրերին պատկերը նույնն է: Բոլորի մոտ կը ընկույզացավը կա ավելի կամ պակաս չափով: Բոլորն կը ցանկանում են տնտեսապես օգտակար լինել Հայաստանում ապրող իրենց հարազատներին և բնավ կը մեղադրելի չէ, որ նրանք իրենց պահանջածից ավելի ընկույզ են գնում: Ես ընտանիք զիտեմ, որ երեք 50 փառնդանոց ընկույզով լի պարկ է գնել: Երեք զավակի բազմանդամ ընտանիքներ ունի Երևանում: Բա նրանց չօգնի տոնական այս օրերին, որպեսզի տան կանայք կարողանան ընկույզով խմորեղեններ պատրաստել: Շաքար, բրինձ, սիսեռ, քաղցրավենիք, ընդեղենների շաքրում կը ամենակարեւոր՝ ընկույզ չուղարկի, են կը մաքրված:

Իրական ճանի վերածված պրոֆեսոր Ենոքյանի ելույթը խորը տպավորություն բողեց ներկաների վրա: Ոչ մի ձայն, ոչ

մի ծպտուն կամ առարկություն: Տեսնելով, որ բավական լուրջ է մքնոլորտը, պրոֆեսորն անցավ կատակի:

- Դե լա վ, այդքան մի լրջացեք: Ուզում եմ մի հարց ուղղել բոլորիդ. ինչպես ու է կոչվում ընկույզ կոտրելիք գործիքը:

- Կոտրելիք,- ասաց Մանուկը,- կամ ալ ընկույզ կոտրելիք:

- Կոտրելիքը հատակ չէ, ի՞նչ բանի կոտրելիք:

- Պոպոկաշարդիչ,- սա էլ Վահագն է:

- Վատ չէ, Վահագ, բայց երկար է բառը... լավ, լավ, ես կասեմ ճիշտ անվանումը, որը շատ բնորոշ է ընկույզի համար: Այսպես ուրեմն. ընկույզ կոտրելու գործիքի անվանումն է «Ճրթան»: Լավ է, չէ՞: Ընկույզը կոտրելիս ի՞նչ ձայն է գալիս՝ ճրթ-ճրթ, ուրեմն, չափազանց բնորոշ անուն ունի ընկույզ կոտրելիք գործիքը: Դե, ուրեմն, բարեկամներ, ուրիշներին էլ սովորեցրեք «Ճրթանը», թող մեկ բառ էլ մտնի մեր հարուստ բառապաշարի մեջ: Այժմ եկավ պահը բլուտ խաղալու:

Հեկտեմբերի 5, 2018 թ.,  
Լու Անջելես

## ԱՄԱՆՈՐԻ ԳԻՇԵՐԸ ՌԱՏԻԿԱՆԱՏԱՆԸ

... 1953-54 թ.թ. ուսումնական տարին նոր էր սկսվել և մեր ավարտական դասարանի յուրաքանչյուր աշակերտ մտահոգված էր իր ապագա ծրագրերով: Դպրոցն ավարտելուց հետո ուր գնալ, ի՞նչ անել, ի՞նչ մասնագիտություն ընտրել:

Հայրիկս համառորեն կառչած էր այն գաղափարին, որ իմ ապագան լավագույնս կարող է դասավորվել միայն ու միայն հայ մշակույթի և գրականության անդաստանում:

- Ի՞նչ ես ընկել երաժշտության եսլից, - ասում էր նա, - քո իսկական կոչումը գրականությունն է, ո՞վ է տեսել, որ որևէ մեկը երաժիշտ դառնա 17 տարեկանից հետո, այն էլ՝ դիրիժոր: Էլի սիրիր երաշտությունը, ազատ ժամերիդ գրադվիր դրանով:

Ես անշուշտ գիտեի, որ նա իրավացի էր, սակայն անհագ մղումը դեպի դասական երաժշտությունը ինձ հանգիստ չէր տալիս, չէր թողնում այլ որոշում կայացնել:

Չատ պատահական իմացա, որ Արաբկիրի Այլումինի գործարանին կից ստեղծվել է գիշերօթիկ դպրոց՝ հիմնականում գործարանի բանվորների համար: Կնշանակի տարիքային սահմանափակում չկար դպրոց ընդունվելու համար:

Մի գեհենական միտք ծագեց մտքումս. իր, Հենրիկ, ի՞նչ ես ասում, չզնա՞մ ընդունվեմ այդ դպրոցը, մի ավարտական վկայական էլ այնտեղից ձեռք կբերեմ. մեկով կկարողանամ դիմել համալսարան, մյուսով՝ երաժշտական ուսումնարան:

Մի քանի օրվա մտածմունքից հետո գործի անցա: Գիշերօթիկի տնօրենը, բարեհամբույր, 40-50-տարեկանի մոտ, վտիտ մարմնով, սլացիկ հասակով մի տղամարդ՝ դիմումս կարդալուց հետո, հարցրեց.

- Տղա ջան, այդ ի՞նչ պատճառով ես թողնում ցերեկային նորմալ ուսումնական և ցանկանում ավարտական վկայական ստանալ ինչ որ անհայտ գիշերօթիկ դպրոցից: Այն կարող է քեզ տիհա-

Ճություններ պատճառել բարձրագույն ընդունվելիս:

- Ըստ իս, ընկեր Սուրբիայան, կարևոր զիտելիք ունենալն է: Բացի այդ, ես աշխատանքի կարիք ունեմ, մեր ընտանիքի նյութական վիճակը շատ ծանր է (որն իրականություն էր), հայրիկիս հանել են աշխատանքից՝ պատերազմի ժամանակ գերի եղած լինելու պատճառով:

Այս խոսքերիս վրա տնօրենը բավական ժամանակ լրեց: Քիչ անց, սեղանին հակված զլուխը բարձրացրեց ու ասաց.

- Ամեն ինչ պարզ է երիտասարդ, որ ընդունված ես, բույր-մուլք պետք չէ, վաղվանից արի դասերիդ: Միայն իմացիր, որ քո տարիքին աշակերտ չկա ավարտական դասարանում, բոլորը 30-ից բարձր են, ընկեր չես ունենա:

Բայց ես գտա, գտա իմ ընկերոջը, ավելի ճիշտ՝ ընկերուիուն: Էզլանտինա էր անունը, տարօրինակ մի անուն, որ երբեւ չէի լսել: Ես, որ ահավոր մոռացկոտ եմ անուններ հիշելու մեջ, վաթսուն և ավելի տարիներ մեխված է այդ անունը ուղեղում ու դա այն պատճառով, որ բարի, գորովագութ, երկու զավակների մայր, ֆրանսահայ կնոջ ամուսնու անունը Սարգիս էր:

32 տարեկան էր Էզլանտինան, ինչպես ինքն էր ասում, հիանալի ամուսին ուներ խառատի մասնագիտությամբ, դարձյալ ֆրանսահայ, որի խելքն ու միտքը Ֆրանսիան էր, որտեղ թողել էր ողջ գերդաստանը, և հետևելով նշանածի ընտանիքին, միայնակ ներզադրել էր Հայաստան:

- Հոն, Էջմիածնուն տաճարում պիտի ընենք պսակին արարողությունը, - ասել էր նա՝ Հայաստան մեկնելուց առաջ:

Անմիջական, անքոնազբու բարեկամություն ստեղծվեց իմ և Սարգսի ընտանիքի միջև: Հաճախ, երեկոյան ուշ ժամերին, ես էի ուղեկցում Էզլանտինային իրենց բնակարան, որը հեռու չէր դպրոցից: Ոչ շատ հաճախ, բարձրանում էի իրենց նեղլիկ, մեկ սենյականց բնակարանը, որտեղ, ինչպես ասում են՝ «ասեղ զցելու տեղ չկար», մեկ բաժակ թեյ խմելու համար:

1953 թվականի տարեմուտի օրերն էին: Ընդամենը կես տարի էր անցել դահիճ Ստալինի մահից ու մի տեսակ մաքուր օդ կարելի էր շնչել: Յուրաքանչյուր հայ ընտանիք՝ այս կամ այն

կերպ, իր ընտանեկան հարկի տակ նշեց տարեմուտը:

Նոր տարվա հաջորդ օրն է, գնում եմ զիշերօթիկ դպրոց: Էզլանտինան չկա, չի եկել դասի: Նման բան երբեք չէր եղել: Անհանգստացած եմ. կարող է ինչ որ բան է պատահել, մտածում եմ, ու թույլտվություն խնդրելով ուսուցչից՝ դուրս եմ գալիս դասասենյակից:

Էզլանտինայի բնակարանի մուտքին երկար սպասեցի մինչև դուռը բացվեց:

- Եկո՞ւ որ տղաս, եկո՞ւ որ, Հենրիկ, տես թե ինչ փորձանքի եկած են մերինները,- ասում է Էզլանտինայի մայրը:

- Ի՞նչ կա, ի՞նչ է եղած... պատմեցեք նայիմ, հայդե՛, արագ... Սարգիս, քեզմե սկսինք,- մտահոգված հարցնում եմ ես:

- Ծո՞ւ, եղբայր, սկսինք՝ ինչե՞ն սկսինք,- բառերն իրար խառնած, ետուդարձ անելով փոքր սենյակի մեջ, բղավում է բարեկամս,- ի՞նչը սկսինք, եղբայր... Վերջացնել է պետք այս ամենը... այս ինչ երկիր է պե՛, Աստված իմ... հալլա, հալլա:

- Ի՞նչ եղած է, բարեկամ,, բան մը ըստ՝ հասկընանք, լա՛վ, դուն ըստ Էզլան,- փաղաքշական շեշտ դնելով կնոջ անվանը՝ դիմեցի նրան:

- Ամոք է, ես չեմ կրնար պատմել, թող ինքը պատմե եղածը:

- Հայրիկ, ի՞նչ կըլլա, քանի մը վայրկյանով տղոց հետ խոհանոց գացեք,- հաշտվողական տոնով ասաց Սարգիսը:

- Միրով տղաս, ինչո՞ւ չէ, հայդե, Կարապետ, տղաք, դուք ալ-ասաց Էզլանտինայի մայրը և ամուսնու ձեռքից բռնելով առաջնորդեց խոհանոց:

Երկար լոռությունից հետո, այսպես սկսեց իր պատմությունը վարպետ Սարգիսը.

- Բնավ շրնդմիշես, Հենրիկ, կաղաչեմ: Այսպես ուրեմն: Ինչպես ամեն հայու ընտանիքում, մեր տունին մեջ ալ Նոր տարին եկավ: Սովորաբար, դեկտեմբերի 31-ին զիշերը, 12-են ետք, ամեն մարդ քովի դրացիին կայցելե: Մենք որեւէ մեկը չունինք այցելություն տալու: Մեր դրացիները զյուղեն եկած անհամակրելի մարդիկ են, իրենք մեզ չեն փափագել, մենք ալ

իրենց: Մենք ալ որոշեցինք, երիկ-կնիկ, ձեռք-ձեռքի բռնած ելլել դուրս և քիչ մը պտտիլ մեր, սա քովի այզի չըլլալիք աղ-քանոցին մեջ:

- Է՛, վերջը, ես հասկըցա մոտավորապես, թե ինչ եղած պիտի ըլլա, - ընդմիջեցի ես:

- Դուն բան մըն ալ չհասկըցար, շարունակությունը մտիկ ըրե: Հազիվ քանի մը վայրկյան նստած էինք կոտրած-թափած նստարանի մը վրա, երբ վրանիս խուժեցին երկու ոստիկան, որոնցմե մին բրտորեն ձեռքս վար առավ կնոջս ուսին վրայեն և սկսավ պոռալով լուտանքներ թափել վրաս:

- Է՞ ի՞նչ ես անում, այ մարդ, չես ամաչո՞ւմ, են ել հասարակական վայրում, տարիքիցդ ամաչիր:

- Ի՞նչ ըրած եմ, պարոն ոստիկան,- փորձեցի ձևով մը պաշտպանվիլ:

- Ի՞նչ, պարո՞ն, «պարոն»-ը քեռիդ ա... ինչպես երեսում ա, նրանցից եք, հա՞ , մի խոսքով՝ «ախպարներից», եի... .

- Հա, այո, «ախպարներեն», ի՞նչ է, ամո՞ք է «ախպար» ըլլալը, - հպարտությամբ ըսի ես:

- Չե, ընչի՞ է ամոք, բայց հետաքրքիր է, ո՞ր երկրից եք:

- Ֆրանսայեն, այսպես պատասխանեց եզրանը, որ պաղեն կը սրբարթար:

- Հա՞ , դե այդպես ասեք, եի, դրա համար ել հասարակական վայրում լրբությամբ եք զբաղվում: Սա ձեր Փարիզը չէ: Այստեղ կարգ կա՞ , օրենք կա ...

- Ի՞նչ լրբություն, ինչ բան, մենք ի՞նչ ըրած ենք, մենք ամուսիններ:

։ Չե, վերջացնենք: Վեր կացեք, գնում ենք միլիցա (ոստիկանատուն): Այստեղ կպարզենք, թե ինչ սորտի (տեսակ) մարդիկ եք, - աս ալ-մյուս ոստիկանն էր:

- Լավ, լավ, Խոսրով,- ըսավ առաջին ոստիկանը, - գուցե իսկապես ամուսիններ են: Նոր տարվա գիշեր է, մեղք են, թողնենք, թող գնան:

- Բա չպարզե՞նք թե ովքեր են: Պասպորտ-բան, որևէ փաստաթուղթ ունե՞ք Զեզ մոտ, - հարցուց նախորդ ոստիկանը:

- Բարեկամս, Նոր տարվան գիշերը ո՞վ փասփորթ կպտցնե իր հետը,- ծաղրական ձևով ըստ ես:

Ըսդհանուր հայտարարի չգալով, ամուսիններին տանում են ոստիկանատուն: Մինչև առավոտյան չորսի կողմերը ամուսիններին չի հաջողվում դուրս պրծնել ոստիկանատնից: Տնից բերված անձնազրերի և ամուսնության վկայականի շնորհիվ, նրանք ազատվում են ժամանակավոր կալանքից:

Այդուհետ մեր բարեկամությունն առավել ամրապնդվեց ...

... Երկրորդ ավարտական վկայական ձեռք բերելու իմ երազանքը հօդս ցնեց հունվարի կեսերին: Գիշերօթիկ դպրոցի տնօրենը ինձ կանչեց իր մոտ և մեր միջև տեղի ունեցավ հետևյալ գրույցը.

- Անասյան, ուզո՞ւմ էիր երկու ավարտականի տեր դառնայ, հա՞ , չէ, չեղավ, եղբայր: Դու այդքան միամիտ տղա չես երևում, բայց ինչպես տեսնում ես, ընկար ծուղակը: Վնաս չունի, ես բարյացակամ եմ տրամադրված քո նկատմամբ: Քո միամտությունն էլ բարությունից է զայխ: Ես Լուսավորության մինիստրությունից ստացել եմ այս ուսումնական տարին ավարտող բոլոր շրջանավարտների անունները: Քո անունը Շիրվանզադեի անվան դպրոցից ատեստատ (*վկայական*) ստացողների ցանկի մեջ է, այս մասին ի՞նչ կասես:

- Ես, ես մարդ գիտեմ, որ երկու ատեստատ ունի, բայց դա կարևոր չի, ես ներողություն եմ խնդրում, որ Ձեզ զցել եմ թյուրիմացության մեջ:

- Ինձ համար ոչ մի վտանգավոր հարց չկա: Քեզ հետ ունեցած գրույցների ժամանակ ես հասկացել էի, որ դու կազմավորված անհատ ես, ի՞նչ կարիք կար ժամանակ կորցնել:

Իմ սրտաբաց պատմությունից հետո նա ներեց ինձ և մենք դարձանք բարեկամներ: Հետազյում, երբ նա մի այլ ուսումնական հաստատության տնօրեն էր, 1957-ին ինձ հրավիրեց ուսանողական երգչախոսմբ կազմելու և ուսումնական չորս տարիներս անցան նրա հաստատության հաշվին տրվող նյութական աջակցության ներքո: Էզլանտինան և Սարգիսը մնացին որպես մտերիմ բարեկամներ և ինձնից առավել շատ էին

ուրախանում իմ ձեռք բերած հաջողություններով:

Եվ մի օր, 60-ական թվականների սկզբներին, երբ ես էլ արդեն ընտանիքի տեր էի, Սարգիսը եկավ մեր տուն: Տեսա, որ շատ անտրամադիր է, մի տեսակ մտացրիվ: Նստեց լուս, անզգայցած: Սուրճ խմեցինք, որից հետո «լեզուն բացվեց».

- Դիմում եմ տված ֆրանսիա տեղափոխվելու,- ձայնի մեջ վճռական շեշտ դնելով ուզեց շարունակել, ընդհատեցի.

- Ի՞նչ, ինչո՞ւ, դու լավ աշխատանք ունես, լավ ընտանիք, հարզված ու սիրված ես քո շրջապատում:

- Հենրիկ, դուն իրավացի ես, այդ ամենը կա, բայց ես տուն չունիմ, տուն: Եղածը մեկ սենյակ է, գիտես: Չորս հոգով մեկ սենյակում կը քնանանք, եթե կարելի է քուն կարծել, տղաքն ալ՝ մեծան այլս, ծնողքս ալ՝ խոհանոցը... ինչպես յոլա կերթանք՝ չեմ գիտեր: Դուն չես կըրնար հասկընալ, թե ինչ հոգեկան վիճակի մեջ ենք ամենքս: Այս տարիքիս, այսքան տարիներե ետք՝ դեռ կնոջս հետ մեկ անկողնուն մեջ պառկած չկամ, դրւնա ս հասկընալ, թե ինչ ըսել է ատիկա: Ոստիկանության դեպքը հիշե: Մենք ի՞նչ պետք ունեինք ձմեռվան սառնամանիքին, Նոր տարվան գիշերը փողոցները շրջելու:

- Բարեկամս, դու մինակ չես: Նույն վիճակում է եղել նաև մեր ընտանիքը: Մեր տան մեկ սենյակը մշտապես զբաղված է եղել վարձակալներով: Եվ մինչև Ձեզ հետ ծանոթանալը, զրեթե տասը տարի, մեր ընտանիքն ապրել է մեկ սենյակում: Թե ինչ հասկացան ծնողներս իրենց երիտասարդության տարիներին, բառերով չես կարող արտահայտել: Բնակարանային նման իրավիճակ ունեն հազարավոր ընտանիքներ, բայց դա պատճա ո է, որ ձգեն հայրենիքը և գնան:

- Ի՞նչ ըսիր... իհարկե, պատճառ է և լուրջ պատճառ: Դուն չես հասկընար, դուն պատկերացում չունիս, թե ինչ ըսել է կնոջդ համբուրելու համար ծառագուրկ, ցանցառ այգիներուն մեջ երազախար ըլլալը...

- Լավ, ինչո՞ւ բնակարանի համար դիմում չես տվել:

- Ինչպես չեմ ըրած, 15 տարի է դիմած եմ, անընդհատ կխաբեն՝ «այս տարի», «զալ տարի» ըսելով: Եվ այդպես շարունակ:

Հավատա, բարեկամս, բնակարանի պատճառով ալ պիտի մեկնիմ Հայրենիքես:

... Երկար տարիներ անց, 1990 թվականին «Սիփան» երգչախմբով համերգների էինք Հայաստանում: Նախքան համերգներ սկսելը որոշեցինք Վազգեն Վեհափառի օրինությունն ատանալ: Եվ, և, ի՞նչ եք կարծում, ո՞ւմ եմ հանդիպում Մայր տաճարի հրապարակում... մեր Սարգսին: Իզուր չի ասված՝ աշխարհը որքան ի փոքք է:

- Սարգիս, եղբայր, դու՝ այստեղ... ե՞րբ ես եկել: Ես վաղուց գիտեմ, որ դու Ֆրանսիայում ես ապրում:

Գրկախառնվում ենք ու հարցերի տարափով փորձում հագեցնել 30 տարվա մեր կարոտը:

- Մաեստրո ջան,- ասում է Սարգիսը,- մեկ շաբաթ է, որ հոս եմ: Տարբեր տեղեր տեսա համերգներուդ հայտարարությունները, շատ ուրախ եմ, որ մասնագիտությամբ կաշխատիս:

- Ուրեմն, երկու օր հետո կհանդիպենք համերգին:

- Ափսուն, Հենրիկ ջան, չեմ կրնար ներկա ըլլալ, վաղը պիտի մեկնիմ: Ըսի, ո՞վ գիտե, ինչ կըլլա, վերջին անգամ երթամ Էջմիածին, բայց ափսոս, որ Վեհափառը չկար պատարագին:

- Հոգ մի արա, Սարգիս ջան, ես քեզ հնարավորություն կտամ, որ մոտիկից հաղորդակցվես Վեհափառի հետ:

- Ինչպես, Մաեստրո...

- Մենք ժամանակություն ունենք Վեհափառի հետ, դու կը որպես «Սիփանի» անդամ ներկա կլինես ընդունելությանը:

- Ինչ լավ, անսպասելի երջանկություն, Էգլանտինային պիտի պատմեմ այս ամենը: Շատ կուրախանա: Հաճախ կիհշենք Երևանը, մեր պատիկեն ալ պատիկ բնակարանը: Դուն ըսեն սայինք, ինչպես ես քեզ զգում Ամերիկայում: Ես գիտեմ, որ դու 1970-ականների վերջերին գնացել ես Լոս Անջելես:

- Ինչպես տեսնում ես՝ վատ չեմ, ահա երգչախմբիս հետ ել եկել եմ Հայրենիք, բայց դու, դու ուրա՞խ ես Ֆրանսիա տեղափոխվելուդ համար:

- Ի՞նչ ըսեմ, Մաեստրո ջան, ճիշտ է, ընկերական այն միջավայրը չկա, որուն մենք վարժված էինք, բայց մարդկային բնա-

կանոն ապրելակերպն ու կենցաղային պայմանները անհամեմատ բարձր են այստեղեն:

- Այդ ամենը լավ, Սարգիս, քանի<sup>շ</sup> սենյակ ունես:
  - Երեք ննջարան, հյուրասենյակ, փոքր այգի և, խարկե, խորովածի մանդալ (*կրակարան*):
  - Դե, ասա, բոլոր հարցերդ լուծված են էի և՝ ամենակարևորը, կնոջ՝ Էզլանտինայի հետ, մեկ անկողնում քնելը հաջողվեց,- կատակով հացրի ես:
  - Էլ մի ըսեր, Հենրիկ: Ես Ֆրանսիա հասկցա, թե ինչ ըսել է ամուսնական անկողին, բայց, ափսոս, փոքր ինչ ուշացած...
- Վազգեն Վեհափառի ընդունարանում տեղի ունեցած ընդունելությունը, մանավանդ մեզ՝ ափյուտքահայերին ուղղված հայրենասիրական կոչը, հույսի, հավատի նոր, թարմ սերմեր ցանեց մեր հոգիներում:

*Ապրիլի 18, 1990 թ.,*

*Երևան*

## ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ

... Գրեթե վեց ամիս Երևանում էի: Պետք էր այդքան երկար մնալ՝ պատրաստելու համար իմ 75-ամյակի հոբելյանական երեկոյի համերգային ծրագիրը: Շաբաթը 2-3 անգամ պարապում էի Երևանի երաժշտական կոմեդիայի պետական թատրոնի երգչախմբի հետ, որին հետազոտում միանալու էր Լու Անջելեսի «Սիփան» երգչախումբը: Այս երկար ժամանակահատվածում հեռաձայնս մշտապես գործողության մեջ էր, զիշեր թե ցերեկ: Զանգերը հիմնականուրեն մոռանում էին ժամերի տարբերությունը և, երբ ասես, օրվա որ ժամին ասես, հեռաձայնում էին:

Բայց այդ երևոյթը, որքան էլ հոգնեցնող, հոգու, մոքի հանգստություն է բերում ջղերիդու զիտակցությանդ, ամրագրելով այն համոզմունքը, թե ի՞նչ կա որ, մարդիկ սպասում են, կարուտում քեզ, և կարող են ցանկացած պահի հեռաձայնել:

Հայաստանում այդքան երկար մնալու արդյունքում ծնվեցին մի շարք պատմվածքներ և մանրապատումներ, որոնց մի մասը ներկայացնում եմ ընթերցող լայն հասարակությանը:

## ՀԱՄԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑԸ

Ինչպես նախորդ տարիներին, Երևան հասնելուս հաջորդ օրն իսկ, իմ դուն զանգը հնչեցրեց թաղապետարանի ներկայացուցիչը:

- Բարով եք եկել, պարոն Անասյան, որքա՞ն եք մնալու այս տարի, կարոտում ենք Ձեզ, - դեռ սենյակ շմտած, ասաց խափ-շիկ հիշեցնող տիկինը:

- Այս անգան երկար, շատ երկար, գրեթե 6 ամիս:

- Ինչ լավ...

- Իսկ Դուք, վստահ եմ, եկել եք տան եկամտահարկը գանձելու, այդպես չէ ...

- Ճիշդ կոսահեցիք, պարոն Անասյան:

- Հը, մի բան ավելացել է, թե՝ պակասել:

- Ավելացել է, ավելացել, ինչպէ՞ս կարող է պակասել, չե՞ք տեսնում թե ինչպես է ամեն ինչ թանկանում:

- Գիտե՞մ, գիտեմ, եկեք պատշզամբում նստենք:

- Այո, այո, բալկոնում:

Մինչ աշխատակցուիին հարմարավետ տեղավորվում է հաճելի բազկաթորին, ես զնում եմ իմ աշխատասենյակը և գրադարակից հանում տան հետ կապված վճարումներն ապացուցող անդորրագրերն ու քերում նրա մոտ:

- Գիտե՞ք, պարոն Անասյան, Դուք մոտ հարյուր քանի հազարի պարտք ունեք նախկին տարիներից մնացած:

- Ի՞նչ պարտք, քուր ջան, - առօրյա խոսակցական ոճով հարցնում եմ ես:

- Այդ պարտքը զալիս է հնուց, երբ Դուք այս բնակարանը գնել եք, բնակարանի նախկին տերը իր պարտքերը չվճարած, առուծախի պայմանագիր է կնքել Ձեզ հետ:

- Ինչպէ՞ս կարող է նման բան լինել, չե՞նոք որ մինչև նա չապացուցի, որ պարտք-մարտք չունի՝ նոտարը չի հաստատի թղթերը և պետական գրասենյակն էլ չի վավերացնի առքու-

վաճառքի պայմանագիրը և բնակարանը չի ձևակերպվի իմ անունով:

- Դուք ճիշտ եք, ընկեր, ներեցեք, պարոն Անասյան, բայց եղածը-եղած է, մեր համակարգչի մեջ հստակորեն երևում է ամեն ինչ, կարող եք զալ մեր գրասենյակ և համոզվել:

- Ես ոչ մի տեղ կ չեմ գնա և ոչինչ ապացուցելու կարիք չունեմ: Մեղքը նոտարինն է և կադաստրինը: Ինչ ուզում եք արեք, եթե պետք է դատարան կ կարող եմ զալ: Խնդիրը երեք հարյուր դոլարի մասին չէ, թեև Հայաստանի համար դա քիչ դրամ չէ, բայց Զեր հաստատությունների և, մանավանդ, աշխատողների հանցավոր գործողությունների պատճառով, ես այդքան դրամ չեմ կարող հենց այնպես ջուրը նետել՝ հագուրդ տալու համար խարեւաների ընշաքաղությանը:

- Իգուր եք ջղայնանում, պարոն Անասյան...

- Ինչպես չզայրանամ, ամեն տարի մի բան հնարում եք դրամ կորզելու համար, վերջ տվեք, ամոր է..., իմ հարեանուհին հիվանդագին բժախնդրությամբ ամբողջ տարին կանոնավոր կերպով հետևում է վճարումներին:

- Հիմա խոսքը դրանց մասին չէ, խոսքը հին պարտքի մասին է:

- Սուտ է, նման բան չկա, ո՞ւր էք մինչև հիմա, տաս տարուց ավելի ժամանակ է անցել և նո՞ր եք «հայտնաբերում», որ «խաբեություն» կա...

- Լավ, լավ, պարոն Անասյան, հանգստացեք, կարելի է իհարկե, ինչ-որ ձևով հանել կոմպյուտերից, ի՞նչ իմանամ...

Ես, անշուշտ, անմիջապես հասկացա, թե ինչ էր ակնարկում տիկինը, ով, հավանաբար, ինձ խոփած ծերուկի տեղ դնելով, մտադրվել էր հորինովի պատմությամբ մի հարյուր դոլար փախցնել: Ես ինձ շհասկացողի տեղ դրի ու ասացի.

- Չգիտեմ, ինչ ուզում եք արեք, հանում եք, չեք հանում ձեր համակարգչից՝ ձեր գործն է:

- Ի՞նչ ասեմ... Դուք գիտեք, այդ շարաբաստիկ գումարը մշտապես, որպես պարտք, կմնա, և երբ, որևէ ժամանակ Զեր

բնակարանը վաճառելու լինեք՝ չեք կարող ձևակերպումներ անել, մինչև այդ գումարը շվճարեք:

- Թող այդպես էլ մնա, իսկ հիմա ասացեք, թե որքա՞ն եմ վճարելու:

Վճարում եմ պահանջվող գումարը՝ թեյավարձով անշուշտ ու նրան եմ ուղղում ինձ հետաքրքրող մի հարց.

- Ասա, ինդրեմ, քույրիկ ջան, այդ ինչպէ՞ս է պատահում, որ ամեն անզամ, երբ ես Հայաստան եմ զալիս, Դուք առաջին իսկ օրը հայտնվում եք իմ տանը, ինչպէ՞ս եք իմանում, որ ես եկել եմ:

- Ինչո՞ւ դա էլ հարց է... մենք ամեն օր ստուգում ենք՝ ով եկավ, ով գնաց:

- Դե, ասա ԿԳԵ-ն լավ էլ աշխատում է... ամեն պարագայում մեկ հարց էլ եմ ուզում տալ. անցյալ տարի մի ուրիշ կին եր եկել, այնպես, բավական ճոխ արդուզարդով և իր տարիքին ոչ համապատասխան «խնամված» դեմքով:

- Զա՞, իմացա, Հայկուշի մասին է Ձեր խոսքը: Նա փախել է հանրապետությունից: Ահազին փող է կերել ու անհայտացել:

- Ի՞նչ եք կարծում, գուցե նա՞ է համակարգչի մեջ իմ անվան դիմաց հնարովի պարտք ձևակերպել՝ հետազայում ինձնից փող կորզելու համար, որովհետև, ինչպես տեսնում եմ, շատ ոյուրին է Ձեզ մոտ համակարգչի մեջ ցանկացած գործողություն իրականացնելը: Հը՞ այդպէ՞ս է, թե՝ ոչ...

Այս իմ խոսքի վրա կինը փոքր-ինչ լոեց և ուղիղ աչքերին մեջ նայելով, ասաց.

- Շատ լավ էլ հասկացա, պարոն Անասյան, թե ինչ եք ակնարկում: Այս, միշտ էլ հնարավոր է, որ լինեն նման կարգի «թյուրիմացություններ», ուրիշ տանտերերի մոտ էլ կան...

- Անշուշտ կինեն, մանավանդ՝ նորովի «ախապարների» մոտ, որոնք ոչինչ չեն հասկանում օրենքից և կուրորեն ենթարկվում են Ձեր ամեն մի ստահող բարբաջանքներին: Իսկ իմ պարագայում, սիրելի տիկին, մի մոռացեք, որ ես Հայաստանի ծնունդ եմ ու ձեր բոլոր խաղերին քաջատեղյակ: Հաջորդիվ զգույշ

եղեք ինձ հետ, ավելի լավ է ազնվորեն դրամ ուզեք, քան ինձ  
խոփած, հիշողությունը կորցրած ծերուկ համարեք:

- Ես ուշադրությամբ լսեցի Ձեզ, պարոն Անասյան,  
հետևությունները թողեք ինձ, իսկ հիմա թույլ տվեք զնալ:  
Մինչև հաջորդ տարի:

Հունիսի 14, 2012 թ.,  
Երևան

## ՎԱՐԴՈՒՀԻՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱԹԱՆ

Անցյալ տարի, մեր շենքի հարևանությամբ, մի հրաշալի խմորեղենի խանութ կար: Այս անգամ, Երևան հասնելուս երկրորդ օրը զնացի այդ խանութը՝ իմ նախընտրած խմորեղեններից զնելու: Մեծ եղավ հուսախաբությունս, երբ տեսա, որ խանութը փակ էր: Հարևան խանութի տիրոջից իմացա, որ խմորեղենի խանութը տեղափոխվել է Մաշտոցի պողոտայի վրա, շատ ավելի մոտ իմ ապրած տանը:

- Ինձ մեկ հատ գաթա կտա՞ք,- ասացի անծանոթ վաճառողուին:

- Խորիզո՞վ, թե առանց դրա:

- Առանց խորիսի:

- Սիրով, հայրիկ,- ասաց երիտասարդ կինը և բարձրաձայն կանչեց,- տիկին Նվարդ, մի անխորիզ գաթա բեր:

Տիկին Նվարդը ինչ որ տեղից դուրս եկավ ու հեռվից «տնտեց»՝ իմանալու համար, թե ո՞վ է հաճախորդը: Քիչ անց կինը գաթան բերեց և տվեց վաճառողուին: Վերջինս այն դրեց տուփի մեջ ու երկարեց ինձ:

- Խնդրեմ, հայրիկ, նորից համեցեք:

- Շնորհակալություն, աղջիկս, հաճելի վերաբերմունքի և լավ սպասարկման համար,- ասացի ես ու դուրս եկա խանութից:

Երեկոյան ժամը ինն անց էր: Մեն-մենակ հեռուստացույց եմ նայում ու սպասում, որ թեյի ջուրը եռա ու սուլիչն ազդարարի դրա մասին:

Անհամբեր եմ գաթան ճաշակելու համար: Դեռ անցյալ տարի էինք ես ու Մարիետան հավանել այդ թխվածքը: Թեյի առաջին կումն անելուց հետո, փորձեցի ճաշակել գաթան: Հազիվ մեկ պատառ բերանս դրած, անմիջապես հասկացա, որ գաթան թարմ չէր. սուր դանակով կտրելիս էլ ինձ տարօրինակ էր թվացել գաթայի անսովոր պինդ լինելն ու անհրապույր տեսքը:

Զայրովթից չգիտեի ինչ անել: Ժամին նայեցի ու տեսա, որ

քիչ ժամանակ է մնում խանութը փակվելուն. ոչինչ, առավոտյան ես դրանց հարցը կլուծեմ,- ասացի ինքս ինձ և սկսեցի դիտել «Գեներալի աղջիկը» սերիալի հերթական մասը:

Առավոտյան, հազիվ խանութը բացված, մտնում եմ ներս: Վաճառողութուց բացի ոչ ոք չկա խանութում: Երեկովա գոզնոցավոր մեծահասակ կինն էլ չի երևում: Առանց բարե-բարի լուսի, վաճառողութու առջև եմ նետում շարաբաստիկ գարան:

- Աղջիկ ջան,- զայրացած ասում եմ ես,- դու այս զարան ինչպէ՞ս ս կարող ես վաճառել, չէ՞ որ իհն է, հավանաբար մի քանի օրվա թխած, ի՞նչ է, ինձ ցնդած ծերուկի տե՞ղ եք դրել:

Երիտասարդ կինը պապանձվել, մնացել է, ոչինչ չի կարողանում ասել, քիչ է մնում վայր ընկնի: Բոնում եմ թեն ու նստեցնում արռողին: Ապշահար նայում եմ խեղճացած կնոջը: Վերջինս դալկացած դեմքով նայում է ինձ ու աչքերից հոսում են արցունքները գուլ-գուլ թափվելով երեսնիվայր:

- Ես մեղավոր չեմ, հայրիկ,- հազիվ կարողանում է արցունքների միջից ասել մի բուռ դառած, առանց այն էլ նիհարից էլ նիհար երիտասարդ կինը:

Հիմա ես եմ փորձում հանգստացնել նրան՝ մտքումս հայինյելով ինձ, թե այս ինչ արի, այս ինչ օրի զցեցի խեղճ կնոջը, հերն եմ անիծել զարային էլ, զարա պատրաստողին էլ, ինչ տալիս են՝ դա էլ վաճառում է:

Մեր այս արլուկի վրա, խոհանոցի կողմից հայտնվում է երեկովա տարեց կինն ու մոտենում մեզ: Առանց մի բառ փոխանակելու սեղանի վրայից վերցնում է զարան ու գնում այնտեղ՝ որտեղից եկել էր: Հստակ դարձավ, որ նա լսել էր մեր խոսակցությունը և մտադրվել էր այդ տիհած պատմության հետ կապված ապացույցը հնարավորինս արագ վերացնել: Երբ ես փորձում էի հանգստացնել վաճառողութուն, կրկին հայտնվեց տարեց կինը, սեղանին դրեց մի նոր զարա ու արագորեն, առանց մի բառ փոխանակելու հեռացավ:

Վերջապես հանդարտվեց մեր հերոսութին: Իրեն կարգի բերելուց հետո ոտքի կանգնեց ու տեսնելով իմ ժպիտը, զգալով իմ բարյացական վերաբերմունքը, զարան դրեց տուփի մեջ,

բացեց դարակը և այստեղից հանելով հինգ հարյուր դրամանց մետաղադրամը, երկուսը միասին դրեց առջևս:

- Իսկ ինչո՞ւ եք տալիս այդ դրամը, ես նվեր չեմ ընդունում:

- Որովհետև ես ինձ մեղավոր եմ զգում: & իշտ է, ես միայն վաճառողութիւն և ինչ տալիս են ինձ այն էլ մատուցում եմ գնորդին: Իմ աշխատանքային երկրորդ օրն է այս խանութում և եթե խանութիւն տերն իմանա այս տիած պատմության մասին, կարող է ինձ աշխատանքից ազատել:

- Նախ, նա չի իմանա, աղջիկս, երկրորդ, դու էլ հաջորդ անգամ կստուգես, թե ինչ են տալիս քեզ վաճառելու... ինչպէս և անունդ, աղջիկս:

- Վարդուիիր...

- Այսպէս ուրեմն, Վարդուիիր, նա չի իմանա, որովհետև վկա չկա՝ մեկ, երկրորդ, այդ կինը ձեն-ծպտուն չի հանի, որովհետև ինքն է մեղավորը, որ տեսնելով ծերուկիս, մտածել է «սաղացնել» հին խմորեղենը՝ հօգուտ խանութիւն: Այնպէս որ, դու ինձ ներիր, որ անփափկանկատ ձեռվ, առանց մանրամասնությունների մեջ խորանալու, վիրավորեցի քեզ:

- Զէ, չէ, ի՞նչ եք ասում, ես եմ մեղավորը, ես պիտի իմանայի, թե այդ կինը ինչ խմորեղեն է բերում, չէ, չէ, մի ասեք ոչինչ, ես նրա փոխարեն էլ եմ ներողություն խնդրում: Վերցրեք, խնդրեմ, Զեր դրամը և զաթան: Ես նվեր եմ տալիս, արդեն ամբողջովին հավաք վիճակում ասաց Վարդուիին:

- Եկեք պայմանավորվենք այսպէս, Վարդուիի ջան. կամ, դու վերցնում ես դրամը, կամ էլ՝ ես հրաժարվում եմ զաթայից, ուրիշ պայման չեմ ընդունում: Ես քո հոր տարիքին եմ, դու պարտավոր ես ինձ լսել-, վճռականորեն ասացի ես:

- Լավ, թող Զեր ասածը լինի, հայրիկ ջան...

- Խնդրում եմ, աղջիկս, սրանից հետո ինձ «Մաեստրո» անունով դիմիր, ինձ այդպէս են դիմում բոլոր ճանաչողները: Ես ապրում եմ հենց այս շենքի բակում: Մենք հաճախ ենք հանդիպելու: Ես այս անգամ երկար եմ մնալու:

- Ինչպէս ս թե երկար եք մնալու, Դուք այստեղ չե՞ք ապրում, Մաեստրո,- առանձնակի շեշտ դնելով «Մաեստրո» բանի վրա,

ասաց Վարդուհին:

- Ոչ, աղջկի շան, ես հյուր եմ, հյուր՝ իմ տանը:
- Չեմ հասկանում, Մաեստրո, ինչպես թե «հյուր իմ տանը», ի՞նչ եք ուզում ասել:
- Այո, Վարդուհի, հյուրի, ինչպես ս ասեմ, գրուաշրջիկի կարգավիճակով: Ինձ հրավիրել են իմ հոբելյանի առիթով: Սեպտեմբերին նշվելու է:
- Օ՛, կնշանակի հինգ ամիս և ավելի Դուք մեր հաճախո՞րդներ:
- Այո, սիրելիս, և մենք, հուսով եմ, բարեկամներ կդառնանք:
- Անշու Շատ: Իսկ ինչպես ս է Զեր անունը Մաեստրո...
- Հենրիկ, Հենրիկ Անասյան...
- Ի՞նչ եք ասում... ես լսել եմ Զեր անունը, կարծեմ Դուք եք գրել դուդուկի կոնցերտը, այդպես չէ...
- Այո, բայց դու որտեղից գիտես:
- Ինչպես ս չէ, գիտեմ, ամուսինս մտերիմ է դուդուկահար Գևորգ Դարբայյանի հետ, անցյալ տարի էլ լսել է ֆիլհարմոնիայի համերգին:
- Ուրեմն, դու չես լսել կոնցերտը, պարզապես տեղյա՞կ ես այդ կոնցերտի մասին:
- Ցավում եմ, որ չեմ լսել, ես երեկոներն աշխատում եմ:
- Հույս ունեմ, որ այս անզամ կլսես սեպտեմբերին՝ դարձյալ Գևորգ Դարբայյանի կատարմամբ:
- Ի՞նչ եք ասում, անպայման: Ես վաղն իսկ թույլտվություն կիսնդրեմ խանութիւ տիրոջից այդ օրվա համար փոխարինող գտնել:
- Դեռ երկար ժանմանակ ունես, մի մտահոգվիր, իսկ եթե այս ամիսների ընթացքում դու կարողանաս թարմ խմորեղեններով ապահովել ինձ և իմ մեծաթիվ հյուրերին, ուրեմն կարող ես վստահ լինել, որ դու երկու հրավիրատումս կունենաս իմ հոբելյանական երեկոյի համար,- կատակով ասացի ես:

Պետք էր տեսնել թե ինչպես կերպարանափոխվեց երիտասարդ կինը: Երեխայի պես սկսեց թոշկոտել ու ծափ տալ համերգ եմ գնում, համերգ՝ բղավելով վազեց դեպի խոհանոց

և վայրկյաններ անց, «Խաչապուրի» կոչված խմորեղենով լի ստվարաթղթե տուփի դրեց առջև:

- Սա արդեն չեք կարող մերժել: Դուք ինձ երկու տոմսակ եք նվիրում, իսկ ես Ձեզ՝ խմորեղեն:

- Աղջիկս, բայց դու ինչպէ՞ս ես քեզ թույլ տալիս նման շռայլություն անել անծանոթ հաճախորդի համար: Ինչպէ՞ս ես բացատրություն տալու խանութի տիրոջը, թե՞, թե նա չի իմանա...

- Օ՛, ո՛չ... ի՞նչ եք ասում, ես ոչ մեկին հենց այնպես նվեր չեմ տալիս և իմ ամեն մի արարքի համար նրան տեղյակ եմ պահում, նա ամեն ինչում ինձ վստահում է: Համոզված եմ, որ նա սիրով կլսի իմ բացատրությունը և ինձ չի մեղադրի:

- Իսկ, իսկ գաթայի հետ կապված պատմությանը նո՞ւ վնապես տեղյակ ես պահելու նրան,- կես կատակ, կես լուրջ, ժամանակ հարցրի ես:

Մի քանի վայրկյան մտածելուց հետո, ասաց.

- Ո՛չ, իհարկե՝ ոչ, որովհետև նա ոչ միայն կմեղադրի այն խեղճ կնոջը, այլև կարող է ազատել աշխատանքից, իսկ այդ կինը դժբախտ ընտանիքի տեր է: Հավանաբար, ընկերությանը վնաս չտալու դիտավորությամբ առաջնորդված, նա փորձել էր հնացած խմորեղենը, ինչպես ասում են՝ «սաղացնել»:

... Հինգ ամիս շարունակ, գրեթե ամեն օր օգտվում էի Վարդուհու խմորեղենի խանութից: Մենք մտերիմներ էինք դարձել: Պարզվեց, որ նա ավարտել էր համալսարանի բանախրական բաժինը, իր մասնագիտությամբ գործ չէր կարողացել գտնել և գործի էր անցել թխվածքի ընկերությունում:

Վարդուհին պատմում էր իր ընտանիքի, ես ել պատմում էի իմ ընտանիքի ու թոռների մասին և, քանի որ բանասեր էր, գրուցում էինք նաև գրականությունից: Այդ առթիվ էլ ես նրան նվիրեցի իմ «Այս եմ ես...» գրական շարքի հինգերորդ հատորը:

Դպրոցում երկու գերազանց սովորող երեխաների մայր է Վարդուհին: Բնավ ամուսնու հետ կապված հարց շոշափվեց այդ ամիսների ընթացքում: Խանութի հացթուկս Նվարդը

մշտապես փախուստ էր տալիս ինձնից և ամեն կերպ խուսափում էր երես առ երես հանդիպելուց:

Հայաստանում իմ կեցության վերջին ամսում Վարդուհու խանութը գնալու պարտականությունն իր վրա վերցրեց Մարդիտան, ով այնքան էր մտերմացել նրա հետ, որ հեռաձայնվ էր իր հարցերը լուծում՝ սպասվող հյուրերին համեղ թխվածքներով հյուրասիրելու համար:

Հինգ ամիս իմ բնակարանի սեղանը մշտապես լի էր Վարդուհու խանութի համեղ զաթաներով ու խմորեղենի հարուստ տեսականիով։ Աստիճանաբար իմ հյուրերը դառնում էին նրա խանութի մշտական հաճախորդները։

Իմ հոբեյանական համերգ-երեկոյին ներկա էր Վարդուհին։ Որպես ուղեկցողի, նրան ընկերացել էր իր տասնհինգամյա որդին, որը երեկոյի ավարտին մի հսկա ծաղկեփունջ նվիրեց Մարդիտային։

*Հունիսի 16, 2012 թ.,  
Երևան*

## ԿՐԹՎԱԾ ՄՈՒՐԱՑԿԱՆԸ

... Սի քանի օր էր ինչ ես և Մարիետան տեղավորվել էինք Երևանի մեր բնակարանում, երբ սկսեցին մեկը մյուսի ետևից հայտնվել ծանոթ-անձանոր մարդիկ: Շատէր գալիս են Լոս Անջելեսի իրենց բարեկամների կողմից ուղարկված նվերները և դեղերը տանելու: Գալիս են նաև արհեստավորներ, գործ փնտրողներ, հեռու-մոտիկ ծանոթներ:

Մենք միշտ Հայաստան ենք զնում, ինչպես սովորաբար ասվում է՝ «զինված-պատրաստված», որևէ անակնկալ դեպքի համար էլ՝ դարձյալ պատրաստի վիճակում:

Իմ այս ասածը, խնդրում եմ որպես բողոքի նշան չընկալել: Մենք դա անում ենք սիրով ու մանավանդ՝ գիտակցված:

Եվ ահա, մեր ժամանման երրորդ թե չորրորդ օրը, մեր պատշգամբի ցանցեպատ դրանն է մոտենում սեազգեստ, բավական խնամված արտաքինով վարառնին մոտ մի կին:

- Խնդրում եմ Զեզ, պարոն, մի քանի բոպե լսել ինձ, - ակնհայտ հոգեպես ցնցված վիճակում դրան ետևից ասում է անձանոր կինը:

- Ի՞նչ կա, տիկին, ի՞նչ է եղել, ի՞նչ եք ուզում, - մտահոգված հարցնում եմ:

- Բաց արեք, խնդրում եմ բաց արեք դուռը, ես հիմա Զեզ ամեն ինչ կպատմեմ:

- Տիկին, ես և Դուք՝ տեսնում ենք միմյանց ցանցի միջով, ասացեք, թե ինչ եք ուզում:

- Չե, չե, բաց արեք, համ էլ վատ եմ զգում, զոնե մի երկու բոպե կնսուեմ, կհանգստանամ այս Զեր հարմարավետ բալկոնում, խնդրում եմ:

Բաց եմ անում պատշգամբի մետաղյա դուռը և կինը՝ գրեթե ինձ հրելով մի կողմ, իրեն զցում է մեր բնակարանից ներս: Ի նշ հոգնել, ի՞նչ նստել. կինը անձայն, առանց մի բառ ասելու, պտտվում է մեր ընդարձակ հյուրասենյակի մեջ, հետո փոր-

ձում է անցնել ննջասենյակները, ես անմիջապես կանխում եմ նրան.

- Վերջապես կասե՞ք, թե ո՞վ եք Դուք, տիկին, և ի՞նչ եք փնտրում մեր բնակարանում: Ձեր պահվածքը ինձ բոլորովին դուր չի գալիս:

- Ե՞ս, ես՝ ոչինչ... պարզապես հետաքրքրության համար...

- Կարծեմ քիչ առաջ Դուք ասացիք, որ հոգնած եք և ուզում եք նստել, այդ ինչպես արագ անցավ Ձեր հոգնածությունը, տիկին:

- Դե, գիտեք ինչ, պարզն, այսպիսի բնակարանում հայտնվելու պարագայում ի՞նչ հոգնության մասին կարող է խոսք լինել: Տեսնում եմ լավ բնակարան ունեք, ես ձեր հարևան շենքում եմ ապրում և օգնության համար եմ եկել Ձեզ մոտ:

- Ձեր հազուկապից բնավ չի երևում, որ Դուք ինչ-որ բանի կարիք ունեք, և հետո, օգնության համար եկողը այդպես անքաղաքավարի ձևով չի չափչփի օտարի տունը:

- Կներեք, պարոն, Դուք ճիշտ եք ասում, բայց ես այնքան շվարած եմ, որ ինքս կ չգիտեմ, թե ինչ եմ անում: Ես պարզապես գլուխս կորցրել եմ, ախ, ախ, Դուք չգիտեք, չգիտեք... տղաս հիվանդ է, ծանր հիվանդ, երեկ կ հիվանդանց տարան:

Ես մոտավորապես գլխի էի ընկել, որ մենք գործ ունենք իսաբերա, սրիկա, կրթված կնոջ հետ, սակայն ստիպված եղա հարցնել.

- Ի՞նչ հիվանդությամբ է տառապում Ձեր տղան, - փոքր ինչ զսպելով զայրույթս, հարցրի նրան:

- Ի՞նչ ասեմ, ես կ եմ ամաշում... այո, այո, ամաշում եմ, դե, դե... այն անտեր հիվանդությունից է կի, սեռական բնույթի:

- Ի՞նչ... սեռական բնույթի ...

- Այո, այո, ես, իհարկե բոլորին չէ, որ ասում եմ այդ մասին: Դուք դրսի մարդիկ եք, դրա համար կ ասում եմ, թե չէ աշխարհով մեկ խայրառակ կլինենք:

- Իսկ ի՞նձ ինչու ասացիք, չէ՞ որ ես կ կարող եմ ուրիշների առջև բացել Ձեր զաղտնիքը:

- Ոչ, ոչ... Դուք դա չեք անի, Ձեր ինչի՞ն է պետք:

- Իսկ որքա՞ն գումար է անհրաժեշտ Ձեր տղային բուժելու համար:

- Ահազին դրամ է հարկավոր, իսկ ես այդքան դրամ չունեմ: Ինք երկար տարիներ մանկավարժ եմ եղել, իսկ հիմա չեմ աշխատում, ստացած թոշակս կոմունալ ծախսերին էլ չի բավարարում: Խնդրում եմ, աղաջում եմ, օգնեք ինձ: Ահա երեք օր է դոնե՞-դուռ ընկած դրամ եմ հավաքում տղային բուժման համար: Որքան կարող եք, խնդրում եմ, աղաջում եմ:

Այս ամբողջ խոսակցության ընթացքում, Մարիետան սպասողական հայացքով ինձ էր նայում ու միևնույն ժամանակ անհանգիստ շարժումներ անում՝ փորձելով հասկացնել, որ ինչ որ պիտի անեմ, անեմ արագ, այս անսպասելի ու անախործ վիճակից դուրս գալու համար:

Մինչ ես պատրաստվում էի դրամապանակիցս դրամ հանել, այդ կինը աչքերը ֆոռացնում էր քնակարանով մեկ, իսկ մեկ ուրիշը, նրա փոխարեն աչքերը կպլշացներ վրաս՝ նայելու համար թե որքան դրամ եմ տալու: Արդեն կասկածից վեր էր, որ մենք գործ ունեինք կրթված խաբերայի հետ: Մեկ մտածեցի ոչինչ շտալ, մեկ էլ. Հենրիկ, ասացի, այդ կնոջ անեծքից ազատվելու համար մի քանի դոլար շպրտիր, թող գնա «հիվանդ» տղայի մոտ:

Ինչևէ, քսան դոլարանոցը հանեցի դրամապանակից ու մեկնեցի կնոջը.

- Խնդրեմ, տիկին,- կծու, խայթող հայացքս մեխելով կնոջ աչքերի մեջ,- ասացի ես:

Կինը փախցրեց հայացքը և ոչինչ չեղածի պես շարունակեց դիտել մեր հյուրասենյակի պատերին կախված նկարներն ու ձեռքերը բարձրացնելով վեր ասաց.

- Այս ինչ հիմանալի նկարներ են, օ՛, Աստված իմ... ո՞վ է, օրինակ, այս նկարի հեղինակը,- ցուցամատը մեկնելով Ալպյան լեռների մի տեսարան պատկերող նկարի վրա՝ հարցրեց խաբերա կինը:

- Տիկին, կարծեմ Դուք միսրածվեցիք մեր քնակարանից ներս առանց թույլտվության ու հիմա էլ մեր տան իրե՛րն եք ուսում-

նասիրում... խնդրեմ, հեռացեք, տիկին,- ինչ որ անբացատրելի վախի զգացումով ասացի նրան:

- Օ՛, ո չ, ի՞նչ եք ասում, պարոն, ես, ես, հենց այնպէս,- շիմանալով ինչ բացատրություն տալ՝ ձեռքերը կրծքին խաչած, ասաց կինը ու առանց շնորհակալություն հայտնելու, արագորեն հեռացավ: Նոյն օրը այս պատմությանը հաղորդակից դարձրինք մեր բնակարանի «պահապան», առաջին հարկի հարևան, երիտասարդ մայր Նունեին:

- Այդ ինչ սխալ բան եք արել,- ասաց նա,- ուա մի խարեբա կին է, մեր ամբողջ թաղը ճանաչում է նրան: Այդպէս գեղեցիկ հազնված, առաքինի կնոջ դեր խաղալով, միամիտ մարդկանց հեքիաթներ պատմելով, խղճմտանք առաջացնելով նրանց հոգում, հատկապես տուրիստների մոտ՝ որամ է շորթում: Ի՞նչ հեքիաթ էր հորինել:

- Տղան ինչ որ ծանր հիվանդ է սեռական հողի վրա,- ասացի:

- Ծանոթ պատմություն է,- ասաց Նունեն,- ուրիշ անգամ որ գա, կվոնդեք:

Նոյն տարվա ձմռանը, Նոր տարվա նախօրյակին հեռաձայն Երևանից.

- Մաեստրո, ես եմ՝ Նունեն, Ձեր բնակարան գող է մտել, բայց մի անհանգստացեք, ճիշտ է, ամեն ինչ տակնուվրա են արել, բայց ոչինչ չեն տարել, բացի Ձեր կոնյակներից: Մեկ շիշն էլ առոք-փառոք խմել են, երեք բաժակ կար սեղանի վրա:

- Է՛, հետո՞՝, Նունե,- սա կ Մարիետան է, որ ձեռքիցս վերցրել էր լսափողը:

- Հետո այն, Մարիետա ջան, որ մասնագետ եկավ, մետաղյա ձողերը զոդեց ու ամեն ինչ տեղն ընկավ:

- Ի՞նչ ես կարծում, Հենրիկ, այս պատմության մեջ, այն սուս մուրացկան կնոջ մատը խառը չէ,- ասաց Մարիետան:

- «Ի՞նչ իմանաս, մինչև հաստատ շիմանաս», - ծամծմված ասույթով ավարտեցի երկխոսությունը:

Հունիսի 18, 2012 թ.,  
Երևան

## ԽԱԲԵԲԱ ԵՎ ՓԻՆԱԶԻ ՓԱԿԱՆԱԳՈՐԾԸ

... Երևանի մեր բնակարանը հյուրանոցի է նման: Սակայն չեմ ասի, որ այնտեղ ժամանակավորապես բնակվողը վճարում է կեցության համար. քավ լիցի, բնավ երբեք: Մենք բնակարանը վարձով չենք տալիս, թեև հիմնականում ութ կամ տաս ամիս այն դատարկ է լինում:

Այդ տարի երկու հյուր ունեցանք մեր բնակարանում, երկուսն էլ Ավստրալիայից, Սիդնեյից, որտեղ ես շատ ընկերներ ունեմ՝ տարիներ շարունակ այդ քաղաքում իմ ունեցած համերգների շնորհիվ: Իրականում այդ կապը ստեղծվել է շատ վաղուց, ավելի քան 30 տարի առաջ՝ 1987 թվականից:

Հյուրերից առաջինը երգչուիի Արդա Ավետիսյանի ավագ որդին էր, ով փորձում է իր տեղը գտնել Հայրենիքի ֆիլմարդեստում: Երկրորդ հյուրը Վահիկ Հարությունյանն էր, Սիդնեյի Համազգայինի վարչականներից: Տարիների ընթացքում շերմացած մեր ընկերական-բարեկամական կապի պատճառով չկարողացա մերժել Վահիկի խնդրանքը, մանավանդ որ լուրջ գործով էր գնում Երևան և նրան անհրաժեշտ էր մշտապես քաղաքի կենտրոնում լինել:

Մեկ ամիս Երևանում մնալուց հետո, Ավստրալիա մեկնելուց առաջ հեռաձայնեց Վահիկը.

- Մաեստրո ջան, շատ շնորհակալ եմ: Հիանալի ժամանակ անցկացրի, իսկ քո հանգստավետ բնակարանը մեծապես նպաստեց իմ գործերի հաջողությանը:

- Ուրախ եմ, Վահիկ ջան, որ քեզ դուր է եկել իմ բնակարանը, միշտ պատրաստ եմ օգտակար լինել քեզ, դարձյալ կարող ես դիմել ինձ:

- Չմոռանամ ասել, որ հիանալի կին է քո բնակարան հսկողը, շատ գոհ եմ նրա վերաբերմունքից:

- Այս, Վահիկ, աներևակայելի հավատարիմ կին է Նունեն: Ամբողջ տարին, երկու-երեք շաբաթը մեկ կարգի է բերում

բնակարանը, սառնամանփքին էլ փակում է ջրի ծորակները, որպեսզի չպայթեն:

- Հա, Հենրիկ, ծորակ ասացիր՝ ասեմ, որ խոհանոցի ծորակը փոխել եմ տվել: Նախկինից կաթոցներ կային և գնալով շատացան, ստիպված վարպետ կանչեցի և պատվիրեցի լավագույն որակի ծորակ դնել:

- Ինչ լա վ, Վահիկ ջան, ապրես, շնորհակալ եմ:

- Ի՞նչ ես ասում, Մաեստրո, դա իմ պարտքն էր: Նունեի պարտքի տակ էլ չեմ մնացել...

... Վահիկի մեկնելուց մեկ շաբաթ անց, ես մեկնեցի Հայաստան: Անմիջապես տեսա, որ ծորակը փոխված էր: Տեսքից էլ երևում էր, որ բարձր որակի ծորակ էր: Բախտի չար կամոք, երկու-երեք շաբաթ անց, այս նոր ծորակի պոնկից սկսեց բարակ շիթով ջուր հոսել: Ստիպված եղա ջրաման դնել վացարանի տակ: Ու մ կանչել, ինչպես ս լավ վարպետ գտնել: Տարիների փորձով գիտեմ, որ լավ մասնագետ գտնելը դժվար է արհեստավորների շրջանում: Բոլորն էլ ասում են, որ մասնագետ են, բայց ինչպես ժնողովուրդն է ասում, «քո զլսի վրա են դալլաքություն (վարսավիրություն) սովորում»:

Մի պայծառ միտք հղացա. Արի, Հենրիկ, զանգահարիր Ավստրալիա և փորձիր Վահիկից իմանալ փականագործ վարպետի հեռախոսի համարը: Զարմանալի. այս անգամ ընկալուշը Վահիկն է վերցնողը: Սովորաբար, կինը՝ Քլարն է առաջինը մոտենում ընկալուշին:

- Հա յ, Մաեստրո, ինչպես եք, որտեղից եք խոսում, երկի Երևանից, այո ...

- Այո, այո ... աշխարհի կենտրոնից...

- Ինչքա՞ն եք մնալու, Մաեստրո...

- Բավական երկար, հետո, կխոսենք դրա մասին, Վահիկ: Հիմա ես մի կարևոր խնդրանք ունեմ: Ո՞վ է փոխել իմ խոհանոցի ջրի ծորակը, դու նրա հեռաձայնի թիվը ունե՞ս:

- Ունեմ, իհարկե, ունեմ: Այդ վարպետին ես դեռ Իրանից գիտեմ: Քսան տարի ապրել է Լու Անջելեսում և միայն չորս

տարի է, ինչ հաստատվել է Երևանում: Բայց ինչի՞ն է պետք նրա համարը:

- Խնդիրն այն է, որ կրկին ջուր է կաթում այդ նոր ծորակից: Քանի որ ինքն է տեղադրել, երսի ինքն էլ կհասկանա, թե ինչ սխալ բան կա:

- Բայց ես զարմանում եմ, Մաեստրո, ինչո՞ւ պիտի ջուր կաթի: Իմ աշքի առջև է փոխել ծորակը: Այն էլ ասեմ, որ ես եմ զնել ծորակը, այն էլ՝ լավագույն տեսակից, կներես, ուրիշ բան չմտածես, ես ութսուն հազար դրամ եմ վճարել այդ ծորակի համար:

- Ի՞նչ, ութսուն հազա՞ր... այսինքն՝ մոտ երկու հարյուր դրամ ր...

- Այո, այո, Հենրիկ,- այս անգամ «դու»-ի անցնելով ասաց Վահիկը,- զրիք, խնդրում եմ, նրա համարը, Կոմիտասի վրա է ապրում, միայնակ մարդ է, ընտանիք չունի: Անունը Սերգեյ է, մենք Սերոժ ենք ասում:

Մի քիչ դեսից-դենից խոսելուց հետո, հրաժեշտ տվեցի Վահիկին: Խեղճը դեռ չգիտեր, թե ինչ օյին էր բերելու զիսիս այդ Սերոժ կոչված, մայրիկիս ասած՝ «Շըլլալիք» վարպետ փականագործը:

Անմիջապես հեռաձայնում եմ Սերոժին:

- Վարպետ Սերգեյ, Դուք ե՞ք:

- Հա, ես եմ, Սերոժը, ի՞նչ կա, իի՞նչ ա ըլել, ո՞վ ես, ի՞նչ ես ուզում,- իրար ետևից շարում է Սերոժը:

- Վարպետ Սերոժ, ես քո ընկեր Վահիկի ընկերն եմ...

- Ի՞նչ Վահիկ, մենք, իրանահայերս շատ Վահիկ ունենք, ո՞ր Վահիկը,- կտրելով խոսք հարցնում է նա:

- Այն, որ Ավստրալիայում է ապրում:

- Հա, իմացամ, իի՞նչ ա ըլել:

- Ախր, թող խոսեմ էլի, ախալքը ջան, հա վրա ես տալիս:

- Նայի, ախալքը ջան, ես չգիտեմ, թե դու ով ես, բայց քեզ կոնկրետ պահի, ես վարժունն անց մարդ եմ...

- Լավ, լավ, մի նեղանա,- զործս առաջ տանելու մտահոգությամբ կես կատակ կես լուրջ ասացի,- ի՞նչ անենք, ախալքը

շան, ես էլ՝ յոթանասունն անց մարդ եմ: Հիմա լսիր, թե ինչ եմ ասում:

- Լսում եմ, ասա,- արդեն ոչ առաջվա նման հարձակողական նձով ասաց Սերոժը:

- Դու մի ամիս առաջ փոխել ես Վահիկի ապրած բնակարանի խոհանոցի ծորակը: Այդ բնակարանը իմն է: Դու, իհարկե, հիշում ես, թե որտեղ է իմ բնակարանը:

- Հա, շատ լավ եմ հիշում, պրասպեկտի վրա եր, Չարենցի թանգարանի հետևը:

- Այո, այո, իենց այդտեղ: Խնդրում եմ զաս ու նայես, թե ինչու է ջուր հոսում ծորակի տակից:

- Ըստի ջուր զա, բաքա մ, նորն եմ դրե... լավ, հասկացա, այսօր չեմ զա, եզուց առավոտ սպասի:

Հաջորդ առավոտյան, տասի մոտերքը երևաց գաճաճ, կարձիկ, փոքրամարմին Սերոժը՝ մի երկարահասակ երիտասարդի հետ: Գործնական մարդու շարժումներով, մի քանի անգամ բացեց փակեց ծորակը և համոզվեց որ, իրոք, ծորակի տակի մասից ջուր է հոսում:

- Մրա միջի ռեզինը մաշվել ա, պտի փոխվի:

- Այդ ե՞ր մաշվեց, եղբայր, հազիվ երեք շաբաթ է, որ ինքը ես դրել նոր ծորակը ու միայն ես եմ այն օգտագործում, այդ ո՞նց մաշվեց: Ինչ որ սխալ բան կա, վարպետ, - ասում եմ ես:

- Բաքա մ, ի՞նչ իմանամ, կարող ա հենց սկզբից էլ հին ա ըլել:

- Ո՞նց թե հին, այդ դու չե՞ս ութանասուն հազար առել Վահիկից այս նոր ծորակի համար:

- Էլ շատ մի երկարացնի, պարոն, թե ուզում ես սարքեմ, կսարքեմ, - չար, հարձակողական հայացքով՝ ուղղակի աշքերիս մեջ նայելով, ասում է ավազակի նմանող այդ գաճաճ մարդուկը:

- «Ի՞նչ անեմ արդյոք», - ինքս ինձ մտածում եմ, - դուրս չվոնդե՞մ այս փոքրամարմին ճիվաղին, բայց միևնույն ժամանակ մտահող եմ. ծորակը հանել է, եթե վրնդեմ՝ պիտի թողնի ու զնա, ես էլ պիտի մնամ շվար վիճակում: Մեկ վայրկյան տևեց իմ մտածումների շղթան ի մի բերելը:

- Սարքի, սարքի, ախաղեր, այս ինչ նեղացկուտն ես, մի բան էր ասինք էլի:

- Ռուբիկ,- շրջվելով երիտասարդի կողմը ասաց նա,- զնա խանութ, ես ռեզինից բեր, ես էլ, մինչև գաս, տակի տրութեքը կը ստուգեմ:

Որոշեցի «Ժիանգարել» «Վարպետ» Սերոժին և միայն հետևել թե ինչ է անելու: Ես արդեն նախապես ստուգել էի այդ խողովակները, որոնք նոր էին և դրանցից չեր կարող ջուր հոսել: Մինչ նա իր գաճաճ մարմնով ազատորեն մտնում էր ծորակի տակ՝ դյուրաքեք խողովակները փոխելու, մի բան, որ ես չէի կարող անել իմ պարարտ ստամբքսի պատճառով, ես մտքով գնացի քառասուն տարի ես.

1977 թվականի աշնանը, երբ հայտնի դարձավ, որ Խորհրդային իշխանությունները մեզ արտոնել են Միացյալ Նահանգներ մեկնել, ես որոշեցի արհեստ սովորել: Ո՞վ էր ինձ Լու Անջելեսում ճանաչում, ո՞վ պիտի ինձ համապատասխան աշխատանք տար, մանավանդ որ, անզերեն էլ չգիտեի: Լսել էինք, գիտեինք, որ սկզբնական շրջանի համար կարող էինք կառավարական նպաստ ստանալ և օգտվել ձրիաբար տրվող սննդի կտրոններից: Սակայն ես, բնավ մտադրություն չունեի օգնության համար դիմել ամերիկյան նման բնույթի օրենքին: Ես ցանկանում էի ինքս, իմ աշխատանքով պահել իմ ընտանիքը:

Մի բարեկամի միջնորդությամբ աշխատանքի անցա Արտաշատի շրջանի զյուղերից մեկում կառուցվող մի շենքի փականագործների խմբի մեջ: Աշղեկ Դերոն (Դերենիկ) առաջին իսկ վայրկյանից հասկացավ, որ ես այն մարդը չեմ, որ կարողանամ շենքի գետնահարկում փականագործական աշխատանքներ կատարել և ինձ կցեց մի խմբի, որն զբաղված էր բնակարաններում լվացարաններ, ծորակներ և այլ պարագաներ տեղադրելով: Մի քանի օրում՝ առանց որևէ մեկի օգնության, սկսեցի ինքս գլուխ հանել արհեստից:

Ոչ ոք չգիտեր իմ իրական մասնագիտության մասին: Աշղեկը և բանվորները առանձին հարգանք էին տածում իմ

Նկատմամբ. «Դու ով ես, ինչ ես՝ չգիտեմ, բայց տեսնում եմ, որ դու արհեստի մարդ չես»,- ասում էր աշղեկը,- դու կարդացած մարդ ես երևում, դու նատիր, մի աշխատի, դու միայն խոսիր, դու հետաքրքիր բաներ ես պատմում, մենք քո փոխարեն կաշխատենք»:

Իմ ով և ինչ լինելու գաղտնիքը երկրորդ ամսում բացահայտվեց:

Հեռուստատեսությամբ կենդանի համերգ է և ես եմ դիրիժորը: Համերգի հաջորդ օրը, առավոտյան ժամը յոթին, սովորականի պես, իմ մեքենայով գնում եմ աշխատանքի: Մեքենայիս հայտնվելու պես, շինհրապարակի մուտքին կանգնած մի խումբ բանվորներ սկսեցին ծափահարել: Ինձ համար հասկանալի էր ամեն ինչ:

Հազիկ մեքենայից իջած, ինձ մոտեցավ աշղեկը և հրավիրեց գրասենյակ.

- Հենրիկ, երեկ գիշեր ամբողջ զյուղը տեսել է քեզ հեռուստատեսությամբ, հիմա չգիտեմ, ի՞նչ որոշում ես կայացնելու, արդեն բոլորս էլ զյսի էինք ընկել, որ դու այն մարդը չես, որ փորձում էիր ներկայանալ: Ասա, ի՞նչ նպատակ էիր հետապնդում:

Փախուստ չկար. ես ստիպված եղա բացել ամբողջ գաղտնիքը:

- Ինձ թվում է, դու այս պայմաններում այլևս չես կարող աշխատել, ի՞նչ ես մտածում,- ասաց աշղեկ Դերոն:

- Դուք ճիշտ եք, հիմա իսկ կգնամ, ամեն դեպքում ես շատ շնորհակալ եմ Ձեզ, որ խախտելով աշխատանքային օրենսգիրքը, առանց աշխատանքային գրքույկի ընդունեցիք ինձ աշխատանքի: Այս կամ այն չափով ես արհեստ սովորեցի և դա ինձ պետք է զալու:

Երկու շաբաթ անց, մի երեկո մեր տուն է կան իմ աշխատանքային երեք ընկերներն ու հյուրասենյակի սեղանին դրեցին իմ սիրած Նաիրի կոնյակն ու դրամով լի մի ծրար:

- Այսր, ես գրեթե ոչինչ չեմ արել, ինչո՞ւ եք այսքան դրամ բերել,- ամոթխած ասացի ես:

- Դա քո աշխատավարձն է, մենք երկու ամիս վայելեցինք քո

հաճելի ներկայությունը,- ասաց աշղեկ Դերոն,- քովոյ տվեք ասել, Մաեստրո, երանի չգնայիք Ամերիկա ու մշտապես մեր կողքին լինեիք, հենց այնպես, առանց աշխատելու, չնայած լավ է սովորեցիք արհեստը, Դուք կխոսեիք, կպատմեիք, մենք ել հաճուքով կաշխատեինք, բայց, քանի որ հաստատ է Զեր որոշումը, ուրեմն մնում է հաջողություն մադրել Ձեզ:

...Հիմա այս «վարպետ» կոչված Սերոժը չի կարողանում ավարտել գործը ամբողջ օրվա ընթացքում: Մի տասը անգամ ծորակը հանեց՝ հետո տեղը դրեց, տակի զուգ խողովակները փոխեց, - միևնույն է՝ չի լինում: Կաթոցը չի վերանում:

- Զէ, ախաղեր, չգիտեմ ինչ ասեմ, վաղը մի ուրիշ կոանտ կը բերեմ,- ասաց նա:

- Բա այս հինը ինչի՝ ես տանում, - հարցրի ես:

- Մեջը մի երկու մաս պիտի փոխեմ, կարող աշխատի...

Հաջորդ օրը մի՝ հասարակից ել հասարակ ծորակ ձեռքին, մի ուրիշ երիտասարդի հետ, եկավ մեր փինաշին:

- Էսիգ լավ կը լինի, կը տեսնաս...

- Ինչ լավ, - ծաղրական տոնով ասացի, - հենց վրայից ել երևում է, որ տակի մասն ավելի փոքր է, քան պետք է:

- Այսր... ախր, դու ինչ ես հասկանում, դու քո մուզիկով զբաղվի...

- Դե լավ, լավ, փորձիր, - ստիպված համակերպվեցի այս խենքի հետ:

Դարձյալ մինչև երեկո «աշխատեց» «վարպետ» Սերոժը և ոչինչ չստացվեց: Այս անգամ, կաթոց չկար, բայց ծորակը խաղում էր, քանի որ անցքը չէր համապատասխանում ծորակի նստուկին, այն փոքր էր անցքից:

- Վարպետ, դե պարոնը ճիշտ է ասում, կի, զոռով հո չի, ես կոանքը իրանը չի, - դիտողություն արեց երիտասարդը:

- Դե լավ, թող մնա վաղը, եսօր արդեն ուշ ա, մի կերպ յոլա գնացեք, վաղը ուրիշ կոանք կը բերեմ:

- Բա այս հինն ի նշ եղավ, - հարցրի:

- Են կը սարքեմ, կը բերեմ, - ասաց փինաշի վարպետն ու իրերն հավաքելով, արագորեն հեռացավ:

Հաջորդ օրն էի Մի քանի ժամ աշխատելուց հետո, մեկ ուրիշ նոր, հասարակ ծորակ տեղադրեց Սերոժը և ավարտեց գործը. կոմեդիան ավարտվեց բավական սուլ գնով...

- Էս կոանքն էլ իմ կողմից նվեր,- ասաց նա:
- Ես նվերի կարիք չունեմ:
- Բարձ մ, ամոք ա, մի քան չի, տասը հազարով եմ առի...
- Ինչքա՞ն եմ վճարելու:
- Հարյուր քան հազար...
- Ի՞նչ..., հարյուր քան հազար դրա՞մ... այսինքն մոտ երեք հարյուր դոլար...

- Հա, էս ինչի՞ ես զարմանում որ, պարոն... երեք օր աշխատե՞լ եմ, օրը քառասուն հազար, էդքան չի անում, իլա էս տղուն էլ մի քան պտի տամ, չէ՞... էս կոանքն էլ՝ քեզ փեշքեց...

- Էդ տղեն ի՞նչ ա արել, ինձ հետ ամբողջ օրը նստել առարձ է խմել:

- Չեմ իմանում, ախաղեր ջան, էդիկ, քո իմանալու քանն ա, փողը տուր գնանք, մենք ուրիշ տեղ էլ գործ ունենք:

Ճար չունեի, խենթի հետ էր գործս, ստիպված էի համակերպվել հաշվեցի դրամն ու դրի վայ արհեստավոր Սերոժի ափի մեջ, չմոռանալով հարցնել.

- Ի՞նչ եղավ իմ հին ծորակը, ինչո՞ւ չես բերել:  
- Էս երկու օրը կը սարքեմ, կը բերեմ,- ասաց նա ու մեկ երկու վայրկյանի մեջ դուրս թռավլոնից:

Մի քանի օր անց Վահիկը զանգահարեց Սիդնեյից.

- Հը, Մաեստրո, ի՞նչ եղավ, եդ մարդը եկա՞վ, ծորակը սարքե՞ց, գոհ մնացի ր:

Պատմեցի եղածը, խեղճը, ամոքահար, չգիտեր ինչ ասեր:

Մնացյալ դատողությունները թողնում եմ ընթերցողին:

Հունիսի 20, 2012 թ.,  
Երևան

## ԳՈՐԳԵՐԻ ԼՎԱՑՔԱՏԱՆ ԱՆՈՒՇԸ

Բիզնես հասկացողությունը լավագույնս արմատավորված է այսօրվա Հայաստանում։ Ինչ կարգի ծառայություն ասես, որ չկա։ Դե, տաքսի ծառայությունը հնուց է զալիս, նոր երևույթ չէ։ Իսկ ահա՝ տան սարքավորումների, կահ-կարասու գնման, փոխադրման, հագուստի, սպիտակեղենի, գորգերի և այլնի լվացման-մաքրման, խոշոր հանրախանութներից ու սննդի կետերից ուտելիքի, խմիչքի առաքման հեռախոսային պատվերների ընդունման և այլ ծառայությունները նորություն են։

Ընդունված բիզնես է այս կամ այն ճաշարանից կամ ուստորանից ուտելիք պատվիրելը, իսկ պիցցայի՝ նման կարգի սպասարկում, ամենաշահավետ բիզնեսներից է, մանավանդ երիտասարդների համար։

Յուրաքանչյուր շենքի նախամուտքի պատերին մշտապես փակցվում են տասնյակներով ազդագրեր՝ այսինչ կամ այնինչ կարգի սպասարկման համար գրավիչ առաջարկություններով։ Դրանցից մեկն էլ բնակարանի կամ որևէ հիմնարկի գորգերի լվացման առաջարկությունն է անհայտ մի ընկերության կողմից՝ շատ հարմար պայմաններով։

Եվ ամենազրավիչն այդ ազդագրերում այն է, որ ընկերության բանվորներն են զալիս քո բնակարան, իրենք են հավաքում գորգերն ու ուղեգորգերը, ոլորում ու ուսերին դրած տաննում են իրենց գործատեղին։

Չն դեռ ոչի՞նչ... մի քանի օր անց, քիմիական մաքրումից հետո բերում են ապրանքը ու տեղադրում այնտեղ, որտեղ որ հարմար ես գտնում։

Այս ամեն տեղեկությունները հավաքեցի Երևան ժամանելու հենց առաջին օրը՝ իմ բնակարանի շքամուտքի պատերին հիակցված ազդագրերից։ Չորս ամիս անդադար տնից դուրս զալիս կամ վերադարձիս, աչքիս էին զարնում՝ շատ անգամ ոչ մաքուր հայերենով գրված ազդագրերը, սակայն ամենակա-

ըսորը՝ հաստատության հասցեն և հեռախոսի թիվը, խոշոր չափսի գրերով:

Այսօր Երևանում հրաշալիորեն ընդօրինակում են այն ամեն լավն ու գնահատելին, որ կա եվրոպական երկրներում և, մասնավորապես, Ամերիկայում: Եվ մարդիկ այնքան են միարձված օտար բարբերի մեջ, որ գնահատելի իմաստով, շատ անգամ իրենք իրենց գերազանցում են:

Ահա, մեր ասածի լավագույն օրինակներից մեկը:

Իմ ծննդյան 75-ամյակը Երևանում նախապատրաստելու համար, ես արդեն չորս ամիս Երևանում եի: Իմ «Սիփան» երգչախումբը՝ Մարիետայի հետ, Երևան էր ժամանելու երեկոյից մեկ շաբաթ առաջ:

- Մաեստրո, Ձեր գորգերը վաղուց չեն մաքրվել, - ասում է երկու շաբաթը մեկ իմ բնակարանը մաքրող, կարգի բերող, նախկինում քիմիայի մասնագետ քառասնամյա Նունեն, - մեկ շաբաթից Մարիետան գալու է: Լավ կլինի մարդ կանչեք, որ մաքրեն, թեև հազիվ թե կարողանաք այս մի քանի օրերի ընթացքում հաջողացնել, մանավանդ, որ շաբաթվա վերջ է:

- Լավ ես ասում, Նունե, Մարիետայի համար մեծ անակնկալ կլինի, այսօր իսկ կիետաքրքրվեմ:

Թեև մուտքի պատերին կա գորգեր մաքրող ընկերությունների մեկ-երկու ազդագիր, բայց չեմ ուզում գործից անտեղյակ մարդ երևալ հեռախոսի մյուս ծայրին հայտնվող մարդկանց համար, որովհետև, ինչպես ասում են՝ «տառապանք փորձ ունի», տարիների ընթացքում ինձ շատ են խարել Հայաստանի «արիեստավորները»: Որոշեցի դիմել բարեկամիս.

- Իռա (իսկական անունը Իրինա է) շան, ուզում եմ մինչև Մարիետայի գալը մեր տան գորգերը մաքրել տալ, ի՞նչ խորհուրդ կտաս:

- Այսր, Հենրիկ շան, երկար ժամանակ է Երևանում ես, ինչ է, նո՞ր միտքդ ընկապ, շատ ես ուշացել է, դրանք շատ գործ են ունենում և լավ, որակով գործ են անում ու հազիվ թե մեկ շաբաթում կարողանան քո պատվերը կատարել: Անցյալ շաբաթ Նարինեի (իր աղջկն է) գորգերը լվացին, մաքրեցին:

Հիմա կտամ դրանց հեռախոսահամարը, փորձիր, գուցե կարողանաս համոզել, որ քո պատվերը 3-4 օրում անեն:

-Այսօր շաբաթ է,- ասում եմ ինքս ինձ,- հավանաբար, շաբաթ և կիրակի օրերին չեն աշխատում, իսկ Մարիետան գալիս է հինգշաբթի, չէ, չեն հասցնի: -Այնուամենայնիվ, զանգահարիր, Հենրիկ,- ինչ որ մի ներքին ձայն ասում է ինձ և ես արագորեն, բջջայինով հեռաձայնում եմ Իռայի տված համարով.

- Ալո, բարև Ձեզ, լսում եմ,- ասում է մի հաճելի ձայն, որից դժվար չէ ենթադրել, որ խոսողը երիտասարդ օրիորդ է:

- Աղջիկս, ասա խնդրեմ, գորդ լվանալու ընկերությունից է, կարո՞ն դուք պատվեր տալ:

- Այո, հայրիկ ջան,- բարեհամբույր տոնով ասում է աղջիկը,- բայց այսօր տղաները չեն աշխատում: Շաբաթ օրը միայն առաքման օր է, պատվերներն են բաժանում: Դուք երկուշաբթի զանգահարեք, ես Ձեր պատվերը կընդունեմ:

- Բայց ինձ շատ շտապ է պետք, աղջիկս, քանի՞ օր հետո պատրաստ կինի իմ պատվերը:

- Ամենաշուտը յոթ-ութ օրից, հայրիկ ջան, շատ գործ ունենք, իսկ եղանակներն ել այս օրերին այնքան ել բարենպաստ չեն:

- Ի՞նչ կապ ունի եղանակը գորդ լվանալու հետ, քանի որ այսքան բարեկամաբար գրուցում ենք, աղջիկս, ասա, խնդրեմ, քո անունը:

- Անուշ է իմ անունը, հայրիկ ջան, Անուշ:

- Անուշ ջան, շատ անուշ ել խոսում ես: Աղջիկս, մի քան ասացիր, ես շատ չհասկացա: Ի՞նչ կապ ունի գորդ լվանալը եղանակի հետ:

- Ինչպես թե, մենք սիրում ենք բաց օդում, արևի տակ չորացնել գորգերը, իսկ անձրեսու և ցուրտ եղանակին՝ Եվրոպայից բերված վառարանների մեջ ենք չորացնում:

- Հասկացա, Անուշ ջան, շատ լավ էլ բացատրեցիր: Հիմա ուշադիր լսիր ինձ, քանի որ շատ-շատ կարևոր է ասելիքս:

- Հանգիստ եղեք, հայրիկ ջան, ես շատ ժամանակ ունեմ: Մարդիկ գիտեն, որ այսօր պատվեր չենք ընդունում, ըստ այնմ ել չեն անհանգստացնում:

- Ավելի լավ: Ուրեմն, լսիր ինձ: Անհրաժեշտ է, որ իմ տան գորգերն ու ուղեգորգերը ամենաուշը չորեքշաբթի օրը լվացված, մաքրված լինեն:

- Ի՞նչ, չորեքշաբթի՝, այսինքն երկու-երեք օրի՞ց, անկարելի է, ինարավոր չի:

- Խնդրում եմ, աղջիկս, ինձ մի ընդհատիր. լսիր մինչև վերջ, - աղաշական տոնով փորձում եմ անկարելին՝ կարելիի վերածել, - զալիք հինգշաբթի, Ամերիկայից զալիս է կինս՝ իմ «Սիփան» երգչախմբի անդամների հետ, մասնակցելու սեպտեմբերի 26-ին կայանալիք իմ հոբեյանական երեկոյին:

- Ի՞նչ, ի՞նչ համերգ, - այս անգամ զարմանում է Անուշը, ինչպես ու է Ձեր անունը, հայրիկ...

- Ճիշտ է, ես քո հոր տարիքին եմ երեխ, բայց ինձ Մաեստրո ասա: Իմ անունը Հենրիկ Անայան է:

- Օ՛... Աստված իմ, Դո՛ք եք Հենրիկ Անայանը, ի՞նչ եք ասում, Մաեստրո: Ես ամեն օր անցնում եմ Մեծ դահլիճի մոտով և ամեն օր ել կարդում եմ Ձեր ազդագիրը:

- Տեսա՞ր, կնշանակի մենք ծանոթներ ենք, իսկ դու սիրո՞ւմ ես մարուր, ազնիվ երաժշտություն:

- Ինչպես ոչ չէ, ես մշտապես հաճախում եմ ֆիլհարմոնիա և օպերային թատրոն:

- Ուրեմն, դու պետք է, որ զաս իմ համերգին, այնպես չէ:

- Անպայման, իհարկե:

- Համարիր, որ դու երկու հրավիրատում ունես:

- Չե, ոչ, ի՞նչ հրավեր, ես տոմսակ կգնեմ: Ես վաստ չեմ վարձատրվում: Ես իհմա այստեղ բոլորին իրար կխառնեմ, տնօրենին ել կրացատրեմ, թե ում պատվերն ենք կատարելու: Նա իմ խնդրանքը չի մերժի: Հիմա, խնդրում եմ, Մաեստրո, լսափողը կախեք, ես Ձեզ ամենաուշը կես ժամից կզանգեմ, Ձեր հեռախոսի համարը գրանցված է մեզ մոտ:

- Լավ, սիրելիս, ես սպասում եմ:

Կես ժամ ել չեր անցել, մեկ ել՝ հեռախոսազանգ.

- Ես եմ, Մաեստրո, Անուշը, ուրախալի լուր: Մեր տղաները համաձայնվեցին այսօր իսկ իրենց ձանապարհին անցնել Ձեզ

մոտ և վերցնել Ձեր գորգերն ու ուղեգորգերը:

- Հիանալի, սքանչելի է, սիրելիս: Ես շատ երախտապարտ եմ քեզ:

- Այժմ տվեք Ձեր հասցեն, Մաեստրո: Մենք ամեն ինչ կանենք, որպեսզի չորեքշաբթի օրը Ձեր գորգերը Ձեր տանը լինեն, միայն չափեք, թե ընդամենը քանի քառակուսի մետր կլինի: Ցուրաքանչյուր քառակուսի մետրի արժեքն է հինգ հարյուր դրամ:

Ես զգիտեմ ոնց, թե ինչպես, իմ՝ գորգերն ու ուղեգորգերը հիանալիորեն մաքրված, նորի տեսք ստացած վերադարձեցին ու տեղադրվեցին ոչ թե չորեքշաբթի, այլ՝ երեքշաբթի օրը:

- Մենք ամեն ինչ արեցինք, որպեսզի մեկ օր շուտ ավարտենք Ձեր գործը, հարգելի Մաեստրո,- հեռաձայնով ասաց Անուշը,- Դուք լիուլի ժամանակ կունենաք ամբողջովին կարգի բերելու Ձեր բնակարանը, նախքան Ձեր կնոջ ժամանելը: Չմոռանաք իմ հրավիրատոմսերն ուղարկել բանվորների հետ, Մաեստրո,- սրտաբուխ իննորոշով ավարտեց իր խոսքը հեռվից-հեռու բարեկամ դարձած Անուշը:

Հոբելյանական երեկոյի ավարտին ինքս բեմից սրահ իջա՝ ընդունելու համար մեծաթիվ մարդկանց շնորհավորանքները: Ո՞ւր է արդյոք Անուշը, ինչպես գտնեմ նրան, ում անձնապես չեմ տեսել, բայց աղջիկը այնպիսի ջերմ, մարդկային, բարոյական զգացումներ էր առաջ բերել իմ հոգում, որ այդ անծանոթ մարդկանց մեջ միայն նրան եմ փնտրում: Մեկ էլ աշխ ընկապ հեռվում կանգնած մի երիտասարդ զույգի:- «Անուշն է, հաստատ նա է», - փորձում եմ համոզել ինքս ինձ ու կանգնածներին թողած, մանր քայլերով առաջանում եմ դեպի այդ զույգը: Նկատելով իմ այդ վարմունքը, զույգն էլ գալիս է ինձ ընդառաջ:

- Անո՞ւշ, իմ լավ աղջիկ, դու ես, չէ՞...

- Այո, այո, իհարկե ես եմ, Մաեստրո, ես եմ, ես,- ու ձեռքի ծաղկեփունջը փոխանցելով կողքին կանգնած երիտասարդին, անբոնազբոս ծիծաղով փաթաթվում է ինձ ու ավելացնում,-

եկեք մոտենանք տիկին Մարիետային, նրա մասին է շատ խոսք եղավ այսօր:

Մարիետան էլ ընկերուիիների և ծաղկեփնջերի մեջ «խեղղված», չի էլ նկատել իմ փոքր-ինչ հեռանալը:

- Մար ջան, խնդրեմ, ծանոթացիր, Անուշն է, ես քեզ պատմել եմ նրա մասին:

- Օ՛, ինչ ուրախ եմ, Անուշիկ, ապրեք Դուք, շնորհակալություն Ձեր հիանալի վերաբերմունքի և լավ, որակով արված գործի համար:

- Ի՞նչ եք ասում, տիկին Մարիետա, դա մեր գործն է, ես եմ շնորհակալ այս հրաշք երեկոյի համար,- ասաց Անուշը և երիտասարդի ձեռքից վերցնելով ծաղկեփունջը տվեց Մարիետային ու ավելացրեց,- օ՛, կներեք, ես Ձեզ չծանոթացրի, իմ նշանածն է՝ Միհրանը:

- Ա՛խ այդպես... ուրեմն, սպասենք հարսանիքին, հը, ի՞նչ կասես, Անուշ ջան,- արդեն ես կի:

- Անշուշտ, անպայման, Մաեստրո, սպասում ենք Ձեզ տեսնել հաջորդ տարի, Դուք մեր ամենապատվավոր հյուրը կլինեք:

Հունիսի 23, 2012 թ.,  
Երևան

## ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈՅԻ ԱՆՍԱՆ ԵՎ ՆՈՐՔԻ ԲԱՐՁՈՒՆՔԸ

...Ընդամենը մեկ շաբաթ է, որ Հայաստանում եմ: Հանգստանալ չկա, հսկայական գործ ունեմ անելու: Սեպտեմբերին հոքեյանս է նշվում: Ճիշտ է, մշակույթի և սփյուռքի նախարարություններն են հովանավորում ձեռնարկը, բայց հիմնական գործն իմ ուսերին է ընկած: Տեղական լրատվամիջոցները դեռ գործի չեն անցել, բայց...

- Պարոն Անասյան, Դո՞ւք եք, այո՞ ...
- Այո, ես եմ, լսում եմ Ձեզ, իսկ Դո՞ւք ով եք:
- Աննա Սահակյանն է խոսում Ձեզ հետ, հանրային ուսումնական սփյուռքի բաժնից:
- Լսում եմ Ձեզ, ի՞նչ կա, ի՞նչ հարցով:
- Հարցազրույց եմ ուզում ունենալ Ձեզ հետ: Կարո՞ղ ենք վաղը հանդիպել, ո՞ր ժամին է Ձեզ հարմար:
- Ինձ համար միևնույնն է, սակայն նախընտրելի է առավոտյան ժամերին:
- Շատ լավ, ժամը տասին հարմա՞ր է:
- Այո, հարմար է:
- Խնդրում եմ, Ձեզ հետ բերել նյութեր, որովհետև հարցազրույցից բացի հաղորդում եմ պատրաստելու:

Հաջորդ օրն իմ տնից քայլելով գնում եմ Ռադիոկոմիտե, հեռու չէ, հազիվ մեկ մղոն: Ու ամբողջ ճանապարհին մտքով ու հիշողություններով կոմիտեի հետ եմ. չէ՞ որ իմ երիտասարդական լավագույն տարիներն անցել են այդ հաստատությունում:

16 տարի անդադար գնացել-եկել եմ, շատ անգամ կ՝ օրը մի քանի անգամ, Կոմիտասի անվան երաժշտանոցից Ռադիոկոմիտե և հակառակ ուղղությամբ: Քիչ չէ: Երեք նախազահ եմ «կոյսել»: Վերջինը պատմաբան, քաղաքական գործիչ Պողոս-

յան Ստեփանն էր, իիանալի մարդ, բավականին խիստ աշխատանքի վայրում, իսկ դրանից դուրս՝ պարզ, հաղորդակց ընկեր: Նրա հետ կապված անմոռաց հիշողություններ ունեմ, որոնց մասին ապագայում կզրեմ:

Տարբեր պաշտոններ եմ վարել երաժշտական հաղորդումների գիշավոր խմբագրությունում. եղել եմ ֆոնդային (մենայուն) ձայնագրությունների բաժնի վարիչ, դեկավարել եմ սիմֆոնիկ նվազախումբն ու ժողովրդական գործիքների համույթը, աշխատել եմ փառարանված երգչուիի Օֆելյա Համբարձումյանի, նույնքան փառահետ երգիչ Ռուբեն Մաթևոսյանի, Հովհաննես Բաղայանի և այլոց հետ, այդտեղ եմ ձայնագրել իմ բազմաթիվ երգերն ու մշակումները:

... Ահա և ուղիոյի շենքը: Աննան մուտքի հսկիչ-ոստիկանի հետ գրուցի է բոնված: Հստակ է. ինձ դիմավորելու համար: Նկատում եմ, որ Աննան շտապում է, վայրկյաններն անցնում են: Լավ է, որ ստուդիան առաջին հարկում է: Պարզվում է, որ հաղորդումը կենդանի, ուղիղ ձևով է սփռվելու եթեր և ճիշտ ժամանակին: Նախապես ոչինչ չգիտեմ թե ինչ հարցերի եմ պատասխանելու:

Թվում է, թե հեռուստատեսությունը կուլ է տվել ամեն ինչ թատրոն, ֆիլմաշխարհ, ուղիո... դե, ուղիո է, էլի, ո՞վ է հիմա ուղիո լսում,- ասում ենք շատ հաճախ. ոչ, բնավ է այդպես չէ: Ես շատերին գիտեմ, որ տանը, մանավանդ խոհանոցում, օրը 24 ժամ ուղինահղորդումներ են ունկնդրում: Ուստի ես մի քիչ անհանգիստ եմ, թե Աննան ինչ հարցեր է տալու:

- Մի անհանգստանաք, պարոն Աննայան,- ստուդիայի դրանք շհասած ասում է Աննան,- շուտով Ձեր հոբեյանն է, չէ, հիմնականում դրա շուրջն է լինելու մեր գրուցը:

Կես ժամ տևող հարցագրույցը անցնում է շերմ ու անմիջական մթնոլորտում: Փորձառու լրագրող է Աննան: Անմիջական, աշխույժ, հստակ առողանության շնորհիվ պիտի որ մեծ լսարան ունենա Աննան: Իր գրավիչ արտաքինի նման,

գրավիչ է նաև մեղմ, նուրբ ու քնքուշ առողանությունը՝ դիմացինին լսելու յուրովի ունակությամբ:

- Ի՞նչ ես կարծում, Աննա, մեզ լսողներ եղա՞ն,- հարցնում ես ես:

Զարմացած իմ միամիտ հարցից, Աննան պատասխանում է.

- Մաեստրո ջան, եթե տղամարդիկ էլ չլսեն, վստահ եղեք, որ տանը եղած բոլոր տանտիրուիհիներն իրենց խոհանոցներում մշտապես լսում են իմ հաղորդումները:

Պաշտոնական հաղորդումն ավարտվելուց հետո, Աննայի հետ դուրս եկանք շենքից և փողոցի կողմից գետնահարկ մուտքով մտանք բավական հաճելի սրճարանը՝ մեկ գավաթ սուրճի ընկերակցությամբ շարունակելու արդեն ոչ պաշտոնական գրույցը:

Տուն, ընտանիք, երեխաներ ընդհանուր թեման երկուստեք շոշափելուց հետո, Աննան դիմեց ինձ:

- Սիրելի Մաեստրո, մի շատ կարևոր խնդրանքով եմ ուզում դիմել, միայն թե չգիտեմ ինչպես սկսել:

- Աննա ջան, սիրելիս, ազատ զգա քեզ և խնդրիր ինչի կարիք, որ ունես, պատրաստ եմ ուժերիս ներածին շափ օգտակար լինել քեզ:

- Կներեք, պարոն Անասյան, Դուք ինձ սխալ հասկացաք, դա էլ, հավանաբար նրանից է, որ Ձեզ հաճախ են դիմում նյութականի հետ կապված խնդիրներով: Իմ խնդրանքը քնալ նյութականի հետ չի կապված:

- Ներողություն, աղջիկս, ես սխալ հասկացա, դու ճիշտ ել լուսաբանեցիր պատճառը, դե հիմա ասա:

- Քույրս իր ընտանիքով տաս տարի է Լու Անջելեսում է ապրում: Երեք անգամ հրավեր է ուղարկել, որպեսզի մեկ ամսով հյուր լինեմ իրենց մոտ, ամերիկյան դեսպանատունն արդեն քանի անգամ է մերժում է՝ մշտապես նույն հանգերգով, «Նպատակահարմար չենք գտնում»:

- Զարմանալի է: Իսկ քույրդ օրինակա՞ն է հաստատվել Ամերիկայում:

- Այո, Մաեստրո, դա բնավ կապ չունի: Պարզապես մերժում են ու, վերջ: Եվ շատ-շատերի են մերժում: Զեզ լավ ճանաչող-ներից մեկը, որի անունը չեմ կարող բարձրածայնել, խորհուրդ տվեց դիմել Զեզ: Եթե Դուք Զեր անունով հրավեր ուղարկեք, Զեզ չեն մերժի...

- Իրականում ճիշտ են ասել: Դեռ խորհրդային օրերից վստահություն կա իմ և իմ ընտանիքի նկատմամբ: Կարծում եմ այդ վստահությունն առաջացավ մեր Ամերիկա ոտք դնելու առաջին իսկ օրվանից:

- Այդ ինչպես և, ինչպես և հասկանալ, Մաեստրո:

- Մանրամասնությունների մեջ չընկնեմ... երբ զաս Ամերիկա, ես քեզ ամեն ինչ կբացատրեմ: Մի խոսքով՝ վստահության և վարկի (*Credit*) հետ է կապված, իսկ իմ «Credit»-ը շատ բարձր է: 40 տարվա ընթացքում երկու տասնյակի չափ մարդ եմ հրավիրել և ոչ մեկը չի մերժվել: Այնպես որ, վստահ եղիր, որ դու կտեսնես քո քրոջը:

- Ես ինչ եք ասում պարոն Անասյան, մի՞թե ես կարժանանամ այդ բախտին:

- Այո, այո, իսկ հիմա թուղթ մատիտ հանիր և գրիր իմ հեռախոսի համարները: Ո՞րտեղ է ապրում քույրիկդ:

- Հոլիվուդում:

- Հիանալի, ես եկ եմ Հոլիվուդում ապրում, թող կապվի ինձ հետ, ուրեմն, մինչ հանդիպում՝ այս անգամ արդեն Ամերիկայում: Իսկ հիմա եկ բաժանվենք, ես այսօր մեկ հարցազրույց ևս ունեմ: Այս անգամ հեռուստատեսությամբ՝ հիանալի, փայլուն թատերագետ Հենրիկ Հովհաննիսյանի հետ:

... Դեռ կեսօրին եկ չենք հասել, բայց սոսկալի տաք է եղանակը: Աննայից բաժանվելուց հետո, որոշեցի քայլելով հասնել Մաշտոցի պողոտա, սակայն տեսնելով կանգառում թափուր վիճակում կանգնած, հաճախորդների սպասող երթուղային մեքենան, որոշեցի օգտվել նրա ծառայությունից, մանավանդ որ նրա ապակու վրա կարդացի թումանյան անունը:

- Լավ է, Թումանյան-Մաշտոցի անկյունը կիշնեմ, իսկ այն-

տեղից մինչև իմ բնակարանը երկու քայլ է,- մտածում եմ ինքս ինձ ու բարձրանում մեքենա:

Մի տաս րոպե սպասելուց հետո, հաճախորդներով լի մեքենան շարժվում է Խանջյան փողոցով դեպի վեր:

- Հաջորդը երևի իմ կանգառն է,- մտածում եմ ես ու պատրաստվում իջնել: Մեկ էլ ի՞նչ տեսնեմ. մեքենան չի թեքվում Թումանյան, այլ շարունակում է դեպի վեր, հասնում Հերացու փողոց ու կանգնում դեպի Նորք գնացող, հեռուստատեսության կայան տանող ճանապարհի խաչմերուկին:

- Աղջիկ ջան, բա Թումանյանը ուր մնաց,- հարցնում եմ կողքիս նստած մանկամարդ օրիորդին:

- Հայրիկ ջան, Դուք սխալ մեքենա եք նստել:

- Ինչպես թե սխալ... մեքենայի ապակու վրա ես կարդացի Թումանյան անունը:

- Հա, հիմա հասկացա, հայրիկ, ետղարձի ժամանակ է Թումանյանով անցնում:

- Իսկ հիմա ուր ենք, որն է վերջին կանգառը:

- Իններորդ մասսիվը (զանգված), հայրիկ:

- Հաջորդ կանգառը որ ըն է:

- Երկրորդ մասսիվը: Այնտեղ կարող եք իջնել մեքենայից և ետղարձ կատարել ու կրկին քաղաք վերադառնալ:

Նայում եմ ժամացույցին՝ դեռ երկու ժամ ունեմ: Ժամը երեքին երգիշ Արսեն Գրիգորյանն (Ասո) է զալու փորձի:

- Դե լավ, կզնամ երթուղու վերջին կանգառը ու ետ կդառնամ, համ է՝ բան-ման կտեսնեմ,- միանգամայն գոհ իմ որոշումից, շրջվում եմ դեպի օրիորդի կողմը ու ժպտալով և ձեռքերի անորոշ շարժումով հասկացնել տալով, թե «ի՞նչ անենք, թող այդպես լինի, սա ել իմ բախտն է...»:

- Հիմա հասնելու ենք երկրորդ մասսիվ, տեսէ՞ք, հեռվում Գայի արձանն է, կանգառն այնտեղ է, Դուք չե՞ք պատրաստվում իջնել:

- Ոչ, աղջիկս, շնորհակալ եմ, ես որոշեցի գնալ մինչև երթուղու վերջին կանգառը ու ետ դառնալ... ես ժամանակ

ունեմ, և հետո, տեսարան-բան կտեսնեմ:

- Ի՞նչ պիտի տեսնեք, հայրի՝ կ, հինգերորդ, վեցերորդ զանգվածից հետո բան չկա տեսնելու, իսկ իններորդում՝ առավել ևս, չոր, քաքարոտ, բլրի վրա, սովետից մնացած անխնամ վիճակում, զրեթե անմարդաբնակ շենքեր են:

Մի քանի կանգառ հետո աղջիկը «ցտեսություն» ասաց ու իշավ մերենայից: Ես եմ՝ իմ մաքերի հետ: Լավ է, որ բոլոր ձանապարհները ասֆալտապատված են: Գնալով մարդիկ պակասում են մայթերին, մերենաները՝ նույնպես: Ոլորապտույտ ձամփաներով վերջապես հասնում ենք իններորդ զանգված: Ինչպես ասում են՝ «Դրանից դենք աշխարհ չկա»: Մերենայում միայն երկուս ենք՝ վարորդն ու ես:

- Ախապեր ջան, դու ո՞ւր կերթաս, արդեն հասնինք կը մեր կենտրոնին: Ընդեղ մարդ-մուրդ, շենք-մենք չկա, ես ո՞ւր ես երթում:

- Ոչ մի տեղ կլ չեմ գնում, ախապեր ջան, մոլորվել եմ, մերենայիդ ապակու վրա տեսա, որ Թումանյան փողոց ես գնում՝ ես կլ նստեցի ռադիոյի մոտից:

- Վայ, քոռանամ ես, ի՞նչը սխալ ես հասկցե, հետ դատնալուն է, որ Թումանյանով կանցինք,-հոմերական ծիծաղի միջից ասում է վարորդը,- վնաս չունի, ախապերս, իհմա հասնինք կը մեր դիսպեչերանոցը, ուրիշ մերենա նստիս կը ու ես կերթաս, ուրիշ ավտո պտի երթա ինձմեն առաջ:

- Չե, ես քու մերենայով եմ ուզում ետ դառնալ:

- Ի՞նչ ըսեմ, ախապերս, ուրեմն կես ժամ պըտի սպասես, իմ պերերիվիս (*ընդմիջում*) վախտն է:

- Ոչինչ, ես կսպասեմ...

- Դու գիտես, ախապեր ջան: Դե որ եղաքես է, արի կտորը հաց կիսենք իրարու հետ, մե հատըմ կ պապիրոս կը միսենք, թե չէ ուրիշ վախտ ժամանակ չունիմ պապիրոս ծխելու:

Ետղարձին փոխեցի նստատեղս և անցա վարորդի կողքի նստատեղին:

- Այս ինչու՝ կանգառում մարդ չնստեց,- հարցնում եմ

վարորդին ետղարձի ճանապարհին:

- Ըստեղ ո՞ւր ա մարդ, որ նստի, ևս շենքերը տեսնիս կը՝ լրիվ դատարկ են: Քառուուն-հիսուն բնակարանոց շենքի մեջ հազիվ հինգ-վեց ընտանիք կապրին: Հըմմենը դատարկ են: Սադ զնացել են աշխարքի տարբեր կողմեր: Վախտին, հենց դիսպեչերանոցից ել լիքը ետ կերթայի, համա հիմա, տեսնիս կը, քանի աստանովկա է՝ մարդ չնստավ, երկրորդ, երրորդ մասսիվի վախտ կը շատնան:

Իսկապես ել, քանի մոտենում էինք քաղաքին այնքան մարդ էր ավելանում: «Զրաշխարհից» հետո, արդեն մի քանի ուղևոր կանգնած էին մեքենայի մեջ, մի քան, որ օրենքով արգելված է:

Վերջապես հասանք իմ փափազած թումանյան փողոցը:

- Ախապեր ջան, հասանք քու ուզած տեղդ, համա տունդ ո՞ւրտեղ է:

- Քիշը վար, աջիդ վրա դալանըմ կա, ընդեղ է, - ես ել անցա վարորդիս բարբառին:

- Յա՞ , դո՞ւ ի ինչը մեզի պես կը խոսիս...

- Սի՞ր մ կը Ձեր լեզուն, Ձեր բարբառը...

- Դե՞ , ըստ իսկական ախապեր ենք, ջա՞ն, դե սպասի, մի իջնի՞ , ես դալանի դեմք կը կայնիմ...

- Ըստեղ աստանովկա չկա, վտանգավոր է:

- Ծո՞ , ի՞նչ կըսիս, բա մենք ախապեր չե՞նք...

Մեքենայից իջնելիս երկու հարյուրանոց մետաղադրամը տվեցի առջևում նստած կնոջը, որ փոխանցի վարորդին:

- Տո՞ , ես ի՞նչ կենես, այ մարդ, ամոք չէ , բա մենք ախապեր չե՞նք...

... Ես արդեն մայթին էի:

\*\*\*

...Ամերիկա վերադարձից մի քանի օր անց Աննայի քրոջ և նոտարի հետ պատրաստեցինք հրավերը: Երեք օր անց այն արդեն Երևանում էր: Բոլոր անհրաժեշտ փաստաթղթերով զինված, Աննան ներկայանում է ամերիկյան դեսպանատուն և

փաթեթը դնում գործավարի առջև: Վերջինս՝ առանց փաստաթղթերը նայելու, հարցնում է, թե ո՞ւմ մոտ եք գնում: Աննան տալիս է իմ անունը:

Գործավարը համակարգչի վրա մի քանի կոճակ սեղմելուց հետո, մեկ ամսվա մուտքի արտոնագիր է տալիս մեր Աննային:

Դրանից հետո, արդեն որպես վստահված անձի, Աննան 2-3 անգամ զալիս գնում է: Վերջին անգամ տաս տարվա համար են մուտքի վիզա տվել: Այս շարաբաստիկ «Պսակաժահրից» շատ կարծ ժամանակ առաջ Աննան քրոջ հետ եկավ մեր տուն: Պարզվեց, որ աղջկա ընտանիքը այստեղ է ապրում և Աննան եկել է թոռանը տեսնելու առիթով: Դե ինչ, եկեք գնացեք, ի՞նչ կա որ, որքան կամենաք, եթե նյութականը ներում է...

Հունիսի 27, 2012 թ.,  
Երևան



ԵՐԿՈՒ ՎԻՊԱԿ

ԱՐԵՎԻ ՀՈՏԸ

ԻՆԾԻ ՔԵԶԻ ԿԸ ՊԱԿՄԻ

## ԱՐԵՎԻ ՀՈՏԸ

... Ղարսի գավառային դպրոցն ավարտած, հետազայում էլ Գերմանիայում տնտեսագետի վկայական ստացած Արշակը վերադարձել էր հայրենի քաղաք և աշխատում էր տեղի ոստիկանությունում: Որպես գրագիր, աշխատանքի բերումով մոտիկից ծանոթ էր Թուրքիայի ներքին քաղաքականության մութ ծալքերին:

Աղանայի կոտորածի մանրամասնությունները դեռ թարմ էին թե թուրքերի և, մանավանդ հայերի հիշողությունում: Արշակը զգում էր, որ վերադասի և ոստիկան «ընկերների» վերաբերմունքն իր նկատմամբ առաջվանը չէր: Գրասենյակ ելումուտ անողները խեթ ու ակընդետ հայացքով էին նայում երիտասարդ հային, ով եվրոպացուն հատուկ հագուկապով մշտապես գրավում էր շրջապատի ուշադրությունը:

Մթնոլորտը զնալով շիկանում էր: Արշակը մտածում էր թողնել աշխատանքը, բայց ինչո՞վ էր զբաղվելու, ի՞նչ էր անելու: Նա միակ աշխատողն էր ընտանիքում: Կինը՝ Հոռոմսիմը (Հոհիփսիմե), երեք արու զավակներն ու գեղեցկուիի դստրիկ Հուրիկը, ամեն երեկո, աչքերն հառած դարպասին, սպասում էին, թե ե՞րբ է հայրիկը մթերքներով ծանրաբեռ բակ մտնելու:

Գնալրվ ավելի ու ավելի էր մտահոգ դառնում Արշակը: Նա հասկանում էր, որ մոտ է այն օրը, երբ իրեն կհեռացնեն աշխատանքից:

- Լավ կլինի ինքս հեռանամ,- մտածում էր նա,-բայց իմ այդ քայլը ավելորդ կասկածների առիթ չի՝ տա արդյոք, ի՞նչ եմ ասելու... չե, թող իրենք ազատեն ինձ աշխատանքից, բայց մինչ այդ, հարկավոր է ընտանիքս տեղափոխել Հայաստան կամ Վրաստան:

Արշակը լսել էր, զիտեր, որ լրեւայն, անաղմուկ, առանց իշխանություններին տեղյակ պահելու, շատ հայ ընտանիքներ

Արարս գետն անցնելով, հաստատվում էին Թիֆլիսում կամ Երևանում:

Արշակը չէր կարողանում հաստատ որոշում կայացնել ընտանիքն ուղարկեր Թիֆլիս, թէ՝ Երևան: Գիտեր, որ իր ազգականներից ոմանք հաստատվել էին Թիֆլիսում, իսկ Հայաստանում որևէ մեկը չկար, ում կարողանար ապավինել սպասվելիք նեղ օրերի պարագայում: Ճիշտ է, հոգեպահուստում դեռ ուներ պապենական մի քանի ոռւսական կարմիր ոսկի, բայց հույս դնել դրա վրա այնքան էլ խելամիտ չէր:

Այնուամենայնիվ, որոշում կայացրեց հարեւան սայլապան Մկոյի օգնությամբ զլուխ բերել տեղափոխության գործը և Զավախիք միջով ընտանիքին հասցնել Թիֆլիս:

- Հոռոմսիմ ջան,- դիմեց նա կնոջը,- ես երեխերին ապահով կհասցնես Թիֆլիս: Լույսը չբացված, Մկոն սելով Ձեզ կտանի: Ես արդեն լուր տվել եմ մերոնց: Հավլաբարում են ապրում: Ինձ համար դժվար է աշխատանքից ազատվելը: Ես հսկողության տակ եմ, ինձ հետևում են, չէ՞ որ ես շատ քան գիտեմ իրենց մութ գործերի մասին: Ինչ որ մի քան պտտվում է հայերիս զլսին: Դուք տեղ հասեք, ես հարմար պահի կփախչեմ:

- Այսր ես ո՞նց եմ ես քոռոփերին պահելու Արշակ ջան, իմ ձերից էլ քան չի գալի: Ի՞նչ պըտի ըլի մեր վերջը...

- Հոռոմսիմ, սիրուն ջան, գիտես, մի քանի ոսկի ունենք իմ պապերից մնացած, առ ես չորս հատը, դրանցով որոշ ժամանակ կապրեք Թիֆլիսում մինչև իմ գալը, հետո, որքան որ գիտեմ, մերոնք Պեսկի թաղամասում երկաթագործի արհեստանց ունեն և կարող են օգտակար լինել մեզ: Իսկ ես կշանառ հնարավորինս շուտ, առանց որևէ մեկին տեղյակ պահելու հեռանալ այս վտանգավոր միջավայրից, որին մոտ ժամանակ-ներս փոթորկալից օրեր են սպասում:

...Հոռոմսիմը երեք արու և մեկ աղջիկ զավակների հետ մեկտեղ տեղավորվեց Հավլաբարի նեղլիկ փողոցներից մեկի սենյակ հիշեցնող գետնահարկում:

Անցան օրեր, շաբաթներ, սակայն Արշակից լուր չկար: Ըստանիքի կարմիր ոսկիներն էլ գնալով հալվում էին: Վիճակը

դառնում էր օրհասական: Կարիքից դրդված Հռոմեական սկսեց լվացարարություն անել: Անհայր ընտանիքի անորոշ ճակատագիրը դարձել էր համընդիանուր ուշադրության առարկա: Հայ համայնքը սիրել էր բարի ու ազնիվ Հռոմեականին, ով միայնակ, հազար ու մի զոհողությունների գնով, սրանքա տան լվացք անելով, չորս անչափահաս երեխաներ էր մեծացնում:

Հիմնականում հայ ընտանիքներով ամբողջացած Հավլաբարի հայությունը, որի մեջ կային նաև մեծ թվով դարսեցիներ, մտահոգ էին իրենց համաքաղաքացի, բարի, ազնիվ նորեկ ընտանիքի ճակատագրի համար, մանավանդ, որ ընտանիքում կային 12-14 տարեկան երեք պատանի և մի ութամյա աղջնակ:

Թիֆլիսի Պեսկի թաղամասի արհեստավորների ողջ բանակը սիրով իր գիրկը բացեց պատանիների առջև, նրանք որպես աշակերտ տեղավորվեցին թիթեղազործի, ապակեգործի և ատաղծագործի արհեստանոցներում, իսկ քնքույշ Հուրիկը մշտապես մոր հետ էր, որտեղ էլ որ նա լիներ:

Տղաները չէին վարձատրվում: Նրանց հնարավորություն էր տրվել արհեստ սովորել: Միակ «վարձատրությունն» այն էր, որ կեսօրին նրանք մեծերի հետ էին սեղան նստում՝ ճաշակելու համար համեղ ուտեստներն ու միևնույն ժամանակ լսելու հետաքրքիր պատմություններ աշխարհի կյանքից:

Այսպիսով, տան ամբողջ հոգսը ընկած էր Հռոմեական ուսերին: Որպես վարպետ լվացարարուիկ՝ նրան ձեռքից-ձեռք էին խլում: Լվացարարուի արհեստը նա հասցրել էր կատարելության: Պարզ, սովորական աղտոտ հազուստ կամ սպիտակեղեն լվանալու, այնուհետև արդուկելու գործողությունը նրա հմուտ ու ջլու ձեռքերում արվեստի էր վերածվում:

Հռոմեական համբավը որպես վարպետ լվացարարուի, դուրս ելավ Հավլաբար թաղից ու հասավ կենտրոն՝ Թիֆլիսի Արամյանցի փառաբանված հիվանդանոց, որտեղ կարող էին բուժվել միայն պատկառելի դրամ ունեցող հիվանդները:

Եվ այսպես Հռոմեական հայտնվում է համբավոր հիվանդանոցում:

Առաջին նորամուծությունը, որ նա ներդրեց իր գործունեու-

թյան մեջ հետևյալ մոտեցման մեջ էր. «Լվացքը պետք է փոել դրսում, բաց երկնքի տակ, արևոտ տեղում,- ասաց նա բանվորուիներին,- լվացված սավանից, սպիտակեղենից արևի հոտ պիտի զա: Եվ, հետո, լվացքը պիտի արդուկել չուզունե արդուկով և այն պիտի տաքացնել փայտե ածուխով»:

- Արևի հո տ, փայտե ածուխով տաքացրած չուզունե արդուկ, - սա բոլորովին նոր մտածողություն էր լվացքի արհեստի մեջ:

Եվ, հետաքրքիրն այն է, որ հիվանդներն ու հիվանդանոցի բուժքույրերը, խևապես թարմություն և հաճելի բուրմունք «հայտնաբերեցին» «Հոռոմսիմի լվացքում»:

Այս ամբողջ նորամուծության բոլոր մանրամասները չեն վրիպում Հուրիկի ուշադրությունից: Ավելին, մանավանդ որ մայրը նրան ներգրավել էր այդ աշխատանքների մեջ, իսկ կիրակի օրերին, մասնավոր հաճախորդներին սպասարկելիս, Հուրիկը դառնում էր իր օգնականը: Մի խոսքով, թվում էր. թե մայրն իր աղջկա մեջ տեսնում էր ապագա լվացարարուիու:

- Ի՞նչ կա որ, - ասում էր Հոռոմսիմը՝ հարեանների դժգոհություն արտահայտող հարցումներին պատասխանելիս, - արհեստ է, թող սովորի, ճիշտ է, ծանր գործ է լվացք անելը, բայց նեղ օրվա համար, ինչպես հիմա մեր վիճակն է, կարևոր մասնագիտություն է, հարուստներին ո վ պիտի սպասարկի՝ անշուշտ մեզ նման աղքատները:

\*\*\*

... Իսկ այնտեղ՝ Ղարսում, քաղաքից հեռանալու ուղիներ էր փնտրում Արշակը: Նա արդեն գիտեր, որ իրեն հետևում են և որ ոստիկանությանը հայտնի է իր ընտանիքի հեռանալը քաղաքից:

Սկսվել էր Համաշխարհային առաջին պատերազմը և Թուրքիան նույնպես մտել էր պատերազմի մեջ:

Եկավ օրը, որին Արշակը երկար էր սպասել: Վերադասն ասաց, որ ինքն ազատված է աշխատանքից, բայց, ինչպես բոլոր հայերը, նա էլ իրավունք չուներ քաղաքից հեռանալ:

Ամեն վայրկյան վտանգավոր էր Ղարսում մնալը: Արշակի յուրաքանչյուր քայլ հսկողության տակ էր: Նույնիսկ զիշերները լրտես էր շրջում իր տան չորս բոլորը: Հաճախ էլ բացերաց, ամբողջ զիշեր կանգնում էր այզու դարպասի մոտ, առավոտյան հսկիչ կետը փոխանցելու համար փոխարինող լրտեսին: Այսպիսով, քսանչորսժամյա հսկողություն էր սահմանված Արշակի բնակարանի վրա:

Արշակը մտածում-մտածում էր, ելք չեր գտնում փախուստի՝ ակամա տնային կալանքից ազատվելու համար:

Եվ մի օր Արշակը տան դիմացի մայթին տեսավ արդեն ծանր դարձած լրտեսին, որը բնավ էլ մտահոգված չեր իր ինքնությունը ծածկելու համար: Հենց դա էլ առիթ դարձավ, որպեսզի մի լրւսավոր միտք ծագի իր ուղեղում:

Իբրև հին ծանոթների, նա ձեռքը բարձրացրեց դեպի լրտեսի կողմը՝ ողջույն տալու շարժումով ու լայն ժայռը դեմքին մոտենալով նրան, ասաց.

- Աքի, բույուր բիզէ բիրաբեր եմեք եմիյէ:

Իհարկե, գաղտնի ոստիկանն անմիջապես չհամաձայնվեց հաց կիսել Արշակի հետ: Արշակը քիչ շանք չգործածեց ոստիկանին համոզելու համար:

- Եղբայր, ես զիտեմ, որ դու ինձ հետեւում ես: Էլի հետևիք, մինույնն է, ես որևէ տեղ գնալու մտադրություն չունեմ: Ես էլ մարդ եմ փնտրում, որ ինձ հետ հաց կիսի իմ օճախից ներս ու մի բաժակ էլ գինի խմի ինձ հետ:

Ընշարադց լրտեսը լավագույնս ուտել-խմելու հեռանկարով արբեցած, Արշակի հետ մտավ տուն: Երեկոն իսկական զինարբութի վերածեց նա թուրքի համար, իսկ ինքը արթուն մտքով էր ու որոշել էր, զիտեր իր անելիքը: Ի վերջո, զինովցած թուրքը ընկավ խրախճանքի Աստված Բաքոսի զիրկը: Հենց դրան էլ սպասում էր Արշակը:

Տարկավոր էր շտապել: Շուտով լուսը կբացվեր: Մի փոքր ձամպրուկի մեջ տեղավորելով ամենաանհրաժեշտ իրերն ու պարագաները, Արշակը նետվեց փողոց:

... Բավական զրկանքներ կրելուց ու կորած-մոլորած զյուղերի միջով անցնելուց հետո, երեք օր անց, Արշակը հայտնվեց Թիֆլիսում:

Մեկ տասնյակի հասնող հայ արհեստավորների համար մեծ ուրախություն էր Արշակի երևալը Պետքի թաղամասում: Նրանց համար մի նոր լրատու էր հայտնվել, ով թարմ տեղեկություններ էր բերել հայրենի ավաններից, չէ՞ որ բոլորն էլ եկվորներ էին Թուրքիայի այս կամ այն շրջանից, իհարկե, հիմնականում սահմանամերձ գավառներից՝ Սուշից, Վանից, Ղարսից: Բոլոր գաղթականներն էլ ազգականներ, բարեկամներ էին թողել Թուրքիայում: Իսկ այնտեղից տագնապալի լուրեր էին հասնում:՝

Եկավ և 1915 թվականի ապրիլի 24-ը, 20-րդ դարի առաջին Ցեղասպանության օրը: Սահմոկեցուցիչ, սարսափելի լուրեր էին հասնում Հայաստանից:

Հազարավոր փախստականներ փորձում էին տաքուկ անկյուններ գտնել հազիվ քան-երեսուն հազար բնակչություն ունեցող Երևանում և նրա շրջակա զյուղերում:

Արշակն իր նման մի քանի հայրենասեր մտավորականների և ձեռներեց արհեստավորների հետ, ստեղծեց Հայաստանի որբերի օգնության մի հանձնախումբ, որի նպատակն էր դրամահավաքի միջոցով ձեռք մեկնել հայրենիքի սովորական ու անօթևան ընտանիքներին: Իրական վիճակին ծանոթանալու համար, Արշակը ընկերների հետ մեկնեց Երևան:

\*\*\*

Երկու շաբաթ հետո, Թիֆլիսի Հավլաբար թաղի Արշակի բնակարանում.

- Կնիկ ջան, քեզ երկու օր ժամանակ, տուն-տեղ կարգի բեր, կարեոր իրերդ և երեխերին հավաքի, Երևան ենք տեղափոխվում:

- Էղ ո՞նց, այ մարդ, ինչի՞ ի՞նչ է եղել...  
- Հոռոմ ջան, մեկ ա, մի օր զնալու ենք, չէ՞ էս հո մեր երկիրը չի՞ ...

- Այսի, ո՞նց կըլի, կարգին գործ ունեմ, երեխերն էլ մեծացել են, հենա-հենա կարգին արհեստավորներ են դառնալու, գործն էլ՝ լիքը:

- Գործ անողի համար ամեն տեղ էլ գործ կճարվի,- եղավ պատասխանը:

- Ո՞րտեղից կճարվի: Ոչ մեկին չենք ճանաչում, ո՞վ պիտի մեզ օգնի: Փող-մող էլ համարյա չկա: Են քո տված կարմիրները վաղո ոց են հալվել-գնացել:

- Կնիկ ջան, ես ապրելու տերն արել եմ: Մինչև մի հարմար գործ ճարելն էլ յոլա կգնանք իմ մոտ եղած ոսկիներով:

- Այ հեր, ես ի՞նչ եմ անելու Երևանում,- առարկեց Արշակի ավագ որդին, տասնվեցամյա Վահագը,- հազիվ եմ արհեստ սովորել վարպետու էլ արդեն փող ա տալի, եգուց մեկել օր տեսար, մի դուրքան էլ ես բաց արի:

Մյուս տղաներն ու մանկամարդ Հուրիկը գորովագութ մոր չորս կողմը բոլորած՝ ձեն-ծպտուն շհանեցին:

- Վե՛րջ,- առարկություն չվերցնող տոնով եզրափակեց իր խոսքը ընտանիքի մեծը:

... Երեք օր հետո Բունփարյան ընտանիքը ողջ կազմով տեղափոխվեց Երևան ու բնակարան վարձեց քաղաքի միակ, քիչ թե շատ բարեկարգ Աստաֆյան փողոցում: Արշակի ընտանիքի անորոշ վիճակն ու անհեռանկար իրականությունը պատճառ եղավ, որ մի քանի ոսկեդրամները կարծ ժամանակում ծախսվեն ու գնան:

- Հայրիկ,- դիմեց հորը Վահագը,- եսպես ինչքա՞ն կարող ենք դիմանալ: Ես արդեն մտածել եմ, թե ինչ կարող ենք անել: Ասիագին ժամանակ է, որ ուսումնասիրում եմ շուկայի ետևում գտնվող տարբեր տեսակի արհեստանոցները: Ընդամենը երկու ժեշտանչի կա: Հենա, ձմեռ մոտենում ա: Ժողովրդին փեջ ու տրութեք են պետք: Ես գիտեմ, թե դրանք ոնց են շինում: Նարկավոր է մի հարմար տեղ վարձել, ամենաանհրաժեշտ գործիքներ ձեռք բերել ու ստեղծել ժեշտանչու արհեստանոց: Կամաց-կամաց գործը կաշխուժանա:

- Տղա ջան, ախալքեր ջան, ես ինչ ճոխ հայերեն ես խոսում.

ԺԵՇՏՈՎԱՆՑԻ՛, ՎԻ՛ Զ, ՄԵՆՔ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՆՔ, ՄԵՐԱ, ՎԻՍԻ ԱՍԵՒ ԹԻԹԵՂԱԳՈՐԾ, ՎԱՐԱՐԱՆ, ԽՈՂՈՎԱԿ...

- ԵՐԵՒԱՆԵՐ, ՄԵՆՔ ՉԱՄ ՍԱհմանափակ Կարողություն ՈՒՆԵՆՔ,- ԱՍԱԳ ՄԱՆ ՀԱՅՐԸ,- ԱՅՍ ԸՆԹԱցքով ՀԱԳԼԻ ԵՐԿՈՒ ԱՄԻՍ ԿԱՐԵԼԻ ԿԼԻՆԻ ԴԻՄԱՆԱՅ:

- ՄԻ ՎԱԽԵՆԱ, ԱՐՉԱԿ ՉԱՆ, ՎԱԽԱԳԸ ՃԻՇՏ Է ՄՏԱԾՈՒՄ:

- ԵՍ Է ԼՎԱՋՔ ԿԱՄԵՄ ՀԵՆԳ ՎԱԴԼՎԱՆԻԾ,- ԻՆՉ և ՈՐԴՈՒ ԽՈՍԱԿ- ԳՆՈՒԹՅԱՆՔ ԽԱՊՈՎԵԾ ՀՈՌՈՄՍԻՄԸ: ԵՍ ԱՐԴԵՆ ՃՇՏԵԼ ԵՄ, ՄԵՐ Բա- ՀՈՒՄ ՄԻ ՔԱՆԻ ՈՒՆՆՈՐ ԸՆՏՈՎԱՆՔԲՆԵՐ ԿԱՆ, ՈՐՈՆՔ, ԵԹԵ ԱՍՏՎԱԾ ԿԱՄԵՆԱ, ԿԱՐԾՈՒՄ ԵՄ, ՈՒՐԱԽ ԿԼԻՆԵՆ ՕԳՏՎԵԼՈՒ ԻՄ ԾԱՌԱՅՈՒ- ԹՅՈՒՆԻԾ: ՀՈՒՐԻԿԻԽ Է ՀԵՏՈ ԿՄԱՆԵՄ: ԱՅՆՎԵՍ ՈՐ, ԱՐՉԱԿ ՉԱՆ, ԼՍԻՔ ՄԻՋԱՅԻԴ: ԴՈՒ Է ԿՐԹՎԱԾ ՄԱՐԴ ԵՍ, ԿԱՐՈԴ ԵՍ ՆՐԱՆ ՕԳՆԵԼ ԱՐԻԵՍՏՈՎԱՆՈԳԻ ԳՈՐԾԵՐԸ ԿԱՐԳԻ ԲԵՐԵԼՈՒՆ:

- ՏԵԱՆՈ՞Մ ԵՍ, ՀԱՅՐԻԿ, ՄԱՅՐԻԿՆ Է Է ՀԱՄԱՃԱՅՆ, ԷՆ քո ՄՈՒ ԵՂԱԾ ՄԻ ՔԱՆԻ ՈՍԿԻԽՈՎ ԿԱՐՈԴ ԵՆՔ ԳՆԵԼ ԱՆԻՐԱԺԵՇՏ ԳՈՐ- ԾԻՔՆԵՐԸ, ԹԵԿՈՒԳ՝ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ: ՃԻՇՏՈՆ ԱՍԱԾ, ԱՐԻԵՍՏՈՎԱՆՈ- ԳԻ ՄԵՂՆ ԱՐԵԼ ԵՄ, ՎԱՐՃՆ Է ՉԱՄ ՀԱՐՄԱՐ Է ՄԵՐ ԱՅՍ ՎԻՃԱԿԻ ՀԱՄԱՐ:

- Այ ԿՆԻ՛Կ, ՄԵՏԱՎՈ՞Ր ՄԵՂԵԴ ԻՆՉ Ա ԱՐԵԼ: ՄԵԳՆԻԾ Բաքուն ԳՈՐԾԵՐ Ա ԲՈՆՈՒՄ, ԵԴ Ո՞Մ ՎՐԱ ԵՍ ՀՈՎՍԴ ԴՐԵԼ, ԱՅ ՄԵՐ, - ՎԱԿԻՎԱԳԻ ԿՈՂՄԸ ԹԵՔՎԵԼՈՎ՝ ԿԵՂԸ ՊԱՅՐԱՑԿՈՒ ԴԵՄՔ ԸՆԴՊՈ- ՆԵԼՈՎ, ԱՍԱԳ ԱՐՉԱԿՆ Ո՛ ԱՎԵԼԱցՐԵԳ,- ԱՎՐԵՍ, ՄԵՐԱ, ԴՈՒ ՉԱՄ ՀԵՇՏՈՒ ԿԳՆԱՍ...

- ՀԱՅՐԻԿ ՉԱՆ, ԱՍԻՔ, թե ում ՎՐԱ ԵՄ ՀՈՎՍՍ ԴՐԵԼ, Է Ո՞Մ ՎՐԱ, ԵԹԵ ՈՉ քո ՎՈԴԵՐԻ, քո ԻՆԻԾ ՄՆԱԳԱԾ ԿԱՐՄԻՐՆԵՐԻ ՎՐԱ: ՈՒԳՈՒՄ ԵՄ ՀԱՎԼԱՏԱՍ, ՀԱՅՐԻԿ, ՄԵՐ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՈՒ- ԵՐԵՔ ԱՄՍՎԱ ԽՆԴԻՐ Է: ԱԽԱՎԵՐՆԵՐՍ Է ՄԱՆՐ-ՄՈՒՆՔ ԳՈՐԾԵՐՈՎ ԻՆԸ ԼՈԳՆԵՆ, ԽԱԿ ԴՈՒ, ԴՈՒ ԳՈՐԾ ՀՈՒՆԵՍ, ԴՈՒ ՎՐԱԴՎԻՐ Ազգային ՀԱՐՑԵՐՈՎ, ՄԱՆԱՎԱՆԴ ԻՒՄԱ, ԵՐԲ ՀԱՎԱՐԱՎՈՐ ԳԱՂԺԱԿԱ- ՆԵՐ ԵՆ ՎԻՍՈՒՄ ՔԱՂԱՔՈՒՄ:

- ԼԱՎ, ՄԵՐԱ, ԵՍ ՎԱՏՈՒՄ ԵՄ քեզ, ՀԵՆԳ ՎԱԴՆ ԽԱԿ ԿԳՆԱՆՔ ՔՈ ԸՆՏՐԱԾ ՄԵՂՆ ՆԱՅԵԼՈՒ:

ԵՎ ԱՅՍՎԵՍ: ԳՈՐԾԱՐՔԸ ԿԱՅԱԳԱՎ: ԵՐԵԱՆԻ ՀԱՅՏՆԻ «ՂԱՆ- ՔԱՐ» ՉՈՒԿԱՅԻ ԵՏՆԻ ՄԱՏՈՒՄ, ՄԻ ՔԱՆԻ ԱՐԻԵՍՏՈՎԱՆՈԳՆԵՐԻ

շարքում ավելացավ Բունիաթյան ընտանիքի «Ղարս» թիթեղագործական արհեստանոցը:

Կարճ ժամանակ անց, Ղանքարի առևտրականներն ու հաճախորդները ընտելացան «Ղարսի» գոյությանը. Ավելին, սիրեցին շափազանց բարեհամբույր երեք դարսեցի պատանիներին, որոնք զիշերը ցերեկին խառնած, փորձում էին հնարավորինս բավարար ու ապահով կյանք ստեղծել իրենց բազմանդամ ընտանիքի համար:

Որևէ հարմար աշխատանք չգտավ Արշակը: Երկիրը անհանգիստ և տագնապալի օրեր էր ապրում: Ի վերջո, նա որոշեց զարկ տալ տղաների բիզնեսին: Գերմանիայի իր ուսանողական ընկերների օգնությամբ, հնարավոր եղավ ձեռք բերել զորեղ մամլիչ մի սարք, որը մի քանի անգամ պիտի դյուրացներ տղաների աշխատանքը:

Այդ ժամանակ նման մի մամլիչի հայտնվելը արհեստավորների շրջանում իսկական հրաշքի էր նման:

«Ղարս» արհեստանոցում մամլիչը տեղադրելու գործն անշուշտ պիտի կառավարեր Արշակ Բունիաթյանը: Միայն նա կարող էր «զլուխ հանել» գործիքի գծագրությունից:

Ուրաքանչական արհեստավորներ հազիվ կարողացան ծանր մամլիչը արհեստանոցից ներս խցկել: Մնում էր կարևորը. մեկ-մեկուկես տոննանոց երկարեւ խոշոր զլանք ամրացնել հարթակից մոտ մեկ մետր բարձրության վրա: Այդ գործողության ընթացքում էր, որ պատահեց աներեալակայելի, անսպասելի ողբերգությունը. հարթակի վրա, կես կանգուն վիճակում հսկայածավալ զլանի տակ, անհրաժեշտ մի մաս էր ամրացնում Արշակը, եթե անսպասելիորեն պոկվեց զլանը՝ իր ծանրության տակ ճգմելով «վարպետ» Արշակին:

Ոչ ոք տեղից չշարժվեց, բոլորը քարացել էին, պապանձվել, իսկ արյան լճի մեջ դեռ թփրտում էր ճանաչված դարսեցի մտավորական Արշակ Բունիաթյանի անշնչացած մարմինը:

Երեանում երեք ամիս հիմնված Բունիաթյան ընտանիքին հասած մեծ ու անպատմելի ողբերգությունը համընդիանուր սպոնսոր վիճակ ստեղծեց հազիվ երեսուն հազարանոց քաղաքում:

Պատշաճ կարգով ու որոշակի հանդիսավորությամբ հայրենի հողին հանձնվեց նորաստեղծ Հայաստանի Հանրապետության խորհրդարանի թեկնածու, Եվրոպայում կրթություն ստացած, շնորհալի տնտեսագետ Արշակ Բունիաթյանը:

Բազմանդամ ընտանիքի ողջ ծանրությունը՝ արդեն երկրորդ անգամ, ընկավ ահավոր վշտից կորացած Հռոմեականի ուսերին:

... Խոր աշուն էր Երևանում: Եռում էր աշխատանքը Արշակի տղաների արհեստանոցում: Գերմանիայից բերված, Արշակի մահվան գնով ձեռք բերված հսկա մամլիչը, Վայրեկյանների ընթացքում հարթում էր ցանկացած հաստության ու մեծության թիթեղներ:

Վահագի պատրաստած վառարաններն ու նորովի, նախապես իր հոր գծագրերով պատրաստված այսումբնե խողովակներն ու դրանց արմունկներն արդեն լայն տարածում էիր գտել քաղաքում:

Զմեռ մոտենում էր, դրա հետ էլ օրեցօր աճում էր «Ղարս» հաստատության արտադրանքի պահանջը, որովհետև տղաների պատրաստած վառարանի խողովակներն ու արմունկները այնքան թեթև էին, հարմար ու դյուրին տեղադրելի, որ նույնիսկ օրը քսան ժամ աշխատելով անգամ, հնարավոր չեր քավարարել բոլոր հաճախորդների պահանջները:

Ըստանիքի գլխին ծառացած դժվարությունները ավելի հաշվենկատ ու նպատակային էին դարձրել Հռոմեականի գործողությունները: Այս կամ այն կերպ, տղաները զբաղված էին: Ավագ որդին՝ Վահագը արդեն քսան տարեկան էր: Նա դժվարանում էր լիովին օգտագործել կրտսեր եղբայրների բնածին, հորից ժառանգած հատկությունները: Նրանք դպրոց էին գնում և միայն դասերից հետո կարող էին օգնել ընտանեկան բիզնեսին:

Դժվար էր Հռոմեականի գործը: Ծանոթ-անձանոթ ունենոր ընտանիքներ, միայն իրեն էին վստահում իրենց տան լվացքի իրականացումը: Խեղճ կինը չգիտեր ում պատվերն ընդունել, ում պատվերը մերժել:

Դպրոցի դասերից հետո հաճախորդների բնակարաններ գնալիս, շատ հաճախ, Հռոմեական իր հետ էր տանում

աղջկան՝ Հուրիկին: Նա հիանալի ձայն և երաժշտական լսողություն ուներ: Ամեն անգամ շուկայի մոտով անցնելիս, Հռոմական աղջկան նստեցնում էր շուկայի մուտքի առջևի քարին և ինը մտնում էր ներս՝ քիչ անց Վերադառնալով երկու ձու ձեռքին.

- Հուրիկ, խմի, քեզի կըսեմ, խմի,- հում ձուն երկու կես անելով տալիս էր աղջկան:

- Չեմ ուզում, չեմ ուզում, -փորձում էր ընդդիմանալ խեղճ աղջիկը:

- Քեզի կըսեմ, խմի՝, հըլը երկրորդն էլ պտի խմես...

Կարո՞ն էր արդյոք Հուրիկը մորը չսել. չէ՞ որ մայրը փայփայում էր այն հույսը, թե օրերից մի օր, աղջկան կտեսնի որպես ճանաչված երգչուիկ: Զգիտես որտեղից կամ ումից էր իմացել, որ ձայնի համար լավ է հում ձու խմելը:

Հաջորդ կանգառն արդեն հաճախորդի բնակարանն էր, որտեղ իրենց էիր սպասում մեկ շաբաթվա ընթացքում հավաքված տանտերերի աղտոտ շապիկները, սավանները, սպիտակեղեններն ու հագուստները:

- Աղջիկս, - ընդգծված գորովանքով Հուրիկին էր դիմում Հռոմականը, - լվացք անելը խսկական արվեստ է, արդուկ անելը՝ նույնպես:

- Է, լավ էի մամա, լվացք է, էլի. տաք ջուր, օճառ, մեկ էլ ձեռքերի աշխատանք, ի՞նչ արվեստ կա սրա մեջ:

- Այդքանը բոլորն էլ գիտեն, բայց կարևորը հետո է: Լվացքը պիտի փոել դուրս, բակում և միայն ու միայն արևի տակ: Զգեստը է թողնել, որ երկար մնա արևի տակ, թե չէ տախտակի նման պինդ ու չոր կլինի:

- Մայրիկ, ինչո՞ւ արևի տակ, ին միշտ արև չի լինում, մանավանդ ձմեռը:

- Հուրիկ ջան, աղջիկս, ասեմ թե ինչու. ինչպէ՞ս բացատրեմ, զգիտեմ: Լվացված որեւէ իրից, ասենք՝ հագուստ, սպիտակեղեն և այլն, մի տեսակ արևի հոտ պիտի գա, արևի հոտ, զիտէ ս թե ինչ ասել է «արևի հոտ», այս միտքը հերդ է ասել վախ-

տին, հըքը՝ : Ինչպես կիսուեին դասեցիք, ինչը՞ քա՞ դցր կինչել, լավ լեզու է, չէ՝ կիիշե՞ ս Թիֆլիսի մեջ դարսեցիք ինչպես կիսուեին:

- Մամ շան, արևը ո՞նց հոտ կունենա:

- Է՛ հ, բալես, որ մի քիչ էլ մեծանաս, ընտանիք կազմես, են ժամանակ կիմանաս թե ինչ է արևի հոտը, ճիշտ է, ամեն մարդ չի հասկանում, զփտի թե ինչ ասել է «արևի հոտ», բայց կա եղ հոտը, հավատա, եղ հոտը զգում ես քո սպիտակեղենից, քո անկողնուց, բարձից ու սավանից, որոնց մեջ է ներծծվում արևի ուժը, արևի համն ու հոտը, գումարած ջրի, մաքուր, գրւալ ջրի հոտը, բա, աղջիկս:

- Ուրեմն, այն երկրներում ուր արև չի լինում կամ շատ քիչ է լինում, արևի հոտ չկա ...

- Կա, կա, աղջիկս, այնտեղ է օգնության է զալիս արդուկը, որը, ինչպես զփտիս, ածուխով են տաքացնում:

- Արդուկն ի նշ գործ ունի արևի հետ:

- Արդուկ կա՝ արդուկ է, ածուխ կա՝ ածուխ է: Ուրեմն, իմացիր. արևի հոտին նպաստում է արդուկը, այն պիտի ծանր լինի, «չուգուն» կոչող մետաղից պատրաստված:

- Ինչո՞ւ չուգունից պատրաստված:

- Այդ մետաղն ավելի երկար է պահում ջերմությունը, քան այլ տեսակի մետաղները: Այդպիսի արդուկների մեջ պիտի այրել ոչ թե սովորական, պատրահական փայտ, այլ միայն ու միայն փայտե ածուխ: Հենց այրված փայտածուխի մեջ են ներծծված արևի ճառագայթները, որոնցից էլ առաջանում է արևի հոտը, որը մենք զգում ենք մեր սպիտակեղենը կրելիս անկողնում պառկած ժամանակ, հատկապես բարձից ու սավանից:

- Մայրիկ շան, այսքան երկար ժամանակ օգնում եմ քեզ քո աշխատանքում, բայց երբեք չեմ մտածել այդ մանր բաների մասին...

- Ի՞նչ, մանր բանե՞ր, ոչ, աղջիկս, այդպես չէ: Հենց քո ասած «մանր բաների» շնորհիվ է, որ այսքան հաճախորդ ունենք: Կարծում ես նրանք չեն զգու՞մ իմ և մյուս լվացք անողների

տարբերությունը: Ես, իհարկե չեմ ուզում, որ դու լվացք անող լինես, բայց ո՞վ գիտի, գուցե մի օր կարող է քեզ պետք զալ մարդկանց համար չափազանց կարևոր այդ արհեստը: Դու մի քանի տարուց հասուն օրիորդ կդառնաս, հետո ել ընտանիք կունենաս, բա դու չկարողանա և շնորհքով լվացք անել քո ընտանիքի համար: Բա չե՞ն ասի, թե ես աղջիկը մեր չի ունեցե՞լ, որ նրան լվացք անել սովորեցներ:

... Հազիվ էր Հայաստանը փոքր ինչ հանդարտվել ու անկախ երկիր դարձել, երբ մի նոր աղետ իջավ մեր երկրի վրա՝ այս անզամ արդեն հյուսիսից:

Ռուսական երկաթե ահեղ բոունցքն իջավ հայի գլխին, ուզելով ասել. «Վերջ ազատությանդ, այսուհետև՝ միայն իմ հրամանով»: Ամեն ինչ պետականացվեց, բացի արհեստագործական փոքր, միջին արտադրամասերից, որոնք հաշվառման էին ենթարկվում՝ եկամտահարկերի վճարման համար:

Բունիաթյան եղբայրների աշխատանքի վրա պետական հսկողություն դրվեց: Այսպես կոչված ֆինքաժինը խստագույնս հսկում էր արհեստանոցի դրամային ելումուտին:

Ըստանիքի եկամուտը զգալիորեն նվազեց: Լավ էր, որ Հռոմեականի «աշխատավարձը» հաշվառումից դուրս էր: Միայն անհրաժեշտ էր ել ավելի գործ հայթայթել: Հուրիկը շուտով ավարտելու էր դպրոցը և նպատակ էր դրել դերասանուիի դառնալ: Սակայն մայրիկը օգնության կարիք ուներ: Մշտապես՝ քափ քրտինքի մեջ աշխատելով, օր-օրի ավելի էր տկարանում:

Ժամանակի ընթացքում տղաների գործը սկսեց բարելավվել: Պատվիրատուններին և հաճախորդներին բավարարելու համար, հարկ եղավ առկա արհեստանոցի մոտակայքում մի նոր տարածք վարձակալել: Կահագի կրտսեր եղբայրները՝ թեև ոչ շատ փորձառու, սկսեցին ինքնուրույն գործի անցնել այս նոր արհեստանոցում: Կամաց-կամաց գործի հաջողությունը նրանց էլ ուղեկցեց:

Վերջապես եկավ պահը, երբ գեղեցկուիի Հուրիկը հնարավորություն ունեցավ զբաղվելու իր նախընտրած գործով: Նոր

Եր ավարտել դպրոցը, եթք Երևանում հիմնադրվեց թատերական ուսումնարան: Ըսդունող հանձնաժողովի համար դժվար չեղավ համոզվել, որ հանձին այդ գեղադեմ օրիորդի, Հայաստանը մոտիկ ապագայում ունենալու է սրանչելի ձայնով մի դերասանուիի: Բայց, ինչպես ասում են, ուրիշ բան է կանխագուշակումը, բոլորովին այլ բան իրական կյանքը:

Հուրիկենց տան հարեանությամբ եր ապրում միայնակ, առանց ընտանիքի, երիտասարդ կոմունիստ Վարդան Հովհաննիսյանը, ով վաղուց եր նկատել գեղեցկուիի Հուրիկենն և ուղիներ եր փնտրում նրա հետ հաղորդակցվելու համար:

Վարդանը փախել եր Նախիջևանից, եթք 1918 թվականին բրդական գորքերը ներխուժել էին Երկրամաս:

Աղասի Խանջյանի ղեկավարած խորհրդային Երկիրը գրկաբաց ընդունեց Վարդանին: Նրան հանձնարարվեց կառավարել Երևանում առաջին անգամ ստեղծվելիք տրամվայի գործը: Հուրիկը նկատել եր, որ Վարդանը մշտապես հետապնդում է իրեն:

Շատ անգամ նրան տեսնում էր սև տուֆ քարից կառուցված Երկիարկանի ուսումնարանի Երկրորդ հարկի պատուհանից՝ դիմացի մայթին կանգնած:

Մկան-կատվի խաղը հիշեցնող այս պահմտուքը Երկար չտևեց: Տղաները և Հոռոմսիմը նկատել էին Հուրիկի բնավորության փոփոխությունը: Նա դարձել եր ավելի ինքնամփոփ, լուակյաց, մտածկոտ:

- Հուրիկ ջան, աղջիկս, ինչ որ տարօրինակ բան է կատարվում քեզ հետ, ես քո մայրն եմ և պետք է որ սիրտոյ բաց անես իմ առջև,- դիմեց մայրը աղջկան,- միայն ես կարող եմ քեզ օգտակար խորհուրդներ տալ: Որքան հասկանում եմ, խնդրի մեջ տղայի հարց կա, այդպէ՞ս է, թե ոչ:

Հուրիկին ոչինչ չէր մնում անել, քան գլուխը կախել:

- Հը, Հուրիկ, խոսիր, ասա՞ , ես մոտավորապես կուհում եմ, ին էն մեր հարեան նախիջևանցի Վարդանը քեզ չի՞ նեղացրել:

- Չե, այ մամա, ի՞նչ ես ասում, նա լավ, բարի տղա է, վաղուց է ինձ հետևում: Այսօր ինձ ուսումնարանից տուն ուղեկցեց:

Գիտե՞ս, ամուսնության առաջարկ էլ արեց:

- Աման, հանկարծ եղբայրներդ չիմանան: Աղջիկս, դու դեռ փոքր ես, հազիվ տասնութ տարեկան, քո ի՞նչ ամուսնանալու ժամանակն է: Դու դեռ պիտի սովորես, խաղաս, դեռ ի՞նչ բեմեր ես նվաճելու...

Չէ, չեղավ: Հուրիկն էլ ավելի լոակյաց էր դարձել և գիշերներն էլ ուշ էր տուն գալիս՝ պատճառաբանելով, թե դասերը շատ են:

Ժամանակն էր, որպեսզի տղաները խառնվեին գործին:

- Քուր ջան, ես ի՞նչ մութ գործեր ես բռնում,- դիմեց ավագ եղբայրը՝ թախտի անկյունում կուչ եկած Հուրիկին: ։

- Դէ, Վահագ ջան, իրականում մեջտեղը բան չկա, - խոսակցության մեջ մտավ Հոռոմսիմը:

- Ո՞նց բան չկա, - այս անգամ կրտսեր եղբայրն էր, - ես աչքովս եմ տեսել, թե ինչպես էր մեր քուրը սիլի-քիլի անում եղ նախիջևանցու հետ:

- Ohn՝, գործը լրջանում է, - կի ավագն էր՝ Վահագը, - ուրեմն հարկավոր է այդ տղայի ականջները քաշել:

- Ոչ, ոչ, - հանկարծ տեղից պոռթկաց Հուրիկը, - Վարդանն ինձ երբեք վաս բան չի ասել, չի արել: Նա սիրում է ինձ, երկար ժամանակ է, որ մենք գիտենք իրար:

- Իսկ դու, դու սիրո ում ես նրան, - խոսակցության մեջ մտավ միջնեկ եղբայրը:

Հուրիկը կախեց գլուխը, չզիտեր ինչ պատասխանել: Սպասողական լրության միջից հազիվ լսելի եղավ Հուրիկի պատասխանը.

- Այս, մենք սիրում ենք իրար...

- Ախր, դու դեռ երեխա ես, քույրս, - դարձյալ Վահագն էր, - դու պիտի սովորես: Մենք՝ եղբայրներդ և մաման, ամեն ինչ կանենք քեզ համար, չէ՞ որ դու մեր միակ քույրիկն ես: Մենք ուզում ենք քեզ տեսնել բեմի վրա:

- Կտեսնեք, խոստանում եմ: Եվ այդ գործում ինձ կօգնի Վարդանը: Նա ինձ ամուսնության առաջարկ է արել և ցանկանում է ամուսնանալ: Ինքը ոչ ոք չունի Երևանում, միակ

միսիթարանքը ես եմ: Նա իմ ուսմանը չի խանգարի:

Անդրանք, աղաշանք, պաղատանք... ոչինչ չօգնեց փոխելու Հուրիկի որոշումը:

Մի օր, երեկոյան, Վարդանը միայնակ հայտնվեց Բունիաթյան ընտանիքի դրան մոտ: Դուր բացողը Հոռոմսիմն էր, ում Հուրիկը տեղյակ էր պահել Վարդանի այցելության մասին:

Տղաները ոչ այնքան բարեհաճ վերաբերմունք ցույց տվեցին երիտասարդ Վարդանին:

- Այ տղա, ես ինչի՞ ես մենակ եկել,- Վահագն էր,- Ի՞նչ է, հերմեր, քույր-եղբայր շունե՞ս...

- Չէ, շունեմ, եղ քո ասածներից ոչ մեկը չկա... բոլորն էլ զնացել են են աշխարհ,- ձախ ձեռքը իր հայացքի հետ վերև բարձրացնելով ասաց Վարդանը:

Տիրեց խորհրդավոր լուրջուն: Առաջին խոսքը հնչեց Հոռոմսիմի շուրթերից:

- Տղա ջան, ախր ըսենց ո՞նց կըլնի, մենք քեզ չենք ճանաչում, ո՞վ ես, ի՞նչ ես, ինչո՞վ ես զրադվում: Եվ հետո, Հուրիկը դեռ սովորում է, երազներ, ունի, ի՞նչ ամուսնության մասին է խոսքը:

- Կարծեմ Վարդան է անունդ,- մոր խոսքն ընդհատեց Վահագը,- ասա տեսնենք, ի՞նչ ես անում, տարիքդ որքա՞ն է, տուն-տեղ ունես-շունե՞ս...

- Այս, Վարդան է անունս: Ծնողներս Վարդան Զորավարի անունով են կնքել ինձ: Ես թեև քանութ տարեկան եմ, բայց շատ ու շատ բան եմ տեսել, շատ փորձանքների միջով եմ անցել: Ընտանիքս կորցրել եմ տասնութ թվականին, երբ քուրք գորքերը հարձակվեցին Նախիջևանի վրա: Միայն ես եմ որչ մնացել: Այդ հետո էր, որ Անդրանիկն իր գորքով ջախջախեց թուրքերին:

Երեք տղաների և Հոռոմսիմի համար հետաքրքիր էր այդ ամենին հաղորդակից դառնալը, սակայն՝

- Գործ, բան ունե՞ս,- Հոռոմսիմն էր հարցնողը:

- Տու՞ն, տե՞ղ,- շուտասելուկի նման վրա տվին մայր ու որդի:

- Վարձու, բնակարանում եմ ապրում, սակայն պետությունը խոստացել է շուտով բնակարան հատկացնել:

- Իսկ ի՞նչ ես անում, ի՞նչ գործով ես զբաղված, - դարձյալ մայրն եք:

- Ես թաքցնելու պատճառ չունեմ, ճիշտն ասած, ես բոլոր բավին ել իմ մասնագիտությամբ չեմ աշխատում: Պարզապես որպես կուսակցական, ես պարտավորված եմ անել այն՝ ինչ ինձ կարգադրում են: Այժմ կառավարում եմ Երևանի նորաստեղծ տրամվայի վարչությունը: Դուք հավանաբար նկատած կլինեք, որ Զեր Աստաֆյան փողոցը վերից վար, միջնամասով քանդված է: Շուտով տրամվայի գծեր են անցկացվելու:

Որքան ել անփորձ ու անգետ լինեին տղաներն ու իրենց մայրը, այնուամենայնիվ կարելի էր հասկանալ, որ իրենց առջև կանգնած է ուսյալ, խելքը գլխին, իսկապես քիչ թէ շատ աշխարհ տեսած բարետես մի երիտասարդ, որի աշխից չի վրիպել գեղեցկուիի, խոհեմ, համեստ, ավանդապահ հայուիի Հուրիկի գոյությունը:

- Բայց դու գիտե՞ս, որ մեր քուրք ուսանող ա, դերասանուիի պտի դառնա, որ ամուսնանա՝ ո՞նց կարա սովորի, - սա ել Կորյունն էր, ընտանիքի ամենափոքր անդամը:

- Թող սովորի, ո՞վ է իրեն խանգարում: Ես թատրոն շատ եմ սիրում: Իմ պապերը Ագուլիսի շրջանից են, որը մոտ է Գողթան գավառին: Ես մի քանի Գողթան երգեր ել գիտեմ:

- Վահագ ջան, հիմա դու ես մեր տան մեծը, դու պիտի ասես վերջին խոսքը, - դիմեց Հոռոմսիմը ավագ որդուն:

- Սպասեք, սպասեք, մենք հըլա չգիտենք, թէ ինչ է ասելու մեր քուրք: Քուրիկ ջան, երբվանի՞ց գիտես ես տղուն՝ Վարդանին.

- Ի՞նչ ասեմ, ես, ես, միտարի է, որ գիտեմ նրան:

- Ուրեմն եղքան ժամանակ ել հանդիպում եք, հա՞...

- Այո, - գլուխը կախ, հազիկ կարողացավ պատասխանել Հուրիկը:

- Պարզ է, ամեն ինչ պարզ է: Մի տարին քիչ ժամանակ չի, բայց կարևորն այն է, թէ դու սիրո՞ւմ ես Վարդանին:

Անմիջապես չպատասխանեց Հուրիկը: Մեկ-մեկ նայելով բոլորի աչքերին՝ փորձեց նրանց սպասողական հայացքներից գուշակել, թե ինչ պատասխան կուզեին լսել, վստահորեն պատասխանեց.

- Այո...

Դարձյալ տիրեց իորիքավոր լոռություն:

... Ամեն ինչ եղավ ըստ կարգի. պաշտոնական գրանցում, խնջույք, առանց եկեղեցական արարողության. կոմունիստ Վարդանը չէր կարող եկեղեցի մտնել, այն ել փեսա դառնալու համար:

Ամուսնությունից մեկ տարի ել չէր անցել, որ Վարդանի ընտանիքում ծնվեց առաջնեկը. տղա էր: Անունը դրին Էդուարդ: Մինչ Վարդանը առաջ էր գնում աշխատանքում, լավ չէին գնում Հուրիկի գործերը: Չէր կարողանում դասերին ներկա լինել: Նրա արվեստագետ դառնալու երազանքը խամրելու վրա էր, մանավանդ, որ նորից էր երեխայի սպասում:

Խեղճ Հոռոմսիմը զփտեր ինչ անել: Տանը երեք երիտասարդ տղամարդ, ովքեր կարիք ունեին ամեն տեսակի օգնության: Շաբաթվա պատվերներից հրաժարվելով անզամ, դժվարանում էր հասնել աղջկա և թոռան խնամքին: Հիմա ել երկրորդ թոռը, այս անզամ աղջիկ, որին կնքեցին Նունե անունով:

- Չէ, չեղավ, այսպես հնարավոր չէ շարունակել, - մտածում էր Հուրիկը, - կամ ընտանիք, երեխաներ, կամ ել՝ բեմ, ելույթներ: Ել ի նշ բեմ, ելույթներ... արդեն երկու երեխա, հետո, ով զփտի, գուցե երրորդն ել աշխարհ զա, Վարդանը երեխա շատ է սիրում: Շարկավոր է գոնե մեկ տարով հետաձգել ուսումը:

Այդպես ել արեց. «ընտանիքը» հաղթեց: Դերասանական վարպետության ուսուցիչը. ով մեծ հույսեր էր կապում Հուրիկի հետ, հուսախաք եղավ: Նա արդեն մտքի խորքում զփտեր, որ Հուրիկը այսև չի կարողանա նվաճել թատերական արվեստի բարձունքները:

Այդպես ել եղավ: Եվ դրան նպաստեց Հուրիկի երրորդ երեխայի ծնունդը: Նա ել էր աղջիկ: Լույսի պես զուլալ, պայծառ այդ աղջկան ել կնքեցին Լուսինե անունով:

Երեք անչափահաս երեխաներ: Հոռոմսիմը զլուխը կորցրել էր: Նա կի թոռներ ուներ, տղաներն էլ ընտանիքի տեր էին, ունեին երեխաներ, խնամի, աներ, զոքանչ... Ամենաանօգնական վիճակում էր Հուրիկը, որովհետև ամուսնու կողմից մեկը չկար, ում վրա կարողանար հույս դնել՝ զեթ երեխաներին հոգ տանելու համար:

Հոռոմսիմի խելքը գնում էր վերջին թոռնուին՝ Լուսինեի համար: Հուրիկը հազիվ էր կարողանում զլուխ հանել մյուս երկու երեխաներին խնամելուց և ամեն ինչում բժախնդիր ամուսնուն ծառայելուց: Պաշտոնի բերումով, Վարդանը պետք է մշտապես կոկիկ վիճակում լիներ:

Ամեն օր լվացք, ամեն օր պաշտոնական մարդիկ, հյուրասիրություն: Ի՞նչ սովորելու մասին կարող էր խոսք լինել: Կամա թե ակամա, ժամանակի ընթացքում Հուրիկը մոռացության տվեց թատրոնը, իսկ ամուսինը անընդհատ պաշտոնի բարձրացում էր ստանում:

Լուսինեի ծնվելուց հետո ավելի շարժուն դարձավ Հոռոմսիմը: Երկար տարիներ լվացք անելուց, գոլորշուց թշերը այրված, սակայն դուրեկան ու նրբին այդ ավանդապահ դարսեցի կինը կարծես քան տարով երիտասարդացավ: Ինչպես ժամանակին աղջկան էր սովորեցնում տնային գործեր, խոհանոցային և լվացք անելու արվեստ, այժմ արդեն այդ ամենն իրականացնում էր թոռան՝ Լուսիկի հետ, որի մեջ տեսնում էր ոչ միայն իսկական ավանդապահ հայ կնոջ ու մոր, այլև տաղանդավոր ապագա երգչուիու:

Դպրոցի յոթերորդ դասարանում Լուսինեն արդեն զարմացնում էր շրջապատին հիանալի երգեցողությամբ: Հայրը՝ Վարդանը, լուրջ երաժշտասեր էր և ակորդեոն շատ էր սիրում: Օրերից մի օր, փոքր ակորդեոն բերեց տուն:

- Կոմիսիոն խանութից եմ գնել,- ասաց Հուրիկին,- խանութում ասացին, որ ֆրանսիական գործիք է, որը ծախելու է հանձնել մի ներգաղթած ֆրանսահայ: Հույսով եմ, որ Լուսինեն կկարողանա նվագել: Ես արդեն մի լավ ուսուցիչ եմ գտել:

Ֆրանսահայ է: Ասում են շատ լավ ակորդեոնահար է:

- Լուսիկ, Լուսինե,- տնով մեկ ձայնը զցեց արդեն գործարանի տնօրեն դարձած Վարդանը:

- Լուս եմ, հայրիկ,- հարևան սենյակից պատասխանեց Լուսինեն:

- Տես, տես, ոքքան լավն է, քո տարիքի համար շատ հարմար, գեղեցիկ, համարյա նոր, տասնութ բաս ունի: Հը՝, ի՞նչ կասես:

- Վայ, այս ինչ լավ ակորդեոն է, մամ, պապ,- չիմանալով ինչպես արտահայտել իր հիացմունքը, սենյակով մեկ թռվոում էր Լուսինեն:

Որոշ ժամանակ անց Լուսինեն ոչ միայն հրաշալի ակորդեոն էր նվագում, այլև հիանալի կերպով կատարում էր ժուրովրդական ու գուսանական երգեր՝ հիացում պատճառելով ոչ միայն իր, այլև մասնագետ երաժիշտների շրջապատում:

- Զկարողացա աղջկաս դերասանուի դարձնել, բայց թռոանս համար ամեն ինչ կանեմ, որ մասնագետ երգչուի դառնա, - մտածում էր Հոռոմսիմ տատիկը:

Դպրոցական ստուգատեսների մշտական հյուրն էր Լուսինեն, իսկ բակում հավաքված իր հասակակից երեխաներն ու պատանիները, ամառվա շող երեկոներին իրենց հանգիստն էին վայելում Լուսինեի ակորդեոնի հնչյունների տակ:

Եկան հիսունական թվականները: Թվում էր թե երկինքը պայծառացել է և առջևում է լուսավոր ապագան: Իրոք, մարդիկ սկսեցին ազատորեն շնչել, թեև ազատ խոսքի հնարավորություն դեռ չկար: Բայց քիչ թե շատ բացվեց երկաթյա վարագույրը և մարդիկ տեսան, որ բացի Խորհրդային երկրից ուրիշ աշխարհ, ուրիշ երկրներ կ կան:

Լուսինեի համար երաժշտական ուսումնարան ընդունվելը դժվար չեղավ:

Ինչպես մոր՝ Հուրիկի պարագայում եղավ, Լուսինեն էլ սիրահարվեց ուսուցման հենց առաջին իսկ օրից:

- Աղջիկս, Լուս շան, ախր քո ի՞նչ ժամանակն է,- վրդովված

ասում էր տատը՝ Հոռոմսիմը,- դու նպատակներ ունես, երազներ: Մայրդ կլ քեզ նման, քո հասակում սիրահարվեց, ամուսնացավ և վերջնականապես զրկվեց արտիստուի դառնալու հնարավորությունից:

- Տատի ջան, մի հուզվիր, իմ պարագան ուրիշ է: Իմ սիրած տղան, որի անունը Արտաշես է, բանասիրականում է սովորում և ինքնուրույն, առանց նոտա իմանալու, երգեր կլ է գրում: Այնպես որ՝ երկուսս կլ մի խելքի ենք: Արտաշը ամեն ինչ հասկանում է և ինձ կօգնի, որպեսզի ես երգչուի դառնամ:

- Ի՞նչ կարող եմ ասել ժողովուրդը լավ է ասում՝ մոր թախտ՝ աղջկա բախտ...

- Առայժմ երկուսս կլ ուսանող ենք: Չորս-հինգ տարի ունենք առջևում, տեսնենք ինչ կլինի:

- Ի՞նչ, չորս-հինգ տարի ման եք գալո՞ւ և նոր միայն ամուսնանա ք...

- Հա, տատ ջան, խսկ ի՞նչ կա որ...

- Անկարելի է: Բա դարսեցու աղջկան, թոռանը վայե՞լ է այդքան երկար ման զալը: Մարդիկ ի՞նչ կասեն: Չէ՛, չեղավ: Ես հորդ ասելու եմ...

- Չէ՛, ո՛չ, տատ, շասես: Հայրս շատ խիստ մարդ է, զիտես՝ անհեր, անմեր մեծացած, նա չի հասկանա...

Հոռոմսիմ տատն ասեր կամ շասեր՝ միևնույնն է, Վարդանը զիտեր իր աղջկա և Արտաշեսի կապի մասին:

- Աղջկադ զյամերը քաշի,- քանի անգամ ասել էր Հուրիկին: Դրությունը գնալով բարդանում էր: Լուսինեի հայրը նույնիսկ գործարանի բանվորներից մեկին հրամայել էր մշտապես հետևել աղջկան, թե ուր է գնում, ինչ է անում, ում հետ է զիվում:

- Օր ու զիշեր իրար հետ են. կինո, թատրոն, ցիրկ, կաֆե, ել ի՞նչ ասեմ... տղեն լավ փող ունի, գրում-մրում է, հեշ չեք կարդացե՞լ նրա գրությունները թերթերում,- այս էր լրտեսի զեկույցը:

- Հա...ա ...ա՝, ես այդ լակոտներին ցիրկ-միրկ, գրել-մրել ցույց կտամ,- կոմունիստ դեկավարներին բնորոշ «Բելոմոր» ծխախոտը բերանի աջ ու ձախ կողմը տսնելով, մոլտաց հին կոմունիստը և շարունակեց.

- Կարո՞ն ես եղ լակոտին բերել ինձ մոտ:

- Իհարկե կարող եմ, ամեն երկուշաբթի գնում է «Երեկոյան Երևան» թերթի խմբագրություն՝ հոնորար ստանալու, իսկ քո աղջիկը սպասում է դրսում՝ մինչև երիտասարդի դուրս գալը:

Մի քանի օր անց կայացավ ապագա փեսայի և աներոջ հանդիպումը:

- Այստեղ չեն ծխում, երիտասարդ,- ասաց գործարանի տնօրենը՝ աշխատասենյակի դռան առջև կանգնած Արտաշեսին, որը պատրաստվում էր ծխել:

- Բա Դուք ինչո՞ւ եք ծխում...

- Ձենդ, լակոտի մեկը, մնում է, որ դու ինձ դիտողություն անես: Լսիր, այ տղա, ձեռ քաշի իմ աղջկանից, նա քո թայը չի, ձեռ քաշի, թե չէ, որպես խուլիզանի քեզ նստացնել կտամ:

- Հենց հիմա, ինչո՞ւ ես ուշացնում, զանգ տուր ոստիկանատուն, թող գան, ինձ բռնեն որպես խուլիզանի, ով ներխուժել է քո կաքինետից ներս,- Արտաշեսն էլ նրա նման՝ անցավ դու-ի:

- Հիմա ինձ լսիր. ես և քո աղջիկը՝ Լուսինեն, սիրում ենք իրար: Ոչ մի բան, ոչ մի խոչնդրու չի կարող մեզ բաժանել միմյանցից: Եվ խնդրում եմ ձեռք չբարձրացնես Լուսինեի վրա, թե չէ՝ ինձ հետ գործ կունենաս...

- Տո՛, փալընքոտ լակոտի մեկը, դու ինձ վախեցնո՞ւմ ես...

- Ո՛չ, պարզապես զգուշացնում եմ, միայն զգուշացնում, ուրիշ ոչինչ:

... Ոչ մի միջոց չօգնեց սիրող զոյգին բաժանելու համար. ո՛չ Լուսինեի հոր հոխորտանքներն ու սպառնալիքները, ոչ մոր հորդորները, ոչ էլ Արտաշեսի ծնողների անհամաձայնությունը:

Լարվածությունը երկու ընտանիքներում հասել էր ծայրահեղության: Արտաշեսի համար ինդիր չկար: Նա տղա էր,

ազատ գործելակերպի մեջ, ազատ՝ որոշումներ կայացնելիս: Ուրիշ էր հարցը Լուսինեի պարագայում: Հայրը կարգադրել էր կնոջը, որպեսզի նա տանի աղջկան դասերի ու մնա ուսումնարանում մինչև Լուսիկի դասերի ավարտը, որից հետո էլ ինչպես երեխայի, ձեռքից բռնած բերի տուն:

- Տատ, տատիկ,- խնդրում էր Լուսինեն՝ նրա հետ առանձնացած պահերին,- մի բան արա, հասկացրու մամային, որ խոսի պապայի հետ: Մեկ է, ես ու Արտաշը սիրում ենք իրար ու ոչ ոք չի կարող մեզ իրարից բաժանել:

- Աղջիկս, հասկանում եմ: Հորդ առարկությունը հիմնականում Արտաշի, կներես, «ախապարի» տղա լինելու մեջ է...

- Դա ինչ հետամնաց մտայնություն է տատ, ի՞նչ կապ ունի նա տեղացի է, թե «ախապար»: Կարևորը՝ ազնիվ ու լավ մարդ լինելն է: Եվ հետո, Արտաշեսը «ախապար» չէ, ծնողներն են «ախապար», ինքը Երևանում է ծնվել:

Ի վերջո, այս ամենին վերջ տալու համար, երիտասարդները որոշեցին Լուսինեի ծնողներին փաստի առջև կանգնեցնել: Արտաշեսն իր երկու ընկերների և Լուսինեի հետ, նախապես պայմանավորվածության համաձայն, ներկայացան Երևանի ամուսնության գրանցման կենտրոնական գրասենյակ և պաշտոնապես գրանցեցին իրենց ամուսնությունը:

Նոյն օր երեկոյան, Լուսինեի մայրը՝ Հուրիկը ընթրիքի ժամանակ Վարդանի առաջ դրեց մեր «հերոսների» ամուսնության վկայականը:

Ամուսինը հենց այնպես, իմիջալոց նայեց վկայականին, չդիպակ անգամ: Ամեն ինչ հասկանալի էր իր համար: Ոչինչ չասաց, ոչ մի խոսք: Պարզապես վեր կացավ տեղից ու գնաց հարևան սենյակ:

Այդ արդեն առավոտյան էր, նախաճաշի ժամանակ, երբ հայրը միայն մեկ նախադասություն ասաց.

- Այդ տղան դեռ շատ հեռու կգնա...

- Ես էլ եմ այդպես կարծում,- Ժպիտը դեմքին ամուսնու միտքը հաստատեց բարեհամբռույր Հուրիկը:

... Երիտասարդ գույզը հասավ իր նպատակին, սակայն

եկեղեցական արարողություն, հարսանեկան հագուստ-կապուստ, մեծարթիվ հյուրերով խնջույք չեղավ, թեև ամեն ինչ վերջացել էր. Արտաշեսն ու Լուսինեն օրենքով ամուսիններ էին:

Ըստգծված սառնությունը կողմերի ծնողների միջև մնաց այնքան երկար ժամանակ, մինչև լուս աշխարհ եկավ երիտասարդ զույգի առաջնեկը:

Նորածին տղայի ծննդյան շնորհիվ սառույցը հալվեց: Տեղացի-ախապար պաղարյուն կապը չերմացավ այնքան արագ ու անկեղծ, որ խնամիները մեկը մյուսից առաջ ընկնելով, իրար ձեռքից էին խլում փոքրիկ մարդուկին: Եվ, եթե երեխային մայրական կաթով սնելու անհրաժեշտությունը չիներ, հազիվ թե նրան թողնեին ծնողների տանը:

Խնամիների մտերմիկ կապի շնորհիվ էլ Լուսինեին և Արտաշեսին հաջողվեց՝ առանց տարի կորցնելու, բարձրագույն կրթություն ստանալ:

Ողջ բարեկամական, ազգակցական կազմում առավել երջանիկ էր պատմվածքի հերոսուհի, Թիֆլիսի Արամյանց հիվանդանոցի հագուստ-կապուստի լվացումը իսկական արվեստի վերածած, բացառիկ և յուրօրինակ լվացքի վարպետ Հոռոմսիմը, յոթանասունիննամյա այդ հեզ, բարի ու ավանդապահ դարսեցի հայ կինը:

Հոռոմսիմը կարծես մի տաս տարով երիտասարդացավ, երբ իր թոռնութին նրան պարզեց ևս մի արու զավակ:

- Միայն տղայից տղա կլինի,- փորձել էր կատակել Լուսինեի խստաբարո հայրը:

Հոռոմսիմ տատիկը, որ մշտապես «թափառումների» մեջ էր՝ մեկ այս, մեկ այն տղայի տանը մնալով ու հարսների քմահաճույքներին տեղի տալով, վերջնականապես հաստատվեց թոռան բնակարանում՝ մեծագույն հրճվանք պարզելով Լուսինեին և Արտաշեսին:

- Ինչո՞ւ չհրճվել ու երջանիկ չզգալ, երբ ունես երկու մանկահասակ երեխաներ, նրանց խնամող հրաշալի, անփոխարինելի Հոռոմսիմ տատիկ ու կարողանում են աշխատել քո

սիրած ասպարեզում:

Արտաշեսն աշխատում էր հրատարակչությունում. իսկ Լուսինեն՝ որպես մեներգչուիի, ֆիլհարմոնիայում:

Հոռոմսիմ տատն ամբողջ օրը շարժման մեջ էր և այդ պարագան նրան ավելի էր առույգ պահում: Երկու փոքրիկ տղաների հոգածության հիմնական բեռք ընկած էր նրա ուսերին, իսկ վերջիններս էլ ամեն մի հարցում օգտվում էին տատի բարյացակամությունից:

- Տատ ջան, շատ ես երես տալիս սրանց,- բողոքում էր Լուսինեն,- մեզ չեն լսում, կա, չկա միայն դու ես նրանց համար:

- Բան շասես խոխեքիս, ես նրանց ցավը տանեմ, ո՞ւր էր թե սրանց պես մի երկուսն էլ բերած լինեիր...

Փայլում էր Արտաշեսը աշխատանքից հետո տուն վերադառնալիս: Դեռևս ներս չմտած, խոհանոցից նրա քիմքն էր շոյում Հոռոմսիմ տատի պատրաստած Ղարսի անուշաբույր կերակուրների հոտը:

Հապա տատի լվացած սպիտակեղենը, անկողնու սավաններն ու բարձի երեսները, որոնցից հարբեցնող, գրավիչ հոտ էր զալիս:

- Լուսիկ,- ասում էր Արտաշեսը,- ես մեր տատի արած լվացքը մի տեսակ ուրիշ է: Դու էլ ես լավ լվացք անում, գիտեմ, նրանից ես սովորել, բայց ուրիշ է նրա արած լվացքը: Զարմանալի, շշմեցուցիչ հոտ է զալիս իմ շապիկներից, բա անկողինը, վերմակն ու բարձի երեսը, որոնցից կարծես թե արեի, ջրի հոտ է զալիս, ապշեցուցիչ է այս ամենը, աներեակայելի, երբեմ նմանը չեղած հոտ: Խենթանալ կարելի է...

- Սիրելիս, դու մոռանում ես, որ տատս լվացք անելը արվեստի բարձրության է հասցեի: Իրեն հարցրու, թե ինչպես է լվացք անում: Կանչե՞մ, կուրախանան:

- Կանչի՞ր, կանչի՞ր, հետաքրքիր է, ինչպես է լվացք անում, որ այսքան գրավիչ են դառնում նրա լվացած ու արդուկած սպիտակեղեննն ու անկողնու պարագաները:

- Տատի, տատիկ, արի, լսիր թե ի՞նչ է հարցնում Արտաշը:

- Լսում եմ, լսում, Լուսոն ջան, հարցրու, տղաս:

- Տատ ջան, մի քիչ խոսիր թե ինչպես ես լվացք անում: Լուսոն ասում է, թե լվացք անելը քեզ մոտ արվեստ է:

- Դե, մի քիչ շափազանցում է Լուսոն: Իսկապես լվացք անելը արվեստ է: Եթե ուզում ես հարազատներիդ հաճույք պատճառել, ապա պիտի պահպանես լվացքի չգրված, բայց փորձված կանոնները: Ես ժամանակին այդ ամենը սովորեցրել եմ Լուսիկի մորը, ով փոքր ժամանակ օգնում էր ինձ:

- Մայրս էլ ինձ է սովորեցրել,- տատիկին ընդհատեց Լուսինեն:

- Այո, աղջիկս, դու էլ ես լավ լվացք անում:

- Չէ, տատիկ, քոնն ուրիշ է,- այս անգամ ընդհատեց Արտաշեսը:

- Ասեմ որ, ոչ այնքան կարևոր է լվացք անելը, որքան այն չորացնելն ու արդուկելը: Առաջին պայմանը՝ լվացքն արևի տակ չորացնելն է, որպեսզի արևի հոտ զա: Հետո կարևոր է արդուկ անելը: Հիմա առաջվա արդուկները չկան. որանք ծանր էին ու չուգունից պատրաստված են, ամենակարևորը՝ փայտե ածուխով էին տաքացվում. այդ փայտի հոտը միախառնվելով արևի հոտին, յուրահատուկ բուրմունք է առաջացնում: Պետք է խոսես, խաղաս լվացքի հետ...

- Ինչ ասի՞ թ, տատ, արևի հո՞տ, ձիշտ լսեցի՞ ...

- Այո տղաս, ձիշտ լսեցիր: Հիմա դժվար է այդ հոտը քաղաքում ստանալ, որովհետև ամեն ինչ էլեկտրական է. լվացքի մեքենան, արդուկը և այլն: Իմ փափազած լվացքի որակը մասսամբ ապահովում է լվացքը արևի տակ չորացնելը:

- Իսկ եթե արև չինի՞,- միջամտեց Արտաշեսը:

- Արև չեղած օրը լվացք մի արա, արա հաջորդ օրը և կամ՝ հրաժարվիր «արևի հոտից»... հա, հա, մի ժպտա, երիտասարդ, քո ոգևորությունը՝ լվացքը արևի տակ չորացնելու արդյունքից է: Շատերը չգիտեն այս ամենը: Փառք Աստծո, Երևանում արև շատ կա, ասել է՝ նրա հոտն էլ շատ կլինի:

...Անցան տարիներ: Արտաշես Հովհաննիսյանի գործերը լավ չեն ընթանում: Իբրև թե իր թույլտվությամբ տպագրված

ու հրապարակված մի գրքույկ, խստագույնս քննադատվել էր իշխանությունների կողմից: Ասվում էր, թե նրա մեջ կային հակախորհրդային մտքեր:

Որոշ ժամանակ անց, նա ոչ միայն հեռացվեց աշխատանքից, այլև կուսակցությունից: Հաջողությունը չուղեկցեց նաև Լուսինեին: Ողջ տարին՝ չնչին վարձատրությամբ, շրջազայում էր Հայաստանի տարբեր շրջաններում և հեռավոր գյուղերում: Երեանում էլ մեկ-երկու ելույթ, այն էլ՝ հատուկ պատվիրված մեկ-երկու երգով:

Ճիշտ է, ճանաչված երգչուիի էր Լուսինեն, բայց այն փառքը, որին սպասում էր նա՝ այդպես էլ չեկավ:

Կատարվեց անսպասելին:

Լուսինեն ընդգրկված էր արտիստական մի խմբի մեջ, որը Կանադայում ներկայացնելու էր հայ մշակույթը: Խմբի մեկ-նելու նախօրյակին հայտնի դարձավ, որ խմբի ցուցակից հանված է Լուսինե Հովհաննիսյանի անունը:

Ամեն ինչ հստակ էր. պատճառը Արտաշեսի՝ իբրև թե այլախոհ լինելն էր:

Հուսահատությունը պատել էր ոչ միայն Հովհաննիսյանների ընտանիքին, այլև խնամիներին և նրանց ողջ գերդաստանին:

Խախտվեց համերաշխ ընտանիքի անդորրը: Լուսինեն ու Արտաշեսը գրեթե չեին հաղորդակցվում իրար հետ: Յուրաքանչյուրը յուրովի էր ընկալում առկա իրավիճակը:

Արտաշեսը իրեն մեղավոր էր զգում, որ իր պատճառով Լուսինեն զրկվեց արտասահման գնալու հնարավորությունից: Կինը հոգու խորքում զիտեր, որ ամուսինը մեղավոր չէ, որ նրա զլիին ինչ որ բան են սարքել, բայց փաստը մնում էր փաստ, որ նրանք վերջնականապես զրկված էին արտասահման մեկնելու հնարավորությունից:

Մի քանի օրվա լոությունը խախտեց Լուսինեն.

- Արտաշես, Արտաշ,- խոհանոցից բարձրաձայնում է Լուսինեն,- պարզեցի՞՞ր, թե ինչը-ինչոց է, դարձել ես լուկյաց, մի բան ասա՝ իմանանք: Քո տանը չեղած ժամանակ ծնողներս անընդհատ զանգահարում են:

- Ի՞նչ ասեմ, Լուսո ջան,- մտքում ուրախանալով, որ կինը խախտեց պրկված լուսությունը,- ես վաղուց էի զգում, որ իմ տեղակալը, դու գիտես իրեն, այն ապաշնորհ, իբր թե գրող Վահրամ Գնդունուն:

- Հա, հա, իհարկե, գիտեմ, հետո՝ հետո...

- Հետո այն, որ ինքը վաղուց էր երազում իմ աթոռին նստել և իմ Մոսկվա մեկնած օրերին, իբր իմ գիտությամբ, թույլատրել է տպագրել այդ շարաբաստիկ գրքույկը: Եվ այնպես է հետեւ տպագրության ընթացքին, որպեսզի գրքույկը հրապարակ իջնի իմ Երևան հասնելու առաջին իսկ օրը:

- Օ՛, Աստված իմ, այս ի՞նչ ես ասում, ինձ երբեք ոչինչ չես ասել այդ մասին: Եթե այդ գունդը, չգիտեմ կը թե ինչի գունդը, համարձակություն է ունեցել նման ստոր քայլ անել, կնշանակի պինդ մեջք ունի:

- Այո, ունի, իհարկե, ունի: Քեռին կենտրոնական կոմիտեի գաղափարական բաժնի վարիչն է: Լավագույնս սցենարով սարքեցին այս ամենը: Այնպես են բոլորը վախեցած, որ գրեթե չեն հաղորդակցվում ինձ հետ: Կուսակցությունից հեռացնելն էլ նրա համար է, որպեսզի ես երկար-բարակ արդարության ետևից չընկնեմ և հաշտվեմ եղածի հետ:

...Մի շատ, շատ կարևոր բան փուլ եկավ Արտաշես Ճովհաննիսյանի հոգու մեջ: Փլվեց ենթադրյալ այն անառիկ բերդը, որ ինքը կառուցել էր պատանեկության տարիներից: Այդ բերդի անունն էր՝ հավատ...

\*\*\*

Օրեր, շաբաթներ անցան: Ոչ ոք չհետաքրքրվեց Արտաշեսի ճակատագրով: Նոյնիսկ մտերիմ ընկերներն ու բարեկամներն էին վախենում նրա հետ հաղորդակցվել:

... Կորավ հավատը ոչ թե երկրի, այլ իշխանական լծակների մեջ սողոսկած պատեհապաշտ մարդկանց նկատմամբ:

- Առանց հավատի հնարավոր չէ ապրել, Լուսինե, հասկացի ր,- մի օր, ընթրիքի պահին պոռթկաց Արտաշեսը,- աշխատանքս՝ անհրապույր, քոնը՝ անունը կա - ամանում չկա: Հի-

մա, ինչպես նկատել եմ, առաջվա ոգևորվածությունդ էլ է չքացել: Ի՞նչ ենք անելու: Ոչ դու, ոչ էլ ես այլ գործ անել չենք կարող այս պայմաններում:

- Այդ ամենը ճիշտ է, սիրելիս, ասա տեսնեմ ո՞րն է ելքը:
- Ասեմ, Լուսոն ջան: Եթե կուսակցությունից հեռացրած չլինեին՝ մի լավ աշխատանք կգտնեի, բայց որպես վտարվածի, ինձ ոչ կարգին աշխատանք չի տա և ելքը երկրից հեռանալն է:
- Գժվե՞լ ես, այ տղա, եղ ի՞նչ ես ասում, եղ ո՞ւր ես պատրաստվում գնալ:

- Ուր գնում են բոլորը՝ Ամերիկա:
- Բայց մենք ոչ մի բարեկան չունենք այնտեղ, հետո ո՞վ ասաց, որ մեզ կթողնեն մեկնել: Բացի դրանից, կա ամենամեծ արգելքը՝ հայրս: Նա համաձայնության թուղթ չի ստորագրի:
- Բացատրեմ, սիրելիս: Հորդ՝ այդ նվիրյալ կոմունիստին, ընդամենը երկու օր առաջ իշեցրել են պաշտոնից...
- Ի՞նչ, ի՞նչ ես ասում, Արտաշ... ես տեղյակ չեմ: Այս նա գործարանի երկար տարիների տնօրենն էր, սիրված ու գնահատված մասնագետ:

- Կարևոր չի, իր զլսի վրա նշանակել են անփորձ, գործիցքանից անտեղյակ մի երիտասարդ կոմունիստի, իսկ հայրիկդ, ով հոգեկան տագնապի պատճառով այժմ պառկած է տանը, նրա տեղակալն է լինելու: Այնպես որ, հայրիկն էլ է ահավոր հիասթափված այս երկրից ու կուսակցությունից: Դեռ հարց է՝ նա կշարունակի՞ աշխատել, թե՝ ոչ: Իմ կարծիքով նա այլս չի աշխատի թոշակի կզնա: Ինքնասիրությունը բարձր, վեհ զգացողություն է: Այնպես որ, ծնողներդ համաձայնություն կտան: Իսկ մեր երկրից հեռանալու հարցը դյուրությամբ կլուծի ներքին գործերի նախարարությունը, ԿԳԲ-ն՝ ավելորդ զիսացավանքից զերծ մնալու համար: Ես Լու Անջելեսում մանկության ընկեր ունեմ, կարծում եմ՝ նա մեզ հրավեր կուղարկի:

Որոշ ժամանակ անց, Լու Անջելեսից եկալ սպասված հրավերը: Արտաշեսի կանխագուշակումներն իրականացան: Լուսինեի հայրը համաձայնությունը ստորագրեց անկողնում պառկած վիճակում: Մասնավոր դժվարություններ չհարու-

ցեցին նաև պետական մարմինները և չորս ամիս անց, Արտաշեսի ընտանիքը հաստատվեց Լու Անծելեսում:

Արտաշեսի մանկության ընկերը հոգացել էր ամեն ինչի մասին: Աշխատանքի հարցն էլ լուծվեց սպասվածից էլ արագ:

Ամուսինները աշխատանքի անցան հայկական վարժարաններում: Արտաշեսը որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, իսկ Լուսիննեն՝ երաժշտության ուսուցչուի: Զոյց տղաներն էլ տեղափորվեցին ազգային վարժարաններում:

Սկզբում դժվար էր ոչ այնքան նյութական, որքան հոգեբանական առումով: Հայրենիքի և հարազատների հանդեպ ունեցած կարոտը լուսվաց էր դարձրել ընտանիքի անդամներին: Յուրաքանչյուրը յուրովի էր ապրում «կարոտախատ» հիվանդությամբ:

Ամերիկյան այս հայաշատ քաղաքում այնքան էլ պարտավորված չես անզերեն խոսել, որովհետև առօրյան հիմնականում հայերի հետ է: Այդ իմաստով, Լուսիննեի համար այնքան դժվար չեղավ հարմարվել առկա պայմաններին: Լուծված էր լվացքի հարցը: Շենքի բոլոր ընտանիքները օգտվում էին միևնույն լվացքատնից, որտեղ տեղադրված էր կեկտրականությամբ աշխատող մեկ լվացքի մեքենա և՝ որ նորություն էր Լուսիննեի համար, լվացքը չորացնող մեքենա:

Արտաշեսը մշտապես դժգոհ էր իր լվացված սպիտակեղենից և, մանականդ, անկողնու պարագաների լվացման «ամերիկյան» եղանակից: Հատկապես նրան զայրացնում էր լվացքի չորացման կերպը: Բայց ի՞նչ կարող էս անել: Այստեղ ոչ ոք լվացքը չի փոռում պարանին, ինչպես Երևանում՝ ի ցույց ամբողջ աշխարհի...

- Իրապես, բնավ գեղեցիկ չէ, երբ բազմահարկ շենքերը «ծածկվում» են բազմագույն, բազմատեսակ կանացի և տղամարդու սպիտակեղենով, անկողնու պարագաներով,- մտածում էր Արտաշեսը և շարունակում էր խորհել,- Երևանի բաց երկնքի տակ, հազարավոր պարաների վրա, հազվագյուտ կարելի էր տեսնել կանացի սպիտակեղեն...

- Լուս ջան, անուշ, այն քաղցր, անուշ հոտը բնավ չի գալիս

մեր անկողնուց: Հիշո՞ւմ ես Հռոմեական տատի լվացքները: Այդ ի՞նչ առասպելական, խենթացնող հոտ էր զալիս նրա լվացած սպիտակեղենից, անկողնուց: Մինչև հիմա քիմքիս է իմ շապիկների հոտը: Ես օճանելիք քիչ էի օգտագործում, որպեսզի օձիքիս վրայի արևի հոտը չապականեմ:

- Է՛հ, Արտաշ ջան, այսուեղ ամեն ինչ մերենայացված է, մարդն էլ է մերենայացված. նա ամբողջ օրը վագում է, ժամանակ ունի՝, որ նման զգացմունքային հարցերի ետևից ընկնի: Այստեղ քչերն են լվացքը փոռում պարանին, այն էլ, սեփական տների փողոցին չնայող բակերում:

... Անցան տարիներ: Ժամանակը եկել էր սեփական առանձնատուն ունենալու: Հովհաննիսյան ընտանիքի գնած տունը խոշոր, արևոտ բակ ուներ: Առաջին փոփոխությունը, որ կատարեց Արտաշեսը, նոր առանձնատանը, լվացքի և լվացք չորացնող մերենաները դուրս շպրտելն էր:

- Տղերք, հենց վաղը, այն երկու ծառերի միջև պարան կքաշեք, որպեսզի մաման լվացք փոի, հասկացա՞ք,- այսպիսի հրահանգ ստացան դպրոցական սկաուտները:

Բնակարանամուտի առաջին իսկ օրը, պայծառ արևի տակ, Լուսիններ բակի գույգ ծառերի միջև ձգված պարանին փոեց իր նոր տան, ընտանիքի առաջին լվացքը:

- Ա՛յ, հիմա հասկացա,- անկողնու մեջ դիմեց Արտաշեսն իր նման արքայության գիրկն ընկած Լուսիննեին, - հիշեցի Հռոմեական տատիկի լվացած սավաններն ու բարձի երեսները, օ՛հ, ինչ անուշ արևի հոտ է զալիս, բայց գիտե՞ս, այս այն արևի հոտը չի, որ կար Երևանում: Արևը նույնն է, բայց ուրիշ էր Հայաստանի արևը...

- Գիտե՞ս թե ինչու է տարբեր այստեղի «արևի հոտը», որովհետև այստեղի ոչ միայն արևն ու նրա ջերմությունն է տարբեր, այլև՝ ջուրը, որն այնպես չի մերվում արևի ճառագայթներին, ինչպես մերվում էր Հայաստանի արևը՝ Գառնու քաղցրահամ ջրին:

Հունվարի 17, 2005 թ.,  
Լու Անգելես

## ԻՆԾԻ ՔԵԶԻ ԿԸ ՊԱԿԱՒ...

... 1946-47 թվականներ: Չգիտես ինչ ճիշտային մտայնությամբ, «Ոռղպատե մարդ» հորջորջվող Իոսիֆ Ստալինը՝ խաղալով սփյուռքահայերի հայրենասիրական զգացումների հետ, կտրուկ հրաման արձակեց ԿԳԲ-ին՝ կազմակերպելու սփյուռքահայերի ներգաղթը Խորհրդային Հայաստան:

Սփյուռքի ողջ տարածքում, հայ կոմունիստ վարձկանները խատագույնս ծրագրված քարոզությամբ ջանում էին իրենց մտերիմներին ընդգրկել Հայաստան մեկնողների ցանկի մեջ:

Երկրագնդի տարբեր գաղթօջախներում՝ Արգենտինայից մինչև Ամերիկա, Միջին Արևելքից Եվրոպա, նրանք կազմակերպում էին հավաքներ, մտնում էին տնեւ-տուն՝ մարդկանց համոզում, որ թեև պատերազմը նոր է ավարտվել, սակայն խորհրդային երկիրն այնքան ներուժ ունի, որ շատ արագ կարող է կառուցել աշխարհի ամենադեմոկրատական կոմունիստական հասարակարգը և բոլորին ապահովել տնովտեղով, աշխատանքով:

Եվ, անշուշտ, նրանց ստեղծած ժամանակավոր «Ներգաղթի կոմիտեներին» հաջողվում էր իրենց ցանցի մեջ ներառնել հագրավոր ընտանիքների:

Իսկ այդ ընտանիքները, բան ու գործը թողած, Հայրենիքի վառ ապագայի տեսլականով ոգևորված, գաղթականին բնորոշ ճամպրուկային տրամադրությունից ինքնամոռաց, չնշին գներով վաճառում էին տարիների արդար քրտինքով վաստակած տունն ու տեղը, կահ-կարասին, այն տարիների համար հազվագյուտ մեքենաները, ֆաբրիկաներն ու գործարանները:

Շատ մեծահարուստներ, ամբողջական սարքավորումներով հագեցած գործարաններ տեղափոխեցին Հայաստան:

- Գնացեք, գնացեք Հայրենիք: Այնտեղ դուք ամեն ինչ կունենաք, տուն, տեղ, աշխատանք, ձրի ուսուցում,- ափիբերան

բղավում էին հայ զադտնի գործակալները՝ ամբիոններից, տարբեր հավաքույթներում, ռադիոյով՝ միաժամանակ շմոռանալով հայրենաշունչ նյութեր հրատարակել չակերտավոր առաջադիմական մամուլում:

Հայրենիքում նոր բույն շինելու գայթակղությանը չդիմացավ նաև Ֆրանսիայի Վալանս քաղաքում 1920-ական թվականներից հիմնավորված Քեմիքսիզյանների ընտանիքը:

Գնալ-չզնալու հետ կապված անվերջ խոսակցություններն ու վեճերն ավարտվեցին նրանով, որ գործին խարնվեց ընտանիքին հարազատ մարդը, համոզված կոմունիստ, զադտնի գործակալ Եզնիկ Քյուրտյանը:

- Ճանըմ, ինչո՞ւ իրար անցեր եք, աստեղի ձեր տունը եղածին պես ձգեցեք, ես կնայիմ, կհսկեմ, այզին կիմնամեմ, դուք այ, եթե հոն չհավնեցաք, ուզած ատեննիդ կրնաք վերադառնալ, գոնե երկիր տեսած կըլլաք, չե՞ք հիշեր, ինչ է, դեռ անցյալ դարուս սկիզբը Կոմիտաս երգած է՝ «Հայաստան, երկիր դրախտավայր»...

- Քեռայր, դո՞ւն ինչու մեզի հետ չես զար,-միամտորեն հարցրեց 12-ամյա Անահիտը:

Բոլորն էլ ուզում էին նույն հարցը տալ, բայց ամաչում և զգուշանում էին, մինչ ժամանակ աղջնակը միամտորեն շատ կարևոր հարց էր ուղղել ֆրանսահայ կոմունիստին: Մեկ երկու վայրկյան դնդնալուց հետո, «Աղջիկս, դուք զացեք, տեղափորվեք, վերջը ես ալ կու զամ, սա երկու քարավանը թող ճամփա ելլե, վերջը կնայինք»:

Եվ առաջին քարավանը ճամփա ընկավ: Ելան Մարսել քաղաքի նշանավոր նավահանգստից: Հսկա նավի տախտակամածին տեղափորվել էր մի քանի հարյուր ընտանիք:

Մանկամարդ Անահիտի բազմանդամ ընտանիքը տեղափորվել էր՝ նույնքան բազմանդամ Գևորգի ընտանիքի հարևանությամբ: Երկու ընտանիքներն էլ նույն քաղաքից էին՝ Վալանսից: Շատ ընդիհանուր նյութերի շուրջ կարելի էր զրուցել, խոսել, սակայն անորոշ ապագայի հանդեպ ունեցած

վախի զգացումը հիմնականում լրակյաց էր դարձրել բոլորին:

Ի վերջո, խաղաղ ծովի վրա լրդացող նավը հանդարտություն բերեց մեր հայրենադարձներին:

- Տեսնես իմ մասնագիտությունը հոն պիտի անցնի՝, ասում էր Գևորգի փականազործ հայրը՝ վարպետ Մինասը:

- Իմ գործու բոլոր ժամանակերու և բոլոր երկիրներու համար է, մարդ առանց կոշիկ նորոգելու կրնա՝ ապրիլ: Ուր ալ մեզի տեղավորելու ըլլան, արհեստանոց մը կը բանամ, կոշիկ նորոգելու ամեն կարևոր պարագաներն ալ քովս են, - փոքր-ինչ պարձենկոտ տոնով ասում էր Անահիտի հայրը՝ կոշկակար Սարգիսը:

- Ինչո՞ւ ճամպրուկներդ այդքան քիչ են, Մինաս...

- Աման, ի՞նչ պետք կա, Հայաստան կերթանք, կըսեն որ հոն ամեն բան կա և շատ աժան, ունեցած-չունեցած, թեև ոչինչ գիներով, ծախեցի: Ահազին դրամ ունիմ քովս, զիտես չէ՝, ի՞նչ ըսել է ֆրանսիական ֆրանկ, բոմբա, բոմբա, ժայռեր կը խորտակե և աշխարհիս մեջ ամեն տեղ կանցնի:

... Ակամա հիշեցի մեր տան ֆրանսիական թղթադրամները, որոնք հայրս էր բերել 1936 թվականի ներզադրի ժամանակ:

Երեխա ժամանակ, հորս թույլտվությամբ, մեր գրադարանի ամենավերին դարակից հաճախ էի դուրս հանում ֆրանկով լի պայուսակը և ժամեր շարունակ մեկը-մյուսի վրա դարսելով խաղ էի ստեղծում ինձ համար: Հայրս մերթ ընդ մերթ թողնում էր գրիչը և անաղմուկ, թախծուու ժպիտով հետևում էր իմ մանկական խաղին:

...Մինչ զրուցում էին երկու ընտանիքների մեծերը, 24-ամյա Գևորգն ու 12-ամյա Անահիտը նավի տախտակամածի բազրին ենքած, երազում էին վայրկյան առաջ հասնել Հայրենիք, որտեղ, ինչպես Անահիտի քեռայր Եզնիկն էր ասում՝ իրենց փառավոր ապագա էր սպանվում:

...«Պոբեդա» ոռուսական նավը կամաց-կամաց մոտենում էր Վրաստանի Բաթումի քաղաքի՝ նավահանգստին: Հեռվում, գիշերվա մթին, հազիկ նշմարելին, երևում էին կառամատույցի

Էլեկտրական փոքրաթիվ լամպերը:

Հանկարծ, նավի տասնյակ «սպասավորներ» խցկվեցին ժողովրդի մեջ և սկսեցին հավաքել հայրենադարձվողների մոտ եղած բոլոր արևադարձային մրգերը՝ բանան, նարինջ, լիմոն, անանաս.

- Դուք այդ մրգերի կարիքը չունեք, և հետո, արգելված է օտար երկրից միրգ, բանջարեղեն բերելը: Այստեղ շատ կան դրանցից,- ասում էին մինչ այդ ավելի քաղաքավարի երևացող խորհրդային երկրի օրենքի «պաշտպանները», ովքեր, հավանաբար, ներքին գործերի նախարարության զաղտնի գործակալներն էին:

- Հոս լեցուն երեխաներ կան, գոնե քիչ մը ձգեցեք անոնց համար,- խնդրում էին մարդիկ:

- Ո՞չ, արգիլված է,- ել ավելի խստագույնս և այս անգամ արդեն արհամարական հայցքով էին սաստում գործակալները: Այնինչ՝ մինչ այդ, Ֆրանսիայում նման արհամարանքի, անուշադրության, կամ ստորացման երբսէ չէին արժանացել հայրենադարձվող հայերը:

Իսկ ահա այստեղ, խորհրդային Հայրենիքում, առաջին իսկ վայրկյանից, դեռ ոտքերը հայրենի հողին չդրած, կոպտորեն անարգվում էին, այն ել ո՞ւմ՝ հայրենակիցների կողմից:

Ավելի մտահոգիչն ու սարսափելին դեռ առջևում էր: Մինչ հանրակառքերի գալը, որպեսզի հայրենադարձներին երկաթուղային կայարան տեղափոխեն, նրանց համար «Ճռի» ընթրիք էին պատրաստել:

Անծանոթ ապուրի հետ մատուցած և ցեխ հիշեցնող սև հացն ու մրգերի բացակայությունը միանգամից փոխեց մարդկանց տրամադրությունը:

Մի անբացատրելի վախ էր համակել բոլորին, ոչ ոք չէր հասկանում թե ինչ է կատարվում: Ճաշարակի այս ու այն կողմից քիչ ու միշ սկսեցին լսելի դառնալ մանուկների լացի ձայները:

- Ես ասիկա չեմ ուտեր...

- Ես ճերմակ հաց կուգեմ...

-Ես բանան կուզեմ...

Շփոթահար ծնողները չգիտեին ինչպես հանդարտեցնել երեխաներին:

- Կարելի չէ՝ արդյոք ուրիշ ուստելիք մը ունենալ, գեթ պանիր, պտուղ մը, չէ՝ որ Դուք մեզմե առիք մերինները, ըսելով, թե հոս ամեն բան կա, - վախսվորած հայացքով դիմեց Գևորգի հայր Մինասը՝ ձեռքերը մեջքին հանգույց արած, սեղանների շուրջը պտտող, աշքերը լկտիաբար մանկամարդ օրիորդներուն հառած պաշտոնյային:

- Ո՞չ, ուրիշ բան չկա, բանան-մանան, լիմոն-միմոն՝ մոռացեք, դրանք կապիտալիստական երկրների մրգեր են:

- Ի՞նչ կապ ունի պտուղին ուրկե ըլլալը, ըսել է լիմոն ուստողը կապիտալի ստ կըլլա...

- Մի՛ երկարացնի, թե չէ ուրիշ միջոցի կղիմենք:

- Բայց ես դրամ ունիմ, ֆրանսիական ֆրանկ, չէ՞մ կրնար արդյոք դրամովս որևէ խանութե բան-ման առնել, - գրեթե բղավելով հարցրեց համբերությունից դուրս ելած խեղճ մարդը:

- Այստեղ խանութ չկա, և հետո, ձեր այդ կապիտալիստական փողերը ոչ մեկին պետք չեն, կարող եք դրանք վառել, կամ ել տալ ձեր թռոններին, որպեսզի խաղան այդ գունավոր թղթերով, իսկ եթե ոուրիշ ունենայիք՝ ուրիշ, մի բան կանենք...

Պաշտոնյայի խոսքերից շանթահար եղած Մինասը սիրտը բռնած, վայրկյանական տապալվեց գետնին:

Աշքերը փակ, նրա երևակայության մեջ վերակենդանացան իր տան, ապրանքների, իրերի, հաստոցների առուծախի պատկերները: Դրացի Օնիկը գրեթե չնշին գնով սեփականացրել էր կահույքը, Գրենորի մեկ ուրիշ ծանոթ, իր գործարանի համար «Քարեկամաբար» շորթել էր խառատի հաստոցները: Տունը, այս, ընտանեկան այդ սուրբ օջախը քաղաքապետարանն էր գնել՝ շուկայի գներից շատ ավելի ցած գնով: Եվ հիմա, այդ ամբողջ առուծախից գոյացած գումարը զրոյի արժեք ուներ միայն...

Հազիվ աչքերը բացած, Սինասը տեսավ իր շուրջը բոլորված հարազատներին, բարեկամներին, ովքեր, առանց որևէ բառ հասկանալու, լսում էին ճերմակ խալաթավոր ոռւս բուժքոջը:

- Ի՞նչ կըսէ կոր սա կնիկը, բան չեմ հասկնար,- ձեռքերը վեր պարզած, բոլորի համար լսելի ձայնով իր դժգոհությունն էր արտահայտում Սարգիսը:

- Սրտի անկանոն աշխատանք է, նախախնֆարկտային շրջան, պետք է հանգիստ պահի իրեն, չզայրանա,- ասաց նախային պաշտոնյաներից տարբեր, ավելի դյուրազգաց պաշտոնյան:

- Մինաս, հանգիստ պահե քեզի, նայինք, թե ալ ինչե՛ր պիտի գան մեր զիսուն,- ասաց Սարգիսը,- մենք քեզի հոգ կը տանինք, շուտով ոտքի կելլես: Սակայն, կարևորը այլ բան է,- շարունակեց Սարգիսը,- ես դեռ նավուն վրա հասկցա թե ինչ ճակատագրական սխալ գործած ենք: Մենք դեռ ոչի՞նչ, հապա այս երեխաները, անոնք մեղք չե՞ն...

- Շատեր ըսին, փորձառու, կարդացած, աշխարհ տեսած մարդիկ, թե՝ «Մի՛ հավատաք սա փոլիթիքածիներուն, մի՛ երթաք, սպասեցեք քիչ մը, թող երկիրը շոնչ առնե, թող իր վրային մաքրե պատերազմեն մնացած վերքերը»: Հիմա կը մնա, որ Ֆրանսիա մնացած մեր ազգականներուն և բարեկամներուն, ձևով մը լուր տանք, որ տեղերնեն շշարժին և երկրորդ քարավանին մեջ չմտնան:

- Ինչպես պայմանավորված ենք՝ նամակ կը գրենք անոնց, - ասաց արդեն խելքը տեղն եկած Մինասը, - ըսել ուզելով, թե «Մենք ասանկ կը գրենք. Դուք հակառակը հասկցեք»:

\*\*\*

...Գնացքը փնչալով դուրս եկավ «եղբայրական» Վրաստանի Բարումի քաղաքի կայարանից՝ հասնելու համար Թիֆլիս, այստեղից է՝ Երևան: Կիսաբեռնատար, գրեթե շարքից դուրս եկած վագոններում մի անբացատրելի, անհասկանալի իրարանցում էր: Հայրենադարձներից ոմանց հաջողվել էր ուղեկ-

ցողներից իմանալ, որ բոլոր ընտանիքները չեն, որ տեղա-  
վորվելու էին Երևանում:

- Մեզի հավանաբար Երևան կտանին,- ասում էր Սարգիսը:
- Ինչո՞ւ գիտցար, ո՞վ քեզի ըսավ,- առարկում էր Մինասը:
- Ճանը մ, ինչպես գիտցա, ո՞ւրտեղեն պիտի գիտնամ: Պար-  
զապես կը մտածեմ, թե այս գործին մեջ Եզնիկը կա, կուզեմ  
հավատալ, որ ան կարգադրած ըլլա մեզի Երևան տանել:

Այրում սահմանային կայարանում ոչ մի ընտանիք չիշավ  
զնացրից: Հաջորդը Ալավերդին էր, արդեն Հայաստանի տա-  
րածքում: Վագոններում լուս, մեռելային հանդարտությունն էր  
իշխում: Ոչ ոք չէր խոսում: Ումանք՝ զլուխները վագոնների  
նեղլիկ պատուհաններից դուրս ցցած, սպասում էին, թե ո՞ր  
ընտանիքներին են հաջորդ կայարանում իշեցնելու:

- Վարդուկյան,- արաբական «տմբլակ» հարվածային գործիք  
հիշեցնող այումինեւ խոսափողից բղավում էր՝ արդեն ինքնու-  
թյունը չծածկող զինվորական հագուստով պաշտոնյան:

- Ճանսըզյան, Մելքոնյան, Թիթիզյան,- և այսպես, մի քանի  
ազգանուններ ևս թվարկելուց հետո, մի քանի զինվորներ  
բարձրացան վագոն՝ «օգնելու» մարդկանց, որպեսզի բեռնա-  
թափեն նրանց իրերը:

- Աս ի՞նչ բան է, մեզի ըսին, որ Երևան պիտի տանին,-  
բողոքում էր մեկը:

- Ինչո՞ւ սկիզբեն չըսին, թե որ քաղաքը պիտի տանին, թերևս  
մենք չենք ուզեր Երևանեն զատ մեկ ուրիշ տեղ բնակիլ,-  
բողոքում էր մյուսը:

Եվ այսպես, իրար հաջորդող քաղաքներում՝ Կիրովական,  
Լենինական, հայրենադարձներով լեցուն գնացըլ զնալով նոս-  
րացավ:

- Քեզի չըսի՞ն, որ մեր Եզնիկը ամեն բան կարգադրած կըլլա,  
որպեսզի մենք Երևան հաստատվինք,- հայրտ կեցվածք ըն-  
դունած ասում էր պարոն Սարգիսը,- արդեն մնացին քանի մը  
տասնյակ ընտանիքներ, հավանաբար ամենքն ալ մայրաքա-  
ղաքին մեջ պիտի տեղավորվին:

- Կեցի՛ք, կեցի՛ք, առջևը դեռ Հոկտեմբերյանը կա, լսածիս համաձայն, հոն ալ քանի մը ընտանիքներ վար պիտի առնեն թռենեն,- փորձում էր առարկել Մինասը:

Միանգամայն ճիշտ դուրս եկավ Մինասի մտավախությունը: Հոկտեմբերյան կայարանում երկու ընտանիքներին էլ իջեցրին զնացքից:

- Թերևս սխալմունք մը կա, պարոն,- փորձում էր հակառակվել պաշտոնյային պարոն Սարգիսը,- մեզի Երևան պիտի տանիք, հոս սխալմունք մը կա:

- Նախ, ոչ թե պարոն, այլ՝ ընկեր Հարությունյան, այստեղ ոչ մի սխալմունք էլ չկա, իմ ցուցակի մեջ ձեր երկու ընտանիքներն էլ տեղափորվելու են Հոկ-տեմ-բեր-յանում,- յուրաքանչյուր վանկ շեշտելով ասաց հայ զինվորականը,- Վերջ, ձեզ պատկանող իրերը հավաքեք և իջեք զնացքից:

- Վայ, Եզնիկ, շունշանորդի, ինչո՞ւ ըրիք սա քանը, մենք քեզի ի՞նչ ըրած էինք...

- Հանդարտե, Սարգիս, հանդարտե, թերևս մարդը չէ կրցած ավելին ընել, լավ է, որ գեր իրարու հետ ենք, կը տոկանք, մի վախնար, մեր ծնողքը ինչերո՞ւ դիմացած են թուրքին ձեռքը, զոնե ասոնք հայ են,- փորձում էր խաղաղեցնել իրադրությունը վարպետ Մինասը:

... Կիսախարիսուլ, հողաշեն երկու տնակներում իրենց նոր կյանքը սկսեցին Ֆրանսիայի Վալանս քաղաքից Հայաստան ներգաղթած Մինասի և Սարգիսի բազմանդամ ընտանիքները:

Փոքր-ինչ ավելի դյուրին եղավ Սարգիսի ընտանիքի առօրյան: Ֆրանսիայից բերած կոշիկ նորոգողի՝ տեղացիներին անծանոթ գործիքները և կարի մեքենան օգնեցին նրան՝ գեր օրվա հաց հայրայթել:

Շատ դժվար եղավ Մինասի ընտանիքի վիճակը: Արկդով լի ֆրանսիական ֆրանկները միայն՝ որպես խաղի միջոց, արդեն տարածվել էր զյուղի երեխաների շրջանում: Վարպետի փականագործ լինելն ու այս պետք, եթք այդ հեռավոր զյուղում ոչ գործարան կար, ոչ էլ արհեստանց:

Կարիքից ստիպված, վարպետ Մինասը ձեռքն առած բահն ու քլունգը, սկսեց չոր ու քարքարոտ բակը մշակել: Լավ է, որ զավակները՝ Գևորգն ու Սյուզանը, արդեն հասուն երիտասարդներ էին և դժվար չեղավ իրենց համար աշխատանք գտնել շրջկենտրոնում:

Կոշկակար Սարգսի ընտանիքի երեք զավակներն է անշափահասներ էին և ոչնչով չէին կարող օգնել ծնողներին՝ ընտանիքի կենցաղային հարցերը բարվոք վիճակի բերելու համար: Մի խոսքով, ընտանիքի նյութական ամբողջ ծանրաբեռնվածությունը ընկած էր վարպետի ուսերին:

Եվ հազիվ մեկ տարի անց կատարվեց ամենասարսափելին՝ հանկարծամահ եղավ վարպետ կոշկակար Սարգիսը:

Անելանելի վիճակի մատնված նրա ընտանիքին կարելույն չափ օգնության հասավ իր ընտանիքի հոգսերից արդեն հոգնած վարպետ Մինասը:

Ժամանակի ընթացքում նա դարձել էր գյուղի արդարամիտ ջրբաշխը (ռոռզման ջուր բաժանող) և իր կազմած օրացույցի ու ժամատախտակի համաձայն, արդեն հարազատ դարձած բահի միջոցով արտեզյան ջրերը ուղղորդում էր գյուղի բնակիչների այգիները:

Վարպետ Սարգսի մանկահաս երեք երեխաների մայր, գեղեցիկ արտաքինով տիկին Արսինեն, կատարյալ հուսահատ վիճակում, ելք էր փնտրում հանապազօրյա հաց հայթայթելու համար: Երկու արու զավակները՝ Վարդգեսն ու Հակոբը, բողին դպրոցը, իսկ տասնինքնամյա Անահիտը, դպրոցի դասերից հետո գնում էր կոլխոզային դաշտեր՝ բամբակ հավաքելու:

Վալանսում ապրող ավագ քրոջը՝ Նոյեմին գրած նամակում, Անահիտը հոր մահը հայտնելուց բացի, իրենց կենցաղը նկարագրեց շքեղագոյն պատկերներով: Նոյեմի համար ամեն ինչ պարզ էր. «Ես ասանկ կըսեմ, դուն անանկ հասկցիր....»:

Հաջորդ քարավանով Հայաստան ներգաղթելու Նոյեմի գաղափարը հօդս ցնդեց:

Սարգսի մահից հետո, ավելի սերտ ու մտերմիկ դարձան

երկու ընտանիքների փոխհարաբերությունները:

Դրկից հարևան երիտասարդները ձմռան ցուրտ երեկոներին, երկարեւ վառարանի շուրջը բոլորված, ժամեր շարունակ խոսում, հիշում էին իրենց ծննդավայրը, մանկական խաղերն ու չարածճիությունները:

Այդ զրոյցների ընթացքում ամենաթախծոտն ու լուսացը Գևորգն էր: Նրա աչքերի առջև վերակենդանանում էին Վալանսի հայկական ֆուտբոլային թիմի խաղերը:

Չնայած իր կարճիկ հասակին, նա թիմի ամենախոստումնալից և սիրված մարզիկներից էր, Քեմիքսիզյան ազգանունից կրծատված Քեմիք անունով՝ հայտնի ողջ Վալանսում: Նրա անվրեպ, դիպուկ՝ հարվածները մշտապես հիացմունք էին առաջացնում ամբողջ մարզադաշտում: Իսկ ահա այստեղ, Հայաստանի խուլ գյուղերից մեկում ի նշ ֆուտբոլ, ի նշ մարզադաշտ, երբ մի պարզ, մանկական գնդակ հնարավոր չէր գտնել գյուղում: Միակ միսիթարանքը Անահիտն էր, իր առաջին սերը:

Գևորգը ներքուստ զգում էր, որ Անահիտն էլ անտարբեր չէր իր նկատմամբ, սակայն իրենց միջև եղած տասներկու տարվա տարբերությունը հավանաբար կարող էր լուրջ խանգարող հանգամանք դառնալ իրենց կապը օրինական և հաստատուն դարձնելու համար:

Գրեթե ամենօրյա բլուս թղթախաղի սեղանի շուրջը պտտվող Անահիտը գողունի հայացքով հետևում էր, որ հաղթողը Գևորգի զույգը լինի:

Իր եղբայրները նկատում էին այս ամենը և դա նրանց դուր չէր զալիս: Գնալով պակասեցին բլուսային մենամարտերը և տեսանելի, ընդգծված սառնության մթնոլորտում, երկուստեք հանդիպումները դարձան հազվագյուտ:

Չնայած ընտանեկան ճնշումներին, Անահիտին հաջողվում էր եղբայրներից թաքուն հանդիպել Գևորգին:

Անահիտի դասընկեր Բղդոն (Բաղդասար), ով մինչ ականջների ծայրը սիրահարված էր Անահիտին, հայտնաբերեց

սիրող զույգի ժամադրավայրը և անմիջապես տեղյակ պահեց Անահիտի եղբայրներին:

Բանը հասավ նրան, որ եղբայրները կտրականապես արգելեցին որևէ կապ Գևորգի ու Անահիտ միջև: Լարված մքնուրտը խաղաղեցնելու միտումով, խեղճ Սինասն ասում էր.

- Տղաք, հանգիստ ձգեցեք սա երիտասարդներուն, ի՞նչ կուզեք անոնցմեն, ի՞նչ կա ոք, տասներկու տարվան տարբերություն կա, ե՞հ, թող ըլլա, այդքան տարբերությունը մեծ քան մը չէ, ես ալ ութը տարով մեծ եմ իմ կոչշեն... Հետո, մի մոռնաք, որ Անահիտի հայրը, պարոն Սարգիսը լավագույն բարեկամներէս մեկը եղած է: Երիտասարդները զիրար կը սիրեն, Գևորգն ալ ուշիմ, ազնիվ, աշխատասեր տղա է, ասկէ ավելի ի՞նչ կուզեք, քանի մը տարի վերջ ձեր քույրը հասուն օրիորդ կըլլա, և ըստ օրինի կրնա ամուսնանալ...

... Տիրահոչակ Ստալինի մահից հետո, խորհրդային երկրի կյանքը դարձավ փոքր ինչ տանելի: Հայաստանի կառավարությունը սկսեց վարկեր տրամադրել հայրենադարձներին, հանրապետության տարածքում, ներառյալ՝ Երևան քաղաքը, որպեսզի նրանք կարողանան սեփական տներ կառուցել:

Գևորգենց ընտանիքը՝ քան տարում պարտքը մարելու պայմանով, դրամ վերցրեց կառավարությունից և սեփական տուն կառուցեց Երևանի երրորդ մաս կոչվող տարածքում, իսկ Անահիտենց ընտանիքը դարձյալ Երևանում, վարձակալական հիմունքներով, մեկ սենյականոց բնակարան վարձեց ներկայիս Եռաբլուրի հարևանությամբ գտնվող թաղամասում:

Անահիտի և Գևորգի առանց այն ել հազվադեպ դարձած հանդիպումները ժամանակավորապես դադարեցին: Անահիտի եղբայրները ուրախ էին դրա համար և հանգիստ, որովհետև փոխադրամիջոցի բացակայության պայմաններում հագիւ թե սիրահարները կարողանային իրար հանդիպել:

Բայց... իսկական սերը միշտ է հաղթում: Ահազին տարածություն կտրելով, Գևորգը քայլելով, շարաթը գոնե մեկ անգամ զնում էր Անահիտի հետ հանդիպման: Տիկին Արսինեն՝

Անահիտի մայրը, զիտեր այդ հանդիպումների մասին: Աղջիկն իր մորից ոչինչ չէր թաքցնում, մանավանդ որ, վերջինս խորթ աշքով չէր նայում ջահեների այդ հանդիպումներին: Նա շատ լավ էր ճանաչում Գևորգին և վստահ էր, որ աղջիկը երջանիկ կլինի նրա հետ:

- Մայրի՝ կ, ըստ, խոսե եղբայրներուս հետ, ինչո՞ւ չեն ուզեր հասկնալ, որ ես կը սիրեմ Գևորգին և շատո՞նց, երբ հազիվ ութը տարեկան էի...

- Սո՞ւս, աղջիկ, մեկը չսե ըսածներդ, ամո՞թ է, ամո՞թ, ութը տարեկանի՞ն ալ սիրահարվիլ կըլլա եղեր, Աստված իմ, ալ ինչեր պիտի լսենք:

Ի վերջո, տեղի տալով աղջկա հորդորներին, տիկին Արսինեն օր ու գիշեր, աղջկա բացակայության ժամանակ խոսակցության հիմնական նյութ էր դարձրել Անահիտի ամուսնության խնդիրը.

- Տղաք, արդեն մեծ աղջիկ եղավ ձեր քույրը, դպրոցը ավարտեց, հիմա ալ գործի պիտի անցնի: Եկեք գոնե նշանենք ձեր քրոջը: Իմ առողջությունս ալ տեղը չէ: Մեռնելես առաջ ձգեցեք, որ անոր երջանկությունը տեսնամ: Դուք տղաներ եք, ձեր գործը ավելի դյուրիխն է,- փորձում էր տղաներին համոզել կիսանկողնային վիճակում իր գոյությունը մի կերպ քարշ տվող Արսինե մայրիկը:

- Լավ, մայրիկ, ուզածիդ պես թող ըլլա, արդեն մենք ալ համոզվեցանք, որ ասոնց իրարմե զատել անկարելի է, միայն թե պետք է, որ գոնե երկու տարի նշանված մնան, այն ատեն Անոն քան տարեկան կըլլա, աղջկա մը համար ամենեն հարմար տարիքն է ամուսնանալու համար,- ասաց Վարդգեսը:

- Անո, Անահիտ, եկո՞ւր, եկո՞ւր աղջիկս, տես թե եղբայրներդ ինչ կըսեն,- ականջներին շհավատալով բղավում է խեղճ կինը:

Անբացատրելի հուզումը սրտում, Անահիտը զլսահակ, խոհանոցի դռնից ներս մտավ ու կանգնեց սենյակի մեջտեղում: Դրսից նայողին կարող էր թվալ, թե դատական նիստ է:

- Ան ջան, անուշիկ քույրիկ,- այս անգամ փոքր եղբայրն էր

խոսողը՝ Հակոբը, - մենք զիտենք, որ դու՝ չնայած մեր արգելք-ներին, շարունակում ես հանդիպել Գևորգի հետ: Հարևաններն ամեն ինչ տեսնում են և սկսել են անտեղի խոսակցությունները: Մենք համոզվեցինք, որ դուք իսկապես սիրում եք միմյանց, արի ձեզ նշանենք, ձեր կապը օրինականացնենք, ասեկուտեներն ել կվերանան, հետո, ժամանակի ընթացքին ամեն ինչ կհստականա: Մեկ-երկու տարի աշխատեցեք, քիչ-միշ դրամ հավաքեցեք, հետո՝ կամուսնանաք...

Առանց որևէ խոսք ասելու, Անահիտը ուրախությունից արքած, վազեց խոհանոց:

Մեկ շաբաթ անց տեղի ունեցավ սիրահար զույգի՝ Գևորգի և Անահիտի նշանդրերի արարողությունը: Հարսի մատանին ժամանակին կրել եր Անահիտի տատշ՝ Թուրքիայի Եղողաք քաղաքում...

Երկար չապրեց Անահիտի մայրը՝ տիկին Արսինեն, և չու-սավ իր միակ աղջկա՝ Անահիտի, հարսանիքի արարողությունը, որին ներկա էին շատ փոքրաթիվ հյուրեր՝ հիմնականում Ֆրանսիայի Լիոն, Վալանս, Գրենուր քաղաքների իրենց նախկին ծանոթներն ու բարեկամները:

Մինչ այդ ամուսնացել եր նաև Գևորգի քույրը՝ Սյուզանը, որի ամուսինը՝ Կարոն, տնիկեսա էր եկել: Այս բազմանդամ ընտանիքին ել միանալու էր նորապասակ զույգը:

Բնակարանային նեղ պայմանները ստիպեցին, նորապսակներին վարձու բնակարան վնատրել իրենց համար: Միայնակ եղբայրներին զորավիզ լինելու մտահոգությունից դրդված, Անահիտը խնդրեց Գևորգին բնակարան վարձել իր եղբայրների տան մոտակայքում:

Գևորգի և Անահիտի առաջնեկը ծնվեց 1955-ին, իրենց ամուսնությունից մեկ տարի անց: Աղջիկ էր, անունը որին Սոնա: Երկրորդ երեխային երկար սպասեցին, զրեթե ուր տարի: Սակայն այս մեկն էլ էր աղջիկ, որին կնքեցին Անուշ անունով:

Երկու փոքր երեխաների առկայությունը թույլ չտվեց, որ Անահիտն աշխատի, իսկ Գևորգի աշխատավարձը չէր բավա-

կանացնում ընտանիքի ծախսերը հոգալու համար:

Սակայն, օրեցօր Գևորգն ավելի էր հմտանում իր մասնագիտության մեջ: Դրա շնորհիվ նա կարողանում էր «դրսից» գործեր հայթայթել շաբաթ և կիրակի օրերի համար: Նույնիսկ իրենց հին բնակատեղից, Հոկտեմբերյանից էին զալիս Երևան՝ լավագույն վարպետ Գևորգի խղճամիտ ծառայությունից օգտվելու համար:

Կամաց-կամաց Քեմիքսիզյանների կյանքը մտավ բարվոր հունի մեջ, մանավանդ, որ Անահիտն էլ սկսեց աշխատել Շահումյանի շրջանի «Մետաքսի» ֆաբրիկայում, իսկ փոքր աղջկան՝ Անուշիկին, տեղավորեց նույն գործարանի բավական հուսալի մանկապարտեզում:

Անցյալ դարի 60-ական թվականների կեսերից, Հայաստանի զիմանական եղող խորհրդային վարչակարգի թանձր մառախուղը կամաց-կամաց սկսեց պայծառանալ:

Երկարյա վարագույրը դանդաղորեն իր փեշերն էր հավաքում: Փոխադարձ այցելությունները Հայաստանի և Սփյուռքի հարազատների, բարեկամների միջև դարձան բավական շոշափելի: Աստիճանաբար, հատուկ մշակված ծրագրով, Հայաստանի իշխանությունները սկսեցին «Ընտանիքների վերամիավորման» պիտակի տակ, նախկին սփյուռքահայ ընտանիքներին թույլ տալ մեկնելու իրենց նախկին բնակավայրերը:

Սուածին աշխուժությունը գործնականի վերածվեց ֆրանսահայերի շրջանում:

Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարի այցելությունը Հայաստան որոշակի ազդեցություն թողեց Հայաստանի արտաքին և ներքին գործերի նախարարությունների գործելակերպի վրա:

Հայաստանի մեծարիվ ֆրանսահայերի ազգականները Ֆրանսիայում բողոքի նամակներով ողողեցին տեղի պատկան մարմինների գրասենյակները՝ պահանջելով, որ ֆրանսիական հպատակություն ունեցող իրենց ազգականներին թույլատրվի վերադառնալ Ֆրանսիա:

Այդ աշխուժությունը հիմնականում գործնականի վերածնեց այն քանից հետո, եթե Երևանի օդանավակայանում Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Պինոյի ձեռքերի մեջ հայտնվեց նորածին մի մանուկ, որին նախարարի գիրկն էր նետել հուսահատ մի մայր, ասելով՝ «Գոնե սրան փրկեք...»:

Քսան տարի շարունակ Անահիտը լրելայն իր մտքում փայփայել էր Վալանս՝ իր ծննդավայրը, վերադառնալու երազանքը: Եկել էր պատեհ առիթը:

Շտապ նամակ հասցրեց քրոջը՝ Նոյեմին, հրավեր ուղարկելու խնդրանքով, պայմանով, որ այդ մասին իրենց քեռայրը՝ Եզնիկը, երբեք չիմանար:

Եզնիկն արդեն ջրի ճամբա էր դարձրել Փարիզ-Երևան չվերթը, մի քանի օր վայրեց կատարելով Մոսկվայում:

Ֆրանսահայ ընտանիքների նիստուկացից լավագույնս տեղյակ Եզնիկը հիմնականում գիտեր բոլոր այն ընտանիքներին, որոնք դիմում էին ներկայացրել Ֆրանսիա արտագործելու համար: Երևանում եղած օրերին, Եզնիկը օր ու գիշեր, շաբաթը մի քանի անգամ մտնում էր Անահիտենց տուն՝ փորձելով կրահել, թե իր ազգականները միտք չունեն արդյոք Ֆրանսիա մեկնելու:

- Չէ, ճանըմ, ի՞նչ պիտի ընենք Ֆրանսիան, արդեն տուն-տեղ եղած ենք,- ասում էր Գևորգը, - Երեխաններն ալ կամաց-կամաց մեծնալու վրա են, միայն թե նայինք, թե ինչ պիտի ըլլա սա մեր բնակարանին հարցը: Տասնինգ տարի է դիմած եմ, խոստացած են Արաքիրի Քոչարի փողոցին վրա կառուցվելիք շենքեն երկու սենյականոց բնակարան հատկացնել,- փորձում էր խոսակցության նյութը շեղել Գևորգը:

- Քիչ մըն ալ համբերե, Գևորգ, այսքան դիմացեր ենք՝ նորեն կը դիմանանք,- առանց Եզնիկի զննող աշքերին նայելու, - ասում էր Անահիտը:

Եզնիկը այդպես է չիմացավ, որ իր ազգականների Ֆրանսիա մեկնելու գործերը մոտ մեկ տարի արդեն ընթացրում էին:

\*\*\*

... 1968 թվական: Հայաստանի ջրային տնտեսության նախարարությունը մեր սեփական տան տեղում կառուցեց հինգ հարկանի շենք՝ հինգ մուտքով: Ծնողներիս և իմ չորս հոգուց բաղկացած ընտանիքին հատկացվեց չորս սենականոց բնակարան: Մեր հարկի միակ երկու սենականոց բնակարանը, ինչ եք կարծում, ո՞վ գրադարձեց. իհարկե, մեր պատմվածքի հերոսները՝ Գևորգի և Անահիտի ընտանիքը:

Բնակարանամուտի առաջին խոկ օրվանից մի աներևակայելի, անբացատրելի կապ ստեղծվեց մեր երկու ընտանիքների միջև:

Անշուշտ, դրանում մեծ դեր խաղաց այն հանգամանքը, որ մեր երկու ընտանիքներն ել Ֆրանսիայից էին, թեն ծնողներս տաս տարի ավելի շուտ էին Փարիզից արտագաղթել Հայաստան:

Ինչպես ասում են՝ մայրիկիս «լեզուն բացվեց», ֆրանսերեն խոսելու հնարավորություն ստեղծվեց իր համար, որովհետև մեր տան մեջ միայն հայերենն էր տիրապետող, այն ել՝ միայն գրական հայերենը:

Գրեթե ամեն երեկո հավաքվում էինք մեկս մյուսի տանը և ձմռան ցուրտ երեկոներին, մինչև հաջորդ օրվա առավոտյան ժամերը անց էինք կացնում բլոտի սեղանի շուրջ: Ես մշտապես ընկեր էի վերցնում Անահիտին, խոկ Գևորգի խաղընկերը մայրս էր: Պատահում էր, որ խաղին միանալու ցանկությունը էր հայտնում Անահիտենց տնից անպակաս Եզնիկը, կամ ել՝ առաջին հարկում բնակվող, պետական վերահսկողական կոմիտեի աշխատող Համլետը:

Մի խոսքով, արտասահման մեկնելու մասին որևէ խոսք բացառվում էր նրանց ներկայությամբ: Սակայն, նրանց բացակայությամբ, մեր խոսակցության հիմնական նյութը Գևորգի ընտանիքի Ֆրանսիա մեկնելն էր: Միայն մեր ընտանիքն էր, որ զիտեր այդ մասին:

Այնտեղ, Վալանսում, Անահիտի քույր Նոյեմն ու ամուսինը՝ Պետիկը, մշտապես վեճերի մեջ էին, որովհետև «առաջադի-

մական» հայացքների տեր, շոշափելի կարողությամբ հարուստ այդ բիզնեսմենը դեմ էր արտազադթին:

- Հոս գան, ի՞նչ պիտի ընեն,- ասում էր նա,- ինն տուն-տեղ ունին, երեխաներն ալ շուտով կը մեծնան Հայրենիքի մեջ, ձրի ուսում կառնեն, մարդ կը դառնան, ապահով աշխատանք կունենան: Հոս բանվորութենք զատ ուրիշ բան չեն կրնար ընել,- նամակում Պետիկի մտքերն էր շարադրում Նոյեմը:

Ի վերջո, ամուսնուց գաղտնի, Նոյեմն իր անունով հրավեր ուղարկեց քրոջ՝ Անահիտի ընտանիքին:

Չորս, երկար ու ձիգ տարիներ անցան մինչև որ ընտանիքով Ֆրանսիա մեկնելու իրավունք ստացավ Անահիտը:

Երբ Քեմիքսիզյանների ընտանիքի Ֆրանսիա մեկնելու թույլտվությունը և կնքված անձնագրերը տեսավ Եզնիկը, մի պահ քարացավ, կարկամեց, լեզուն կապ ընկապ կարծես.

- Ինչպես կըլլա, որ ես չեմ իմացած, դո՞ւք ալ, ո՞չ, ո՞չ, չի կրնար ըլլալ:

- Իշտե կըլլա եղեր, քեռայր, մենք քեզի չեինք ըսած, որովհետև գիտեինք, որ կրնայիր խանգարել մեր գործին,- անփականկատ ձևով՝ առանց թաքցնելու քեռու նկատմամբ ունեցած իր արգահատանքը, ասաց Անահիտը:

- Այո, այո, ես չեմ արտոներ, ես՝ հիմարս, ինչպես չեմ անդրադարձած,- ասաց ու ընդուստ վեր ցատկեց տեղից ու անմիջապես դուրս ելավ բնակարանից: Մենք այլևս նրան չտեսանք ոչ Հայաստանում և ոչ էլ Ֆրանսիայում:

Եզնիկի հեռանալուց հետո լուր էինք բոլորս, մտածկոտ, միջադեպը ցնցող էր ու մտահոգից: Աներևույթ մի ուժի ազդեցության տակ յուրաքանչյուրը յուրովի ծանր ու թեթև էր անում եղածը: Հավանաբար, ամենքիս մտածումների բարձրածայն ընդհանրացումը Գևորգի շուրթերով պիտի հնչեր.

- Ինչևէ, եղածը՝ եղած է: Շիտակը՝ ես հակառակ եմ Ֆրանսիա երթալուն: Հիմա գործս շատ լավ է, բավական դրամ կաշխատիմ, բայց Անոյիս երկար տարիներու փափազը չեմ կրնար զանց առնել: Եվ, ճիշտ աղոր համար ալ, Անոն ուր՝ ես ինն,-

փորձում էր արդարանալ Գևորգը:

Ֆրանսիա մտնելու մուտքի վիզա ստանալու համար հարկ էր գնալ Մոսկվա՝ ֆրանսիական դեսպանությունից ընտանեկան փաթեթը ստանալու համար: Այն, առանց բանալու, պարտավոր էիր հանձնել տեղական իշխանություններին:

Ռուսերեն լեզվից ամբողջովին անտեղյակ ընտանիքի համար անսպասելի դժվարություններ կարող էին ծագել Մոսկվայում, մանավանդ որևէ հյուրանոցում տեղավորվելու համար միջնորդություն էր անհրաժեշտ:

Ինձ մնում էր գործ-բան թողնելու մերոնց ուղեկցել Մոսկվա:

1972 թվականի ապրիլին Քեմիքսիզյանների ընտանիքը՝ չորս անդամներով, հրաժեշտ տվեց խորհրդային հզոր երկրին:

...Մի շատ կարևոր բան պակասեց մեր առօրյա կյանքում: Երեխանները մի տեսակ խեղճացան, չկային այլևս Սոնան ու Անուշը, իսկ բակում խաղալը միշտ չէ, որ խաղաղ ելքով էր ավարտվում: Սովորական զգվոտոցը՝ ոչինչ, տղաներս շատ անգամ բարոյապես վիրավորված էին տուն բարձրանում:

- Ավոն ինձ ֆրանսիացու ձուտ ասաց,- զանգատվում էր փոքր տղաս:

- Ինձ էլ դիրիժորի տղա են ասում,- զանգատվում էր ավագ որդիս, ում հաճախ էին բակի երեխանները տեսնում ջութակը ձեռքին գնալ-գալիս:

...Իսկ այնտեղ՝ Ֆրանսիայում, Անահիտի ընտանիքը տեղավորվել էր քրոջ՝ Նոյեմի տանը:

- Երկու տարի մեզի կը մնաք, միասին կապրինք: Այդ ընթացքին կաշխատիք, դրամ կը շինեք և տուն մը կառնեք,- ասել էր Պետիկ քեռին:

Վալանսից եկած նամակներից հայտնի դարձավ նաև, որ Պետիկի միջնորդությամբ, Գևորգը տեղավորվել էր մի մեքենայական գործարանում, իսկ Անահիտը՝ հավերի մշակման ֆաբրիկայում:

Երկուսի գործն կ ծանր էր, մանավանդ Անահիտի աշխատանքը: Ոետինե երկարավիզ կոշիկներ հազած, Անահիտը

օրը ուր ժամ, ջրերի մեջ, պարտավորված էր հարյուրավոր հավեր փետրահան անել, լվանալ ու փաթեթավորել:

- Խեղական Անահիտ,- մտածում էինք մենք,- ինչ երազներով ճամբար ելար, հապա Գևորգը, որ մշտապիս մտածում էր ֆուտբոլ խաղալ վետերանների խմբում:

- Նախկին ընկերներս երես դարձուցին մեզմե,- գրում էր Գևորգը, ինչ եկող-գացող չկա, մենք մեզի ենք, հազվագյուտ սրճարան կերթամ՝ գեթ մեկու մը հետ բարեկամությունս վերականգնելու հույսով, բայց անօգուտ, մենք օտար ենք ասոնց համար: Առաջվան Ֆրանսիային բան չէ մնացած:

Հայաստանի պատկան մարմինների հետ թուր ու թվանք լինելուց հետո, հանգամանքների բերումով, 1978 թվականին մեր ընտանիքին հաջողվեց դուրս գալ Հայրենիքից ու մեկնել Միացյալ Նահանգներ:

Մինչ Ամերիկա հասնելը, որպես տարանցիկ ճամփա, չորս ամիս մնացինք չքնաղագեղ Խոալիայի մայրաքաղաք Շոռոմում: Ֆրանսիայի մեր «հերոսներ» գիտեին, որ Հայաստանից դուրս ենք գալու և սպասում էին մեր հեռաձայնին:

\*\*\*

- Ան ջան, ես եմ, Հենրիկը, մենք արդեն Շոռոմում ենք:

- Թելեֆոնիդ թիվը տուր և հասցեդ ըսե,- առանց որևէ բառ ավելացնելու, ակնհայտ շտապողականությամբ ասաց Անահիտը և կախեց ընկալուչը:

... Եվ ի՞նչ... առանց մեզ տեղյակ պահելու, Անահիտն իր ընտանիքով, չորս հոգով, Վալանսից, իրենց մեքենայով, 12-13 ժամ վարելուց հետո գալիս հասնում են Հոռոմ՝ մեզ տեսնելու:

Նման երևույթ դժվար է երևակայել հարազատ, արյունակից ազգականների դեպքում անզամ: Այդքան հեռավորության վրա, երկրից-երկիր գնալ, երկար ժամեր մեքենա վարել, ընդամենք չորս տարվա դրկից հարևան-բարեկամիդ տեսության,- ապշեցուցիչ երևույթ է: Շատերը դա կարող են խենթություն համարել: Սակայն մեր և Անահիտի ընտանիքների

մտերմությունը իսկապես խենթության արդյունք կարող էր համարվել: Տերն այնպես էր կամեցել, որ տարբեր, կողք-կողքի երկու բնակարանների «մեծերի» ննջասենյակները ընդհանուր պատ ունենան: Ավելին, որ երկու կողմի մահճակալների սնարները «հպվեն իրար» բարակ պատի միջնորմով, որով հնարավոր լինի Մորգեի այբուբենի նման, թույլ հարվածների օգնությամբ ցանկացած ժամի «խոսել» միմյանց հետ:

Որևէ կողմից մեկ պատիկ հարվածը նշանակում էր հարց՝ արթո՞ւն եք: Եթե պատասխան հարված չիներ, պետք է մտածել, որ քնած են և կամ էլ «հավես» չունեն: Պատասխան հարվածը նշանակում էր՝ այո, արթուն ենք: Երկու հարվածը նշանակում էր՝ «բլոտ խաղա՞նք: Պատասխան մեկ հարվածն էլ բավարար նշան էր համաձայնության: Երրորդ հարցն էլ էր կարևոր՝ մեր տանը, թէ՞ Անոյենց: Այս հարցն էլ էր պատին հարվածելով լուծվում, միայն թէ բռունցքի հարվածներով:

Եվ հանդիպումը լինում էր այնքան մտերմիկ, այնքան հարազատ, որ ոչ մեկը չէր քաշվում, ամաչում հենց այդպես, ներքնահագուստով, անկողնուց վեր կենալ և առանց արտահագուստի նստել զրոյցի և կամ էլ բլոտի սեղանի շուրջ:

... Եվ հիմա եկել են, ի՞նչ անենք, շվարել մնացել ենք, մենք արդեն վեց հոգով հազիվ ենք տեղափորվել մեկ սենյակում, իսկ հիմա եղանք տասը շունչ.

- Ինձի նայե, ախապարս, - բնավ մի նեղվիր... ասանկ ինչ լավ կըլլա, քով-քովի, գետինին վրա կը պառկինք: Միտքեղ շանցընես, թէ կըրնանք հյուրանոց երթալ, բնավ երբեք, դրամ ալ ունինք, ամեն բան տեղն է: Կարևորը իրարմե կարոտ առնելն է: Մենք եկանք այդ նպատակին համար, Երևանին շունչը ձեզմե առնելու համար: Վեց տարի է Ֆրանսիա կապրինք, խոսք չուզեր՝ հրաշալի երկիր է, բայց մեր աշքը բացվեցավ Հայաստանի մեջ: Մենք հոն վարժվեցանք մարդոց հետ մտերմության, բարեկամության, զոհողության: Այս երկիրներու մեջ նման բան չիկա: Հայաստանի մեջ իրարու քով ապրեցանք միայն չորս տարի, մեկ ընտանիքի պես, միայն պատ մը կը

բաժներ մեզի և կը բնակարանինք նույնիսկ քանդել պատր ու միացնել ձեր բնակարանին ու ապրիլ որպես մեկ ընտանիք: Հոս, քրոջս անգամ տարին մեկ կամ երկու անգամ կը տեսնամ՝ Նոր տարիեն Նոր տարի:

- Հայդե, հայդե, շատ խոսեցա, շարժեցեք, տղաք, կարգադրենք սա մեր տասը հոգիին համար պառկելիք տեղերը, անկե ետք կերթանք ճաշելու: Հիմակվընե կը ըսեմ Վերժին մայրիկ, քանի մենք հոս ենք՝ տունը կերակուր եփել չիկա... Մարետ, ձեր դրացիները ինչպիսի՞ մարդիկ են, հարաբերություն ունի՞ք հետերնին:

- Երիտասարդ ամուսիններ են, պզտիկ աղջիկ մը ունին, շատ ընտիր մարդիկ են: Լավ է, որ մեր Հակոբ պապիկը իտալերեն գիտի, նրա շնորհիվ դյուրիխն է հաղորդակցությունը: Ամեն օր առավոտյան սուրճը համատեղ ենք վայելում:

- Շատ լավ, հիմա, Մարետ ջան, պարոն Հակոբին հետ գնում եք դրացիիդ բնակարանը և, ըստ նայիմ՝ ի՞նչ է դրացիիդ կնիկին անունը...

- Մարիա է, ամբողջ օրը տանն է, փոքրիկ է մեծացնում և սոսկալի ծխող է, Հենրիկի ծխելու ընկերն է:

- Լավ, Մարետ ջան, այդ ամենը մեկ կողմ դիր, հիմա պապայի հետ գնում եք Մարիայի մոտ և նկարագրում մեր վիճակը: Ինչ որ կրնաք՝ բերեք անոնց տունեն, դե՛, դու գիտես էի, Մարետ ջան, հոգիդ ուտեմ, անուշիկ քույրս, եթե գիտնաս, թե որքան կարոտցած եմ,- այս ասելը, Մարիետային գրկելն ու փղձկալը մեկ եղավ. սենյակի մեջ տիրող, մինչև փողոցը հասնող աղմուկը մեկ վայրկյանում վերացավ, ամենքս սակվեցինք, մինչ Անահիտը արցունքների միջից շարունակում էր սրտում եղածը «դադարկել», - ա իս, Մարետ ջան, ի՞նչ ըսեմ, միշտ աշքիս առջև կու զա 1970 թվականը, երբ երկուրս գացած էինք Մոսկվա՝ Հենրիկին դիմավորելու, որ Փարիզեն պիտի զար: Որոշած էինք շաբաթ մը Մոսկվա անցնել, պտտիլ, գնումներ ընել: Հենրիկի՝ թունեն (գնացք) իջնալեն ետք, երբ ըսինք, որ մեկ շաբաթ կուզենք Մոսկվա մնալ, Հենրիկը մեկ անգամնեն,

օձեն խայթվածի պէս, զրեթէ պոռալով ըսավ.

- Ի՞նչ, Մոսկվա, չեմ ուզում, չեմ կրնար, մեկ վայրկյան իսկ հոս մնալ, շուտ, շուտ՝ Վնուկովո օդանավակայան: Ես տում կը կարգադրեմ, հոգ մի ընեք, դրամի խնդիր չեղած... և կարգադրեց, թեն ըսին, որ ազատ տեղ չկա օդանավի մեջ, ասանկ է ախապարիկս, և մենք, մեր ընտանիքը միշտ փառք կուտանք Աստծո, որ Հայաստանի մեջ գոնե վերջին չորս տարին մեր կյանքը թեթևացվ՝ շնորհիվ Անասյան ընտանիքին հետ մեր ունեցած ազգականական կապեն ալ ավելի մտերմիկ հարաբերությամբ:

- Քիչ մը շատ չեղավ, քույրս,- փորձեցի կարճել ելույթի ձև ստացած Անոյիս սրտաբուխ ելույթը:

- Ո՛չ, շատ չեղավ, դուն մի խառնվիր իմ գործերուս, կատակով ասաց նա:

- Հիմա անցնինք մեր գործին, ո՞ւր կեցանք, Մարետ շան, հիշեցի...

Չենց այս խոսքի վրա, այդ խառն իրավիճակում, մեկ է շենքի տերը երևաց, չափազանց բարեհած մի կին, որ շատ արագ մտերմացել էր մեզ հետ՝ շնորհիվ հայրիկիս իտալերեն լեզվի իմացության: Նա եկել էր բնակարանի վարձը տանելու:

Հայրիկս, ֆրանսիական ծագումով տիկին Մարգարետին բացատրեց ամեն ինչ, և խնդրեց թույլ տալ, որ մերոնք մի քանի օր գիշերեն մեզ հետ.

- Ինչպէ՞ս, այստե՞ղ... Ո՛... Մոն Դիոն, Իմպուիֆլ,- տարբեր լեզուների խառնուրդով իր զարմանքն էր բարձրաձայնում հարգարժան տիկինը,- ինչո՞ւ հյուրանոց չեն գնում:

- Նրանց համար, ինչպէս և մեզ համար կարևոր չե, որտեղ գիշերելք, կարևոր միասին լինելն ու կարոտն առնելն է, մենք շատ ենք կապված իրար, մենք բոլորս կ գետնին կընենք, - ասաց հայրիկս:

- Ես գիտեմ; իհարկե, որ դուք տաք, ջերմ, մտերմիկ ժողովուրդ եք, մենք ել քիչ թե շատ ձեզ նման ենք, բայց այս աստի-

Ճա՞ն, խոսք չեմ գտնում ասելու,- ասաց ու շրջվեց չորս երեխաների կողմը:

- Դե՛, ջահելներ, իմ ետևից,- ասաց տիկինն ու երեխաների հետ դուրս եկավ սենյակից:

Որոշ ժամանակ անց, երեխաները բարձ-մարձերով, ծածկոց-մածկոցներով, փորք-մոքք անհրաժեշտ պարագաներով ծանրաբեռ, աղմուկ աղաղակով մտան ներս: Դրկից Մարիան էլ որոշ իրեր բերեց և հատակ-ննջարանը պատրաստ էր: Միակ բազմոցը վիճակվեց մեր փրկարար-թարգմանիչ Հակոբ պապիկին:

Մեկ շաբաթ շարունակ, տասը հոգով, մեկ սենյակի մեջ, քազակորական կյանք վայելեցինք: Պառկելով հատակին, կողք-կողքի, առանց մեկս-մյուսից քաշվելու, խսկական հարազատ քույր-եղբոր պէս, ամբողջ զիշեր երևանյան հիշողություններ, անեկդոտներ պատմելով, աղմկոտ խնդուքով էինք զիշերները լուսացնում, իսկ առավոտյան այցելելում քաղաքի տեսարժան վայրերը:

Մեկնման օրը, Անահիտը ինձ մի կողմ տարավ և ասաց.

- Հենրիկ, բարձին տակը, ծրար դրած եմ, որպեսզի Նափոյի երթաք, եթե պիտի չերթաք՝ կերթամ ետ կառնեմ: Ուրիշներ ուկեղեն կը գնեն, պարապ բան. աշխարհ տեսնալը կմնա...

- Անո ջան, քույրս, ի՞նչ պէտք կար... նայե՛ Մարեսն ալ հիվանդ է, հարբուխ ունի, տաքությունն ալ վրան: Չեմ կարծեր, որ կարենանք տեղերնես շարժիլ:

- Չեմ զիտեր, ինչպես որ ըսի, խոսք տուր, որ պիտի երթաք Նափոյի, հիմա իսկ, թռենի մեջ Մարիետան կաղեկնա: Եթե չերթաք՝ շատ պիտի նեղվիմ:

- Միայն Հայաստան ապրած մեկը կրնա նման խենթություններ ընել, չեր բավեր, որ այսքան երկար ճանապարհ կտրեցիք, մեկ շաբաթ կերցուցիք-խմցուցիք, պտտցուցիք, հիմա ալ՝ դրամ կուտաս, որ Խոտալիա՞ն վայելենք,- առարկություն չվերցնող տոնով փորձեցի մերժել: Սակայն անհնար եղավ մերժել Անահիտի անհողողող կամքը:

... Ամերիկա հաստատվելուց հինգ տարի անց, որպես ամերիկյան քաղաքացիներ, կնոջս՝ Մարիետայի հետ, զնացինք Ֆրանսիա: Մի քանի օր Փարիզում՝ հորաքրոջ տղայի տանը, մնալուց հետո, արագընթաց գնացքով մեզ զցեցինք Վալանս:

Իրար կորցրած հարազատների պես, երկարորեն գրկախառնված, փորձում էինք ինչ-որ ձևով հագեցնել մեր անմեկնելի կարոտի զգացումը:

Ճիշտ էր գրել Գևորգը ժամանակին: Մեր կեցության տաս օրվա ընթացքում որևէ մեկը Անոյենց տան դուռը շթակեց, և ոչ էլ որևէ մեկը հեռաձայնեց: Նույնիսկ Անահիտի քույրն ու իր ամուսինն էին մոռացության մատնել իրենց հարազատին և մեզ, թեև զիտեին, որ մենք հյուր ենք ու եկել ենք Ամերիկայից:

- Ո՞ւմ են պետք այս նպաստավոր պայմանները, շքեղ տներն ու նույնքան շքեղ կահույքը, երբ դուռող բացող չկա, -բարձրաձայնում եմ ես:

-Իրավունք ունիս, Հենրիկ, Հայաստանը ուրիշ էր, իոն՝ մեկս-մյուսով կապրեինք, եկող-զացող կար: Եկածես ի վեր դեռ բլուտ չեմ խաղցած, մարդ չկա, որ խաղաս, ուր է թե մայրիկդ՝ տիկին Վերժինեն ալ հոս ըլլար, ամենքս միասին չորս հոգի կըլլայինք ես և դուն աղվոր ծեծ մը կու տայինք իրարու:

\*\*\*

Առաջին այցելությունից հետո, երկու անգամ ևս զնացի Ֆրանսիա, Վալանս: Երկրորդ անգամ նկատեցի, որ Անահիտի առողջությունը տեղը չէր, անտրամադիր էր: Փորձում էր թաքցնել ձեռքերի ծովոված մատները, միևնույնն է՝ երևում էր:

-Ան ջան, կարծեմ թե արդեն կրնաս չաշխատիլ, տունը կեցիր, հանգիստ ըրե, - ասացի ես:

- Այս, ճիշտ ես, Հենրիկ, սա տարին ալ անցնեմ՝ վերջը տունը կը մնամ: Անուշ երեխա պիտի ունենա, ո՞վ պիտի նայի, ֆրանսիացի խնամի՞ս, ում երեսը տարի մըն է շենք տեսած:

...Սա՝ մեր վերջին հանդիպումն էր: Մերոնք Անահիտի մահվան լուրը ինձ հայտնեցին բավական ուշ, որովհետև

զիտեխն, թե ինչ ցնցող ազդեցություն կարող էր թողնել այդ բոթը իմ հոգեկան աշխարհի վրա:

Ես քույր չեմ ունեցել և այն ունենալու բերկրանքը գտել եի իմ վաղամեռ Անահիտի մեջ: Տասնյոթ տարի խոնավ պայմաններում աշխատելլ կատարել էր իր ավերիչ գործը: Անոն մահացել էր ոսկրային հիվանդությունից, չտեսնելով Անուշի այնքան երազած տղա զավակի ծնունդը:

Լու Անջելես - Փարիզ երթուղին ջրի ճամփա դարձրած, անմիջապես մեկնեցի Վալանս՝ Անահիտի գերեզմանին թարմ ծաղիկներ դնելու համար:

- Այո, մեր այս անցավոր կյանքում, մեր փորձառությամբ զիտենք, որ կան մտերիմներ, բարեկամներ, ընկերներ, ովքեր ժամանակի ընթացքում, շատ անգամ ավելի հարազատ են դառնում մեզ, քան մեր արյունակից ազգականները: Անահիտը հենց այդպիսին էր, արյունակցից ել ավելի հարազատ...

Տասը և ավելի տարիների ընդմիջումից հետո, 2005 թվականին Մարիետայի հետ դարձյալ մեկնեցինք Վալանս: Սակայն առանց Անոյի՝ ի՞նչ Վալանս, թեև կա նրա ամուսին Գևորգը, մի հրաշալի անձնավորություն՝ ով 82 տարեկան է, հեծանիվով է ման զալիս և պողպատյա առողջություն ունի (այսօր՝ 2020 թ. մայիսի 6-ին, Գևորգն արդեն 97 տարեկան է, - ՀԵՆ. Ա.):

Անահիտի կրտսեր աղջիկը՝ Անուշը, երկու զավակների մայր, հազիվ է ծայրը-ծայրին հասցնում: Հայրն ու ավագ քույրը՝ Սոնան, իրենց ողջ կարողությունն արդեն կտակել են Անուշի գույզ զավակներին:

Վալանսից մինչև Սոնթե Կառլո ձգվող երթուղով, տաս օր շարունակ վայելեցինք Ֆրանսիայի հարավի սքանչելի տեսարանները, ծովն ու տեսարժան վայրերը:

Այդ ընթացքում, մշտապես մեր խոսակցությունը պտտվում էր Անահիտի շուրջը: Անուշն է՝ կենսախինդ բնավորությամբ, մշտապես ժամանու ու վարակիչ ծիծաղով՝ շատ է հիշեցնում մորն ու, այդ պատճառով էլ շատ հաճախ, զրույցի ընթացքում թրջում էին իմ ու Մարիետայի աչքերը:

Ճանփորդության հաջորդ օրը վերադառնում ենք Փարիզ: Վալյանսի երկաթուղային կայարանում նկատում եմ, որ Անուշը ինչ-որ ներքին պահանջ ունի առանձնանալու Մարիետայի հետ: Նույնը՝ Մարիետայի մոտ: Մեկ է տեսնեմ, իրար փաթաթված լալիս են, մեկը՝ մոր կարոտն է փորձում հագեցնել մյուսը՝ հարազատից էլ հարազատ եղած քրոջ՝ Անահիտի կարոտը:

- Ինձի քեզի կը պակսի,- բաժանման պահին, լացակումած ասում է Անուշը Մարիետային:

- Դուն ալ՝ ինձի կը պակսիս Անո՞ւշ, թեև ոչ այնքան մաքուր հայերենով, դու հաստատեցիր, որ իրար հավատարմորեն նվիրված մարդիկ մշտապես զգում են միմյանց պակասը...

Իսկ հանդիպում իհարկե լինելու է, չի կարող չլինել, չէ՞ որ մենք՝ թեև ոչ արյունակցական, բայց էլ ավելի գորեղ կապով ենք կապված միմյանց: Եվ այդ կապը ստեղծել է մեր աննման Հայրենիքը, այն էլ՝ շատ դժվարին տարիներին...

Ես մշտապես պիտի հիշեմ քո վերջին բառերը իմ անուշիկ Անուշ.

- Ինձի քեզի կը պակսի...

Թույլ տուր ավելացնել.

- Չքնաղ մայր՝ Անահիտը, ում քրոջ պես սիրեցի, մշտապես պակասելու է իմ կյանքում՝ քանի դեռ ողջ եմ...

Մարտի 21, 2011 թ.,  
Լու Անջելես

## ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՊԱՏՄՎԾԱՔՆԵՐ

ԿՈՈՒՆԿ, ԽԱԲՐԻԿ ՄԸ ՉՈՒՆՔ՝ Ս...  
ՀԱՅԱՍՏԱՆ, ԵՐԿԻՐ ԴՐԱԽՏԱԿԱՑՐ  
ՈՐՍԿԱՆ ԱԽՊԵՐ  
ԳԱՅԵ՛Ք, ՏԵՍԵ՛Ք  
ՎԵՐՋԻՆ ՀԵՖԻԱԹԸ

## ԿՈՌԻՆԿ, ԽԱԲՐԻԿ ՄԸ ՉՈՒՆԻ՞Մ...

...Արամը՝ ինչպես ասում են, «պինդ տղամարդ» էր: Ոչ ոք նրա արցունքը չէր տեսել: Ապրում էր անհոգ, երջանիկ: Հոգի էր տալիս հայ երգի համար: Նրա սրտին չափազանց մոտ էին հայկական ժողովրդական և գուսանական երգերը: «Կերածիմած» մարդու համբավ «վաստակած» Արամին լավ էին ճանաշում Երևանի մեծ ու փոքր ռեստորաններում: Նրան լավ զիտեին նաև երաժշտախմբերի երաժիշտները, ովքեր միշտ սիրով էին կատարում իրենց մշտական հաճախորդի պատվերները, մանավանդ, որ առատորեն վարձատրվում էին դրա համար:

Օրերից մի օր, հայկական արևահամ կոնյակից փոքր-ինչ զինովցած Արամը քիչ մնաց ձեռնամարտի բոնվեր ռեստորանի երաժիշտների հետ.

- Ի՞նչ... ուրեմն դուք իմ պատվերը չկատարեք, հա՞ - սրահով մեկ բղավում էր նա,- կոռոնկ, մոռոնկ չզիտեմ, դադարեցրեք, չէ՞ որ ես ձեզ պատվիրեցի «Էսօր Արազն ես զնացել» երգը:

Էս աղմուկի վրա ջութակահարը դադարեցնում է նվազն ու մոտենում «Կոռոնկ»-ը պատվիրած ամերիկահայ հյուրին:

- Ներեցեք, պարոն, ես խառը վիճակում «Կոռոնկ» նվազել չի լինի, մեկ Կոռոնկն է մեղք, մեկ էլ Կոմիտասը, թող հանդարտվի իրավիճակը, հետո կկատարեմ:

- Զհասկցա, տղաս, այս խառնակ վիճակը Կոռոնկին համա՞ր է, վազ անցանք, եղբայր, պետք չիկա կոռոնկ-մոռոնկին, թող պարոնին ուզածը ըլլա, այսպէս ս կհարգեն հոս Մեծն Կոմիտասին, ամոք...

Իսկ Արամի սեղանի մոտ հետևյալ գրույցն էր ընթանում.

- Արամ ջան, ախ ք, ա յ, տեսնա ս կը, այ էն սեղանին երկու մարդ կա նստած, իտոնցմե մեզը Ամերիկայեն է էգե, տուրիստ է, էնիկ է խնդրե «Կոռոնկ» նվազել,- փորձում էր արդարանալ երաժշտախմբի լենինականցի դեկավարը:

- Կռունկն ի՞նչ ա, տո՛, հեշ ճաշակ չունեն ես մարդիկ, բա մարդ է՝ լ ուստորանում «Կռունկ» կլսի:

Մի քանի վայրկյան լրելոց հետո՝ արդեն փոքր-ինչ սթափ վիճակում, Արամը շարունակեց.

- Լավ, հասկացա, մի քիչ լավ չստացվեց, տղա ջան, գնա նրանց հրավիրի իմ սեղանի մոտ, թե որ մերժեցին, մի շիշ շամպանսկի կղնեք իրենց սեղանին, եղա վ...

Ամերիկահայ հյուրն ու իր ընկերը մերժեցին Արամի հրավերը ու ոչ կը օգտվեցին շամպայնից:

Երկուստեք՝ խորը լուրջուն ու հիասթափություն: Մեկ էլ երաժշտախումբը՝ սկսեց նվազել Արամի պատվիրած «Էսօր Արազն ես գնացել» երգը: Շանթահար եղածի պես Արամը վեր ցատկեց տեղից, արագորեն մոտենալով երաժշտախմբին, դադարեցնել տվեց մեղեդու կատարումն ու դանդաղ քայլերով մոտեցավ ամերիկահայի սեղանին: Մի քանի վայրկյան լուր նայեց դիմացինի ժպտուն աչքերի մեջ ու առանց մեկ բառ իսկ արտաքերելու, վերադարձավ իր սեղանի մոտ:

Մի քանի վայրկյան անց Արամը նկատեց, որ ամերիկահայն ու իր ընկերը պատրաստվում են լքել սրահը: Մի պահ ցանկացավ մոտենալ նրանց ու ներողություն խնդրել՝ երեկոն փշացնելու համար, բայց ինքնասիրությունը թույլ չտվեց: Ինչպես ս, ինքը, Արամը ներողություն խնդրի... բա մարդիկ ի՞նչ կասեն...

Նա զգիտեր, որ մեծահոգի ամերիկահայը մի հարված է էր պատրաստել իր համար:

Սրահից դուրս գալիս ամերիկահայը զատվեց ընկերոջից ու մոտեցավ Արամի սեղանին.

- Ես չեմ զիտեր բարեկամս, թե անունդ ինչ է, բայց ես կըրնամ ըսել իմ անունս՝ Բյուզանդ Դերպերյան, մասնագիտությամբ իրավաբան:

Այս ասելուց հետո նա իր գրպանից հանեց ինքնության քարտը և մեկնելով Արամին, շարունակեց.

- Երբեք պետք կըրնաս ունենալ, մեծ աշխարհ է... և մեկ բան

հիշե, եղբայրս. ով Կոմիտաս չի սիրեր, ան հայ չի կը ընար ըլլալ...

Մինչ մեր Արամը ուշքի կզար՝ երկու ընկերներն արդեն դրսում էին:

...Եղավ այնպես, որ ազգականների թելադրանքով ու կնոջ հորդորներից հոգնած, Արամը, ինչպես բազում հայ ընտանիքներ՝ կնոշն ու երեխաներին վերցրած, եկավ հասավ Ամերիկա, Լոս Անջելես: Ինչպես սովորաբար լինում է նորեկների պարագայում, երևանյան հովերով տարված, դեռ աշխատանքի չանցած, այստեղ էլ իրեն տվեց խմիչքին: Դրամի հարց չուներ մեր հերոսը, ամբողջ կյանքը առևտրի նախարարությունում էր աշխատել որպես ավագ հսկիչ: Սկզբում, որպես նոր ժամանած մարդ, հայկական ռեստորաններ ու ամերիկյան երեկոյան ակումբներ հաճախելու բազմաթիվ հրավերներ ունեցավ:

Ի վերջո, ինչպես ոմանց, հաջողությունը ընկերացավ նաև Արամին: Բարեկամների օգնությամբ շահավետ մի գործ գտավ ու սկսեց ապրել խաղաղ կյանքով:

Մշտապես ասող-խոսող, զվարք բնավորության տեր Արամը թոշնել էր կարծես, դարձել լրակյաց: Այժմ արդեն դեպքից դեպք էր լինում ռեստորաններում, սովորաբար՝ պարտավորված հանգամանքով (կնունք, ծնունդ, հարսանիք...):

Պատահեց, որ Երևանից իր մանկության ընկերը եկավ Ամերիկա: Այս անզամ ինքն էր ուղեկցողի դերում, բնականաբար, այցելում են հայկական ռեստորան: Այն է, հազիվ էր Արամը ընկերոջ հետ մտել ռեստորանի նախարահը, երբ նրա ականջին հասան «Կոռունկ» երգի հնչյունները՝ ջութակի քաղցրավուր հնչողությամբ:

Արամը տեղում քարացավ, կարծես վերացավ աշխարհից ու իրեն զգաց եթերային անսահմանության մեջ: Մինչ մեղեղին կավարտվեր, երկու ձեռքով գլուխը բռնած, հայացքը դեպի առաստաղը գամկած մնաց մինչև մեղեղու կատարման ավարտը, որից հետո, աներևույթ ուժի հրումից փլվեց պատահած աթոռին ու... ու՝ աշքերից սկսեցին հոսել արցունքները՝

առատորեն, երեսնիվար...

- Արամ, Արամ, քեզ ի՞նչ պատահեց, եղբայր,- անհանգստացած հարցրեց բարեկամը:

- Ոչինչ, ոչինչ, Ռուբր ջան,- արցունքների միջից հազիվ կարողացավ պատասխանել Արամը,- պարզապես հիշեցի Երևանյան մի դեպք... այս ի՞նչ հոգեցունց, հոգի, սիրութանդող, չէ, չէ, հոգի բզկտող մեղեղի է «Կոռունկը»: Նախկինում երբեք չի զգացել դրա ուժը: Երևի պետք էր, որ պանդուխտ դառնայի, որպեսզի կարողանայի զգալ ու հասկանալ, թե ինչ հանձարեղ երգ է «Կոռունկը», որն, իրոք որ մեզ նմանների համար է ստեղծված...

- Դու, կարծում եմ, բավական հոգեկան ապրում ունեցար, գուցե դուրս գանք ու գնանք մի ուրիշ տեղ, որպեսզի դու մի քիչ ցրվես ու թարմանաս:

- Ոչ, ի՞նչ ես ասում, Ռուբրիկ ջան, ես պարտք ունեմ մեկին տալիք: Այսօր ճիշտ ժամանակն է:

- Ի՞նչ պարտք, Արամ ջան, հիմա հիշեցի՞ր...

- Դու չգիտես, Ռուբր ջան, ես քեզ հետո կպատմեմ, վառել այնձ, վառել, իսկ հիմա գնա ներս և ջութակահարին բեր ինձ մոտ, նրանք ինձ լավ գիտեն: Մինչև վերադառնաս, ես մի հյուրի եմ հրավիրելու:

Ռուբրիկի հեռանալուց հետո Արամը դրամապանակի միջից հանեց խնամքով պահված իրավաբան Բյուզանդ Պերպերյանի այցեքարտն ու քջայինով կապվեց իրավաբանի հետ.

- Այո, լսում եմ,- Արամը անմիջապես զատեց պարոնի անմիջական առողջանուրյունը:

- Պարոն Բյուզանդ, ես եմ, ես... Դուք իմ ձայնը չեք լսել, ես...

- Հոն կեցիր, բարեկամս, մի շարունակեր, հասկցա, հասկըցա, դուն Երևանի ռեստորանին մեջի Կոմիտասի Կոռունկն ես,- այս ասելն ու սրտաբուխ, ինքնամոռաց խնդուքը մեկ եղավ:

- Այո, այո, պարոն Պերպերյան, ես եմ, անունս Արամ է, Արամ: Ինչպես ս հիշեցիր, պարոն Բյուզանդ:

- Ծո՛, «պարոն» ի՞նչ ըսել է: Բյուզանդ ըսէ, լրմըննա, մենք ընկերներ չենք...

Ամերիկահայ իրավաբանի այդքան անմիջական, անկեղծ վերաբերմունքից չափազանց ազդված ու հուզված, Արամը անմիջապես՝ առանց երկար-բարակ բացատրության, անցավ «գրոհի».

- Բյուզանդ ջան, այժմ մանկության ընկերոջս հետ Բնեոլի Հիլզ չհասած, Սանսեթ պողոտայի վրա գտնվող նորաբաց «Տուշպա» անունը կրող ռեստորանում ենք: Նա նոր է եկել Երևանից և շատ հետաքրքիր տեղեկություններ ունի տալիք, մանավանդ «Թավշյա» հեղափոխության հետ կապված: Շատ ենք խնդրում միանալ մեզ:

- Միրով, Արամ ջան, միայն թե ինձի երկու վայրկյան ժամանակ տուր, ճշտեմ, տեսնեմ տիկինս ի՞նչ կըսէ:

Անշուշտ երկու վայրկյանը մի քիչ երկարեց, սակայն պատասխանը դրական էր:

- Արամ ջան, սխալ բա՞ն մը ըրած կըլլամ, եթե տիկինս ալ հետո բերեմ, ան շատ հետաքրքրված է Հայաստանով: Կարծեմ «Տուշպա» ըսիր ճաշարանին անունը, այնպես չէ:

- Այո, այո, սխալ բան չկա, Բյուզանդ ջան, ավելի կգեղեցկանա մեր սեղանը Ձեր կնոց ներկայությամբ: Ուրեմն՝ Տուշպա, Սանսեթ պողոտայով Բներլի Հիլզ չհասած, ձախ թեի վրա:

- Մեզմէ հեռու չէ, 15-20 րոպեից հոն կըլլանք:

Մինչ հյուրերի գալը, Արամը ջութակահարին «կարգադրեց».

- Հենց կտեսնես, որ մենք հինգ հոգով սրահ ենք մտնում, անմիջապես կանցնես «Կոռունկ» երգին, եղա վ...

Կես ժամն արդեն անցել էր, երբ ժամանեցին Պերպերյան ամնավիճները.

- Կներես, բարեկամս, ճամփան շատ խճողած էր, այսօր ուրբաթ օր և իրիկվան ժամո՞ւն, և, և, Սանսեթ պողոտա, ան ալ՝ Հոլիվուդի մեջ,- առանց շունչ առնելու, իրար ետևից շարեց եվրոպական ցայտուն, պլազման կոստյումով, պերճաշուր արտաքինով իրավաբանն ու փաթաթվեց մեր Արամին.

- Ծո՞, աս ինչ արագ կանցնին տարիները, կարծես երեկ էր, որ Երևան էինք, անանկ չէ, Արամ:

- Այո, այո, շատ արագ են թշում օրերը, իսկ հիմա եկեք

մտնենք ներս, ժամանակ չկորցնենք, հետո շատ նյութ կունենանք զրուցելու:

Հազիվ էին մեր հյուրերը սրահ մտել, խոր լոռության մեջ, լիսամութ սրահում հնչեց Կոմիտասի գլուխ-գործոց «Կոռնկը»՝ մենակատար ջութակահարի մեղմ կատարմամբ:

Մերոնք, ի տես սրահի բոլոր այցելուների, այդպես կանգնած մնացին մինչ ավարտվեց երաժշտությունը:

Ճերմակ անձեռոցիկները ձախ ձեռքի դաստակին զցած երեք մատուցողներ տեղավորեցին մեր հյուրերին աղանդերներով գերծանրաբեռ լի սեղանի շուրջ:

Որևէ խոսք կամ արտահայտություն չեղավ անցածի վերաբերյալ, բոլորի համար կլլուելը լավագույն դեղամիջոցն էր...

Խնջույքն ու հայկական պարը թևածեցին մինչև առավոտ:

Այդ օրվանից հետո Արամը և Բյուզանդը դարձան մտերիմ բարեկամներ և երբեւ խոսք չեղավ նրանց միջև «Կոռնկի» մասին: Իսկ «Տուշպա» ռեսուրանում ամեն մի հայ, ամեն երեկո հարցնում էր.

- Կոռ նևկ, մեր աշխարհեն խաբրիկ մը չունի՞ս...

Վերափոխված  
Նոյեմբերի 23, 2019 թ.,  
Լու Անջելես

## ՀԱՅԱՍՏԱՆ, ԵՐԿԻՐ ԴՐԱԽԱՎԱՅՐ...

... Գնացքի միալար, արդեն հոգնեցուցիչ դդրդոցը չէր թողնում ի մի բերել մտքերը: Հիմա էլ՝ այս ժխորն ու իրարանցումը:

- Ի՞նչ է եղել,- մտովի հարցնում էր նա, - իհարկե, մտել ենք Թուրքիայի սահմանը, - քմծիծաղով հաստատում էր նա զրեթե բարձրաձայն ասված նախադասությունը:

Եվ իսկապես, Բեռլին-Ստամբուլ շոգեկառքը կանգնել էր Անտոռիայի կանգառներից մեկում և ժողովուրդը իրար հրմշտելով տեղավորվում էր ազատ խցիկներում և վագոնների միջանցքներում:

- Երանի որևէ մեկը չմտնի իմ խցիկը, - մտածում էր նա:

Գնացքը հազիվ էր սովել՝ շարժման ազդանշան տալով, երբ բացվեց խցիկի դուռն ու շեմին երևացին բավական լավ հազնված այր ու կին:

- Թույլ կտա ք տեղավորվել, պարոն, - հստակ գերմաներենով դիմեց խցիկ մտած երիտասարդը, վստահ շլինելով, թե դիմացը նստած մորուսավորը իրեն կհասկանա:

- Խնդրեմ, համեցեք, - նույնքան հստակ գերմաներենով պատասխանեց նա:

- Օ՛, հրաշալի է, Դուք խոս՞ւմ եք գերմաներեն, - իր արած «հայտնությունից» ոգևորված բացականչեց երիտասարդը:

- Այո, մի քիչ...

- Լս՞ո՞ւմ ես, Էղիտ, նա գերմաներեն է խոսում, հավանաբար քեզնից էլ լավ, թեև դու արդեն չորս տարի է, որ ապրում ես Գերմանիայում:

- Իբր դու էլ բան ասացիր, Հանս, զուցե նա գերմանացի է...

- Օ, ոչ, ի՞նչ ես ասում, մի՞թե չես տեսնում նրա սև ու խիս մորուսը, սև մազերը, նա անպայման արևելցի է:

- Ես հայ եմ, - շապասելով որ իրեն դիմեն, - ասաց մորուսավորը:

- Տեսա՞ր, անուշիլս, ես մարդկանց հեռվից եմ ճանաչում...

- Այո, հեռվից,- քմծիծաղով հաստատեց մորուսավորը՝ շխտակ նայելով երիտասարդին:

Նրա դառն քմծիծաղով ու փոքր-ի չ արհամարանքով ասածը չվրիպեց Հանսի հայացքից:

- Բայց Դուք, հարգելի պարոն, ի՞նչ իրավունքով եք արհամարանքով արտահայտում Ձեր ձեր թափանցիկ մտքերը զերման ժողովրդի մասին: Դուք ի՞նչ գիտեք մեր մասին և կամ ի՞նչ գիտեք, թե ես ով եմ:

- Գիտեմ, գիտեմ, երիտասարդ, Դուք մի բորբոքվեք, ես չե՞մ որ ոչինչ չասացի, պարզապես ուզեցի հասկացնել, որ դուք՝ եվրոպացիներդ, միայն հեռվից եք, որ գիտեք մեզ՝ հայերիս, իսկ մենք, թեև քանակով քիչ, բայց մեծ ազգ ենք և նույնքան ինքնուրույն, որքան դուք և ֆրանսիացիները, - այս ասելիս, նա հայացքը շրջեց ֆրանսիացի Էդիտի կողմը:

- Իսկ Դուք ինչ եք, մեզ մոտիկից գիտեք, - խոսակցությանը խառնվեց երիտասարդ տիկինը:

- Այո, գիտեմ և լավ գիտեմ, երկար տարիներ ուսանել եմ ձեր երկրներում, սովորել, ուսումնասիրել եմ ձեր մշակույթը: Գիտեմ Ձեր Էժեն Դելակրուային, Դերյուսիին, Դյուկային, և Ձեր՝ սիրելի պարոն, ինչպես էք Ձեր անունը, հա, Հանս, Ձեր Բախին, նրա անունն էլ է Հանս, Իոհաննես Բեթհովենին և իմ պրոֆեսոր, նշանավոր երաժշտագետ Շմիդտին, դուք գիտե՞ք նրան:

- Սպասեք, սպասեք, ես գլխի ընկա... Էդիտ, ես գրագ կզամ, նա այն պարոնն է, որ հայ երաժշտության մասին զեկուցումներով ելույթ ունեցավ Բեռլինում: Հիշո՞ւմ ես, բարեկամիդ՝ Ռուծեի տանը, թեյասեղանի շուրջ խոսակցություն բացվեց նրա մասին: Դեռ Ռուծեն էլ ոգևորված բացականչեց. «Այս խելազար հայը, միայնակ, մի ամրող ժողովուրդ ներկայացրեց մեզ»: Դուք մի նեղանաք այս խոսքերիս համար, - շրջվելով մորուսավորի կողմը՝ ասաց Հանսը և շարունակեց, - սա լավ մտքով է ասված, երանի Ձեզ նման խենթեր շատ լինեին մեր ներկա հասարակության մեջ:

- Այո, այո, ինչպե՞ս չէ, ես լավ եմ հիշում այդ օրը: Նույնիսկ ֆրանցը փորձեց ֆիլհարմոնի վրա վերհիշել իր լած հայկական մեղեղիներից մեկը,- նույն ոգևորությամբ շարունակեց եղիտը:

Մինչ այդ վայրկյանը լուր նստած մորուսավորը՝ այս անգամ բարի ժայխտով, դիմեց նրանց.

- Ուրեմն, ճանաչեցինք միմյանց և կարծում եմ այս երթուղին ավելի թեթև կանցնի:

- Այո, անկասկած,- տեղավորվելով մորուսավորի կողքին, վրա բերեց Հանսը:

- Միրելիս, ախր մենք չիմացանք այս պարոնի անունը, գուցե նա չէ, ում մասին խոսում ենք,- փոքր-ինչ կասկածանքով ասաց եղիտը:

- Նա՝ ե, նա,- չթողնելով կնոջը միտքը շարունակել, ընդհատեց մորուսավորը, - Ճիշտ եք կրահել, ես եմ, Կոմիտասը, իմ իսկական անունը Սողոմոն ե, Սողոմոն Սողոմոնյան: Կոմիտասը իմ հոգսոր անունն է: Ժամանակին, 13-րդ դարում, հայերը այդ անունով նշանավոր վարդապետ են ունեցել: Դա այն ժամանակ էր, երբ մեկ ուրիշ հայ ստեղծեց հայկական ձայնանիշերը, որ մենք «խազ» ենք ասում, դրանք ձեր իմացած երաժշտական նոտաներն են:

- Խա՞զ, խազե՞ր, հետաքրքիր ե, իսկ Դուք կարդո՞ւմ եք այդ նոտաները կամ՝ ինչպես Դուք եք ասում, խազերը, - զարմացած հայացրով պատասխանի սպասելով հարցրեց Հանսը:

- Փորձում եմ կարդալ, վերծանել դրանց գաղտնիքը, կարծում եմ, ճիշտ ուղու վրա եմ:

- Վստահ եմ, Դուք կհասնեք Ձեր նպատակին:

- Ինչի՞ց եք վստահ,- հարցրեց Կոմիտասը՝ որսալով եղիտի քաջալերից հայացքը:

- Վստահ եմ,- շարունակեց Հանսը, - Դուք, որ մեն-մենակ կարողացաք օտար ուսանողներից երգչախումբ կազմել և նրա միջոցով ներկայացնել Ձեր ազգին և Ձեր երաժշտությունը, խազերի բանալին գտնելը, կարծում եմ, շատ ավելի ոյուրին կլինի Ձեզ համար:

- Այդքան համոզված մի եղեք, բարեկամս: Խազերի բանալին գտնելը դյուրին գործ չէ: Խազերը օգտագործվել են հիմնականում եկեղեցական երաժշտության մեջ, որի պատճառով էլ դրանց ընթերցումը հասու է եղել միայն եկեղեցու քիչ թվով սպասավորների:

- Հա, մի բան հիշեցի, կարծեմ երգչախմբից բացի, Դուք ձեր ժողովրդի երաժշտությունը ներկայացրել եք նաև Ձեր երգեցողությամբ, և եթե չեմ սխալվում, ինչ-որ հետաքրքիր, ցողունի նման մի երաժշտական գործիքով: Ճի՞շտ է այս ամենը:

- Ճիշտ է,- գոհունակությամբ պատասխանեց Կոմիտասը:

- Իսկ ո՞ւր է ձեր այդ գործիքը, կարո՞ղ եք մեզ ցույց տալ,- խոսակցությանը խառնվեց Էղիտը:

- Ինչո՞ւ չէ, սիրով...

Կոմիտասը հագուստի ներքին գրպանից հանեց սրինգն ու մեկնեց Էղիտին:

- Ա՞յս է ամենը,- զարմացած հարցրեց Էղիտը,- միայն այս փոքրիկ ցողո՞նը, ի՞նչ է սրա անունը:

- Սրինգ, սրա տարբեր տեսակները կան. շվի, դուդուկ, զուտնա, բլուլ: Բոլորն ել ցողունից են և կամ ել ծիրանի ծառի փայտից: Դուք գիտե՞ք հայկական ծիրանը, ծիրանենին:

- Այո, այո, ես գիտեմ հայկական ծիրանը, այդ հրաշալի, համեղ միրգը, որի հայրենիքը Հայաստանն է, բայց եկեք վերադառնանք ձեր սրինգին, Դուք այն նվազել գիտե՞ք,- ասաց Հանսը:

- Այո, իհարկե, գիտեմ...

- Խնդրում ենք, մի որևէ բան նվազել մեզ համար,- այս անգամ Էղիտն էր:

Չսպասելով, որ նորից խնդրեն, Կոմիտասը սրինգը դրեց շուրթերին ու... ծայր առավ մեղեղին. Հո՛ լ արա, եզո՞ ջա՞ն, ախալքը, ջա՞ն...

Երիտասարդ գոյզը ակնապիշտ հայացքով հետևում էր Կոմիտասի նվազին: Ոգևորությունից և անհասկանալի զայրութից փայլատակող Կոմիտասի աշքերին դժվար էր նայելը:

Ավարտվեց մեղեղին: Մի պահ երեքն էլ լուր նայում էին միմյանց: Լոռությունը խզեց Կոմիտասը.

- Սա մեր գյուղացու երգն է և, զիտե՞ք, հետաքրքիր են այս մեղեղու բառերը: Կարծում եմ, հազիվ թե այլազգի շինական-գյուղացի կարողանա խոսել լծկան եզան հետ, խոսել մարդ-կային լեզվով, նրան դիմել որպես հարազատի, որպես եղբոր, նրա հետ քնի, վեր կենա, ինչպես վարդում է հայ շինականը: Այսպիսին է մեր ժողովուրդը՝ այն կամ նա, որ իր հացն է տալիս մարդուն, դառնում է նրա պաշտամունքի առարկան՝ լինի կենդանի կամ մարդ, կամ էլ երկրային որևէ իր:

- Իսկ ի՞նչ երկիր է ձեր այդ Հայաստանը, որոշ պատկերացում ունեմ իհարկե, կարդացել եմ, զիտեմ, որ դուք առաջին քրիստոնյա ազգն եք, և որ Նոյն է իջել ձեր ինչ-որ լեռան վրա, ինչպե՞ս էր այդ լեռան անունը, Արա... Ա-րա-մե... Արար...

- Ա-րա-րատ,- ամեն մեկ վանկը շեշտելով նրան ընդիատեց Կոմիտասը:

- Օ՛հ, այո, Ա-րա-րատ, Արարատ...

- Լեռ չէ, այլ՝ Երազ, պաշտամունք, իսկ Հայաստանը՝ դրախտավայր, ինչպես չափազանց բնորոշ ձևով արժևորել է Վանանդեցին, ունենք մի այդպիսի մտավորական, կուզեի՞ք լսել նրա «Հայաստան» բանաստեղծությունը, ես երգ եմ գրում այդ խոսքերի վրա:

- Այո, այո՛, միայն եթե կարելի է երգելով, չէ՞ որ Դուք իհանալի ձայն ունեք, մեզ համար բացառիկ առիթ է ընձեռնվել լսելու Ձեզ, Ձեր ձայնը,- Ժպտալով ասաց Էղիտը:

- Երգե՞լ, այստե՞ղ, վագոնն մմ, մի մոռանաք, որ մենք Թուրքիայում ենք, այս մարդիկ այնքան էլ չեն սիրում «Հայաստան» անունը:

- Խնդրում ենք, շատ ենք խնդրում, փոքր ձայնով, մեղմորեն,- փորձեց համոզել սիրունիկ Էղիտը:

- Դե լավ, որ այդքան խնդրում եք, միայն թե ավելի ամուր փակեք խցիկի դուտը:

Հանսը ստուգեց դուն փականքն ու՝ համոզվելով, որ ամեն ինչ ապահով է, աչքերն ուղղեց Կոմիտասին, հասկացնել տալով, որ կարող է սկսել:

Կոմիտասը՝ հուզված, ինքնամոռաց, աշխարհից վերացած, աչքերը կիսախուփ՝ սկսեց երգել.

- Դուք որևէ բան հասկացա՞ք,- առաջին քառյակը երգելուց հետո հարցրեց Կոմիտասը՝ իրեն ակնապիշ հայացքով նայող Հանսին:

Բառերը ոչ, իհարկե, բայց մենք զգացինք, հասկացանք դրանց վեհ, բարձր ոգին, կարծեմ մեկ էլ՝ «Հայաստանը», որ մեր իմացած «Արմենիան» է, այդպես չէ ...

- Այո, այո, ճիշտ եք հասկացել: Մնացյալ քառյակներում էլ անընդհատ շեշտվում է «Հայաստանը», մեղեդու մեջ ամենաբարձրը, ամենից բարձրը...

«Հայաստան» բառն արտասանելիս Կոմիտասի աչքերն արդեն թրջվել էին: Ամուսինները զգացին, որ որևէ միշտամուրժուն անտեղի է:

Նրանց անդորրը խանգարելու եկավ հաստամարմին թուրք ուղեկցողը, որի դուն բակոցից հասկացան, որ հասել են վերջին կանգառը:

Մի բան ասելու մղումից և կամ էլ ո՞վ գիտե, գուցե ներշնչված անցած պատմությամբ, երիտասարդ Հանսը ուղի կանգնեց ու դիմեց Կոմիտասին.

- Մենք ճանաչեցինք ձեր Հայաստանը, ճանաչեցինք ձեր պատմությամբ, Ձեր երգով ու նվազով, բանաստեղծությամբ և սիրեցինք ձեր երկիրը:

Ապրիլի 11, 1990թ.,  
Երևան

## ՈՐՍԿԱՆ ԱԽՊԵՐ

- Նինա, Երևան եմ գնում, պատրաստիր իրերս, հենց այսօր, երեկոյան:

- Ինչո՞ւ այդպես հանկարծակի, Արամ, ի՞նչ է պատահել:

- Հեռազիր է եկել Երևանից, հասկանո՞ւմ ես: Ինչպես գիտես, երկու տարի հետո, 1939 թվականին այստեղ՝ Մոսկվայում, տեղի է ունենալու հայ արվեստի և գրականության տասնօրյակ: Հայրենակիցներս ուզում են, որ մի ազգային բալետ հորինեմ այդ կապակցությամբ:

- Ե՛, դրա համար ի՞նչ կարիք կա Երևան մեկնել:

- Ինչպե՞ս թե, սիրելիս, ես վաղուց եմ կտրվել հայկական երաժշտությունից: Գրվելիք երաժշտությունը պիտի լինի զուտ հայկական, դրա համար անհրաժեշտ է, որ ես տեղում լսեմ մեր ժողովրդական երգիչներին ու գործիքային կատարողներին և հավանած երգ կամ պարեղանակ գրի առնեմ:

- Հիմա հասկացա, իրավունք ունես... դե, գնա, սիրելիս, հաջողություն:

...Երևանի «Բնուրանոցում մի սենյակ են առանձնացնում Արամ Խաչատրյանի համար, գտնում են նաև մի դաշնամուր, և կոպոզիտորն օրնիբուն իր մոտ է հրավիրում ժողովրդական և գուսանական-աշուլական երգի վարպետներին ու զրի առնում նրանց կատարած այս կամ այն երգն ու մեղեդին: Եվ, երբ նա ավարտած է համարում իր գործը Հայաստանում, մեկնելուց առաջ, վերջին օրը, հյուրանոցի նրա սենյակի դուռն է թակում մի երիտասարդ.

- Ես մի երգ եմ բերել Ձեզ համար, վարպետ,- ասում է նա հենց դրուերի արանքում:

- Տղա ջան, ես արդեն վերջացրել եմ իմ գրառումները և հսկայական նյութ ունեմ ձեռքիս տակ: Բայց, որ եկել ես,

երգիր, տեսնենք, թե դա ինչ երգ է, գուցե լսե՞լ եմ...

Փոքր ինչ շվարած, պատանին զրպանից հանեց մի դուդուկ ու...

- Հա, այդպես ուրեմն, Դուք դուդուկ նվազո՞ղ եք, երիտասարդ:

- Այո, Մաեստրո, փորձում եմ նվազել...

Սկզբում փոքր-ինչ անտարբեր հայացքով երիտասարդին նայող կոմպոզիտորը հետզհետե լարեց ուշադրությունն ու աշխատեց ոչ մի հնյուն բաց շթողնել: Երբ ավարտվեց կատարումը, կոմպոզիտորը ընդուստ վեր ելավ աթոռից ու սկսեց ինքնամոռաց վեր ու վար անել սենյակով, մեկ ու յուրովի բարձրածայնել.

- Ինչ հիանալի մեղեղի է, և ո՞վ է հեղինակը: Մեկ անգամ էլ նվազիր, երիտասարդ:

Երկրորդ կատարումից հետո, էլ ավելի տպավորված ու ազդված, կոմպոզիտորը դիմեց երիտասարդին.

- Որքան կարողացա հասկանալ, նվազածո՞ղ երգ պիտի լինի, ո՞ւմ երգն է, ո՞ւմ խոսքերն են:

- Այո, երգ է, կոմպոզիտոր, ես միայն անունը գիտեմ՝ «Որսկան ախալեր», բայց բառերը չգիտեմ, կարծում եմ Չարենցը կիմանա, քիչ առաջ նրան տեսա նախասրահում:

- Շուտ, շուտ գտիր նրան, ես ուզում եմ իմանալ այս երգի խոսքերը,- ասաց կոմպոզիտորը:

- Կարծում եմ նա հիմա ճաշարանում կլինի:

- Գնա, գնա կանչիր նրան և ասա, թե ինչի համար եմ կանչում:

Քիչ հետո, երիտասարդի հետ սենյակ է մտնում Չարենցը՝ փոքր-ինչ օրորվելով:

- Հա, ուրեմն շատ եք հավանել «Որսկան ախալեր», իհարկե, հավանելու երգ է... ես լավ գիտեմ այդ երգը, շուտով ես էլ եմ երգելու այ՝ այնտեղ, միայնակ,- ասաց բանաստեղծն ու ձեռքով անորոշ կողմ ցույց տալով՝ շարունակեց.

- Բառերն Խահիալյանինն են:

- Ո՞ւր է նա հիմա,- հարցրեց Խաչատրյանը:

- Ֆրանսիայում, Փարիզում:
- Ասա, Չարենց, ասա խնդրեմ այդ երգի բառերը, խնդրում եմ: Ինչի՞ մասին է, թեև դժվար չէ ենթադրել, որ տիսոր բովանդակություն ունի, այդպես չէ...
- Ճիշտ ես կռահել, միայն թե «տիսուր» այն բառը չէ, ավելի համապարփակ, համազգային տարողության արժեքի բառերով է հյուսված այդ բանաստեղծությունը: Դա մի ամբողջ ժողովրդի ողբերգությունն է՝ ամփոփված մի քանի քայլականոց բանաստեղծության մեջ: Այդ իմաստով էլ դա ոչ թե լոկ բանաստեղծություն է, այլ՝ պոեմ: Հայ ժողովրդի ամբողջ ողբերգությունն ասեմ, ճակատազիրն ասեմ, թե բախտը թերևս՝ ամփոփված է այդ բանաստեղծության մեջ: Եվ հետաքրքիրն այն է, որ «Որսկան ախայերը» ավելի շատ տարածված է որպես երգ, քան՝ բանաստեղծություն: Այստեղ արդեն հասհակյանի շափազանց գունեղ, հոգեթով, հոգի մաշող բառերն են, որ ինքնաստինքյան մեղեղի են ծնում, ինչպես նրա բազմաթիվ բանաստեղծությունները: Հապա լսիր.

*-Որսկան ախայեր, սարեն կուզաս,  
 Սարի մարալ կը փնտրես,  
 Ասա՝ յարա բ, դուն չը տեսա բ,  
 Իմ մարալիս, իմ բալիս:*

- Որքան հրաշալի է,- բազմոցի վրայից վեր է թռչում Խաչատրյանը:

- Սպասիր, սպասիր, Արամ, դու շարունակությունը լսիր: Ինչպես զլիսի ընկար՝ կորած որդու մայրն է որսորդին հարցնողը, ապա լսիր շարունակությունը.

*Դարդի ձեռքեն սարերն ընկավ,  
 Իմ արես, իմ բալես,  
 Գլուխն առավ, քարերն ընկավ,  
 Իմ ծաղիկս, իմ բալես:*

- Չարենց, ասում ես սրանք Իսահակյանի՝ բառերն են, այո՞վ, կարծես թե ժողովրդական ֆոլկլորից (բանահյուսություն) են վերցված, իը՞ , ի՞նչ ես ասում, դե բացատրիր, բարեկամս...

- Լավ էլ հասկացար, Արամ, ապրես: Այսքան տարի ապրում ես օտար, հայկական միջավայրից հեռու, բայց կարողանում ես զանազանել ժողովրդականն ու մասնագիտականը: Բայց արի ու տես, որ այս բանաստեղծությունը ժողովրդական չէ: Իսահակյանն է բառերի հեղինակը: Հենց իր մեծությունն էլ նրանում է, որ նա կարողացել է գեղարվեստական բարձր վարպետությամբ վերաբռնդրել ժողովրդական բանն ու խոսքը, նրա համն ու հոտը, նրա ոգին, և, ասեմ քեզ, քչերը գիտեն, որ «Որսկան ախաղեր» երգի բառերը պատկանում են Իսահակյանի գրչին: Այդ է պատճառը, որ հայ զյուղացին մշտ էլ իրենն է համարել «Որսկան ախաղերը»՝ «ըշտը մերը» ասելով ու չի կարողացել հաշտվել այն մտքի հետ, թե դրա հեղինակը լայնեզր զյսարկ դրած «ուսումնական եվրոպացի» մի երիտասարդ է: Դու դեռ շարունակությունը լսիր, Արամ, տես, թե ինչպես է զարգանում ողբերգությունը: Այժմ էլ որսորդն է պատախանում որդեկորուս մոր հարցումին.

*Տեսա, քուրիկ, նկաշուն բալեղ,  
Կարմիր-կանաչ է կապեր,  
Միրած յարի համրույրի տեղ՝  
Սրտին վարդեր են ծլեր:*

- Հիմա դարձյալ մայրն է հարցնողը, նա չըմբռնեց որսորդի ասածը, նրան հետաքրքրողը այլ բան է, հապա լսի՞ ր, Արամ.

*Որսկան ախաղեր, ասա յարաք,  
Ո՞վ է հարսը իմ բալիս,  
Ո՞վ է զրկում չոր զյուիսը  
Իմ մարալիս, իմ բալիս:*

- Պարզապես հոյակապ է, Չարենց, կարծում եմ մոր հարցումին պատասխան պիտի լինի, այդպես չէ,- հարցնում է խոնավացած աշքերով կոմպոզիտորը:

- Այն էլ ինչպէ՞ս, իսկական ողբերգությունը հիմա է սկսվում, լսրի...

- Ոչ, ոչ Չարենց, սպասիր, սպասիր, խնդրում եմ, մի արտասանիր, այլ երգիր, երգիր, բարեկամս, չէ՞ որ դու լավ ձայն ունես, ես դա գիտեմ, իսկ դու՝ երիտասարդ, նվազիր Չարենցի հետ,- ասում է կոմպոզիտորը՝ խոսքն ուղղելով մինչ այդ պահը սենյակի անկյունում կուշ եկած, ու ոգևորությունից քարացած երաժիշտ-դուդուկահարին:

- Էղ չեղավ, Արամ, ինձնից ի՞նչ երգող, քթիս տակ մեկ-մեկ դնդնացնում եմ էլի,- ասում է Չարենցը:

- Ոչ, ոչ, միայն երգով, ես գիտեմ, որ դու լավ ես երգում, իհարկե, երբ տրամադրությունդ մի քիչ բարձր է լինում, ինչպես ասենք՝ այսօր...

- Չէ, չէ, բարեկամս, այսօր քո ասած տրամադրության մեջ չեմ, մի տեսակ ուրիշ եմ, ինչ որ մի բանի եմ սպասում, ինքս էլ չգիտեմ, թե ինչի... այնուամենայնիվ կարելի է փորձել երգել, եթե այդքան խնդրում ես, Արամ, միայն թե դու, երիտասարդ,- դիմելով դուդուկահարին՝ շարունակում է ասելիքը.

- Իշիր ներքե, ճաշարան, դե դու գիտես էլի, ասա, թող մի քիչ ուտել-խմելու բան-ման տան, ասա, որ ես եմ խնդրողը, նրանք գիտեն, թե ինչ են տալու, ասա նաև, որ համերգի եմ պատրաստվում...

Քիչ անց, սկսուելով վրա արվեստագիտորեն շարված աղանդերներ ու խմիչք են բերում Խաչատրյանի սենյակը: Չարենցը մեկ ումպով խմում է դուդուկահարի լցրած լի բաժակը, և առանց հրավերի սպասելու, սկսում է շարունակել կիսատ թողած երգը: Դուդուկահարը արագորեն հանում է գործիքը, դնում շրթներին ու փորձում է գտնել երգի տոնայնությունը և երգի կեսից միանում է «երգիչ» Չարենցին:

*Տեսա, քուրիկ, դարդուտ բալեղ,  
Քարն է դրեր բարձի տեղ,  
Անուշ քնով տաք զնդակն է  
Կրծքում զրկեր յարի տեղ:*

... Չարենցը չի կարողանում շարունակել երգը... աչքերից հնուում են արցունքները, փորձ անզամ չի անում թաշկինակ հանել զրպանից: Նրա միտքն այլ տեղ է, առավոտյան կանչված է հարցաքննության...

Կոմպոզիտորը պապանձվել էր կարծես, նրա աչքերն են թրջվել:

- Դեռ մի քառյակ էլ կա,- արցունքների միջից հազիվ կարողանում է ասել բանաստեղծը:

Արդեն ոչ առաջվա նման երկշոտ, վստահորեն, ձայնը փոքրինչ բարձրացնելով, շարունակում է երգել բանաստեղծը.

*Սարի մարմանդ հովն է շոյում,  
Ճակտի փունջը մարալիդ,  
Ծաղիկներն են վրան սգում,  
Աղիզ բալիդ, խեղճ լալիդ:*

... Ավարտվում է երգը: Ոչ մի ձայն, ոչ մի շնորհ: Դադարել են նույնիսկ ներքին հարկից եկող թերևն երաժշտության հնչյունները: Լոռություն է ամենուր, լոռություն՝ ողջ «Բնտուրիստ» հյուրանոցում: Առանց որևէ խոսք ասելու, առանց հրաժեշտի, Չարենցը մոտենում է դրանն ու՝ մեղավոր ժպիտը դեմքին, կամացուկ դուրս է զալիս սենյակից:

- Երիտասարդ, ես այդպէս ել չիմացա քո անունը,- բավական երկար լոռությունից հետո ասում է շփոթված նաշատրյանը՝ դիմելով դուդուկահարին:

- Լևոն է անունս, Մահսորո, Լևոն Մադոյան:

- Լևոն, լավ անուն ունես, Երիտասարդ, ընդհանրապէս մեծ

անուն է Լսոնք...Լսոն Շանթ, Լսոն Զոհրապյան... Հիմա ինձ լսիր, բարեկամս: Դու մեծ, շատ մեծ բան արեցիր այսօր: Ես լսեցի քո նվազը: Վստահ եմ լավ երաժիշտ ես դառնալու: Դու նուրբ հոգի ունես, գործիքի հրաշալի տեմբր, և, որ ամենակարևորն է, դու այսօր ինձ ներկայացրիր ժողովրդական երաժշտության խսկական մի մարգարիտ: Բայց, ցավում եմ, որ այն չեմ կարող օգտագործել իմ «Երջանկություն» բալետում («Գայանե»): Դա մի ուրախ բալետ է լինելու, որի մեջ արտացոլվելու է ժողովրդական ցնծություն և տոնախմբություն: Իսկ քո այդ մեղեղին՝ «Որսկան ախաղերը», ողբերգություն է, մի ժողովրդի ողբերգություն: Բայց ես երբեմ կօգտագործեմ այն, այդ սքանչելի մեղեղին:

\*\*\*

- Արամ, դու զբաղված եիր, ես չուզեցի անհանգստացնել քեզ: Հիմա կարող եմ ասել: Քիչ առաջ, վերջին լուրերում հայտնեցին, որ ձերոնք՝ հայրենակիցներդ, Հայկական Թամանյան զորագունդը, ճեղքել է թշնամու պաշարումը և մոտենում է Բեղլինի մատուցներին:

- Իսկապէ՞ս, Նինա, սիրելիս, ես այդպես էլ գիտեի, ուրիշ կերպ չեր կարող լինել: Ես միշտ էլ հավատացել եմ մերոնց ուժին ու կարողությանը: Արդեն կասկած չի հարուցում պատերազմի ելքը: Ես պիտի անմահացնեմ իմ ժողովրդին այս պատերազմում, և, ընդհարապես, շատ բան կորցրած իմ հայրենակիցներին: Զիշո՞ւմ ես, Նինա, սիրելիս, ես քեզ պատմել եմ տասը տարի առաջ Երևանում պատահած դեպքի մասին, կապված «Որսկան ախաղեր» ժողովրդական երգի հետ:

- Իհարկե, իհշում եմ, դու երկար աշխատեցիր այդ երգի վրա, բայց ինչպես սպասվում եր, չկարողացար այն օգտագործել բալետում:

- Այժմ եկել է առիթը, Նինա, հասկանո՞ւմ ես: Ես պիտի նոր կյանք տամ այդ երգին, ճիշտ է, դժբախտաբար Չարենցը չկա, բայց կա Չարենց ծնող ժողովուրդը, կա այն դուրուկահար

երիտասարդը, որը, ինչպես իմացա, Հայաստանի նշանավոր երաժիշտներից է, ես նրան ել եմ խոստացել նոր կյանքի կոչել «Որսկան ախաղերը»:

... Պատերազմի ավարտից մի քանի ամիս հետո, աշխարհը հիացավ Արամ Խաչատրյանի Երկրորդ սիմֆոնիայով, որի երրորդ մասում կյանքի եր կոչվել Իսահակյանի, Լևոնի և Չարենցի երգը՝ «Որսկան ախաղերը», դասականի ճանապարհով դեպի հավերժություն գնացող հայ ժողովրդական այդ պարզ ու անպաճույծ երգը:

Վերափոխված  
Շեկտեմբեր, 1993 թ.,  
Հոս Անջելես

## ԳԱՑԵՇՔ, ՏԵՍԵՇՔ...

...Փոքր էի, շատ փոքր: Պատերազմ էր: Ամենուր սով, աղքատություն: Արարկիրի փոքրաթիվ տղամարդկանցից էր պրն. Շահպազը, ում, զգիտես որտեղից, մեր ականջներում նստած «Շափիս» անունով էինք կանչում: Այդ արդեն հետո էր, 1946 թվականին, երբ հայրենադարձ «ախապարներից» սովորեցինք, որ «Շափիս» թուրքերն է և նշանակում է զլիարկ:

Երեխա չուներ Շափիս: Չեր կ ունեցել, ընկեր էր փնտրում մեր քաղում և, որովհետև իր տարիքին համապատասխան մտերիմ ընկեր չկար, չուներ, ճարահատ, երեխաների հետ էր անցկացնում ազատ ժամերը:

Հիանալի պատմող էր Շափիս: Երևում էր, որ կարդացած և գաղափարի մարդ է, մի քանի լեզու գիտեր, թեև, ինչպես հպարտանում էր ինքը՝ ամեն անզամ մեզ պատմելիս, եղել էր Պոլսի ինչ-որ մի մեծահարուստի տան խոհարարը: Անշուշտ մեր խելքը բան չեր կտրում, թե ինչ ասել է խոհարար լինել, խոհարարի մասնագիտություն: Այդ հետո էր, որ մենք պիտի իմանայինք, թե ինչ ասել է խոհարար և որ, խոհարարությունն ել է մասնագիտություն, և ի նշ մասնագիտություն...

Թուրքիայում հիմնված Հանրապետության օրերին, մեր խոհարար Շափիսային հաջողվում է մի կերպ ընկնել Ֆրանսիա, որտեղ գտնում է սիրունիկ Վարդուհուն ու ամուսնանում:

Ինչպես շատ ֆրանսահայեր, նա էլ մերոնց նման, 1936 թվականին ներգաղթում է Հայաստան: Մեր հարևանն էր Շափիս: Լավ այզի ուներ՝ պտղատու ծառերով լի: Սիրում էր մշակել, մրգեր հասցնել: Դե, մենք էլ «համտեսում» էինք այդ մրգերը: Թաղի բոլոր երեխաների աչքը Շափիսայի հայտնի «շալախ» տեսակի ծիրանի ծառերի վրա էր:

Սուրբ ընկնելուն պես թոշում էինք Շափիսայի ծառերի վրա և, առանց այն էլ քաղցր, աննման ծիրանը ավելի քաղցր էր թվում մեզ, որովհետև մեր «վաստակածն» էր:

Հաջորդ օրը մքնած էր լինում Շափիսան: Սակայն ո՞ր մեկին կարող էր խոսք հասկացնել: Բոլորս էլ անոթի, սոված, աշխատում էինք մի բան լցնել մեր դատարկ ստամոքսը:

Շափիսան երբեք աչքի չէր ընկնում առատաձեռնությամբ: Այդ մենք էինք հաճախ թրև գալիս նրա տան շուրջը՝ որևէ ուտելիք ստանալու ակնկալությամբ, բայց ապարդյուն:

Երջանիկ ամուսինների խոհանոցից հաճախ էր բուրում ախորժաբեր կերակուրների հոտը, և մենք առիթ էինք փնտրում մտնելու Շափիսայի տունը՝ հուսալով, թե մի որևէ ուտելիք կստանանք:

Ոչ շատ հաճախ, երբեմն-երբեմն, ամուսնուց զադոնի, նրանից ավելի բարի տիկին Վարդուհին, արագությամբ մեր գրպաններն էր խոթում հացի մի կտոր կամ նման մի բան: Պատահում էր, որ նա «քոնվում էր գողության մեջ»՝ մեզ ուտելիք տալու պահին հայտնվում էր ամուսինը:

Եվ դրանից հետո պայթում էր «պատերազմը»: Մենք դրսում, պատի տակ, ականջ էինք դնում ու լսում, թե ինչպես էր ամուսինը լուտանքներ բափում կնոջ զլիսին, մեզ՝ անոթի, մերկ ու տկլոր երեխաներիս, հաց տալու համար:

Դեպքին հաջորդող օրերին ավելի մքնած էր լինում առանց այն էլ մքնած ու խնձոր Շափիսան:

Չար լեզուներն ասում էին, որ թեև կծիծի, բայց շատ փող ուներ Շափիսան: Թե ո՞րտեղից, ի՞նչ ճանապարհով էր նա դրամ կուտակել՝ հայտնի չէր ոչ ոքի: Գիտեինք, որ ժամանակ առ ժամանակ աշխատում էր ինչ-որ մի տեղ, հետո դուրս էր զալիս՝ ուրիշ տեղ աշխատելու համար: Նրան նույնիսկ հաջողվեց դառնալ մեր՝ Արարկիրի նորաբաց ու միակ գրախանութիւ վարիչն ու ավագ վաճառողը, բայց որոշ ժամանակ անց, այնտեղից էլ դուրս արին: Ասում էին «փող է կերել»: Ինչ որ է, երևի «կերել» էր, որովհետև դա նրա վերջին աշխատանքն էր:

Դրանից հետո, հաջորդող տարիներին ոչ ոք չտեսավ Շափիսային աշխատելիս:

Մի մարդկային թույլ կոռմ ուներ Շափիսան: Դա էլ երգն էր, հայկական երգը: Նրա ամենասիրածը «Գացե՛ք, տեսէ՛ք» երգն

էր, որ միշտ կարելի էր լսել նրանից, մանավանդ, երբ բարձր էր լինում տրամադրությունը:

Մենք ել, իմանալով նրա այդ թուլությունը՝ որսալով պահը, թախանձագին խնդրում էինք նրան կատարել այդ երգը, մանավանդ, զիտեինք, որ նա այդ վայրկյաններին էր փոքր-ինչ առատաձեռն դառնում:

- Շահպազ պապիկ, Շահպազ պապիկ, ի՞նչ կլինի երգեր էլի «Գացե՛ք, տեսէ՛ք», - խնդրում էինք մենք՝ աշքներս տնկած խոհանոցի կողմը, որտեղից ելումուտ էր անում տիկին Վարդուհին:

Վերջինս լավ զիտեր, եթե երգեր ամուսինը, ուրեմն ինքը համարձակություն կունենար ամեն երեխայի ուտելու բան տալ:

Եվ ահա տեղի տալով մեր թախանձալից խնդրանքին՝ երգում էր մեր Շահպազ պապիկը.

Գացե՛ք, տեսէ՛ք, ո՞վ ա կերել զէծ,  
Գացինք տեսանք զէն ա կերել զէծ...

Եվ այսպես, շուտասելուկի նման, իրար էին հաջորդում զայլը, այծը, մուկը և կենդանական աշխարհի մեզ ծանոթ ու անծանոթ կենդանիները, որոնք մեզ «մաղթում» էին՝ «Զեզ Բարեկենդան, մեզ՝ բարի Զատիկ»:

Պատահում էր, որ մեր ոգևորությունից էլ ավելի ոգևորված Շափիսան նույն երգը երգում էր երկու-երեք անգամ: Մենք պայթում էինք ծիծաղից, ցատկուում, հրճվում, որ ահա, ուր որ է կենդանիներն իրար կուտեն և տիկին Վարդուհին մեզ կմոտենա էլ ավելի համարձակ, ու մի-մի նվեր կտա բոլորիս:

- Այսօրվա համար բավական է,- ասում էր Շափիսան՝ գողունի հայացքով հետևելով կնոջը, գուշակելու համար թե ինչ նվերներ է նա բաժանում մեզ:

\*\*\*

... Այսպես գլորվեցին տարիները և եկավ 1947 թվականը:

Արդեն լուրեր էին պտտվում դրամափոխության մասին: Մեր Շափիսային օրերով հնարավոր չեր տեսնել: Մտահոգ տեսքով մեկ-մեկ երևում էր ու մեկ էլ կորչում՝ զգիտեինք թե ուր:

Եկավ և շարաբաստիկ դրամափոխության օրը:

Տասը մեկի հարաբերությամբ, սահմանափակ օրերի ընթացքում, սահմանափակ գումարով, կառավարությունը սկսել էր մարդկանց խնայողությունները փոշու վերածել:

Համընդիանուր խառնաշփոր վիճակ էր ամենուր: Պատերազմի սուլ ու դժվարին պայմաններում շատերն անազնիվ ճանապարհով դրամ էին կուտակել: Խելամիտ ձևով իրականացվող պետական այս միջոցառումը կործանում էր նրանց համար: Մեզ նմանների համար միննույնն էր. մենք և մեզ նման միլիոնավոր ընտանիքներ դրամ չունեին և ծայր-ծայրին հազիվ էին հասցնում:

Այդ օրերին, զգիտես ինչ հիվանդությամբ, անկողին ընկավ մեր Շափիսան: Դեմքը մեռելի գույն էր ստացել, աչքերը փոս էին ընկել, ձայնը քաշվել էր, ել ո՞վ կհանդգներ նրան առաջարկել երգելու «Գացեք, տեսէք» երգը:

Ժողովրդի մեջ սկսեցին եղած շշուկներն աշխուժանալ ու շատերն արդեն բարձրաձայն պնդում էին, թե Շափիսայի «հիվանդությունը» դրամափոխության արդյունք է: Ասում էին, որ լավ է, որ չի գժվել, որովհետև հսկայական դրամ է ունեցել, իսկ հիմա, տասը մեկի փոխհարաբերության պատճառով սնանկացել է ու հիվանդացել:

Ասում էին, բայց ոչ ոք զգիտեր նրա դրամ ունենալը, և ոչ էլ տեսել էր նրա հազարները:

Երկնային գորությամբ էր կամ էլ անհայտ ուժի մղումով, որ դրամափոխությունից հետո մեր Շափիսան փոխվել, ուրիշ մարդ էր դարձել: Մի քանի ամիս անկողնում պառկելուց հետո, արդեն ոչ նախկին ավյունով, ոտքի ելավ նա: Դեմքին ժայիտ էր ու բարություն: Չքացել էին կարծես նրա խստադեմ հայացքն ու սուր դիտողականությունը: Կարծես միանգամայն անտարբեր շրջապատի նկատմամբ, կամաց-կամաց նրա կյանքը մտավ հունի մեջ:

Արդեն ինքն էր մեզ այզի կամ խոհանոց կանչում՝ որևէ բանով հյուրասիրելու համար: Չէինք հավատում մեր տեսածին: Մենք նրա կողմից նման բարության վարժված չէինք և այդ ամենը թեև հաճելի, բայց խորթ էր մեզ համար:

Եվ, որքան կ զարմանալի, առանց մեր խնդրանքի, Շափիսան ավելի հաճախ էր երգում մեր մանկության «Գացե՞ք, տեսե՞ք» երգը: Պակասել էր եռանդը, ճիշտ է, բայց նոր երանգ էր ստացել այն: Մենք կ առաջանական չէինք հրձկում, ծիծառում, ուշադիր լսում էինք անզիր արած երգը, թախծում աներևույթ, բայց մեզ համար շատ հասկանալի պատճառով, և՝ Շափիսայի ու իր կնոջ բազմաթիվ խնդրանքներից հետո միայն, վերցնում էինք մեզ պարզված ուտելիքը և հեռանում նրանց տնից:

Դրամափոխության օրերից մի քանի տարի անց, մեր փողոցում լուր տարածվեց, թե աղբահավաքները փողոցի անկյունում դրված մետաղյա խոշոր արկդի միջից հայտնաբերել են նախկին դրամով լի մի խոշոր տոպրակ:

Բոլորը դարձյալ սկսեցին հոլովել մեզ համար սիրելի դարձած պրն. Շահպազի անունը: Սուտ ու մուտ պատճառներով մեր հարևանները օրը մի քանի անգամ ելումուտ էին անում Շափիսայենց տուն՝ մի նորություն իմանալու հույսով, բայց նրանց բոլոր ճիզերն ապարդյուն էին անցնում:

Գտնված դրամի մասին եղած զրույցների ընթացքում քարլություն էր պահում պրն. Շահպազը, իսկ մեզ՝ երեխաներիս, խորհրդավոր ժպիտով կկոցում էր աչքերը:

Գտնված դրամի մասին հարցուվորձ անգամ չեղավ տեղի ուստիկանության կողմից, ո՞ւմ էր պետք արդեն պարզ թղթի գին անգամ չունեցող այդ դրամը, որի տերն այդքան երկար ժամանակ պահել էր, հավանաբար այն ակնկալությամբ, թե գուցե օրերից մի օր կվերականգնվի այդ հին դրամի արժեքը:

Սոռացվեց թե՝ դրամը, թե՝ դրա ենթադրյալ տերը՝ մեր սիրելի Շափիսան:

Անցան դժվարին տարիները: Եկավ հաջորդ դրամափոխության ժամանակը: Այս անգամ դրամով լի տոպրակ չգտնվեց մեր փողոցի աղբարկդում: Մեր սիրելի Շափիսան հիվանդ էր:

Մենք՝ արդեն երիտասարդներ, այցի էինք գնում հիվանդին և  
որպես հյուր անուշ անում մեզ հրամցված սուրճն ու միրզը:  
Էլի ու կի էինք խնդրում նրան երգել մեր մանկության  
«Գացե՛ք, տեսե՛ք» երզը: Պատահում էր, որ երգում էր, այս  
անգամ արդեն թախծոտ, լալազին: Կատակ-երզն արդեն  
անցած տարիների հուշ էր, քաղցր հուշ, որ նա իր հետ բերել  
էր Անաստովիայի ու վ գիտի ո ր զյուրից կամ զավարից:

Տարիներ անց այցի գնացինք այն ծերանոցը, որտեղ իրենց  
կյանքի վերջալույսն էին ապրում մեր սիրելի Շափիսան ու  
տիկին Վարդուհին:

Երկուսն էլ չկային...

Մարտ 1988 թ.,  
Լու Անջելես

## ՎԵՐՋԻՆ ՀԵքԻԱԹԸ

... Հազիվ լսելի, հարևան սենյակից նրան էին հասնում հարազատների և բարեկամների միջև տեղի ունեցող գրույցի արձագանգները:

- Խեղճ մարդ, վերջին փափազին չկրցավ հասնիլ,- ասում էր մեկը:

- Գոնե երկար ապրեցավ,- ավելացնում էր մյուսը:

- Ապրիլն ի՞նչ, ճանրմ, մարդ իր հողին չարժանանալե ետք, ի՞նչ արժեք ունի անոր երկար ապրիլը,- շարունակում էր երրորդը:

Եվ այսպես, մեկը մյուսի ետևից նրա կյանքի տարեգրությունն էին ամփոփ ձեռվ մեկնաբանում հարազատները, իսկ ինքը՝ անկողնում պառկած, լսում էր այդ ամբողջն ու ծանրութերև անում, մեկ ընդունում, մեկ էլ մերժում էր այս կամ այն ասված միտքը:

Իր սրտից խոսող ամենաճշմարիտ ելույթը առաջին արտահայտվողինն էր՝ Ճիշտ էր պարոնը,- ասաց ինքնիրեն,- ես իս վերջին փափազին չհասա, ես անտեր հիվանդությունն ինձ անկողնում զամեց ու ես ստիպված եմ հաշտվել իրականության հետ:

Եվ այսպես, տարբեր զգացումների արդյունքում հիվանդի դեմքը մեկ ջղաձգվում, մեկ էլ հարթվում էր: Թեթև, սահանցիկ ժայիտն ավելի էր խոշորացնում շրթունքների անկյունների ծալքերը և աշքերից հոսում էր արտասուրք, իջնում երեսնիվայր՝ հաճելի տարություն հաղորդելով սառած դեմքին:

Վարպետ Անդրանիկը գիտեր, որ սա իր վերջին գիշերն է, գիտեր որ, ահա ուր որ է հրաժեշտ կտա կյանքին, գիտեր, որ հարևան սենյակում հավաքվածներն իր մահվանն են սպասում, որպեսզի անհրաժեշտ կարգադրություններն անեն՝ իրեն հանդիսավոր ձեռվ հողին հանձնելու համար:

Վարպետը նույնիսկ կոահում էր, թե որ գերեզմանատանն է

հանգելու իր տարապած ու տանջված մարմինը: Գիտեր այդ ամենն ու հանգիստ էր: Իրեն անհանգստացնողը միայն այն էր, որ թաղվելու էր օտար հողում:

Այս մտածումը, որ իշխող էր մնացյալ խորհրդածությունների մեջ, երկար տարիներ է, որ մաշում էր նրա հոգին, նոյնիսկ առույգ, գործունյա եղած ժամանակ: Ու հիմա, փաստի առջև էր կանգնած:

- Ի՞նչ արած, մտածում էր վարպետ Անդրանիկը, - սա եւ իմ բախտն է...

Հարևան սենյակի խոսակցություններն սկսեցին ավելի լսելի դառնալ և Անդրանիկը ջանաց կարելույն լարել լսողությունը, որի արդյունքում կարողացավ լսել հետևյալ պարբերությունները.

- Ճանըմ, վազ անցիր, ատանկ բաներ մի խորհիր, Անդրանիկը խելացի մարդ եղած է միշտ: Ան ժամանակին կարգադրած կը լա ժառանգության խնդիրը և, վստահ եմ, բոլոր անդամներն ալ գոհ կմնան:

- Խոսեք, խոսեք, - ինքն իրեն համարյա շշուկով ասաց վարպետը, - մի՞թե դուք և հազարավոր այլ հայրենակիցներ իմ բախտին չեք արժանանալու...

\*\*\*

Հարևան սենյակում կամաց-կամաց սկսեցին մարել ձայները, ուրեմն՝ հարազատները զնում էին իրենց տները: Կնշանակի, նրանք «հույս» չունեին, որ ինքը կմեռնի այդ գիշեր:

Վարպետ Անդրանիկը մնաց իր խորհրդածությունների հետ մեն-մենակ:

Նրա աշքերի առջևով անցնում էին իր պատանեկության և երիտասարդական տարիները: Հիշեց հարևանի աղջկան՝ գեղեցկուիի Լիլիթին, ում հետ «քարկտիկ» էր խաղում, տղաներն էլ ծիծառում էին իր վրա, ասելով թե դա աղջկա խաղ է, աղջկա զբաղմունք: Ի՞նչ իմանային նրանք, որ պատանեկան սերն էր նրան դրդում Լիլիթի հետ նստել գորգին ու ծուռումուտ պստիկ քարերը իրել ձախ ձեռքի երկու մատների արանքով:

Խաչոն էլ միշտ խաղում էր իր հոգու հետ, ասելով, թե տղամարդու խաղը «լախտին» է, այն, որ տղաները գոտիներով դադում են միմյանց:

- Որտե՞ղ է արդյոք Լիլիթը, ո՞ղջ է, թե մեռած,- մտածում էր վարպետ Անդրանիկը:

Եվ այսպես, շարժանկարի ժապավենի նման, մեկը մյուսի ետևից նրա աշքերի առջևով սահում էր ողջ կյանքը, հիշում էր սիրելի, անմոռանալի դեմքեր ու դեպքեր:

Հիշողություններով արբեցած վարպետն այն է, փորձում էր քնել, գուցե և վերջին քնով, երբ սենյակի դուռը անձայն բացվեց ու ադրտ լույսի տակ երեաց Անդրանիկի թոռնիկը՝ Արմինեն, ով հուշիկ քայլերով մոտեցավ իրեն, ստուգելու համար՝ քնա՞ծ է պապիկը, թե՝ արթուն: Քնած ձևացրեց իրեն ծերուկը, բայց տեսնելով, որ թոռնիկն ուզում է գնալ, մեկ վայրկյանում պայծառացած ուղեղը հուշեց նրան իր մոտ կանչել Արմինեին:

- Այդ դո՞ւ ես, Արմինե, աղջիկս, մոտ արի,- դիմեց նա թոռանք, ով պատրաստվում էր դուրս գալ սենյակից, - Հիշո՞ւմ ես, աղջիկս, երբ դու ավելի փոքր էիր, զրեթե ամեն զիշեր ես քեզ հերիաթներ էի պատմում: Այսօր իմ հերիաթն եմ պատմելու քեզ, երևի վերջին անգամ և սա կլինի պատմածս հերիաթներից ամենալավը:

Առանց մի խոսք ասելու Արմինեն տեղավորվեց պապի անկողնու վրա և՝ համակ ուշադրություն դարձած, սկսեց լսել պապին:

- Արմինե, աղջիկս, դու զիտես չե՞ այս ժամացույցը, ավելի ճիշտ զարթուցիչը, ահա այն, նայիր: Եվ եթե դու սեղմես ահա այս կոճակը՝ նրանից դուրս կգան ծիծեռնակներ, հա, հա՛, հավատա, զիտե՞ս, դրանք այն ծիծեռնակներն են, որոնք ապրում են Հայաստանում: Տարփա ցուրտ եղանակներին չվում են տաք երկրներ, իսկ հետո, զարնանք վերադառնում են իրենց հայրենի բույնը:

- Նայիր, աղջիկս, ահա սեղմում եմ կոճակը... մեկ, երկու, երեք... տե՞ս, դուրս եկավ առաջին ծիծեռնակը, մայր թռչունը, նայիր, նայիր... գալիս են նաև մյուսները, հիմա նրանք

կպարեն, միասին, համերաշխ... Օ՛հ, այս ի՞նչ է... ո՞ւր են  
ուզում թոշել նրանք, մի՛ թռղնիր... ա՛հ, այդպէ ս, այդպէ ս,  
ապրես աղջիկս, ավելի լավ է խնդրես նրանց մնալ... խնդրիր  
նրանց, խնդրի թ հենց իրենց երգով, դու գիտես չէ այդ երգը.

*Ծիծեռնակ, ծիծեռնակ,  
Դու զարնան սիրուն թոշնակ,  
Դեպի ո ւր, ինձ ասա,  
Թոշում ես այդպէս արագ:*

- Նայի՛ թ... կանգնեցին աղջիկս, նայի՛ թ... լսում են, տես՝ քա-  
րացել են կարծես... Այս ի՞նչ է, Արմինե... բռնիր այդ մեկին,  
ուզում է փախչել... մի՛ թռղնիր, խնդրում եմ, խնդրում...  
բայց, բայց... սպասիր, սպասիր... բաց թռող նրան աղջիկս...  
թռ դ, թռղ... տես ս, տես ս... կանգնեց, սպասում է մեր խոսքին.

*Ա՛յս, թռի՛ թ ծիծեռնակ,  
Ծնած տեղս՝ Աշտարակ,  
Անդ շինիր քո բույնը.  
Հայրենի կտուրի տակ:*

- Ա՛հ... հոգնեցի աղջիկս... թռող քնեմ... ցուրտ է, ծածկիր  
ուսերս, բայց... բայց... նայի՛ թ, նայիր դու սրան... կանգնել՝  
նայում է աշքերիս, ի՞նչ է ուզում, հարցրու իրեն... դու գիտես ս  
նրանց լեզուն... հա... այս, հասկացա... լուր է ուզում տանել  
մերոնց... ասա, ասա դու նրան.

*Անդ հեռու ալևոր,  
Հայր ունիս սզավոր,  
Որ միակ իր որդուն,  
Սպասում է օրե-օր:*

- Այս ի՞նչ է, Արմինե, չի լսում քեզ... դու ցավեցրիր նրան...  
չհամարձակվե ս, լսո՞ւմ ես... ձեռք չտաս նրան, խնդրում եմ...

թո՞ղ, թող որ ես դիմեմ նրան... Նայի՞ր, սպասում է մեր խոսքին... այս ի՞նչ է, Աստված իմ, մյուսներն ել են կանգնել, եւ շեն պարում... դու վշտացրիր նրանց, ա՞հ... այդ ի՞նչ ես անում, Արմինե... դու ուզում ես քանդել նրանց բույնը... չքանդե՞ս, լսո՞ւմ ես... չքանդես... ես քեզ հրամայում եմ. չի կարելի քանդել նրանց բույնը... Ինչ է, դու մոռացա՞ր քիչ առաջվա ասած:

- Նրանք վերադառնալու են իրենց բույնը, երբ օրերը տաքանան... թո՞ղ նրանց, թող... ա՞հ, այո՞ւ, ցուրտ է... ես մրսում եմ, Արմինե, ծածկիր վրաս... ա՞հ այդպէս... ապրես... նայիր, այս փոքրիկն ել է մրսում, դողում է տերևի պէս... բաց թող նրան, թող թոշի, թող զնա և սակայն չմոռանաս նրան անել, որ՝

Երբ տեսնես դու նորան,  
Ինձնից շատ բարե արա,  
Ասա, թող նստի լա,  
Յուր անրախտ որդու վրա:

- Ա՞հ... չէ՞, այն չէ... տե՛ս, չեն թոշում, մենք վշտացրինք նրանց... բայց ո՞չ, սպասիր... ի՞նչ է սա... հա՞... Սի թե դու չես տեսնում, որ այս մեկը վիրավոր է, չի կարողանում թոշել... նայի՞ր, նայի՞ր, կարծես թե սիրտն է վիրավոր... այո, այո, սիրտը, տեսնես ո՞վ է խոցել այն... զգույշ, մենք կիսամենք նրան ու հետո բաց կրտողնենք, որպեսզի կարողանա թոշել, լա՞վ... Հոգնեցի աղջիկս... բռնիր, բռնիր դու նրան, մի թողնի, որ թոշի, սիրտը վիրավոր նա ինչպե՞ս տուն կիհանի: Այն մյուսին նայիր, Արմինե, նայի՞ր... օհն... անհավատալի է, Աստված իմ, անհավատալի... թառել է մեր տան կտուրին... Դու գիտես չէ՞ մեր տունը... արի միասին զնանք մեր տուն... հիշո՞ւմ ես՝ զյուղի ծայրին է, առջևում էլ ընկուզենու ծառ... Տե՛ս, տե՛ս, կի Խաչոն է թառել ծառի վրա, ծոցն էլ լիքք ընկույզ է... ոչինչ, ոչինչ մի ասա նրան... մենք էլ քիչ հետո իրենց պճղովի դեղձի ծառը կբարձրանանք, լա՞վ...

- Տե՛ս, տե՛ս, Արմինե, հիմա էլ իրար զիմի հավաքվեցին

ծիծեռնակները, տեսնես, ի՞նչ են ուզում անել: Տե՛ս, տես, Արմինե, մայր ծիծեռնակն է խոսդը, ուշադիր լսիր... այո, այո, այդպես էլ գիտեի: Որոշում են համատեղ, բոլորը միասին վերադառնալ հին բույնը, չէ՞ որ հիմա գարուն է այնտեղ, գարու նն...


...Իր հեքիաթի ոգևորությունից անկողնում գրեթե նստած վարպետ Անդրանիկը վերջացրեց իր հեքիաթը: Արմինեն ակնապիշ նայում էր նրան լու, անձայն, հետևելով պապի ձեռքերի շարժումներին: Նրան թվում էր, թե պապն էլ ահա ուր որ է կթոնի ծիծեռնակների հետ ու կգնա հեռու, իսկ զարթուցիչի մեջ շարունակում էր հնչել մեղեղին.

*Ծիծեռնակ, ծիծեռնակ,  
Դու զարնան սիրուն թռչնակ,  
Դեպի ո՞ր, ինձ ասս,  
Թռչում ես այդպես արագ:*

... Մեկ շաբաթ անց, տափարակ հարթության վրա, առանց շիրմաքարերի բավական հայտնի գերեզմանոցի բազում շիրիմների կողքին ավելացավ նաև քեռթահիացի վարպետ Անդրանիկի շիրիմը: Վերջինիս մետաղյա սալիկի վրա փորագրված անվան տակ կար երկու տող.

*ԴԵ՛, ԹՌԻՇ, ԾԻԾԵՇՆԱԿ,  
ԾՆԱԾ ՏԵՂՍ՝ ԱՇՏԱՐԱԿ:*

*Վերափոխված տարբերակ  
Հուլիսի 17, 2020 թ.,  
Լու Անգելես*



ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍԱԿԱՆ.

ՍՓՅՈՒՇՔ - ՀԱՅՐԵՆԻՔ՝  
ՄԵԿ ՇՈՒՆՉ, ՄԵԿ ՄԱՐՄԻՆ

## 2016 ԹՎԱԿԱՆԻՑ ՄԻԱՅՆ ՊԱՀԱՆՁԱՏԵՐ

- Ես Հայաստանն եմ,  
և ինձ սպանել հնարավոր չեմ...  
ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ

Ցեղասպանության ընդունմանը նվիրված պայքարի տարբեր ծալքերում հայ ժողովուրդը շոշափելի հաջողություն արձանագրեց 2015 թվականին: Ապրիլի 24-ին, 160 հազար ցուցարարներ մի քանի ժամ շարունակ, հազարագույն պատառներով, հայրենասիրական կոչերով, Թուրքիայի ապագային քաղաքականությունը պահարակող թուուցիկներով, կեսօրվա բարկ արևի տակ քայլեցին ողջ Լու Անջելեսով մեկ, կատակ քան չեմ՝ 160 հազար: Այս, այդքան հայերի բողոքի ցուցով ողողվեց Լու Անջելեսի Վիլշիր պողոտան՝ պարփակելով Թուրքիայի հյուպատոսության շենքը:

Ճիշտ է, տարիների ընթացքում մեր պայքարի հոլովույթում առկա են զնահատանքի արժանի բազմաթիվ այլ ձեռքբերումներ ևս, սակայն մեր երազների վերջնական նպատակետին հասնելու ուժին դեռ քարքարու է, դժվարանցանելի:

Մեզ հետ միասին խոսում են նաև օտարները, գրում Մեծ Եղեռնի մասին: Գաղտնիք չեմ. իրականում, շատ անգամ նրանք դա անում են իրենց թաքոն հաշիվների համար, սիրաշահում մեզ՝ դեռևս են զիլից՝ դյուրահավատ մեր ազգին, զառան միամտությամբ ու հնուց եկած ավանդութներով կրթված, «մեկ ապտակով չբավարարվող» և մյուս այտք թշնամուն դեմ տվող հային:

Եվ որքան խաբվեցինք օտարի քաղցր-մաղցր խոսքերին ու խոստումներին: Եվ ահա, խնդրեմ, հիմա ել են մեզ խարում: Ժամանակին նշանավոր ոռուս ընդդիմադիր, իսկ այժմ Ռուսաստանի Լիբերալ-դեմոկրատական կուսակցության դեկա-

վար Վլադիմիր Շիրինովսկին դարձյալ փորձ է անում սիրացահել հայերին.

- Թուրքերը բռչվորներ էին,- ասում է նա (*Միանգամայն իրավացիորեն, չես վիճի, - ՀԵՆ. Ա.*),- նրանց հայրենիքը Միջին Ասիայում է, Տաշքենտում: Նրանք պետք է վերադառնան այնտեղ և Անատոլիան թողնեն հայերին, քրուրին և հովներին: Շուտով հայերը կոգեկոչեն ոչ թե հայոց ցեղասպանության տարելիցը, այլ կտոնեն Արևմտյան Հայաստանի ազատազրումը...

Ապշեցուցիչ հայտարարություն... կարելի է ասել «ուաք զլուխ» վիճակում:

Ժամանակին ոռու այլախոհի ոգևորիչ արտահայ- տության տպավորության տակ, մեր սիրելի և բանիմաց քաղաքագետ Հարութ Սասունյանն էլ հայ ժողովրդի երազն ու փափազն է բարձրածայնում.

- Թուրքիան պետք է վերադարձն մեր անհատական և համայնքային բոլոր կալվածները և ամենեն կարևորը՝ մեր պատմական հողերը՝ Արևմտյան Հայաստանը...

Իրականում, յուրաքանչյուր հայ պետք է ոգևորվեր բազմահազար ունկնդիրների ներկայությամբ հայ ժողովրդին ոգեշնչող ոռու քաղաքական գործի արած արտահայտությունից: Սակայն, հենց նույն օրերին, Թուրքիայում, իշխանավորը հավաքված բազմության առջև ելույթ ունենալիս, երախտագիտություն է հայտնում իր նախնիներին, որոնք «հայերին այս հողերեն վտարեցին, փրցուցին և նետեցին...»

Դե, եկեք կողք-կողքի դնենք իրարամերժ, հակոսնյա այս երկու մտքերը: Առաջին դեպքում, Շիրինովսկու ասածն, ինչպես ասում են «օդի մեջ կրակոց է», վայրկյանական ոգսորության արդյունք, իսկ երկրորդը՝ պետական մտածողության արդյունքում, պետականորեն մտածված, հավատարմագրված բանավոր փաստաթությութեա: Իսկ ի՞նչ է մնում մեզ անել, արդեն սովորական դարձած, լավագույնս կազմակեպված քայլարշավներ կազմակերպել ողջ հողագնդի վրա...

Հա, քայլենք ելի, նորից քայլենք աշխարհով մեկ, Սինգա-

պուրից մինչև Անգլիա, Սիդնեյից մինչև Արգենտինա, ե՛, վե՛րջը... սրա վերջը չի երևում: Սակայն չեմ ասում,թե մենք ել չենք քայլելու, քայլելու ենք՝ պաստառների վրա փոխելով սովորական դարձած «Մենք ժառանգներն ենք 1915-ի հայերի ցեղասպանության», «Թուրքը պիտի ընդունի հայերի ցեղասպանությունը» կոչերը՝ հետևյալ բառակապակցություններով. «Մեր հողերը», «Մեր պահանջատիրությունը անժամկետ ե», «Մեր դատի վերջնական հաղթանակ», «Թուրք, վերադարձու մեր ինչքն ու հարստությունը»:

Հիսուն տարվա «քայլարշավի» արդյունքից հետո, կարծում եմ, բավ է, որպեսզի մենք այսօր համոզված ասենք, որ՝ չնայած զնահատելի ձեռքբերումներին, մենք տեղբայի մեջ ենք: Բավական միամիտ պիտի լինել հավատալու համար, որ թուրքը կընդունի Ցեղասպանությունը: Բայց աշխարհը հոգիտի 20-րդ դարի առաջին ցեղասպանության մասին, թուրքն էլ գիտի, բայց իր անասնական համառությունն ու ի ծնե մարդասպան լինելը նրան թույլ չեն տալիս ենել դասիճի պատյանից:

Եթե մինչև 1965 թվականը Եղեռնի հիշատակը վառ պահելու և այն միջազգայնացնելու պարտադրանքն հիմնականում ընկած էր Սփյուռքի ուսերին, ապա դրանից հետո Հայաստանի ժողովրդի «աչքը բացվեց»: Եթե նա, մինչ այդ, 1915 թվականի հայերի կոտորածի և պահանջատիրության մասին չէր կարող բարձրածայնել, ապա այդուհետ ակտիվորեն ներգրավվեց այդ պայքարում:

Մենք, իհարկե, պահում ենք քսանչորսի խորհուրդը: Սակայն այսօր, միջազգային քաղաքական խմբումների լույսի տակ, պարտավոր ենք վերանայել մեր պայքարի ձևերն ու հնարավորությունները, և, ամենակարևորը՝ հայ ազգի ու ժողովրդի նյութական հնարավորությունները:

Դժբախտաբար, մենք ոռմանտիկ, երազային դարում չենք ապրում և լավ էլ հասկանում ենք, որ ամեն ինչ, նույնիսկ միջազգային չափանիշի հարցեր, շատ անգամ լուծվում են դրամի, փողի միջոցով:

Ի՞նչ իմանաս, գուցե մի օր, հաշտության նպատակային ինչ-

որ ձևեր գտնվեն մեր երկու երկրների միջև (առանց երրոշ երկրի միջամտության ու միջնորդության), և իրավական հողի վրա կամ՝ թեկուզ «դրամ խաղացնելով», կրավարարվեն մեր օրինական պահանջները:

Հերիք է, բավ է անընդհատ ջարդից ու կոտրածից խոսել, բավական է լաց լինել մեր հարազատների անթաղ աճյունների վրա: Արդեն 100 տարի թուրքը «տեր» է դարձել մեր նահատակների շեներին, բնակավայրերին, եկեղեցիներին, տներին և առօր-փառոր վայելում է մեր ժողովրդի ստեղծած հարստությունն ու բարիքները:

Այս, թուրքը վայելում է հայի ստեղծածը, որովհետև ինքը ընդունակ չէ որևէ բան հորինելու, ստեղծելու: Նա միայն սովոր է թալանել, փախցնել: Եթե՝ պատահում է ուժը չի պատում, պատրաստ է սողալ, քծնել, ամեն ստորության դիմել՝ իր ուզածին հասնելու համար:

Իրենից ուժեղի մոտ թուրքը պատրաստ է նրա ոտքերը լվանալ: Ստորաքարշությունը նրա արյան մեջ է: Իսկ այն՝ ինչ արյան մեջ է՝ հնարավոր չէ դուրս հանել:

Այսօր 4-5 միլիոն թուրք լվանում է գերմանացու ոտքերը, այն ազգի, որի մեղսակցությամբ ու հովանավորությամբ, հարյուր տարի առաջ կոտորեց մի ամբողջ ժողովուրդ: Սակայն աշխարհին հանճարներ պարզեած գերման ժողովուրդը «խելքի եկավ» ու համարձակություն ունեցավ ընդունելու հրեա ժողովրդին բնաջնջելու իր հրեշավոր մտադրության փաստը: Եվ որպես գործած մեղքի հատուցում՝ միլիարդավոր դոլարներով տարիներ շարունակ փորձում է սիրաշահել հրեա ժողովրդի սիրտը:

Սովորիր ելի, սովորիր քո տիրոջից, մի քիչ մոտեցիր մարդկությանը, այ անխիղճ, անաստված: Ներողություն խնդրիր քո գործած շարիքների համար: Հայը մեծահոգի է, կների, բայց չի մոռանա...

Այս ո՞ւմ եմ ասում, որպեսզի ներողություն խնդրի: Ճիշտ է ասված. ներողություն խնդրելը մեծ ազգերին է տրված: Այս, դու մեծ ել չես, է, պարզապես շատ ես: Իսկ շատը որակի

չափանիշ չե: Ինչպես Սևակը կասեր՝ «Մենք քիչ ենք, բայց մեզ հայ են ասում»: Իսկ հայը մեծ է, մեծ՝ իր մեծերով, իր խելքով, իր գիտությամբ, իր դարերի պատմությամբ, իր մշակույթով:

Ես հասկանում եմ, դու մեծեր չես ունեցել, որ լսես նրանց ձայնը: Դե՛ նայիր քո պատմությանը, նայիր, թե ով է ստեղծել քո երկիրը, այն դարձրել արվեստի, գիտության, ճարտարապետության երկիր: Ինչ ասպարեզ որ մտնես, հայն է ստեղծել:

Ամբողջ աշխարհը գիտի, որ Թուրքական Հանրապետությունը ստեղծվել է հայերի ունեցվածքի վրա: Ո՞ւր են մեր հարստությունները, մեր վանքերն ու եկեղեցիները: Դուք ոչ միայն ոչնչացրիք մի ամբողջ ժողովուրդ, այլև տեր դարձաք նրա գիտությանն ու մշակույթին:

Դրանք պիտի ետ վերադարձնել: Հիմա ժամանակն է պայքարի: Մենք պիտի վերադարձնենք մեր շենքերն ու բարեբեր հողերը, որպեսզի այդ հողերի վրա նոր շնչով, հայի կենարար արյունով ներկված հողերի վրա նոր թափով, նոր ծլարձակումներով բռցավառվի մեր արվեստն ու մշակույթը:

Մեր մեծ «եղբոր»՝ Ռուսաստանի, վրա էլ հույս դնել չի լինի: Նա մեր սահմանները պահում է միայն ու միայն իր շահերի համար: Ի՞նչ Սևրի դաշնագիր, ի՞նչ ռուս-թրքական համաձայնագրի բեկանում:

Ո՞վ պիտի լուծի այդ հարցերը:

Մենք, միայն մենք, առաջին հերթին մեր փողերով:

Երբ Հայաստանը փորձում է Ռուսաստանին համոզել, որ չեղարկի 1921 թվականին Մոսկվայում կնքված, Հայաստանի համար չափազանց անբարենպաստ ռուս-թրքական պայմանագիրը, Ռուսիոն արտաքին գործերի նախարարությունը անհնար է համարում բեկանել հիշյալ պայմանագիրը:

Իզուր չի ասել հայ մեծանուն գրող ու թատերագիր Գ. Սունդուկյանը. «Գելի վիզը ընդուր ա հաստ, որ իր գործերը իրա ձեռով ա անում...»:

Մինչ մենք գրադած ենք մեր ազգի ցավուտ հարցերը «լուծելով», այնտեղ թուրքը՝ լկտիության ու անբարո արարքի

նորանոր ձևերով, առաջ է տանում իր արյան մեջ բուն դրած թալանի ու կողոպուտի գործընթացը:

Հստ Պոլսո «Մարմարա» օրայերթի, Թուրքիայում, ըստ նոր օրենքի, թուրքերին թույլատրվում է գանձ որոնել Եղեռնի տարիներին հայերին պատկանող տներում, պայմանով, որ գանձ գտնողը դրա կեսը տալ կառավարությանը՝ որպես փայտերի: Կարծ ասած՝ գողը գողին փայտեր:

«Գանձախույզները, - գրում է «Մարմարա» թերթը, - որոնք կը քննեն Հայոց Պատրիարքարանին արձանագրությունները, կերթան նախկին հայաբնակ վայրերը ու քարտեսներով ճշտված այդ շրջաններուն մեջ ամեն միջոցի կդիմեն, որպեսզի գանձ գտնեն հողին տակը»:

- Չէ, ոչ, թուրքը չի փոխվի: Նա նույն գողն ու ավազակն է, թալանողը, վկողն ու ոճրագործը: Երեկ հայն էր, այսօր՝ քուրդը: Արդեն երևում է քրդերի նկատմամբ եղած սուկալի հալածանքը, որը մի նոր Եղեռնի դուռ է բացում կարծես: Եվ աշխարհն էլ, ինչպես ժամանակին մեր նկատմամբ, այսօր անտարքեր հայացքով է նայում քրդերի կոտորածին:

Քրդերի դեմ մղված պատերազմը պիտի արթուն պահի մեր այնտեղի հայերին, իսլամացած, կիսահայ, կես քուրդ զանգվածներին: Ճիշտ է, ժամանակին քուրդը այնքան էլ «քարի պտուղ» չի եղել մեզ համար, սակայն այսօր իրավիճակն այնպիսին է, որ մենք պարտավորված ենք պաշտպանել նրան, մանավանդ, որ նա մեր «սրտից» է խոսում, Թուրդիստանի բանվորական կուսակցությունը փորձում է ներկայացուցիչ ունենալ Մոսկվայում: Ավելին, Թուրքիայի իսլամացած հայերը կամաց-կամաց վերադառնում են դեպի քրիստոնեություն: Զբոսաշրջիկների խմբերով բարձրանում են Ծիծեռնակարերը ու այնտեղ նորովի, մյուսոնով օծվում և հայ են դառնում: Սրանից էլ ավելի լավ երևու՞մ:

Այս «արյան կանչին» պիտի ավելացնել քարոզչական «մեքենայի» արագությունը: Դրամի միջոցով պիտի բանալ փաստաբանական գրասենյակներ աշխարհի բոլոր ծալքերում՝ որտեղ որ հայ կա: Այդ հաստատությունները պետք է թուրքա-

կան, եվրոպական նմանատիպ հիմնարկներից, եկեղեցիների գզրոցներից լույս աշխարհ հանեն հայերի սեփականության վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթեր: Եվ այդ ժամանակ միայն Միջազգային դատարանով կարելի է հույս ունենալ, որ արդարությունը կհաղթանակի:

Այս ամենի իրականացման ընթացքում պիտի երևա, թե որքան ենք մենք սիրում մեր պապենական հայրենիքը և որքանով ենք պատրաստ ազգութին նյութապես օգտակար լինել նրա ազատագրման սուրբ գործին:

Աշխարհի միլիարդատերերի ցանկում մշտապես շոշափվում են հայ դրամատերերի անունները: Սուրբ նպատակի համար տրվելիք նրանց արքայական նվիրատվությունները խանդապառությամբ կընդունի համայն հայությունը և, վստահ եմ, միլիոնավոր հայորդիներ՝ ինչպես ասում են, չունեցած տեղով անզամ լայնորեն կրանան իրենց քսակները:

Այս ամենը պիտի արվի պետականորեն, Հայաստանի զիսավորությամբ, թեև վերին մարմիններում այսօր կ չեն պակասում հետևյալ կերպ մտածողները, այն է՝ «Փարիզում և Նյու Յորքում նարինջ ուսող հայր իրավունք չունի մեզ քաղաքականություն թելադրել»:

Ակամա հիշեցի նշանավոր մեծահարուստ դրամատեր Քըրք Քըրքորյանին, որ մահվանից շատ քիչ ժամանակ առաջ հարցրել էր, թե ո՞քան կարծենա Արևմտյան Հայաստանն ու Կիլիկիան Հայաստանին վերադարձնելը: Եթե իմ հիշողությունը ինձ չի դավաճանում, նման մի միտք է արտահայտել նաև մեծանուն երգիշ Շառլ Ազնավուրը:

Ինչպես երևում է, դիվանազիտական, մարդասիրական միջոցները չեն օգնում ազգային հարցեր լուծելիս: Հողագնդի վրա ամեն մի հարց այսօր դրական լրացման կարող է հասնել միայն ու միայն ուժի դիրքերից ելնելով և դրամի, փողի միջոցով: Ես հավատում եմ դրամի ամենազոր լինելուն: Չարենցյան հավաքական ուժն կ այսօր չի օգնի դրամատիրական այս աշխարհում, թեև հավաքականության մեջ կ ենք կաղում...

Ավելի հարմար ժամանակ՝ մեր հարցերի լուծման համար, մենք դժվար թե կրկին ունենանք: Թուրքիան կանգնած է քաղաքացիական պատերազմի շեմին: Ես հավատում եմ, որ օրերից մի օր քրդերը կունենան իրենց հանրապետությունը, որի շնորհիվ, ժողովրդական առածի ասածի պես՝ «ջուր կը լցվի մեր ջրաղացին»...

*Ապրիլի 20, 2015 թ.,  
Լու Անջելես*

## ՍՓՅՈՒՌՔԸ ԲԵՐՐԻ ԱՐՏ Է ԵՎ ՉԵ...

... Դրամ, դրամ, դրամ՝ մ: Փող, փող, փող՝ դ,- ահա թե ինչի մասին են մտածում երկրագնդի բոլոր մարդիկ: Շատերը՝ այն ունենալու, ձեռք բերելու ճիզի մեջ, կորցնում են մարդկային կերպարանքը, չափ ու կշիռ չեն դնում ոչ միայն իրենց արարքների, այլև՝ միջոցների մեջ: Միայն թե փող լինի, փող, փող, փող: «Դո լլար, դո լլար, դո լլար...», - կասեր Շիրվանզադեի հերոսը («Սորգանի խնամին» կատակերգություն, -ՀԵՆ. Ա.):

2016 թվականին փողի մշտատև պակասը շատ ծանր եղավ Հայաստանի համար (թեն՝ մինչ այդ էլ մի բան չէր): Եվ բանը հասավ նրան, որ տարվա վերջալույսին Հայաստանի իշխանությունները՝ բանակին օգնելու համար, իրենց ափը մեկնեցին (և մեկնում են) ժողովրդի աշխատող խավի մարդկանց, ովքեր այնքան էլ մեծ թիվ չեն կազմում երկրում եւ շատերն էլ գրանցված չեն որպես գործազրո: Քիչ վարը, ներքեսում ավելի հանգամանորեն կլսուեմ այս թեմայի մասին: Հիմա զանք տարվա սկզբին:

2016 թվականը ինձ համար նշանավորվեց (ոչ անպայման դրական իմաստով) երեք կամ չորս իրադարձություններով:

Այսօր թույլ տվեք մի քիչ «Քաղաքականություն» արվեստով «խաղալ», թեև զիտեմ, որ դժնդակ այս օրերին, ամեն մի քիչ թե շատ կարդացած, կյանքը ճանաչող մարդ «քաղաքագետ» է և հասկանում է, թե ինչն ինչոց է: Թեև հայաստանյան որոշ քաղաքագետների թվում է, թե բանիմաց, ինտելեկտ ունեցող անհատներ չկան սփյուռքում և կամ էլ քիչ են, ուստի, ըստ այնմ էլ, անկարող են իրենց պես «քաղաքականություն խաղալ»:

Բայց մենք կփորձենք մեր հնարավորության սահմաններում վերլուծել 2016 թվականին ազատ, անկախ Հայաստանում տեղի ունեցած սուկալի իրադարձություններով լի դեպքերի մասին, որոնց նմանը չի եղել մեր Հայրենիքի գոյության վեր-

շին 30 տարվա ընթացքում:

2016 թվականի կարևոր իրադարձություններից առաջինը և ահարկուն չորսօրյա դարաբաղյան պատերազմն էր, որը, որքան էլ ոմանք ասեն, թե դա մեր կողմից բարոյական հաղթանակ էր, ես չեմ ընդունում, չեմ կարող ընդունել, եթե տարածք ենք կորցնում, եթե երիտասարդ, դեռ աշխարհը չճանացած 18-19-ամյա հարյուրից ավելի հայ պատանիներ են զոհ դառնում: Եվ, ամենակարևորը՝ կրկնում եմ՝ տարածք ենք կորցնում, և այն էլ՝ հսկայական տարածք: Ի՞նչ հաղթանակի մասին է խոսքը, եթե պարտադրաբար զինադադար հայտարարվեց մեր հյուսիսի «բարեկամ» ոռուսի կողմից: Մենք չարաշար պարտվել ենք և ոչ թե հաղթել: Եկեք տղամարդ լինենք ու ընդունենք մեր պարտությունը, որպեսզի ապագայում էլ չպարտվենք: Լավ է ասում քաղաքացին Արա Պապյանը. «Մեկ գրամ զիտակցություն չկա, որ տարածքներ հանձնելը նշանակում է Երևան հանձնել...»:

- Խի՞ստ է ասված, ոչ, բնավ երբեք...

Այդ միամիտ ասեմ, թե ուրիշ մի բան՝ «բարոյական հաղթանակ» մտայնությունը դարերով նստած է հայի հոգեբանության մեջ, դեռ Ավարայրի ճակատամարտի օրերից: Այս օրերին, 21-րդ դարում «բարոյական հաղթանակ» որն է: Նման հաստատումը վերաբերվում է միայն ու միայն Վարդանանց պատերազմին, որի ընթացքում մենք պարտվեցինք ճակատամարտում, բայց հաղթեց մեր հավատը, մենք փրկեցինք մեր կրոնը: Ավարայրի ճակատամարտի ականատես, պատմիչ Եղիշեն Վկայում է, թե ինչպես է պարսից արքա Հազկերտ երկրորդը, ով ամբողջությամբ ջնջել էր հայկական 60 հազարանոց բանակը, տեսնելով հայերի անկոտրուն կամքը՝ քրիստոնեական կրոնը պահելու հարցում, ստիպված հայտարարում է. «Հայերի ապստամբությունը ներփած է և կրկին իրավունք է շնորհված եկեղեցիներ շինելու»:

Այ, այս պարագայում կարելի է, իհարկե, մեր պատերազմական պարտությունը «բարոյական հաղթանակ» համարել:

Մեր ժողովրդի ողջ պատմության ընթացքում նման «բար-

յական հաղթանակ» չենք ունեցել: Այնպես որ, պետք չէ Ավարայրի Ճակատամարտին վերագրվող «բարոյական հաղթանակը» նույնացնել Ղարաբաղի ամոթալի պարտության հետ:

Եվ, արի այսօր, ու մեր երիտասարդությանը քարոզ կարդա դարաբաղյան պատերազմի «բարոյական հաղթանակի» մասին: Վրադ կիսնդան,- կասեր մայրս: Այնպես որ, հույժ կարևոր եմ համարում հայկական դպրոցներում վերանայել Վարդանաց պատերազմին և Ավարայրի Ճակատամարտին նվիրված նյութերի դասավանդման ձևն ու հիմնականում կենտրոնանալ քրիստոնեության հաղթանակի վրա:

Այսօր աշխարհում ամեն ինչ ընթանում է ուժի դիրքերից, ուժի առկայությամբ: Հերիք է, քավ է մենք մեզ խարենք «բարոյական հաղթանակի բովում», երբ ամեն օր մենք կորցնում ենք մեր սնած-պահած, աննման հայրենասեր բալեքին: Երբ արյուն, հայի արյուն է հեղվում արդեն օտարինը դարձած, դարերով օտարի կողմից իբր թե քոնը համարվող հողի վրա: Աշխարհը թքած ունի քո բարոյական արժեքների վրա:

- Ուժ, ուժի դիրքից են խոսում մարդիկ, իսկ մենք բարոյականություն ենք քարոզում ու ձեռք մեկնում խեղճից ել, եւ ավելի խեղճացած ժողովրդին, որպեսզի սատար կանգնի հայոց բանակին ու զոհվածների ընտանիքներին: Ճար չկա, ծանր է վիճակը, հասկանում եմ: Բայց մենք մեզ գցեցինք այս օրը, թույլ տալով, որ մեր բանակի գեներալները լափեն զինվորին հատկացված՝ առանց այն ել հացի նվազագույն պաշարը:

Ղարաբաղյան չորսօրյա պատերազմը փոքր ինչ բացեց մեր աշքերը. ո՞րտեղ էր ոուսը, ինչո՞ւ մեզ չօգնեց, ինչո՞ւ ազերիին զինեց նորագույն զենքով, իսկ մեզ թողեց 19-րդ դարից մնացած մոսինի և սվինի հույսին, չէ՞ որ մենք դաշնակից պետություններ ենք... Այսպիսի հարցերն ել ավելի սթափ մտածումի առաջնորդեցին մեզ: Այս ամենի արդյունքում՝ ծայր առավ համաժողովրդային ընդգումը:

Մենք համոզվեցինք, որ այս պատմության ետևը ոուսն է կանգնած, ոուսական կայսրությունը: Արդեն հստակ եր, որ պարապ խոսքեր են «հայ-ոուսական բարեկամություն» կոչ-

ված հորջորջումը: Եվ, ինչպես քաղաքագետ Ռուբեն Մեհրաբյանն է իրավացիորեն նշում՝ «Պատերազմը Ղարաբաղում, որի ընթացքում հայկական կողմում զոհ գնացին հարյուրից ավելի երիտասարդներ, ես կարծում եմ, որ լրջորեն խախտվեց հայ ժողովրդի մտայնության մեջ երկար տարիներ արմատացած «Հայ-ռուսական դարավոր բարեկամություն» առաջարկը»:

Ապրիլյան պատերազմից երկու ամիս հետո, հուսահատությունից, երկարամյա անհեռանկար իրադրությունից ու տնտեսական անձուկ վիճակից «Ամբոխները խելազարված» (*Սասնա ծոեր*) ուզեցին ինչ որ բան փոխել մեր երկրում: Արդյունքում՝ նրանցից շատերն ընկան բանտերը, ոմանք է հաշմանդամ դարձան՝ հայրենակցի կողմից արձակված հրազենի փամփուշտով: Հայն ընկապ հայի ձեռքով: Նողկալի, անսերեկի իրողություն: Ամոք մեզ՝ բոլորիս անխտիր:

Այս ամենն անշուշտ տեսնում են մեր քաղաքագետներն ու մտավորականները, որոնցից ոմանք «կերակրվելով» կառավարական կաթսայից, օրեցօր հեռանում են ժողովրդից, փոխանակ լինելու նրա հետ, նրա կողքին, առաջնորդելու՝ թեկուզն սխալ ուղիով, ճանապարհին նրան ճիշտ ուղու վրա բերելու մտադրությամբ, խորհուրդ տալու շանել ազգակործան գործողություններ և մշտապես ունենալ հստակ ծրագիր:

«Սասնա ծոերը» գուցեն անմտածված, անհեռատես գործողություններով մեջտեղ ելան, սակայն մտածել տվյան իշխանություններին, որ մարդիկ այլևս չեն կարող դիմանալ մշտատև անօրինականությանը, թալանին ու հարստահարությանը:

Թվում էր թե լավ սկսեց իր գործունեությունը Հայաստանի նոր վարչապետ Կարեն Կարապետյանը: Բայց առ այսօր, որքան որ գիտեմ, ոչ մի վերաբերմունք չի ցուցաբերել Ղարաբաղյան պատերազմի և «Սասնա ծոերի» նկատմամբ, եթե իհարկե շհաշվենք օրերս սկսված 1000-ական դրամահավաքի արշավը: Վարչապետը այս երկու-երեք ամսվա ընթացքում հիմնականում զբաղված էր պաշտոնյաների փոփոխմամբ և նախարարներ փոխելով:

Քսան-երեսուն կառավարական նոր պաշտոնյաներ բերե-

լով, նա պիտի կարողանա՞ վերացնել վարակի նման ժողովրդին մաշկահան անող կաշառակերությունն ու վոնդել հղփացած գործատերերին, որոնք, զրեթե առանց բացառության, ստրուկների պես են վարվում իրենց գործավորների հետ, գործավորներ, ովքեր պատրաստ են իրենց ողորմելի աշխատավարձից բաժին հանել բանակին և պատերազմում զոհված մարտիկների ընտանիքներին:

Պետք չէ՞ ը, պարոն վարչապետ, սկզբում պարպել օլիգարխների տողուն զրպանները, հետո նոր իշխան ժողովրդի «ջանին»: Լավ, մտածում է, խոսք չկա, համաժողովրդական դրամահավաք կազմակերպել բանակի համար: Ո՞ւր են այդ փետուն ստամոքսով, պարարտ մարմնով գեներալները, ինչո՞ւ չեք կախում դրանց: Գոնե այս հարցում կարելի է օրինակ վերցնել մահմեդական աշխարհից: Այս ինչ ժողովուրդ ենք մենք, ինչո՞ւ ենք այսքան ներող, Աստված իմ, ինչո՞ւ ես թույլ տալիս, որ երկրորդ ապտակը իշխի մեր երկրորդ թշին, երբ դեռ առաջինի պատասխանը չենք տվել...

Հավատացեք, բարեկամներ, այսօր հազար դրամը փող է, արժեք ունի Հայաստանում, թեև, դոլարի հաշվարկով երկու դոլարից փոքր ինչ ավելի է հաշվարկում: Կենցաղային սուլ պայմանների առկայությամբ, հարյուր դոլար աշխատավարձ ստացող աշխատավորի համար դժվար է ամփառ հազար դրամ հատկացնելը բանակին, կամ զոհված զինվորի ընտանիքին:

Այսպես. Երևանում հազար դրամով կարելի է հինգ հատ փառաբանված, անուն հանած Ապարանի նշանավոր հացից գնել: Հազար դրամով ուսանողը մեկ ամրող շաբաթ կարող է հանրակառուվ կամ մետրոյով (գետնուղի) գնալ ու գալ համալսարան: Այս ամենի հետ մեկտեղ, հազար դրամը ոչինչ է զբոսաշրջիկի, օտար հյուրի համար, ով այդ դրամով կարող է մատնոցի չափ մեծության ֆրանսիական խմորեղեն «վայելել»:

Ինքնին հասկանալի է, որ տեղաբնակներից քչերին է հասու սուրճն ու թխվածքը:

2016 թվականին Երևանի փողոցներում ավելացավ սևագեստ մայրերի քանակը, որոնք ոչ միայն ապրիլյան պատե-

բազմում զոհված զինվորների մայրերն են, այլև 1994 թվականից, զինադադարի օրվանից ազերի դիպուկահարների գնդուկով զոհված պատանի զինվորների: Նրանց մայրերն իրենց վիրավորված են զգում, տրորված է նրանց արժանապատվությունը.

- Ինչպես կարող են նրանք իրենց թույլ տալ սնվել ժողովրդից հավաքած դրամներով, եթե ժողովրդի մի հսկա զանգված օրվա հաջի կարու է: Արժանապատվության հարց է. իսկական հայի արժանապատվություն... Հենց այդ բարձր արժանապատվությունը պահելու պատճառով էլ հայաստանցին նախընտրում է օտար աշխարհներում ճարել իր օրվա ապրուստը:

Իրենք՝ Հայաստանի քաղաքագետներն են ասում. «Մեր արտահանման լավագույն ավրանքը այսօր մնում է ՀՀ քաղաքցին: Մենք արտահանում ենք մեր քաղաքացիներին դուրս և դրա դիմաց փող ենք ստանում»:

Սրանից ավելի ցինիկ և սակայն ճշմարիտ որակում արտագաղթի վերաբերյալ դժվար է պատկերացնել:

- Այո, մի զարմանաք, հայ մարդն այսօր Հայաստանում ապրանքի է վերածվել: Գնացեք Երևանի կայարանամերձ հրապարակ և դուք ականատես կլինեք, թե ինչպես է ամենակարևոր պարագաներով լցված ուսամբարձ պարկով ծանրաբեռ ծերունին՝ մի ձեռքով էլ թոռան ձեռքը բռնած, փորձում հանրակառք բարձրանալով գիտի Ռուսաստանի որ կորածմոլորած անկյունում հաստատվելու համար: Եվ այդ «տեղափոխության» համար վճարում է ոուսը, Պուտինյան կայությունը: Այնպես որ «ապրանքի վերածված հայ» արտահայտությունը ճշմարիտ է:

Այժմ զանք սփյուռյան հոգսերին, որոնք, ինչպես նախորդ տարիներին, ավելի ցցուն են դառնում աշնանը և ձմեռնամուտին, կամ ինչպես ես սիրում եմ ասել, աշնան բերքահավաքի օրերին:

Իբր ամբողջ տարին բավարար չեր, վերջին չորս ամիսը ողողված էր՝ աննշան բացառությամբ, միջակ և դրանից ել

ցածր «մակարդակի» «արվեստագետներով», դերասաններով, միայն մեկ-երկու նախադասություն արտաքերող «ներկայություններով»: Դժվար չէ հասկանալը, որ Հայաստանի իշխանությունները, թող ներվի, այս ամբողջ խառնիճաղանջ խմբին ուղարկում է Լու Անջելես՝ «աշնան բերքահավաքի»: Բա մենք մեղք չենք, ի՞ր ՝ լավ, թող էի զան, հասկանում ենք, նրանք ել մի լավ օրի չեն, թող իրական, իսկական արվեստ ցուցադրեն, ոչ թե յոթ հազարանց սրահում 100-200 դոլար վճարած հանդիսատեսին ծաղրեն, հինգ ժամ շարունակ ծամածոռթյուններ անեն և ոչ կենդանի, ձայնագրված երաժշտության տակ բերան բացեն ու փակեն:

- Այս ում տեղն են մեզ դրել,- իրավացիորեն միաբերան բողոքում է հանդիսատեսը: Նրանցից մեկը, պարուսուց Վարդան Աղաջանյանը ահա թե ինչ է գրում իր դիմատետրում.

«...Ոչ մի գեղագիտական հաճույք, ել չեմ խոսում մշակութային արժեքի մասին: Մենք գոնե մեր քոչարին ենք պարում, ոչ թե ձեզ նման օտարի երգը հայերեն անկապ բառերով երգում»:

Մենք, Լու Անջելեսի հայերս դիմացկուն ենք, ելի կդիմանանք հայաստանյան արվեստագետների «արշավանքին»: Մենք կարուտել ենք մեր տեղական շնորհալի արվեստագետների ելույթներին: Հայաստանցիները լավ են սովորել, զիտեն, որ մեր հրեշտակների քաղաքի հողը շատ է բերրի, իրենց հայրենակիցներն ել, շատ անզամ չունեցած տեղով, առոք-փառոք իրենց կճանապարհեն հայրենի տուն:

Այս ամենով հանդերձ, Գոհաբանության օրվա կապակցությամբ կայացած դրամահավաքից հետո, ծուռմոտիկ արտահայտություններով է հանդես գալիս հայրենի քաղաքագիտության դոկտոր Հայկ Մարտիրոսյանը: Ահա թե ինչ է ասում նա.

- «Նոր Սփյուռքը ոչ ֆինանսապես, ոչ ինտելեկտով բարեգործություն անելու մակարդակ չունի: Երկու հանգամանք. վստահության իսպառ բացակայություն և ոչ թե նվազումը, և Սփյուռքի աստիճանական տարրալուծումը»:

- Պատվական եղբայր, չգիտեմ թե քաղաքականության դասերն ումի՞ց ես ստացել բայց, մեղմ ասած, քո անտեղյակու-

թյունը սփյուռքյան կառուցներից՝ երկար լուսաբանման կարիք ունի, սակայն ես կիրութեմ մի քանի նախադատությամբ «ջրել» քո արտահայտած մտքերը:

Միակ ձիշտ միտքը «վստահության խապառ բացակայություն» արտահայտությունն է, բայց ոչ դրա շարունակությունը, որն է՝ «և ոչ թե նվազումը»: Ո՞չ, բարեկամս, դու ամբողջովին սխալ ես, այդպես չե. վստահություն, այն ել ինչպիսի վստահություն է եղել տարիներ շարունակ Հայրենիքի հանդեպ: Այդ հետո է խախտվել:

Սփյուռքահայի վստահությունը Հայաստանի նկատմամբ սկսվել է նրա անկախության առաջին իսկ օրվանից, Անոն Տեր Պետրոսյանի Լու Անծելես այցելության պահից, երբ բազմահազար բազմության ներկայությամբ մեր մեծահարուստ ներից մեկը (*Շամյան մականունով՝ Ֆրեզնոյից*, - ՀԵՆ. Ա.) ի ցույց աշխարհի, բեմի վրա նրան երկարեց մեկ միլիոն դրար արժողությամբ չեքը: Ի՞նչ եղավ այդ միլիոնը, որն այսօր հինգ միլիոնի արժողություն ունի, ոչ ոք չգիտի: Գոնե խոսվի, ասվի, ինչ որ բան հորինվի՝ ժողովրդի և նվիրատուի կասկածը իբրև թե փարատելու համար:

Երևի դու տեղյակ ել չես, թե քանի-քանի մեծահարուստներ ներդրումներ արեցին Հայաստանում, գործարան-արտադրամասեր ստեղծեցին և որոշ ժամանակ անց, խարված, ստորացած թողեցին Հայաստանում ունեցած-չունեցածը և ձեռնունայն վերադարձան Ամերիկա: Ահա այդ ժամանակվանից ել սկսվեց անվստահությունը, որը զնալով-զնալով հասավ նրան, որ այսօր իսկապես իսպառ բացակայում է վստահությունը Հայաստանի իշխանությունների հանդեպ:

Եվ մի մոռանա, պարոն Մարտիրոսյան, որ Հայաստանի այսօրվա օլիգարխներից ոմանք հարստացել են սփյուռքահայ գործարարների միամտության, ազնվության և նրանցից խլված դրամների շնորհիվ: Մենք հինգ միամիտ, ազնիվ ընկերներով, ժամանակին՝ նորանկախ Հայաստանին զորավիզ լինելու մտադրությամբ, 1992 թվականին որոշեցինք մեր ունե-

ցած նյութական ոչ շատ մեծ գումարով Երևանում 150 աշխատողի համար արտադրամաս ստեղծել: Մեկ տարի հետո, լրիվ իրավական փաստաթղթերի առկայությամբ հանդերձ, տեսանք, որ զլուխ չենք հանելու «ախաղեր տղերի հետ», մոռացանք մեր վերջին խնայողությունն էլ, փաստաբանին էլ: Եվ չկարողացանք գոնե մեր դրած գումարը եւս ստանալ: Հիմա եկ ու ասա՝ Հենրիկ Անասյան, հավատո՞ւմ եք Երևանում բիզնեսի ազատ մրցակցությանը, իսկ ես նրան կպատասխանեմ. «Կաթից վառվողը, մածունն էլ է փշելով ուտում»: Ավելին՝ տառապանքս փորձ ունի:

Վերջին հեռուստամարաթոնի ժամանակ չերևա՞ց, որ սփյուրքում կան դրամատերեր, նրանցից մեկը, այն հին լիբանանահայ, «Գարուն» կաթնամթերքի ֆաբրիկայի տերը, 5 միլիոն նվրեց Հայաստան հիմնադրամին: Համոզվեցի՞ք, «սիրելի դոկտոր», որ սփյուրքում դեռ կան միամիտ ու ազնիվ վստահողներ Հայաստանի կառավարությանը: Ի՞նչ ասես, մարդը դեռ չի այրվել իր արտադրած կաթից ու մածունից: Հալալ է իրեն, հալալ է եղել ուրեմն նրա լիբանանցի մոր կաթը...

Ինչ վերաբերվում է սփյուրքի «տարրալուծված» լինելուն, դուք արեցիք դա, դուք տրոհեցիք սփյուրքին, «հարգելի պարոն»: Էժան-մեժան մետաղից պատրաստված գունապատ շքանշանների սիրույն, բազմաթիվ գաղափարական ընկերներ՝ տրոհելով տարիների ընթացքում իրենց կողմից ամրակայված կառույցները, զիշեցին իրենց դիրքերը, ինչ է թե իրենց լամբակի վրա, ի ցույց ամենի, փակցված ունենան որևէ նախարարի կամ էլ Հանրապետության Նախագահի կողմից տրված այս կամ այն շքանշանը:

Իսկ գալով նոր սփյուրքին, ասեմ, որ նա է Հայաստանի բնակչությանը պահողը, և ավելին է տալիս, քան կարող էր տալ հեռուստամարաթոնը: Նա ամբողջ տարին, ամսե-ամիս դրամ է ուղարկում ոչ միայն իր հարազատներին, այլև անծանոթ մարդկանց: Էլ չեմ խոսում այն մասին, որ զրեթե ամեն տարի է գնում է Հայրենիք՝ իր խնայողություններով երջան-

կացնելու Հայաստանի երեխաներին ու մանուկներին:

Ուստի, շնորհակալ եղեք սփյուռքին, որովհետև եթե պատահի մի օր, որ սփյուռքը դրամ չուղարկի Հայաստան, ապա վստահ եղեք, որ «Խելազարված ամբոխների» առջև ոչ մի ամբարտակ չի դիմանա...

*Մեպուեմբերի 17, 2017 թ.,  
Լու Անջելես*

## ՊԱՀԱԶԱՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՄՆԱՅՈՒՆ, ՀԱՐԱՏԵՎ ԱՐԺԵՔ

... Եվ այսպես. անցան Հայոց ցեղասպանության նվիրված հիշատակի հանդիսությունները, ծաղկա-մատուցներ, գրական-երաժշտական երեկոներ, և այլն, և այլն: Նորեն քայլեցինք Ուիշիր պողոտայից մինչև թքքական հյուպատոսություն: Գոռացինք, կանչեցինք տարբեր էության կոչեր, ծածանեցինք, ցուցադրեցինք տարբեր բովանդակության պաստառներ: Բազմամարդ բազմությունը մեկ շունչ, մեկ մարմին դարձած, պատվո խնդիր ունի, արժանապատվության խնդիր, ուսնահարված իրավունքների վերականգման խնդիր: Այստեղ արդեն հայի տեղայնության հարց չկա, բոլորն էլ հայ են՝ անկախ բնակության վայրից: Մեկ նպատակ, մեկ պահանջատիրություն:

Հիմնականում Եղեռնից ճռդոպրած և օտար երկրներում հաստատված, սակայն, Հայրենիք ունենալու տեսլականով տառապած և նրա հովանու տակ նոր բույն, օճախ ունենալու երազանքով ներշնչված հայերի ժառանգների, այդ թվում ներզադած հայերի «աղբարիկների», շնորհիվ հայաստանաբնակ հայերը հասկացան, թե ինչպես է, որ այդքան մեծաթիվ հայեր են հայտնվել Միջին Արևելքի, Եվրոպայի և հեռավոր Ամերիկայի երկրներում:

Հասկացան և սկսեցին քայլել՝ արդարություն փնտրելու նպատակով: Եվ ահա քանի տարի է, որ հայը քայլում է արդարության հետևից: Սկզբում կորցրած հողերը պահանջեց հայը, առանց հասկանալու, որ հողը չեն տալիս, այն նվաճում են ուժով, պայքարով և կամ է ապավինելով խոշոր տերությունների խղճին ու շահադիտական նկրտումներին:

Վերջապես հայը հասկացավ, որ եկել է պահը, որպեսզի ոճրագործ թուրքին պարտադրի ընդունելու իր կողմից իրա-

կանացրած ցեղասպանության փաստը, հետո նոր միայն անցնի պահանջատիրության խնդրին:

Առաջին դեպքում մենք որոշակի հաջողությունների հասանք: Աշխարհի գրեթե 28 պետություն ճանաչեց Հայոց ցեղասպանությունը: Երկրորդ դեպքում, որն անմիջականորեն կապ ունի առաջինի հետ, տեղբայլի մեջ ենք և առերևույթ դժվար լուծվելիք:

-Ի՞նչ անենք, նորի՞ց քայլենք, նորի՞ց գոռանք, կանչենք: Լավ, նորից քայլենք, թող այս սրբացած օրը՝ ապրիլի 24-ը մնա մեր ողջ կյանքի ընթացքում: Թեև ամենքս կ գիտենք, որ տարվա ընթացքում մեկ օր քայլելով հարց չի լուծվի:

-Մի քիչ շատ չեղա վ մեր քայլի երկարությունը, ուրիշ նոր ուղիներ չփնտրենք: Եթե հաշվելու լինենք այսքան տարիների ընթացքում մեր աշխարհածավալ քայլի երկարությունը, բոլոր միասին երկրագնդի շուրջ գեր մեկ պտույտ գործած կ-լինենք: Եվ չմոռնանք, որ մեր ամեն մեկ քայլարշավին ի պատասխան, թուրքը և ազերին միասնական ուժերով օրեցօր ավելացնում են հայոց պետականությունն ու ժողովրդին բնաջնջելու մամլիչ մեքենայի արագությունը: Եվ այսքան տարիներից հետո, մենք կարելույն միջոցներով պիտի ջանանք գեր դանդաղեցնելու այդ չարագուշակ մեքենայի արագությունը, լավագույն պարագայում՝ կասեցնելու նրա ընթացքը:

Ապա անամոք, լկտի երդողանին նայեք: Այնքան է առաջ գացել իր անասնական կրքերին հագուրդ տալու գործում, որ ոչ միայն իր յուրայիններին, այլև ողջ աշխարհի մահմեռականներին է հորդորում քեֆեր, խրախճանքներ անել Գերմանիայի և մնացյալ եվրոպական երկրներում:

-Կերեք, խմեր Եվրոպայում, ջանացեք կոտրել-թափել ամեն ինչ, ինչ որ քրիստոնեական աշխարհին է պատկանում, միևնույնն է, շուտով աշխարհը մահմեռական պիտի դառնա, Եվրոպան մերը պիտի լինի,- այս կոչն է, որ հնչեցնում է արևածարավ թուրքիայի նախազահը:

Եվ զարմանալիորեն աշխարհը գրեթե լուր է մնում այս

ցնդաբանության հանդեպ, հավանաբար մտովի հիշելով ոռու քանաստեղծի թևավոր արտահայտությունը՝ «Հիմարին մի առարկիր»:

Առարկություն չանենք, հիմար է ասողը, հասկացանք, բայց անկարելի է մտավախություն չունենալ, քանզի այդ ապուշը կարող է ցանկացած պահի այնպիսի աննկարազրելի հիմարություններ գործել, որոնց արդյունքը հազարների, նույնիսկ միլիոնների մահվան պատճառ լինի: Հիշեք, թե ինչի վերածեց օրեր առաջ Էրդողանի ցնդաբանություններով ոգեվորված խուժանը Լոնդոնի բարեկարգ փողոցներն ու պուրակները, երբ երկրի իշխանությունները փորձեցին օրենք ընդունել անօրեն գաղթականներին երկրից վտարելու վերաբերյալ:

Եվ այս աշխարհակուլ երևոյթներից հետո եկ և պահանջատիրության նոր ուղիներ փնտրիր: Սակայն մենք հայ ենք, տանջված, չարչարված, ոտնահարված՝ նույնիսկ յուրայինների կողմից, բայց ունենք բարձր, վսեմ արժանապատվություն և ոչինչ չպետք է խանգարի մեզ մշտապես և մշտանորոգ միջոցներով հետապնդելու մեր արդար դատը:

Հայատանի պատկան մարմիններին և ժողովրդին դաս տալու հավակնություն չունեմ բնակ սույն գրությամբ, քավ լիցի, միայն լուրջ մտահոգության և մտածումների արդյունք է այս հոդվածը:

Թվարկենք ուրեմն այն միջոցներն ու հնարավորությունները, որոնց շնորհիվ քիչ թե շատ մոտեցած կինենք վերջնական նպատակին: Խնդրեմ սույն հոդվածն ընդունել որպես անձնական կարծիք:

Առաջին. Եթե կուգենք մեր հայրենի ժողովրդին լավագույնս ներգրավել պահանջատիրության համար մղվող պայքարում, ապա դրա միակ ելքը նրա ապրուստը, օրվա հացն ապահովելն է: Ամեն տեսակ դժբախտություն, դավաճանություն, անհանդուրժողականություն մարդու մոտ առաջանում է «հացի» պակասից: Դե եկ այսօր հացի կարոտ մեր հայրենի ժողովրդին դաս կարդա պահանջատիրության մասին: Չի լինի, չի կարող լինել մեր ուզածի պես: Ասել է, թե պահանջատի-

բության պայքարի առյուծի բաժինը, թող ներվի, դարձյալ ընկած է սփյուռքահայի ուսերին:

Վստահ եղեք, որ հայրենի ուսուցիչների (ներառյալ տնօրենները), մեղմ ասված, «ծախսելը» իշխանական թիմին՝ միայն օրվա հացը, աշխատանքը կորցնելու վախից է: Ասել է, թե որքան կարևոր է հացը: Ես, որ սով եմ տեսել, գիտեմ թե ինչ ասել է հացի չգոյություն: Խեղճ Արթուրը հացի զոհ չդարձա՞վ: Ի միջի այլոց, ասեմ որ, հետայսու Արթուրին ոչ թե պիտի կոչել «հաց բերող», այլ՝ «Հաց Արթուր», որովհետև նա հաստատեց հացի սուրբ լինելը և զոհ գնաց հանուն հաց հասցնելուն: Այստեղ մենք՝ սփյուռքահայերս, որ մի քիչ հացի տեր ենք, պարտավոր ենք ավելի՛ մոտից հետևել Հայրենիքի և Ղարաբաղի մեջ անցած-դարձածին: Գիտեմ, որ բոլորն էլ օգնում են Հայաստանի իրենց բարեկամներին և նույնիսկ անծանոթ մարդկանց: Սակայն այս օրերին ավելի ու ավելի է պեսք օգնել նրանց, որպեսզի մի քանի դրամի սիրույն գայթակղության զոհ չդառնան և գործեն միայն խղճի մտոր:

Ինչպես կյանքը ցույց տվեց, մի անգամ ևս հացի համար մեր հայրենի ժողովուրդը ընտրություն շարեց խղճի մտոր և մնաց նույն անհեռանկար վիճակում: Այդ նույն օրերին ազերի Ալիկը տոնախմբության վերածեց ապրիլի 2-ը՝ որպես Ղարաբաղի դեմ տարած հաղթանակի օր:

Ես դեռ անցյալ տարի գրեցի, որ ապրիլյան չորսօրյա պատերազմը մեզ համար պարտություն էր, որովհետև հող կորցրեցինք, հող, որը ձեռք էինք բերել հայի արյամբ: Եվ չես հասկանում, թե ի՞նչ տրամաբանությամբ էին որոշել մեր իշխանություններն այդ օրը շինծու խորհրդարանական ընտրությունները իրագործել փոխարենն այդ օրը նշելու որպես հիշատակի օր՝ այն հարյուրից ավելի անբեղ, անմորոք, անփորձ հայ զինվորների հոգիների համար, որոնք զոհ գնացին չորսօրյա պատերազմի ընթացքում: Մեղմ ասած՝ բարյական չեր այդ օրը շինծու տոնական տրամադրություն ստեղծելը:

Երկրորդ գործոնը՝ պահանջատիրության պայքարն է, որն հիմնականում վերապահկած է սփյուռքին: Այդ գործոնն էլ

ավելի շարժուն դարձնելու համար տարիներ շարունակ շեփորված ցեղասպանությանը նվիրված ֆիլմեր պատրաստելու գործը տեղից շարժվեց: Կան նաև այդ թեմայի հետ առնչվող նվազ կամ ավելի արժեքավոր ֆիլմեր ու գրականություն: Հիմա ընդունված է Ամերիկայից զատ, ուրիշ համայնքներում էլ աշխուժացնելու պահանջատիրության գործոնը: Եվրոպայի հայ համայնքներում օրեցօր ավելանում է Հայաստանից արտագաղթողների թիվը, որոնք արդեն լավագույնս գիտեն Հայոց Ցեղասպանության պատմությունը, և նրանց՝ տեղական պայմաններին քիչ թե շատ հարմարվելուց հետո, հայկական հաստատությունների և եկեղեցու, ինչո՞ւ չէ, նաև Բարեգործականի պարտականությունը պետք է լինի, հոգատար մոտեցումով ներգրավվել պահանջատիրության պայքարում:

Արտագաղթի պատճառով այսօր վերակենդանացած են Ժամանակին ուժացված Եվրոպական բոլոր հայկական գաղութները (*Լեհաստան, Հունգարիա, Ավստրիա, Անգլիա, Ֆրանսիա, Հունաստան, Բուլղարիա, և այլն*): Դրանցում գործում են հայկական բազմաթիվ միություններ և կազմակերպություններ: Չխոսենք Ռուսաստանի մասին, որտեղ երեք միլիոնի հանող հայությունն ապրում է հայաբար, մեր սովորությներին, ավանդություններին հավատարիմ վարք ու բարքով:

Հսկայական ուժ է Ռուսաստանի և Եվրոպայի հայությունը, ում ամեն գնով պետք է ներգրավվել մեր պահանջատիրության պայքարում: Այստեղ է որ մեծ անելիք ունեն հայ եկեղեցին, Հայ Դատը և Հայկական բարեգործական ընդհանուր միությունը: Ժամանակ առ ժամանակ այս ու այն կողմից լսում ենք, կարդում, տեղյակ դառնում որոշ սփոփիչ լուրերի՝ հիշյալ հայ գաղութներից: Սակայն եղածը քիչ է: Արտագաղթած հայերը պետք է դպրոցներ, եկեղեցիներ, կրթական-մշակութային կետրոններ ունենան, որոնցում մեր մատաղ և երիտասարդ սերունդը կարողանա դասախոսների, մանկավարժների և դաստիարակների կողմից ստացած դասերի շնորհիվ, հոգով զգալու, հասկանալու պահանջատիրության եռթյունը:

Երբորդ. այս օրերին պահանջատիրության հարցում պետք է

կարևորել թշնամու հետ «քարեկամություն» խաղալու մարտավարությունը. Այս՝ այս, քարեկամություն, որը շատ ավելի դյուրին է իրականացնել եվրոպական երկիրներում: Ես իմ փորձառությամբ գիտեմ, թե որքան դյուրին է թուրքին խոսք հասկացնելը՝ նրա հետ հաց կիսելով, նարդի խաղալով, ընկեր-քարեկամ ձևացնելով: Այդ ձեռնարկների ընթացքում մտերմիկ ձևով մեջտեղ կարելի է բերել փաստեր՝ անցյալում մեր ժողովրդի զիսին իրենց պապերի բերած չարագործությունների մասին: Իմ ուղևորությունների ընթացքում շատ եմ հանդիպել թուրք մտավորականների, ովքեր չեն խուսափել իմ կողմից զրույցի նյութ ընտրված մեր ցեղասպանության ու պահանջատիրության թեմայից:

Գերմանիայի Ֆրանկֆուրտ քաղաքի օդանավակայանի ճաշարանում, Պոլիսից ինձ հետ ճամփորդող թուրք պրոֆեսորը, ով իմ պատմածներից բավարար չափով պատկերացում ունեցավ Ղարաբաղի մասին, ճաշից հետո, սուրճ խմելու ժամանակ ակնհայտ մտահոգությամբ հարցրեց.

- Կարող ե՞ք ինձ ճշգրտորեն ասել, թե որտեղ է գտնվում Ղարաբաղը:

Ես առանց վարանումի գրիչս հանեցի և ձյան պես ճերմակ կերպասե անձեռողիկի վրա գծեցի Ղարաբաղի քարտեզը՝ ապշահար վիճակում թողնելով մարդուն, ով հավանաբար այդ վայրկյանին մտածում էր, թե այս ինչ անկիրք երաժշտի հետ է գործը: Մի քանի վայրկյան քարտեզը քննելուց հետո ասաց.

- Եվ Ղարաբաղում միայն հայե՞ր են ապրում...

- Այո, միայն հայեր...

- Է, ինչո՞ւ Հայաստանին չեն տալիս...

Իմ բոլոր ջանքերը բավական ճոխ սեղանի ծախսը փակելու համար՝ իզուր անցավ, նա ինձանից ավելի ճարպիկ գտնվեց պետքարան գնալու ժամանակ լուծելով հարցը:

Այս ամենից հետո հորդրս է օտար, մանավանդ Եվրոպայի երկիրներում, քարեկամ խաղալ թուրքի և ազերու հետ, մտերմություն անել պետական գործիչների, առաջադեմ հայցքների տեր անձանց հետ և ճաշի պահին, մի քանի գավաք

թուրքական օդի խմեցնելուց հետո, նրանց գլուխները տաքացած պահերին, առաջ քաշել մեր պահանջատիրության հարցը և կարողանալ ժամանակի ընթացքում, ինչպես ասում են՝ «խոսքերներս քայլեցնել»: Կյանքի փորձը ցույց է տալիս, որ շատ-շատ հարցեր դրական լուծում կարող են ստանալ կերուխումի պահին, մտերմիկ սեղանի շուրջ:

Ես վեց անգամ Թուրքիաում եմ եղել: Ճիշտ է, մշտապես հանդիպումներս մտավորականության հետ է եղել, ովքեր դիմացս նստած, ժպիտը դեմքերին ասել են. «Մոռացեք անցյալը, վերջապես այսօր մեր մեղքը ո՞րն է...»:

Չորրորդ կետը պահանջատիրության պայքարում հետևյալն է:

Ժողովրդական առածն ասում է. «Ուզո՞ւմ ես հաղթել թշնամուդ, ուրեմն գործիր նույն գենքով»: Մենք ոչ միայն նույն գենքը չենք օգտագործում, այլև ոչ մի տեսակ գենք չենք գործածում պատասխան հարված տալու թե՛ ազերուն, և թե՛ թուրքին: Ահա քանի տարի անցել է հայ սպա Գուրգենին Հունգարիայում ազերի Սաֆարովի կողմից գազանային սպանությունից հետո, բայց առ այսօր դրա պատասխանը չենք տվել: Նույնը՝ Հրանտ Դինքի պարագայում: Տասնինգ տարի է Թուրքիայի դատարանը դեռ հանցագործներ է «փնտրում»: Սրանցից ավելի նվաստացուցիչ երևույթ չի եղել հայոց պատմության մեջ: Ի նշ եղավ մեզ, ո վ իսկ մեզնից վրեժինդության ողին: Ինչպէս ս պատահեց, որ այսքան տկար և ստորնաքար2 եղան մեր երկրի տերերը: Ո՞ր են Յանիկյաններն ու ԱՍՍԼԱ-ի տղաները, Մոնթեն՝ Ֆրեզոնյից, ու Լիսաբոնի տղաները, նրանց վերջերս ավելացավ Հաց Արթուրը:

- Ի՞նչ են մտածում, ժամանակը չէ արդյոք նոր Նեմեսիս հիմնելու համար... երբեք պետք չէ մոռանալ, որ մարդ-գազանը միայն ծեծից ու մահից է վախենում: Արժե չէ այս մասին խորհել:

Պարապ-սարապ, մեր անփորձ հուետորաքանությամբ, դիվանագիտական խակ խմացությամբ մեր Հայրենիքը հազիվ թե մի տեղ կարողանա հասնել: Եթե երկրի տերերը մտադիր են

ազատագրված հողերը հանձնել իբր թե խաղաղության սիրուն, ապա բնակ պետք չէ զարմանալ Հայաստան աշխարհի օրեցօր դադարկվելու համար: Այժմ տեղին է հիշել հայկական առածը, ըստ որի «ախորժակը ուտելուց է բացվում»: Ազատագրված հողերը տալուց հետո, ազերիներն աչքը պետք տնկեն Հայաստանին պատկանող այլ հողերին, և այսպես տարիներ շարունակ:

Հայաստանի ժողովուրդը եռակի անգամ հուսախար է իշխանություններից և, ցավալիորեն, օրվա գոյության պայմանները կաշկանդում են, որ նա ել ափյուռքահայի պես կարողանալ լրջորեն գրադարձ պահանջաստիրության հարցով:

Մենք միայնակ ենք, բարեկամ չունենք: Մեր հյուսիսի դրացի-հարևան, իբրև քրիստոնյա հորջորջվող պատեհապաշտ վրացին թույլ է տալիս, որ հայաբնակ Զավախքի շուկայում վաճառվի թուրքական արտադրության կոշիկներ, որոնց ներքանի և կրունկի վրա ստորաբար պատկերված է Տիրոջ խաչելության պատկերը: Մրանից ավելի ցինիկ, զազելի, այլամերժ մոտեցում քրիստոնյա ազգի նկատմամբ անկարելի է երևակայել: Մենք ինչո՞ւ նման «պարապ» բաներով չենք զբաղում՝ որովհետև մեզ հայ են ասում և մենք մեզ ոչ մեկից չենք գերադասում,- ասում է բանաստեղծը:

Այս օրերի համար համահունչ չեն բանաստեղծի այս հանձարեղ տողերը:

Ինչպես վերը նշեցի, թշնամուդ հետ պետք է կովես նոյն զենքով, դա լինի թե՝ իրական կովի պահին, թե՝ կյանքում և թե՝ կենցաղում:

*Օգոստոս, 2018 թ.,  
Հու Անջելես*

## ԱՆՃԱՐԱԿ ՄՏԱՅՆՈՒԹՅՈՒՆ, ԱՆՃԱՐԱԿ ԳՈՂԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Սփյուռքի մեջ ամեն հայ մշտապես մտահոգ է հայ դպրոցի ներկա և ապագա հարատևման հարցով: Նորություն չեմ լինի արած, եթե ասեմ, որ սփյուռքի մեջ ոչ մի միություն, կազմակերպություն կամ էլ դպրոց տնտեսապես ինքնաբավ չէ և չի էլ կարող լինել: Բոլորն էլ տարեվերջին ֆինանսական խնդիրներ են ունենում, որոնք մշտապես հոգում են Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը (այսուհետ ՀԲԸ միություն) և դրամատերերն ու ժողովուրդը:

Օրերս հայտնի դարձավ, որ ՀԲԸ միությունը որոշել է փակել Փաստինայի շրջանի միակ՝ Վաչե և Թամար Մանուկյան երկրորդական վարժարանը և որպես քույր վարժարան, միացնել «Քանոզա պարկում» (Հու Անջելես) գտնվող Մանուկյան-Դեմիրճյան վարժարանին:

Վստահ եմ, այսօր ամեն հայ, որտեղ էլ որ լինի, կամա թե ակամա, չիմանալով անզամ, թե որն է ՀԲԸ միությունը, ցասումով պետք է լցվի՝ իր ներաշխարհը խոռվող նման որոշման համար: Ցավալի, ներեցեք, անմտածված որոշումները սովորական և բնորոշ են դարձել ՀԲԸ միության գործումնեռությանը վերջին 30 տարվա ընթացքում, երբ բնավ հաշվի չի առնվում հասարակության, այս պարագայում՝ վարժարանի աշակերտության, ծնողների և ուսուցչական կազմի կարծիքը:

ՀԲԸ միության վերին վարմնի՝ Հակոբ Պարոնյանի ասածի պես, «Ազգային Զոցերու» մասին գնահատական տալու լավագույն միջոցն ըստ իս, Խրիմյան Հայրիկի հետևյալ տողերն են.

«Լում, բերանս հողին տամ, թուլլ ու զրիչ սիրեմ, վասն զի, փորձառությամբ հասկցա, որ այս աշխարհին մեջ մարդ մեծ պաշտոնի գլուխ անցնելով կարող չէ այնպես մեծագործել, ինչպես յուր ազգին փափազն է...»:

Հստ ՀԲԸ միության ղեկավարների, Փաստինայի երկրոր-

դական վարժարանը փակելու հիմնական պատճառը նյութական վնասն է և աշակերտության թվի նվազումը: Եվ ո՞վ է այն ասողը, ՀԲԸ միության նախագահ Պերճ Սեղրակյանը, թեև միիարդատեր Վաչե Մանուկյանը 11 միլիոն դրամի նվիրատվություն է արել վարժարանին՝ «ՀԲԸ միության Վաչե և Թամար Մանուկյան երկրորդական վարժարան» անվանակոչության համար (այս դպրոցի կողքին մի շենք-հանդիսարան է կառուցված, որտեղ առայժմ գործում է Գրիգոր Մաթամյանի թատերախումբը):

Այս պարագայում հարց է առաջանում, թե ինչո՞ւ անվանակոչության համար 11 միլիոն դրամ նվիրաբերող միիարդատերը Բարեգործականի հետ տեր չի կանգնում վարժարանին, եթե Վերջինիս տարեկան երկու միլիոն գումարի բացը փակելու հարցը իր համար ոչինչ չարժե:

Խոշոր դրամատեր ազգային բարերար Վաչե Մանուկյանը հսկայական նպաստ է բերել Հայաստանի վերազարթոնքին՝ 65 միլիոն դրամ ներդնելով Հայաստանի տնտեսության մեջ: Պարզապես հիշեցնենք, որ նա Անգլիայում մեծագումար անշարժ գույքի տեր է, համաշխարհային չափանիշով մեծահարուստներից մեկը: Նրան է պատկանում ճանաչված HSBC համաշխարհային բանկը, որը մասնաճյուղեր ունի նաև Երևանում: Վերջինիս 30 տոկոսը նույնպես իրեն է պատկանում: Լու Անջելեսում նրան է պատկանում մի Զիարշավարան և UCLA հսկա հիվանդանոցի երեք բարձրահարկ շենքերից մեկը: Ծանր հիվանդությանս բերումով, ես 11 տարի և այսօր ել, մշտապես հսկողության տակ եմ այդ հիվանդանոցի կողմից և ամեն անգամ այնտեղ հաճախելուց թիվ 100 շենքի ճակատին կարդում եմ «Vache & Tamar Manukian» անունը և հպարտությամբ է լցվում հոգիս: Իսկ այս օրերին, եթե հիշատակված դեպքերի պատճառով զիշերները չեմ քնում, մտածում եմ թե՝ լավ չէ՞ թիմի արդյոք, որ անվանակոչության համար 11 միլիոնը նա տված լիներ Փաստինայի երկրորդական վարժարանի հարատև գոյատևման սիրուն՝ «թեթևացնելով» Պերճ Սեղրակյանի «բեռը»...

Հայկական իրականության մեջ բոլորից շատ դրամ ունեցող հաստատությունը ՀԲԸ միությունն է, որի տնօրենը 2002 թվականից իրավաբան Պերճ Սեղրակյանն է: Ինչպես նախորդ նախագահ Լուիզ Սիմոնը, ինքը ևս «ձեռնիստ գանձապահ» է՝ սփյուռքի նկատմամբ:

Ժամանակին Լուիզ Սիմոնը սկսեց Սփյուռքի որոշ կառույցների «ջարդը»: 1980-ական թվականներին Հոլիվուդում փակվեց Լարչմոնտ պողոտային վրա գտնվող ՀԲԸ Միության կենտրոնը, որտեղ գործում էին դեկավարությանս տակ գտնվող փառահեղ «Սարդարապատ» երգի և պարի 100 հոգիանոց խումբը և Ժիրայր Բաբազյանի «Արտավազդ» թատերախումբը, որոնք 4-5 տարի շարունակ՝ լեկ լեցուն սրահներում, մի քանի տասնյակ ելույթներով հոգեկան ու բարոյական լիցք ներարկեցին հայերին, հիմնականում Հայաստանից արտազադրած հայրենի երկրի կարոտով տառապող հայորդիներին:

Այդ ժամանակից գրեթե դադարեց ՀԲԸ միության մշակութային գործունեությունը ողջ Լոս Անջելեսի տարածքում:

Որոշ ժամանակ անց ծախվեց Հոլիվուդի ՀԲԸ միության կենտրոնը: Դրան հաջորդեց Թեքեյան միության անվան տակ գործող Հոլիվուդի Արշակ Տիգրանյան ամենօրյա հիանալի դպրոց-համալիրը, դարձյալ շատ կասկածելի՝ աշակերտության թվաքանակի նվազման և նյութական վնաս կրելու պատճուարանությամբ: Արդեն 20-25 տարի է ՀԲԸ միությունը ոչ մի հաստատություն չունի Հոլիվուդում: Իսկ Փաստինայում հիմնված ՀԲԸ միության կենտրոնի և վարժարանի շնորհիվ այնտեղ գնալով շատացավ հայերի թվաքանակը, իսկ հիմա, ինդրեմ, համայնքը կանգնեց կռտրած տաշտակի առօս:

Այժմ գանք 15 տարուց ի վեր չարշրկվող նյութին՝ Կիպրոսի Մելքոնյան Վարժարանին:

2005 թ., երբ երևան եկավ ՀԲԸ միության կենտրոնական մարմնի որոշումը Կիպրոսի Մելքոնյան կրթական հաստատության փակման մասին, ես անմիջապես անդրադարձաթեմային և գրեցի «Մելքոնյան»-ը նպարատուն չէ, ծախու չի

հանուիր» հոդվածը՝ շատ էլ վստահ չինելով, որ «Նոր օր» թերթը կտպի: Սակայն խիզախ, ջերմ հայրենասեր Վաչե Մեմերճյանը տպեց նյութը: Դժվար չէր ենթադրել, որ բարեկամիս «զյուխը պիտի չշոյեր» ՀԲԸ միության վերին մարմինը, ինչը ապագան ցույց տվեց...

Այդ հոդվածից հետո (թերևս դրանից առաջ էլ, ես տեղյակ չեմ, - ՀԵՆ. Ա.) համազգային շարժում սկսվեց ՀԲԸ միության ազգաքանդ որոշման դեմ: Դեռ բոլորովին վերջերս Հայաստանի մի խումբ «մելքոնյանցիներ» նամակ ուղարկեցին Հայաստանի Ազգային ժողովին նախագահ Արարատ Միրզոյանին՝ Մելքոնյանը վերաբացելու խնդրանքով: Ահա մի քանի տող այդ նամակից, որը տպագրված է Հայաստանի «Առավոտ» օրաթերթի 2019 թվականի հուլիս 13-ի համարում.

«... Մեր ազնիվ պայքարը ՀԲԸ միության նախագահ Պերճ Մելքոնյանի դեմ է՝ միտված ամբողջ աշխարհի հայերի համար հզոր կրթօջախը վերաբացելուն: Մենք հավատում ենք, որ խելացի և համաշխարհայնացված հայ երիտասարդներ կրթելու ամենաուղիղ ճանապարհը գործուն և ծաղկուն կրթական հաստատություններ ունենալն է: Մենք հավատում ենք, որ ուժեղ և կենսունակ Սփյուռքը ուժեղ և բարգավաճ հայրենիքի գրավականն է»:

- Խեղճ և միամիտ տղերք, ի՞նչ պիտի անի Արարատ Միրզոյանը և կամ էլ Հայաստանն իր պետական կառույցներով, երբ ՀԲԸ միության տերն այսօր Պերճ Մելքոնյանն է և իր վարձկան մարմինը, ովքեր մտադիր չեն հասկանալ 1650 մելքոնյանցի շրջանավարտներից մեկի՝ հավատարիմ ու մոլեռանդ մելքոնյանցի Վարդգես Գուրույանի, մեծագույն հպարտությամբ ասված խոսքը.

- Մելքոնեանցի ըլլալը չի բացատրուիր, այլ՝ Կ'ԱՊՐՈՒԻ...

Լավ էլ նկատել են Հայաստանի մելքոնյանցիները՝ «Նյութական հետաքրքրություններ» միտքը բարձրաձայնելով: Հարցնենք իրեն.

- Ի՞նչի պետք է ծառայի Զեր «Նյութական հետաքրքրու-

թյունը», պրն. Սեղրակյան: Սփյուռքի համայնքների ո՞ր կառուցք կամ դպրոցն է հարվածի տակ: Ի՞նչ ծրագրերով պիտի փորձեք ուժացնել առանց այն էլ Բարեգործականի ուժացած գանձանակը, որը օրեցօր, ամիս առ ամիս, յուրաքանչյուր տարի տարի ավելանում է ծնյալ սփյուռքահայ մեր տատիկների և պապիկների կտակած դրամներով: Այդ կտակների կարգադրությամբ, դրանք մշտապես Զեր հաստատության գանձանակի մեջ են հոսում:

Դատարկ խոսք չէ ասածու, պարոն Պերճ: Ես օդի մեջ պարապ կրակողներից չեմ և չեմ էլ զղում ասածներիս համար, մանավանդ՝ մեկի առջև, ով ի լուր աշխարհի հայտարարում է, թե Մելքոնյանը փակելով՝ հաջողություն է արձանագրվել, և զիտե՞ք ինչու, որովհետև պարոնը բարձրաձայնում է.

- Սփյուռքահայ ներկայիս սերնդին հայեցի կրթությունը պետք չէ՝ ոչ ավել, ոչ պակաս: Եվ ի՞նչ ենք ուզում մենք այս մարդուց, ով նման համոզմունք ունի:

Ուրեմն պետք չէ զարմանալ, թե ինչու Փասատինայի վարժարանը զալիք ուստարուց «Քանոզա պարկ» պետք է չվի: Վայ մեզ, վայ, որ տերդ մանուկ է ...

Զեր AGBU պարբերականում մշտապես տրվում են Բարեգործականի նվիրատուների անունները, աշխարհի տարբեր երկրներից բնիկ սփյուռքահայ մեր տատիկների, պապիկների կտակով փոխանցված ինչը և գումարի չափը:

Հայաստանի անկախացումից հետո ՀԲԸ միությունը երես է թերել սփյուռքից, սփյուռքի կառույցներից, իբրև թե ուշադրությունը սևեռելով Հայաստանի վրա. հասկացանք, շատ լավ. ՕԿ-ինչպես կասեր ամերիկացին, հապա մե՞նք՝ սփյուռքահայերս:

Ի՞նչ ասել է դպրոց-վարժարան փակել: Ինչ է, դրամ չունե՞ք, պրն Սեղրակյան: Ո՞ւմ համար, ո՞ր օրվա համար եք տարիներ շարունակ ուժացնում հայ ժողովրդին պատկանող ՀԲԸ միության գանձանակը, ասելով, թե՝ «նյութական վնաս կբերե» Փասատինայի վարժարանը:

Ի՞նչ է, դպրոցից ել շահի ակնկալիք ունեք: Դպրոցը Նեսոյի «խանութը» չէ, որ շահ բերի: Աշխարհի վրա որևէ դպրոց շահ չի բերում, ինձից շատ ավելի լավ գիտեք դա: Դպրոց պահելու համար դրամ է պետք և շատ դրամ:

Ինչ է, 90 տարի շարունակ Մելքոնյանը ինքնաբա՞վ էր, կամ՝ եկամտաբե՞ր: Ո՛չ, մարդիկ երազ ունեին, հավատ, որ օրերից մի օր անկախ երկիր կդառնա Հայաստանը և տնտեսության տարբեր ճյուղերի մասնագետների կարիք կունենա:

Էլ չեմ խոսում այն մասին, որ ՀԲԸ միությունը պարտավոր է ոչ թե փակել, այլ նորանոր դպրոցներ բացել պարզ աշխատավորի զավակի համար՝ մատչելի տարեվճարով, չունեորների համար՝ կ՝ անվճար ուսուցումով՝ Սփյուռքի ամբողջ տարածքում առկա մեծաթիվ հայ համայնքներում:

Ամոր է դրամի մասին խոսելը: Մեր գրյատևման, նոր և գալիք սերունդների ազգային ինքնությունը պահենու, հայեցի դաստիարակելու սրբազն պարտականություն ունենք: Բոլորս կոչված ենք զորացնելու Սփյուռքը՝ ի շահ Հայաստանի: Նման հրամայականի պարագայում դրամի մասին հիշելն անգամ անհարմար է:

Այսպես դպրոց քանդելու Ձեր ձախողակ գործողություններով, խարիսկելու, թուլացնելու եք Սփյուռք-Հայրենիք կապի հիմքերը: Մի նեղվեք, ես ճշմարտությունն եմ ասում՝ մամուկ ազատության ջատագով այս հզոր երկրում:

Այս առնչությամբ, 2-3 տարի առաջ ահա թե ինչ է գրել Փանոս Թիթիզյանը. «Հիմա ժամանակն է, որ ՀԲԸ միության առանցքային ուշադրության առարկա դառնա Հայ Սփյուռքը: Եթե այս բոլոր մարտահրավերների դիմաց Բարեգործականը չկանգնի, հապա ո՞վ պիտի կանգնի: Եթե ոչ հիմա, ե՞րբ»:

Սարգարեական խոսքեր: Ետ կանգնեք Ձեր անձարակ որոշումից, պրև Պերճ Մելքոնյան, թեև, ասվում է, թե այն վերջնական է: Երբեք ուշ չէ հրաժարվել այս ազգադավ, ապազգային որոշումից: Իր բազմաթիվ հրաշագործումների վարժ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը

այլևս իրավունք չունի նման սխալներ գործելու: Դետք է մնա  
և հարատև գործունեությամբ շարունակի Փաստինայի  
Վաշե և Թամար Մանուկյան երկրորդական վարժարանը:

Միայն ազգի, ժողովրդի ձայնին անսալով կարող եք հուսալ՝  
թե Զեր անունը ապագայում կզրվի Պողոս Նուպարի և Ալեք  
Մանուկյանի հետ միասին: Արժանացե՞ք այդ պատվին:

Դեկտեմբեր 18, 2019 թ.,

Հոս Անջելես

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅԸ ԵՎ ՆԱԻՐԱ ԶՈՀՐԱԲՅԱՆԻ «ԼԱՓԸ»

... Այս որքան թուք ու մուր, հայիոյանքների տարափ տեղաց քո (*հոգնակիով չեմ դիմելու, դու դրան արժանի չես...*, -*չեն Ա.*) զլիսին ու դեռ շարունակվում է տեղալ ավելի ահագնացած, շատ անզամ բարոյական չափանիշերի շրջանակից դուրս արտահայտություններով, և դեռ շատերը նոր են հասկանում, թե ինչպիսի թույն ես թափել Հայաստանից արտազադրած քո հայրենակիցների հասցեին՝ նրանց անվանելով «Հափամանից մի կտոր լափ ուտողներ»:

Եվ ինդիքն այն է, որ դու այդ նողկալի արտահայտությունն արել ես ոչ թե բանավոր, ասենք՝ ինչ որ վայրկյանի ազդեցության տակ, այլ գրավոր ընթերցման ժամանակ, այն էլ՝ Ազգային ժողովի հերթական նիստի ընթացքում: Դա նշանակում է, որ այդ միտքը քո ուղեղում ամրագրված համոզմունք է: Դա փաստվում է նաև այն հանգամանքով, որ, երբ քեզ մտերմաբար դիտողություն են արել այդ տմարդի արտահայտության համար, դու կրկին անզամ, առանց մտածելու հետևանքների մասին, պատասխանել ես՝ «Լավ եմ արել...»:

Այս ի՞նչ ատելություն է: Դու ծնվել ես իմ տղաների ծննդյան տարեթվերի միջնամասում՝ 1965 թվականին, և հոր իրավունքով եմ քեզ դիմում՝ առաջին դեմքով:

Երբ հաստատվեցինք Լու Անջելեսում, տղաներիցս մեկը 15 տարեկան էր, իսկ մյուսը՝ 13: Մենք՝ ըստ օրենքի, կարող ենք օտսվել քո ասած կառավարական «լափամանից», բայց մենք նախընտրեցինք առաջին իսկ օրվանից սեփական քրտինքով վաստակել մեր «լափը»: Փոքր տղաս՝ Արամը, դասերից հետո աշխատում էր լիբանանահայի պատկանող բենզինի լցակայանում, իսկ մեծը՝ պարսկահայի մարքետում՝ որպես հավաքարար, լվանալով խոշոր-խոշոր սառնարաններում սաոցակալած մսեղենը:

Իսկ ես՝ Անասյանս, կիրակի օրերին վարձած խոշոր մեքենայով, 3-4 երիտասարդների տանում էի Ֆրեզնո՛ խաղող հավաքելու: Երկու-երեք ժամ մնում էի մեքենայի մեջ՝ մինչ նրանք բարձրակարգ որակի խաղողով լի արկերը կտեղավորեին: Ես վարորդի դեր էի կատարում և գործ չունեի նաև իրացման հետ: Շատ արագ, գիշերվա մթին տղաները Հոլիվուդում իրացնում էին ապրանքը իրենց դրացիների, ընկերների շրջապատում և ուշ ժամի մեր տուն էին բերում ինձ հասանելիք գումարը:

Այս պատմածու նրա համար էր, որ դու իմանաս թէ ինչ տառապանքներով ենք մենք, ինչպես և բազում արտազադրածներ, զերոյից սկսելով տուն-տեղ դարձել, զավակներին վճարովի հայկական վարժարան ուղարկել, և, ի վերջո բարվոք սեփական տան տեր դարձել:

Ո՞ւմ վրա ես թափում քո մաղձը, ինչի՞ց դրդված, 8-9 միլիոնանոց սփյուռքահայության վրա, չէ որ նրա գոյությամբ և գորությամբ է պայմանավորված նաև Հայաստանի գոյությունը, ներկան և ապագան:

Ժամանակին Լևոն Տեր Պետրոսյանը մեզ «նարինչ ուտողներ» անվանեց, որը այս երեսուն տարվա ընթացքում մի կերպ «մոռացվեց»: Վատահ եմ, ինքը զղացած կիմնի իր այդ արտահայտության համար: Իսկ քո արարքը չի մոռացվի:

Կարևորը՝ անուն թողնելն է.- սա իսկապես գիտության, մշակույթի յուրաքանչյուր գործչի միանգամայն ընդունելի երազանքն է: Դու, Նահրա, քո «լափ»-ով մտար պատմության մեջ ու «կերտեցիր» քո անունը, և այնքան արագ, որ նոր-նոր ենք ուշքի գալիս, միմյանց հարցնելով, թէ սա ի՞նչ փոթորիկ էր: Հիմա կարող ես հանգիստ քնել, մինչ այդ շմոռանաս գեղեցկության սրահում դեմքդ լոզել մողելներին հատուկ քսուկ-մսուկներով, մանավանդ որ առջևում ջրի ճամփա դարձրած Ստրասբուրգն է, որի քաղաքապետն այս օրերին չփրածդ սփյուռքահայ 30-ամյա Ժաննա Բարսեղյանն է, իսկ որ Փարիզ գնաս, հեռու չէ, քաղաքի ամենաշարժուն՝ 15-րդ վարչական շրջանի դեկավարն է դարձյալ հայուիի, Անուշ Թորանյանը:

Բա՛, սա է սփյուռքահայը, սփյուռքի երիտասարդ սերունդը:

Այ տնաշեն, Լու Անջելեսի հարյուրավոր «բումժերն» (անտուն, անտեր) անգամ անոթի չեն: Անոթի, սոված մարդ չկա մեզ մոտ: Ամոթ է նույնիսկ ուտելիքի մասին խոսելը: Այդ Հայաստանում է, որ ուտելիքը մարդու համար առաջին մտահոգության առարկան է: Եվ այդ առարկան, այդ, ձեռք բերելու համար է, որ նա՝ անկախության առաջին օրերից սկսած, 30 տարի շարունակ, անզորությունից, անորոշությունից ու անգործությունից դրդված ձգոում է փախչել, հեռանալ իր ծննդավայրից: Իսկ մինչ Հայաստանի անկախանալը, 1970-80-ական թվականներին, տեղի ունեցած արտագաղթը բնավ նման չէ անկախության տարիների արտագաղթին: Նախկին արտագաղթածները բնավ ել Նախրայի անած «Լաֆի» համար չեն, որ թողել են Հայրենիքը, այլ՝ գաղափարի, կոմունիստական կարգերի, անազատության և վիրավորված արժանապատվության համար են թողել Սովետական Հայաստանը:

Եվ նրանք, բոլորն ել տնտեսապես ապահովված են եղել, ինչպես և մեր ընտանիքը, որն ունեցել է բարվոր ապրելակերպ, հիանալի բնակարան, ավտոմեքենա և շրջել բազմաթիվ երկրներ, նույնիսկ՝ Թուրքիա:

Այդ արտագաղթողների զգալի մասը եղել են մտավոր աշխարհի ներկայացուցիչներ (զիտնականներ, բժիշկներ, արվեստագետներ, ինժեներներ, դասախոսներ), ովքեր համար աշխատանքով այս ծովածավալ երկրում գտել են իրենց տեղը և՝ 30 տարուց ավելի իրենց մասնագիտությամբ (բժիշկներ փաստաբաններ, գերազանց արհեստավորներ, բիզնեսատերներ) սպասարկում են ոչ միայն իրենց հայրենակիցներին, այլև՝ օտարների: Ես իմ տանը երկու տարի պահել եմ «հայրենափախ» մի երտասարդ ինժեների, ով ներկայիս իր կիսատ-պոատ անզերենով, դեկավարում է մի հսկայական օդանավաշինական գործարանի բաժիններից մեկի գլխավոր ինժեների պաշտոնը՝ մեզ համար առասպելական թվացող աշխատավարձով:

Այնպես որ, Նախրա Զոհրաբյան, զգույշ եղիր Սփյուռքի հետ:

Դու չգիտես, չես ճանաշում սփյուքահային, ով ավելի հայ է, քան դու, մեկ էլ քո համազործակից Գևորիկը (Գնորդ Պետրոսյան):

Գուցե և կլինեն մարդիկ, որոնք կասեն, թե վայե՞լ է Մաեստրոյին, որ նման որակումներ է տալիս պետական, քաղաքական գործչին՝ այո, վայել է, որովհետև նա վարկարեկել, ստորացրել է ողջ Սփյուտքին, որն ապրում, շնչում է Մայր Հայաստանով:

Քո ներողություն խնդրելն արժեք չունի: Քո վարմունքը գիտե՞ս ինչի է նման: Ասեմ. մի առած կա. երբ կոտրված հայսապակե սափորը սոսնձվում և նախնական տեսքի է բերվում, մինչույնն է՝ սոսնձված տեղերը հավիտյան մնում են:

Ինչպես երևում է, դու բավական հեռու ես իրականությունից: «Լափ» հասկացությունը վաղուց է դուքս եկել մեր բառապաշտից, տիկին Նաիրա: Աշխարհի բոլոր առաջատար երկրներում, այսօր արդեն Հայաստանում էլ, շներն ունեն հատկապես իրենց համար պատրաստված ուստելիքներ և ապրում են մարդկանց նման: Ունեն իրենց ճաշացանկը, իրենց բժիշկը, հիվանդանոցը և գերեզմանոցը: Ավելի լավ չէ՞ որ լինի, որ դու՝ որպես լրագրող, մի ուրիշ բար գունեիր սփյուտքահային վարկարեկելու համար, ասենք՝ «հայրենափախ» կամ էլ՝ «մուրացկան»: Չե՛, ո՛չ, մեզ մոտ՝ Լու Անջելեսում, ոչ հայրենափախ կա և ոչ էլ մուրացկան: Հայաստանից, այո, կան ժողովրդին 20-30 տարի թալանած հայրենափախ միլիարդատերեր, ովքեր, սակայն, հիմնականում առժամաբար են իրենց ապահով զգում Պուտինի թևի տակ:

Եթե չեմ սխալվում, Նաիրա, դու խոսել ես նաև Հայոց լեզուն մաքրելու մասին: Կարծիք կա, որ կարևոր հայերեն խոսելն է, կարևոր չէ, թե դա որքանով է հայերեն: Ես երկու օրինակ կրերեմ հեռուստահաղորդումներից և դու, որպես փորձված լրագրող, ապագայում լրջորեն կանդրադառնաս այդ նյութին: (Հիշեցնեմ, որ ես, որպես լրագրող, 1957 թվականից սկսյալ ՍՍՀՄ լրագրողների միության անդամ եմ եղել և առաջին թղթակիցներից մեկը նորաստեղծ «Երեկոյան Երևան» օրա-

թերթի): Այսպես ուրեմն.

Երկու հաղորդավար (տղամարդ և կին) հերթական խաղ-հաղորդման ավարտին, տղամարդն՝ ի լուր աշխարհի, դիմում է հաղթողին.

- Պիցան հետևից գալիս ա...

- Գնացեք ձեզ կշտացնելու,- ավելացնում է կինը:

Հաջորդ գավեշող իմ «ՆԱ և ՆԵ» երգիծական շարքից է՝ մի հատված ծնողին ուղարկված բռուցիկի բռվանդակությունից.

«Միակ ծրագիր աշակերտների ՎԱԽՃԱՆ-ՏԱՐԵԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ», Զեր ՆՎԻՐԱՏՈՒԹՅՈՒՆԸ դպրոց ԲԵՐԵՔ դեկտեմբեր 5. առաջ կամ ՀԵՏԵՐՆԻԹ բերեք երբ ՔԱԶ ընտանիքի տօնական ուրախ ԵՐԵԿՈ դեկտեմբեր 5-ին»:

ՆԵ,- Ի՞նչ կուզեիր, որ ըլլա... դեռ ք.ք.-մաք, նորեն հայու հոտ կա մեջը... վաղը մյուս օր այդ հոտն ալ պիտի չունենանք...

- Ի՞նչ անենք, տիկին Նաիրա, ընդունե՞նք նման այլանդակ շարադրությամբ ու ահոելի տառասխալներով սրտխառնուք առաջ բերող «հայերենը», թե՝ պախարակենք ու համաժողովրդական պարավանքի ենթարկենք:

Այս հարցն էլ որպես մեղմացուցիչ հանգամանք ընդունիր իմ՝ քո հասցեին արված իրավացի մեղադրանքնիր առնչությամբ:

Չեմ ուզում ավելին ասել, լրագրի էջերը այդ հնարավորությունը չեն տալիս:

Այս մի քանի տարին, հիմնականում Թավշյա հեղափոխությունից հետո, մշտապես հետևում եմ Հայաստանի քաղաքական վայրիվերումներով լի կյանքին և միշտ ինձ հարց եմ տալիս, թե ինչո՞ւ է Նաիրա Զոհրաբյանը անընդհատ զայրալից, առանց ժպիտի կանգնում ամբիոնի առջև, ինչպես նաև նույնքան անշնհորք ձևով իրեն պահում հասարակ ժողովրդի հետ հանդիպումներ ունենալիս: Պատճառն իր խոստովանության մեջ է: Ահա թե ինչ է գրում նա իր մասին.

- «Տարիներ շարունակ ես ընկալվել եմ որպես խիստ, ջղային ու ազրեսիվ (գուցե՝ հարձակողական, - ՀԵՆ. Ա.),

իրականում դրա հակապատկերը լինելով։ Ես շատ խոցելի եմ։ Մարդ պիտի կարողանա ճիշտ ժամանակին իր տեղը զիջել առավել պատրաստվածին»։

- Բրափո, ուրեմն ճիշտ ժամանակն է, որ դու քո տեղը զիջեք «առավել պատրաստվածին»։ Սակայն չմոռանաս քեզ հետ տանել Գևորիկին՝ Գևորգ Պետրոսյանին...»

*Հուլիս 11, 2020թ.,  
Լու Անջելես*

# ՀՐԱԳՐՈՂ ՄԱՐԳԱՐԻՏԱ ՄԻՄՈՆՅԱՆԻ ՄԱՂՁԸ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

... Հենց սկզբից անթաքույց պժգանքով (զզվանք) կարդացի ազգությամբ հայ ոուսական քաղաքացիությամբ ճանաչված, ոուսական լրագրող Մարգարիտա Միմոնյանի թույնով լեցուն կոչը՝ ուղղված Հայաստանի, իր կողմից հորջորջված «ռոպեական» իշխանությանը: Որպես լրագրող, այն էլ հայտնի, միթե դու չգիտես, տիկին, որ իսկական դեմոկրատական երկրի իշխանությունը ժողովրդին է պատկանում, կնշանակի, որ քո կոչը վերաբերվում է նաև Հայաստանի ժողովրդին, որովհետև նա է ընտրում իշխանությանը, որը ժողովրդի կամքն է կյանքի կոչում: Այս քո բբամիտ ձամարտակությունը հայ ժողովրդի ցասումից ու արգահատանքից խուսանավելու անձարակ, անհաջող փորձ է: Ինչո՞ւ է անհաջող, որովհետև 30 տարի իշխանությունների՝ ստրուկը լինելով, իշխանությունից անջատ, մի կերպ գոյությունը քարշ տվող հայաստանցին երկու տարի է, որ իշխանությունների հետ է և հազիվ է «զեզուն բացվել», որպեսզի քո ասած «գոմաղբով» ամբողջացնի ցնդաբանությամբ լեցուն քո ուղեղը:

Քո պաշտած Քոչարյանի օրոք ո՞վ կհանդգներ թթու խոսք ասել իշխանության հասցեին: Եվ դու ժողովրդից խլած նյութական միջոցներով միլիարդատեր դառած հանցագործին պաշտպանում ես և անլուր լուտանքներ թափում Հայաստանի իշխանությունների զլիկին, որ «համարձակվում» է նրան բանտ առաջնորդել: Այս, դու ի՞նչ գիտես նրա և Հայաստանի մասին: Դու պարզապես գործիք ես, և ես վստահ եմ, որ դու շարժվում ես ՄԵԾԻ թելադրանքով. չէ՞ որ նա ՔՈՉ-ի ընկերն է...

Լրագրող ես և լավ լրագրող, մի լսիր քո վերադասին, խոսիր ժողովրդի հետ, ոչ թե կուրորեն կատարիր վերադասիդ հրա-

հանգները և անտեղի անեծք թափել մի տուր քո զլսին: Լավ չի լինի, որ վերադառնաս Կուբան քո հարազատ միջավայրը, և տանդ խաշ եփելու փոխարեն, երկիարկանի ռեստորանումդ խաշ հյուրասիրես Կուբանի հուժկու կազակներին: Սորոսի տված դրամով Ամերիկայում ուսանելով և գրեթե տաս տարի ապրելով, դու չուվորեցի՞ր, որ «ստի ոտքերը կարճ են»:

Քո գրած կոչն ամբողջովին հերյուրանք է, փշոց, երևակայության արդյունք: Քո հրահանգչի հրահանգով ես դու թխել այս թերմացը: Դու, եթե քեզ հայ ես համարում, դու չեիր կարող ԹքԵԼ Հայաստանի իշխանությունների, որ միևնույնն է՝ Հայաստանի ժողովրդի վրա: 1828 թվականից սկսած Հայաստանը երբեք ու երբեք չի բքել «ոռու բարեկամների դեմքին»: Մոռացե՞լ ես մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանի «օրինվի էն սիհաթը, որ ոռուսը ոտքը դրեց հայի հողին» արտահայտությունը: Ռուսը դրել է ոտքը ու 200 տարի չի հանում, հակառակ՝ գնալով է ավելի է ամրացնում մեր հողին՝ տիրանալով մեր հարստություններին՝ չնայած լեզիտիմ (օրինական), 30 տարվա միջազգայնորեն ճանաչված անկախ երկիր է Հայաստանը, հավասարը-հավասարի իրավունքով էլ կողք-կողքի է նստում Ռուսաստանի հետ՝ միջազգային ժողովներում:

Ի՞նչ է, Հայաստանը իրավունք չունի՞ սեփական կարծիք ունենալու, ինքնուրույն որոշումներ կայացնելու: Էլ ո՞ւր մնաց ժողովրդավարությունը:

Լավագույնս իմանալով Ռուսաստանի՝ շատ անգամ սովետական մտայնությամբ առաջնորդվելը, ես զիտեի, համոզված էի, որ օրերից մի օր ոռուները մեզ երեսով են տալու Ղրիմի հարցին չանդրադառնալու համար:

Իսկ Ռուսաստանը մի խոր ասո՞ւմ է մեր պահանջատիրության մասին կամ՝ երբեւ ասե՞լ է: Ահա, քքներիս տակ է Կարսի պայմանագրի 100-ամյակը, եկել է այն վերանայելու ժամանակը, սակայն ոչ մի ձայն-ծպտուն չկա: Եթե իսկապես քեզ հայ ես համարում և լայն կապեր ունես վերևների հետ, սրա մասին զրի՞՛ Մարգարիտա, չ՞որ մեր Հայրենիքի կեսը Արաքսի այն կողմում է և այնտեղ է, որ ինչպես ինքդ ես ասում՝ «Թուրքերը

տատիս աչքի առաջ մորթել են նրա ամբողջ ընտանիքը»:

Դու ասում ես, որ Հայաստանի «համացանցային գրքերը գոմաղբով աղտոտում են քո սոցցանցերը»: Ճիշդ է, ես կ նայեցի, սուկալի շատ, հաշվել հնարավոր չեմ: Սա եիր ուզում: Ո նոց ես դուրս գալու դրա տակից: Որքան իմացա, ամուսինդ լիովին համաձայն է քո սրտիսառնուր առաջացնող մտքերին, ուրեմն, պիտի ընդունել, որ նա կ է քեզ նման մեղավոր:

Ի միջի այլոց որպես կես հայի, արժե լրւսաբանել, թե ինչ ասել է գոմաղբ (աթար): Դա հայ զյուղացու համար ձմեռվա լավագույն վառելիքն է և այն այրելիս, բնավ տիհած հոտ չի արձակում, որովհետև այն «արտադրող» անասունները սնվում են հայաստանյան դաշտի անարատ խոտով ու բուսականությամբ: Այսպես որ, ուրախ եղիր, որ քեզ այպանողները կղկղանքով չեն լցրել քո «գոմաղբով» լի սոցցանցերը...

Ասեմ, աղջիկ ջան, որ ես 70 տարվա լրագրող եմ և երբեկ նման բառեր չեմ օգտագործել որևէ մեկի հասցեին, թեև եղել են և հիմա կ կան նմանները: Եվ հիմա, ամաչում եմ ինքս ինձնից: Սակայն, ինչպես ասում է սիյուռքահային վարկաբեկող Նաիրա Զոհրաբյանը, «Լավ եմ արել», և ճիշտ տեղին:

Աղջիկ ջան, իւելիք արի, այդ ի՞նչ ես ասում, ո՞նց թե Հայաստանի իշխանությունները երկիրը հեղեղել են հակառասական քարոզչությամբ և «Երիտասարդներին ուսուցանում են, թե ինչպես Ռուսաստանում իշխանությունը տապալել»:

Խնդրում եմ, մեկ փաստ բերել, տիկին Մարգարիտ. ու մ, որտե՞ղ, Երևանի ո՞ր հաստատությունում են ուսուցանում, թե ինչպես տապալել Պուտինի իշխանությունը: Այդպես օդի մեջ կրակել, վայրի-վերո ցափոտուքներ (ցնդաբանություն) դուրս տալը վայել չեմ: Եվ դու իսկապէ ս այդքան միամիտ ես, որ մեր փոքրիկից կ փոքր Հայաստանը կարող է նման բան անել: Այս, մանկապարտեզի երեխան կ գիտի, որ «մեխի զիսին բոռնցքով չես խիփի, ձեռքդ կկոտրես»: Ո՞ր հիմարն է, որ հակառասական քարոզություն պիտի վարի, այն կ Ռուսիո դեմ:

Հետո շարունակում ես կրկին առանց փաստերի, առանց անուններ տալու, թե Հայաստանի իշխանությունները երկիրը

վեր են ածել հակառուսական ուժերի հենակետի, որ ոռուսաստանցի բիզնեսմեններին դուրս են քշում, և իբր լրատվամիջոցներն էլ՝ կեղտաջուր են լցնում Ռուսաստանի, Պուտինի և, հատկապես, ռուսաստանցի հայերի և քո վրա:

Դարձյալ՝ առանց անուններ տալու, կանացի բամբասանք:

Ինչպես ամեն մի խելամիտ մարդ, ես հասկանում եմ ձեր «փորացավը», թե այս ամենը որտեղից է գալիս, տիկին Մարգարիտա: Ռուսական կայսրության նախագահը և դուք, որպես նրա խոսնակ, 20 տարի շարունակ վարժված եք եղել, որ ամեն մանր հարցի համար Հայաստանի նախագահները վազեն ձեզ մոտ՝ թույլտվություն ստանալու Պուտինից, որպեսզի ըստ այնմ լուծեն նույնիսկ հասարակ մի խնդիր՝ առանց ժողովրդի կամքին նայելու: Հիմա ձեզ համար խորթ է, որ առանց քո նախագահի հետ խորհրդակցելու, Փաշինյանը ժողովրդի կամքին համահունչ քայլեր է անում և երկրում ստեղծում այնպիսի պայմաններ, որ երբեք չի իրականցվել նախորդ նախագահների օրոք: Դուք պետք է ուրախ լինեք, որ Հայաստանը ինքնուրույն, առանց միջամտության (իմա՝ ռուսական) արժանապատիվ հաղթանակ տարավ ազերիների դեմ:

Փոխարեն անդրադառնալու այդ հաղթանակին, գոնե մեկերկու տողով, դու թույն ես թափում Հայաստանի վրա, տիկին Սիմոնյան, նրա ղեկավարությանն անվանելով «րոպեական» իշխանություն: Ամոք է: Ի՞նչ է՝ հույս ունեք վերադարձնե՞լ նախորդ իշխանական համակարգը:

Մոռացեք, դա երբեք չի լինի: Ուշքի արի, աղջիկս, ավարտվել է ՌՈԲԱ-ՍԵՐԺԱԿԱՆ դաշինքը:

Հայաստանի իշխանություններին ուղղված լուտանքներիդ տարափն ու որակը, տիկին, բարոյական չափորոշչներից բավական ցածր են փողոցային հայիոյանքներին արժանի:

Քստմնելի բառերի կույտով ամբողջացած Մարգարիտայի գրած պարբերությունը, ահա թե ինչ նախադասությամբ է ավարտվում.

-Այն ամենից հետո, ինչ դուք արել եք, Ռուսաստանը լիակատար բարոյական իրավունք ունի ԹՔԵԼՈՒ ԶԵԶ ՎՐԱ ԵՎ

## ՏՐՈՒԵԼՈՒ...

Երանի ողջ լիներ ամուսնուդ՝ Տիգրանի հայրը, արարքիրցի, իմ թաղեցի մեծանուն արվեստագետ Էդմոն Քեռսայանը, ով կկարողանար զապել քեզ, որպեսզի չգրես իր հայրենիքի (ոչ քո) հանդեպ նման ցնորամիտ արտահայտություններ: Հիմա պատկերացնում եմ, թե ինչ հոգեկան ապրումների մեջ է Տիգրանի մայրը՝ շենշող կին, դերասանուիի, երիտասարդ տարիներին Երևանի թիվ մեկ գեղեցկուիի Լաուրա Գևորգյանը:

Ես այսուհետև կրնկակոյն հետևելու եմ քո բոլոր գրառումներին: Դու չզիտես Հայաստանը և նրա հպարտ քաղաքացուն: Քո իսկ խոստովանությամբ՝ դու ել հպարտ ես քո հայրենիքով, որ Ռուսաստանն է, ի նշ գործ ունես Հայաստանի հետ: Դու միայն երկու անգամ ես մի քանի օրով Հայաստան այցելել, որոնցից մեկը՝ Պուտինի հետ...

Լավ է, որ խելամիտ մարդիկ կան Հավաքական Անվտանգության Պայմանագրի Կազմակերպությունում, որը հաղորդում է, որ.

- Մարզարիտա Սիմոնյանի կարծիքն ամբողջությամբ հակասում է ՀԱՊԿ քարտուղարության պաշտոնական դիքորոշմանը:

Հուլիսի 22, 2020 թ.,  
Լու Անգելես

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Իմ խոսքը .....	3
2. Ժամանակակից ուսանելի հերիաքներ .....	7
3. Գայլն ու ոչխարները .....	8
4. Ծիծեռնակն ու օձը .....	14
5. Խարդախների միությունն ու մենք .....	18
6. Ըստանեկան պատմվածքներ .....	25
7. Մայրս իմ հիշողության ծալքերում .....	26
8. Ժողովուրդների «Հայր» Ստալինի հոբեյանը .....	32
9. Հենրիկը որպես կոչիկ նորոգող .....	37
10. Իմ Նոր տարին խորհրդային բանակում .....	44
11. Արսենը և Ավստրալիան .....	54
12. Բարոյախոսական .....	63
13. Ի՞նչ արժե ներողություն խնդրելը .....	64
14. Պորտարույծ հայր .....	71
15. Լավություն արա՝ զցի ջուրը .....	76
16. Պատմվածքներ, նորավեպեր .....	83
17. Շունն կ սիրել զիտի .....	84
18. Համրիչը .....	92
19. Քյալա Նիկողոսը .....	97
20. Թրքուիի Սեղան և ես .....	105
21. Ֆրանսահայ զույգի ողիսականը .....	119
22. Լիիթն ու իր կոտրած սերը .....	128
23. Ես սիրում եմ Հոլիվուդը .....	136
24. Տունդարձ .....	145
25. Հիպոկրատի զոհը .....	153
26. Զյունաթույր Զյունիկը .....	163
27. Հայերի ընկույզարշավը Լու Անջելեսում .....	171
28. Ամանորի զիշերը ոստիկանատանը .....	181
29. Հայաստանյան պատկերներ .....	189

30.Համատիբության աշխատակիցը	190
31.Վարդուհին և հայկական գաթան	194
32.Կրթված մուրացկանը	200
33.Խարեւա և փինաչի փականագործը	204
34.Գորգերի լվացքատան Անուշը	212
35.Հանրային ռադիոյի Աննան և Նորքի բարձունքը	218
36.Երկու վիպակ	227
37.Արևի հոտը	228
38.Ինձի քեզի կը պակսի	259
39.Երաժշտական պատմվածքներ	285
40.Կոռ նկա, խաբրիկ մը չունի ս	286
41.Հայաստան, երկիր դրախտավայր	292
42.Որսկան ախպեր	298
43.Գացե՞ք, տեսէ ք	306
44.Վերջին հերիաքը	312
<b>45.Հրապարակախոսական. Սփյուռք-Հայրենիք՝ մեկ շունչ, մեկ մարմին</b>	319
46.2016-ից միայն պահանջատեր	320
47.Սփյուռքը բերրի արտ է և չէ	328
48.Պահանջատիրությունը՝ մնայուն հարատև արժեք	338
49.Անձարակ մտայնություն, անձարակ գործողություն	346
50.Հայաստանցի սփյուռքահայր և Նաիրա Զոհրաբյանի «լավ»-ը	353
<b>51.Լրագրող Մարգարիտա Սիմոնյանի մաղձը՝ ուղղված Հայաստանի իշխանություններին</b>	359

Հենրիկ Հակոբի Անասյան

## ԱՐԵՎԻ ՀՈՏԸ

Պատմվածքներ, նորավեպեր, վիպակներ, հոդվածներ  
(ԸՆՏՐԱՆԻ)

Խմբագիր՝ Հ. Կարապետյան

Համակարգչային ձևավորումը  
Ա. Խաչատրյանի

ISBN 978-5-8080-1427-5



9 785808 014275

Հրատ. պատվեր N 1036


Ստորագրված է տպագրության 17.09.2020թ.:

Չափսը՝ 60 x 84 ¼. Ծավալը՝ 23 տպ. մամուլ:

Տպաքանակը՝ 200 օրինակ:

Գինը՝ պայմանագրային:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան,  
Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24:










12,500 ₦/L

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ



FL0635176

Հ 106421



## ՀԵՆՐԻԿ ՀԱԿՈԲԻ ԱՆԱՍՅԱՆ

Ծնվել է 1937թ. ապրիլի 10-ին Երևանում: Ավարտել է Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանը, իսկ 1966թ. Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիան: 1962-1978թթ. աշխատել է ՀԽՍՀ Հեռուստառադիոպետկոմի երաժշտական բաժնում, 1966-67թթ. Եղել է Հայաստանի սիմֆոնիկ նվագախմբի դիրիժորը: 1970-1974թթ. ղեկավարել է Հայաստանի Շադիյոյի ժողովործիքների համույթը: 1974-1978թթ. ղեկավարել է Հայաստանի երգի-պարի պետական համույթը:

Գրել սկսել է 12 տարեկան հասակից և 30 տարի հանդես է եկել ինչպես հայրենական, այնպես էլուստական մամուլում:

1978թ. բնակություն է հաստատել Լոս Անջելեսում: Նույն թվականին հիմնադրել է «ՀԱՅԱՐՎԵՍ» երկշաբաթերթը: 1979 թ. ստեղծել է «Սիփան» երգչախումբը, Եղել է «Սարդարապատ» երգի-պարի համույթի գեղարվեստական ղեկավարը, Կալիֆոռնիայի հայ գրողների միության նախագահը: Նա համերգներով հանդես է եկել Երևանում (5 անգամ), ԱՄՆ-ի տարբեր քաղաքներում, Կանադայում, Ավստրալիայում, Թուրքիայում:

Անասյանը ստեղծել է «Սրբազն համերգ» շարքը՝ նվիրված Մեծ եղեռնի զոհերի հիշատակին: Գրել է «Երկիր Նախրի» կանտատը, «Հայրենիք և սեր», «Սայաթ-Նովա» սյուիտները, «Ճանապարհ» սիմֆոնիկ պոեմը, Կոնցերտ՝ դուդուկի և նվագախմբի համար, ինչպես նաև բազմաթիվ երգեր, խմբերգեր: Նա հրատարակել է «Իմ հայրենիք», «Կոռոնկ, բարով դառնաս» (1997թ.), «Հայրենիք և սեր» երաժշտական գործերը, բազմաթիվ հրապարակախոսական, երաժշտագիտական, գրական հոդվածների ժողովածուներ՝ «Լուս ցավեր» (Երևան, 1990թ.), «Այս եմ ես...» (հ. 1-7, 1993-2004թթ.) և այլ գրքեր:

Հենրիկ Անասյանին շնորհվել են Մայր Աթոռի «Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ» շքանշան, «Հ Սիյուռքի նախարարության «Կոմիտաս» մեդալ և այլ պարգևներ: